

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2013 թվական

Հատոր V

**ԵՐԵՎԱՆ
ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ԵՎ
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
2014**

ՀՏԴ 343 (479.25)
ԳՄԴ 67.99 (2Հ)8
Հ 706

Սույն տպագրությունը հնարավոր է դարձել իրականացնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Սույն ձեռնարկի մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետներին:



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Կազմեցին՝

Աննա Վարդապետյան

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդակցան,
իրավագիտության թեկնածու

Հովհաննես Ավագյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի ավագ օգնական

Հ 706 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու. – Եր. 2014, Հ. 5 - 698 էջ:

ՀՏԴ 343 (479.25)

ԳՄԴ 67.99 (2Հ)8

ISBN 978-92-9234-281-4

Գիրքը վաճառքի ենթակա չէ

ՔՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	V
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում.....	VII
Աղբյուրների ցանկ թիվ 1.	
ՀՀ Սահմանադրության դրույթներ.....	XXIV
Աղբյուրների ցանկ թիվ 2.	
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ.....	XXV
Աղբյուրների ցանկ թիվ 3.	
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ.....	XXVIII
Աղբյուրների ցանկ թիվ 4.	
ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր.....	XXIX
1. Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0062/06/12.....	1
2. Է.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԼԳ-0166/06/12.....	12
3. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ-0058/01/12.....	21
4. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԵԷԳ-0126/13/11.....	34
5. Ժ.Դուկասյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԷԳ-0091/01/11.....	60
6. Լևոն և Ռուբիկ Թարվերդյանների վերաբերյալ որոշում, ԱՎԳ-2/0007/01/12...76	
7. Պ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0111/11/12.....	85
8. Հ.Գինոսյանի վերաբերյալ որոշում, ԼԳ-0023/11/12.....	98
9. Ս.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0077/11/12.....	108
10. Հ.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0125/11/12.....	128
11. Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ-0020/11/12.....	136
12. Գ.Փահլևանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ-0224/01/11.....	146
13. Ռ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ-0218/06/12.....	155
14. Գ.Աշուղյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0025/11/11, ԵԿԳ-0033/15/11.....	164
15. Ռ.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-0053/01/12.....	174
16. Ն.Էվոյանի վերաբերյալ որոշում, ԼԳ-0267/01/11.....	190
17. Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0013/01/11.....	202
18. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0043/01/12.....	212
19. Գ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ-0033/15/09.....	221
20. Ա.Կարնազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0071/01/12.....	233
21. Տ.Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0105/06/12.....	242
22. Հ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0341/06/12.....	248

23. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0168/01/12.....	255
24. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0126/01/12.....	265
25. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11.....	276
26. Օ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0150/01/12.....	304
27. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0009/11/13.....	310
28. Ա.Մուրադխանյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-01/13.....	323
29. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0015/07/13.....	338
30. Ս.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0120/01/12.....	348
31. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0122/01/12.....	361
32. Ս.Աղախանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0082/01/12.....	374
33. Գ.Ղամբարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12.....	384
34. Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0002/01/13..	399
35. Ա.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0007/15/12.....	413
36. Ա.Գաբրիելյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/13.....	424
37. Գ.Սողոմոնյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0001/15/13.....	434
38. Ա.Զյաբլիցևի վերաբերյալ որոշում, ԿԳ/0020/06/13.....	439
39. Ա.Ծատուրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0045/14/13.....	449
40. Վ.Գալոյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0008/15/13.....	475
41. Արթուր, Մասցակ և Արմեն Բաղալյանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0227/01/12.....	490
42. Վ.Բեգյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0018/01/13.....	508
43. Գ.Ղևոնդյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0044/11/13.....	515
44. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0207/01/12.....	528
45. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0031/12/13.....	542
46. Գ.Խնուսյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12.....	552
47. Հ.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0389/01/11.....	565
48. Գ.Վիրաբյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-05/13.....	585
49. Վ.Մանասյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0080/01/12.....	605
50. Ա.Համգոյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0046/01/13.....	613
51. Գ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0032/01/13.....	627
52. Ա.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0055/11/13.....	634
53. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0032/01/12.....	642
54. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0015/11/13.....	655



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
2013 ԹՎԱԿԱՆ**

ՆԱԽԱԲԱՆ

Քրեական գործերով արդարադատություն իրականացնող բարձրագույն դատական ատյանը՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2013 թվականի ընթացքում կայացրել է մի շարք նախադեպային որոշումներ, որոնք առնչվում են քրեական արդարադատության տարբեր ոլորտներին և հիմնարար նշանակություն ունեն քաղաքացիների իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար: Նշված որոշումների կայացմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ուղղորդել է դատական պրակտիկան՝ ձգտելով ոչ միայն պաշտպանել կոնկրետ անձի իրավունքները և պատասխանել քրեական գործով ներկայացված բողոքում բարձրացված կոնկրետ հարցին, այլև հիմք դնել մեր երկրում քրեական գործերով կանխատեսելի արդարադատության ձևավորմանը:

Սույն ժողովածուն ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների հինգերորդ հատորն է և ընդգրկում է 2013 թվականին կայացված 54 որոշում, որոնք վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին:

Նյութական իրավունքի նորմերի մեկնաբանության շրջանակում հատկանշական է սպանության որակյալ հանցակազմի վերաբերյալ որոշումը, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է երկու կամ ավելի անձանց սպանության և նախկինում սպանություն կատարած անձի կողմից կատարված սպանության քրեաիրավական որակման առանձնահատկություններին: Արդյունքում դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ որպես երկու կամ ավելի անձանց սպանություն պետք է որակվեն ինչպես սուբյեկտիվ կողմից մեկ միասնական դիտավորության մեջ ընդգրկված երկու կամ ավելի անձանց սպանության, այնպես էլ սուբյեկտիվ կողմից միմյանց հետ չկապված դիտավորությամբ կատարված երկու կամ ավելի անձանց սպանության (այլ կերպ ասած՝ նախկինում սպանություն կատարած անձի կողմից նոր սպանություն կատարելու) դեպքերը:

Նյութական իրավունքի նորմերի մեկնաբանության շրջանակում հատկանշական է նաև ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ որոշումը, որտեղ դատարանն արձանագրել է, որ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող է համարվում նաև այն օրենքը, որը քրեական պատասխանատվության և պատժի սահմանման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերի և պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար: Նման իրավիճակները կարող են բազմազան լինել և վերաբերել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի տարբեր

ինստիտուտներին, այդ թվում՝ պատժի ժամկետները հաշվարկելու և պատիժը հաշվակցելու կարգին:

Նյութական իրավունքի նորմերի վերաբերյալ որոշումների թվում են նաև անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդված), կաշառք տալու (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդված), կաշառքի միջնորդության (ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդված) հանցակազմերի, ինչպես նաև ավազակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված) կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտից (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ) տարանջատելու հարցի կապակցությամբ կայացված որոշումները:

Դատավարական իրավունքի նորմերի հետ կապված հատկանշական է Արմեն Բաղդասարյանի գործով որոշումը, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշման իրավական հետևանքներին: Արդյունքում դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինն արտահայտում է իր ենթադրությունն առ այն, որ անձը կատարել է հանցավոր արարքը, ինչը, նշանակում է, որ «ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն անձի իրավունքների սահմանափակման առումով չի կարող հավասարեցվել վերջնական մեղադրական դատավճռի հետ և առաջացնել նույն իրավական հետևանքները, ինչ վերջնական մեղադրական դատավճիռը:

Դատավարական իրավունքի նորմերի վերաբերյալ որոշումների շարքում հատկանշական է նաև Հմայակ Դավթյանի գործով որոշումը, որտեղ դատարանն անդրադարձել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայելիս վերաքննիչ դատարանի հայեցողության շրջանակների հարցին և սահմանել այն չափորոշիչները, որոնք յուրաքանչյուր դեպքում հնարավորություն են տալիս պարզել, թե արդյոք վերադաս դատարանը գործել է իր հայեցողության շրջանակներում:

Դատավարական իրավունքի նորմերի վերաբերյալ որոշումների թվում են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված՝ միջնորդությունները և պահանջները քննության առնելու պարտադիր լինելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված՝ ապացույցների գնահատման, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածով սահմանված՝ ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացման և պահպանման, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածով սահմանված՝ դատարանի կողմից կիրառվող սանկցիաների վերաբերյալ, ինչպես նաև մի շարք այլ որոշումներ:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական դասակարգման գործիք,

որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանությանն է վերաբերում: Ավելին, դրանում ինչպես և նախորդ հատորներում սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, ՄԻԵԳ-ի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որի վրա նույնությամբ ձայնագրված են գրքում ներառված դատական ակտերը, ինչը ևս հնարավորություն է տալիս հեշտացնել ժողովածուից օգտվողների աշխատանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածուի սույն հատորը հնարավոր է դարձել հրատարակել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ մեր երկարատև և արդյունավետ գործակցության շնորհիվ:

Գ.Զ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՍԲԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն¹-I. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61-62-րդ հոդվածներ)

Ն-I-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0043/01/12 (18², նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLX-1).....212

Ն-I-2. Ս.Աղախանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0082/01/12 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-2, Ն-XVI-1).....374

Ն-II. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդված)

Ն-II-1. Գ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0033/15/19 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Գ-XLXVII-1).....221

Ն-II-2. Վ.Գալոյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0008/15/13 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-XII-1, Գ-XLXIII-2).....475

Ն-III. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-III-1. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0126/13/11 (4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-1, Գ-VI-1).....34

Ն-III-2. Վ.Գալոյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0008/15/13 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-XII-1, Գ-XLXIII-2).....475

Ն-IV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդված)

Ն-IV-1. Գ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0033/15/19 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1, Գ-XLXVII-1).....221

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Ն» տառով:

² Սույն ժողովածուում ընդգրկված որոշման հերթական համարը:

Ն-V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղսունակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդված)	
Ն-V-1. Ա.Ծատուրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0045/14/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1).....	449
Ն-VI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցափորձը (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)	
Ն-VI-1. Ռ.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0053/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XXIII-1, Ն-XXVIII-1, Ն-XXIX-1).....	174
Ն-VI-2. Գ.Ղամբարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-XXII-1).....	384
Ն-VII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության նախապատրաստությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդված)	
Ն-VII-1. Գ.Ղամբարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-XXII-1).....	384
Ն-VIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակցության հասկացությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդված)	
Ն-VIII-1. Ռ.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0053/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XXIII-1, Ն-XXVIII-1, Ն-XXIX-1).....	174
Ն-VIII-2. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0168/01/12 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Գ-V-1, Գ-XVI-2, Գ-XVII-1).....	255
Ն-IX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդված)	
Ն-IX-1. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0168/01/12 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2, Գ-V-1, Գ-XVI-2, Գ-XVII-1).....	255
Ն-X. Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուգանքը (ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդված)	
Ն-X-1. Գ.Սողոմոնյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0001/15/13 (37).....	434
Ն-X-2. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ/0031/12/13 (45, նույն որոշումը, տե՛ս նաև Ն-XIV-1).....	542

Ն-XI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ

(ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված)

Ն-XI-1. Ա.Համգոյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0046/01/13
(50, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-4).....613

Ն-XII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի ժամկետները հաշվարկելը և պատիժը հաշվակցելը

(ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդված)

Ն-XII-1. Վ.Գալոյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0008/15/13
(40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-III-2, Գ-XLXIII-2).....475

Ն-XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն-XIII-1. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0122/01/12
(31, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Ն-XXV-1).....361

Ն-XIII-2. Ս.Աղախանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0082/01/12
(32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Ն-XVI-1).....374

Ն-XIII-3. Վ.Բեգյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0018/01/13 (42).....508

Ն-XIII-4. Ա.Համգոյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0046/01/13
(50, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1).....613

Ն-XIII-5. Գ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0032/01/13 (51).....627

Ն-XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը

(ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդված)

Ն-XIV-1. Ա.Սյրտչյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ/0031/12/13
(45, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-2).....542

Ն-XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը
(ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)

Ն-XV-1. Գ.Փահլևանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0224/01/11
(12, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLXIII-1).....146

Ն-XVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատվածությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդված)

Ն-XVI-1.Ս.Աղախանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0082/01/12
(32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Ն-XIII-2).....374

**Ն-XVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելը, փոփոխելը և դադարեցնելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդված)**

Ն-XVII-1. Ա.Ծատուրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0045/14/13
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1).....449

**Ն-XVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)**

Ն-XVIII-1. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0126/13/11
(4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Գ-VI-1).....34

**Ն-XIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդված)**

Ն-XIX-1. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0032/01/12
(53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1).....642

**Ն-XX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ավագակությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված)**

Ն-XX-1. Ժ.Գուկասյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0091/01/11
(5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1).....60

**Ն-XXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կողոպուտը
(ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված)**

Ն-XXI-1. Ժ.Գուկասյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0091/01/11
(5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XX-1).....60

**Ն-XXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)**

Ն-XXII-1. Գ.Գամբարյանի և այլոց վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0087/01/12 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-VII-1).....384

**Ն-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)**

Ն-XXIII-1. Ռ.Պասյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0053/01/12
(15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-VIII-1, Ն-XXVIII-1, Ն-XXIX-1).....174
Ն-XXIII-2. Ս.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0120/01/12 (30).....348

Ն-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)	
Ն-XXIV-1. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0122/01/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1, Ն-XXV-1).....	361
Ն-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդված)	
Ն-XXV-1. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0122/01/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1, Ն-XXIV-1).....	361
Ն-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուլիգանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված)	
Ն-XXVI-1. Արթուր, Մացակ և Արմեն Բադալյանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0227/01/12 (41, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1, Գ-XXVI-2, Գ-XXXII-1).....	490
Ն-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ իրացնելը, աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը (ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդված)	
Ն-XXVII-1. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0032/01/12 (53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-1).....	642
Ն-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառք տալը (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդված)	
Ն-XXVIII-1. Ռ.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0053/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-VIII-1, Ն-XXIII-1, Ն-XXIX-1).....	174
Ն-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառքի միջնորդությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդված)	
Ն-XXIX-1. Ռ.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0053/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-VIII-1, Ն-XXIII-1, Ն-XXVIII-1).....	174
Ն-XXX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական անփութությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդված)	
Ն-XXX-1. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0207/01/12 (44).....	528

Ն-XXXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդված)

Ն-XXXI-1. Հ.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0389/01/11 (47, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-4).....565

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Գ³-I. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրանք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետ)

Գ-I-1. Արթուր, Մացակ և Արմեն Բաղալյանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0227/01/12 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Գ-XXVI-2, Գ-XXXII-1).....490

Գ-II. Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված)

Գ-II-1. Հ.Գիմոսյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0023/11/12 (8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-1, Գ-XXXIV-1).....98
 Գ-II-2. Հ.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0125/11/12 (10, նույն որոշումը, տե՛ս նաև Գ-XXXIII-2, Գ-XXXIV-2).....128

Գ-III. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)

Գ-III-1. Ա.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0055/11/13 (52, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIV-3).....634

Գ-IV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

Գ-IV-1. Ս.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0077/11/12 (9, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIII-1, Գ-XXIV-1).....108
 Գ-IV-2. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-2, Գ-XII-1, Գ-XIV-1, Գ-XXXVII-1, Գ-XXXIX-1, Գ-XLVII-2).....276

³ Մույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Գ» տառով:

**Գ-V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)**

Գ-V-1. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0168/01/12
(23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2, Ն-IX-1, Գ-XXVI-2, Գ-XXVII-1).....255

Գ-V-2. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0009/11/13
(27, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-2, Գ-XXVI-1, Գ-XXXI-1).....310

Գ-V-3. Ա.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0007/15/12
(35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IX-1, Գ-X-1, Գ-XXIV-1).....413

**Գ-VI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու
անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 21-րդ հոդված)**

Գ-VI-1. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0126/13/11
(4, նույն որոշումը, տե՛ս նաև Ն-III-1, Ն-XVIII-1).....34

Գ-VI-2. Ա.Կարնազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0071/01/12
(20, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-2, Գ-XXVI-1).....233

Գ-VI-3. Վ.Մանասյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0080/01/12 (49).....605

**Գ-VII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը քրեական
դատավարության ընթացքում
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)**

Գ-VII-1. Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0020/11/12
(11, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-1, Գ-XXLI-1).....136

Գ-VII-2. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11
(25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2, Գ-XII-1, Գ-XIV-1, Գ-XXXVII-1,
Գ-XXXIX-1, Գ-XXVII-2).....276

**Գ-VIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական
հետապնդումը բացառող հանգամանքները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)**

Գ-VIII-1. Օ.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0150/01/12 (26).....304

Գ-VIII-2. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0009/11/13
(27, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-2, Գ-XXVI-1, Գ-XXXI-1).....310

Գ-VIII-3. Գ.Խնուսյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12
(46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-2).....552

Գ-VIII-4. Հ.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0389/01/11
(47, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-1).....565

Գ-IX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդված)	
Գ-IX-1. Ա.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0007/15/12 (35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-3, Գ-X-1, Գ-XLXIV-1).....	413
Գ-X. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարաններին ընդդատյա գործերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդված)	
Գ-X-1. Ա.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0007/15/12 (35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-3, Գ-IX-1, Գ-XLXIV-1).....	413
Գ-XI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրյալը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդված)	
Գ-XI-1. Ռ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0218/03/12 (13, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVIII-2, Գ-XXVII-1).....	155
Գ-XII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտպանի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդված)	
Գ-XII-1. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2, Գ-VII-2, Գ-XIV-1, Գ-XXXVII-1, Գ-XXXIX-1, Գ-XLVII-2).....	276
Գ-XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավահաջորդը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդված)	
Գ-XIII-1. Ս.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0077/11/12 (9, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-1, Գ-XXIV-1).....	108
Գ-XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդված)	
Գ-XIV-1. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2, Գ-VII-2, Գ-XII-1, Գ-XXXVII-1, Գ-XXXIX-1, Գ-XLVII-2).....	276
Գ-XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդված)	

Գ-XXV-1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0015/11/13 (54, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-2).....655

**Գ-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացուցման ենթակա հանգամանքները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված)**

Գ-XXVI-1. Ն.Էվոյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0267/01/11 (16, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLXII-1, Գ-XLXV-2).....190

Գ-XXVI-2. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0168/01/12 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2, Ն-IX-1, Գ-V-1, Գ-XXVII-1).....255

Գ-XXVI-3. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0126/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-2, Գ-XLVII-1, Գ-XLVIII-1, Գ-XLIX-1).....265

**Գ-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)**

Գ-XXVII-1. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0168/01/12 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2, Ն-IX-1, Գ-V-1, Գ-XXVI-2).....255

Գ-XXVII-2. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0126/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVI-3, Գ-XLVII-1, Գ-XLVIII-1, Գ-XLIX-1).....265

**Գ-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)**

Գ-XXVIII-1. Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0062/06/12 (1, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-1).....1

Գ-XXVIII-2. Ռ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0218/03/12 (13, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-1, Գ-XXVII-1).....155

Գ-XXVIII-3. Ա.Ջյաբլիցևի վերաբերյալ որոշում, ԿԳ/0020/06/13 (38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIX-1).....439

**Գ-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու կարգը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդված)**

Գ-XXIX-1. Ա.Ջյաբլիցևի վերաբերյալ որոշում, ԿԳ/0020/06/13 (38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-3).....439

**Գ-XX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)**

Գ-XX-1.Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0062/06/12
(1, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIII-1).....1

**Գ-XXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական հայցի քննության
ընթացքում կիրառվող օրենսդրությունը**

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդված)

Գ-XXI-1.Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0058/01/12 (3).....21

Գ-XXI-2. Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0013/01/11
(17, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-1).....202

**Գ-XXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծառայողական և առևտրային գաղտնիքի
ստացումը և պահպանումը**

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդված)

Գ-XXII-1. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0015/07/13
(29, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-1).....338

**Գ-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների մասին
հաղորդումների քննարկման կարգը**

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդված)

Գ-XXIII-1. Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0044/11/13
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-1, Գ-XXXIII-3).....515

**Գ-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու կարգը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդված)**

Գ-XXIV-1. Ս.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0077/11/12
(9, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-1, Գ-XIII-1).....108

**Գ-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)**

Գ-XXV-1. Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0044/11/13
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIII-1, Գ-XXXIII-3).....515

Գ-XXV-2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի վերաբերյալ
որոշում, ԵԷԳ/0015/11/13 (54, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XV-1).....655

**Գ-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և
կարգը**

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդված)

Գ-XXVI-1. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0009/11/13

(27, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-2, Գ-VIII-2, Գ-XXXI-1).....	310
Գ-XXVI-2. Արթուր, Մացակ և Արմեն Բաղայանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0227/01/12 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Գ-I-1, Գ-XXXII-1).....	490
Գ-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրանք առաջադրելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդված)	
Գ-XXVII-1. Ռ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0218/03/12 (13, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-1, Գ-XVIII-2).....	155
Գ-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առգրավում և խուզարկություն կատարելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդված)	
Գ-XXVIII-1. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0015/07/13 (29, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXII-1).....	338
Գ-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդված)	
Գ-XXIX-1. Պ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0111/11/12 (7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-1).....	85
Գ-XXX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի տակ գտնվող գույքի պահպանությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդված)	
Գ-XXX-1. Պ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0111/11/12 (7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIX-1).....	85
Գ-XXXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ նախաքննության ընթացքում գործով վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդված)	
Գ-XXXI-1. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0009/11/13 (27, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-2, Գ-VIII-2, Գ-XXVI-1).....	310
Գ-XXXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդված)	
Գ-XXXII-1. Արթուր, Մացակ և Արմեն Բաղայանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0227/01/12 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Գ-I-1, Գ-XXVI-2).....	490

**Գ-XXXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերահսկողության ոլորտը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված)**

Գ-XXXIII-1. Հ.Գինոսյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0023/11/12
(8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XXXIV-1).....98

Գ-XXXIII-2. Հ.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0125/11/12
(10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-2, Գ-XXXIV-2).....128

Գ-XXXIII-3. Գ.Ղևոնդյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0044/11/13
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIII-1, Գ-XXXV-1).....515

**Գ-XXXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետաքննության մարմնի աշխատակիցի,
քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն
իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և
գործողությունների բողոքարկումը դատարան
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)**

Գ-XXXIV-1. Հ.Գինոսյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0023/11/12
(8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XXXIII-1).....98

Գ-XXXIV-2. Հ.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0125/11/12
(10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-2, Գ-XXXIII-2).....128

Գ-XXXIV-3. Ա.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0055/11/13
(52, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1).....634

**Գ-XXXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության սահմանները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված)**

Գ-XXXV-1. Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի վերաբերյալ
որոշում, ԵԱԶԳ/0002/01/13 (34, նույն որոշումը տե՛ս նաև
Գ-XXXVI-1, Գ-XLII-1).....399

**Գ-XXXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու
կամ փոփոխելու սահմանները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդված)**

Գ-XXXVI-1. Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի վերաբերյալ
որոշում, ԵԱԶԳ/0002/01/13 (34, նույն որոշումը տե՛ս նաև
Գ-XXXV-1, Գ-XLII-1).....399

**Գ-XXXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի կողմից կիրառվող
սանկցիաները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդված)**

Գ-XXXVII-1. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում,

ԵԿԳ/0225/01/11 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2, Գ-VII-2,
Գ-XII-1, Գ-XIV-1, Գ-XXXIX-1, Գ-XLVII-2).....276

Գ-XXXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական նիստի արձանագրումը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 315-րդ հոդված)

Գ-XXXVIII-1. Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0020/11/12
(11, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-XLXI-1).....136

Գ-XXXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ միջնորդություններ հարուցելը և լուծելը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդված)

Գ-XXXIX-1. Տ.Առաքելյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11
(25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2, Գ-VII-2, Գ-XII-1, Գ-XIV-1,
Գ-XXXVII-1, Գ-XLVII-2).....276

Գ-XL. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և

պատճառաբանված լինելը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)

Գ-XL-1. Է.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0166/06/12 (2).....12

Գ-XL-2. Գ.Խնուսյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12
(46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-3).....552

Գ-XLI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական հայցը լուծելը դատավճիռ

կայացնելիս

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդված)

Գ-XLI-1. Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0013/01/11
(17, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-2).....202

Գ-XLII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգի կիրառման հիմքերը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդված)

Գ-XLII-1. Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի վերաբերյալ որոշում,
ԵԱԲԳ/0002/01/13 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXV-1, Գ-XXXVI-1).....399

Գ-XLIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված)

Գ-XLIII-1. Լևոն և Ռուբիկ Թարվերդյանների վերաբերյալ
որոշում, ԱՎԳ-2/0007/01/12 (6).....76

Գ-XLIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)

Գ-XLIV-1. Գ.Աշուղյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0025/11/11, ԵԿԳ/0033/15/11 (14, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLV-1, Գ-XLXV-1).....	164
Գ-XLIV-2. Ա.Կարնազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0071/01/12 (20, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-2, Գ-XLVI-1).....	233
Գ-XLIV-3. Տ.Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0105/06/12 (21).....	242
Գ-XLIV-4. Հ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0341/06/12 (22).....	248

**Գ-XLV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ բողոքարկման ժամկետը վերականգնելու
կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդված)**

Գ-XLV-1. Գ.Աշուղյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0025/11/11, ԵԿԳ/0033/15/11 (14, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLIV-1, Գ-XLXV-1).....	164
--	-----

**Գ-XLVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքը և վարույթ ընդունելը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդված)**

Գ-XLVI-1. Ա.Կարնազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0071/01/12 (20, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-2, Գ-XLIV-2).....	233
--	-----

**Գ-XLVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի
քննության սահմանները**

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)

Գ-XLVII-1. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0126/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVI-3, Գ-XVII-2, Գ-XLVIII-1, Գ-XLIX-1).....	265
Գ-XLVII-2. Տ.Առաքելյանի և ալյոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0225/01/11 (25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2, Գ-VII-2, Գ-XII-1, Գ-XIV-1, Գ-XXXVII-1, Գ-XXXIX-1).....	276

**Գ-XLVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ վերանայման առարկան
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդված)**

Գ-XLVIII-1. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0126/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVI-3, Գ-XVII-2, Գ-XLVII-1, Գ-XLIX-1).....	265
---	-----

**Գ-XLIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտ կայացնելը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված)**

Գ-XLIX-1. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0126/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVI-3, Գ-XVII-2, Գ-XLVII-1, Գ-XLVIII-1).....	265
---	-----

**Գ-XLX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ նշանակված պատժի անհամապատաս-
խանությունը հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին**

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդված)

Գ-XLX-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0043/01/12
(18, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1).....212

**Գ-XLXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի դատավճռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը և դրանք կողմերին հանձնելը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդված)**

Գ-XLXI-1. Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0020/11/12
(11, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-XXXVIII-1).....136

Գ-XLXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի բողոքարկման ժամկետները

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդված)

Գ-XLXII-1. Ն.Էվոյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0267/01/11
(16, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVI-1, Գ-XLXV-2).....190

Գ-XLXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական որոշման վերաբերյալ կասկածների և անհստակությունների լուծումը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդված)

Գ-XLXIII-1. Գ.Փահիկանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0224/01/11
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1).....146

Գ-XLXIII-2. Վ.Գալոյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0008/15/13
(40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-III-2, Ն-XII-1).....475

Գ-XLXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծող դատարանները

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ հոդված)

Գ-XLXIV-1. Ա.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-2/0007/15/12
(35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-3, Գ-IX-1, Գ-X-1).....413

Գ-XLXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդված)

Գ-XLXV-1. Գ.Աշոտյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0025/11/11,
ԵԿԳ/0033/15/11 (14, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLIV-1, Գ-XLV-1).....164

Գ-XLXV-2. Ն.Էվոյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0267/01/11
(16, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVI-1, Գ-XLXII-1).....190

Գ-XLXV-3. Ա.Մուրադխանյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-01/13 (28, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLXVI-1).....	323
Գ-XLXV-4. Ա.Գաբրիելյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/13 (36).....	424
Գ-XLXV-5. Գ.Վիրաբյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-05/13 (48).....	585

**Գ-XLXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդված)**

Գ-XLXVI-1. Ա.Մուրադխանյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-01/13 (28, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLXV-3).....	323
--	-----

**Գ-XLXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ օտարերկրյա պետությունների
դատավճիռների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդված)**

Գ-XLXVII-1. Գ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0033/15/19 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1, Ն-IV-1).....	221
--	-----

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

1. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված (9)
2. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված (8), (43)
3. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված (7)
4. ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդված (9)
5. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված (38)
6. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված (6), (8), (9), (21), (22), (35)
7. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված (2), (8), (9), (21), (22), (25), (35), (41)
8. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված (25)
9. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդված (23), (27)
10. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդված (20), (41), (49)
11. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված (29)
12. ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված (7)
13. ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդված (53)
14. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդված (29)
15. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված (52)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Դելկուրն ընդդեմ Բելգիայի*
1970թ. հունվարի 17 (25)
2. *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1975թ. փետրվարի 21 (35)
3. *Աքսենն ընդդեմ Գերմանիայի*
1983թ. դեկտեմբերի 8 (41)
4. *Բ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1987թ. հուլիսի 8 (9)
5. *Բրիկնոնտն ընդդեմ Բելգիայի*
1989թ. հուլիսի 7 (25)
6. *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի*
1993թ. մայիսի 25 (40)
7. *Վան դե Հուրքն ընդդեմ Նիդեռլանդների*
1994թ. ապրիլի 19 (25)
8. *Ռուիզ Տորեխասն ընդդեմ Իսպանիայի*
1994թ. դեկտեմբերի 9 (25)
9. *Դինենն ընդդեմ Ֆրանսիայի*
1995թ. սեպտեմբերի 26 (41)
10. *Մքքանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*
1995թ. սեպտեմբերի 27 (9)
11. *Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի*
1995թ. սեպտեմբերի 27 (40)
12. *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1995թ. նոյեմբերի 22 (40)
13. *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1995թ. նոյեմբերի 22 (40)
14. *Լորո Սաչադոն ընդդեմ Պորտուգալիայի*
1996թ. փետրվարի 20 (41)
15. *Սելջուկը և Ակսերն ընդդեմ Թուրքիայի*
1998թ. ապրիլի 24 (48)
16. *Գյուլեջն ընդդեմ Թուրքիայի*
1998թ. հուլիսի 27 (9)

17. *Էրզին ընդդեմ Թուրքիայի*
1998թ. հուլիսի 28 (9)
18. *Ասսենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի*
1998թ. հոկտեմբերի 28 (9)
19. *Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1998թ. հոկտեմբերի 28 (9)
20. *Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի*
1999թ. հուլիսի 8 (9)
21. *Սկոցցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի*
2000թ. հուլիսի 13 (28), (48)
22. *Դակթարասն ընդդեմ Լիտվայի*
2000թ. հոկտեմբերի 10 (27)
23. *Գյուլն ընդդեմ Թուրքիայի*
2000թ. դեկտեմբերի 14 (9)
24. *Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի*
2001թ. հունվարի 23 (28)
25. *Թելֆներն ընդդեմ Ավստրիայի*
2001թ. մարտի 20 (23)
26. *Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*
2001թ. մայիսի 31 (41)
27. *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*
2001թ. մայիսի 10 (9)
28. *Իլլիկովն ընդդեմ Բուլղարիայի*
2001թ. հուլիսի 26 (1)
29. *Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի*
2003թ. դեկտեմբերի 4(9)
30. *Ասսանիձենն ընդդեմ Վրաստանի*
2004թ. ապրիլի 8 (28)
31. *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի*
2004թ. հունիսի 22 (28)
32. *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի*
2005թ. հուլիսի 6 (9)
33. *Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի*
2005թ. փետրվարի 8 (1)
34. *Օջալանն ընդդեմ Թուրքիայի*

- 2005թ. մայիսի 12 (28)
35. *Կլաներ և այլոք ընդդեմ Բելգիայի*
2005թ. հունիսի 2 (28)
36. *Սալովն ընդդեմ Ուկրաինայի*
2005թ. սեպտեմբերի 6 (46)
37. *Սքավուցցո-Հագերն ընդդեմ Շվեյցարիայի*
2006թ. փետրվարի 7 (9)
38. *Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի*
2006թ. հունիսի 1 (1)
39. *Գարիցկին ընդդեմ Լեհաստանի*
2007թ. փետրվարի 6 (27)
40. *Բոլդեան ընդդեմ Ռումինիայի*
2007թ. փետրվարի 15 (46)
41. *Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի*
2007թ. հուլիսի 26 (6)
42. *Ռամսահայր և այլոք ընդդեմ Նիդեռլանդների*
2007թ. մայիսի 15 (9)
43. *Գրադինարն ընդդեմ Մոլդովայի*
2008թ. ապրիլի 8 (47)
44. *Յանկովիցն ընդդեմ Խորվաթիայի*
2009թ. մարտի 5 (9)
45. *Նատունենն ընդդեմ Ֆինլանդիայի*
2009թ. մարտի 31 (23)
46. *Էսաթ Բայրամն ընդդեմ Թուրքիայի*
2009թ. մայիսի 26 (9)
47. *Գարրիելյանն ընդդեմ Հայաստանի*
2012թ. ապրիլի 10 (28), (36), (48)
48. *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի*
2012թ. հունիսի 5 (28)
49. *Նադան ընդդեմ Շվեյցարիայի*
2012թ. սեպտեմբերի 12 (29)
50. *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի*
2012 թվականի հոկտեմբերի 2 (48)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԳՌ-1062, 2012 թվականի դեկտեմբերի 18 (16)
2. ՄԳՌ-1082, 2013 թվականի ապրիլի 23 (37)
3. ՄԳՌ-1099, 2013 թվականի մայիսի 31 (28)

Աղբյուրների ցանկ թիվ 4
ՀՀ վճարելի դատարանի դատական ակտեր

1. *Փ.Էլիզբարյանի* վերաբերյալ գործով
2007թ. փետրվարի 27-ի որոշում (3)
2. *Ա.Սերոբյանի* վերաբերյալ գործով
2007թ. մարտի 30-ի որոշում (34)
3. *Հ.Հարությունյանի* վերաբերյալ գործով
2007թ. մարտի 30-ի որոշում (32)
4. *Ա.Ճուղուրյանի* վերաբերյալ գործով
2007թ. օգոստոսի 30-ի որոշում (1), (38)
5. *Ա.Սկրտչյանի* վերաբերյալ գործով
2007թ. նոյեմբերի 30-ի որոշում (17)
6. *Ս.Այվազյանի* վերաբերյալ գործով
2008թ. մայիսի 23-ի որոշում (52)
7. *Պ.Բայրամյանի* վերաբերյալ գործով
2007թ. հունիսի 1-ի որոշում (18)
8. *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* վերաբերյալ գործով
2008թ. հուլիսի 25-ի որոշում (15), (23), (41)
9. *Վ.Գրիգորյանի* վերաբերյալ գործով
2008թ. հուլիսի 25-ի որոշում (8), (10)
10. *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ գործով
2008թ. հոկտեմբերի 31-ի որոշում (1), (38)
11. *Տ.Վահրատյանի* վերաբերյալ գործով
2008թ. դեկտեմբերի 26-ի որոշում (13)
12. *Գ.Մաղաթյանի* վերաբերյալ գործով
2009թ. փետրվարի 17-ի որոշում (18), (39), (42), (51)
13. *Լ.Ղազարյանի* վերաբերյալ գործով
2009թ. մարտի 30-ի որոշում (45)
14. *Ն.Միսակյանի* վերաբերյալ գործով
2009թ. ապրիլի 10-ի որոշում (8), (10)
15. *Գ.Միքայելյանի* վերաբերյալ գործով
2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (2)
16. *Դ.Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով
2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (32), (42), (51)

17. *Մ.Նալբանդյանի* վերաբերյալ գործով
2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (34)
18. *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ գործով
2010թ. փետրվարի 12-ի որոշում (16), (23), (24)
19. *Լ.Զարյանի* վերաբերյալ գործով
2010թ. փետրվարի 12-ի որոշում (8), (43), (52)
20. *Ֆ.Գալստյանի* վերաբերյալ գործով
2010թ. մարտի 26-ի որոշում (2), (46)
21. *Հ.Շուքուրյանի* վերաբերյալ գործով
2010թ. մայիսի 4-ի որոշում (39)
22. *Ա.Առաքելյանի* վերաբերյալ գործով
2010թ. հուլիսի 23-ի որոշում (38)
23. *Հ.Աթոյանի* վերաբերյալ գործով
2010թ. հուլիսի 23-ի որոշում (54)
24. *Ա.Օհանյանի* վերաբերյալ գործով
2010թ. հուլիսի 23-ի որոշում (54)
25. *Է.Ներսիսյանի* վերաբերյալ գործով
2010թ. օգոստոսի 27-ի որոշում (50)
26. *Ա.Հայրապետյանի* վերաբերյալ գործով
2010թ. օգոստոսի 27-ի որոշում (7)
27. *Ա.Սահակյանի* վերաբերյալ գործով
2010թ. օգոստոսի 27-ի որոշում (31)
28. *Վ.Մանուկյանի* վերաբերյալ գործով
2010թ. նոյեմբերի 5-ի որոշում (8), (10)
29. *Լ.Ավետիսյանի* վերաբերյալ գործով
2011թ. փետրվարի 24-ի որոշում (15), (30)
30. *Վ.Գևորգյանի* վերաբերյալ գործով
2011թ. փետրվարի 24-ի որոշում (13)
31. *Մարատ և Կարեն Սարգսյանների* վերաբերյալ գործով
2011թ. փետրվարի 24-ի որոշում (6)
32. *Հ.Սարգսյանի և այլոց* վերաբերյալ գործով
2011թ. մայիսի 11-ի որոշում (23), (41)
33. *Գ.Հարությունյանի և այլոց* վերաբերյալ գործով
2011թ. հուլիսի 13-ի որոշում (35)
34. *Հ.Հարությունյանի* վերաբերյալ գործով

- 2011 թ. հունիսի 13-ի որոշում (43), (54)
35. *Ա.Ստեփանյանի* վերաբերյալ գործով
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (17)
36. *Հ.Սահակյանի* վերաբերյալ գործով
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (36)
37. *Ա.Ղարիբյանի* վերաբերյալ գործով
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (11)
38. *Գ.Պողոսյանի* վերաբերյալ գործով
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (4), (19), (40)
39. *Վ.Ավետիսյանի* վերաբերյալ գործով
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (12)
40. *Ն.Սարգսյանի* վերաբերյալ գործով
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (18), (32)
41. *Ս.Սաքանյանի* վերաբերյալ գործով
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (16)
42. *Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի* վերաբերյալ գործով
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (10), (11), (25), (34)
43. *Ա.Բաղդասարյանի* վերաբերյալ գործով
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (15), (33)
44. *Ա.Սարգսյանի* վերաբերյալ գործով
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (26), (47)
45. *Լ.Բաբայանի* վերաբերյալ գործով
2012թ. մարտի 30-ի որոշում (52)
46. *Գ.Ղազարյանի* վերաբերյալ գործով
2012թ. մարտի 30-ի որոշում (2)
47. *Շ.Հախվերդյանի* վերաբերյալ գործով
2012 թ. մարտի 30-ի որոշում (41)
48. *Դ.Բաբայանի* վերաբերյալ գործով
2012թ. հունիսի 8-ի որոշում (4), (20), (49)
49. *Վ.Մաթևոսյանի* վերաբերյալ գործով
2012թ. հունիսի 8-ի որոշում (30)
50. *Ս.Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով
2012թ. հունիսի 8-ի որոշում (47)
51. *Զ.Պետրոսյանի* վերաբերյալ գործով
2012թ. հունիսի 8-ի որոշում (30)

52. *Թ. Գևորգյանի* վերաբերյալ գործով
2012թ. օգոստոսի 24-ի որոշում (27)
53. *Է. Ասատրյանի* վերաբերյալ գործով
2012թ. օգոստոսի 24-ի որոշում (31)
54. *Գ. Ճաղարյանի և ալոնց* վերաբերյալ գործով
2012 թ. օգոստոսի 24-ի որոշում (34), (41)
55. *Ա. Սեկոյանի* վերաբերյալ գործով
2012թ. նոյեմբերի 1-ի որոշում (7)
56. *Ա. Դավթյանի և Ս. Սկրտչյանի* վերաբերյալ գործով
2012թ. նոյեմբերի 1-ի որոշում (6), (54)
57. *Ա. Հարությունյանի* վերաբերյալ գործով
2012թ. նոյեմբերի 1-ի որոշում (2)
58. *Արևիկ և Ծովինար Սահակյանների* վերաբերյալ գործով
2012թ. նոյեմբերի 1-ի որոշում (5), (41)
59. *Ս. Սարգսյանի* վերաբերյալ գործով
2012 թ. նոյեմբերի 1-ի որոշում(32)
60. *Դ. Ալիխանյանի* վերաբերյալ գործով
2012թ. դեկտեմբերի 5-ի որոշում (1)
61. *Ա. Միքայելյանի և Ա. Վաղարշակյանի* վերաբերյալ գործով
2012թ. դեկտեմբերի 5-ի որոշում (15), (23)
62. *Տ. Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով
2012թ. դեկտեմբերի 5-ի որոշում (21), (22)

1.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԳ-1/0062/06/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Լ.ԶԱՔԱՐՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Վահագն Հակոբի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Վ. Պողոսյանի պաշտպաններ Ի. Պետրոսյանի և Լ. Զաքարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2012 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Վահագն Հակոբի Պողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «նա, առանց իրացնելու նպատակի, իր կողմից օգտագործելու համար, կանեփի բույսի թփերից տնայնագործական եղանակով ապօրինի պատրաստել և իր «Տոյոտա-Պրադո» մակնիշի 99 ՕՈ 699 պ/հ ավտոմեքենայի սրահի պահոցում պահել է զգալի չափի՝ 1,06 գրամ հաստատուն կշռով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց և 4,2 գրամ ընդհանուր քաշով «չչորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը 20.08.2012թ. Երևան-Սևան ճանապարհի 41,5 կմ հատվածում կատարած վթարի փաստով վերջինիս ավտոմեքենայի զննության ժամանակ հայտնաբերվել

և առգրավվել է» (տե՛ս նյութեր, թերթ 36):

2. 2012 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ղումաշյանը միջնորդություն է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Վ.Պողոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ քննիչի միջնորդությունը բավարարվել է, մեղադրյալ Վ.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Մեղադրյալ Վ.Պողոսյանի և պաշտպան Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 25-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

3. 2012 թվականի օգոստոսի 31-ին մեղադրյալ Վ.Պողոսյանի պաշտպան Ի.Պետրոսյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով մեղադրյալ Վ.Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել գրավով:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ պաշտպան Ի.Պետրոսյանի միջնորդությունը մերժվել է, մեղադրյալ Վ.Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելը ճանաչվել է անթույլատրելի:

Մեղադրյալ Վ.Պողոսյանի պաշտպան Լ.Զաքարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք են բերել մեղադրյալ Վ.Պողոսյանի պաշտպաններ Ի.Պետրոսյանը և Լ.Զաքարյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ պաշտպաններ Ի.Պետրոսյանի և Լ.Զաքարյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանը Վ.Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ «միջնորդության քննության պահին պահպանվել և չեն վերացել մեղադրյալ Վ.Պողոսյանին կալանավորման տակ պահելու նախ հիմքերը, ապա նաև պայմանը /հիմնավոր կասկած/, որ վերջինս ազատության

մեջ մնալով կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված այլ արարք կամ խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Բացի այդ, դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները, մեղադրյալ Վ.Պողոսյանին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ Վ.Պողոսյանը խուսափել է նախաքննական մարմնի կանչով ներկայանալուց, ինչը դատարանի կարծիքով էականորեն բարձրացնում է մեղադրյալի կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը և տվյալ դեպքում անթույլատրելի դարձնում կալանավորումը վերացնելու և այլընտրանքային խափանման միջոց գրավ ընտրելու հնարավորությունը» (տե՛ս նյութեր, թերթ 38):

6. Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը Վ.Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Հարկ է արձանագրել, որ ըստ ներկայացվածի՝ առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալ Վահագն Հակոբի Պողոսյանն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված և իրեն վերագրվող արարքին:

Վերաքննիչ դատարանը, վերստին անդրադառնալով մեղադրյալ Վահագն Հակոբի Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառման հնարավորությանը, հաշվի է առնում նրան վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, առանձնահատկությունը /այդ թվում նաև, առանձին-առանձին քաշերով, ինչպես չորացված, այնպես էլ չչորացված տեսակի թմրանյութի առնչությամբ վերջինիս վերագրվող արարքի իմաստով/, սույն գործով հնարավոր կատարվելիք քննչական գործողությունների հավանականությունը /վերաքննիչ դատարանում, դատական ստուգմամբ դատախազն ըստ էության չբացառեց թմրանյութի ձեռքբերման աղբյուրը պարզելու ուղղությամբ որոշակի գործողություններ իրականացնելու հնարավոր հավանականությունը/, Վահագն Հակոբի Պողոսյանի սույն գործով արդեն իսկ դրսևորած վարքագիծը /ըստ ներկայացվածի՝ Վահագն Պողոսյանը խուսափել է վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալուց, չի ներկայացել, ինչի արդյունքում բերման է ենթարկվել, որպիսի հանգամանքը ընդհանուր իրավասության դատարանում, դատական նիստում չի ժխտել մեղադրյալ Վահագն Պողոսյանը/ և հանգում է հետևության, որ վերը նշվածը բավարար հիմք է տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Վահագն Պողոսյանը կարող է խոչընդոտել գործի հետագա քննությանը, ինչպես նաև թաքնվել, հետևաբար ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը, որով արդեն իսկ մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչվել է անթույլատրելի, վերացնելու հիմքեր չկան:

Ինչ վերաբերում է վերագրվող արարքի ծանրության աստիճանին, սպա նշված հանգամանքն ինքնին չի բացառում տվյալ դեպքում, վերը շարադրված հանգամանքների առկայության պայմաններում, մեղադրյալի նկատմամբ գրավի

կիրառումը անթույլատրելի ճանաչելու հնարավորությունը» (տե՛ս նյութեր, թերթ 65):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոք բերած անձինք փաստարկել են, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պատճառաբանված չեն և չեն բխում գործի նյութերում առկա փաստական հանգամանքներից:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները վկայակոչել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 143-րդ հոդվածները և նշել, որ Վ.Պողոսյանին վերագրվող արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված առավելագույն պատիժը մեկ տարի ժամկետով ազատազրկումն է: Մինչդեռ, ստորադաս դատարանների կողմից Վ.Պողոսյանի նկատմամբ կիրառված կալանքը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու հիմքում դրվել է վերջինիս մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանն այն դեպքում, երբ այդ արարքն իրենից հանրային մեծ վտանգավորություն չի ներկայացնում, դրանով այլ անձանց իրավունքներ չեն խախտվել, կյանքին ու առողջությանը վնաս չի պատճառվել: Հետևաբար, նշված հանգամանքը չի կարող անձին կալանավորելու հիմք հանդիսանալ, ինչպես նաև բարձրացնել քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը:

Բողոքի հեղինակները փաստարկել են, որ գրավի միջնորդությունը մերժելու հիմքում դրվել է նաև Վ.Պողոսյանի՝ նախաքննության մարմին չներկայանալու հանգամանքը: Մինչդեռ, Վ.Պողոսյանը վարույթն իրականացնող մարմնի կողմից պատշաճ չի ծանուցվել, նախաքննության մարմին բերման ենթարկվելու ժամանակ չի ունեցել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ: Հետևաբար, այդ հանգամանքը ևս չէր կարող Վ.Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառումը մերժելու հիմք հանդիսանալ:

Բողոքաբերները նշել են նաև, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Վ.Պողոսյանը բնութագրվում է դրական, նրա անձը հայտնի է, ունի մշտական բնակության վայր, նախկինում դատված չի եղել, տառապում է ծանր հիվանդություններով, ծառայել է Ա.Ֆրանստանում:

8. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը և թույլատրել Վ.Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառումը՝ սահմանելով գրավի գումարի չափը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեկ տարուց պակաս ժամկետով ազատազրկում

նախատեսող հանցագործության համար մեղադրվող անձին կալանավորելու կամ գրավի թույլատրելիության հարցը լուծելու չափորոշիչների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք մեղադրյալ Վ.Պողոսյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձեռքակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն օրենքով սահմանված կարգով և (...): ղեպքերում (...): Մարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.
2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.
3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.
4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.
5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը կամ դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ

մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսվող գործողությունները:

3. Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1. վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գրավը (...) հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից (...):»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա.Շուղորյանի*, *Ա.Ավետիսյանի*, ինչպես նաև *Դ.Ալիխանյանի* գործերով կայացված որոշումներում:

12. *Ա.Ավետիսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված): Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից:

(...)

[Դ.]ատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով:

Ընդ որում, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից

գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառնիչ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը» (տե՛ս Ասլան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ-0022/06/08 որոշման 18-րդ, 22-րդ և 36-րդ կետերը):

Ա.Ճուղորդյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս Արամ Ճուղորդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

Դ.Ալիխանյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Այլ խոսքով՝ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ կալանքը գրավով փոխարինելը մերժելու մասին դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով և ոչ թե բավարարվել ՀՀ քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքով (...)» (տե՛ս Դավիթ Ալիխանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԲԴ-0138/06/12 որոշման 13-րդ կետը):

13. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է վերոնշյալ գործերով

արտահայտված իրավական դիրքորոշումներն առ այն, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով:

Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև ՀՀ քրեադատավարական օրենքը չի բացառում մեկ տարուց պակաս ժամկետով ազատազրկում նախատեսող հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորման կիրառման հնարավորությունը, այդուհանդերձ նման արարքների համար մեղադրվող անձանց նկատմամբ խափանման միջոցներից ամենախիստը կիրառելու դեպքերը պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող բացառիկ հանգամանքներով, իսկ այդպիսի անձանց նկատմամբ արդեն իսկ կիրառված կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության հարցը լուծելիս դատարանը պարտավոր է ծանրակշիռ փաստարկների վկայակոչմամբ հիմնավորել մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու բարձր հավանականությունը:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս, ինչպես նաև գրավի թույլատրելիության հարցը լուծելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույնանման իրավական դիրքորոշում բազմիցս իր նախադեպային նշանակության վճիռներում հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ի թիվս այլոց տես Mamedova v. Russia, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, կետ 74, Panchenko v. Russia 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 102, Iljtkov v. Bulgaria, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 81):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում նախատեսող և ավելի բարձր հանրային վտանգավորությամբ օժտված, այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց ազատությունից զրկելու իրավական հիմքերի առկայությունը փաստելու համար չեն կարող սահմանվել նույնանման չափորոշիչներ:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խափանման միջոց կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորումը

գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության հարցը դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում: Մասնավորապես, որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի, որ եթե մեղադրյալին մեղսագրվել է այնպիսի արարք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում մեկ տարին, ապա կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս կամ գրավի կիրառումը մերժելիս դատարանը պետք է ներկայացնի ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկներ մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու բարձր հավանականության վերաբերյալ: Այլ խոսքով՝ դատարանը պետք է կիրառի դատական ակտի պատճառաբանվածության ավելի բարձր չափանիշ և հիմնավորի, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը:

Վերոշարադրյալը բխում է անձին ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից: Հակառակ պարագայում կխախտվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի անհարկի սահմանափակման:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց պատրաստելու և պահելու համար (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Վ.Պողոսյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործություններին շարքին, որի համար նախատեսված առավելագույն պատիժը մեկ տարի ժամկետով ազատազրկում է:

Առաջին ատյանի դատարանը Վ.Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին իր որոշումը, ըստ էության, պատճառաբանել է երկու հանգամանքով. ա/ միջնորդության քննության պահին պահպանվել և չեն վերացել մեղադրյալ Վ.Պողոսյանին կալանքի տակ պահելու հիմքերը և պայմանը, բ/ Վ.Պողոսյանը խուսափել է վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալուց, ինչն էականորեն բարձրացնում է մեղադրյալի կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ գտնելով, որ Վ.Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու հարցում դատարանը հանգել է ճիշտ եզրակացության (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

16. Սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի

ներքո գնահատելով 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը Վ.Պողոսյանի նկատմամբ գրավի կիրառման թույլատրելիության կամ անթույլատրելիության հարցը չի քննարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում: Մասնավորապես, քննարկման առարկա չի դարձվել մեղադրյալին մեղսագրված հանցագործության տեսակի և դրա համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետի հարցը, որի արդյունքում հաշվի չի առնվել, որ Վ.Պողոսյանին մեղսագրվել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, որի համար պատժ է նախատեսված առավելագույնը մեկ տարի ժամկետով ազատագրկում: Այսինքն, գրավի կիրառման թույլատրելիության կամ անթույլատրելիության հարցը չի քննարկվել հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռության տեսանկյունից, որի արդյունքում դատարանը հանգել է ոչ իրավաչափ հետևության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը որևէ փաստական տվյալով չի հիմնավորել իր հետևությունն առայն, որ Վ.Պողոսյանը խուսափել է վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալուց: Գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց, որ մեղադրյալ Վ.Պողոսյանը պատշաճ ծանուցվել է վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու համար: Գործի նյութերից երևում է նաև, որ քրեական գործը հարուցվել է 2012 թվականի օգոստոսի 22-ին, նույն օրը Վ.Պողոսյանը բերման է ենթարկվել և ձերբակալվել է: Հետևաբար, այս պայմաններում դատարանի հետևությունը՝ վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալուց խուսափելու մասին, որևէ փաստական տվյալով հիմնավորված, հետևաբար նաև փաստարկված չէ:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը չի հիմնավորված և չպատճառաբանված որոշում է կայացրել մեղադրյալ Վ.Պողոսյանին կալանքից գրավով ազատելու անթույլատրելիության վերաբերյալ, իսկ Վերաքննիչ դատարանը, իր հերթին, անհիմն եզրահանգման է եկել Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ:

Հետևաբար, մեղադրյալ Վ.Պողոսյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

18. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Վ.Պողոսյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել դատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չիմնավորված, չպատճառաբանված և ոչ իրավաչափ որոշման կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է

հանդիսանում: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մեղադրյալ Վահագն Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Վահագն Հակոբի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

2.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0166/06/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Էդուարդ Գուրգենի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ մեղադրյալ Է.Մուրադյանի պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 19120312 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2012 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ Էդուարդ Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «նա Արմեն Սահակյանի առողջությանը դիտավորությամբ պատճառել է ծանր վնաս:

Այսպես. 2012 թվականի նոյեմբերի 06-ին, ժամը 23-ի սահմաններում Արմեն Սահակյանն իր բրոջն անհանգստացնելու կապակցությամբ համաքաղաքացի Աշոտ Այվազյանից պարզաբանում ստանալու նպատակով նախապես

պայմանավորվածության համաձայն իր ընկերներ՝ Արեն Մնացականյանի և Տարոն Կոստանոյանի հետ գնացել է Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, որտեղ հանդիպել են Աշոտ Այվազյանին և նրա ընկերներ Գագիկ Ջիլավյանին, Վարուժան Պողոսյանին և Էդուարդ Մուրադյանին: Հիշյալ հարցի պարզաբանման կապակցությամբ առաջացած վիճաբանության ընթացքում Էդուարդ Մուրադյանը նույն պողոտայի 48 շենքի դիմաց նախապես իր մոտ եղած սուր ծակող, կտրող գործիքով մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ հարվածել է Արմեն Սահակյանի որովայնի առաջնային պատին՝ վերջինիս առողջությանը պատճառել ծանր վնաս ու տեսնելով դեպքի վայր ժամանող ոստիկանության աշխատակիցներին, դիմել փախուստի» (տե՛ս նյութեր, թերթ 22):

2012 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Ղազախեցյանը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Է.Մուրադյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ քննիչի միջնորդությունը բավարարվել է: Նույն որոշմամբ դատարանը մերժել է կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպան Գ.Հարությունյանի միջնորդությունը:

3. Պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Է.Մուրադյանի պաշտպան Գ.Հարությունյանը:

2013 թվականի հունվարի 23-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրյալ Է.Մուրադյանի պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Վերաքննիչ դատարանի որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» բաժնում արձանագրված է. «Ըստ պաշտպանի՝ խախտվել են ՀՀ Սահմանադրության 16-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ, 129-րդ, 131¹-րդ, 132-րդ հոդվածների պահանջները:

2012 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 12.45-ին պաշտպան Գ.Հարությունյանը Էդուարդ Մուրադյանին ձերբակալումից ազատելու մասին միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Ղազախեցյանին՝ ձերբակալման 72 ժամյա ժամկետը լրանալու պատճառաբանությամբ: Քննիչը

մերժել է միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ հարցաքննությունից հետո նա բաց է թողնվել, սակայն իր այդ պատճառաբանությունը հիմնավորող որևէ փաստական տվյալ չի վկայակոչել:

Ժամը 14.00-ին՝ դատական նիստը սկսելուց հետո, ձերբակալման ժամկետը լրանալու և Է.Մուրադյանի անձնական անձեռնմխելիության խախտման մասին տեղեկացվել է նաև դատարանը, սակայն հաշվի չի առել և դատաքննության ընթացքում մեղադրյալը շարունակվել է պահվել ոստիկանների հսկողության տակ:

Պաշտպանը նշել է, որ 2012 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 16.00-ի սահմաններում Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը հրապարակել է Էդուարդ Մուրադյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին հարուցած միջնորդությունը բավարարելու մասին որոշումը:

Այսպիսով՝ Է.Մուրադյանը հարկադրաբար ազատությունից զրկվել է, այսինքն փաստացի արգելանքի տակ պահվել է 2012 թվականի նոյեմբերի 07-ից ժամը 10.30-ից, ուստի ձերբակալման 72 ժամյա ժամկետը լրացել էր 2010 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 10.30-ին: Փաստորեն, մինչև դատարանի որոշման հրապարակելու պահը նա շուրջ 5 ժամ 30 րոպե ապօրինի պահվել է անազատության մեջ և դատարանը տեղեկացված լինելով այդ մասին ոչ միայն չի վերացրել այդ խախտումը, այլ նաև իր որոշմամբ չի արձանագրել այն, այնինչ պարտավոր էր դա անել» (տե՛ս նյութեր, թերթ 77):

6. Վերաքննիչ դատարանի որոշման «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» բաժնում առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) Նախաքննական մարմնի կողմից դատարան ներկայացված նյութերում առկա են բավարար փաստական տվյալներ, որոնք վկայում են դեպքին մեղադրյալի առնչության մասին:

Տվյալ դեպքում «Հիմնավոր կասկած» հասկացության վերը նշված մեկնաբանության համատեքստում վերլուծելով առկա փաստական տվյալները Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալ Էդուարդ Մուրադյանն ունի առնչություն իրեն վերագրվող հանցավոր արարքի հետ:

(...)

Քննության առնելով վերը նշված բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, հաշվի առնելով մեղադրյալին մեղսագրված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը (...), ինչպես նաև այն, որ չեն վերացել և շարունակում են առկա լինել Էդուարդ Մուրադյանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները (...), հետևաբար առաջին ատյանի դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը վերացնելու համար:

(...)

Ինչ վերաբերում է պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկներին, ապա նշված հանգամանքները նախաքննության այս փուլում չեն կարող գրավի երաշխիք հանդիսանալ:

Հետևաբար, Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ քննիչի կողմից դատարան ներկայացված միջնորդությունը համապատասխանում է գործող օրենքների պահանջներին և կայացնելով մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշում և մեղադրյալին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին որոշում, ընդհանուր իրավասության դատարանը չի խախտել ՄԻԵԿ-ի, ՄԻԵԴ-ի, ՀՀ Վճռաբեկ դատարանի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները, հետևաբար դատարանի որոշումը պետք է թողնել ուժի մեջ՝ այն օրինական և հիմնավորված լինելու պատճառով, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ մերժել» (տե՛ս նյութեր, թերթ 78-79):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Է.Մուրադյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և այն գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները կայացվել են ՀՀ Սահմանադրության 16-րդ, 18-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 13-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ, 103-րդ, 129-րդ, 131¹-րդ, 132-րդ, 135-րդ, 136-րդ, 285-րդ և 393-րդ հոդվածների պահանջների խախտումներով: Մասնավորապես, Է.Մուրադյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և այն գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու մասին ստորադաս դատարանների որոշումները պատճառաբանված չեն:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը վկայակոչել է Գ-ագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳԴ/0085/06/09 և Արամ Ճուղուրյանի գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները և նշել, որ սույն գործով դատարանների կողմից կայացված դատական ակտերը հակասում են վերոնշյալ որոշումներին:

Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ վերաքննիչ բողոքում նշել է իր պաշտպանյալին ձերբակալելու ընթացքում թույլ տրված խախտումների մասին, որոնք Վերաքննիչ դատարանը շարադրել է իր որոշման մեջ, սակայն դրանց կապակցությամբ որևէ եզրահանգում չի արել և այդ առումով իր դատական ակտը չի պատճառաբանել: Փոխարենը Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ եզրահանգումներ է արել հիմնավոր կասկածի վերաբերյալ, որի կապակցությամբ վերաքննիչ բողոքում որևէ հարց բարձրացված չի եղել:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ մեջբերել է այնպիսի ձևակերպումներ, որոնք վերաբերում են կալանքի ժամկետի երկարացման միջնորդությունների քննարկմանը:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա չդարձնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստի վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկները՝ մեղադրյալ Է.Մուրադյանին գրկել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից:

8. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 10-ի, Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշումները և մեղադրյալ Է.Մուրադյանին անհապաղ ազատ արձակել արգելանքից, կամ կայացնել նոր դատական ակտ՝ թույլատրելի ճանաչելով Է.Մուրադյանի նկատմամբ գրավի կիրառումը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից երկու հարց է բարձրացվել, որոնցից առաջինը վերաբերում է Է.Մուրադյանին կալանավորելու հիմքերի առկայության, ինչպես նաև նրա նկատմամբ գրավի կիրառումը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները պատճառաբանված չլինելուն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), երկրորդը՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերում առկա անհամապատասխանությանը, ինչպես նաև Է.Մուրադյանի ձեռքակալման օրինականությանը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցին հնարավոր չէ պատասխանել՝ առանց երկրորդ հարցին անդրադառնալու, ուստի Վճարելի դատարանը նախ և առաջ քննության է առնում Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերում առկա անհամապատասխանության վերաբերյալ բողոքաբերի բարձրացրած երկրորդ հարցը:

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը:

11. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք: (...)

4. (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության

խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան (...)»

10. Քրեական վարույթն իրականացնող մարմինը բողոքի վերաբերյալ ընդունում է պատճառաբանված որոշում (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: (...)»

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրված բոլոր հետևությունները և որոշումները»:

Մեջբերված օրենսդրական դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ֆ. Գալստյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված՝ դատավճռին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները վերաբերելի են նաև մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերին (որոշումներին):

(...) Դատական ակտն օրինական է, եթե կայացվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և հիմնավորված՝ եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանդումներով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման» (տե՛ս Ֆրունզիկ Գ-ալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 17-19-րդ կետերը):

12. *Գ. Ղազարյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «[Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են նաև վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող

դատական ակտին: Այլ կերպ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը ևս պետք է կազմված լինեն ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից, որոնց ներկայացվում են նույն բովանդակային պահանջները, ինչ դատավճռին:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատական ակտի կառուցվածքին և բովանդակությանը որոշակի պահանջներ ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական ակտը պետք է ամբողջական տեղեկություն պարունակի քննված գործի վերաբերյալ, ինչպես նաև ներառի դատարանի կողմից լուծման ենթակա բոլոր հարցերի պատասխանները: Բացի այդ, դատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ ունենա, (...) հակառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է» (տե՛ս Գեղամ Միսակի Գազարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11 որոշման 19-20-րդ կետերը):

Ա.Հարությունյանի գործով որոշման մեջ վերահաստատելով Գ.Ղազարյանի գործով ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) դատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է բխեն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապատասխանեն դրանց: Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապատասխանի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը» (տե՛ս Աննա Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԳ/0110/01/11 որոշման 14-րդ կետը):

13. Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության քննության ընթացքում դատարանի կողմից անձի ձերբակալման օրինականությունը քննարկելու հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ.Միքայելյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մարդու հիմնարար իրավունքները, որպես անմիջականորեն գործող իրավունք, կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման օրինականությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Հակառակ դեպքում կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Ուստի կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ (...)» (տե՛ս Գագիկ Գառնիկի Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի

18-ի թիվԵԱԳԴ/0085/06/09 որոշման 34-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպան Գ.Հարությունյանը վերաքննիչ բողոքում վիճարկել է իր պաշտպանյալի ձերբակալման գործընթացի օրինականությունը՝ պնդելով, որ Է.Մուրադյանը փաստացի արգելանքի տակ պահվել է թույլատրելի 72 ժամից ավելի, և Առաջին ատյանի դատարանը, տեղեկացված լինելով խախտման մասին, իր որոշմամբ չի արձանագրել այն:

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման հիմնավորվածությունը, իր որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» բաժնում մանրամասն շարադրել է պաշտպանի վերոհիշյալ փաստարկը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), սակայն դատական ակտի պատճառաբանական մասում դրան չի անդրադարձել և քննարկման առարկա չի դարձրել:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Վերաքննիչ դատարանը, իր դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում, մասնավորապես՝ «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» հատվածում վերլուծել է հիմնավոր կասկածի ինստիտուտը, որի կապակցությամբ վերաքննիչ բողոքում որևէ փաստարկ ներկայացված չի եղել, ինչպես նաև մեջբերել է այնպիսի ձևակերպումներ, որոնք վերաբերում են կալանքի ժամկետի երկարացման միջոցառությունների քննարկմանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), մինչդեռ վերաքննության կարգով բողոքարկված է եղել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և ոչ թե ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշումը: Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտի նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերում առկա է անհամապատասխանություն. դատական ակտի եզրափակիչ մասում արձանագրված եզրահանգումը չի բխում նույն ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությունից:

16. Սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մեղադրյալ Է.Մանուկյանի ձերբակալման օրինականության վերաբերյալ պաշտպանական կողմի փաստարկները դուրս են մնացել դատական վերահսկողության շրջանակից, ինչը կարող է հանգեցնել մեղադրյալի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշման եզրափակիչ մասը չի համապատասխանում նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը:

17. Սույն որոշման 11-16-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն

օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը հիմնավորված չէ: Մասնավորապես, սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտում: Նշված խախտումն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը բեկանելու հիմք է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մեղադրյալ Էդուարդ Գուրգենի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Է.Մուրադյանին կալանավորելու հիմքերի առկայության, ինչպես նաև նրա նկատմամբ գրավի կիրառումը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները պատճառաբանված չլինելու վերաբերյալ բողոքաբերի հարցին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման նախորդ կետում արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Էդուարդ Գուրգենի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

3.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԳ/0058/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

ընդհանրապես անհատապետ, քննության առնելով Արմեն Բաբկյանի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ, քաղաքացիական պատասխանող Ա.Ավետիսյանի ներկայացուցիչ Մ.Մանուկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում հարուցվել է թիվ 83104510 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերի հատկանիշներով:

2010 թվականի նոյեմբերի 10-ին թիվ 83104510 քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությանը:

2012 թվականի մայիսի 3-ի որոշմամբ Արմեն Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով և 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննական մարմնի 2012 թվականի մայիսի 3-ի որոշմամբ թիվ 83104510 քրեական գործից անջատվել և ինքնուրույն վարույթում առանձնացվել է

մեղադրյալ Ա.Ավետիսյանի վերաբերյալ քրեական գործի մասը, որին շնորհվել է 69103612 համարը:

2012 թվականի մայիսի 8-ին Ա.Ավետիսյանի վերաբերյալ թիվ 69103612 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Ա.Ավետիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով կարճվել է, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռով Ա.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը, և Ա.Ավետիսյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Մեղադրողի ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարվել է՝ վճռվել է ամբաստանյալ Ա.Ավետիսյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 2.632.000 (երկու միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

3. Ամբաստանյալ, քաղաքացիական պատասխանող Ա.Ավետիսյանի ներկայացուցիչ Մ.Մանուկյանի կողմից քաղաքացիական հայցի մասով բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ, քաղաքացիական պատասխանող Ա.Ավետիսյանի ներկայացուցիչ Մ.Մանուկյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հունվարի 21-ի որոշմամբ ամբաստանյալ, քաղաքացիական պատասխանող Ա.Ավետիսյանի ներկայացուցիչ Մ.Մանուկյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Սույն գործով հաստատված է համարվել հետևյալը.

Ա.Ավետիսյանը, 2010 թվականի ընթացքում աշխատելով «Հայփոստ» ՓԲ ընկերության Երևան քաղաքի թիվ 0037 փոստային բաժանմունքի պետի

պաշտոնում, հանդիսանալով առևտրային կազմակերպության ծառայող, օժտված է եղել կարգադրիչ և վարչատնտեսական, այն է՝ ՀՀ կառավարության «Հարկային վարչարարության օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1330-Ն որոշման և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 2010 թվականի ապրիլի 9-ին կնքված թիվ FS-010410 պայմանագրի համաձայն՝ ՀՀ տարածքում ապրանքներ և ծառայություններ ձեռք բերող անձանց տրամադրված հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների հատուկ համարների վիճակահանության արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակները ներկայացնող անձանցից անձը հաստատող փաստաթղթով ընդունելու և դրանց համար հաշվարկված բոնուսային գումարներ տրամադրելու լիազորությամբ:

Ա.Ավետիսյանը, չարաշահելով իր կարգադրիչ լիազորությունները, գործելով հակառակ ընկերության շահերին և այդ լիազորությունները Սամվել Թազիյանի օգտին օգտագործելով, 2010 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում, 2010 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ՀԴՄ կտրոնների խմբաքանակներում կեղծ, իրականում կազմակերպությունների անվամբ չելքագրված և վերջիններիս ֆիսկալային հաշվետվություններին չհամապատասխանող ՀԴՄ կտրոններ պարունակող խմբաքանակներ է ընդունել տարբեր քաղաքացիների անձնագրերի պատճեններով, որոնք ձևակերպել է առանց այդ քաղաքացիների ներկայության ու ելքագրել է 3.132.000 ՀՀ դրամի բոնուսային գումար: Այն ամբողջությամբ փոխանցել է ՀԴՄ կեղծ կտրոններ ներկայացրած անձին: Արդյունքում, Հայաստանի Հանրապետությանը պատճառվել է ծանր հետևանքներ առաջացնող գույքային վնաս: Հիշյալ գործողությունները կատարելու համար Ա.Ավետիսյանը ստացել է 50.000 ՀՀ դրամ առևտրային կաշառք (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 154-162, հատոր 4, թերթ 78-84, 140-144):

6. Գործով մեղադրող Լ.Հովհաննիսյանի կողմից Առաջին ատյանի դատարան է ներկայացվել քաղաքացիական հայց 2.632.000 (երկու միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամի պահանջի մասին, որտեղ որպես պատասխանող նշվել է ամբաստանյալ Ա.Ավետիսյանը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 61-62):

7. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռով մեղադրողի ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարվել է՝ վճռվել է ամբաստանյալ Ա.Ավետիսյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 2.632.000 (երկու միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ: Քաղաքացիական հայցը բավարարելիս Առաջին ատյանի դատարանը, մասնավորապես, պատճառաբանել է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների համաձայն՝ հանցագործությամբ անմիջականորեն պատճառված վնասը ենթակա է վերականգնման, իսկ հայցապահանջը վերաբերում է միայն հանցագործությամբ անմիջականորեն պատճառված վնասին: Բացի այդ, ամբաստանյալն ընդունել է քաղաքացիական հայցն ամբողջությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 83-84):

8. Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է հիմնավորված և իրավաչափ դատական ակտ, այն թողել է օրինական

ուժի մեջ, պատճառաբանելով, որ «սույն գործով կիրառելի չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի կանոնները: (...) [Պ]ետությանը պատճառված վնասը սույն գործով պետք է դիտարկել որպես աշխատանքային պարտականության շրջանակներից դուրս՝ ամբաստանյալի կողմից դիտավորությամբ կատարված հանցագործության անմիջականորեն հետևանք, հետևաբար սույն գործով ներկայացված քաղաքացիական հայցի լուծման համար պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի դրույթները» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 132, 133):

9. Ըստ «Հայփոստ» ՓԲԸ-ի և Ա.Ավետիսյանի միջև 2007 թվականի հունվարի 1-ին կնքված թիվ 197 աշխատանքային պայմանագրի և դրանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2008 թվականի հուլիսի 1-ին և 2010 թվականի փետրվարի 15-ին կնքված լրացուցիչ համաձայնագրերի՝ Ա.Ավետիսյանը նշանակվել է թիվ 37 փոստային բաժանմունքի պետ: Նրա գործառույթների մեջ է մտել փոստային բաժանմունքի աշխատանքների կազմակերպումը և վերահսկումը:

Ա.Ավետիսյանը պարտավորվել է ենթարկվել գործատուի կողմից ընդունված ներքին և անհատական իրավական ակտերին: Իր իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ, պահպանել «Հայփոստ» ՓԲԸ-ի ներքին կարգապահական կանոնները, կրել անձնական և նյութական պատասխանատվություն գործատուին հասցված վնասների համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 114-130):

10. 2010 թվականի ապրիլի 9-ին ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ «Պրինցիպալ») և «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ «Գործակալ») միջև կնքվել է թիվ FS-01.04.10 պայմանագիրը: Պայմանագրի համաձայն՝ Գործակալը մատուցում է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշմամբ սահմանված կարգով իրականացված վիճակահանության արդյունքում շահած կտրոններ տիրապետող ֆիզիկական անձանց բազային պարզևավճարի վճարման ծառայություններ, ուղեցույցով սահմանված կարգով մատուցում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացված վիճակահանության արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակների համար ֆիզիկական անձանց բոնուսների հաշվարկման և վճարման ծառայություններ:

Պրինցիպալն իրավունք ունի՝ պահանջել պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել պատշաճ կարգով՝ պայմանագրի պայմաններին համապատասխան: Ուղեցույցով սահմանված պահանջներին չհամապատասխանող կտրոնի դիմաց պարզևավճար կամ ուղեցույցով սահմանված պահանջներին ակնհայտ չհամապատասխանող (այդ թվում՝ սույն ուղեցույցով սահմանված կարգով Պրինցիպալի իրականացրած ուսումնասիրությամբ հայտնաբերված) կտրոնների խմբաքանակի դիմաց բոնուս վճարվելու դեպքում Գործակալից պահանջել Պրինցիպալին վերադարձնելու ակնհայտ չհամապատասխանող կտրոնների դիմաց վճարված գումարը, եթե Պրինցիպալը Գործակալին վճարել է վերջինիս կողմից համապատասխան ֆիզիկական անձին վճարված պարզևավճարի և բոնուսի գումարը: Եթե

խմբաքանակում հայտնաբերված ակնհայտ չհամապատասխանող կտրոնների թիվը և/կամ գործարքների գումարն այնքան է, որ խախտում է ուղեցույցի 15-րդ կետի պահանջները, ապա Պրինցիպալն իրավունք ունի Գործակալից պահանջել վերադարձնելու ամբողջ խմբաքանակի համար վճարված գումարը:

Պայմանագրի պայմանների խախտման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքներով սահմանված կարգով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 140-145):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնց արդյունքում կայացրել է անօրինական, անհիմն որոշում:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը վերլուծել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ, 1062-րդ հոդվածները և դրա հիման վրա նշել, որ Ա.Ավետիսյանը գործել է աշխատանքային պայմանագրի հիման վրա, այսինքն՝ սույն գործով վնասը պատճառվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի աշխատող Ա.Ավետիսյանի կողմից՝ իր աշխատանքային պարտականությունները կատարելիս: Հետևաբար, սույն գործով քաղաքացիական հայցը պետք է ներկայացվեր ոչ թե Ա.Ավետիսյանի, այլ «Հայփոստ» ՓԲԸ-ի դեմ և վերջինս պարտավոր էր ամբողջ ծավալով հատուցել իր աշխատողի կողմից պատճառված վնասը:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը քաղաքացիական հայցի մասով բեկանել և փոփոխել: Քաղաքացիական հայցը մերժել՝ ՀՀ գլխավոր դատախազությանը վերապահելով քաղաքացիական հայցով դատարան դիմելու իրավունք:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքային պարտականությունները կատարելիս գործատուի անունից հանդես եկող աշխատողի կողմից հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը

հետևյալն է. հիմնավորված է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ սույն գործով գույքային վնասը հասցվել է Ա.Ավետիսյանի՝ աշխատանքային պարտականությունների շրջանակից դուրս կատարված հանցավոր արարքի արդյունքում, հետևաբար այդ վնասը ենթակա է հատուցման ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կողմից:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար:

2. Քաղաքացիական պատասխանող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

2. Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:

3. Քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ «Գատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված քաղաքացիական հայցը, եթե խախտվել են պետության գույքային շահերը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

2. Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

3. Հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին»:

16. Վերոգրյալ իրավադրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել են Փ.Էլիզբարյանի գործով որոշման մեջ, որտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «ՀՀ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննությունը և լուծումը կանոնակարգված է օրենսգրքի 154-164 հոդվածներով (գլուխ 20-րդ՝ քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում): Օրենսգրքի 154

հողվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է քրեական դատավարության օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: Նույն հողվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն քրեական դատավարության օրենսգրքով:

Այսինքն քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության և լուծման ընթացքում կիրառվում են քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխով, ինչպես նաև տվյալ օրենսգրքի այլ հողվածներով սահմանված կանոնները, իսկ այլ կանոններ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին» (տե՛ս Փայլակ Էլիզբարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ գործով թիվ ՎԲ-35/07 որոշումը):

17. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հողվածի համաձայն՝

«1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (...):»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հողվածի համաձայն՝

«1. Իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը:

2. Սույն գլխի կանոնների համաձայն՝ աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարող քաղաքացին, եթե նա գործել է կամ պետք է գործեր համապատասխան իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո:

(...):»:

Մեջբերված քաղաքացիաիրավական դրույթները համակարգային վերլուծության են ենթարկվել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից Ա.Աբելյանն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հ.Գահնիելյանի՝ վնասի փոխհատուցման պահանջի մասին գործով: Նշված գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ «(...) իրավաբանական անձի աշխատողի կողմից վնաս պատճառվելու դեպքում որպես վնաս պատճառող

հանդես է գալիս տվյալ աշխատողը, քանի որ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով է պատճառվել վնասը: Միաժամանակ, օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատողը տվյալ գործողությունները կատարել է ոչ թե ամբողջությամբ ազատ լինելով դրանց մեջ, այլ իրականացնելով իր աշխատանքային պարտականությունները, որպես պատասխանատվություն կրող սուբյեկտ դիտել է ոչ թե վնաս պատճառողին, այլ այն իրավաբանական անձին (անհատ ձեռնարկատիրոջը), որի աշխատողի կողմից պատճառվել է վնասը: Օրենսդրական նման իրավակարգավորման նպատակն առաջին հերթին կայանում է նրանում, որ աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս վնաս պատճառելու դեպքում աշխատողը գործում է ոչ թե իր, այլ հենց գործատուի անունից, և հետևաբար օրենսդիրը, վնասի հատուցման պարտավորությունը դնելով գործատուի վրա, կարևորել է տուժող կողմի համար որոշակի երաշխիքների ապահովումը պատճառված վնասի ամբողջական վերականգնման առումով. ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքի դրսևորում է վնասի հատուցման հարաբերություններում:

Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանները պետք է հաշվի առնեն, որ նմանատիպ գործերի քննության ժամանակ էական նշանակություն ունի յուրաքանչյուր գործով պարզել՝ արդյոք վնասը պատճառվել է աշխատող համարվող անձի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելիս:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարող քաղաքացին, եթե նա գործել է կամ պետք է գործեր համապատասխան իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո:

ՀՀ աշխատանքային օրենսգրքը սահմանում է նաև աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման կարգը:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են (...):

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում

է: Աշխատանքային իրավունքների իրականացմամբ և պարտականությունների կատարմամբ չպետք է խախտվեն այլ անձանց՝ օրենքներով պաշտպանվող իրավունքներն ու շահերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը սահմանում է նաև, որ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները (...):

Վերոնշյալ նորմերի համադրությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 2-րդ կետի հետ ցույց է տալիս, որ անձը աշխատող համարվելու համար պետք է աշխատի աշխատանքային պայմանագրի հիման վրա: Միաժամանակ, օրենսդիրը վերջինիս պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել օրինականության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ, այլ պարտադիր կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմերին: (...)

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ գործատուն (...) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 35-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է աշխատողների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը: Այսինքն՝ օրենսդիրը, գործատուին իրավունք ընձեռելով սահմանել վերոնշյալ ակտերը, միաժամանակ վերջինիս իրավունք է ընձեռել վերահսկողություն իրականացնել դրանց պահպանման նկատմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ գործատուն պատասխանատվություն է կրում իր աշխատողի կողմից հասցված վնասի համար ոչ միայն այն դեպքում, երբ վերջինս գործել է գործատուի առաջադրանքով, այլ նաև այն դեպքում, երբ աշխատողը պարտավոր էր նման կերպ գործել: Դեռ ավելին, աշխատողը պետք է գործի աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ գործատուի վերահսկողության ներքո, այսինքն՝ գործատուն պարտավորվում է պատշաճ կերպով վերահսկել իր աշխատողների կողմից աշխատանքային պարտականությունների (այդ թվում կարգապահական կանոնների) պատշաճ կատարումը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ աշխատողն իր աշխատանքային պարտականությունները կատարում է գործատուի վերահսկողությունից դուրս, դրանով իսկ խախտելով աշխատանքային պայմանագիրը, ապա նա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթի իմաստով չի դադարում աշխատող լինելուց, դրանից բխող հետևանքներով (...):» (տե՛ս Ա.Աբելյանն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հ.Գանիելյանի՝ վնասի փոխհատուցման պահանջի մասին գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ԿԳ/0125/02/11 որոշումը):

18. Սույն որոշման 15-րդ կետերում մեջբերված և Փ.Էլիզարյանի գործով որոշմամբ վերլուծված քրեադատավարական նորմերը մեկնաբանելով ՀՀ վճռաբեկ

դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից ձևավորված և սույն որոշման մախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում ներկայացված քաղաքացիական հայցով, առանձին դեպքերում, մեղադրյալի գործողությունների արդյունքում հասցված վնասի համար պատասխանատվություն կարող է կրել նաև իրավաբանական անձը: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում կպարզվի, որ վնասը պատճառվել է աշխատողի կողմից իր աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս, վնասի հատուցման պարտականությունը, քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան, պետք է կրի գործատուն՝ իրավաբանական անձը, որի աշխատողն է հանդիսացել և որի անունից, գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա, գործել է ամբաստանյալը: Ընդ որում, այս դեպքում համապատասխան իրավաբանական անձը, ում վրա քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված քաղաքացիական հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար, պետք է պատշաճ կերպով մասնակից դարձվի գործի քննությանը՝ ներգրավվի որպես քաղաքացիական պատասխանող, որպեսզի իր իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման հնարավորություն ունենա:

19. Սույն գործի նյութերից երևում է, որ Ա.Ավետիսյանը 2010 թվականի փետրվարի 15-ից աշխատել է «Հայփոստ» ՓԲԸ-ում՝ որպես Երևան քաղաքի թիվ 0037 փոստային բաժանմունքի պետ, օժտված է եղել կարգադրիչ և վարչատնտեսական լիազորություններով: Աշխատանքային պայմանագրի համաձայն՝ նա պարտավորվել է ենթարկվել գործատուի կողմից ընդունված ներքին և անհատական իրավական ակտերին, պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ, պահպանել «Հայփոստ» ՓԲԸ-ի ներքին կարգապահական կանոնները (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Սույն գործի նյութերից երևում է նաև, որ 2010 թվականի ապրիլի 9-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքվել է թիվ FS-01.04.10 պայմանագիրը, որով «Հայփոստ» ՓԲԸ-ն պարտավորվել է մատուցել ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշմամբ սահմանված կարգով իրականացված վիճակահանության արդյունքում շահած կտրոններ տիրապետող ֆիզիկական անձանց բազային պարգևավճարի վճարման, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացված վիճակահանության արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակների համար ֆիզիկական անձանց բոնուսների հաշվարկման և վճարման ծառայություններ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Սույն գործով ստորադաս դատարանները հաստատված են համարել, որ Ա.Ավետիսյանը, հանդիսանալով Երևան քաղաքի թիվ 0037 փոստային բաժանմունքի պետ և օժտված լինելով կարգադրիչ և վարչատնտեսական լիազորություններով, չարաշահել է իր կարգադրիչ լիազորությունները, գործել

հակառակ ընկերության շահերին և այդ լիազորությունները Ս.Թազիյանի օգտին օգտագործելով՝ 2010 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում, 2010 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ՀԳՄ կտրոնների խմբաքանակներում կեղծ. իրականում կազմակերպությունների անվամբ չեքագրված և վերջիններիս ֆիսկալային հաշվետվություններին չհամապատասխանող ՀԳՄ կտրոններ պարունակող խմբաքանակներ է ընդունել տարբեր քաղաքացիների անձնագրերի պատճեններով, որոնք ձևակերպել է առանց այդ քաղաքացիների ներկայության ու ելքագրել է 3.132.000 ՀՀ դրամի բոնուսային գումար: Այն ամբողջությամբ փոխանցել է ՀԳՄ կեղծ կտրոններ ներկայացրած անձին: Արդյունքում Հայաստանի Հանրապետությանը պատճառվել է ծանր հետևանքներ առաջացնող գույքային վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Գործի նյութերից երևում է նաև, որ գործի դատական քննության ընթացքում մեղադրողը ներկայացրել է քաղաքացիական հայց, որով որպես պատասխանող նշել է Ա.Ավետիսյանին և խնդրել է նրանից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 2.632.000 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռով մեղադրողի ներկայացրած քաղաքացիական հայցն ամբողջությամբ բավարարվել է՝ վճռվել է ամբաստանյալ Ա.Ավետիսյանից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 2.632.000 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է հիմնավորված և իրավաչափ դատական ակտ, այն թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Գործի նյութերից երևում է նաև, որ Ա.Ավետիսյանի գործատուն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ն, սույն գործող քաղաքացիական պատասխանող չի ճանաչվել:

20. Սույն որոշման 15-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 19-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ա.Ավետիսյանն իրեն մեղսագրվող դիտավորյալ գործողությունները կատարելիս՝ ՀԳՄ կտրոններ պարունակող խմբաքանակների դիմաց 3.132.000 ՀՀ դրամի բոնուսային գումար ձևակերպելիս և ելքագրելիս, հանդես է եկել «Հայփոստ» ՓԲԸ-ի անունից, նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է պաշտոնի անձնագրով նախատեսված որոշակի աշխատանքներ՝ աշխատանքային օրենսդրության և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Սակայն Ա.Ավետիսյանը չարաշահել է իր կարգադրիչ լիազորությունները, գործել է հակառակ ընկերության շահերին և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր լիազորություններն օգտագործել այլ անձի օգտին՝ արդյունքում պետությանը պատճառելով 3.132.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Այլ խոսքով՝ սույն գործով գույքային վնասը պատճառվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի աշխատող համարվող և գործատուի անունից հանդես եկող անձի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելիս: Մինչդեռ ստորադաս դատարանների կողմից այս հանգամանքն անտեսվել է, որի հետևանքով «Հայփոստ» ՓԲԸ-ն գործով դատավարության մասնակից չի դարձվել, որպես

քաղաքացիական պատասխանող չի ներգրավվել, իսկ քաղաքացիական հայցը ներկայացվել է բացառապես ամբաստանյալ Ա.Ավետիսյանի դեմ, և Առաջին ատյանի դատարանը, ամբողջությամբ բավարարելով քաղաքացիական հայցը, վճռել է պահանջված գումարը բռնագանձել ամբաստանյալ Ա.Ավետիսյանից:

Հետևաբար, Վճարելի դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ սույն գործով գույքային վնասը հասցվել է Ա.Ավետիսյանի՝ աշխատանքային պարտականությունների շրջանակից դուրս կատարված հանցավոր արարքի արդյունքում և ենթակա է հատուցման ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կողմից:

21. Վերոգրյալից բացի, Վճարելի դատարանը գտնում է, որ «Հայփոստ» ՓԲԸ-ն որպես ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ կնքված թիվ FS-01.04.10 պայմանագրի կողմ, պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ բարեխիղճ կատարելու դեպքում, կրում է հասցված վնասը փոխհատուցելու պարտականություն: Ուստի սույն գործով գործատուն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ն, այլ ոչ թե ընկերության աշխատողը՝ Ա.Ավետիսյանը, պետք է ներգրավվեր որպես քաղաքացիական պատասխանող և հայցը հիմնավոր լինելու դեպքում կրեր հասցված վնասը փոխհատուցելու պարտականություն: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն ընդգծում է, որ տուժողին պատճառված վնասը փոխհատուցելուց հետո «Հայփոստ» ՓԲԸ-ն, որպես իր աշխատողի կողմից պատճառված վնասը հատուցած գործատու, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի հիմքով ձեռք կրերի հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 14-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների էական խախտում: Վճարելի դատարանը գտնում է, որ թույլ տրված խախտումն ազդել է քաղաքացիական հայցով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտերի կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք է հանդիսանում: Ուստի, Վճարելի դատարանը գտնում է, որ վճարելի բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա ամբաստանյալ Արմեն Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը՝ քաղաքացիական հայցի մասով, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը պետք է բեկանել և փոփոխել՝ մեղադրողի ներկայացրած քաղաքացիական հայցը թողնել առանց քննության՝ հետագայում, պատշաճ քաղաքացիական պատասխանողի ներգրավմամբ, քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքի պարզաբանմամբ:

Ոստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արմեն Բաբկենի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Արաբկիր և Զանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը՝ քաղաքացիական հայցի մասով, և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը բեկանել, մեղադրողի ներկայացրած քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԳ/0126/13/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպաններ՝*

դատախազ՝

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն.ՌՇՏՈՒՆՈՒ
Ռ.ՌՇՏՈՒՆՈՒ
Ա.ԴԱՎԹՅԱՆԻ

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Արայի Արծրունու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպաններ Նարինե և Ռուբեն Ռշտունիների վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Արսեն Արայի Արծրունին մեղավոր է ճանաչվել 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 72-րդ, 17-100-րդ հոդվածներով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով և դատապարտվել՝ 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով՝ 12 տարի ժամկետով ազատազրկման, նույն օրենսգրքի 17-100-րդ հոդվածով՝ 12 տարի ժամկետով ազատազրկման, նույն օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով՝ մահապատժի:

1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի հիման վրա՝

նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժի մեջ կլանելու սկզբունքով Ա.Արծրունու նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել բացառիկ պատժամիջոց՝ մահապատիժ:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի օգոստոսի 1-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով Ա.Արծրունուն ներում է շնորհվել, և նրա նկատմամբ նշանակված մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

3. 2006 թվականի հուլիսի 31-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ վերոհիշյալ դատավճիռը վերանայելու և այն 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու խնդրանքով:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2006 թվականի օգոստոսի 8-ին որոշել է. «Արսեն Արայի Արծրունու կողմից կատարած հանցավոր արարքները համապատասխանեցնել 2003թ. ապրիլի 18-ին ընդունված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 222 հոդվածի 1-ին մասին, 38-104 հոդվածի 1-ին մասին, 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15 կետերին» (տե՛ս Առաջին ատյանի դատարանում կազմված նյութեր, էջ 4):

4. 2011 թվականի հունիսի 14-ին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան մուտք է եղել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալ Ա.Արծրունու դիմումը, որով դատապարտյալը խնդրել է վերանայել իր վերաբերյալ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը և այն համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքին՝ հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-143-Ն ՀՀ օրենքը:

5. 2011 թվականի օգոստոսի 22-ին դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ն.Ռ.Ղտունին վերաքննության կարգով բողոքարկել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումը՝ խնդրելով ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերը փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով, քանի որ գործը քննած դատավորի անփութության պատճառով հիշյալ որոշման մեջ տեղ է գտել տեխնիկական սխալ, և արդյունքում խախտվել են դատապարտյալ Ա.Արծրունու հիմնարար իրավունքները:

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ն.Ռ.Ղտունու վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ն.Ռ.Ղտունին բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ

բողոքը բավարարվել է՝ Ա.Արծրունու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումը և Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշումն ամբողջությամբ բեկանվել և գործն ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

6. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի հուլիսի 12-ին որոշում է կայացրել դատապարտյալ Ա.Արծրունու վերաբերյալ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը վերանայելու և այն ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնելու մասին: Դատապարտյալ Ա.Արծրունու նկատմամբ նշանակված պատիժը՝ ցմահ ազատազրկումը, թողնվել է նույնը:

7. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք են բերել դատապարտյալի պաշտպաններ Նարինե և Ռուբեն Ռշտունիները:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպանների վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 12-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

8. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպանները վճռաբեկ բողոք են ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

9. Նախաքննական մարմնի կողմից Ա.Արծրունուն մեղադրանք է առաջադրվել 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով, 99-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ կետերով հետևյալ արարքների համար.

«Լիբանանի Հանրապետության քաղաքացիներ Արսեն Արծրունին 1990 թվականին, իսկ Արա Հարմանդայանը 1991 թվականին մշտական բնակություն հաստատելու նպատակով տեղափոխվել են Հայաստանի Հանրապետություն, ուր զբաղվել են տնտեսական գործունեությամբ: Ա.Արծրունին 1981 թվականից, իսկ Ա.Հարմանդայանը 1982 թվականից լինելով Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության անդամ, Հայաստանում շարունակել են իրենց կուսակցական գործունեությունը և կատարել են կուսակցության կողմից տրված հանձնարարությունները: ՀՅԴ կուսակցության տնտեսական բնագավառի առաջադրանքները կատարելու համար Ա.Արծրունին 1992-1993 թվականների

ընթացքում կազմել ու պատրաստել է «Դ-րո» կառույցի բացատրություն ծրագիր-առաջարկը, իսկ ապա նաև «Դ-րո» հատուկ ծառայության կանոնադրությունը և միջանկյալ այլ փաստաթղթեր, որոնցում Հայաստանի Հանրապետության գործող օրենքներին հակառակ նախատեսել է զինվորական կարգապահության վրա հիմնված հետախուզական գաղտնի կառույցի ստեղծում, որն իր գործունեության հիմքում նպատակ ունենալով պահպանել կուսակցության հեղափոխական սկզբունքները, մերժելու Հայ դատի հետապնդման համար պառլամենտական գործունեության սկզբունքները, մինչև կազմակերպության մաքրագործումը մանիպուլյատոր թափանցումներից, կուսակցության մեջ պահելու Հայրենիքի և սփյուռքի կառույցների միջև կշիռը, միաժամանակ պետք է զբաղվեր քաղաքական, ռազմական, տնտեսական, դիվանագիտական և այլ բնույթի տեղեկությունների հավաքումով: Այդ փաստաթղթերում ամրագրելով ու արձանագրելով, որ «Դ-րո» տնտեսական հետախուզական կառույցը ստեղծվում է ՀՀԿ կուսակցության բարձրագույն մարմնի որոշմամբ, Ա.Արծրունին կանոնադրությամբ նախատեսված տնտեսական բաժնին վերաբերող խնդիրների լուծման նպատակով սկզբնական շրջանում ստեղծել է տնտեսական հետախուզական օպերատիվ կառույցը (ՏՀՕԿ), ապա «Դ-րո» կառույցի տնտեսական դասակը, որը զբաղվել է ոչ միայն անօրինական տնտեսական գործունեությամբ, այլ նաև ՀՀԿ կուսակցության անդամների նկատմամբ ոսնձգություններ կատարած, կուսակցության գաղափարներին դավաճանած, կուսակցության նկատմամբ վնասարար գործունեություն ծավալած անձանց հայտնաբերելու, նրանց նկատմամբ ահաբեկչություն կատարելու և հաշվեհարդար տեսնելու հակաօրինական հանցավոր գործունեությամբ՝ բանդիտիզմով:

Բանդայի կազմում Ա.Արծրունին ընդգրկել է իր գրասենյակում աշխատող ՀՀԿ կուսակցության անդամներ Արմենակ Մնջոյանին, Արմենակ Չաքարյանին, Արա Հարմանդայանին, Հովհաննես Մկրտչյանին: Վերջիններիս միջոցով տարբեր ժամանակներում բանդայի կազմում հավաքագրվել ու ընդգրկվել են նաև Արման Գրիգորյանը, Արտավազդ Մանուկյանը, Ջորայր Աթաբեկյանը, Էդիկ Սիմոնյանը, Գևորգ Ալավերդյանը և Թաթուլ Գաբրիելյանը: Կառույց-բանդան զինելու և հանցագործությունների կատարման ընթացքում զենք օգտագործելու համար անօրինական ճանապարհով և առանց համապատասխան թույլտվության բաժանվել են հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, որոնցից նախաքննության ընթացքում հայտնաբերվել և իրեղեն ապացույց են ճանաչվել լեհական արտադրության մեկ ատրճանակ-ավտոմատը, «Մակարով» տեսակի յոթ ատրճանակները, ռազմամթերք հանդիսացող փամփուշտները և այլ նյութեր:

Բանդայի գործունեության գաղտնիությունն ապահովելու և չբացահայտվելու նպատակով բանդայի անդամներին շնորհվել է կանոնադրությամբ նախատեսված որսի, օժանդակի, մարտիկի կոչումներ, ունեցել են ծածկագիր-համարներ, գաղտնի հավաքատեղեր, թաքստոցներ, կեղծանուններ, կիրառվել է միմյանց հետ հաղորդակցության ծածկագրված համակարգ, տրվել են գաղտնագրված հրամաններ ու զեկույցներ, օգտագործվել են կապավորներ, շնորհված ծածկագրերն ու կեղծանուններն էլ հաճախակի փոփոխվել են:

(...)

Բանդայի համար որպես հավաքատեղի և բազա են հանդիսացել «Արծրունի» ընկերության կողմից «Խանասոր» անվանումով ընկերության պահեստի անվան տակ Մասիսի շրջանային ձուկտնտեսության վարչությունից վարձակալած և նույն շրջանի Այնթափ գյուղում գտնվող պահեստների տարածքը և Երևանի Նար-Ղուսի փողոցի 4-րդ շենքի թիվ 75-րդ բնակարանը, որը գաղտնապահության նկատառումներով անվանվել է «Փարոս»:

Բանդան ունեցել է ինչպես տրանսպորտային միջոցներ, այնպես էլ ռադիոկապի միջոցներ, համակարգիչներ, կեղծ անձնագրեր պատրաստելու համար մետաղյա դրոշմակներ, ձեռնաշղթա, զրահաբաճկոն և այլ միջոցներ:

Իրենց լուսանկարներով, սակայն տարբեր անձանց անուններով ակնհայտ կեղծ անձնագրեր են ունեցել և օգտագործել բանդայի անդամներ Ա. Մնջոյանն ու Ա. Չաքարյանը:

1993-1994 թվականների ընթացքում բանդայի կողմից կատարվել են մի շարք ծանր հանցագործություններ, այդ թվում դիտավորյալ սպանություններ, թմրամիջոցներ ձեռք բերելու, մաքսանենգ ճանապարհով փոխադրելու և այլ հանցագործություններ:

Այսպես՝ 1993 թվականի օգոստոս ամսին Երևան քաղաքի բնակիչներ, երկվորյակ եղբայրներ Հայկ և Վահան Գեղամյաններն այլ անձանց հետ միասին գնացել են Երևանի Բաղրամյան փողոցի վրա գտնվող «Արծրունի» ընկերության գրասենյակ և Ա.Արծրունուց ավտովթարի հետևանքով Արարատի շրջանային հիվանդանոցում գտնվող իրենց կուսակցական ընկերների՝ Հրանտ Մարգարյանին և Հրազդանի Աբոյին, տեսակցության գնալու համար գումար են պահանջել: Ա.Արծրունին հրաժարվել է նրանց գումար տալուց, որի առիթով մի կողմից Գեղամյան եղբայրների, իսկ մյուս կողմից՝ Ա.Արծրունու և Ա.Հարմանդայանի միջև վիճաբանություն է առաջացել, այն վերածվել է կռվի, որի ընթացքում Հ.Գեղամյանը ջարդել է ընկերության գրասենյակի պատուհանի ապակիները, համակարգիչներից մեկը և պարտադրել է Ա.Արծրունուն իրենց մեքենայով գնալ Արարատ քաղաք՝ շրջանային հիվանդանոց:

Գրասենյակի դռանը ընթացող վիճաբանությունը և կռիվը դադարեցնելու նպատակով միջամտել է նաև գրասենյակից դուրս եկած Հ.Սկրտչյանը: Այդ պահին ավտոմեքենայով Բաղրամյան փողոցով անցնող Աշոտ Ներսիսյանը, տեսնելով իր ծանոթներ Գեղամյան եղբայրներին կռիվ անելիս, կանգնեցրել է ավտոմեքենան մայթեզրի մոտ և իջնելով մեքենայից՝ մոտեցել է Հ.Սկրտչյանին և ձեռքին ունեցած ինչ որ իրով հարվածել է նրա գլխին, որից վերջինս ուշաթափվել ու ընկել է գետնին: Տեսնելով այդ՝ Ա.Ներսիսյանը դեպքի վայրից հեռացել է:

Չհանդուրժելով տեղի ունեցած ընդհարումը՝ Ա.Արծրունին տնտեսական հետախուզական օպերատիվ դասակի հրամանատար Ա.Մնջոյանի հետ նախնական պայմանավորվածությամբ և փոխհամաձայնությամբ պլանավորել և մշակել են Ա.Ներսիսյանի կողմից ընկերության գրասենյակի վրա հարձակվելու պատճառները պարզելու նպատակով վերջինիս հայտնաբերելու, առևանգելու, իսկ ապա նաև սպանելու գործողությունը, որը գաղտնագրվել է որպես «Քերոք»:

կամ «02» գործողություն:

Գործելով Ա.Արծրունու հետ ունեցած հանցավոր պայմանավորվածությամբ՝ Արմենակ Մնջոյանն իր հերթին Ա.Ներսիսյանին առևանգելու հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով համապատասխան հետախուզական աշխատանքների կատարումը հանձնարարել է Ա.Զաքարյանին, որն էլ իր հրամանատարությամբ գործող Է.Միմոնյանի, Զ.Աթարբեկյանի և Գ.Ալավերդյանի մասնակցությամբ շուրջ երկու ամիս շարունակ գաղտնի դիտարկումներով և իրականացված հետախուզական միջոցառումներով նախապատրաստական աշխատանքներ են կատարել, որի ընթացքում պարզել են Աշոտ Ներսիսյանի բնակության տարբեր վայրերը, վերջինիս բնակարանի հասցեն, հեռախոսի համարը, բնակարանի սենյակների և նրանցում եղած գույքի տեղադրման հատակագիծը, ճշտել են Ա.Ներսիսյանի առօրյան՝ ունեցած կապերը, հաճախելու վայրերը, օգտագործվող ավտոմեքենաների պետհամարանիշերը, զբաղմունքը, որոնց վերաբերյալ տարբեր ամսաթվերով իրենց նախապես տրված ծածկագրերի նշումներով զեկուցագրեր են ներկայացրել Ա.Զաքարյանին, որն էլ իր հերթին՝ Ա.Մնջոյանին, վերջինս էլ՝ Ա.Արծրունուն:

1993 թվականի հոկտեմբերի 12-ին նշված անհրաժեշտ բոլոր տվյալները պարզելուց հետո բանդայի անդամներ Ա.Մնջոյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Զաքարյանը, Է.Միմոնյանը, Զ.Աթարբեկյանը, Հ.Սկրտչյանը և Ա.Մանուկյանը հանդիպել են Այնթափի բազայում, ուր Ա.Մնջոյանի առաջարկությամբ փոխադարձ հանցավոր համաձայնության են եկել «Արծրունի» ընկերության գրասենյակի մոտ օգոստոս ամսին տեղի ունեցած դեպքի պատճառները պարզելու, նաև Հ.Սկրտչյանին մարմնական վնասվածք պատճառելու համար վրեժխնդիր լինելու նպատակով Ա.Ներսիսյանին առևանգելու և բազա բերելու հարցի շուրջ, որից հետո Հ.Սկրտչյանին Ա.Ներսիսյանի կողմից ճանաչելու պատճառով Հ.Սկրտչյանին թողել են բազայում, իսկ մյուսները, «Մակարով» մակնիշի ատրճանակներով զինված, Ա.Մնջոյանի գլխավորությամբ վերջինիս կողմից վարած «ՎԱԶ-2121» մակնիշի Կ 90-59 ԱԲ պետհամարանիշի ավտոմեքենայով, ընդ որում չբացահայտվելու նպատակով ավտոմեքենայի պետհամարանիշը փոխված վիճակում, գնացել են Երևանի Չարբախ թաղամասում գտվող Շահվերդյան փողոցի 35-րդ շենքի մոտ, որի թիվ 15 բնակարանում կնոջ և մանկահասակ երեխայի հետ բնակվել է Ա.Ներսիսյանը: Հասնելով Ա.Ներսիսյանի բնակելի շենքի մոտ՝ Ա.Մնջոյանի հանձնարարությամբ և նախապես կատարած դերերի բաշխմամբ Է.Միմոնյանը, Զ.Աթարբեկյանը և Ա.Մանուկյանը հերթապահել են դրսում՝ փողոցից հետևելով գործողության ընթացքին, իսկ Ս.Գրիգորյանը և Ա.Զաքարյանը Ա.Մնջոյանի հետ միասին բարձրացել են Ա.Ներսիսյանի բնակարան, Ա.Ներսիսյանի ընկերոջ կողմից մեքենա վաճառելու նպատակով ուղարկված լինելու հնարովի պատրվակով մուտք են գործել բնակարան և շուրջ երկու ժամ տարբեր թեմաներով զրուցել են Ա.Ներսիսյանի հետ՝ փորձելով վստահություն ներշնչելու միջոցով նրան դուրս բերել բնակարանից, ապա առևանգելով տանել Այնթափի բազա:

Տեսնելով, որ Ա.Ներսիսյանը չի ցանկանում դուրս գալ բնակարանից, Ա.Մնջոյանը, Ա.Գրիգորյանը և Ա.Զաքարյանը հանել են իրենց մոտ ունեցած

ատրճանակները և փողերն ուղղելով Ա.Ներսիսյանի վրա՝ առաջարկել են իրենց հետ ներքև իջնել, սակայն վերջինս գոռգոռալով տեղից վեր է թռչել, որի ժամանակ էլ նրանք երեք ատրճանակներից կատարված կրակոցներով սպանել են Ա.Ներսիսյանին, իսկ ապա նաև կրակոցների ձայնից այդ սենյակ մտած նրա կնոջը՝ Նունե Մարուքյանին, ու աննկատ դուրս գալով բնակարանից՝ դրսում հերթապահող Է.Սիմոնյանի, Ա.Մանուկյանի և Ջ.Աթարբեկյանի հետ նույն ավտոմեքենայով վերադարձել են Այնթափի բազա, ընդ որում ինչպես մեքենայի մեջ Է.Սիմոնյանին, Ա.Մանուկյանին և Ջ.Աթարբեկյանին, այնպես էլ բազայում սպասող Հ.Սկրտչյանին հայտնել են, որ հնարավոր չի եղել Ա.Ներսիսյանին առևանգել ու բազա բերել, որի պատճառով էլ նրան ու կնոջը սպանել են իրենց բնակարանում:

Նույն օրը Ա.Մնջոյանը գաղտնագրված գրավոր զեկույց է կազմել՝ հասցեագրված Ա.Արծրունուն, որտեղ նշել է, որ «02 գործողությունը պսակվել է հաջողությամբ՝ իրենց կողմից նախօրոք մշակված երկրորդ տարբերակով»:

Բանդայի կողմից 1994թ. ապրիլ ամսին ծրագրվել է նաև ՀՅԳ կուսակցության ներսում «խափանարար» գործունեություն իրականացնելու համար նշված կուսակցության անդամ Գագիկ Գրիգորի Սահակյանի սպանությունը, որը գաղտնագրվել է որպես «Թոփ-1» գործողություն:

1994 թվականի ապրիլ ամսին Ա.Արծրունին Գ.Սահակյանի սպանությունը նախապատրաստելու և կատարելու հանձնարարությունը տվել է Ա.Մնջոյանին՝ իր դասակի միջոցով իրականացնելու համար:

(...)

Ստանալով հանձնարարությունը, բանդայի անդամներ Հ.Սկրտչյանի և Ս.Գրիգորյանի կողմից Ա.Ջաքարյանի ղեկավարությամբ շուրջ մեկ ամիս տևած գաղտնի դիտարկումներով և իրականացված համապատասխան հետախուզական միջոցառումներով նախապատրաստական աշխատանքներ կատարելուց, Գ.Սահակյանի առանձնատան տեղն ու նրա առօրյան պարզելուց հետո 1994 թվականի ապրիլի 26-ին և 27-ին՝ գիշերը, սպանությունը կատարելու նպատակով Ա.Ջաքարյանը, Ա.Գրիգորյանը, Հ.Սկրտչյանը և Ա.Մանուկյանը Ա.Մնջոյանի գլխավորությամբ «ՎԱԶ-2121» Նիվա մակնիշի ավտոմեքենայով «Մակարով» տեսակի ատրճանակներով զինված գնացել են Գ.Սահակյանի առանձնատան՝ Երևանի Հովնաթանի փողոցի թիվ 53 տան մոտ, որտեղ նախապես կատարած դերերի բաշխմամբ Հ.Սկրտչյանն ու Ա.Մանուկյանը հեռվից հետևել են Գ.Սահակյանի գալուն՝ Ա.Մնջոյանին, Ա.Գրիգորյանին ահազանգելու նպատակով, իսկ վերջիններս սպանությունը անմիջականորեն իրականացնելու համար զինված սպասել են Գ.Սահակյանին նրա առանձնատան շրջակայքում, սակայն առաջին օրը Գ.Սահակյանը տուն չի վերադարձել, իսկ երկրորդ օրը նրան երկու այլ տղաների հետ մեքենայով տեսել են Մալաթիա փողոցում, այնուհետև մինչև ժամը 24-ը նրան սպասել են իր առանձնատան մոտ, սակայն Գ.Սահակյանը տուն չի վերադարձել և տեղացող հորդառատ անձրևի պատճառով այլևս չեն սպասել Գ.Սահակյանի գալուն և փաստորեն իրենցից անկախ պատճառներով այդ օրերին չեն կարողացել իրենց հանցավոր մտադրությունը՝ Գ.Սահակյանի սպանությունը, իրականացնել:

որը նրանց հաջողվել է կատարելու 1994 թվականի մայիսի 2-ին:

Այդ օրը բանդայի անդամներ Ա.Գրիգորյանը, Հ.Սկրտչյանը, Ա.Մանուկյանը Ա.Մնջոյանի գլխավորությամբ, սակայն առանց Ա.Զաքարյանի, որին նախորդ օրը հարբած լինելու պատճառով Ա.Մնջոյանը որպես հրամանատար զրկել էր նախատեսված սպանության գործողությանը մասնակցելուց, «Մակարով» տեսակի ատրճանակներով զինված, «ՎԱԶ-2121» Նիվա մակնիշի Կ 90-59 ԱԲ պետհամարանիշի ավտոմեքենայով կրկին գնացել են Գ.Սահակյանի տան մոտ, որտեղ ավտոմեքենան Գ.Սահակյանի առանձնատան շրջակայքում եղած անձանց տեսադաշտում չերևալու նպատակով հեռու են կանգնեցրել, Ա.Մանուկյանը սպասել է ավտոմեքենայի մեջ, իսկ Հ.Սկրտչյանը ճանապարհին սպասել է Գ.Սահակյանի գալուն՝ ռադիոկապով առանձնատան մոտ սպասող Ա.Մնջոյանին ու Ա.Գրիգորյանին այդ մասին տեղեկացնելու համար: Գիշերվա ուշ ժամին նկատելով իր անձնական «ՎԱԶ-2108» մակնիշի ավտոմեքենայով տուն վերադարձող Գ.Սահակյանին, Հ.Սկրտչյանը այդ մասին ռադիոկապով հայտնել է Ա.Մնջոյանին ու Ա.Գրիգորյանին, որոնք առանձնատան ավտոտնակի մոտ մոտեցել են ավտոմեքենայից իջած Գ.Սահակյանին և իրենց մոտ ունեցած թիվ ԻՊ 2267 ու ԳՆ 2686 ատրճանակներից արձակած դիմահար 18 կրակոցներով սպանել են նրան ու ապա աննկատ հեռանալով դեպքի վայրից՝ նստել են մոտակայքում իրենց սպասող ավտոմեքենան և Հ.Սկրտչյանի ու Ա.Մանուկյանի հետ հեռացել են:

Հաջորդ օրը Ա.Մնջոյանը Գ.Սահակյանի սպանության վերաբերյալ պլանավորված գործողության հաջող ավարտի մասին զեկուցագրով տեղեկացրել է բանդայի ղեկավար Ա.Արծրունուն (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 124-126):

10. ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով արձանագրվել է.

«Դատական կոլեգիան գործով ձեռք բերված ապացույցների գնահատմամբ գտնում է, որ «Զերո» գործողության համար առաջադրված մեղադրանքի դրվագում ամբաստանյալ Ա.Արծրունու արարքը ենթակա է վերաորակման ՀՀ քրեական օրենսգրքի 17-100-րդ հոդվածով՝ միայն Ա.Ներսիսյանի սպանությունը կազմակերպելու համար՝ նկատի ունենալով, որ այն կատարվել է ի պատասխան նրա՝ «Արծրունի» ընկերության գրասենյակի մոտ 1993 թվականի օգոստոսին կատարած գործողության, որին Ա.Արծրունին անմիջականորեն չի մասնակցել, սակայն կազմակերպել է այն, իսկ Ն.Մարությանի սպանության համար մեղադրանքը պետք է դուրս գա նրան առաջադրված մեղադրանքի ընդհանուր ծավալից՝ ի նկատի ունենալով, որ Ն.Մարությանի սպանությունը այն կատարողների կողմից կատարվել է Ա.Մնջոյանի հետ ունեցած իր նախնական պայմանավորվածությունից դուրս /կատարողների էքսցես/, որի համար ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ կետով երկու անձի սպանություն կատարելու համար քրեական պատասխանատվություն պետք է կրեն միայն կատարողները՝ Ա.Մնջոյանը, Ա.Գրիգորյանը և Ա.Զաքարյանը:

Գնահատելով «Թոփ-1» գործողության համար առաջադրված մեղադրանքների դրվագով ամբաստանյալներից յուրաքանչյուրի կատարած գործողությունները՝

դատական կոլեգիան գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից իրավական ճիշտ գնահատական չի տրվել Ա.Արծրունու, Հ.Սկրտչյանի և Ա.Զաքարյանի գործողություններին:

Այսպես՝ ըստ գործի տվյալների՝ նախաքննական մարմինը Ա.Արծրունուն այդ դրվագով մեղադրանք առաջադրելիս ընդունել է, որ նա պլանավորել և կազմակերպել է Գ.Սահակյանի սպանությունը, որի կատարումը հանձնարարել է բանդայի հրամանատար Ա.Մնջոյանին, որն էլ բանդայի անդամների միջոցով այն իրականացրել է, և որի անմիջականորեն կատարմանը ամբաստանյալ Ա.Արծրունին չի մասնակցել: Փաստորեն գործի տվյալներով հիմնավորվել է, որ Ա.Արծրունին Ա.Ներսիսյանի սպանությունը կազմակերպելուց հետո կազմակերպել է նաև Գ.Սահակյանի սպանությունը, որի պայմաններում վերջին գործողության համար նրան առաջադրված մեղադրանքը ենթակա է վերադրական ՀՀ օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով»:

ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան գտել է, որ Ա.Արծրունուն նախաքննական մարմնի կողմից առաջադրված մեղադրանքը քրեաիրավական որակման առումով ենթակա է փոփոխման: Ա.Արծրունու մեղքը հիմնավորված համարելով ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով, 17-100-րդ հոդվածով և 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված հանցանքները կատարելու մեջ՝ 1996 թվականի դեկտեմբերի 10-ին կայացրել է մեղադրական դատավճիռ (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 128):

11. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 12-ի որոշման համաձայն՝ «2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ 2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ է դրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը՝ նույն օրվանից ուժը կորցրած ճանաչելով 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը:

ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու կապակցությամբ, մասնավորապես, մինչև օրենսգրքի գործողության մեջ դրվելը կայացված դատավճիռները ենթակա են եղել վերանայման՝ դատապարտյալների կատարած հանցանքները քրեաիրավական առումով համապատասխանեցնելով ՀՀ քրեական օրենսգրքին:

ՀՀ քրեական օրենսգրքով մահապատիժը՝ որպես բացառիկ պատժամիջոց, դադարել է գոյություն ունենալուց:

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 60-րդ հոդվածներով որպես պատժատեսակ նախատեսվել է ցմահ ազատազրկումը:

(...)

ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով, 17-100-րդ հոդվածով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով:

Վերոնշյալ հանցանքները քրեաիրավական որակման առումով համադրելով

2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի հետ, վերանայելով դատավճիռը և համապատասխանեցնելով 2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքին՝ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Արծրունու կատարած հանցանքները 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին, 38-104-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետին:

(...)

Նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 8-րդ կետի, դրան համապատասխան՝ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի քրեաիրավական առումով տարանջատումը հանցանքը որակյալ դարձնող մյուս հատկանիշներից ժամանակին օրենսդրորեն պայմանավորված է եղել սոսկ հանցավորի սուբյեկտիվ դիտավորության շեշտման անհրաժեշտությամբ: Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի ուժը կորցրած ճանաչվելու պայմաններում, որպես առանձին հատկանիշ, մեխանիկորեն չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցանքը որակյալ դարձնող մեկ այլ հատկանիշի և սպանության մեկ այլ տեսակի՝ երկու և ավելի անձանց սպանության ապաքրեականացում:

Հետևաբար, դատարանը գտնում է, որ դատավճռով Ա.Արծրունուն մեղսագրված սպանության կազմակերպման երկու դեպքերի ընդգրկումը մեկ արարքի մեջ՝ որպես երկու անձանց սպանության կազմակերպում, ենթակա է համապատասխանեցման գործող ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նշված հոդվածի սանկցիան նախատեսում է նաև ցմահ ազատազրկում:

Այսպիսով, դատապարտյալ Ա.Արծրունու վերաբերյալ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը համապատասխանեցնելով գործող ՀՀ քրեական օրենսգրքին՝ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Արծրունուն նշված դատավճռով մեղսագրված հանցանքները ենթակա են համապատասխանեցման ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին՝ Ա.Արծրունու նկատմամբ նշանակված քրեական պատիժը՝ ցմահ ազատազրկումը, թողնելով նույնը (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 131-133):

12. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, վերանայելով ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը, իրավացիորեն գտել է, որ Ա.Արծրունու կատարած հանցանքները պետք է համապատասխանեցնել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին ու 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, և ՀՀ Նախագահի 2003 թվականի օգոստոսի 1-ի ՆՀ-103-Ա հրամանագրով Ա.Արծրունու նկատմամբ սահմանված ցմահ ազատազրկում պատիժը թողել անփոփոխ:

Վերանայելով 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը՝ Դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ նախկինում /դիտավորյալ/ սպանություն

կատարած անձի կողմից սպանություն կատարելը ենթադրել է առնվազն երկու կամ ավելի անձանց սպանության կամ հանցավորձի առկայություն: Հետևաբար, երկու կամ ավելի անձանց սպանությունը՝ որպես ծանրացուցիչ հանգամանք, որպես սպանության տեսակ, և 1961թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածով և գործող 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքների շրջանակում նախատեսված լինելով՝ իրենց փաստական և բովանդակային առումով փոփոխություն չեն կրել ու ունեն միմյանց համապատասխանող և համարժեք բովանդակություն: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի ապաքրեականացումը մեխանիկորեն չի արժեգրվում 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ երկու և ավելի անձանց սպանությունը որպես ծանրացուցիչ և արարքը որակյալ դարձնող հատկանիշ հանդիսանալը, չի բացառում սպանության նշված տեսակի գոյությունը Ա.Արծրունուն առաջադրված մեղադրանքում: Նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 8-րդ կետի ու դրան համապատասխան գործող 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի քրեաիրավական առումով տարանջատումը հանցանքը որակյալ դարձնող մյուս հատկանիշներից, ժամանակին օրենսդրորեն պայմանավորված է եղել սոսկ հանցավորի սուբյեկտիվ դիտավորության շեշտման անհրաժեշտությամբ, սակայն 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի ուժը կորցրած ճանաչվելու պայմաններում, որպես առանձին հատկանիշ, մեխանիկորեն չի առաջացրել 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը որակյալ դարձնող մեկ այլ հատկանիշի և սպանության մեկ այլ տեսակի՝ երկու և ավելի անձանց սպանության ապաքրեականացում, հետևաբար դատավճռով Ա.Արծրունուն մեղսագրված սպանության կազմակերպման երկու դեպքերի ընդգրկումը մեկ արարքի մեջ՝ որպես երկու անձանց սպանության կազմակերպում, ենթակա է համապատասխանեցման գործող ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին:

(...)

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Դատարանի որոշումը օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու օրյեկտիվ հիմքեր առկա չեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 69-71):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոք բերած անձինք փաստարկել են, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 22-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ

հողվածի 6-րդ մասի և 52-րդ հողվածի 2-րդ մասի խախտումներ:

Ի հիմնավորումն իրենց վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանն իրավասություն չուներ ըստ էության վերանայել քրեական գործը. այս առումով Առաջին ատյանի դատարանն իրավասու էր գործող օրենսդրությանը համապատասխանեցնել ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը: Մինչդեռ, ըստ բողոքաբերների, Առաջին ատյանի դատարանը ոչ թե դատավճիռը համապատասխանեցրել է գործող օրենսդրությանը, այլ նույն արարքի համար երկրորդ անգամ դատապարտել է Արսեն Արծրունուն: Այսպես՝ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունու արարքները որակվել են 1961 թվականի քրեական օրենսգրքի 72-րդ, 17-100-րդ հոդվածներով և 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով, քանի որ կոլեգիան հաստատված է համարել, որ Ա.Արծրունին կազմակերպել է երկու առանձին սպանություն, որոնք կատարվել են տարբեր ժամանակ ու կապված չեն եղել միասնական դիտավորությամբ կամ նույն շարժառիթով: Առաջին ատյանի դատարանը, սակայն, հիմնավորված է համարել, որ սույն գործով կատարված երկու սպանությունները, որպես բանդայի գործունեության արդյունք, տեղավորվել են բանդայի ստեղծման և գործունեության նպատակների համատեքստում:

14. Վերլուծելով հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները բնութագրող որակյալ հանգամանքները՝ բողոքաբերները նշել են, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված որակյալ հանգամանքը հանդիսացել է սուբյեկտիվ հատկանիշ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված որակյալ հանգամանքը՝ օբյեկտիվ հատկանիշ: Ապա բողոք բերած անձինք եզրահանգում են արել այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել 1961 թվականի քրեական օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը, ինչը նշանակում է, որ վերացել է սպանության որակյալ հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը:

Վերոգրյալից բողոք բերած անձինք հետևություն են արել այն մասին, որ Ա.Արծրունու արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով («երկու կամ ավելի անձանց սպանություն») վերադրակելու համար Առաջին ատյանի դատարանը պետք է բեկաներ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը, մինչդեռ նման իրավասություն ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ:

15. Շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն գործի հանգամանքները՝ բողոք բերած անձինք նշել են, որ սույն գործով Առաջին ատյանի

դատարանն իրավասու էր վերանայել միայն ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունու արարքին 1961 թվականի քրեական օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով տրված որակումը, հատկապես, որ Առաջին ատյանի դատարանն ընդունել է, որ ՀՀ Գերագույն դատարանի կողմից Ա.Արծրունու արարքին 1961 թվականի քրեական օրենսգրքով տրված որակումները (72-րդ, 17-100-րդ հոդվածներ և 17-99-րդ հոդվածի 8-րդ կետ) համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ, 38-104-րդ հոդվածի 1-ին մասով և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված հանցակազմերին:

16. Անդրադառնալով Ա.Արծրունու նկատմամբ նույնը թողնված պատժին՝ ցմահ ազատազրկմանը, բողոք բերած անձինք նշել են, որ այն անհիմն է և հակասում է ՀՀ ներպետական ու միջազգային օրենսդրությանը:

Ի հիմնավորումն իրենց վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունու նկատմամբ նշանակվել է բացառիկ պատժամիջոց՝ մահապատիժ: 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով մահապատիժը՝ որպես պատժատեսակ, վերացել է, ուստի 1993-1994 թվականներին կատարված հանցագործությունների համար ամենածանր պատիժը կարող էր լինել 15 տարի ժամկետով ազատազրկումը, մինչդեռ Ա.Արծրունու մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ ՀՀ Նախագահի 2003 թվականի օգոստոսի 1-ի ներում շնորհելու մասին հրամանագրով:

Վերոշարադրյալ վերլուծությունը համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ և ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածներում ամրագրված նորմերի հետ, որոնց համաձայն պատիժը նշանակվում է դատարանի դատավճռով, և արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին, բողոք բերած անձինք գտել են, որ անհասկանալի է, թե ինչն էր փոխարինում ՀՀ Նախագահը, եթե 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ մահապատիժն արդեն իսկ վերացել էր օրենքի ուժով: Այս համատեքստում բողոք բերած անձինք վիճարկում են Ա.Արծրունու նկատմամբ նշանակված պատիժը՝ ցմահ ազատազրկումը, Առաջին ատյանի դատարանի կողմից նույնը թողնելու հանգամանքը՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանը որպես պատիժ թողնում է ՀՀ Նախագահի և ոչ թե դատարանի կողմից Ա.Արծրունու նկատմամբ նշանակված պատիժը:

17. Հինք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքաբերները խնդրել են մասնակիորեն, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնել և պատժի մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ որոշելով, որ 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 17-100-րդ հոդվածով որակված հանցագործությունը համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասին, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետը (38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետ)՝ 38-104-րդ հոդվածի 1-ին մասին՝ որպես պատիժ թողնելով 12 տարի ժամկետով ազատազրկում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածը (հանցագործությունների կրկնակիությունը), 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը (նախկինում սպանություն կատարած անձի կողմից սպանություն կատարելը) ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում (հանցագործությունների համակցությունը) փոփոխություններ և լրացումներ կատարելու համատեքստում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված սպանության որակյալ հանցակազմի (երկու կամ ավելի անձանց սպանությունը) կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Երկու կամ ավելի անձանց սպանությունը, նախկինում սպանություն կատարած անձի կողմից կատարված սպանությունը և սույն գործով ստորադաս դատարանների որոշումների հիմնավորվածությունը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանն առաջին հերթին քննության է առնում այն հարցը, թե որոնք են երկու կամ ավելի անձանց սպանության և նախկինում սպանություն կատարած անձի կողմից կատարված սպանության հանցակազմերի կիրառման առանձնահատկությունները:

20. 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածը պատասխանատվություն էր սահմանում առանց ծանրացուցիչ հանգամանքների կատարված դիտավորյալ սպանության համար:

1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ կետը պատասխանատվություն էր նախատեսում երկու կամ մի քանի անձանց սպանության համար:

2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգրք) 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկել[ն է]»:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը պատասխանատվություն է նախատեսում երկու կամ ավելի անձանց սպանության համար:

Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ մեկից ավելի անձանց սպանությունն ինչպես 1961, 2003 թվականների, այնպես էլ 2011 թվականին փոփոխված քրեական օրենսգրքերում նախատեսված է որպես սպանության որակյալ հատկանիշ: Այլ խոսքով՝ երկու կամ ավելի անձի սպանության հանգամանքն ընդգրկված է եղել և շարունակում է անփոփոխ մնալ սպանությունը որակյալ դարձնող հատկանիշների տիրույթում և օրենսդրական

փոփոխությունների համատեքստում որևէ բովանդակային փոփոխության չի ենթարկվել: Ավելին, սպանության հանցակազմից բացի, ՀՀ քրեական օրենսգրքում առկա են մի շարք հանցակազմեր, որոնց որակյալ հատկանիշների շարքում առկա է արարքը երկու կամ ավելի անձի նկատմամբ կատարելը (տե՛ս, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ, 109-րդ հոդվածների 2-րդ մասերը, 112-րդ, 113-րդ, 132-րդ, 359-րդ հոդվածների 2-րդ մասերի 1-ին կետերը, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը և այլն):

21. 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 8-րդ կետը պատասխանատվություն էր նախատեսում առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից, կամ նախկինում դիտավորյալ սպանություն կատարած անձի կողմից սպանություն կատարելու համար (բացառությամբ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով, կամ տուժողի կողմից զուգորդված բռնության կամ ծանր վիրավորանքի ազդեցության տակ առաջացած հանկարծակի հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունից):

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումը գործող նույն հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը պատասխանատվություն էր նախատեսում նախկինում սպանություն կատարած անձի կողմից (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 105-108-րդ հոդվածներով նախատեսված արարքների) կատարված սպանության համար:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածը շարադրված էր հետևյալ կերպ՝

«1. Հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել.

2) այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է սույն օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

2. Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հանցագործության համար՝ սույն օրենսգրքի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով»:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածը շարադրված էր հետևյալ կերպ՝

«1. Հանցագործությունների կրկնակիություն է համարվում սույն օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կրկնակիությունը բացակայում է շարունակվող հանցագործության դեպքում, որը բաղկացած է միասնական հանցավոր մտադրությամբ միավորված երկու կամ ավելի արարքից:

3. Սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքում:

4. Կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված հիմքերով, կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել է կամ հանվել»:

Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի իմաստով կրկնակիությունն առաջանում էր ինչպես նույնական, այնպես էլ միաբնույթ հանցագործություններ կատարելու դեպքում: Այդ իրավադրույթին համապատասխան՝ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումը գործող քրեական օրենսգրքի Հատուկ մասը պարունակել է բազմաթիվ նորմեր՝ կապված հանցագործությունների կրկնակիության հետ (տե՛ս, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը, 138-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, 139-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, 3-րդ մասի 4-րդ կետը, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, 3-րդ մասի 4-րդ կետը, ինչպես նաև 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը և այլն): «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո նշված նորմերը ուժը կորցրած են ճանաչվել:

22. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել.

2) այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է սույն օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

2. Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հանցագործության համար՝ սույն օրենսգրքի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ դրանում ամրագրված հանցագործությունների համակցությունը բնութագրվում է՝

1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշներով, որոնք են՝

ա) տարաբնույթ, նույնական կամ համանման հանցանք կատարելը,

բ) համակցություն կազմող հանցանքների համար դատված չլինելը,

գ) համակցություն կազմող առնվազն երկու հանցանքների կատարումից հետո դրանց քրեախրավական նշանակություն ունեցող հետևանքների, օրինակ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների պահպանումը,

դ) նույնական հանցագործություններ կատարելու դեպքում՝ հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարված լինելու հատկանիշի բացակայությունը:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 20-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետը (նախկինում սպանություն կատարած անձի կողմից սպանություն կատարելը) ուժը կորցնելու պարագայում էլ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանգամանքը (երկու կամ ավելի անձանց սպանությունը) շարունակում է մնալ սպանության որակյալ հատկանիշ: Այլ խոսքով՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո օրենսդիրը, ընդլայնելով հանցագործությունների իրական համակցության տեսակները (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), այնուամենայնիվ, երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանք կատարելու համար պատասխանատվություն նախատեսող Հատուկ մասի համապատասխան նորմերից, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից չի հրաժարվել: Այսինքն՝ առկա է օրենսդրորեն հաշվի առնված համակցություն, երբ օրենսդիրը մեկից ավելի հանցանքների կատարումը նախատեսում է որպես հանցակազմի որակյալ հատկանիշ (օրինակ՝ խուլիգանությունը՝ զուգորդված զույթը դիտավորությամբ ոչնչացնելով կամ վնասելով, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն առաջացրել է տուժողի մահ և այլն), որի պարագայում արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված համապատասխան որակյալ հանցակազմով և ոչ թե հանցագործությունների համակցության կանոններով:

Կրկնակիության ինստիտուտի վերացումից հետո ՀՀ քրեական օրենսգրքում երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանք կատարելու համար պատասխանատվություն նախատեսող նորմերի առկայությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը հաշվի է առել այս որակյալ հատկանիշի հանրային վտանգավորությունը և բացառել է, օրինակ՝ երկու կամ ավելի անձանց սպանության դեպքում արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված համակցության ընդհանուր կանոնով որակելու հնարավորությունը:

24. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով՝ հանցագործությունների համակցություն է հանդիսանում միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն մասով (մասերով) կամ կետով (կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք

կատարելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմում հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարված լինելու հանգամանքը նախատեսված է որպես հանցակազմի որակյալ հատկանիշ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ որպես երկու կամ ավելի անձանց սպանություն պետք է որակվեն ինչպես սուբյեկտիվ կողմից մեկ միասնական դիտավորության մեջ ընդգրկված երկու կամ ավելի անձանց սպանության, այնպես էլ սուբյեկտիվ կողմից միմյանց հետ չկապված դիտավորությամբ կատարված երկու կամ ավելի անձանց սպանության (այլ կերպ ասած՝ նախկինում սպանություն կատարած անձի կողմից նոր սպանություն կատարելու) դեպքերը, եթե դրանցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ արարքը չի կարող գնահատվել որպես երկու կամ ավելի անձանց սպանություն մասնավորապես այն դեպքում, եթե դրան նախորդել կամ հաջորդել է սպանության արտոնյալ հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ, 106-րդ, 107-րդ, 108-րդ հոդվածներ): Նման դեպքում արարքները ենթակա են ինքնուրույն որակման:

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննության առնվող երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունուն մեղսագրված և 1961 թվականի քրեական օրենսգրքի 17-100-րդ հոդվածով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով որակված արարքները 2003 թվականին ընդունված և 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով փոփոխության ենթարկված ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 12-ի, ինչպես նաև այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումները:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան հաստատված է համարել, որ Ա.Արծրունին Ա.Ներսիսյանի սպանությունը կազմակերպելուց հետո կազմակերպել է նաև Գ.Մահակյանի սպանությունը, և նրան մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով, 17-100-րդ հոդվածով և 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի հուլիսի 12-ին որոշում է կայացրել, որտեղ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի դատավճռով Ա.Արծրունուն մեղսագրված հանցանքները քրեաիրավական որակման առումով համադրել է 2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի հետ, վերանայել է ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի դատավճիռը և, համապատասխանեցնելով այն 2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքին, գտել է, որ դատապարտյալ Ա.Արծրունու կատարած հանցանքները 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին, 38-104-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետին:

Առաջին ատյանի դատարանը գտել է նաև, որ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 8-րդ կետի, դրան համապատասխան գործող ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի քրեախրավական առումով տարանջատումը հանցանքը որակյալ դարձնող մյուս հատկանիշներից ժամանակին օրենսդրորեն պայմանավորված է եղել սույլ հանցավորի սուբյեկտիվ դիտավորության շեշտման անհրաժեշտությամբ: Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի ուժը կորցրած ճանաչվելու պայմաններում, որպես առանձին հատկանիշ, մեխանիկորեն չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցանքը որակյալ դարձնող մեկ այլ հատկանիշի և սպանության մեկ այլ տեսակի՝ երկու և ավելի անձանց սպանության ապաքրեականացում: Հետևաբար ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի դատավճռով Ա.Արծրունուն մեղսագրված սպանության կազմակերպման երկու դեպքերի ընդգրկումը մեկ արարքի մեջ՝ որպես երկու անձանց սպանության կազմակերպում, ենթակա է համապատասխանեցման գործող ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նշված հոդվածի սանկցիան նախատեսում է նաև ցմահ ազատագրկում: Այսպիսով, դատապարտյալ Ա.Արծրունու վերաբերյալ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը համապատասխանեցնելով գործող ՀՀ քրեական օրենսգրքին՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ դատապարտյալ Ա.Արծրունուն նշված դատավճռով մեղսագրված հանցանքները ենթակա են համապատասխանեցման ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան հաստատված է համարել, որ Ա.Արծրունին կազմակերպել է երկու անձի սպանություն, և դրա հիման վրա 1961 թվականի քրեական օրենսգրքով տվել է նրա արարքի քրեախրավական որակումը: Առաջին ատյանի դատարանը Ա.Արծրունու արարքին ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի կողմից տրված որակումը 2003 թվականի քրեական օրենսգրքին համապատասխանեցրել է գործի նույն փաստական հանգամանքների շրջանակներում: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել, որ Ա.Արծրունին դատապարտվել է երկու անձի սպանությունը կազմակերպելու համար:

27. Սույն որոշման 26-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-24-րդ կետերում շարադրված

վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Արծրունու արարքին ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի կողմից տրված որակումը 2003 թվականի քրեական օրենսգրքին համապատասխանեցնելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասում առկա՝ «երկու կամ ավելի անձանց» ձևակերպումը վկայում է այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածում առկա է օրենսդրորեն հաշվի առնված համակցություն, որի պարագայում Ա.Արծրունու կողմից կազմակերպված երկու անձի սպանությունը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված համապատասխան հոդվածով, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով և ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցագործությունների համակցության կանոններով:

Հետևաբար, ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունուն մեղսագրված և 1961 թվականի քրեական օրենսգրքի 17-100-րդ հոդվածով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով որակված արարքները 2003 թվականին ընդունված և 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով փոփոխության ենթարկված ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 12-ի, ինչպես նաև այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումները հիմնավորված և պատճառաբանված են:

II. Վճռաբեկ բողոքում բարձրացրած այլ հարցեր.

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրած հաջորդ իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունու արարքին տրված քրեաիրավական որակումը՝ 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 17-100-րդ հոդվածը, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետը, Առաջին ատյանի դատարանի կողմից 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնելու հետևանքով խախտվե՞լ է արդյոք կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը:

29. Կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ.Բաբայանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:

(...) «նույն արարքի համար» ձևակերպումը ճիշտ կիրառելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած «քրեական մեղադրանք» եզրույթի մեկնաբանմանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

(...) Եվրոպական դատարանի (...) դիրքորոշումներից հետևում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով իրավախախտումը որպես «քրեական» որակելու չափորոշիչներն են՝ ա) իրավախախտման դասակարգումն ըստ ազգային օրենսդրության, բ) իրավախախտման բնույթը, գ) նշանակված կամ հնարավոր պատժի խստության աստիճանը: Ընդ որում, իրավախախտումը «քրեական» որակելու համար բավարար է այդ չափորոշիչներից միայն մեկի, այլ ոչ թե բոլորի պարտադիր առկայությունը:

(...) Անդրադառնալով *non bis in idem* սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա կիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել *Սերգեյ Չոլտոուխինն ընդդեմ Ռուսաստանի* գործով կայացված վճռում, որի համաձայն՝ նախադեպային իրավունքի հիմքը, որը ձևավորվել է դատարանի կողմից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի բողոքարկման արդյունքում, փաստում է, որ առկա է մի քանի մոտեցում այն հարցի հետ կապված, թե նույնն են արդյոք այն արարքները, որոնց մեջ դիմողը մեղադրվում է: Առաջին մոտեցումը, որը հիմնվում է դիմողի «նույն վարքագծի վրա» անկախ այն բանից, թե այդ վարքագիծն ինչպես է որակվում օրենքով (*idem factum*), ներկայացված է *Gradinger*-ի գործով կայացված վճռում (...), որի համաձայն՝ թեև երկու հանցագործությունների տարբերակումը, բնույթն ու նպատակները տարբեր են եղել, տեղի է ունեցել 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտում, քանի որ երկու որոշումներն էլ հիմնված են եղել դիմողի նույն վարքագծի վրա: (...) Երկրորդ մոտեցումը ևս բխում է այն ենթադրությունից, որ մեղադրյալի վարքագիծը, որի վրա հիմնված է մեղադրանքը, նույնն է, սակայն նշվում է, որ նույն վարքագիծը կարող է հասցնել մի քանի հանցագործության, որոնք կարող են քննվել տարբեր վարույթներում: (...) Դատարանի կարծիքով, թեև արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքին ավելի համահունչ կլինեք այն, որ երկու հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվեին նույն դատարանում՝ մեկ վարույթով, սակայն այն փաստը, որ քննվող գործով երկու վարույթ է իրականացվել, էական չի հանդիսանում: (...) Երրորդ մոտեցումը շեշտադրում է երկու հանցագործությունների «էական տարբերը»: (...) Դատարանը գտնում է, որ տարբեր մոտեցումների առկայությունը, կապված այն խնդրի հետ, թե դիմողին մեղաազրվող արարքն իսկապես համընկնում է այն արարքի հետ, որի համար նա արդեն դատապարտվել կամ արդարացվել է, առաջացնում է իրավական անորոշություն, որը համատեղելի չէ այնպիսի հիմնարար իրավունքի հետ, ինչպիսին է նույն հանցագործության համար երկու անգամ չմեղադրվելը (...):

(...) Դատարանը կարծում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը պետք է ընկալվի այնպես, որ արգելվի երկրորդ «հանցագործության» մեջ մեղադրելը կամ դատապարտելը, քանի որ այն բխում է նույն փաստերից կամ այնպիսի փաստերից, որոնք ըստ էության նման են:

7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները ենթակա են կիրառման նոր մեղադրանք հարուցելու ժամանակ, երբ սկզբնական արդարացումը կամ դատապարտումն արդեն ձեռք է բերել *res judicata* ուժը: Այս հատման կետում առկա նյութը, անկասկած, ներառում է այն որոշումը, որով առաջին «պատժիչ վարույթը» եզրափակվել է, և այն մեղադրանքները, որոնք ներկայացվել են դիմողին նոր վարույթով: Որպես կանոն, այս փաստաթղթերում պետք է երկուստեք առկա լինեն այն հանցագործության փաստական հանգամանքները, որի համար դիմողն արդեն դատապարտվել է, և այն հանցագործության, որի համար նրան մեղադրանք է առաջադրվել: Դատարանի կարծիքով, մնան փաստական հանգամանքները որպես ելակետ բավարար են պարզաբանելու համար այն հարցը, թե արդյոք երկու վարույթների փաստերը եղել են մնան, թե ըստ էության նույնական: Դատարանը շեշտադրում է, որ կարևոր չէ, թե նոր մեղադրանքների որ հատվածներն են, ի վերջո, հետագա վարույթներով բավարարվել կամ մերժվել, քանի որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածն ամրագրում է երաշխիքներ՝ ուղղված նոր վարույթով մեղադրվելու կամ պատասխանատվության ենթարկվելու դեմ և ոչ թե երկրորդ անգամ դատապարտվելու կամ արդարացվելու արգելքի դեմ (...):

Դատարանը կրկնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը չի սահմանափակում երկու անգամ չմեղադրվելու և դատարանի առաջ չկանգնելու իրավունքը (...): 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը կիրառվում է անգամ այն դեպքերում, երբ անձը մեղադրվել է, սակայն չի դատապարտվել: Դատարանը կրկնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը սահմանում է երեք տարբեր երաշխիքներ և նշում, որ որևէ մեկը չպետք է լինի ա) մեղադրման ենթակա, բ) մեղադրված կամ գ) դատապարտված նույն հանցագործության համար (...) (տե՛ս Դավիթ Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԳ-1/0043/01/11 որոշման 23-25-րդ կետերը):

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Արծրունու կողմից հանցանք կատարելու ժամանակ գործով քրեական օրենսդրությամբ երկու կամ մի քանի անձանց սպանությունը և նախկինում դիտավորյալ սպանություն կատարած անձի կողմից կատարված սպանությունը՝ որպես սպանության հանցակազմի որակյալ հատկանիշներ ամրագրված են եղել 1961 թվականի քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ կետերում: Ուստի, ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի դատավճռով Ա.Արծրունին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ, 17-100-րդ հոդվածներով և 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով այն բանի համար, որ, գործելով բանդայի կազմում, կազմակերպել է երկու անձանց դիտավորյալ սպանություն (տե՛ս սույն որոշման 1-ին և 10-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Արծրունու վերաբերյալ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը համապատասխանեցվել է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

31. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված հանգամանքները գնահատելով

սույն որոշման 29-րդ կետում և, համապատասխանաբար, *Գ.Բաբայանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Արծրունուն մեղսագրված արարքները քրեորեն պատժելի են եղել ինչպես 1961, այնպես էլ 2003 թվականների քրեական օրենսգրքերով, բացի այդ, Ա.Արծրունուն մեղսագրված արարքները ՀՀ քրեական օրենսգրքի նորմերին համապատասխանեցվել են գործի նույն փաստական հանգամանքների շրջանակներում, և համապատասխանեցման արդյունքում նրա վիճակը չի վատթարացել: Այլ խոսքով՝ Ա.Արծրունին նույն արարքի համար ոչ թե կրկին դատապարտվել է, այլ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նրան մեղսագրված արարքները համապատասխանեցվել են ՀՀ քրեական օրենսգրքի նորմերին: Հետևաբար, ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունու արարքին տրված քրեաիրավական որակումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 8-րդ կետը, Առաջին ատյանի դատարանի կողմից 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնելու հետևանքով կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում թույլ չի տրվել:

32. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրած հաջորդ իրավական հարցը հետևյալն է. Ա.Արծրունուն մեղսագրված արարքները ՀՀ քրեական օրենսգրքի նորմերին համապատասխանեցնելու արդյունքում թո՞ւյլ է տրվել արդյոք քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի խախտում:

33. Քրեական օրենքի հետադարձ ուժի հարցը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Գ. Պողոսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Սա նշանակում է, որ անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել, ինչպես նաև հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն օրենքով, որը գործել է նրա կողմից արարքը կատարելու ժամանակ: Nullum crimen, nulla poena sine lege սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

(...) Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապարքեականացում),
2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,

3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառնիչ են և ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն:

Այն դեպքերում, երբ նոր ընդունված օրենքը միաժամանակ բովանդակում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող դրույթներ, ապա օրենքը հետադարձ ուժ է ստանում միայն մեղմացման առումով (տե՛ս Գասպար Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշման 16-17-րդ կետերը):

34. Վերահաստատելով և զարգացնելով սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև Գ.Պողոսյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումներ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քրեական օրենքը համարվում է արարքի հանցավորությունը բացառող, եթե՝

ա) այդ օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որը նախկին օրենքով հանցագործություն էր (լրիվ ապաքրեականացում),

բ) արարքը չի դադարում հանցագործություն լինելուց, սակայն հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում): Մասնակի ապաքրեականացման դեպքերը կարող են վերաբերվել հանցակազմի առանձին տարրերին կամ հատկանիշներին, ծանրացնող հանգամանքներին և այլն:

35. 1961 թվականի քրեական օրենսգրքով՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունը (99-րդ հոդված) պատժվում էր ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամանակով կամ մահապատժով:

2003 թվականի քրեական օրենսգրքով՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունը (104-րդ հոդվածի 2-րդ մաս) պատժվում էր ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության համար սահմանվեց պատիժ՝ ազատազրկում՝ տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:

36. Սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքները զնահատելով սույն որոշման 33-34-րդ կետերում, ինչպես նաև 20-27-րդ կետերում շարադրած վերլուծության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետն ուժը կորցրած

ճանաչելու հետևանքով երկու կամ ավելի անձանց սպանությունը որպես սպանության որակյալ հատկանիշ չի ապաքրեականացվել, հետևաբար արարքի քրեաիրավական որակման իմաստով Ա.Արծրունու վիճակը որևէ կերպ չի բարելավվել:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Արծրունուն մեղսագրված արարքները ՀՀ քրեական օրենսգրքի նորմերին համապատասխանեցնելու արդյունքում թույլ չի տրվել քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի խախտում:

37. Բողոքաբերները փաստարկել են նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա.Արծրունու նկատմամբ նույնը թողնված պատիժը՝ ցմահ ազատազրկումը, անհիմն է և հակասում է ՀՀ ներպետական ու միջազգային օրենսդրությանը (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Նախագահի 2003 թվականի օգոստոսի 1-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով Ա.Արծրունուն ներում է շնորհվել, և նրա նկատմամբ նշանակված մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Այսինքն՝ ՀՀ Նախագահի հրամանագրով Ա.Արծրունու նկատմամբ ոչ թե պատիժ է նշանակվել, այլ նշանակված պատիժը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով: Ուստի, այս առումով Առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա.Արծրունու նկատմամբ նույնը թողնված պատիժը՝ ցմահ ազատազրկումը, չի հակասում ՀՀ ներպետական ու միջազգային օրենսդրությանը և հանդիսանում է ոչ թե ՀՀ Նախագահի, այլ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Ա.Արծրունու նկատմամբ նշանակված պատիժ, որը հետագայում մեղմացման առումով փոփոխվել է:

Ինչ վերաբերում է ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը վերանայելու ընթացակարգի վերաբերյալ փաստարկներին (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց անդրադարձել է Արսեն Արծրունու գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ՎԲ-16/11 որոշմամբ:

38. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի շրջանակներում սույն գործով նյութական և դատավարական օրենքի էական խախտումներ թույլ չեն տրվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Արսեն Արայի Արծրունու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

5.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԼԳ/0091/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Տ.ՈՒԶՈՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Ժիրայր Բահատուրի Դուկասյանի, Արմեն Աշոտի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, Վալերիի Գուրգենի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրող Տ.Ուզոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի մարտի 5-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 12107311 քրեական գործը:

2011 թվականի հունվարի 26-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 14101811 քրեական գործը:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի 2011 թվականի մայիսի 13-ի որոշմամբ թիվ 14101811 քրեական գործը միացվել է թիվ 12107311 քրեական գործին:

2011 թվականի հունիսի 3-ին Վալերիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով:

2011 թվականի հունիսի 10-ին Արմեն Ղևոնդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով:

2011 թվականի հունիսի 13-ին Ժիրայր Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2011 թվականի հունիսի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մուտքագրվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 27-ի դատավճռով Ժիրայր Ղուկասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով:

Արմեն Ղևոնդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով:

Վալերիկ Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով: ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով Վ.Գրիգորյանը դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով՝ ազատազրկման 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Գրիգորյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել ամբաստանյալներ Ա.Ղևոնդյանը, Ժ.Ղուկասյանը, մեղադրող Տ.Ուզյանը և տուժող Վ.Սահակյանը:

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 27-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Տ.Ուզյանը, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ըստ մեղադրական եզրակացության՝ «Նախկինում գույքի հափշտակություններ կատարելու համար դատապարտված, դատվածությունները չմարված, գործով մեղադրյալներ Ժիրայր Ղուկասյանը, Արմեն Ղևոնդյանը և Վալերի Գրիգորյանը միմյանց հետ ծանոթացել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրելու ընթացքում, իսկ Ժ.Ղուկասյանը գործով մյուս մեղադրյալ Հարություն Մելքոնյանի հետ ծանոթացել է 2011 թվականի հունվարին՝ Վ.Գրիգորյանի հետ միասին վարձակալական հիմունքներով Արհեստավորների 119 տանը բնակվելու ժամանակ:

(...):

Բացի այդ, Վ.Գրիգորյանը, որը «Դոմփի» մականունն ունի, իր ընկեր՝ գործով մյուս մեղադրյալ «Ուզբո» մականունով Ժ.Ղուկասյանից տեղեկացել է, որ վերջինիս ընկեր՝ գործով մեղադրյալ Արմեն Ղևոնդյանը 2011 թվականի հունվարի 23-ին ծանոթացել է գործով տուժող Վոլոդյա Սահակյանի հետ և նկատել է վերջինիս պարանոցի, ձեռքերի դեղին, ոչ թանկարժեք, պղինձ երկաթ համաձուլվածքից պատրաստված շղթաները, մատի դեղին գույնի, կապար-անտիմոն-երկաթ համաձուլվածքից պատրաստված մատանին և երկու հատ «NOKIA-1200» և «VISOA» ապրանքանիշի բջջային հեռախոսները երեքով նախնական համաձայնության գալով՝ որոշել են ավագակային հարձակմամբ հափշտակել դրանք:

Հաջորդ օրը՝ 2011 թվականի հունվարի 24-ին, Ա.Ղևոնդյանն իր 055/54-62-59 բջջային հեռախոսահամարից զանգահարել է տուժող Վ.Սահակյանի 093/02-44-35 հեռախոսահամարին և հրավիրել Վարդաշենում գտնվող իր եղբոր՝ Էդգար Ղևոնդյանի տուն: Վ.Սահակյանը եկել է, որից հետո Ա.Ղևոնդյանը իր 055/54-62-59 բջջային հեռախոսահամարից ժամը 20.00-ի սահմաններում զանգահարել է Ժ.Ղուկասյանի 077/41-42-75 բջջային հեռախոսահամարին և հայտնել Վ.Սահակյանին Վարդաշեն «Խաչի գարաժներ» կոչվող վայր տանելու և այնտեղ նրա նկատմամբ ավագակային հարձակում կատարելու մտադրության մասին: Ժ.Ղուկասյանը տվել է իր համաձայնությունը, այնուհետև Վալերիկ Գրիգորյանին, որը այդ պահին իր հետ է եղել, հայտնել է ավագակային հարձակում կատարելու որոշման մասին և միասին գնացել «Խաչի գարաժներ» կոչվող վայրը: Ժամը 21.00-ի սահմաններում Ա.Ղևոնդյանը Վ.Սահակյանին խաբեությամբ տարել է ք.Երևանի Վարդաշեն թաղամասի Գուրգեն Մահարու փողոցի թիվ 27/2 շենքից մոտ 50 մետր հեռավորության վրա գտնվող «Խաչի գարաժներ» կոչվող վայրը, այնտեղ Ժ.Ղուկասյանը մոտեցել է Վ.Սահակյանին, նրանից ծխախոտ ուզել, մեղադրել ինչ-որ աղջկա բռնաբարության մեջ. նրան սկսել է քաշքշել և պահանջել Վ.Սահակյանի վրայի զարդերը ու մոտը եղած գումարը: Այնուհետև Ժ.Ղուկասյանը և Վ.Գրիգորյանը սկսել են նրան հարվածել, զցել գետնին, Ա.Ղևոնդյանը պառկել է Վ.Սահակյանի վրա, արգելափակել նրա շարժումները, երկու ձեռքերով բռնել կոկորդից և սկսել խեղդել: Վ.Գրիգորյանը մի ձեռքով փակել է Վ.Սահակյանի բերանը, իսկ մյուս ձեռքով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Ժ.Ղուկասյանը որպես զենք հանդիսացող դանակի գործադրմամբ սկսել է

սպառնալ Վ.Սահակյանին, դանակը սեղմել է նրա աջ կողքին: Ա.Ղևոնդյանը տուժող Վ.Սահակյանի գրպանից հանել է նրա բջջային հեռախոսները և պոկել պարանոցի շղթան՝ կարծելով որ այն ոսկյա է, իսկ Ժ.Ղուկասյանը տուժողի մատից քաշելով հանել է մատանին, ձեռքի շղթան՝ կարծելով դրանք ոսկյա են: Սակայն համոզվելով, որ պարանոցի, ձեռքի շղթաները և մատանին ոսկուց չեն, հետ են վերադարձրել, հետ են տվել նաև «NOKIA-1200» և «VISOA» ապրանքանիշի բջջային հեռախոսները, այնուհետև սպառնացել, որ եթե նա ոստիկանություն դիմի, ապա նրա համար վատ կլինի: Դեպքից հետո Վ.Սահակյանը ոստիկանություն չի դիմել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 294-295):

6. Նախաքննության ընթացքում Ժ.Ղուկասյանը որպես կասկածյալ տված ցուցմունքում հայտնել է, որ «(...) նշված վայրում ինքը մոտեցել է Վ.Սահակյանին և ծխախոտ խնդրել, այնուհետև նրան մեղադրել այն բանում, թե նա մի 18 տարեկան աղջկա ինչ-որ բան է ասել՝ պատրվակ ստեղծելով վիճելու համար: Դրանից հետո ինքը քաշել է Վ.Սահակյանին, Վ.Գրիգորյանի հետ սկսել հարվածել, Վ.Սահակյանին զցել գետնին: Ա.Ղևոնդյանը, պառկելով Վ.Սահակյանի վրա, բռնել է ձեռքերը, որ նա չդիմադրի, Վ.Սահակյանը սկսել է գռռալ, օգնություն կանչել, Ա.Ղևոնդյանին մեղադրել, որ իր գլխին սարքել է, դա լսելով Ա.Ղևոնդյանը երկու ձեռքով բռնել է նրա կոկորդից, իսկ Վ.Գրիգորյանը փակել է նրա բերանը, որ նա չգոռա: Ինքը Վ.Սահակյանին սպառնացել է ասելով՝ «եթե ձեռք չկտրես կխփեմ» տպավորություն ստեղծելով, թե իր մոտ իրականում դանակ կա: Ինքը քաշելով Վ.Սահակյանի ձեռքից հանել է մատանին և ձեռքի շղթան, կարծելով, որ ոսկյա է, իսկ Ա.Ղևոնդյանը նրա գրպանից հանել է երկու հեռախոսները: Վ.Սահակյանը նրանց ասել է, որ իր մոտ եղած զարդերը ոսկյա չեն և իր մոտ գումար չկա: Ինքը հեռախոսի լույսի տակ նայելով համոզվել է, որ զարդերը իրականում ոսկուց չեն, հետ է վերադարձրել մատանին և շղթան, այնուհետև, ինքը Ա.Ղևոնդյանի մոտից վերցրել է երկու բջջային հեռախոսները և վերադարձրել է Վ.Սահակյանին, հետո հայտնել է, որ ինքը պարտքերի մեջ է, ստիպված է եղել նման արարք կատարել և զգուշացրել է, որ նա չդիմի ոստիկանություն՝ սպառնալով, որ նրա համար վատ կլինի» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 49-51, 94-95):

7. Նախաքննության ընթացքում Ա.Ղևոնդյանը որպես կասկածյալ տված ցուցմունքում տվել է նույնաբովանդակ խոստովանական ցուցմունքներ՝ հայտնելով, որ «(...) այն պահին, երբ Վալերիի Գրիգորյանը պառկել է Վ.Սահակյանի վրա, ձեռքերով փակել է նրա բերանը, Ժիրայր Ղուկասյանը իր մոտ եղած դանակը դեմ է տվել Վ.Սահակյանի կողքին՝ ասելով «ձեռք կտրի, թե չես կխփեմ», որի ընթացքում հափշտակել է նրա շղթաները և մատանին, իսկ ինքը Վ.Սահակյանի մոտից վերցրել է նրա հեռախոսը, որպեսզի ջնջի իր զանգահարած համարները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 37-40):

8. Ժ.Ղուկասյանի և Ա.Ղևոնդյանի միջև առերեսում կատարելու արձանագրության համաձայն՝ վերջինս, պնդելով իր ցուցմունքները, հայտնել է, որ տեսել է, թե ինչպես Ժ.Ղուկասյանն իր մոտ եղած դանակը դեմ է տվել տուժողի կողքին և սպառնալիքներ է տվել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 52-53):

9. Վ.Սահակյանի և Ժ.Ղուկասյանի միջև առերեսում կատարելու արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանը, պնդելով իր նախորդ ցուցմունքները,

հայտնել է, որ Ժ.Ղուկասյանը ավագակալին հարձակման ժամանակ «ինչ-որ բան դեմ տալով կողքին՝ պահանջել է իրերը»: Ժ.Ղուկասյանն ընդունել է, որ տուժողի իրերը հափշտակելու ընթացքում նա իրոք սպառնալիք է տվել և տպավորություն ստեղծել, որ իր մոտ դանակ կա, և իրերը չտալու դեպքում կխփի (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 71-72):

10. Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա է հետևյալ ձևակերպումը. «Գնահատելով դատաքննությանը հետազոտված բոլոր ապացույցները (...): Դատարանն ապացուցված համարեց նաև ամբաստանյալներ Վ.Գրիգորյանի, Ժ.Ղուկասյանի և Ա.Ղևոնդյանի կողմից տուժող Վ.Սահակյանի նկատմամբ կատարված արարքները, սակայն գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից դրանց տրվել է քրեաիրավական սխալ որակում և բավարար ապացույցների բացակայության պայմաններում, չպատճառաբանված ենթադրությունների և բացառապես տուժող Վ.Սահակյանի նախաքննական ցուցմունքների հիման վրա, վերջիններիս անհիմն մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով (...):

Նախաքննության ընթացքում տեղ գտած բացթողումների արդյունքում և դատաքննությանը ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությամբ, դրանք իրենց համակցության մեջ համադրելով դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալներ Ժիրայր Ղուկասյանի, Արմեն Ղևոնդյանի և Վալերիկ Գրիգորյանի կատարած արարքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

(...) դատաքննությանը ձեռք բերված ապացույցների համակցությունը հիմք է տալիս դատարանին հաստատված և ապացուցված համարելու այն փաստական հանգամանքները, որ նախնական հանցավոր պայմանավորվածության համաձայն՝ ամբաստանյալներ Ժ.Ղուկասյանը, Ա.Ղևոնդյանը և Վ.Գրիգորյանը 2011 թվականի հունվարի 24-ին տուժող Վ.Սահակյանին խաբեությանը տարել են Երևանի Վարդաշեն թաղամասում գտնվող «Խաչերի գարաժներ» կոչվող վայր, որտեղ վերջինիս կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝ նրանից բացահայտ հափշտակել են պարանոցի և ձեռքի շղթաները, մատանին և երկու բջջային հեռախոսները, սակայն զննելով և համոզվելով, որ դրանք իրենցից արժեք չեն ներկայացնում, իրերը ետ են վերադարձրել» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 317-318):

11. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է, որ «(...) ամբաստանյալներ Ժիրայր Ղուկասյանի և Արմեն Ղևոնդյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 176 հոդվածի 2 մասի 1-ին և 4-րդ կետերով, Վալերիկ Գրիգորյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 176 հոդվածի 2 մասի 1-ին, 4-րդ կետերով և 177 հոդվածի 2 մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքները կատարելը և նրանց մեղքը հաստատված, իսկ ամբաստանյալների պատճառաբանությունները հերքված են քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և Դատարանում հետազոտված (...) ապացույցներով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 103-104):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոք բերած անձի պնդմամբ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դատաքննության ընթացքում չի հիմնավորվել տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության գործադրումը կամ դա գործադրելու սպառնալիքը, ակնհայտ անհիմն են և չեն բխում գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցներից, հետևաբար ամբաստանյալներ Վ.Գրիգորյանին, Ժ.Ղուկասյանին և Ա.Ղևոնդյանին առաջադրված մեղադրանքները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերից 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով վերադրակելու մասին դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը թույլ են տվել նյութական իրավունքի խախտումներ:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը շարադրել և վերլուծության է ենթարկել մի շարք ապացույցներ, որից հետո եզրահանգել է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ դեպքի ժամանակ ամբաստանյալների մոտ դանակի առկայությունը և դրա գործադրման փաստը չեն հաստատվել, հիմնագուրկ է և հերքվում է գործով ձեռք բերված փաստական տվյալներով:

Ըստ բողոքաբերի՝ հափշտակության ընթացքում տուժողի նկատմամբ կիրառված բռնության և տուժողին տրված սպառնալիքների բնույթը գնահատելիս ստորադաս դատարանները հաշվի չեն առել գործի բոլոր հանգամանքները, մասնավորապես այն, որ հանցագործությունը կատարվել է ամառի վայրում, մթության մեջ, երեք անձի կողմից, որոնք նախկինում եղել են բազմաթիվ անգամ դատապարտված, այդ թվում՝ հափշտակությունների համար: Բռնությունը գործադրվել է երկու ձեռքով տուժողի կոկորդը բռնելու, խեղդելու, բերանը փակելու և դանակը գործադրելու սպառնալիքի եղանակով: Տուժողը կիրառված բռնությունը և սպառնալիքն ընկալել է որպես իր կյանքի և առողջության համար վտանգավոր, դադարել է դիմադրել և կատարել է հանցագործների պահանջը: Բողոք բերած անձի կարծիքով շարադրված փաստական տվյալները բավարար են հափշտակության ընթացքում կիրառված բռնությունը և տրված սպառնալիքները որպես տուժողի կյանքի և առողջության համար վտանգավոր գնահատելու համար, հետևաբար դատարանների դիրքորոշումն այն մասին, որ տեղի է ունեցել կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ զուգորդված կողոպուտ, չի բխում գործի փաստական տվյալներից:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Ժ.Ղուկասյանի, Ա.Ղևոնդյանի և Վ.Գրիգորյանի մեղադրանքները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերից 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով վերավորակելու մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 27-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը (ավազակությունը) ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցակազմից (կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտը) տարանջատելու և նշված հանցակազմերի մեկնաբանման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ վերոնշյալ հանցակազմերի կապակցությամբ դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Ավազակության և կողոպուտի հանցակազմերի քրեաիրավական բնութագրերը.

15. ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում[ն է], որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (...):

2. Ավազակությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով,
- 3) բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,
- 4) զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ՝ (...)

3. Ավազակությունը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով,
- 2) կազմակերպված խմբի կողմից,
- 3) առողջությանը ծանր վնաս պատճառելով՝ (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կողոպուտը՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն[ն է] (...)

2. Կողոպուտը, որը՝

- 1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կատարվել է խոշոր չափերով,
- 3) կատարվել է՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,
- 4) զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ (...):

3. Կողոպուտը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,

- 1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,
- 2) կազմակերպված խմբի կողմից՝
(...)»

Մեջբերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ ավագակությունը, ինչպես նաև կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտը երկօրյեկտ հանցակազմեր են. հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, իսկ լրացուցիչ օբյեկտը մարդու կյանքն է կամ առողջությունը:

Սուբյեկտիվ կողմից վերոնշյալ հանցակազմերը բնութագրվում են շահադիտական դրդման առկայությամբ, որը զուգորդվում է բռնության հետ:

16. Բռնության հասկացությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արևիկ և Ծովինար Սահակյանների* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը գրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք» (տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԲԳ/0176/01/11 որոշման 18-րդ կետը):

Մեջբերված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 176-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ավագակության հասարակ և որակյալ տեսակների դեպքում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող բռնությունը կամ դրա սպառնալիքը կարող են լինել բացառապես կյանքի կամ առողջության համար վտանգավոր, իսկ կողոպուտի որակյալ տեսակի դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը պետք է լինեն կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում անձի արարքը որպես ավագակություն կամ ծանրացնող հանգամանքներում կատարված կողոպուտ որակելիս պետք է գործի բավարար փաստական տվյալներով հիմնավորել, թե ինչում է արտահայտվել բռնության կամ դրա սպառնալիքի բովանդակությունը, և արդյոք դրանք կյանքի կամ առողջության համար վտանգավոր են եղել, թե ոչ:

17. Սույն որոշման նախորդ կետում նշված՝ բռնության բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է մանրամասնել ոչ միայն բռնության էությունը, այլև այն, թե որ բռնությունն է համարվում կյանքի կամ առողջության համար վտանգավոր, որը ոչ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնության՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու հիմնական չափանիշը առողջությանը պատճառված վնասի վերաբերյալ բժշկական ցուցանիշներն են, որոնցից կախված են արարքի, այդ թվում՝ ավագակության իրավաբանական գնահատման առանձնահատկությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնության տարբեր դրսևորումների՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելը որոշվում է ելնելով՝

ա) կյանքի կամ առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանից,
բ) հանցագործության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլն:

Վերոգրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կյանքի համար վտանգավոր են հանդիսանում զանգուսկրի ներթափանցող վնասվածքները, զանգի հիմքի և հատման ոսկորների բաց և փակ կոտրվածքները, գլխուղեղի ծանր և միջին աստիճանի վնասումները, ողնաշարի, կոկորդի, շնչափողի, կերակրափողի ներթափանցող վնասվածքները և այլն: Բացի այդ, տուժողի կյանքի համար բռնությունը կարող է հանգեցնել տարբեր հիվանդագին վիճակների զարգացման կամ տարբեր հիվանդությունների կամ խանգարումների առաջացման (օրինակ՝ ծանր աստիճանի շոկը, կոմայի մեջ ընկնելը և այլն):

Հանցագործության, տվյալ դեպքում՝ ավազակության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլնից ելնելով՝ բռնությունը գնահատվում է որպես կյանքի կամ առողջության համար վտանգավոր նաև այն դեպքում, երբ դրա կիրառման պահին իրական վտանգ է ստեղծվել տուժողի կյանքի կամ առողջության համար: Այսպես, գույքը հափշտակելու նպատակով հանցավորը, առանց վնաս պատճառելու, կիրառում է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ կամ բռնությունը կիրառում է տուժողի կյանքի համար վտանգավոր այլ եղանակներով (օրինակ՝ խեղդում է տուժողին, տարբեր ձևերով փակում է նրա շնչառությունը և այլն): Նման դեպքերում բռնության բնույթը որոշվում է գործի բոլոր հանգամանքները (բռնության գործադրման եղանակ, գործիքներ, հանցակիցների քանակ, դեպքի կատարման ժամանակ, տեղ և այլն) հաշվի առնելով:

18. Կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը հանդիսանում է հոգեբանական բռնության տարատեսակ և կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ խոսքով, ժեստերով, զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների ցուցադրմամբ կամ այնպիսի այլ գործողությունների կատարմամբ, որոնք ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, տուժողի կյանքի կամ առողջության համար իրական սպառնալիք են ներկայացնում: Հետևաբար, այն դեպքում, երբ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների ցուցադրումը կամ հանցավորի դրսևորած այլ գործողությունները՝ ժեստը, մարմնաշարժումը և այլն, զուգորդված չեն տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի դրսևորման հետ, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտ:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկան փաստացի չի գործադրվել, սակայն կոնկրետ իրավիճակում դրանք տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ են ստեղծել (օրինակ՝ հարձակման ժամանակ հանցավորը զենքը կամ որպես զենք օգտագործվող այլ առարկան

հայում է տուժողի որովայնին, կոկորդին կամ կենսական կարևոր նշանակություն ունեցող այլ օրգանների), արարքը պետք է որակել որպես ավազակություն: Վճռաբեկ դատարանի այս եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ նկարագրված դեպքում տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ է ստեղծվում, քանի որ ցանկացած պահի, այդ թվում՝ տուժողի կողմից դիմադրություն ցույց տալու կամ փախուստի փորձի դեպքում հանցավորի դիտավորյալ կամ անզգույշ գործողություններով տուժողի կյանքին կամ առողջությանը կարող է վնաս պատճառվել:

19. Այն դեպքերում, երբ բռնություն գործադրելու սպառնալիքն արտահայտվում է այլ գործողություններով կամ խոսքով, արարքը ավազակություն կամ կողոպուտ որակելու նպատակով անհրաժեշտ է գնահատել սպառնալիքի բնույթը, մասնավորապես այն, թե սպառնալիքն իրական է, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնություն գործադրելու սպառնալիքն իրական չէ, եթե գործի կոնկրետ հանգամանքներով չի հիմնավորվում, թե այն իրականացնելու իրական հնարավորություն հանցավորն ունեցել է, թե ոչ:

Բռնություն գործադրելու սպառնալիքի իրական լինելը ենթադրում է, որ տուժողը բավարար հիմքեր պետք է ունենա վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է գիտակցի, որ հանցավորի պահանջը չկատարելու դեպքում սպառնալիքն անմիջապես կիրագործվի և իր կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կգործադրվի: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հաստատելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, այդուհանդերձ առաջնային նշանակություն ունի օբյեկտիվ իրադրության գնահատումը: Այլ խոսքով՝ սպառնալիքն իրական լինելու վերաբերյալ միայն տուժողի սուբյեկտիվ ընկալումը չի կարող հիմք հանդիսանալ արարքը ավազակություն որակելու համար: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպառնալիքը կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու վերաբերյալ տուժողի սուբյեկտիվ ընկալումը կարող է պայմանավորված լինել նրա հուզական, հոգեֆիզիկական, նյարդային և առողջական վիճակով, տարիքով, զգայունության, մտավոր զարգացման աստիճանով և մի շարք այլ գործոններով: Ուստի սպառնալիքի՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է հաշվի առնել գործով հաստատված բոլոր հանգամանքների համակցությունը՝ հանցագործության կատարման ժամանակը, տեղը և եղանակը, հանցագործի անձը, նրանց քանակը, տուժողի կողմից սպառնալիքի բնույթի սուբյեկտիվ ընկալումը, այնպիսի բացահայտ գործողությունների կատարումը, որոնք վկայում են ֆիզիկական բռնություն գործադրելու հանցավորի մտադրության կամ պատրաստակամության մասին և այլն:

20. Սուբյեկտիվ կողմից ավազակությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն է գործադրում կամ դա գործադրելու սպառնալիք է տալիս և բռնությունը կիրառում է գույքը

հափշտակելու համար, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքը հափշտակելու դիտավորությունը պետք է առաջանա մինչև կյանքի կամ առողջության համար վտանգավոր ոտնձգություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հարձակումը: Այլ խոսքով՝ բռնության կամ դրա սպառնալիքի գործադրումն առանց գույքին տիրանալու նպատակի չի կարող ավագակային հարձակման հատկանիշ հանդիսանալ (օրինակ՝ բռնությունը կամ սպառնալիքը գործադրվում է այլ շարժառիթով (վրեժ, խանդ և այլն), որից հետո հանցավորի մոտ առաջանում է գույքը հափշտակելու դիտավորություն և հանցավորը փաստացի հափշտակում է գույքը):

Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը գիտակցում է ոչ միայն գույքի բացահայտ հափշտակության, այլ նաև այդ ընթացքում կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի փաստը: Այլ խոսքով՝ հանցավորը գիտակցում է, որ տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրում կամ դրա գործադրման սպառնալիք է կիրառում նրա գույքը հափշտակելու նպատակով և ցանկանում է այդ:

21. Անդրադառնալով զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավագակությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը տուժողի գույքը հափշտակելու նպատակով հարձակման ընթացքում դրանց փաստացի օգտագործումն է, օգտագործման փորձը կամ դրանցով սպառնալիք տալը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքում, երբ հանցավորը զենքը կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաները փաստացի չի օգտագործել, չի փորձել օգտագործել կամ դրանցով սպառնալիք տալ, սակայն հանցավորի մոտ դրանց առկայությունը կոնկրետ դեպքում տուժողի կյանքի կամ առողջության համար ստեղծել է իրական վտանգ, արարքը ենթակա է որակման որպես հասարակ ավագակություն:

Ինչ վերաբերում է հանցակիցներից մեկի կողմից զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմանը, սպա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ՝

ա) ավագակության հանցակիցները մինչև հանցանքի կատարումը զենքի (որպես զենք օգտագործվող առարկա) կիրառման վերաբերյալ պայմանավորվածություն են ձեռք բերել, ինչպես նաև այն դեպքում, երբ հանցակիցները նախապես իմացել են, որ իրենցից մեկի մոտ առկա է զենք (որպես զենք օգտագործվող առարկա), որը կարող է օգտագործվել արարքը կատարելու ժամանակ և խմբի անդամները գիտակցել են զենքի (որպես զենք օգտագործվող առարկայի) կիրառման հնարավորությունը, բոլոր հանցակիցների արարքը պետք է որակել զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավագակություն:

բ) իրենցից մեկի մոտ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի առկայության մասին ավագակության հանցակիցներն իմացել են հանցագործությունը կատարելու ընթացքում և հանցանքի կատարումը շարունակել են արդեն զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի կիրառմամբ, բոլոր հանցակիցների արարքը պետք է որակել զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավագակություն:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ ավագակության հանցակիցներից մեկի մոտ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի առկայության մասին մյուս հանցակիցները չեն իմացել ո՛չ նախքան հանցանքի կատարումը, ո՛չ դրա ընթացքում, ապա առկա է հանցակցի սահմանազանցում (ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդված):

22. Հիմք ընդունելով սույն որոշման 15-21-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավագակության (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված) և կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտի (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ) հանցակազմերը տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

ա) ավագակության հանցակազմի իմաստով՝ կյանքի կամ առողջության նկատմամբ գործադրված բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը դիտվում է վտանգավոր այն դեպքում, երբ դրա արդյունքում տուժողի առողջությանը պատճառվել է թեթև (որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ), միջին ծանրության, ծանր վնաս կամ մահ:

բ) կյանքի կամ առողջության համար բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը վտանգավոր է, եթե բռնության հետևանքով տուժողի առողջությանը վնաս չի պատճառվել, սակայն գործի նյութերով հաստատվել է, որ բռնությունը գործադրելու պահին տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու իրական սպառնալիք է եղել:

գ) այն դեպքում, երբ գործադրված բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքն արտահայտվում է տուժողի առողջությանը թեթև վնաս պատճառելով, որը չի առաջացրել առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, կամ զուգորդվել է ծեծով, ֆիզիկական ցավ պատճառելով, ձեռքերը կամ ոտքերը կապելով կամ ոլորելով կամ տուժողի ազատությունը սահմանափակելով՝ պայմանով, որ նշված գործողությունների արդյունքում տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու իրական վտանգ չի ստեղծվել, և նման բռնության սպառնալիք չի տրվել, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված կողոպուտ:

դ) հարձակումն ավագակության հանցակազմի պարտադիր հատկանիշ է, մինչդեռ կողոպուտը կարող է կատարվել առանց հարձակման:

ե) ավագակության դեպքում հանցավորը գիտակցում է, որ տուժողի նկատմամբ

կիրառված բռնությունը վտանգավոր է, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված կողոպուտի պարագայում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված է տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրումը:

II. Ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումները.

23. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալներ Ժ.Ղուկասյանին, Ա.Ղևոնդյանին և Վ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով առաջադրված մեղադրանքը 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով վերաորակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

24. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալները տուժող Վ.Սահակյանի գույքի հափշտակությունն իրականացրել են հետևյալ հանգամանքներում՝

ա) Ժ.Ղուկասյանը, Ա.Ղևոնդյանը և Վ.Գրիգորյանը նախապես հանցավոր համաձայնության են եկել Վ.Սահակյանի ոսկյա զարդերն ու մի քանի բջջային հեռախոսները հափշտակելու շուրջ:

բ) Ժ.Ղուկասյանը, Ա.Ղևոնդյանը և Վ.Գրիգորյանն իրենց հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով տուժողին խաբեությանը կանչել են նախապես որոշված վայր՝ Վարդաշեն թաղամասի բնակելի շենքերից հեռու գտնվող «Խաչերի գարաժներ» կոչվող ամայի վայրը, որտեղ Ժ.Ղուկասյանը տուժողի հետ վիճաբանելու պատրվակ է ստեղծել և սկսել է քաշքշել նրան, պահանջել զարդերն ու գումարը:

գ) Ժ.Ղուկասյանը և Վ.Գրիգորյանը վիճաբանության ընթացքում տուժողին անսպասելի հարվածել և զցել են գետնին:

դ) Ա.Ղևոնդյանը, միանալով Ժ.Ղուկասյանի և Վ.Գրիգորյանի գործողություններին, հանցավոր մտադրությունը մինչև վերջ իրականացնելու նպատակով պառկել է տուժողի վրա, արգելափակել է նրա շարժումները, ձեռքերով բռնել կոկորդից: Այդ ընթացքում Վ.Գրիգորյանը մի ձեռքով փակել է տուժողի բերանը, մյուս ձեռքով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, նույն պահին Ժ.Ղուկասյանը սպառնացել է տուժողին, որ եթե ձայն հանի դանակով կհարվածի, և դանակը սեղմել է նրա աջ կողքին:

ե) Ա.Ղևոնդյանը տուժողի կամքին հակառակ նրա գրպանից հանել է բջջային հեռախոսները և պոկել պարանոցի շղթան, իսկ Ժ.Ղուկասյանը տուժողի մատից հանել է մատանին, ձեռքի շղթան:

զ) հափշտակված իրերը բջջային հեռախոսի լույսի տակ զննելով՝ հանցանք կատարած անձինք հանդավել են, որ շղթաները և մատանին ոսկուց չեն, այլ հասարակ մետաղից և նշված իրերը վերադարձրել են տուժողին, սպա վերադարձրել են նաև բջջային հեռախոսները՝ սպառնալով, որ ոստիկանություն դիմելու դեպքում նրա համար վատ կլինի (տե՛ս սույն որոշման 5-9-րդ կետերը):

25. Սույն որոշման 15-22-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի

ներքո գնահատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Սահակյանի գույքի հափշտակության նպատակով իրականացված հարձակման ընթացքում ամբաստանյալներ Ժ.Ղուկասյանի, Ա.Ղևոնդյանի և Վ.Գրիգորյանի կողմից գործադրվել է տուժողի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն, ինչպես նաև տրվել է կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիք, հետևաբար ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալների արարքում բացակայում են ավագակության հատկանիշները և նրանց արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով՝ որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված կողոպուտ, որը զուգորդվել է տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը), հիմնագուրկ է և չի բխում գործի փաստական հանգամանքներից:

Նմանեզրահանգման Վճռաբեկ դատարանը գալիս է ինչպես ամբաստանյալներ Ժ.Ղուկասյանի, Ա.Ղևոնդյանի և տուժող Վ.Սահակյանի՝ նախաքննական ցուցմունքների գնահատման արդյունքում, այնպես էլ հաշվի առնելով գործով հաստատված բոլոր հանգամանքների համակցությունը՝ հանցագործության կատարման ժամանակը, տեղը և եղանակը, հանցագործների անձը բնութագրող տվյալները, նրանց քանակը, կիրառված բռնության և տրված սպառնալիքների բնույթը, տուժողի կողմից սպառնալիքի բնույթի սուբյեկտիվ ընկալումը: Մասնավորապես այն, որ ամբաստանյալները նախնական համաձայնության գալով Վ.Սահակյանի ոսկյա իրերը և բջջային հեռախոսները հափշտակելու վերաբերյալ, վերջինիս խաբեությամբ տարել են ամառի վայր, որտեղ մթության մեջ, տուժողի համար անսպասելի քաշքշել են նրան, զգել գետնին, Ա.Ղևոնդյանը պառկել է նրա վրա, արգելափակել է նրա շարժումները, ձեռքերով բռնել կողորդից, իսկ Վ.Գրիգորյանը մի ձեռքով փակել է տուժողի բերանը, մյուս ձեռքով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Այդ ժամանակ Ժ.Ղուկասյանը, դանակը սեղմելով տուժողի աջ կողքին, սպառնացել է, որ եթե նա ձայն հանի, կհարվածի և Վ.Սահակյանի կամքին հակառակ հափշտակել են նրա շղթաները, մատանին և բջջային հեռախոսները:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է նաև Առաջին ատյանի դատարանի հետևությունն այն մասին, որ դեպքի ժամանակ ամբաստանյալների մոտ դանակի առկայությունը և դրա գործադրման փաստը չի հաստատվել: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դեպքի ժամանակ դանակի առկայության և դրա գործադրման փաստն իրենց նախաքննական ցուցմունքներում պնդել են ոչ միայն տուժող Վ.Սահակյանը, այլև ամբաստանյալներ Ժ.Ղուկասյանը և Ա.Ղևոնդյանը (տե՛ս սույն որոշման 6-9-րդ կետերը), սակայն դատական քննության ընթացքում նրանք հրաժարվել են իրենց նախաքննական ցուցմունքներից: Առաջին ատյանի դատարանը, չպարզելով և չգնահատելով ամբաստանյալների ցուցմունքների միջև առաջացած էական հակասությունները, դատավճռի հիմքում դնելով վերջիններիս դատաքննական ցուցմունքների մի

մասը, բավարար չափով չի պատճառաբանել և չի հիմնավորել, թե ինչու են դրանք արժանահավատ, իսկ նախաքննական մասնակի խոստովանական ցուցմունքները՝ ոչ:

Փաստորեն, խախտելով ապացույցների գնահատման կարգն ամրագրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները՝ Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել Ժ.Ղուկասյանի, Ա.Ղևոնդյանի և Վ.Գրիգորյանի արարքների ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող՝ սույն որոշման վերը նշված հանգամանքները, ինչի արդյունքում անհիմն եզրահանգման է եկել նրանց գործողություններում ավագակության հատկանիշների բացակայության և կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտի հատկանիշների առկայության վերաբերյալ:

27. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ իրավաչափ չեն ամբաստանյալներ Ժ.Ղուկասյանին, Ա.Ղևոնդյանին և Վ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով առաջադրված մեղադրանքը 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով վերաորակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Սույն գործով դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել գործի փաստական հանգամանքները: Արդյունքում չի կիրառվել քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման, և կիրառվել է այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վերոնշյալ նյութական և դատավարական իրավունքի խախտումները Վճարելի դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Ժիրայր Բահատուրի Ղուկասյանի, Արմեն Աշոտի Ղևոնդյանի և Վալերիկ Գուրգենի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 27-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

6.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՎԴ-2/0007/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմող՝*

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ դիմող Արթուր Երեմի Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 44119311 քրեական գործը:

2012 թվականի հունվարի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 16101912 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի և 2012 թվականի մարտի 7-ի որոշումներով թիվ 44119311 քրեական գործով Լևոն Ռուբիկի Թարվերոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նույն մարմնի 2012 թվականի հունվարի 31-ի որոշմամբ թիվ 44119311 քրեական գործով Արթուր Երեմի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի մարտի 12-ի որոշմամբ թիվ 16101912 քրեական գործով Ռուբիկ Լևոնի Թարվերդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նույն մարմնի 2012 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ թիվ 16101912 քրեական գործով Լ.Թարվերդյանին և Ռ.Թարվերդյանին առաջադրված մեղադրանքները փոփոխվել են, և նրանց նոր մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի փետրվարի 6-ին թիվ 44119311, իսկ 2012 թվականի մայիսի 25-ին թիվ 16101912 քրեական գործերը մեղադրական եզրակացություններով ուղարկվել են Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 5-ի որոշմամբ թիվ 44119311 և թիվ 10101912 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ համատեղ քննություն իրականացնելու համար:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Լ.Թարվերդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված երկու դրվագով հանցագործությունների կատարման մեջ և յուրաքանչյուր դրվագով դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Լ.Թարվերդյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Ռ.Թարվերդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Ռ.Թարվերդյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Նույն օրն Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ Արարատի մարզի դատախազին դիմելու մասին:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 14-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել դիմող Ա.Սարգսյանը, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ա.Սարգսյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Արարատի մարզի Այնթապ գյուղի բնակիչ Լևոն Ռուբիկի Թարվերդյանը 2008-2009 թվականներին նույն գյուղում զբաղվել է բնակելի տների կառուցմամբ և վաճառքով: 2008 թվականի մարտ ամսին Լևոն Ռուբիկի Թարվերդյանը Երևան քաղաքի բնակիչ Արթուր Երեմի Սարգսյանից փոխառության կարգով, մեկ տարի ժամկետով, վերցրել է 6000 /վեց հազար/ ԱՄՆ դոլար՝ ամսական 5 /հինգ/ տոկոս տոկոսադրույք վճարելու պայմանով և նշված գումարն օգտագործել է բնակելի տների շինարարությունն իրականացնելիս (...):

2009 թվականի հուլիս ամսին լրացուցիչ գումարի անհրաժեշտություն առաջանալու պատճառով Լևոն Թարվերդյանը Արթուր Սարգսյանից փոխառության կարգով խնդրել է 5000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար գումար: Ա.Սարգսյանը համաձայնվել է տրամադրել այդ գումարը՝ դրա դիմաց Լ.Թարվերդյանի կողմից որևէ անշարժ գույք գրավ դնելու դեպքում: Լ.Թարվերդյանը և Ա.Սարգսյանը պայմանավորվածություն են ձեռք բերել Սամվել Ասատրյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված 68.1 քմ տունը՝ 140 քմ մետր հողամասի հետ, անվանավորել Ա.Սարգսյանի անվամբ, իսկ գործարքը կատարելուց հետո վերջինս Լ.Թարվերդյանին փոխառությամբ պետք է տրամադրեր 5000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար գումար: Պայմանավորվածության համաձայն, Սամվել Ասատրյանը Լևոն Թարվերդյանի հանձնարարությամբ 2009 թվականի հուլիսի 18-ին «Մասիս» նոտարական տարածքի նոտար Հ.Ղարիբյանի կողմից վավերացված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Այնթապ գյուղի 13-րդ փողոցի թիվ 2/3 հասցեում գտնվող 68.1 քմ տունը՝ 140 քմ հողամասի հետ, նվիրել է Արթուր Սարգսյանին և այդ պայմանագրի հիման վրա վերջինիս սեփականության իրավունքն այդ գույքի նկատմամբ գրանցվել է ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մասիսի տարածքային ստորաբաժանումում և 22.07.2009 թվականին տրվել է թիվ 2696522 սեփականության իրավունքի գրանցման վկայականը: Նշված գործարքը կատարվելուց հետո Ա.Սարգսյանը Լ.Թարվերդյանին չի տվել պայմանավորված գումարը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 166-167):

6. Վերաքննիչ դատարանը դիմող Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը, իսկ նույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ և 2.1 կետերով նախատեսված ակտերի դեմ՝ նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները: Քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները դատական ակտն իրավունք ունեն բողոքարկելու քաղաքացիական հայցի մասով: Քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ գործերով կողմեր չհանդիսացող

անձինք, եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին:

Քրեական գործով քաղաքացիական հայց չի ներկայացված կամ լուծված, հետևաբար գործով վկա Արթուր Մարգարյանը չի կարող բողոքարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 14.07.2012 թվականի դատավճիռը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոք բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 236):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

7. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և քրեադատավարական օրենսդրության մի շարք նորմերի խախտումներ, որի արդյունքում խախտվել է իր անմեղության կանխավարկածը: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 365-րդ, 367-րդ հոդվածների, 371-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով միայն ամբաստանյալներ Ռուբիկ, Լևոն Թարվերդյանների, վերջինիս եղբոր՝ դատաքննության ընթացքում տված ցուցմունքները, դուրս գալով մեղադրանքի սահմաններից, առանց որևէ պատշաճ ապացույցի հիմնավորված է համարել իր կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը և հաշվի չի առել, որ նախաքննության մարմնի 2012 թվականի հունվարի 1-ի որոշմամբ իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Արդյունքում, Առաջին ատյանի դատարանի դատական ակտերում տեղ գտած ձևակերպումները հանգեցրել են իր անմեղության կանխավարկածի խախտման, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 14-ի դատական ակտերի հիման վրա հարուցվել է քրեական գործ, և իր նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

8. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ և 381-րդ հոդվածի պահանջները, այն է՝ վերոշարադրյալի պայմաններում չի քննել և առանց քննության է թողել Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված իր վերաքննիչ բողոքը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է իր մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 14-ի, Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 28-ի դատական ակտերը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավասություն ունեցող անձանց շրջանակի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ դիմող Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա. Դավթյանի և Ս. Սկրտչյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, որին ուղիղ համեմատական է այդ իրավունքները և ազատությունները ճանաչելուն և պաշտպանելուն, ինչպես նաև դրանց իրացումն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն ուղղված՝ պետության պոզիտիվ պարտականությունը (...)» (տե՛ս Արման Վահանի Դավթյանի և Սոնա Ռուբենի Սկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԳԳ/0004/11/12 որոշման 14-րդ կետը):

Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիք հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի ապահովմանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, *Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքը պահանջում է Պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Կիրառված սահմանափակումները, սակայն, դատարան դիմելու անձի իրավունքը չպետք է այնպես սահմանափակեն կամ նվազեցնեն, որ խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և եթե գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը, իսկ սույն օրենսգրքի 376¹ հոդվածի 2-րդ և 2.1-րդ կետերով նախատեսված ակտերի դեմ՝ նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները: Քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները դատական ակտն իրավունք ունեն բողոքարկելու քաղաքացիական հայցի մասով: Քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ գործով կողմեր չհանդիսացող անձինք, եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին: (...)»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ այն հնարավորություն է ընձեռում գործով կողմ չհանդիսացող անձին առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը վիճարկել վերադաս դատարանում բացառապես քաղաքացիական հայցի մասով, եթե տվյալ դատական ակտն առնչվում է իր շահերին:

14. Գատավարության մասնակից չհանդիսացող անձի՝ քրեադատավարական իրավահարաբերություններին մասնակցելու իրավունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մարատ և Կարեն Սարգսյանների* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) եթե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, ապա անձն իրավունք ունի դիմել թե՛ դատարան և թե՛ վերադատության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները:

(...) [Գ]ատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմնիների ընդունած որոշումն առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:

Վճռաբեկ դատարանն անձանագրում է նաև, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա» (տե՛ս *Մարատ և Կարեն Սարգսյանների* գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0282/01/09 որոշման 22-23-րդ կետերը):

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում առկա ձևակերպման պայմաններում չի ապահովվում դատավարության մասնակից չհանդիսացող անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, հետևաբար դատավարության մասնակից չհանդիսացող անձին հնարավորություն չի ընձեռվում վերադաս դատական ատյաններում վիճարկել իր շահերին առնչվող դատական ակտի օրինականությունը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով*, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ

Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի իրացման արդյունավետ երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը, գտնում է, որ հարկ է վերաքննիչ բողոք բերելու իրավունք նախատեսել նաև քրեական դատավարության մասնակից չհանդիսացող այն անձի համար, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը գործի քննության արդյունքներով հաստատված է համարել և իր դատավճռում ամրագրել է այն, որ 2008 թվականի մարտ ամսին Լ.Թարվերդյանն Ա.Սարգսյանից փոխառության կարգով մեկ տարի ժամկետով վերցրել է 6000 ԱՄՆ դոլար՝ ամսական 5 տոկոս տոկոսադրույք վճարելու պայմանով: Բացի այդ, 2009 թվականի հուլիս ամսին Լ.Թարվերդյանն Ա.Սարգսյանից փոխառության կարգով խնդրել է ևս 5000 ԱՄՆ դոլար գումար, վերջինս համաձայնվել է տրամադրել այդ գումարը՝ դրա դիմաց որևէ անշարժ գույք գրավ դնելու պայմանով: Արդյունքում, Լ.Թարվերդյանը 68.1 քմ տունը և 140 քմ մետր հողամասն անվանափոխել է Ա.Սարգսյանի անվամբ: (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը դիմել է նաև դատախազին Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել դիմող Ա.Սարգսյանը, որը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ արձանագրելով, որ Ա.Սարգսյանը դատավարության մասնակից չի հանդիսանում, քրեական գործով քաղաքացիական հայց չի հարուցվել և լուծվել, հետևաբար դիմող Ա.Սարգսյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բողոք բերելու իրավունք չունի (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն առերևույթ առնչվում է դիմող Ա.Սարգսյանի իրավունքներին և օրինական շահերին:

17. Սույն որոշման 12-15 կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 16-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ թեև Ա.Սարգսյանը սույն գործով չի հանդիսացել դատավարության մասնակից, այդուհանդերձ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճիռն առնչվել է նրա իրավունքներին և օրինական շահերին, հետևաբար Վերաքննիչ դատարանը, քննության չառնելով իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող՝ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ դիմող Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքը, սահմանափակել է վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Հետևաբար, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ Ա.Սարգսյանի կողմից բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ: Վերաքննիչ դատարանը, նման որոշում կայացնելով, թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

եվրոպական կոնվենցիայի 13-րդ, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 28-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

18. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի կողմից անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտում թույլ տրված լինելու մասին բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումը վերացնելուց հետո: Ուստի, բողոքաբերի բարձրացրած այդ հարցին Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ չի անդրադառնում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Արթուր Երենի Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0111/11/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ռ.ԱՀԱՐՈՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝*

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ դիմող Պարզև Վաղարշակի Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերի, 132¹-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերի և 38-132¹-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 69108010 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ Համլետ Հայկի Դավթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 132¹-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով:

Նույն մարմնի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ քրեական գործով գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար

կալանք է դրվել մեղադրյալ Հ.Դավթյանի գույքի վրա:

2011 թվականի մայիսի 10-ին դիմող Հովհաննես Ազատի Հարությունյանը դիմում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ խնդրելով արգելանքից ազատել «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենան այն պատճառաբանությամբ, որ վերոհիշյալ մեքենան 2008 թվականի հոկտեմբերի 28-ին գնել է Համլետ Դավթյանից:

Նախաքննության մարմինը 2011 թվականի մայիսի 12-ին որոշում է կայացրել «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենան կալանքից ազատելու մասին:

2012 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է:

2. ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ա.Հակոբյանի 2012 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ վերացվել են քրեական գործի վարույթը կասեցնելու մասին 2012 թվականի փետրվարի 1-ի, գույքը կալանքից ազատելու մասին 2011 թվականի մայիսի 12-ի որոշումները, և նախաքննության մարմնին հանձնարարվել է կալանք դնել «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենայի վրա:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ կրկին կալանք է դրվել «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենայի վրա:

2012 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ մեղադրյալի ծանր հիվանդության հիմքով:

2012 թվականի հունիսի 28-ին դիմող Պարզև Վաղարշակի Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Ենգիբարյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշումը:

Նշված բողոքը ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Դավթյանի 2012 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ մերժվել է:

3. 2012 թվականի հուլիսի 18-ին դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Ենգիբարյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով «ՎԱԶ-21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենայի մասով վերացնել գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ դիմող Պարզև Վաղարշակի Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Ենգիբարյանի բողոքը մերժվել է:

4. Դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշմամբ դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

6. 2011 թվականի մայիսի 14-ին նոտարական գրասենյակում Հովհաննես Ազատի Հարությունյանի և Պարզև Վաղարշակի Խաչատրյանի միջև կնքվել է «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 64):

7. Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 11 AA 001985 վկայականի համաձայն՝ «ՎԱԶ 21074» մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում Պարզև Վաղարշակի Խաչատրյանը, նշված ավտոմեքենայի նկատմամբ նրա սեփականության իրավունքը ծագել է 2011 թվականի մայիսի 16-ին (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 12):

8. Գույքը կալանքից ազատելու մասին 2011 թվականի մայիսի 12-ի որոշման համաձայն՝ «Նախաքննության ընթացքում 10.05.2011թ. ՀՀ ոստիկանության ԶԳ-Վ ՀԿԳ քննության վարչություն է ստացվել Հովհաննես Ազատի Հարությունյանի դիմումը, որտեղ նշել է, որ 2008թ. հոկտեմբերի 28-ին Համլետ Դավթյանից գնել է «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենան, ինչի վերաբերյալ նույն օրը Վաղարշապատի տարածքի նոտարական գրասենյակում կնքվել է ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր, որի պատճենը ներկայացրել է դիմումին կից:

Դիմումի շուրջ հարցաքննված Հովհաննես Հարությունյանը ցուցմունքով հաստատել է դիմումում նշված հանգամանքները՝ հայտնելով, որ 2008թ. հոկտեմբերի 28-ին Համլետ Դավթյանից գնել է «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենան, այն սեփականության իրավունքով պատկանում է իրեն» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 11):

9. Քրեական գործի վարույթը կասեցնելու, գույքը կալանքից ազատելու մասին որոշումները վերացնելու վերաբերյալ 2012 թվականի փետրվարի 6-ի որոշման համաձայն՝ «(...) [Բ]նիչ Հ.Գևորգյանը, չպահանջելով նշված մեքենաները և չստուգելով դրանք վերոհիշյալ քաղաքացիների մոտ գտնվելու հանգամանքները, անտեսելով ՀՀ քր. դատ. օր-ի 233-րդ հոդվածի 1.1 մասի պահանջն այն մասին, որ մարդու շահագործման փաստի առթիվ հարուցված քրեական գործի քննության ընթացքում նախաքննական մարմինը հանցանքի կատարման արդյունքում ստացված ամբողջ գույքի վրա անհապաղ կալանք է դնում՝ անկախ այդ գույքը հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալը կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, ինչպես նաև ՀՀ քր. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն այն մասին, որ հանցավոր ճանապարհով ստացված

գույքի բռնագրավումը պարտադիր է՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, 12.05.2011թ. (...) որոշ[մամբ] նշված ավտոմեքենա[ն] ազատել է կալանքից, իսկ 01.02.2012թ. որոշմամբ ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով կասեցրել է քրեական գործի վարույթը:

Փաստորեն քննիչ Հ.Գ.Լորգյանը, ՀՀ քր. դատ. օր-ի 238-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ կալանքից ազատելով ավտոմեքենաները, հնարավորություն է տվել գործով շահագրգռված անձանց տնօրինել մեքենաները, դրանով իսկ գրկելով դատարանին Հ.Գ.վաճառի կողմից հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված ավտոմեքենաները բռնագրավելու հնարավորությունից» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 27):

10. Գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշման մեջ նշվել է, որ «2012թ. փետրվարի 6-ին դատախազի կողմից որոշում է կայացվել քննիչի 2011թ. մայիսի 12-ի, (...) «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 (...), ավտոմեքենա[ն] կալանքից ազատելու մասին որոշում[ը] վերացնելու մասին՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն մարդու շահագործման փաստի առթիվ հարուցված քրեական գործի քննության ընթացքում նախաքննական մարմինը հանցանքի կատարման արդյունքում ստացված ամբողջ գույքի վրա անհապաղ կալանք է դնում՝ անկախ այդ գույքը հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումը պարտադիր է՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 13):

11. ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Գ.ավթյանը 2012 թվականի հուլիսի 9-ին դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Ենգիբարյանի բողոքը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի առանձնացված որոշակի հոդվածներով նախատեսված հանցանքների /կոնկրետ դեպքում 132 հոդվածի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի վրա կալանք դնելը իմպերատիվ պահանջ է, որն սույն գործով կատարվել է վարույթ իրականացնող անձի կողմից» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 16-17):

12. Նախաքննության մարմնի՝ իրեղեն ապացույց ճանաչելու և ի պահ հանձնելու մասին 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման համաձայն՝ «(...) թիվ 69108010/1 քրեական գործով (...) «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի, որը ներկայումս վերահաշվառվել է 27 ՍԼ 867 համարանիշներով, (...) ավտոմեքենան քրեական գործով ճանաչել իրեղեն ապացույց:

(...)

«ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 համարանիշի ավտոմեքենան, որը ներկայումս վերահաշվառվել է 27 ՍԼ 867 համարանիշներով, թողնել

նստիկանության Մարտունու բաժնի պահպանությանը (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 50-51):

13. Առաջին ատյանի դատարանը դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Ենգիբարյանի բողոքը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի վրա կալանք դնելը օրենքի իմպերատիվ պահանջ է:

Բողոք բերողի այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը, օրենքի պահանջից ելնելով, խնդիր ունի ապացուցելու, որ վիճարկվող մեքենան հանցավոր արարքի արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք, ինչպես նաև վիճարկվող գույքը քրեական գործում իրեղեն ապացույց չի ճանաչվել, հիմնավոր չէ, քանի որ կալանքի տակ դրված գույքը ձեռք է բերվել Հ.Դավթյանին մեղսագրված հանցավոր արարքների կատարման ժամանակահատվածում: Բացի այդ, նշված ավտոմեքենան 11.09.2012 թվականի ՀՀ նստիկանության ԶԳ-Վ ՀԿԳ քննության վարչության բաժնի պետի տեղակալ Ա.Մելիքյանի որոշմամբ ճանաչվել է իրեղեն ապացույց:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրեղեն ապացույցները և առգրավված այլ առարկաները, բացառությամբ շուտ փչացող առարկաների, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 66, 67):

14. Դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանը վերաքննիչ բողոքում խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնել գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ առաջացած Պ.Խաչատրյանի իրավունքների խախտումը (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 11):

Վերաքննիչ դատարանի դատականի նիստի արձանագրման լազերային կրիչում առկա ձայնագրառման ուսումնասիրությունից երևում է, որ դիմողի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանը հստակեցրել է իր վերաքննիչ բողոքի պահանջը և նշել, որ «[Առաջին ատյանի դատարանի] որոշմամբ խախտվել է Պարզև Խաչատրյանի՝ հավաքական իմաստով ասած սեփականության իրավունքը, այսինքն Պարզև Խաչատրյանն այլևս հնարավորություն չունի իր գույքը ո՛չ տիրապետելու, ո՛չ տնօրինելու, ո՛չ օգտագործելու, ես դատարանից խնդրել եմ վերացնելու այդ երեք իրավունքների խախտումները, (...) տվյալ պարագայում երեք իրավունքից որ մեկի խախտումն էլ որ դատարանը պարտավորեցնի վարույթ իրականացնող մարմնին վերացնելու, տեղավորվում է իմ պահանջի մեջ (...) տվյալ դեպքում ի պահ հանձնելը, պատասխանատու պահպանությանը հանձնելը դիտվում է գոնե օգտագործման իրավունքի խախտման վերացում (...),

կամ տիրապետելու՝ փաստացի իր ավտոտնակում պահելու (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 35):

15. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Փաստորեն, մեղադրյալ Հ.Դավթյանին մեղսագրվող հանցավոր արարքը մտնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1 կետում թվարկված հանցանքների շարքին, հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի կատարման արդյունքում կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի վրա կալանք դնելն օրենքի իմպերատիվ պահանջն է, ուստի սույն գործի շրջանակներում «ՎԱԶ 21074» մակնիշի 27 ՍԼ 867 /նախկինում 14 ՍՍ 322/ համարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելը բխում է վերոնշյալ հոդվածների պահանջներից:

Ինչ վերաբերում է Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ Հ.Դավթյանին մեղսագրված հանցավոր արարքների կատարման ժամանակահատվածում կալանքի դրված գույքի ձեռքբերումը չի կարող բավարար հիմք հանդիսանալ եզրակացնելու, որ այն ձեռք է բերվել հանցավոր արարքի արդյունքում, վերաքննիչ դատարանը փաստում է, որ գործով նախաքննությամբ հիմնավորվել է, որ կալանքի դրված գույքը՝ «ՎԱԶ 21074» մակնիշի 27 ՍԼ 867 համարանիշի ավտոմեքենան, Հ.Դավթյանի կողմից ձեռք է բերվել հանցավոր արարքների կատարման արդյունքում, ուստի գույքի վրա կալանք դնելու մասին նախաքննական մարմնի որոշումը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1 մասի պահանջներից:

Իսկ ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ «ՎԱԶ 21074» մակնիշի ավտոմեքենան չի հանդիսանում Հ.Դավթյանի սեփականությունը, ուստի այն բռնագրավման ենթակա չէ, վերաքննիչ դատարանը փաստում է, որ այն ևս անհիմն է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից: (...)

Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

(...)

Գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Պ.Խաչատրյանի գույքի վրա կալանք դնելու որոշման, ինչպես նաև այդ որոշման հետ կապված առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքներում թե Պ.Խաչատրյանը և թե նրա ներկայացուցիչները առաջ չեն քաշել այն հարցը, թե կալանադրված մեքենան չի կարող արդյոք թողնվել Պ.Խաչատրյանի պատասխանատու պահպանությանը և առկա են արդյոք դրան խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի «բողոքի հիմքերը և պահանջը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում»:

Վերաքննիչ բողոքի բովանդակային և իրավական վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ բողոքի հեղինակը կալանադրված գույքը կալանքից հանելու և այն Պ.Խաչատրյանի պատասխանատու պահպանությանը հանձնելու պահանջ չի ներկայացրել:

Հետևաբար, վերոշարադրյալ հիմնավորումներով վերաքննիչ դատարանը գտնում է, որ կալանադրված գույքը կալանքից հանելու և այն Պ.Խաչատրյանի պատասխանատու պահպանությանը հանձնելու մասին հարցի քննարկումը տվյալ դեպքում վերաքննիչ դատարանի լիազորությունների մեջ չի մտնում:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ նախաքննական մարմնի և առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումներով որևէ անձի իրավունքների խախտում թույլ չի տրվել, հետևաբար բողոքաբեր Պ.Խաչատրյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 52-55):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

16. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ, 91-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ, 385-րդ, 386-րդ հոդվածների պահանջները, սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածը, չեն կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչի հետևանքով խախտվել է դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը:

17. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ ավտոմեքենայի սեփականատերը Պարզ Խաչատրյանն է, մինչդեռ վերջինս բարեխիղճ ձեռքբերող է և չի հանդիսանում մեղադրյալի գործողությունների համար նյութական պատասխանատվություն կրող անձ:

Բողոքաբերը նշել է նաև, որ «ՎԱԶ 21074» մակնիշի ավտոմեքենան իրեղեն ապացույց է ճանաչվել գույքի վրա կալանք դնելու մասին որոշում կայացնելուց ութ ամիս հետո, բացի այդ, գործով առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ նշված ավտոմեքենան հանդիսանում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, հետևաբար մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարքների կատարման ժամանակահատվածում կալանքի տակ դրված գույքի ձեռքբերումը ոչ վարույթ իրականացնող մարմնի և ոչ էլ դատարանների համար չի կարող բավարար հիմք

հանդիսանալ ենթադրելու, որ այն ձեռք է բերվել հանցավոր արարքի արդյունքում:

18. Հինք ընդունելով վերագրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն քրեական գործը կասեցվել է անորոշ ժամկետով, հետևաբար, Պ.Խաչատրյանն անորոշ ժամանակով զրկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունքից, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի, Վերաքննիչ դատարանի նոյեմբերի 23-ի դատական ակտերը, կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով «ՎԱԶ 21074» մակնիշի 14 ՍՍ 322 ավտոմեքենայի մասով գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշումը և ավտոմեքենան հանձնել Պ.Խաչատրյանին, կամ պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերականգնելու Պ.Խաչատրյանի՝ նշված ավտոմեքենայի տիրապետման և օգտագործման իրավունքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքի տակ գտնվող գույքը սեփականատիրոջ պատասխանատու պահպանությանը թողնելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. կալանադրված՝ «ՎԱԶ 21074» մակնիշի ավտոմեքենան սեփականատիրոջ՝ Պ.Խաչատրյանի պատասխանատու պահպանությանը թողնելու հարցը չքննարկելու պարագայում ստորադաս դատարանները սահմանափակել են արդյոք իր գույքը տիրապետելու և օգտագործելու՝ Պ.Խաչատրյանի սահմանադրական իրավունքը:

21. Սեփականության իրավունքի վերաբերյալ սահմանադրական և կոնվենցիոն մի շարք դրույթների, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա.Հայրապետյանի գործով կայացված որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահն ունենա բացառիկ նշանակություն: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ՀՀ Սահմանադրության մեջ (31-րդ հոդվածում) հետևյալ երաշխիքների ամրագրումը.

1) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է գրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,

2) սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ» (տես Արթուր Արարատի Հայրապետյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԳ-0001/11/10 որոշման 19-րդ կետը):

22. Սեփականության իրավունքի սահմանափակման տարատեսակ հանդիսացող՝ գույքի վրա կալանք դնելու ինստիտուտին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա.Սեկոյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) իր սեփականությունը հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այսմիջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն:

(...)

Ուստի գույքի վրա կալանք դնելիս վարույթն իրականացնող մարմինը, ելնելով գույքի վրա կալանք դնելու նպատակից, պետք է պատճառաբանված կերպով հիմնավորի, որ.

1) տվյալ գործով անձը ներգրավված է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,

2) ենթադրաբար կատարված հանցագործությամբ պատճառվել է հատուցման ենթակա վնաս,

3) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված հանցակազմերով առկա է հիմնավորված ենթադրություն առ այն, որ գույքը, որի վրա կալանք է դրվում, ստացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում,

4) գործով ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, ում մոտ գտնվում է կամ ում սեփականությունն է հանդիսանում գույքը, կարող են թաքցնել, փչացնել կամ սպառել այն:

(...)

Կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող [այն անձանց գույքի վրա կալանք դնելու դեպքում, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն ստացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողությունների արդյունքում] (...) վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է բավարար հիմքերի վկայակոչմամբ հիմնավորել կալանադրվող գույքի՝ կասկածյալի կամ մեղադրյալի առերևույթ հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում ձեռք բերված լինելու հնարավորությունը (...), հակառակ պարագայում անհարկի կսահմանափակվի իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը» (տես՝ Ալլա Սեկոյանի գործով Վճռաբեկ

դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0185/11/11 որոշման 14-րդ և 17-րդ կետերը):

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բացի անշարժ գույքից և մեծածավալ առարկաներից, այլ կալանադրված գույքը, որպես կանոն, վերցվում է:

(...)

3. Չվերցված գույքը, որի վրա կալանք է դրված, կնքվում և պահպանության համար թողնվում է գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին: Նրանց բացատրվում է տվյալ գույքն օտարելու կամ փչացնելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչի մասին նրանցից վերցվում է ստորագրություն»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից երևում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ կալանադրված գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին արգելվում է տնօրինել այն: Տնօրինման հետ մեկտեղ կալանադրված գույքի սեփականատերը կարող է գրկվել նաև իր գույքի տիրապետման և օգտագործման իրավագործությունից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի իմաստով կալանադրված գույքը, եթե այն անշարժ կամ մեծածավալ գույք չէ, ապա վարույթն իրականացնող մարմնի կողմից կարող է վերցվել: Միևնույն ժամանակ վերոնշյալ հոդվածով սահմանված կանոնն ունի բացառություն, այն է՝ չվերցված գույքը կարող է թողնվել սեփականատիրոջ կամ տիրապետողի պատասխանատու պահպանությանը:

Կալանադրված գույքը սեփականատիրոջ պատասխանատու պահպանությանը հանձնելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել Ա.Հայրապետյանի գործով որոշման մեջ, որի համաձայն՝ (...) կալանադրված գույքը սեփականատիրոջ պատասխանատու պահպանությանը թողնելու օրենսդրական պահանջը բխում է յուրաքանչյուր անձի՝ իր սեփականությունը տիրապետելու և օգտագործելու սահմանադրական իրավագործությունից և նախատեսված է այն նպատակով, որպեսզի հնարավորություն ընձեռվի սեփականատիրոջը մինչ քրեական գործով վարույթի ավարտն անարգել տիրապետել և օգտագործել իր գույքը:

(...) գույքի կալանադրման յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ հարցերը՝

1) կալանադրված գույքը կարո՞ղ է արդյոք թողնվել սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանությանը,

2) կալանադրված գույքը սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը չհանձնելու պարագայում սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակումն արդյո՞ք համաչափ է» (տե՛ս Արթուր Արարատի Հայրապետյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշման 20-21-րդ կետերը):

24. Սույն որոշման 21-23-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ կալանադրվում է կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանց սեփականության կամ տիրապետման իրավունքով պատկանող գույքը, որի նկատմամբ բավարար հիմքեր

կան ենթադրելու, որ այն ստացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողությունների արդյունքում, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է պատճառաբանված պատասխան տալ հետևյալ հարցերին՝

ա) արդյոք կալանադրվող գույքը ձեռք է բերվել կասկածյալի կամ մեղադրյալի առերևույթ հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում,

բ) արդյոք կալանադրված գույքը կարող է թողնվել սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից վերոնշյալ հարցերին չանդրադառնալու պարագայում անհարկի կասեցման ակտի անձի՝ իր գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու սահմանադրական իրավունքը:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2008 թվականի հոկտեմբերի 28-ին Հ.Հարությունյանը գործով մեղադրյալ Հ.Դավթյանից գնել է «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենան: Հետագայում Հ.Հարությունյանի և Պ.Խաչատրյանի միջև կնքվել է «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր, և նշված մեքենայի նկատմամբ գրանցվել է Պ.Խաչատրյանի սեփականության իրավունքը (տե՛ս սույն որոշման 1-ին, 6-7-րդ և 8-րդ կետերը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ նախաքննության մարմնի կողմից կայացվել են գույքը կալանքից ազատելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ 2012 թվականի փետրվարի 6-ի և գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշումներ, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինը իրեղեն ապացույց է ճանաչել «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենան և այն թողել է ոստիկանության Մարտունու բաժնի պահպանությանը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի որոշմամբ դիմող Պ.Խաչատրյանի ներկայացուցչի բողոքը մերժվել է (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Վերաքննության կարգով բողոքարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ դիմողի ներկայացուցչը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ խախտվել է Պարզ Խաչատրյանի սեփականության իրավունքը, քանի որ նա այլևս հնարավորություն չունի ո՛չ տիրապետելու, ո՛չ տնօրինելու, ո՛չ օգտագործելու իր գույքը (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը մերժել է դիմողի ներկայացուցչի բողոքը՝ պատճառաբանելով, որ նախաքննական մարմնի և առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումներով որևէ անձի իրավունքների խախտում թույլ չի տրվել: Վերաքննիչ դատարանը ձևական նկատառումներով չի անդրադարձել կալանադրված գույքը կալանքից հանելու և այն Պ.Խաչատրյանի պատասխանատու պահպանությանը հանձնելու մասին հարցին (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ սույն գործով ո՛չ նախաքննության մարմինը, ո՛չ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանները չեն անդրադարձել այն հարցին, թե արդյոք կալանադրված գույքը՝ «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենան, կարող

է թողնվել սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանությանը, և առկա⁶ են արդյոք դրան խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներ:

Վերոհիշյալը Վճռաբեկ դատարանը կարևորում է հատկապես այն պատճառով, որ սույն քրեական գործի վարույթը կասեցվել է, հետևաբար գույքի սեփականատեր Պ.Խաչատրյանը, փաստորեն, անորոշ ժամկետով զրկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունքից և հնարավորությունից:

26. Հիմք ընդունելով սույն որոշման 21-24-րդ կետերում առկա իրավական հիմնավորումները և դրանք համադրելով սույն որոշման 25-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թե՛ նախաքննության մարմինը և թե՛ ստորադաս դատարանները պարտավոր էին անդրադառնալ և պատճառաբանված պատասխան տալ վերոշարադրյալ հարցին, հետևաբար, կալանադրված՝ «ՎԱԶ 21074» մակնիշի ավտոմեքենան սեփականատիրոջ՝ Պ.Խաչատրյանի պատասխանատու պահպանությանը թողնելու հարցը չքննարկելու պարագայում ստորադաս դատարանները սահմանափակել են իր գույքը տիրապետելու և օգտագործելու՝ Պ.Խաչատրյանի սահմանադրական իրավունքը:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող եին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերը նշված խախտումը, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, հիմք է հանդիսանում սույն գործով գույքի վրա կալանք դնելու մասին 2012 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ Պ.Խաչատրյանի ներկայացուցչի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի դատական ակտերը բեկանելու և գործը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Պարզև Վաղարշակի

Խաչատրյանի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

8.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0023/11/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատախազ՝</i>	Պ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Հովհաննես Եղիայի Գինոսյանի պաշտպան Ռ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հուլիսի 8-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում Հովհաննես Գինոսյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով Ա.Միտիչյանին և Ա.Բոյախյանին վրաերթի ենթարկելու և անգոյություն մահ պատճառելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 19113212 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ Հ.Գինոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով և 244-րդ հոդվածով:

2. 2012 թվականի հուլիսի 13-ին մեղադրյալ Հ.Գինոսյանի պաշտպան Ռ.Հակոբյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազին՝ խնդրելով

վերացնել Հ.Գինոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին նախաքննության մարմնի 2012 թվականի հուլիսի 10-ի որոշումը:

Լոռու մարզի դատախազության դատախազ Պ.Մարտիրոսյանի 2012 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ պաշտպան Ռ.Հակոբյանի բողոքը մերժվել է:

3. 2012 թվականի հուլիսի 20-ին պաշտպան Ռ.Հակոբյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել Հ.Գինոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2012 թվականի հուլիսի 10-ի որոշումը և դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին դատախազ Պ.Մարտիրոսյանի 2012 թվականի հուլիսի 13-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ պաշտպան Ռ.Հակոբյանի բողոքը բավարարել է մասնակիորեն: Լոռու մարզի դատախազության դատախազ Պ.Մարտիրոսյանի 2012 թվականի հուլիսի 13-ի որոշումը վերացրել է և դատախազ Պ.Մարտիրոսյանին պարտավորեցրել վերացնել մեղադրյալ Հ.Գինոսյանի և նրա պաշտպան Ռ.Հակոբյանի իրավունքների խախտումը: Պաշտպանի բողոքը մնացած մասով մերժվել է:

4. Գատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 4-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու մասին: Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 1-ի որոշումը Լոռու մարզի դատախազության դատախազ Պ.Մարտիրոսյանի 2012 թվականի հուլիսի 13-ի որոշումը վերացնելու մասով բեկանվել է:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Ռ.Հակոբյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ պաշտպան Ռ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Առաջին ատյանի դատարանն իր որոշման պատճառաբանական մասում նշել է՝ «(...) Հովհաննես Գինոսյանին «Որպես մեղադրյալ ներգրավելու մասին» որոշումը պատկանում է այն որոշումների թվին, որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է, և այն չի հանգեցնում անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Գործի հետագա նախաքննության ընթացքում հնարավոր է ձեռք բերված ապացույցների հիման վրա այդ որոշման վերաձևակերպումը, նոր մեղադրանք առաջադրելը և այլն:

Ինչ վերաբերում է Լոռու մարզի դատախազության դատախազ Պ.Մարտիրոսյանի (...) որոշմանը, ապա այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 10-րդ կետով նախատեսված քրեական

վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման պահանջներին:

Ըստ էության՝ Լոռու մարզի դատախազության դատախազ Պ.Մարտիրոսյանի (...) որոշման մեջ բացակայում է պատճառաբանական մասը, որում կարող էին շարադրվել այն հիմնավորումները, որոնք հիմք են տվել (...) մերժել Հ.Գինոսյանի շահերի պաշտպան Ռ.Հակոբյանի բողոքը: Այսինքն՝ (...) դատախազ Պ.Մարտիրոսյանի կողմից չպատճառաբանված որոշում կայացնելը գրկել է պաշտպանության կողմին իր իրավունքներն արդյունավետ օգտագործելու հնարավորությունից (...):» (տե՛ս նյութեր, թերթ 23-26):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Ինչպես երևում է դատախազ Պ.Մարտիրոսյանի (...) որոշումից՝ դատախազը նշել է մի շարք ապացույցներ, որոնք նախաքննության մարմնին հիմք են հանդիսացել Հովհաննես Գինոսյանին ներգրավելու որպես մեղադրյալ (...):

Այսինքն՝ դատախազը պատճառաբանել է, որ գործում առկա է մեղադրյալին մեղսագրված արարքի կատարումը վկայող բավարարապացույցների համակցություն, որի պարագայում դատախազը գտել է, որ պաշտպանի «... բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, իսկ առաջադրված մեղադրանքը հիմնավոր է և համապատասխանում է մեղադրյալ Հ.Գինոսյանի կողմից կատարված արարքին ...»:

Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ դատախազ Պ.Մարտիրոսյանը կայացրել է պատճառաբանված որոշում, որում առկա են այն հիմնավորումները, որոնք հիմք են տվել պաշտպանի բողոքը մերժելու համար (...):» (տե՛ս նյութեր, թերթ 65-72):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտով խախտել է մեղադրյալ Հ.Գինոսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքը:

Բողոքաբերը փաստարկել է, որ դատախազին հասցեագրված բողոքը հիմնավորել է նրանով, որ Հ.Գինոսյանին մեղադրանք առաջադրելու որոշումը հիմնավորված չէ, առաջադրված մեղադրանքը վերացական է և անորոշ: Դատախազը կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում, որում ըստ էության բացակայել է պատճառաբանական մասը:

Վերոնշյալ հանգամանքը Առաջին ատյանի դատարանի կողմից դատախազի որոշումը վերացնելու հիմք է հանդիսացել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով դատախազի բողոքը, իր դատական ակտում տվել է վերացական ձևակերպումներ, չի հստակեցրել, թե Առաջին ատյանի դատարանը քրեադատավարական օրենքի կոնկրետ ինչ նորմ է խախտել՝ դրանով իսկ սահմանափակելով պաշտպանության կողմի հնարավորությունը լիարժեք կազմակերպելու և իրականացնելու իր պաշտպանության իրավունքը:

9. Հիմք ընդունելով վերագրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 1-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մյուս գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների կապակցությամբ դիրքորոշում ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նախևառաջ պատասխանել հետևյալ իրավական հարցին. իրավասո՞ւ են արդյոք դատարաններն իրականացնել քրեական հետապնդման մարմնի որոշման կամ գործողության դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատախազի կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում այն դեպքում, երբ քրեական հետապնդման մարմնի վիճարկվող որոշումը կամ գործողությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում:

12. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն

օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Մեջբերված իրավանդորմների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների (պաշտոնատար անձանց) որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված հիմնարար իրավունքների կենսագործումը և ապահովելու անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը պետական մարմինների անօրինական (անիրավաչափ) որոշումներից և գործողություններից: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, այն է՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը ստուգելու արդյունքում պարզել անձի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում նշված խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության վերաբերյալ (մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության մասին *mutatis mutandis* տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԳ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

13. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումներն ու գործողությունները ենթակա են նաև դատախազական հսկողության: Ընդ որում, ինչպես հետևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից, անձն իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքն իրացնելուց առաջ պարտավոր է սպառել իրավունքների պաշտպանության

արտադատական միջոցը՝ դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում: Այլ խոսքով՝ դատախազի կողմից շահագրգիռ անձի բողոքի մերժումն անհրաժեշտ նախապայման է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործի դնելու համար:

Մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության գործառույթների բովանդակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լ. Ջարյանի* գործով որոշման մեջ՝ նշելով, որ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և դատախազական հսկողության հետ համատեղ կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների ու որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը, սակայն, դատախազական հսկողության համեմատ ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք իրենց հերթին պայմանավորում են վերահսկողության օբյեկտի (առարկայի), վերահսկողության իրականացման ընթացակարգի (դատավարական ձևի), ընդունվող որոշումների և դրանց իրավական նշանակության տարբերությունները (...)» (տե՛ս Լատրա Գարեգինի Ջարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

14. Ջարգացնելով *Լ. Ջարյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատախազը, հանդիսանալով քրեական հետապնդման մարմին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 22-րդ կետ), մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելուց բացի, պարտավոր է նաև ապահովել նախաքննության խնդիրների իրականացումը, այն է՝ բացահայտել քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձին, պարզել հանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառությունը, այնինչ՝ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս նման խնդիրներ չի հետապնդում: Դատական վերահսկողության և դատախազական հսկողության խնդիրների վերոգրյալ տարբերությամբ է պայմանավորված նաև վերահսկողության իրականացման ընթացակարգի և սահմանների տարբերությունը: Մասնավորապես, մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ շահագրգիռ անձի բողոքի հիման վրա, իրավասու է վերանայել նախաքննության մարմնի ցանկացած որոշում կամ գործողություն: Մինչդեռ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նման լայն իրավասություններով օժտված չէ:

15. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Վ. Գրիգորյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) եթե

քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման» (տե՛ս Վալերի Գ-րիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԳ/0031/11/08 որոշման 12-րդ կետը):

Զարգացնելով Վ.Գրիգորյանի գործով որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Վ.Մանուկյանի գործով որոշման մեջ նշել է՝ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից գատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման» (տե՛ս Վարուժան Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ին կայացված թիվ ԵԿԳ/0060/11/10 որոշման 16-րդ կետը):

16. Համադրելով սույն որոշման 13-14-րդ և 15-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանները պայմանավորված են վերահսկողության խնդիրներով, այլ խոսքով՝ դատարանը պետք է իրականացնի մինչդատական վարույթում կայացված որոշումների և իրականացված գործողությունների դեմ բերված բողոքի քննություն այն դեպքում, եթե վիճարկվող որոշումները և գործողությունները կարող են հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն չի կարող իրականացվել այն դեպքում, երբ քրեական հետապնդման մարմնի կայացրած որոշումը կամ իրականացրած գործողությունը չի հանդիսանում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, նույն կերպ վերահսկողության առարկա չի կարող հանդիսանալ նաև վիճարկվող որոշման կամ գործողության դատախազական

հսկողության արդյունքում կայացված որոշումը: Հակառակ մեկնաբանության դեպքում, եթե իրականացվի դատախազի որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում, դատարանը դուրս կգա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրների սահմաններից, և առանց անձի իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև խախտված իրավունքները վերականգնելու նպատակի, անհարկի կմիջամտի նախաքննության ընթացքին, ինչն անթույլատրելի է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարաններն իրավասու չեն իրականացնել քրեական հետապնդման մարմնի որոշման կամ գործողության դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատախազի կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում այն դեպքում, երբ քրեական հետապնդման մարմնի վիճարկվող որոշումը կամ գործողությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում:

17. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը պատկանում է այն որոշումների թվին, որոնց օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը հնարավոր է միայն գործի ըստ էության քննության ժամանակ, ինչն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, չի կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Հետևաբար, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, ինչպես նաև վերահսկողության առարկա չի կարող հանդիսանալ այդ որոշման դատախազական հսկողության արդյունքում կայացված որոշումը:

Մինչդեռ, ինչպես երևում է սույն գործի նյութերի ուսումնասիրությունից, Առաջին ատյանի դատարանը, առանց բողոքի հիմքերին անդրադառնալու, իրավացիորեն մերժելով Հ.Գինոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշման դեմ բերված բողոքը, միևնույն ժամանակ քննության առարկա է դարձրել այդ որոշման դատախազական հսկողության արդյունքում կայացված ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, եզրահանգման եկել, որ այն պատճառաբանված չէ, և այդ մասով պաշտպանի բողոքը բավարարելով՝ վերացրել է դատախազի որոշումը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

Դատախազի բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր հերթին, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի հետևություններն անհիմն են, իսկ դատախազի որոշումը պատճառաբանված է, նշված որոշումը վերացնելու մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը (տե՛ս սույն որոշման 4-րդ և 7-րդ կետերը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները

գնահատելով 16-րդ կետում ձևավորված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարաններն իրավասու չեն իրականացնել քրեական հետապնդման մարմնի որոշման կամ գործողության դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատախազի կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում այն դեպքում, երբ քրեական հետապնդման մարմնի վիճարկվող որոշումը կամ գործողությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում: Հետևաբար, սույն գործով ստորադաս դատարանները, իրականացնելով անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման դատախազական հսկողության արդյունքում կայացված ակտի օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում, դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 5-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածներով սահմանված օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոնշյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և մեղադրյալ Հ.Գինոսյանի պաշտպանի բողոքի հիման վրա հարուցված դատական վարույթը կարճել:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքում բարձրացված՝ դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների հարցի քննարկումը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) դուրս է Վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Լռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 1-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումները բեկանել, մեղադրյալ Հովհաննես Եղիայի Գինոսյանի պաշտպան Ռ.Հակոբյանի

բողոքի հիման վրա հարուցված դատական վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

9.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0077/11/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Սուսաննա Անտոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հունիսի 23-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 13130610 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Պողոսյանի 2011 թվականի հունվարի 22-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Երևան քաղաքի դատախազ Հ.Բադալյանի 2011 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճելու մասին ավագ քննիչ Ա.Պողոսյանի

2011 թվականի հունվարի 22-ի որոշումը վերացվել է, և գործն ուղարկվել է լրացուցիչ նախաքննության:

2. Լրացուցիչ նախաքննության արդյունքում ավագ քննիչ Ա.Պողոսյանը 2012 թվականի մարտի 30-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և բժիշկ-սեքսուաթոլոգ Ա.Բաղդասարյանի, «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիրի, Վանաձոր քաղաքի ինֆեկցիոն հիվանդանոցի, Երևան քաղաքի «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի բուժանձնակազմերի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոգրյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազին բողոք է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Ս.Անտոնյանը, որը Երևան քաղաքի դատախազ Հ.Բաղալյանի 2012 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ մերժվել է:

3. 2012 թվականի մայիսի 4-ին տուժողի իրավահաջորդ Ս.Անտոնյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին ավագ քննիչ Ա.Պողոսյանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 27-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Ս.Անտոնյանի բողոքը մերժվել է:

4. Տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 31-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 27-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժողի իրավահաջորդ Ս.Անտոնյանը, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. 2010 թվականի մայիսի 31-ին Ս.Անտոնյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն այն մասին, որ «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում բժիշկ Ա.Բաղդասարյանի մոտ հետազոտվելուց և բուժում ստանալուց հետո իր որդու՝ Ս.Անտոնյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, և 2010 թվականի ապրիլի 5-ին նա մահացել է (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 2-3):

Ս.Անտոնյանը քրեական գործի ամբողջ քննության ընթացքում պնդել է, որ մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունն իր որդին ձեռք է բերել բժիշկ Ա.Բաղդասարյանի մոտ հետազոտվելու և բուժվելու ընթացքում (տե՛ս քրեական

գործ, հատոր 1-ին, թերթ 36-38, 41-42, 87-90, հատոր 2-րդ, թերթ 53, 60-61, 134-135, 144, 200-201, հատոր 3-րդ, թերթ 25-26, 53-54, 75-76, 87-88):

7. Քրեական գործում առկա են «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի շտապ օգնության բաժանմունքից առգրավված՝ Ա.Անտոնյանի անվամբ լրացված թվով 3 կանչի թերթիկները, որոնց համաձայն՝ Ա.Անտոնյանին բժշկական օգնություն ցուցաբերելու համար վերջինիս բնակարան մեկնած շտապ օգնության բրիգադը նրա մոտ աշխտորոշել է «ստենոկարդիայի նուպա» և ցուցաբերել համապատասխան օգնություն (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 228-231):

8. Նախաքննության մարմինը 2010 թվականի հուլիսի 6-ին գրությամբ դիմել է «Սեքսապաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի ղեկավարին՝ խնդրելով «(...) հանձնարարել համապատասխան աշխատակիցներին քննությանը տրամադրել Ձեր կենտրոնում բուժօգնության դիմած հանգուցյալ Արման Սամվելի Անտոնյանի /ծնվ. 1980թ., հաշվառված՝ ք.Վանաձոր Նարեկացի 4/13 տուն/ վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերի լուսապատճենները» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 59):

2010 թվականի հուլիսի 8-ին նախաքննության մարմինը գրությամբ տեղեկացվել է, որ «(...) Արման Սամվելի Անտոնյանը ս/թ հունվարի 25-ից մինչև ս/թ փետրվարի 19-ը ներառյալ բուժվել է «Սեքսապաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետևյալ դիագնոզով. էքսկրետոր տոքսիկ ամլություն, սատալիտային ուռեոպլազմոս, բազմաթիվ անգամ բուժված ուռետոր-վեզիկուլիտ, պարենտիմատոզ պրոստատիտ: Հիվանդության պատմությունը տրվել է հիվանդին առձեռն» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 60):

9. Բժիշկ Ա.Բաղդասարյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Անտոնյանի հետազոտությունն իրականացվել է 2009 թվականի նոյեմբերին, իսկ բուժման կուրսն իրականացվել է 2010 թվականի հունվարի կեսերից: Այդ ընթացքում 15 օրվա կտրվածքով Ա.Անտոնյանն ամեն օր ընդունել է դեղահաբեր, ստացել մկանային ներարկումներ և մերսումներ: Սկանային ներարկումները կատարել է բուժբույր Սոնյա Շահսուվարյանը: Բուժման ավարտից հետո Ա.Անտոնյանի հիվանդության պատմագիրը հանձնվել է վերջինիս (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 80-82):

Հետագայում Ա.Բաղդասարյանը հայտնել է, որ Ա.Անտոնյանն իրենց կլինիկա է դիմել 9-ամյա առաջնային անպտորության գանգատներով, ինչի կապակցությամբ նա բազմիցս բուժվել է Երևանում, Վանաձորում, ինչպես նաև Վրաստանում, հուշաքննության մեջ հիվանդը նշել է, որ 2009 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին բուժվել է «Ընտանիքի պլանավորման և սեռական առողջության կենտրոնում»: Ա.Բաղդասարյանը նշել է նաև, որ 9-ամյա անպտորությամբ տառապող անձի կյանքում չի կարելի բացառել արտամուսնական սեռական կապերը, հետևաբար հեպատիտ «B»-ի ձեռքբերման սեռական ուղին (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 1-5):

10. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի պետի 2011 թվականի փետրվարի 28-ի գրության համաձայն՝ «(...) քրեական գործի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքում ձեռք

բերված տվյալների կապակցությամբ հայտնում են, որ կենդանության օրոք Արման Սամվելի Անտոնյանը (...) որևէ մեկի հետ արտամուսնական կապեր չի ունեցել: Ոստիկանության Վանաձորի բաժնում Ա.Անտոնյանի վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել: Ա.Անտոնյանը մտերիմ ընկերներ չի ունեցել, հիմնականում շփվել է միայն իր ընտանիքի անդամների հետ: Թմրանյութեր օգտագործելու հակումներ չի ունեցել, ոստիկանության Վանաձորի բաժնում որպես թմրամոլ հաշվառման մեջ չի գտնվել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 133):

«Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2011 թվականի մարտի 22-ի գրության համաձայն՝ Ա.Անտոնյանը նարկոլոգիական կլինիկայում հաշվառման մեջ չի գտնվում (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 141):

«Ընտանիքի պլանավորման և սեռական առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 2011 թվականի հունիսի 23-ի գրության համաձայն՝ Ա.Անտոնյանը նշված կլինիկա բուժօգնության չի դիմել և որևէ հետազոտության չի ենթարկվել (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 196):

Այն հանգամանքը, որ Ա.Անտոնյանը չբերության գանգատներով որևէ այլ կլինիկայում բուժում չի ստացել, թմրանյութ չի օգտագործել և արտամուսնական սեռական կապեր չի ունեցել, իրենց ցուցմունքներում պնդել են Ա.Անտոնյանի մայրը, կինը, ինչպես նաև ընկերները և հարևանները (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 84-85, 87-90, հատոր 2-րդ, թերթ 173-184):

Ա.Անտոնյանի կնոջ՝ Գ.Նիկոլյանայի արյան լաբորատոր հետազոտությամբ պարզվել է, որ վերջինս վիրուսային հեպատիտ հիվանդությամբ չի տառապում (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 38):

11. Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ առողջապահության նախարարության փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 128-130): Ա.Անտոնյանը փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը չի ծանոթացել:

Գատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության արդյունքում կազմված եզրակացության համաձայն՝ Ա.Անտոնյանի մահն առաջացել է սուր լյարդային անբավարարությունից՝ կապված վիրուսային հեպատիտ «B»-ի ֆուլմինատիվ ընթացքով (կայծակնային չարորակ ձև)՝ լյարդի օջախային մեռուկների առաջացումով: Վիրուսային հեպատիտ «B»-ի փոխանցման մեխանիզմը պարենտերալ է, վարակումը կարող է տեղի ունենալ արյան միջոցով, ինչպես նաև սեռական ճանապարհով: Ինկուբացիոն (գաղտնի) շրջանը տևում է 1,5-ից 6 ամիս, կայծակնային ընթացքը, լյարդային կոմայի առաջացումով, կարող էր զարգանալ հիվանդության կլինիկական դրսևորման առաջին իսկ օրվանից: Ըստ շտապ օգնության կանչերի թերթիկների տվյալների՝ այն դրսևորվել է մահվանից 4-5 օր առաջ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 240-257):

Նախաքննության մարմինը 2010 թվականի դեկտեմբերի 14-ին վերոգրյալ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության պատճենն ուղարկել է Ա.Անտոնյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 26):

12. Նախաքննության մարմնի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ նշանակվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ ԳԲԳԳԿ փորձագետներին (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 219/1-219/5): Ս.Անտոնյանը կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը նույնպես չի ծանոթացել:

Կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության արդյունքում 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կազմված թիվ 127/ՀՁ եզրակացության համաձայն՝ Ա.Անտոնյանի մահը վրա է հասել սուր լյարդային անբավարարությունից, լյարդային էնցեֆալոպաթիայից, որոնք զարգացել են ֆուլմինանտ (կայծակնային չարորակ ընթացք) վիրուսային հեպատիտ «B»-ի հետևանքով: Փորձագետները նշել են, որ գործնական բժշկության մեջ իրականացվող բժշկական միջոցառումների ժամանակ հիվանդի՝ որևէ վարակիչ հիվանդությամբ, այդ թվում՝ հեպատիտ «B»-ով վարակվելու հնարավորությունը բացառել հնարավոր չէ: Սովորաբար «B» հեպատիտ հիվանդությունը ձեռք է բերվում պարենտերալ (արյան միջոցով) և սեռական ճանապարհով: Տվյալ դեպքում ասել, թե Ա.Անտոնյանն ինչ եղանակով կարող էր ձեռք բերել հիվանդությունը, հնարավոր չէ, հիվանդությամբ վարակումը կարող էր լինել մոտ 1,5-ից մինչև 6 ամիս ընկած ժամանակահատվածում, որը համապատասխանում է հիվանդության գաղտնի շրջանին: Ա.Բաղդասարյանի կողմից իրականացված բուժօգնության ընթացքում ախտորոշման առումով արյան հետազոտություն կատարելը պարտադիր չէր, սակայն մինչև համապատասխան բուժումներ նշանակելը, հատկապես հեպատոտոքսիկ ազդեցություն ունեցող այնպիսի դեղամիջոցի, ինչպիսին հանդիսանում է անտիբիոտիկ ռիֆամպիցինը, նպատակահարմար էր կատարել արյան քննություն հեպատիտ «B»-ի հայտնաբերման առումով, ինչպես նաև լյարդի ֆունկցիոնալ վիճակը պարզելու համար (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 42-47):

Նախաքննության մարմինը 2012 թվականի հունվարի 10-ին վերոգրյալ կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության պատճենն ուղարկել է Ս.Անտոնյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 49):

13. 2011 թվականի փետրվարի 24-ին նախաքննության մարմինը հետևյալ բովանդակությամբ գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն. «(...) քրեական գործի օբյեկտիվությունը և լրիվությունը ապահովելու համար խնդրվում է հանձնարարել համապատասխան աշխատակիցներին ստուգել և հնարավորինս սեղմ ժամկետում հայտնել, թե վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ-ում հեպատիտ «B» կայծակնային տեսակի հիվանդության դեպքեր գրանցվել են, թե ոչ, եթե այո, ապա անհրաժեշտ է հայտնել հիվանդների կենսագրական տվյալները և նրանցից յուրաքանչյուրին բուժօգնություն ցուցաբերած բուժհաստատությունները:

Հնարավորության դեպքում հայտնել նաև այդ հիվանդության հետևանքով մահացածների տվյալները և կրկին վերջիններիս բուժօգնություն ցուցաբերած բուժհաստատությունները: Միաժամանակ խնդրվում է հայտնել Հայաստանի Հանրապետության բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև հիվանդին բուժող

բժիշկը իրավասու է վերջինիս անվամբ լրացված հիվանդության պատմագիրը բուժման կուրսն ավարտելուց հետո հանձնել հիվանդին և չպահպանել այն տվյալ բուժհաստատության արխիվում, եթե այո, ապա որ դեպքերում» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 131):

Քրեական գործի նյութերում բացակայում է նախաքննության մարմնի վերոգրյալ գրության պատասխանը:

14. 2012 թվականի փետրվարի 20-ին նախաքննության մարմինը կրկին նույնաբովանդակ գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 126):

Ի պատասխան վերոգրյալ գրության 2012 թվականի մարտի 12-ին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է. «(...) «Սեքսուալաբոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ն Կ-XX-000837 լիցենզիայով իրականացնում է բժշկական օգնություն և սպասարկում (...) տեսակները: Ընկերության գործունեությունն իրականացվում է հիմնարկի հաստատված կանոնադրության համաձայն:

Միաժամանակ հայտնում են, որ վարչական վիճակագրական հաշվետվությամբ առողջապահության նախարարություն են ներկայացվում վիրուսային հեպատիտ Բ-ի ընդհանուր դեպքերը, իսկ վիրուսային հեպատիտ Բ-ի «կայծակնային» կլինիկական ախտանշաններով դեպքերը հաշվետվական ձևով չեն ներկայացվում:

Ուստի վերոնշյալի վերաբերյալ Ձեզ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տվյալների հավաքագրում: Արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 136):

15. 2012 թվականի փետրվարի 22-ին Ս.Անտոնյանը դիմում է ներկայացրել քրեական գործի նախաքննության մարմնին՝ խնդրելով որդու մահվան կապակցությամբ իրականացվող քննության շրջանակներում իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 124):

Նախաքննության մարմինը 2012 թվականի մարտի 5-ին գրություն է ուղարկել Ս.Անտոնյանին, որն ունի հետևյալ բովանդակությունը. «Ի պատասխան Ձեր 22.03.2012թ. դիմումի հայտնվում է, որ (...) Կենտրոնականի քննչական բաժնում քննվող թիվ 13130610 քրեական գործի քննությամբ չի հիմնավորվել հանցագործության դեպքի առկայությունը, այն, որ Ա.Անտոնյանի մահը վրա է հասել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի հետևանքով, որպիսի պայմաններում Գ-ուք չէք կարող ճանաչվել որպես տուժողի իրավահաջորդ, քանի որ միայն հանցագործության հետևանքով մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած անձի մերձավոր ազգականը կարող է ճանաչվել տուժողի իրավահաջորդ» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 134):

16. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի պետը 2012 թվականի մարտի 15-ին գրությամբ հանձնարարել է քննիչ Ա.Պողոսյանին «հանգուցյալ Արման Անտոնյանի մայր Սուսաննա Անտոնյանին թիվ 13130610 քրեական գործով ճանաչել տուժողի իրավահաջորդ և վերջինիս պարզաբանել ՀՀ քր. դատ.

օր.-ի 59 հոդվածով սահմանված իրավունքներն ու պարտականությունները» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 137):

Նույն օրը նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ս.Անտոնյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին: Ս.Անտոնյանը նշված որոշմանը ծանոթացել է 2012 թվականի մարտի 22-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 138):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

17. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 41-րդ և 278-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի շրջանակներում արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունից բխում է, որ եթե առողջ մարդը մուտք է գործում բժշկական հաստատություն և հետագայում ձեռք է բերում մահացու հիվանդություն (վարակ), որը նա նախկինում չի ունեցել, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձին մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն:

Ըստ բողոքաբերի՝ Ա.Անտոնյանի առողջական վիճակը «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում բուժում ստանալուց հետո կտրուկ վատացել է, որի արդյունքում վրա է հասել նրա մահը: Մինչդեռ իրականացված նախաքննությամբ չի հերքվել այն վարկածը, որ Ա.Անտոնյանի մահվան պատճառ հանդիսացած հիվանդությամբ վերջինս վարակվել է նշված ընկերությունում բուժում ստանալու արդյունքում: Բացի այդ, նախաքննության մարմնի կողմից որպես վկա չեն հարցաքննվել անձինք, ովքեր կարող էին գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հաղորդել, չեն կատարվել առերեսումներ, ինչպես նաև մի շարք հարցերի պարզաբանման ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել, որպիսի պայմաններում Ա.Անտոնյանի մահվան կապակցությամբ իրականացված քննությունը չի կարող համարվել արդյունավետ:

18. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ նախաքննության մարմինը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածների պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ Ա.Անտոնյանի մահվան կապակցությամբ իրականացված քննությունը հասանելի չի եղել նրա ընտանիքին: Այս կապակցությամբ բողոք բերած անձը նշել է, որ 2011 թվականին դիմում է ներկայացվել դատախազություն՝ խնդրելով Ս.Անտոնյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ: Ներկայացված դիմումը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ

դատախազը 2011 թվականի սեպտեմբերի 19-ին մերժել է: 2012 թվականի փետրվարի 22-ին նույն խնդրանքով դիմում է ներկայացվել նախաքննության մարմնին, որը նույնպես մերժվել է: Արդյունքում Ս.Անտոնյանը չի կարողացել մասնակցել նախաքննության ընթացքին, ներկայացնել միջնորդություններ, մասնակցել փորձաքննությանը, փորձագետներին ուղղել հարցեր: Ս.Անտոնյանին տուժողի իրավահաջորդ են ճանաչել քրեական գործի վարույթը կարճելուց մի քանի օր առաջ:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողին (տուժողի իրավահաջորդին) քրեական գործով վարույթին մասնակից դարձնելու, ինչպես նաև կասկած հարուցող մահվան հանգամանքների վերաբերյալ պաշտոնապես արդյունավետ քննություն իրականացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունների առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Գործի քննության հասանելիությունը տուժողի ընտանիքին

21. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննությունը հասանելի՞ է եղել արդյոք վերջինիս ընտանիքին:

22. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության

պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս (...):

2. Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքները և պարտականությունները:

2. Տուժողի մերձավոր ազգականին նրա իրավահաջորդ ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը՝ նրա խնդրանքով (...):

4. Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները (...):»:

Հանցագործության արդյունքում տուժած անձի խախտված իրավունքների վերականգնումը որպես պետության պոզիտիվ պարտավորություն սահմանող վերոշարադրյալ դրույթների հիմքում ընկած են միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերում ամրագրված պահանջներ:

23. Սույն որոշման նախորդ կետում նշված միջազգային-իրավական փաստաթղթերի թվին է դասվում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականը, որի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Նախարարների կոմիտեն Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտականությունը սահմանված է նաև «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» Միացյալ ազգերի կազմակերպության N 40/34 բանաձևում, որի 4-րդ կետի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությունը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Բանաձևի 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

ա) դատական քննության ընթացքում տուժողների դերի, դատավարության իրականացման կարգի, ժամկետների և արդյունքների մասին տուժողներին տեղեկատվություն տրամադրելու միջոցով,

բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերում է տուժողին,

գ) ամբողջ դատավարության ընթացքում տուժողին անհրաժեշտ օգնություն տրամադրելու եղանակով (...),

(...)

ե) գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու և փոխհատուցման մասին կայացված որոշումները կատարելու միջոցով:

Հանցագործություններից տուժածների իրավունքների վերականգնման հիմնախնդրին է վերաբերում նաև «Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» եվրոպական կոնվենցիան:

24. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է տուժողի իրավունքների պաշտպանությունն ապահովելու պետության պարտականությանը: Մասնավորապես, *Յանկովիցն ընդդեմ Խորվաթիայի* գործով վճռի համաձայն՝ անձնական կյանքի գաղափարը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո պետությունները կրում են անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է հաստատեն ու գործնականում կիրառեն մասնավոր անձանց ոտնձգություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական կառուցակարգ:

Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը: Այդուհանդերձ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ, *inter alia*, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն

թույլ տված անձի քրեական հետապնդում (տե՛ս Jankovic v. Croatia գործով 2009 թվականի մարտի 5-ի վճիռը, գանգատ թիվ 38478/05, կետեր 25, 45, 57):

25. Հիմք ընդունելով սույն որոշման 22-24-րդ կետերում շարադրված իրավադրույթները և մոտեցումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը:

«Տուժող» հասկացությունը, որպես իրավաբանական կատեգորիա, բնութագրվում է ինչպես իրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներով: Որպես իրավական հասկացություն՝ այն արտացոլում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին անմիջականորեն հանցագործությամբ վնաս պատճառելու օբյեկտիվ փաստը: Դատավարական իմաստով այն սահմանում է, թե ինչպիսի պայմաններում և կարգով է հանցագործությունից վնաս կրած անձը դառնում քրեական դատավարության մասնակից՝ ձեռք բերելով որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ: Քրեադատավարական օրենքը նախատեսում է նաև տուժողի իրավահաջորդի ինստիտուտը, որը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքների և շահերի ներկայացման ինքնուրույն ձև է: Իրավահաջորդության առաջացման համար անհրաժեշտ է, որ տուժողի մերձավոր ազգականներից մեկը ցանկություն հայտնի ներկայացնել նրա իրավունքները և պարտականությունները:

26. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է նրան հասցված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, հանցանք կատարած անձի դատապարտումը և նրա նկատմամբ արդարացի պատժի նշանակումը: Հետևաբար, քրեական դատավարության ընթացքին տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից, նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Տուժող ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը նշված դատավարական ակտի կայացման համար անհրաժեշտ նախապայման է համարում հանցագործության արդյունքում անձին բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառված լինելու կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության

հաստատումը, ինչը, սակայն, չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ լինի հանցակազմի բոլոր տարրերի հաստատում կամ վնաս պատճառելու վերաբերյալ սպառիչ տվյալների հավաքագրում:

27. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին: Նշված հոդվածի իմաստով՝ քրեական գործ հարուցելու հիմքեր են հանդիսանում այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին: Այլ խոսքով՝ եթե իրավասու պաշտոնատար անձը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու մասին, ապա նա ձեռք բերված տվյալները բավարար է համարում հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայությունը հաստատված համարելու համար: Իսկ եթե քրեական գործ հարուցելու փուլում հայտնի է դառնում ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վերջինիս ճանաչել որպես տուժող և ներգրավել գործի քննությանը: Համանման կերպով, քրեական գործ հարուցելու փուլում վարույթն իրականացնող մարմինը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի մերձավոր ազգականներից մեկին պետք է ճանաչի տուժողի իրավահաջորդ, եթե նա այդպիսի ցանկություն է հայտնել:

Վճարելի դատարանի վերոգրյալ դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի իմպերատիվ պահանջից առ այն, որ «Եթե [քրեական գործ հարուցելու] պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը, քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ այդ անձը ճանաչվում է տուժող (...):»: Վճարելի դատարանը գտնում է, որ տուժող ճանաչելու քրեադատավարական կառուցակարգի միայն այդպիսի մեկնաբանության և կիրառության դեպքում է հնարավոր տուժողի (տուժողի իրավահաջորդի) համար ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից փաստացի օգտվելու հնարավորությունը և հասնել հանցագործության արդյունքում վնաս կրած անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու՝ քրեական դատավարության խնդրի արդյունավետ իրականացմանը:

28. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ 2010 թվականի հունիսի 23-ին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, այն է՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Բողոքաբերի պնդմամբ դեռևս 2011 թվականին դիմում է ներկայացվել քրեական գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ խնդրելով իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ, ինչը սակայն 2011 թվականի սեպտեմբերի 19-ին մերժվել է (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

Քրեական գործի նյութերից երևում է, որ Ս.Անտոնյանը 2012 թվականի փետրվարի 22-ին կրկին դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ խնդրելով որոշ մահվան կապակցությամբ իրականացվող նախաքննության շրջանակներում իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ:

Գործը վարող քննիչը 2012 թվականի մարտի 5-ին գրությամբ մերժել է ներկայացված դիմումը՝ պատճառաբանելով, որ քրեական գործի քննությամբ չի հիմնավորվել հանցագործության դեպքի առկայությունը, այն, որ Ս.Անտոնյանի մահը վրա է հասել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի հետևանքով, ուստի Ս.Անտոնյանը չի կարող ճանաչվել տուժողի իրավահաջորդ (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

2012 թվականի մարտի 15-ին քննչական բաժնի պետի գրավոր հանձնարարությունից հետո միայն նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ս.Անտոնյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին: Ս.Անտոնյանը նշված որոշմանը ծանոթացել է 2012 թվականի մարտի 22-ին (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

2012 թվականի մարտի 30-ին քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

29. Սույն որոշման 25-27-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում Ս.Անտոնյանին վերջինիս խնդրանքով չճանաչելով տուժողի իրավահաջորդ՝ նախաքննության մարմնին անհամաչափորեն սահմանափակել է նրա իրավունքներն ու օրինական շահերը, Ս.Անտոնյանը գրկված է եղել քրեադատավարական օրենքով իրեն վերապահված իրավունքներից օգտվելու փաստացի հնարավորությունից:

Ինչ վերաբերում է 2012 թվականի մարտի 15-ին Ս.Անտոնյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին նախաքննության մարմնի որոշմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն ըստ էության ձևական բնույթ է կրել, քանի որ Ս.Անտոնյանը նշված որոշմանը ծանոթացել է 2012 թվականի մարտի 22-ին, երբ գործի քննությունը փաստացի ավարտված է եղել, և մի քանի օր անց՝ 2012 թվականի մարտի 30-ին, քրեական գործի վարույթը կարճվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Անտոնյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննությունը հասանելի չի եղել վերջինիս ընտանիքին:

II. Ս.Անտոնյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննության արդյունավետությունը

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. Ս.Անտոնյանի մահվան փաստի առթիվ իրականացվել է արդյոք արդյունավետ քրեադատավարական քննություն:

31. ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

(...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ այն դեպքում, երբ անհրաժեշտ է եղել հավաստել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և արդյունավետ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի տարբեր հոդվածների համատեքստերում սահմանվել են դատավարական պարտականություններ (տե՛ս *B. v. the United Kingdom* գործով 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9840/82, կետ 63, *M.C. v. Bulgaria* գործով 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, կետեր 148-153 և *Cyprus v. Turkey* գործով 2001 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 25781/94, կետ 147):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը (տե՛ս *McCann and Others v. The United Kingdom* գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, կետեր 157-164, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82 և *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետեր 101-106):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն (ի թիվս այլոց, տե՛ս *Osman v. the United Kingdom* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083 կետ 115):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի պատշապանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է բոլոր դեպքերում՝ սպանության կամ կասկած հարուցող մահվան դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե պետական մարմիններ կամ անհայտ անձինք (տե՛ս *Nachova and Others v. Bulgaria* գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110):

Քննությունն արդյունավետ կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն հասանելի, խելամիտ քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիախերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը (տե՛ս *Tanrikulu v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և *Gül v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89): Քննության եզրակացությունը պետք է հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա: Քննության ընթացքում կիրառման ենթակա միջոցները բացարձակ իրավունք չեն սահմանում մեղադրելու կամ դատապարտելու համար և քննության ընթացքում ցանկացած խախտում կամ հանցանք կատարած անձին չհայտնաբերելը դիտվում է որպես արդյունավետության պահանջի խախտում (տե՛ս *Esat Bayram v. Turkey* գործով 2009 թվականի մայիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 75535/01, կետ 47 և *Ramsahai and Others v. the Netherlands* գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, կետ 321):

Քննությունն արդյունավետ համարելու համար այն իրականացնող պատասխանատու մարմիններն օրենքով և գործնականում պետք է անկողմնակալ և անկախ լինեն: Սա նշանակում է, որ ոչ միայն ենթակարգային կապի, այլ պրակտիկ գործունեության մեջ այս մարմինները պետք է անկախ լինեն (տե՛ս *Ramsahai and Others* գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, կետեր 325, 333-346, *Scavuzzo-Hager and Others v. Switzerland* գործով 2006 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 41773/98, կետեր 78, 80-86): Անհրաժեշտ է նաև հասարակության անդամներին ինչպես քննության, այնպես էլ դրա արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններով ապահովել, հասարակության անդամների մոտ վստահություն առաջացնել օրենքի գերակայության նկատմամբ, ինչպես նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը: Բոլոր դեպքերում, տուժողները պետք է ներառվեն քննության մեջ՝ վերջիններիս օրինական շահերն ապահովելու նպատակով (տե՛ս *Güleç v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82):

32. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Անտոնյանը 2009 թվականի նոյեմբեր ամսին չբերության գանգատներով դիմել է «Սեքսուալաթլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բժիշկ-սեքսուալաթլոգ Ա.Բադդասարյանին և անցել է համապատասխան հետազոտություններ: 2010 թվականի հունվարի կեսերից Ա.Անտոնյանը բժիշկ Ա.Բադդասարյանի մոտ բուժման կուրս է անցել, որից հետո՝ 2010 թվականի մարտ ամսվա վերջերին, Ա.Անտոնյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, և նա տեղափոխվել է Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիր, ապա

ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ նրա մոտ ախտորոշվել է «B» հեպատիտ վիրուս դրական: 2010 թվականի ապրիլի 1-ին Ա.Անտոնյանն անգիտակից, կոմային վիճակում տեղափոխվել է Երևան քաղաքի «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ, գիտակցության չգալով, 2010 թվականի ապրիլի 5-ին մահացել է:

Դեպքի առթիվ հարուցված քրեական գործով նախաքննություն, ինչպես նաև դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին Ա.Անտոնյանի մայրը՝ Ս.Անտոնյանը, բազմիցս պնդել է, որ մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունը որդին ձեռք է բերել բժիշկ Ա.Բաղդասարյանի մոտ հետազոտվելու և բուժում ստանալու ընթացքում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Տուժողի իրավահաջորդի այս հայտարարություններն ակնհայտ անհիմն չեն և ենթադրում են, որ Ա.Անտոնյանի մահվան կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությունը գնահատելու համար նախևառաջ պետք է պարզել, թե մինչդատական վարույթն իրականացնող մարմինը գործով հավաքված փաստական տվյալների ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության հիման վրա հերքե՞լ է արդյոք բողոքաբերի վերոնշյալ պնդումը:

33. Սույն գործով իրականացված քննչական գործողությունների և դրանց արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) վարույթն իրականացնող մարմինն անմիջապես չի կատարել անհրաժեշտ անհետաձգելի քննչական գործողություններ, մասնավորապես միջոցներ չի ձեռնարկել «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ից Ա.Անտոնյանի վերաբերյալ փաստաթղթերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ պարագաները (հիվանդության պատմագրերը, իրականացված հետազոտությունների արդյունքները, բժշկական միջամտության առարկաները և այլն) առգրավելու ուղղությամբ: Դրա փոխարեն նախաքննության մարմինը գրությամբ դիմել է «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի ղեկավարությանը՝ խնդրելով քննությանը տրամադրել Ա.Անտոնյանի վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերը, որին ի պատասխան ընկերության ղեկավարությունը հայտնել է, որ հիվանդության պատմագիրը տրվել է հիվանդին առձեռն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Գործի հետագա քննության ընթացքում Ա.Անտոնյանի հիվանդության պատմագիրն այդպես էլ չի հայտնաբերվել:

բ) Մինչդատական վարույթն իրականացնող մարմինը չի պարզել «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի հետ նույն ժամանակահատվածում բուժում ստացած անձանց շրջանակը և նրանց ախտորոշումները:

գ) Տվյալներ ունենալով առ այն, որ բժիշկ Ա.Բաղդասարյանի կողմից նշանակված բուժման գործընթացն անմիջականորեն իրականացրել է բուժքույր Ս.Շահսուվարյանը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ նախաքննության մարմինը երբևէ չի հարցաքննել նրան:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ՝ (ա), (բ), (գ) ենթակետերում նշված գործողությունների կատարման պարագայում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կստանար պարզելու, թե մահվան պատճառ հանդիսացած

հիվանդությունը Ա.Անտոնյանը ձեռք է բերել մինչև «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելը և բուժում ստանալը, թե այդ ընթացքում:

34. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատկան մարմինները, չպահպանելով քրեադատավարական օրենքի պահանջները, շահագրգիռ երրորդ կողմին՝ Ս.Անտոնյանին, մասնակից չեն դարձրել որդու մահվան պատճառները բացահայտելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննություններին: Նախաքննության մարմինը վերջինիս է ներկայացրել արդեն հաստատված փաստերը, ex post facto մահվան պատճառը բացահայտող փորձաքննությունների արդյունքները (տե՛ս սույն որոշման 11-12-րդ կետերը): Այն, որ բողոքաբերը որպես շահագրգիռ երրորդ կողմ չի մասնակցել գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ քննչական գործողություններին, խոչընդոտել է վերջինիս իրավունքների իրացմանը և սահմանափակել քննությանը նրա մասնակցության հնարավորությունը՝ դրանով կասկածի տակ դնելով կատարված քննչական գործողությունների արդյունքները:

Այդուհանդերձ, սույն գործով ստացված երկու դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններն էլ չեն բացառում բողոքաբերի այն պնդումը, թե իրորդին հեպատիտ «B» հիվանդությամբ վարակվել է «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելու և բուժում ստանալու ընթացքում: Նշված եզրակացությունների համաձայն՝ Ա.Անտոնյանի մահը վրա է հասել սուր լյարդային անբավարարությունից, լյարդային էնցեֆալոպաթիայից, որոնք զարգացել են ֆուլմինանտ (կայծակնային չարորակ ընթացք) վիրուսային հեպատիտ «B»-ի հետևանքով: Հեպատիտ «B» հիվանդությունը ձեռք է բերվում պարենտերալ (արյան միջոցով) և սեռական ճանապարհով:

Փորձագետները, չբացառելով բժշկական միջոցառումների ժամանակ հիվանդի՝ որևէ վարակիչ հիվանդությամբ, այդ թվում՝ հեպատիտ «B»-ով վարակվելու հնարավորությունը, շեշտել են, որ տվյալ հիվանդությամբ Ա.Անտոնյանի վարակումը կարող էր լինել հիվանդության առաջին նշաններն ի հայտ գալուց մոտ 1,5-ից մինչև 6 ամիս առաջ ընկած ժամանակահատվածում, ինչը ժամանակային առումով նույնպես համընկնում է «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի կողմից հետազոտվելու, իսկ այնուհետև նաև բուժում ստանալու ժամանակահատվածին: Փորձագետները շեշտել են նաև, որ թեև Ա.Բաղդասարյանի կողմից իրականացված բուժօգնության ընթացքում ախտորոշման առումով արյան հետազոտություն կատարելը հեպատիտ «B»-ի հայտնաբերման համար պարտադիր չէր, սակայն մինչ համապատասխան բուժումներ նշանակելը, հատկապես հեպատոտոքսիկ ազդեցություն ունեցող այնպիսի դեղամիջոցների, ինչպիսին հանդիսանում է անտիբիոտիկ ռիֆամպիցինը, նպատակահարմար էր կատարել արյան քննություն հեպատիտ «B»-ի հայտնաբերման, ինչպես նաև լյարդի ֆունկցիոնալ վիճակը պարզելու առումով (տե՛ս սույն որոշման 11-12-րդ կետերը):

35. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ բժիշկ Ա.Բաղդասարյանը քննությանը հայտնել է, որ Ա.Անտոնյանը մինչև իրեն դիմելը բազմաթիվ անգամներ

չբերության դեմ բուժում է ստացել այլ բժշկական հաստատություններում: Ա.Բաղդասարյանը չի բացառել նաև, որ Ա.Անտոնյանն ունեցել է արտամուսնական կապեր (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Մինչդեռ տուժողի մայրը և կինն իրենց ցուցմունքներում հերքել են Ա.Անտոնյանի կողմից այլ բժշկական հաստատություններում բուժում ստանալու հանգամանքը: Ա.Անտոնյանի կինը՝ Գ.Նիկոլյան, իր ցուցմունքներում նշել է նաև, որ քանի որ իրենք երեխա չեն ունեցել և բուժում ստանալիս են եղել, բժիշկներն իրենց խորհուրդ են տվել ընդհանրապես զերծ մնալ սեռական հարաբերություններից, մինչև վերջնական բուժումը: Վիրուսային հեպատիտ հիվանդություն հայտնաբերելու նպատակով իրականացված՝ Գ.Նիկոլյանայի արյան լաբորատոր հետազոտությունը բացասական արդյունք է տվել (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Նախաքննության մարմինը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել պարզելու, թե արդյոք Ա.Անտոնյանն ունեցել է արտամուսնական կապեր, օգտագործել է թմրանյութ կամ որևէ այլ բժշկական հաստատությունում բժշկական օգնություն ստացել է (այդ թվում՝ չբերության զանգատներով), թե ոչ: Իրականացված բոլոր միջոցառումների արդյունքները եղել են բացասական, քննությամբ ձեռք չի բերվել որևէ փաստական տվյալ, ինչը հիմք կտար կարծելու, որ Ա.Անտոնյանը հեպատիտ «B» հիվանդությունը ձեռք է բերել սեռական ճանապարհով, թմրանյութ օգտագործելու արդյունքում կամ այլ հաստատությունում բժշկական օգնություն ստանալիս (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

36. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ նախաքննության մարմինը դեռևս 2011 թվականի փետրվարի 24-ին գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն՝ խնդրելով տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ-ում հեպատիտ «B» կայծակնային տեսակի հիվանդության դեպքեր գրանցվել են, թե ոչ և եթե այո, ապա հայտնել հիվանդների կենսագրական տվյալները և նրանց բուժօգնություն ցուցաբերած հաստատությունների ցանկը: Միաժամանակ խնդրվել է հայտնել ՀՀ բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև պարզաբանել, թե բուժող բժիշկն իրավասու է արդյոք հիվանդի անվամբ լրացված հիվանդության պատմագիրը բուժման կուրսն ավարտելուց հետո հանձնել վերջինիս և չպահպանել այն տվյալ հաստատության արխիվում (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նշված գրությունը մնացել է անպատասխան: Մեկ տարի անց՝ 2012 թվականի փետրվարի 20-ին, նախաքննության մարմինը կրկին նույնաբովանդակ գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն, որին ի պատասխան 2012 թվականի մարտի 14-ին ստացվել է գրություն այն մասին, որ «Սեքսուալաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի գործունեությունն իրականացվում է իր կանոնադրության համաձայն: Բացի այդ, տեղեկացվել է, որ վարչական վիճակագրական հաշվետվությամբ առողջապահության նախարարություն են ներկայացվում վիրուսային հեպատիտ «B»-ի ընդհանուր դեպքերը, իսկ վիրուսային հեպատիտ «B»-ի կայծակնային կլինիկական

ախտանիշներով դեպքերը հաշվետվական ձևով չեն ներկայացվում, ուստի վերոնշյալի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տվյալների հավաքագրում, իսկ արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Դրանից հետո նախաքննության մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել գործի օբյեկտիվ քննության ապահովման համար հանգուցային նշանակություն ունեցող վերոնշյալ երկու հարցերի պարզաբանման ուղղությամբ, մասնավորապես, չի փորձել սպառիչ պատասխան ստանալ այն հարցին, թե ի վերջո ՀՀ բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև չի պահանջել և ստացել գրանցված վիրուսային հեպատիտ «B»-ի ընդհանուր կամ կայծակնային կլինիկական ախտանիշներով դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը: ՀՀ առողջապահության նախարարության հիշատակված գրությունը ստանալուց մի քանի օր անց՝ 2012 թվականի մարտի 30-ին, քրեական գործի վարույթը կարճվել է:

37. Տուժողի ընտանիքի անդամների պնդմամբ 2010 թվականի մարտի 27-ին, երբ Ա.Անտոնյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, բարձրացել է ջերմությունը և նա չի կարողացել շարժվել, իրենք ահազանգել են Վանաձոր քաղաքի շտապ օգնության անձնակազմին, որոնք ժամանելով՝ ստուգել և հայտնել են, որ կարիք չկա անհանգստանալու, և Ա.Անտոնյանի մոտ ուղղակի գրիպային վիճակ է: 2010 թվականի մարտի 30-ին Ա.Անտոնյանի վիճակն ավելի է վատացել, կրկին շտապ օգնության կանչ են գրանցել և ժամանած անձնակազմը նորից պնդել է, որ նրա մոտ գրիպային վիճակ է: 2010 թվականի մարտի 31-ին, տեսնելով, որ Ա.Անտոնյանի վիճակը գնալով վատանում է, շտապ օգնության ավտոմեքենայով նրան տեղափոխել են հիվանդանոց:

«Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի շտապ օգնության բաժանմունքից քննությամբ առգրավված կանչի թերթիկները նույնպես վկայում են, որ շտապ օգնության բրիգադը մի քանի անգամ այցելել է վատառողջ Ա.Անտոնյանին, նրա մոտ ախտորոշել ստենոկարդիայի նոպա և համապատասխան օգնություն ցուցաբերել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը որևէ իրավական գնահատական չի տվել Ա.Անտոնյանին առաջին բուժօգնություն ցուցաբերած շտապ օգնության աշխատակիցների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերած թերացումներին:

38. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ լրացուցիչ նախաքննության արդյունքում կայացված՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը չի հստակեցրել այն անձանց շրջանակը, ում արարքում հանցակազմի բացակայության պատճառով քրեական հետապնդում չի իրականացվում: Մասնավորապես, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ առկա՝ ««Մեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության, Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիրի, Վանաձոր քաղաքի ինֆեկցիոն հիվանդանոցի, Երևան քաղաքի «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի բուժանձնակազմերի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել» ձևակերպումից (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը) երևում է, որ վարույթն իրականացնող մարմինը, խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ անձնական պատասխանատվության սկզբունքը, լուծել է վերոնշյալ չորս հաստատությունների ամբողջ բուժանձնակազմերի քրեական պատասխանատվության հարցը:

39. Սույն որոշման 32-38-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 31-րդ կետում մեջբերված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ արդյունավետ քրեադատավարական քննություն չի իրականացվել:

40. Հիմք ընդունելով սույն որոշման 21-39-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարանները սույն որոշման 29-րդ և 39-րդ կետերում շարադրված՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված խախտումների լույսի ներքո չեն գնահատել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ավագ քննիչ Ա.Պողոսյանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 27-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0125/11/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

ընդհանուր դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գանիելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի մայիսի 5-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում՝ «Ունիվերսամ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրինության կողմից օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների մեջակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերի հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 83101310 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2010 թվականի հուլիսի 27-ին Հմայակ Արսենյանը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է:

2. 2012 թվականի հունիսի 25-ին մեղադրյալ Հ.Արսենյանի պաշտպան

Ն.Բաղդասարյանը միջնորդություն է ներկայացրել նախաքննության մարմնին՝ խնդրելով վերսկսել գործի կասեցված վարույթը և նշանակել կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ պաշտպան Ն.Բաղդասարյանի միջնորդությունը մերժվել է:

Վերոգրյալ որոշման դեմ պաշտպան Ն.Բաղդասարյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Կ.Կարապետյանի 2012 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ մերժվել է:

3. 2012 թվականի օգոստոսի 8-ին պաշտպան Ն.Բաղդասարյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերականգնել մեղադրյալ Հ.Արսենյանի խախտված իրավունքները:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ պաշտպանի բողոքը բավարարվել է: Վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել թույլ տրված օրինախախտումը և վերականգնել մեղադրյալ Հ.Արսենյանի խախտված իրավունքներն ու օրինական շահերը:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 10-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գանիելյանը:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Նույն որոշմամբ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանվել է 5-օրյա ժամկետ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գանիելյանը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Առաջին ատյանի դատարանն իր որոշման պատճառաբանական մասում նշել է «(...) Հարկային մարմինը հարկվող օբյեկտը և հարկային պարտավորությունը անուղղակի եղանակով հաշվարկել կարող էր միայն, եթե ընկերությունը կատարած լիներ հետևյալ խախտումներից որևէ մեկը. չի ներկայացրել հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման կամ հարկային հաշվառման սահմանված փաստաթղթերը, հաշվառումը վարել է սահմանված կարգի կոպիտ

խախտումներով, ակնհայտ կեղծ տվյալներ է մտցրել հարկային տեսչություններ կայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում: Ընդ որում, այդ խախտումները պետք է հանգեցրած լինեն հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունը հաշվարկելու անհնարինության:

Տվյալ դեպքում նշված խախտումներից ոչ մեկն ակտով հիմնավորված և ապացուցված չէ, ակտից հայտնի չէ, թե նշվածներից որ խախտումն է առկա ընկերությունում, ինչ ապացույցներով է հաստատվում այդ ենթադրյալ խախտումը:

Ակնհայտ է, որ փորձագետը նույնպես կարևորել է այն փաստական հանգամանքը, թե արդյոք ապրանքը վաճառվել է բարձր գնով, սակայն ձևակերպվել ցածր գնով, թե ընդամենը վաճառվել է շուկայական գնից էժան գնով:

Ուստի դատարանը նույնպես բողոքաբերի ներկայացուցչի այն համոզմանն է, որ ՀՀ վարչական դատարանի վճիռը, 19.01.2009թ. կազմված թիվ 2305186 ակտը և հաշիվ-ապրանքագրերը կարևոր և ելակետային նշանակություն կարող էին ունենալ փորձաքննության համար, որոնք սակայն չեն ներկայացվել փորձագետին և վերջինիս կողմից չեն հետազոտվել, դրանցում առկա փաստական հանգամանքները կարող են էապես ազդել փորձաքննության արդյունքների վրա, ինչը հնարավոր է իրականացնել միայն լրացուցիչ կամ կրկնակի դատահաշվապահական փորձաքննության արդյունքում, ուստի դատարանը գտնում է, որ պետք է սահմանել պարտականություն՝ վարույթն իրականացնող մարմնին վերացնելու թույլ տրված օրինախախտումը և վերականգնել մեղադրյալ Հմայակ Արսենյանի խոխտված իրավունքներն ու օրինական շահերը (...)» (տե՛ս նյութեր, թերթ 60-72):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը ձեռք բերված և հետազոտված նյութերի օբյեկտիվ գնահատման արդյունքում կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում և իրավացիորեն բավարարել է Հմայակ Արսենյանի պաշտպան Նիկոլայ Բաղդասարյանի բողոքը՝ սահմանելով պարտականություն վարույթն իրականացնող մարմնին՝ վերացնելու թույլ տրված օրինախախտումը և վերականգնելու մեղադրյալ Հմայակ Արսենյանի խախտված իրավունքներն ու օրինական շահերը, հետևաբար վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, թերթ 112-119):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, խախտվել են ՀՀ Սահմանադրության 5-րդ, 18-րդ, 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 7-րդ, 17-րդ, 25-րդ, 41-րդ, 103-րդ, 199-րդ, 247-րդ, 260-րդ, 278-րդ, 290-րդ, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածները:

Բողոքաբերը, հիշատակելով Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, եզրահանգել է, որ կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ստորադաս դատարաններում իրականացված դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը չի ներկայացրել որևէ լրացուցիչ հաշվապահական կամ այլ բնույթի փաստաթուղթ, որով կհիմնավորվեր կրկնակի փորձաքննություն կատարելու անհրաժեշտությունը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը և մեղադրյալ Հ.Արսենյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի բողոքը մերժել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանները, իրականացնելով կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում, դուրս չե՞ն եկել արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից:

11. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և

գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ն. Միսակյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (...):

(...) մինչդատական վարույթի ընթացքում քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, որոնք կարող են խախտել դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները կամ խոչընդոտել արդարադատության մատչելիությանը, կարող են բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան» (տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԳ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

12. Անդրադառնալով դատական վերահսկողության սահմաններին՝ Վճռաբեկ դատարանը *Վ. Գրիգորյանի* գործով որոշման մեջ փաստել է, որ «(...) եթե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ

որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, այսպիսով Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման» (տե՛ս Վալերի Գ-րիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԳ/0031/11/08 որոշման 12-րդ կետը):

Չարգացնելով Վ.Գրիգորյանի գործով որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Վ.Մանուկյանի գործով որոշման մեջ նշել է՝ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից գատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման» (տե՛ս Վարուժան Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ին կայացված թիվ ԵԿԳ/0060/11/10 որոշման 16-րդ կետը):

13. Սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված նախադեպային իրավունքի լուսի ներքո գնահատելով կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված այն որոշումների թվում, որոնց համար օրենսդիրը նախատեսել է դատական բողոքարկման հնարավորություն: Բացի այդ, կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու հարցի քննությունը դատավարության ավելի ուշ փուլերում, այդ թվում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է, և այն չի հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող ապացուցողական գործունեությանը (ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը) դատարանի միջամտությունը ոչ միայն չի բխում մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության խնդիրներից, այլև նման միջամտության անթույլատրելիությունն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար (նշված սկզբունքների մասին *mutatis mutandis* տե՛ս Արմեն

Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, պաշտպանի բողոքի հիման վրա իրականացնելով կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու միջնորդությունը մերժելու մասին նախաքննության մարմնի որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում, եզրահանգել է, որ դրանով խախտվել են մեղադրյալ Հ.Արսենյանի իրավունքներն ու օրինական շահերը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել նշված խախտումները (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը ձեռք բերված և հետազոտված նյութերի օբյեկտիվ գնահատման արդյունքում կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում, մերժել է դատախազի բողոքը՝ նշված դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 7-րդ կետերը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 13-րդ կետում ձևավորված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, իրականացնելով կրկնակի դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում, դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 5-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածներով սահմանված օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոնշյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և մեղադրյալ Հ.Արսենյանի պաշտպանի բողոքի հիման վրա հարուցված դատական վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝
Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումները բեկանել, մեղադրյալ Հմայակ Բաբկենի Արսենյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի բողոքի հիման վրա հարուցված դատական վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

11.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԳ/0020/11/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ՋԱՂԻՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

ղոմբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Սարիբեկ Վարազդատի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Սամվել Ջաղինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի ապրիլի 19-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14110012 քրեական գործը:

2012 թվականի ապրիլի 27-ին Սարիբեկ Հարությունյանը ձերբակալվել է:

2012 թվականի ապրիլի 28-ին Ս.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2. 2012 թվականի մայիսի 2-ին մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Ջաղինյանը վարույթն իրականացնող մարմնին միջնորդություն է հարուցել՝

խնդրելով անթույլատրելի ապացույց ճանաչել վկաներ Ջավեն Մելքոնյանի և Սարիբեկ Հարությունյանի միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կատարված առերես հարցաքննության արձանագրությունը:

ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Ա.Վարդանյանի 2012 թվականի մայիսի 10-ի որոշմամբ հիշյալ միջնորդությունը մերժվել է:

3. Մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Ջաղինյանը քննիչ Ա.Վարդանյանի 2012 թվականի մայիսի 10-ի որոշման դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազին՝ խնդրելով վերացնել որոշումը և անթույլատրելի ապացույց ճանաչել վկաներ Ջավեն Մելքոնյանի և Սարիբեկ Հարությունյանի միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կատարված առերես հարցաքննության արձանագրությունը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ռ.Խաչատրյանի 2012 թվականի մայիսի 17-ի որոշմամբ պաշտպան Ս.Ջաղինյանի բողոքը մերժվել է:

4. Պաշտպան Ս.Ջաղինյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ռ.Խաչատրյանի 2012 թվականի մայիսի 17-ի որոշումը և անթույլատրելի ապացույց ճանաչել վկաներ Ջավեն Մելքոնյանի և Սարիբեկ Հարությունյանի միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կատարված առերես հարցաքննության արձանագրությունը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ պաշտպան Ս.Ջաղինյանի բողոքը մերժվել է:

5. Պաշտպան Ս.Ջաղինյանն Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 27-ի որոշման դեմ բերել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

2012 թվականի օգոստոսի 21-ի դատական նիստում Վերաքննիչ դատարանը, տեղում խորհրդակցելով, որոշել է մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Ջաղինյանին հեռացնել վարույթից և դատական նիստը շարունակել վերջինիս բացակայության պայմաններում:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ Ս.Ջաղինյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ Ս.Ջաղինյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 17-ի դատական նիստի՝ պարզ թղթային եղանակով կատարված արձանագրությունից երևում է, որ դատավոր Մ.Պետրոսյանի հարցին վերաքննիչ բողոք բերած անձ, պաշտպան Ս.Ջաղինյանը պատասխանել է, որ պաշտպանի կարգավիճակը հաստատող փաստաթուղթն առկա է քրեական գործում, իսկ քրեական գործը գտնվում է քննիչի մոտ (տե՛ս նյութեր, թերթ 69):

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 21-ի դատական նիստի՝ ձայնային արձանագրության համաձայն՝ նախագահող դատավոր Մ.Պետրոսյանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-71-րդ հոդվածները, փաստաբան Ս.Ջաղինյանից պահանջում է ներկայացնել փաստաբանի արտոնագիր:

Բողոքաբերը հայտարարում է, որ ինքը Վերաքննիչ դատարանին ներկայացրել է իր անձը հաստատող և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան հանդիսանալը հավաստող վկայականը, և բացի այդ, դատական նիստին ներկա է քննիչը, որի որոշմամբ ինքը ճանաչվել է սույն գործով պաշտպան, և ինչպես նա, այնպես էլ մասնակցող դատախազը դատական նիստում քանիցս հաստատեցին, որ ինքն է հանդիսանում մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպանը, ընդ որում, քննիչը դատական նիստում հայտնեց, որ փաստաբան Ս.Ջաղինյանի՝ սույն գործով պաշտպան լինելու հանգամանքը հաստատող ապացույցը գտնվում է քրեական գործում:

Բողոքաբերը հայտարարում է նաև, որ փաստաբանական գործունեության արտոնագիր ներկայացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պահանջը չի բխում օրենքից, քանի որ Վերաքննիչ դատարանը տվյալ գործով քրեական վարույթ իրականացնող մարմին չի հանդիսանում, այլ այդպիսին հանդիսանում է նախաքննության մարմինը:

Նախագահող դատավորը վերստին պահանջում է փաստաբանական գործունեության արտոնագիրը՝ պատճառաբանելով, որ պահանջվող փաստաթուղթն անհրաժեշտ է՝ պարզելու համար, թե արդյո՞ք փաստաբան Ս.Ջաղինյանը հանդիսանում է տվյալ գործով պաշտպան:

Փաստաբան Ս.Ջաղինյանը պատասխանում է, որ փաստաբանական արտոնագիրը տվյալ գործով պաշտպան լինելու հանգամանքը ոչ հաստատում, ոչ էլ հերքում է, իսկ ինչ վերաբերում է սույն գործով պաշտպան լինելու հանգամանքը հաստատող ապացույցին, ապա այն գտնվում է քրեական գործում, և դա հավաստում են դատական նիստին ներկա քննիչը և դատախազը:

Բողոքաբերը հավելում է, որ պահանջելով փաստաբանական գործունեության արտոնագիր ներկայացնել՝ Վերաքննիչ դատարանն անցնում է իրլիազորությունների սահմանը, քանի որ տվյալ գործով քրեական վարույթ իրականացնող մարմին չի հանդիսանում և նման պահանջ ներկայացնելու իրավունք չունի:

Բողոքաբերը հայտարարում է, որ ինքը չի ներկայացնելու փաստաբանական գործունեության արտոնագիր՝ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պահանջն

ապօրինի լինելու պատճառով:

Նախագահող դատավորն առաջարկում է դատախազին կարծիք հայտնել փաստաբան Ս.Ջաղինյանի հայտարարության վերաբերյալ:

Դատախազ Ռ.Խաչատրյանը հայտարարում է, որ ինքը նախկին դատական նիստում ևս հավաստել է, որ փաստաբան Ս.Ջաղինյանը տվյալ քրեական գործով հանդիսանում է պաշտպան, իսկ տվյալ իրավիճակում արտոնագիր չներկայացնելը որպես դատաքննության շարունակելը բացառող հանգամանք դիտել-չդիտելը՝ դատարանի հայեցողությունն է:

Նախագահող դատավոր Մ.Պետրոսյանը հայտարարում է, որ «(...) նկատի ունենալով այն, որ մեղադրյալ Ս.Հարությունյանի անվամբ բողոք բերած անձ Ս.Ջաղինյանը, որը ներկայացել է որպես վերջինիս շահերի պաշտպան, չներկայացրեց քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցելու և պաշտպանի իրավիճակը հաստատելու մասին համապատասխան փաստաթուղթ, ուստի վերաքննիչ դատարանը, տեղում խորհրդակցելով, որոշեց դատական նիստը շարունակել վերջինիս բացակայության պայմաններում՝ նրան հեռացնելով վարույթից, և ելնելով նրա պաշտպանյալի շահերից՝ քննել վերաքննիչ բողոքը» (տե՛ս նյութեր, թերթ 76):

8. 2012 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գրասենյակ է մուտքագրվել նույն դատարանի դատավոր Մ.Պետրոսյանին հասցեագրված դիմում, որով մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Ջաղինյանը խնդրել է իրեն տրամադրել դատական նիստի արձանագրության կրիչի օրինակը՝ դրա համառոտագրման հետ միասին (տե՛ս նյութեր, թերթ 85):

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մ.Պետրոսյանը հիշյալ դիմումին գրավոր պատասխանել է, որ Ս.Ջաղինյանը թիվ ԵԱԸԴ/0020/11/12 գործին մասնակցող անձ չի հանդիսանում, ուստի դատական նիստի արձանագրության կրիչի օրինակը և համառոտագրումը նրան չեն կարող տրամադրվել (տե՛ս նյութեր, թերթ 88):

Ս.Ջաղինյանը 2012 թվականի հոկտեմբերի 3-ին դիմել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Ջեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահին՝ խնդրելով թույլատրել ծանոթանալ իր բողոքի հիման վրա նախապատրաստված նյութերին, ինչպես նաև տրամադրել դատական նիստերի արձանագրությունների կրիչները: Նույն դիմումի տակ առկա է պաշտպան Ս.Ջաղինյանի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 18-ին կատարված գրառում այն մասին, որ ըստ ներկայացված պահանջի նա վճարել է 2000 ՀՀ դրամ պետական տուրք և ստացել է Վերաքննիչ դատարանի որոշման պատճենը և դատական նիստի արձանագրության կրիչի օրինակը (տե՛ս նյութեր, թերթ 95):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

9. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է միջազգային և ներպետական օրենսդրության դրույթների կոպիտ խախտումներով: Մասնավորապես, խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ զենքերի հավասարության, ինչպես նաև ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ մրցակցության սկզբունքները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով իրեն հեռացրել է վարույթից, իր բողոքի քննությունն իրականացրել է իր բացակայությամբ, ինչպես նաև իրեն չի տրամադրել իր վերաքննիչ բողոքը մերժելու մասին դատական ակտի, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները:

10. Վերաքննիչ դատարանի կողմից իրեն վարույթից հեռացնելն անհիմն լինելու վերաբերյալ իր պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է նրանով, որ փաստաբանական գործունեության արտոնագիրը չի հանդիսանում կոնկրետ գործով պաշտպան լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ, բացի այդ, տվյալ քրեական գործը գտնվում է նախաքննության փուլում, հետևաբար քրեական վարույթն իրականացնող մարմինն է հանդիսանում նախաքննության մարմինը, այլ ոչ թե դատարանը:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ գործի քննության այս փուլում իրեն պաշտպան ճանաչելու լիազորություն Վերաքննիչ դատարանը չի ունեցել, հետևաբար հիմնագուրկ է իր փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը ներկայացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պահանջը, ինչպես նաև այդ պատճենը չներկայացնելու հիմքով իրեն վարույթից հեռացնելու մասին նույն դատարանի որոշումը:

Բողոքաբերը նշել է նաև, որ 2012 թվականի օգոստոսի 31-ին դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով իրեն տրամադրել Վերաքննիչ դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները, սակայն Վերաքննիչ դատարանի գրությամբ իր խնդրանքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ինքը գործին մասնակցող անձ չի հանդիսանում:

11. Անդրադառնալով Վերաքննիչ դատարան ներկայացված բողոքի հիմքերին՝ բողոք բերած անձը նշել է, որ վերաքննիչ բողոքում բարձրացրել է այն հարցը, թե սույն գործով նախաքննության մարմինն իրավասու էր արդյոք առերես հարցաքննել երկու վկաների, որոնց ցուցմունքներում հակասություններ չկան, առավել ևս, եթե վկաներից մեկն ընդհանրապես հրաժարվել էր ցուցմունք տալ: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ առերես հարցաքննության ժամանակ իր պաշտպանյալն ունեցել է վկայի և ոչ թե մեղադրյալի կարգավիճակ, իսկ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ ոչ թե վկան, այլ քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձն իրավունք ունի հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին:

12. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Սույն գործով բողոքաբերն ըստ էության երկու հարց է բարձրացրել, որոնցից առաջինը վերաբերում է իրեն վարույթից հեռացնելու և իր վերաքննիչ բողոքը մերժելու մասին դատական ակտի, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակներն իրեն չտրամադրելուն, երկրորդը՝ նախաքննության մարմնի կողմից կատարված քննչական գործողության՝ առերես հարցաքննության, օրինականությանը և հիմնավորվածությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հարցերից երկրորդին հնարավոր է անդրադառնալ միայն առաջին հարցին պատասխանելուց հետո, ուստի Վճռաբեկ դատարանը քննության է առնում սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցը:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը թո՞ւյլ է տվել արդյոք մրցակցության սկզբունքի խախտում այն պայմաններում, երբ վարույթից հեռացրել է մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Ջադիլյանին, ինչպես նաև հրաժարվել է նրան տրամադրել վերաքննիչ բողոքը մերժելու մասին դատական ակտի, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

(...)

3. Պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) կասկածյալը կամ մեղադրյալը լուծել են նրա հետ ունեցած համաձայնությունը.

2) նա լիազորված չէ մասնակցելու համապատասխան գործով հետագա վարույթին.

3) քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանին ազատել է քրեական գործով վարույթին մասնակցելուց՝ հաշվի առնելով քրեական դատավարությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանքների հայտնաբերումը.

4) քրեական վարույթն իրականացնող մարմինը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում, ընդունել է կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարումը պաշտպանից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝

«Իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու և կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով

իրավասու մարմնի որոշումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելու հարցը լուծում է քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեադատավարական օրենքը սպառնիչ թվարկում է քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը դադարելու հիմքերը, ինչպես նաև հստակ ամրագրում է, որ քրեական գործին պաշտպանի մասնակցությունը կարող է դադարեցվել բացառապես քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածն ամրագրում է, որ պաշտպանն իր իրավավիճակը հաստատելու նպատակով պարտավոր է վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու և կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 21-ի դատական նիստի ժամանակ դատավորը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-71-րդ հոդվածները, փաստաբան Ս.Ջաղինյանից պահանջել է ներկայացնել փաստաբանի արտոնագիր: Ի պատասխան դատարանի պահանջին՝ Ս.Ջաղինյանի հայտնել է, որ Վերաքննիչ դատարանին ներկայացրել է իր անձը և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան հանդիսանալը հաստատող փաստաթղթերը, և բացի այդ, դատական նիստին ներկա է քննիչը, ում որոշմամբ ինքը ճանաչվել է սույն գործով պաշտպան: Վերաքննիչ դատարանում բողոքաբերը հայտարարել է նաև, որ փաստաբանական գործունեության արտոնագիր ներկայացնելու վերաբերյալ դատարանի պահանջը չի բխում օրենքից, քանի որ վերջինս տվյալ գործով քրեական վարույթ իրականացնող մարմին չի հանդիսանում, այլ այդպիսին հանդիսանում է նախաքննության մարմինը: Նախագահող դատավորը վերստին պահանջել է փաստաբանական գործունեության արտոնագիրը՝ պատճառաբանելով, որ պահանջվող փաստաթուղթն անհրաժեշտ է՝ պարզելու համար, թե արդյո՞ք փաստաբան Ս.Ջաղինյանը հանդիսանում է տվյալ գործով պաշտպան: Ս.Ջաղինյանը պատասխանել է, որ չի ներկայացնելու փաստաբանական գործունեության արտոնագիր՝ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պահանջն ապօրինի լինելու պատճառով:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բողոք բերած անձ Ս.Ջաղինյանը չի ներկայացրել վարույթին որպես պաշտպան մասնակցելու և պաշտպանի իրավավիճակը հաստատելու մասին համապատասխան փաստաթուղթ, տեղում խորհրդակցելով որոշել է դատական նիստը շարունակել պաշտպանի բացակայությամբ՝ նրան հեռացնելով վարույթից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված վերլուծության լույսի

ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ս.Հարությունյանի վերաբերյալ գործը նախաքննության փուլում գտնվելու պարագայում վարույթն իրականացնող մարմինն է հանդիսանում ոչ թե դատարանը, այլ նախաքննության մարմինը, հետևաբար, դատարանը, տվյալ դեպքում՝ Վերաքննիչ դատարանը իրավասու չէր լուծել պաշտպանին գործով վարույթից հեռացնելու հարցը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանին վարույթից հեռացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական չէ:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 315-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Գատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի օրինակը՝ դրա համառոտագրման հետ, գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է դատական նիստից անմիջապես հետո»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 315-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Գատական նիստի պարզ թղթային եղանակով արձանագրման դեպքում գրավոր արձանագրության պատճենը գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում ուղարկվում է դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին և օրինական ներկայացուցիչներին, մեղադրողին, տուժողին և նրա ներկայացուցչին, (...)»:

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձանց համապատասխան գրավոր դիմումի առկայության պարագայում նրանց տրամադրել դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները, իսկ դատական ակտի հրապարակումից հետո եռօրյա ժամկետում՝ դատական ակտը:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձը՝ Ս.Ջաղինյանը, դիմել է Վերաքննիչ դատարան՝ խնդրելով իրեն տրամադրել դատական նիստի արձանագրության կրիչի օրինակը՝ դրա համառոտագրման հետ միասին: Վերաքննիչ դատարանի դատավորը Ս.Ջաղինյանի դիմումին գրավոր պատասխանել է, որ նա գործին մասնակցող անձ չի հանդիսանում, ուստի դատական նիստի արձանագրության կրիչի օրինակը և համառոտագրումը նրան չեն կարող տրամադրվել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 18-րդ կետում շարադրված վերլուծության, ինչպես նաև սույն որոշման 17-րդ կետում շարադրված եզրահանգման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր գործին մասնակցող անձին՝ Ս.Ջաղինյանին, տրամադրել Վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինակը, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

(...)

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: (...):

(...)

7. Գատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը: (...):»:

Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Բաբայանի* և *Ս.Թումանյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկյունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է:

Մրցակցության սկզբունքը կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում: Դրանք են՝

ա) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար,

բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառույթների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառույթից,

գ) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն:

Մրցակցային դատավարության ընթացքում դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն էլ այն է, որ որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը: (...):» (տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԳ/0044/01/11 որոշման 13-րդ կետը):

Ա.Ղարիբջանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) արդար դատական քննություն իրականացնելու պահանջը ՀՀ ներպետական իրավունքի իմաստով ևս հավասարապես վերաբերելի է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անցկացվող դատական քննություններին: (...):» (տե՛ս Ամալյա Սերժիկի Ղարիբջանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԳ/0008/06/11 որոշման 23-րդ կետը):

22. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, *Ա.Բաբայանի* և *Ս.Թումանյանի*, ինչպես նաև *Ա.Ղարիբջանի* գործերով կայացված որոշումներում արտահայտված իրավական

դիրքորոշումները, և դրանց լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ և 20-րդ կետերում շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վարույթից հեռացնելով մեղադրյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Ջաղինյանին, ինչպես նաև հրաժարվելով նրան տրամադրել վերաքննիչ բողոքը մերժելու մասին դատական ակտի, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները, թույլ է տվել մրցակցության և զենքերի հավասարության սկզբունքների խախտում:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 14-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով ամրագրված՝ մրցակցության և համապատասխանաբար նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ զենքերի հավասարության սկզբունքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ խախտումն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

24. Ինչ վերաբերում է բողոքաբերի բարձրացրած երկրորդ հարցին (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրան հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման 23-րդ կետում արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Սարիբեկ Վարագրատի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

12.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0224/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ.ԶՈՒՌՆԱԶՅԱՆԻ

2013 թվականի փետրվարի 15-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով Գայանե Նորիկի Փահլևանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ Լոռու կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ Մ.Հախվերդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռով Գայանե Նորիկի Փահլևանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 376-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Գ.Փահլևանյանը դատապարտվել է ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով առանց գույքի բռնագրավման, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ մեկ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Գ.Փահլևանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Գ.Փահլևանյանի պաշտպանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 29-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Փահլևանյանի պաշտպանի վճարելի բողոքը Վճարելի դատարանի 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ վերադարձվել է:

Գ.Փահլևանյանի վերաբերյալ 2012 թվականի հունվարի 31-ի դատավճիռը ստացել է օրինական ուժ, և քրեական գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան՝ կատարման:

2. Գատապարտյալ Գ.Փահլևանյանի պաշտպան Վ.Զուռնայանը դիմել է Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով հստակեցնել Գ.Փահլևանյանի վերաբերյալ 2012 թվականի հունվարի 31-ի դատավճիռը և որոշել, թե «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը Գ.Փահլևանյանի նկատմամբ կիրառելու պայմաններում նրա նկատմամբ նշանակված վերջնական պատիժը որքան է կազմում:

3. Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 25-ին որոշում է կայացրել դատապարտյալ Գ.Փահլևանյանի վերաբերյալ 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռի անհստակությունը լուծելու մասին:

4. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ Լոռու կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ Մ.Հախվերդյանը բերել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ Լոռու կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ Մ.Հախվերդյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել դատապարտյալ Գ.Փահլևանյանի պաշտպան Վ.Զուռնայանը՝ նշելով, որ բողոքի հեղինակի փաստարկներն անհիմն են և չեն բխում օրենքից:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման համաձայն՝ «Գատավճռի կատարման ընթացքում պարզվել է, որ Գայանե Փահլևանյանի նկատմամբ կիրառման ենթակա է «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 26.05.2011 թվականի որոշումը, քանի որ նա հանցավոր արարքները կատարել է 2007 թվականի հունիսի 1-ից մինչև 2010թ-ի ապրիլի 1-ը և նրա նկատմամբ համաներման մասին նշված որոշումը կիրառելու արգելքներ չկան: Գատարանը Գ.Փահլևանյանի նկատմամբ չկիրառելով համաներման մասին որոշումը, թույլ է

տվել նրա նկատմամբ նշանակված պատժի հաշվարկի սխալ:

(...)

Գատարանը գտնում է, որ Գայանե Փահլևանյանի նկատմամբ կիրառման ենթակա է ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ ազգային ժողովի 26.05.2012 թվականի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով և նույն որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որոնց արդյունքում հստակեցման ենթակա է նրա նկատմամբ նշանակված վերջնական պատժի չափը:

(...)

Գատարանը գտնում է, որ Գայանե Փահլևանյանի նկատմամբ համաներում կիրառելու արդյունքում նա պատժից լրիվ ենթակա է ազատման ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով, որը պետք է կատարվի դատարանի որոշմամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ [հոդվածի 3-րդ] մասով նշանակված պատժից ենթակա է կրճատման մեկ չորրորդ մասը, որը պետք է կատարվի ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից:

(...)

Ամբաստանյալ Գայանե Նորիկի Փահլևանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրան դատապարտել ազատազրկման 1/մեկ/ տարի ժամանակով: Կիրառել Գայանե Փահլևանյանի նկատմամբ «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011 թվականի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը և նրան ազատել պատժից:

Ամբաստանյալ Գայանե Նորիկի Փահլևանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրան դատապարտել ազատազրկման 4 /չորս/ տարի 6 /վեց/ ամիս ժամանակով, առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Գայանե Փահլևանյանի նկատմամբ «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011 թվականի որոշման 8-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառումը՝ պատժաչափի մեկ չորրորդ մասը կրճատելու հաշվարկի մասով թողնել կատարելու ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկին:

Գատավճռի եզրափակիչ մասի մնացած մասը թողնել նախկին խմբագրությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 260-261):

7. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 12-ի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածում օրենսդիրը օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է դատական ակտի ի կատար ածման ընթացքում ծագած կասկածների և անհստակությունների կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե այդ կասկածների և

անհատակությունների վերանայելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն:

Պատժի չափի հստակ որոշումը, խափանման միջոցների, դատական ծախսերի վերաբաշխումը, իրեղեն ապացույցների ճակատագրի լուծումը, ինչպես նաև դատական ակտի անհատակությունների մեկնաբանումը, դատական ակտի վերաբերյալ կասկածների և անհատակությունների լուծման կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառնիչ, ուստի վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ակտի ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհատակությունները լուծելիս պետք է դեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի ամբողջ համատեքստում, հաշվի առնելով նաև գործի կոնկրետ հանգամանքները:

Տվյալ դեպքում Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 31.01.2012թ. դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ և ուղարկվել է կատարման, որի ընթացքում էլ պարզվել է, որ դատապարտյալ Գայանե Փահլևանյանի նկատմամբ չի կիրառվել “ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին” ՀՀ ազգային ժողովի 26.05.2011 թվականի որոշումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատավճռով դատապարտյալ Գայանե Փահլևանյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, ուստի քրեակատարողական հիմնարկը զրկված է եղել համաներման ակտի կիրառման հնարավորությունից:

Այս պայմաններում վերաքննիչ դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում դատարանը սույն քրեական գործի շրջանակներում կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս Զրեական գործ, հատոր 7, թերթ 29-32):

Վճարելի բողոք հիմքերը, հիմնավորումները և պահանջը

8. Բողոք բերած անձի պնդմամբ՝ բողոքարկվող որոշումն օրինական չէ և կայացվել է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ: Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանն իր կողմից 2012 թվականի հունվարի 31-ին կայացված դատավճռի անհատակությունը լուծելիս փոփոխել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով սահմանված պատժաչափը: Հետևաբար, սույն գործով ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ տարածական մեկնաբանության են ենթարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավճիռները կամ դատական այլ որոշումներն ի կատար ածելու ընթացքում ծագած կասկածները և անհատակությունները լուծելու՝ դատարանի իրավասության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Գ.Փահլևանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռի անհատակությունը լուծելու մասին նույն դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճիռ կամ այլ դատական որոշում կայացրած դատարանն իրավունք ունի լուծել դրա ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհատակությունները, մասնավորապես՝

1) հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատարանի դատավճռում այն սահմանված չէ.

(...)

3) լուծել խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ճակատագրի հարցը, եթե այն լուծված չի եղել կամ լուծված է եղել ոչ հստակ.

4) մեկնաբանել իր որոշումների անհատակությունները»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ այն սահմանում է դատավճռի կամ դատական այլ որոշման ի կատար ածման փուլում դատարանի լուծմանը ենթակա հարցերի հետևյալ շրջանակը՝

ա) պատժի չափի հստակեցում,

բ) խափանման միջոցների հետ կապված հարցեր,

գ) դատական ծախսերի վերաբաշխում,

դ) իրեղեն ապացույցների տնօրինում,

ե) որոշման մեջ առկա անհատակությունների պարզաբանում:

Վերոնշյալ հարցերի լուծումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի իմաստով, հանդիսանում է դատավճռի կամ դատական այլ որոշման ի կատար ածման փուլում ծագած կասկածների և անհատակությունների լուծում:

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման նախորդ կետի (ե) ենթակետում ամրագրված՝ անհատակությունների լուծման դատարանի իրավասությունը ներառում է այն հարցերի լուծումը, որոնք կապված չեն անձի մեղքի կամ նրա նկատմամբ նշանակված պատժի հետ: Այլ խոսքով՝ անձի մեղքի

և (կամ) պատժի հետ կապված հարցերը ենթակա են լուծման բացառապես գործի դատական քննության փուլում, իսկ գործի քննության այլ փուլերում դրանց անդրադարձը հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության սկզբունքին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղքի և (կամ) պատժի հետ կապված հարցերը դուրս են անհատակությունների լուծման դատարանի իրավասության շրջանակներից և պետք է իրականացվեն ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի բողոքարկման ընթացակարգով:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Համաներման իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը կամ վերացվել դատվածությունը: Առանց համաներման ակտի գոյության օրենսգրքերի համապատասխան դրույթներն իրացվել չեն կարող:

(...)

Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: (...) նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 16-րդ կետը):

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը համադրելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանը զարգացնում է Վ.Ավետիսյանի որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումը և արձանագրում է, որ իր իրավական նշանակությամբ համաներման ակտը հանդիսանում է իրավաբանական փաստ, այսինքն՝ հանգամանք, որի հետ իրավական նորմը կապում է իրավական հետևանքների (իրավահարաբերությունների) փոփոխումը կամ դադարեցումը:

Որպես «իրավադարձարեցնող» իրավաբանական փաստ՝ համաներման ակտը

հանդես է գալիս այն դեպքերում, երբ սահմանում է նշանակված պատժից անձին ազատելու և դատվածությունը հանելու դեպքերը:

Որպես «իրավափոփոխող» իրավաբանական փաստ՝ համաներման ակտը հանդես է գալիս այն դեպքերում, երբ սահմանում է անձի նկատմամբ նշանակված պատժաչափի կրճատման դեպքերը:

Վերոնշյալ՝ «իրավադարձացնող» և «իրավափոփոխող» իրավաբանական փաստերի իմաստով՝ համաներման ակտով նախատեսված «պատժից ազատելը», «դատվածությունը հանելը» և «պատժաչափը կրճատելը» տարբերվում են ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերով նախատեսված համանման իմաստիտուցներից, քանի որ իրականացվում են ոչ թե ուղղակիորեն նյութաիրավական օրենսդրության, այլ ինքնուրույն գործող իրավական փաստաթղթի՝ համաներման ակտի կիրառման արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաներման ակտի հիման վրա պատժից ազատելու, դատվածությունը մարելու և պատժաչափը կրճատելու դեպքերը չեն հանդիսանում անձի պատժի հետ կապված հարցի լուծում:

15. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ դեպքում, երբ գործի դատական քննության ընթացքում դատարանն անձի նկատմամբ չի կիրառում համաներման ակտը և դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում նախատեսված համաներման չկիրառմամբ, դատարանն իրավասու է մեկնաբանել իր որոշման մեջ առկա անհստակությունը և դատավճռի կամ դատական այլ որոշման ի կատար ածման փուլում կայացնել անձի նկատմամբ համաներման ակտի կիրառման մասին որոշում:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատական ակտի կատարման փուլում համաներման ակտի կիրառումը հնարավոր է այն դեպքում, երբ դատարանը գործի դատական քննության ընթացքում ընդհանրապես չի անդրադարձել համաներման ակտի կիրառման հարցին: Ինչ վերաբերում է այն դեպքին, երբ գործի դատական քննության փուլում դատարանը անդրադառնում է անձի նկատմամբ համաներման ակտի կիրառման հարցին և սխալ է թույլ տալիս, օրինակ՝ քննարկում է համաներման կիրառման հարցը և չի կիրառում կիրառման ենթակա համաներման ակտը կամ սխալ է կիրառում այն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման ակտի կիրառման հետ կապված վերոնշյալ սխալները հանդիսանում են անձի նկատմամբ պատիժ նշանակելիս թույլ տրված դատական սխալներ, որոնք պետք է ուղղվեն ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի բողոքարկման ընթացակարգով:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2012 թվականի հունվարի 31-ի դատավճիռը կայացնելիս Առաջին ատյանի դատարանը Գ.Փահլևանյանի նկատմամբ պատիժ է նշանակել՝ առանց «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) կիրառման: Առաջին ատյանի դատարանի նշված դատավճիռը մտել է օրինական

ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Դատական ակտի կատարման փուլում Գ.Փահլևանյանի պաշտպան Վ.Զուռնաչյանը դիմել է Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով հստակեցնել նույն դատարանի 2012 թվականի հունվարի 31-ի դատավճիռը և որոշել, թե Համաներման ակտը Գ.Փահլևանյանի նկատմամբ կիրառելու պայմաններում նրա նկատմամբ նշանակված վերջնական պատիժը որքան է կազմում (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 25-ին որոշում է կայացրել դատապարտյալ Գ.Փահլևանյանի վերաբերյալ նույն դատարանի 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռի անհստակությունը լուծելու մասին: Այդ դատական ակտով Առաջին ատյանի դատարանը որոշել է ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով Գ.Փահլևանյանի նկատմամբ կիրառել Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը և նրան ազատել պատժից: ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Գ.Փահլևանյանի նկատմամբ Համաներման ակտի 8-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառումը՝ պատժաչափի մեկ չորրորդ մասը կրճատելու հաշվարկի մասով թողնել կատարելու ՀՀ արդարադատության մախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը): Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը Վերաքննիչ դատարանի որոշմամբ թողնվել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 7-րդ կետերը):

17. Սույն որոշման 11-15-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 16-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Փահլևանյանի վերաբերյալ 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռի անհստակությունը լուծելու մասին Առաջին ատյանի դատարանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ դատարանը լուծել է Համաներման ակտի կիրառմամբ Գ.Փահլևանյանին պատժից ազատելու և նրա նկատմամբ նշանակված պատժաչափը կրճատելու հարցերը, որոնց չի անդրադարձել գործի դատական քննության փուլում, և որոնք չեն հանդիսանում Գ.Փահլևանյանի մեղքի կամ նրա նկատմամբ նշանակված պատժի հետ կապված հարցեր: Հետևաբար, հիմնագուրկ է բողոքի հեղինակի պնդումն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը պաշտպանի դիմումի հիման վրա դատավճռի անհստակությունը լուծելու ժամանակ փոփոխել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով սահմանված պատժաչափը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Փահլևանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 31-ի դատավճռի անհստակությունը լուծելու մասին նույն դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը հիմնավոր է:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 10-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ չեն տվել դատական սխալ, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Ստորադաս դատարանների դատական ակտերը

օրինական, հիմնավորված ու պատճառաբանված են, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով Վերաքննիչ դատարանի դատական ակտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Գայանե Նորիկի Փահլևանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

13.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱԲԳ/0218/06/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշման դեմ մեղադրյալ Ռոբերտ Արմենի Հակոբյանի պաշտպան Ա.Ստեփանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժնում 2012 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ հարուցվել է թիվ 09116812 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ Ռոբերտ Արմենի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «2011 թվականի հունիս ամսին, Երևան քաղաքի Պ.Սևակի և Կ.Ուլնեցու փողոցների խաչմերուկում գտնվող թիվ 127 միջնակարգ դպրոցի մոտ, ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն կատարելու նպատակով, քաշել-պոկելու միջոցով բացահայտ հափշտակել է Սոնա Ամբարջյանի պարանոցի ոսկյա շղթան իր խաչով և դիմել փախուստի՝ վերջինիս պատճառելով զգալի չափի՝

120.000 ՀՀ դրամի գույքային վնաս» (տե՛ս նյութեր, թերթ 20):

2. 2012 թվականի դեկտեմբերի 7-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ռ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, մեղադրյալ Ռ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Ռ.Հակոբյանի պաշտպան Ա.Ստեփանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրյալ Ռ.Հակոբյանի պաշտպան Ա.Ստեփանյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի մարտի 21-ի որոշմամբ պաշտպան Ա.Ստեփանյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմինը 2012 թվականի դեկտեմբերի 7-ին «Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին» որոշում է կայացրել, որի եզրափակիչ մասում նշել է, որ «Ռ.Հակոբյանին թիվ 09116812 քրեական գործով ներգրավել որպես մեղադրյալ, նրան մեղադրանք առաջադրել ՀՀ քր. օր.-ի 176 հոդվածի 1-ին մասով՝ այդ մասին ստորագրությամբ հայտնելով նրան և միաժամանակ նրան հանձնել որոշման օրինակը» (տե՛ս նյութեր, թերթ 20):

6. Մեղադրյալ Ռ.Հակոբյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունն Առաջին ատյանի դատարանում քննարկելու ընթացքում Ռ.Հակոբյանի պաշտպան Ա.Ստեփանյանը հայտնել է, որ իր պաշտպանյալին օրենքով սահմանված կարգով մեղադրանք չի առաջադրվել, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը նրան չի տրամադրվել, և նա չգիտի, թե ինչում է մեղադրվում (տե՛ս նյութեր, դատական միստի ձայնային արձանագրման կրիչը, թերթ 25):

7. Վերաքննիչ դատարանը, քննարկելով Ռ.Հակոբյանին օրենքով սահմանված ընթացակարգով մեղադրանք չառաջադրելու վերաբերյալ պաշտպան Ա.Ստեփանյանի փաստարկը, եզրահանգել է, որ այդ հարցը դուրս է վերաքննիչ դատարանում առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման շրջանակներից և ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով

սահմանված վերադատության կարգով (տե՛ս նյութեր, դատական նիստի ձայնային արձանագրման կրիչը, թերթ 60):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը հիմնավորված չեն և առերևույթ հակասում են *Ա.Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 և *Տ.Վահրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԳ/0197/06/08 որոշումներին:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել դատավարական խախտումներ, որոնք Ռ.Հակոբյանի համար կարող են առաջացնել ծանր հետևանքներ, մասնավորապես՝ նա կարող է երկար ժամանակով գրկվել ազատությունից:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկների՝ բողոք բերած անձը նշել է, որ նախաքննական մարմինը ո՛չ միջնորդություն ներկայացնելիս, ո՛չ այդ միջնորդության քննության ընթացքում չի ներկայացրել որևէ տվյալ, որը կհիմնավորեր, որ Ռ.Հակոբյանը կարող է կատարել միջնորդության մեջ նշված՝ կալանքի անհրաժեշտությունը հիմնավորող գործողությունները:

9. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասը, որը քննիչին պարտավորեցնում է մեղադրյալի ինքնության մեջ հավաստիանալուց հետո նրան հայտարարել որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և բացատրել առաջադրված մեղադրանքի էությունը: Այդ գործողությունների կատարումը մեղադրյալի և քննիչի ստորագրությամբ հաստատվում է՝ որոշման մեջ նշելով մեղադրանքի առաջադրման ամիսը, օրը, ժամը և թվականը: Քննիչի կողմից վերոնշյալ դատավարական պահանջը չկատարելու հետևանքով խախտվել է Ռ.Հակոբյանի պաշտպանության իրավունքն այն առումով, որ նա որպես մեղադրյալ չի հարցաքննվել, նրա համար պարզ չի եղել մեղադրանքի էությունը, և նա չի հասկացել, թե ինչից պետք է պաշտպանվի:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումները, Ռ.Հակոբյանին ազատել կալանքից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորման պայմաններից

մեկի՝ անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տրված լինելու քրեադատավարական պահանջի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավոր են արդյոք Ռ.Հակոբյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումներն այն պարագայում, երբ դատարանները չեն պարզել կալանավորման ինքնուրույն պայմանի, այն է՝ Ռ.Հակոբյանին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տրված լինելու հանգամանքը:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...):»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

(...)

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

(...):»:

Մեջբերված կոնվենցիոն և սահմանադրական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծել է Վ.Գևորգյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն

հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անհիմաստ է:

Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեախրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը:

(...) քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը՝

ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը ևս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով: (...)» (տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշման 19-րդ և 22-րդ կետերը):

14. Սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար Վ. Գևորգյանի գործով որոշման մեջ շարադրված վերլուծությունից երևում է, որ կալանավորման պայմաններից մեկն անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տրված լինելն է, որը հաստատվում է գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությամբ: Կալանավորման այս պայմանը ուղղակիորեն կապված է ՀՀ քրեադատավարական օրենքի 134-րդ հոդվածի 3-րդ մասում առկա այն պահանջի հետ, որ կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրյալը, (...) իրավունք ունի՝

1) իմանալ՝ ինչում է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը.

2) արգելանքի վերցվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես անվճար ստանալ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրանքը պետք է առաջադրվի տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը: Մեղադրանք առաջադրելու՝ սույն հոդվածով սահմանված ժամկետն ընդհատվում է, եթե մեղադրյալը թաքնվում է քննությունից:

2. Քննիչը, հավաստիանալով մեղադրյալի ինքնության մեջ, նրան հայտարարում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և բացատրում առաջադրված մեղադրանքի էությունը: Այդ գործողությունների կատարումը մեղադրյալի և քննիչի ստորագրությամբ հաստատվում է՝ որոշման մեջ նշելով մեղադրանքի առաջադրման ամիսը, օրը, ժամը և թվականը:

3. Մեղադրանք առաջադրելիս քննիչը պարտավոր է մեղադրյալին բացատրել սույն օրենսգրքի 65 հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը նրա իրավունքների և պարտականությունների ցանկի հետ հանձնվում է մեղադրյալին: Մեղադրանքի առաջադրման, մեղադրյալին նրա իրավունքները բացատրելու և որոշման պատճենը հանձնելու մասին քննիչը կազմում է արձանագրություն, որն ստորագրում են քննիչը, մեղադրյալը և այդ գործողությունները կատարելիս ներկա գտնվող մյուս անձինք:

4. Որոշման մեջ կամ արձանագրությունում ստորագրելուց մեղադրյալի կամ այլ անձի հրաժարվելու դեպքում քննիչը դրա վրա նշում է կատարում ստորագրելուց հրաժարվելու մասին և 24 ժամվա ընթացքում հայտնում է դատախազին»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ կալանավորումը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ: Այսինքն՝ այն անձի նկատմամբ, ով հաջորդաբար անցել է մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու հետևյալ փուլերը՝

ա) անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացում,

բ) անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մասին տեղեկացում,

գ) առաջադրված մեղադրանքի էության պարզաբանում,

դ) անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենի և մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկի հանձնում:

Շարադրված հաջորդականությամբ կատարված գործողությունների արդյունքում է, որ անձին օրենքով սահմանված կարգով մեղադրանք է առաջադրվում, և նա ձեռք է բերում մեղադրյալի դատավարական կարգավիճակ:

Ընդ որում, նշված բոլոր գործողությունների կատարումը պետք է հավաստվի համապատասխան փաստաթղթերով և հաստատվի մեղադրյալի և քննիչի ստորագրությամբ, իսկ մեղադրյալի կողմից ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ քննիչի համապատասխան նշումով:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքում, երբ անձը թաքնվում է քննությունից, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար բավարար է նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը՝ պայմանով, որ հետագայում, հայտնաբերվելուց հետո նա կտեղեկացվի որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մասին, նրան կպարզաբանվի առաջադրված մեղադրանքի էությունը, և նրան կհանձնվեն որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը և մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկը, ապա նա անհապաղ (72 ժամվա ընթացքում) կտարվի դատավորի մոտ (դատավորի մոտ տարվելու մասին տե՛ս Տիգրան Վահրադյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշման 34-րդ կետը):

16. Հիմք ընդունելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանն ի թիվս այլոց պետք է պարզի կալանավորման ինքնուրույն պայմանի առկայությունը, մասնավորապես այն, թե արդյոք անձին տրվել է մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Նշված հանգամանքը պարզելու նպատակով դատարանը պարտավոր է ստուգել, թե նախաքննության մարմնի կողմից ներկայացվել են արդյոք համապատասխան տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ այն մասին, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացվել, անձը տեղեկացվել է այդ որոշման մասին, բացի այդ, նրան պարզաբանվել է առաջադրված մեղադրանքի էությունը, և հանձնվել են որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենն ու մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկը: Հակառակ պարագայում, անձի կալանավորումը և համապատասխանաբար նաև նրա ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կհամարվի կամայական և անօրինական:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից որոշում է կայացվել Ռ.-Հակոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նշված որոշման եզրափակիչ մասի համաձայն՝ Ռ.-Հակոբյանին պետք է մեղադրանք առաջադրվի ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով, այդ մասին ստորագրությամբ հայտնվի նրան և հանձնվի որոշման օրինակը: Դրա հետ մեկտեղ, սակայն, նախաքննության մարմնի կողմից չեն ներկայացվել համապատասխան տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ այն մասին, որ Ռ.-Հակոբյանին հայտարարվել է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը, նրան բացատրվել է մեղադրանքի էությունը, նրան հանձնվել է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը և իրավունքների ու պարտականությունների ցանկը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում Ռ.-Հակոբյանի պաշտպան Ա.Ստեփանյանը հայտնել է, որ իր պաշտպանյալին օրենքով սահմանված կարգով մեղադրանք չի առաջադրվել, նա չգիտի, թե ինչու է մեղադրվում, սակայն Առաջին ատյանի դատարանը պաշտպանի փաստարկն անտեսել է, իսկ Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ հարցը ենթակա չէ քննարկման վերաքննիչ դատարանում առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման շրջանակներում, այլ ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

18. Սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.-Հակոբյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս ստորադաս դատարանները չեն ստուգել, թե նախաքննության մարմնի կողմից ներկայացվել են արդյոք համապատասխան տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ այն մասին, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը հայտարարվել է Ռ.-Հակոբյանին, նրան պարզաբանվել է առաջադրված մեղադրանքի էությունը, և հանձնվել են որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենն ու մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկը: Այլ խոսքով՝ սույն գործով դատարանները չեն պարզել կալանավորման ինքնուրույն պայմանի, այն է՝ անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տրված լինելու հանգամանքը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.-Հակոբյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումներն օրինական և հիմնավոր չեն:

20. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ նախաքննական մարմինը ո՛չ միջնորդություն ներկայացնելիս, ո՛չ այդ միջնորդության քննության ընթացքում չի ներկայացրել որևէ տվյալ, որը կհիմնավորեր, որ Ռ.-Հակոբյանը կարող է կատարել միջնորդության մեջ նշված՝ կալանքի անհրաժեշտությունը հիմնավորող գործողությունները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման պայմանը հիմնավորված չլինելու պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է (*mutatis mutandis* տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշման 19-րդ կետը):

21. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.-Հակոբյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել դատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել անօրինական և չհիմնավորված որոշման կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը

պետք է բավարարել, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա մեղադրյալ Ռոբերտ Արմենի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումը բեկանել և Ռոբերտ Արմենի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը վերացնել:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 26-ի որոշմամբ մերժվել է մեղադրյալ Ռ.Հակոբյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը, և նա 2013 թվականի ապրիլի 4-ից գտնվում է ազատության մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Ռոբերտ Արմենի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումը բեկանել և Ռոբերտ Արմենի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը վերացնել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

14.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0025/11/11

ԵԿԳ/0033/15/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հետևանքով դատական ակտերը վերանայելու վերաբերյալ դիմող Գ-այանե Աշուղյանի ներկայացուցիչներ Արտակ Զեյնալյանի և Արա Գազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի մարտի 7-ին դիմող Գ-այանե Աշուղյանի ներկայացուցիչ Ա.Զեյնալյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել 2011 թվականի հունվարի 11-ի դիմումի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի դրսևորած անգործությունը և վերջինիս պարտավորեցնել դիմելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ «Վարչական տույժ նշանակելու մասին» 2003 թվականի ապրիլի 4-ի և 9-ի որոշումների վերանայման վարույթ հարուցելու պահանջով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի

որոշմամբ դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի բողոքը մերժվել է (գործ թիվ ԵԿԴ/0025/11/11):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի որոշմամբ վերադարձվել է:

2. 2011 թվականի ապրիլի 26-ին դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանը և Ա.Ղազարյանը միջնորդություն են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարել և վերականգնել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի մայիսի 6-ի որոշմամբ դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի միջնորդությունը մերժվել է (գործ թիվ ԵԿԴ/0033/15/11):

Դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 8-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 6-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ վերադարձվել է:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրականությունը՝ Գ.Աշուղյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարանը քաղաքացի Գ.Այանե Աշուղյանի դիմումի հիման վրա քննության առնելով վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 2012 թվականի հոկտեմբերի 16-ին կայացրել է թիվ ՍԴՌ-1052 որոշումը, համաձայն որի՝

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի **տրամադրումը** բողոք

ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով /ex jure/ չի ճանաչվում հարգելի:

3. Սույն գործով վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով հոդվածի 2-րդ մասի «**ուղարկվում է**» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի **ամբողջական ակտի տրամադրումը /հասանելիությունը/** օրենքով նախատեսված սուբյեկտներին»:

4. 2013 թվականի հունվարի 14-ին դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանը և Ա.Գազարյանը, որպես նոր հանգամանք մատնանշելով ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳՌ-1052 որոշումը, ներկայացրել են վճռաբեկ բողոք:

2013 թվականի փետրվարի 20-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Գ.Աշուղյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի բողոքը՝ Գ.Աշուղյանի 2011 թվականի հունվարի 11-ի դիմումի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի դրսևորած անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2003 թվականի ապրիլի 7-ի և 2003 թվականի ապրիլի 9-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումների վերանայման վարույթ հարուցելու պահանջով ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան դիմելուն պարտավորեցնելու վերաբերյալ, մերժվել է:

Վերոգրյալ որոշման դեմ Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Գազարյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանը 2011 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ թողել է առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով սահմանված է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը:

(...)

Ինչպես երևում է վերաքննիչ բողոքից, այն ստորագրվել է Գ.Աշուղյանի

ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի կողմից, փոստին հանձնվել է 2011 թվականի ապրիլի 22-ին, իսկ վերաքննիչ դատարանում ստացվել է 2011 թվականի ապրիլի 26-ին, իսկ վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվել է 2011 թվականի ապրիլի 7-ին, այսինքն՝ բողոք բերած անձանց կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի, 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

(...)

Բողոքարկվող որոշումը (...) գործն ըստ էության չլուծող դատական ակտ է, որի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը 2011 թվականի ապրիլի 17-ն էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրիլի 17-ը ոչ աշխատանքային օր էր, ապա վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը 2011 թվականի ապրիլի 18-ն էր, սակայն բողոքը փոստին է հանձնվել 2011 թվականի ապրիլի 22-ին, իսկ վերաքննիչ դատարանում այն ստացվել է 2011 թվականի ապրիլի 26-ին, հետաքար վերաքննիչ բողոքը ժամկետանց է, և այն պետք է թողնել առանց քննության»:

Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ «(...) հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձը կարող է միջնորդել դատական ակտը կայացրած դատարանի՝ տվյալ դեպքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի առաջ՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը» (տե՛ս թիվ ԵԿԳ/0025/11/11 գործի նյութեր, հատոր 2, թերթ 24-27):

6. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 6-ի որոշման մեջ, որով մերժվել է նույն դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի միջնորդությունը, Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 380-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը որոշման բողոքարկման համար սահմանում է տասնօրյա ժամկետ:

Նյութերի ուսումնասիրությունից երևում է, և այդ հանգամանքը ընդունում են դիմողները, որ դատարանի 2011թ. ապրիլի 7-ի որոշումը փոստային ծառայության կողմից հասցեատիրոջն է հանձնվել 2011թ. ապրիլի 13-ին:

(...) Դիմող Գայանե Աշուղյանի ներկայացուցիչներ Արտակ Չեյնալյանը և Արայիկ Ղազարյանը դատարանի նշված որոշումը բողոքարկելու համար բավարար ժամանակ և հնարավորություն են ունեցել ու կարող էին պատշաճ, օրենքով սահմանված կարգով և ժամկետում բողոքարկելու դատարանի որոշումը՝ ընդհուպ մինչև 2011թ. ապրիլի 18-ը ներառյալ, որը չեն կատարել:

Հետևաբար դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետը դիմողները բաց են թողել անհարգելի, և միջնորդությունը ենթակա է մերժման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով (տե՛ս թիվ ԵԿԳ/0033/15/11 գործի նյութեր, թերթ 14-15):

7. Վերաքննիչ դատարանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 6-ի որոշման օրինականության ու հիմնավորվածության ստուգման արդյունքում արձանագրել է. «Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որ դատական ակտի հրապարակումը ենթադրում է դրա ամբողջ բովանդակության հրապարակում դատական նիստում:

Գատարան ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվել է 07.04.2011թ.-ին, այն փոստին է հանձնվել 12.04.2011թ.-ին, իսկ բողոքաբերների կողմից ստացվել է 13.04.2011թ.-ին:

07.04.2011թ.-ին հրապարակված դատական ակտի վերաքննիչ բողոքարկման ժամկետն ավարտվում էր 17.04.2011թ.-ին:

Վերաքննիչ դատարանը, բարձրացված հարցը կոնկրետ դեպքում դիտարկելով իրավունքների սահմանափակման տեսանկյունից, արձանագրում է, որ տվյալ դեպքում բողոքաբերները իրական հնարավորություն են ունեցել օրենքով սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելու համար: Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև, որ առաջին ատյանի դատարանի 07.04.2011թ. որոշման դեմ վերաքննիչ բողոքը բերվել է 22.04.2011թ.-ին, այսինքն՝ նշված ժամկետը ավարտվելուց 5 օր անց: Այսինքն՝ 07.04.2011թ. դատական ակտը 12.04.2011թ.-ին ստանալու հանգամանքը կոնկրետ դեպքում չի հանդիսացել այնպիսի սահմանափակում, որը կարող էր խախտել դատարանի մատչելիության իրավունքը» (տե՛ս թիվ ԵԿԳ/0033/15/11 գործի նյութեր, թերթ 50-51):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձինք փաստարկել են, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՄԳՈ-1052 որոշմամբ հաստատվում է իրենց վստահորդի նկատմամբ սույն գործով ստորադաս դատարանների կողմից կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող լինելու և նույն օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների՝ դրանց սահմանադրաիրավական

բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված լինելու հանգամանքը: Նշվածը, ըստ բողոքաբերների, հիմք է Վճարելի դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի և նույն թվականի օգոստոսի 11-ի որոշումները վերանայելու համար, որոնցով ուժի մեջ էին թողնվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի և հուլիսի 8-ի որոշումները:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վճարելի դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի և 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշումները, վարույթ ընդունել և քննել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի և 2011 թվականի հուլիսի 8-ի որոշումների դեմ իրենց վճարելի բողոքները:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳ-Ռ-1052 որոշումը, որով հաստատվում է սույն գործով ստորադաս դատարանների կողմից կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող լինելու և նույն օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների՝ դրանց սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված լինելը, արդյո՞ք նոր հանգամանք է Վճարելի դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի և 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշումները վերանայելու համար:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում և 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները:

(...)»:

Գ.Աշուղյանի դիմումի հիման վրա քննության առնելով նշված դրույթների՝ ՀՀ

Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳ-Ռ-1052 որոշմամբ արձանագրել է. «(...) [Վ]երաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը: Մինչդեռ [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը, օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով: Բանն այն է, որ դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար:

(...) [ՀՀ] սահմանադրական դատարանն արձանագրում է, որ [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 380-րդ հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է լայն հայեցողական լիազորությամբ՝ հարգելի համարելու կամ չհամարելու ժամկետների բացթողումը: Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ, հիմք ընդունելով իր՝ ՍԳ-Ռ-690 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեք չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումն այն պատճառաբանությամբ, որ նշված հայեցողական

լիազորությունների իրականացումը հանգեցնում է անորոշության: (...) Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ հնգօրյա և տասնօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից, առավել ևս, որ օրենսդիրը մի շարք դեպքերում ոչ միայն չի բացառում, այլև որպես դատական ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ ուղղակիորեն նախատեսում է տվյալ դատական ակտը հասցեատիրոջ կողմից ստանալու պահը:

(...)

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով /ex jure/ պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը: (...):»:

Արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի: Որոշվել է նաև, որ վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետի խախտումով ներկայացված լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն

որոշման 5-րդ կետը):

Նյութերից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի միջնորդությունը մերժել է՝ նշելով, որ դիմողները բողոքարկման ժամկետը բաց են թողել անհարգելի, քանի որ բավարար հնարավորություն և ժամանակ են ունեցել օրենքով սահմանված ժամկետում դատարանի որոշումը բողոքարկելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, ըստ էության համաձայնվել է Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների հետ: Վճռաբեկ դատարանն իր 2011 թվականի մայիսի 24-ի և 2011 թվականի օգոստոսի 22-ի որոշումներով Գ.Աշուղյանի ներկայացուցիչների վճռաբեկ բողոքները վերադարձրել է (տե՛ս սույն որոշման 1-ին, 2-րդ և 7-րդ կետերը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին (...) կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ (...) [դրա] ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁹-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով»:

14. Մեջբերված քրեադատավարական դրույթների, ինչպես նաև սույն որոշման 11-րդ կետում շարադրված՝ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 12-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳՌ-1052 որոշումը, որով հաստատվում է սույն գործով ստորադաս դատարանների կողմից կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող լինելու և նույն օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների՝ դրանց սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված լինելը, նոր հանգամանք է Վճռաբեկ

դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի և 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշումները վերանայելու համար: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի և 2011 թվականի օգոստոսի 22-ի որոշումներն անհրաժեշտ է վերանայել և արդյունքում բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հուլիսի 8-ի դատական ակտերը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426¹-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 24-ի և 2011 թվականի օգոստոսի 22-ի որոշումները:

2. Դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի, ինչպես նաև դիմող Գ.Աշուղյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հուլիսի 8-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

15.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԳ/0053/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝
պաշտպան՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ռ.ՊԱՊՅԱՆԻ
Ս.ՄԻՐԶՈՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Ռադիկ Լիպարիտի Պապյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հունիսի 6-ին նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 19111411 քրեական գործը:

2011 թվականի օգոստոսի 4-ին Ռադիկ Լիպարիտի Պապյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը Ռ.Պապյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2012 թվականի մայիսի 13-ին Ռ.Պապյանին առաջադրված մեղադրանքը

փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի մայիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի դատավճռով Ռ.Պապյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ռ.Պապյանի նկատմամբ որպես պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000-ական (հինգ հարյուր հազարական) ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Ռ.Պապյանն ազատվել է նշանակված պատիժները կրելուց:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ռ.Պապյանը դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով՝ հաշվարկը թողնելով ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկին:

3. Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է բողոքը՝ բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի դատավճիռը: Ռ.Պապյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նշված հոդվածներով նրա նկատմամբ որպես պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000-ական (հինգ հարյուր հազարական) ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Ռ.Պապյանն ազատվել է նշանակված պատիժները կրելուց:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատախազ Ա.Պողոսյանը:

2013 թվականի հունվարի 10-ին ամբաստանյալ Ռ.Պապյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել վճարելի բողոքը և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը:

Վճարելի դատարանի 2013 թվականի հունվարի 23-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից Ռ.Պապյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել, և Առաջին ատյանի դատարանի կողմից նշված հոդվածներով նրա նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացվել հետևյալ արարքների համար.

Ռ.Պապյանը, հանդիսանալով ոստիկանության Տավուշի մարզի քննչական բաժնում քննվող թիվ 56103410 քրեական գործով մեղադրյալ Էդվարդ Քոսակյանի շահերի պաշտպան, խոշոր չափերի գումար հափշտակելու դիտավորությամբ, վերջինիս նախնական կալանքից ազատելու պատրվակով, գիտակցելով իր ծառայողական լիազորությունների շրջանակում հիշյալ խոստումը կատարելու անհնարինությունը, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով Էդ. Քոսակյանի հորը՝ Սերժիկ Քոսակյանին համոզել, դրդել է առանձնապես խոշոր չափերով կաշառք տալ իր ծանոթ պաշտոնատար անձանց, ապա ստանալով վերջինիս համաձայնությունը՝ 2010 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Ա.Քոսակյանից խաբեությամբ հափշտակել է խոշոր չափի՝ 1.087.775 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար գումար, որի պատճառով Ա.Քոսակյանն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել:

Բացի այդ, Ռ.Պապյանը խարդախությամբ ուրիշի գույքին տիրանալու նպատակով 2011 թվականի փետրվարին, չարաշահելով Ա.Քոսակյանի վստահությունը, իր ծանոթ պաշտոնատար անձանց կաշառք տալու և Էդ.Քոսակյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու նպատակով Ա.Քոսակյանից պահանջել է խոշոր չափի՝ 1.807.000 ՀՀ դրամին համարժեք 5.000 ԱՄՆ դոլար գումար, ապա վստահությունն ամրապնդելու նպատակով 2011 թվականի փետրվարի 28-ին Էդ. Քոսակյանին է վերադարձրել վերջինիս անձնագիրը՝ հավաստիացնելով, որ քրեական գործը կարճվել է: Ստանալով իր անձնագիրը՝ Էդ. Քոսակյանը լքել է Հայաստանի Հանրապետության տարածքը, որի համար վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Տեղեկանալով այդ մասին և գիտակցելով, որ Ռ.Պապյանը նպատակ է հետապնդում խարդախությամբ հափշտակել իր 5.000 ԱՄՆ դոլար գումարը՝ Ա.Քոսակյանը հրաժարվել է վերջինիս գումար տալ, որի պատճառով Ռ.Պապյանն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ202-203, 205-207, հատոր 2, թերթ 161):

6. Տուժող Ա.Քոսակյանը 2011 թվականի մայիսի 10-ին հաղորդում է տվել այն մասին, որ իր որդու վերաբերյալ քրեական գործը կարճելու համար պաշտպան Ռ.Պապյանը պահանջել և ստացել է 3.000 ԱՄՆ դոլար, բացի այդ, պահանջել է

և 5.000 ԱՄՆ դոլար և խնդրել է նրան ենթարկել պատասխանատվության (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 47):

Նախաքննության մարմինը 2012 թվականի մայիսի 18-ին Ս.Քոսակյանի նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացրել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 236-237):

7. Գործի քննության ընթացքում Ս.Քոսակյանի տված ցուցմունքների համաձայն՝ 2010 թվականի սեպտեմբերի 20-ին նա տեղեկացել է, որ որդին՝ Էդ. Քոսակյանը, ձերբակալվել է և պահվում է ոստիկանության Իջևանի բաժնում: 2010 թվականի սեպտեմբերի 23-ին տեղեկանալով, որ նույն օրը պետք է քննարկվի որդու նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը՝ ցանկացել է վերջինիս շահերի պաշտպանության համար փաստաբան վարձել և այդ նպատակով ծանոթանալով փաստաբան Ռ.Պապյանի հետ՝ խնդրել է նրան ստանձնել որդու շահերի պաշտպանությունը, որից հետո վերջինս 150.000 ՀՀ դրամ գումարի դիմաց համաձայնվել է հանդես գալ որպես Էդ. Քոսակյանի պաշտպան: Հաջորդ օրը՝ 2010 թվականի սեպտեմբերի 24-ին, ըստ պայմանավորվածության, Ս.Քոսակյանը Ռ.Պապյանին վճարել է 150.000 ՀՀ դրամը: Այնուհետև Ռ.Պապյանն առաջարկել է Էդ.Քոսակյանին նախնական կալանքից ազատելու համար իրեն տալ 3.000 ԱՄՆ դոլար՝ նշելով, որ 1.000-ական ԱՄՆ դոլար կաշառք պետք է տա երեք պաշտոնատար անձի՝ չնշելով նրանց անունները: 2010 թվականի սեպտեմբերի 27-ին տեղեկանալով, որ որդուն արդեն ազատել են նախնական կալանքից՝ Ս.Քոսակյանը զնացել է Իջևան քաղաք, գրասենյակում հանդիպել Ռ.Պապյանին և այլ անձանց բացակայության պայմաններում նրան փոխանցել 2.500 ԱՄՆ դոլար գումար՝ միաժամանակ խոստանալով մնացած 500 ԱՄՆ դոլարը տալ սեղմ ժամկետում: 2010 թվականի նոյեմբերին Ռ.Պապյանին է փոխանցել նաև 500 ԱՄՆ դոլարը: Որդուն կալանքից ազատելուց հետո Ռ.Պապյանը Ս.Քոսակյանին հայտնել է, որ տրված 3.000 ԱՄՆ դոլարը որպես կաշառք տվել է դատավորին, դատախազին և պետին, սակայն իրեն չի ասել, թե ովքեր էին այդ անձինք, չի նշել վերջիններիս ազգանունները: Ինքը զիտակցել և հասկացել է, որ կաշառք է տալիս և կարող է դրա համար պատասխանատվության ենթարկվել, սակայն եթե Ռ.Պապյանը նշված գումարն իրենից չպահանջեր, ինքը չէր տա: Նշված գումարը ստանալուց հետո Ռ.Պապյանը պահանջել է 5.000 ԱՄՆ դոլար գումար՝ պաշտոնատար անձանց կաշառք տալու համար, որպեսզի կարճվի քրեական գործի վարույթը: Նշված գումարը տալու համար ցանկացել է վաճառել բնակարանը, սակայն կինը թույլ չի տվել: 2011 թվականի փետրվարի 28-ին որդուն կանչել են հարցաքննության, որի համար վերջինս Ռ.Պապյանի հետ ուղևորվել է Վանաձոր քաղաք, սակայն այլևս տուն չի վերադարձել: Հետագայում իմացել է, որ որդին պաշտպան Ռ.Պապյանի միջոցով վերցրել է անձնագիրը և լքել է ՀՀ տարածքը, որպեսզի երկու ամիս աշխատի և 5.000 ԱՄՆ դոլարով վերադառնա Հայաստան: Իմանալով այդ՝ հասկացել է, որ Ռ.Պապյանը չարաշահել է իր վստահությունը և պաշտոնատար անձանց կաշառք տալու պատրվակով իրենից հափշտակել է 3.000 ԱՄՆ դոլար, որի մասին հետագայում հայտնել է իրավապահ

մարմիններին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 20-24, 45-51, 54, 98-102, 122-123, 146-147, 176-177):

8. Առաջին առյայտի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Ամբաստանյալ Ռ-ադիկ Լիպարիտի Պապյանին մեղաազրված արարքները հաստատված են ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով համապատասխանաբար ճիշտ են որակված, որոնց համար նա ենթակա է պատժի:(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 163):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-186-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող Վաղարշակ Ռ-ազմիկի Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2001 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ հանգել է այն հետևության, որ «եթե անձը որևէ մեկից գումար է ստանում պաշտոնատար անձին որպես կաշառք տալու համար, նպատակ չունենալով այդ անել և յուրացնում է գումարը, ապա արարքը պետք է որակվի որպես խարդախություն: Ընդ որում, նշանակություն չունի՝ նշվել է կոնկրետ պաշտոնատար անձ, որին ենթադրվում է հանձնել կաշառքը, թե ոչ: Պաշտոնատար անձին իբրև կաշառք տալու համար տուժողից գումար ստանալը, որպես խաբեության տարր, իրենից ներկայացնում է խարդախության կառուցվածքային հատկանիշ և ՀՀ քրեական օրենսգրքի 17-186-րդ հոդվածով լրացուցիչ որակում չի պահանջում»:

Նույնանման փաստական հանգամանքներով Հովհաննես Պերճի Տեր-Հարությունյանի վերաբերյալ ԵՔԲԴ/0044/01/08 գործով ՀՀ վերաքննիչ դատարանին իր 2008 թվականի մայիսի 17-ի դատավճռով բավարարել է ամբաստանյալի վերաքննիչ բողոքը և Հովհաննես Պերճի Տեր-Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 12-ի դատավճիռը բեկանել է:

Հովհաննես Պերճի Տեր-Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ ճանաչել է անմեղ և արդարացրել (...):

Պաշտպանության կողմից որպես իրավական փաստարկ մատնանշված՝ փաստաբաններ Արթուր Աթարբեկյանի, Կարեն Մարգարյանի, Արտակ Բաբախանյանի, Արտավազ Փարսադանյանի վերաբերյալ (...) գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռներ են կայացվել այնպիսի փաստական հանգամանքներով, որոնք նույնանման են սույն գործի փաստական հանգամանքներին:

(...)

Քննության առնելով ամբաստանյալ Ռ.Պապյանի արարքը նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որակելու անթույլատրելիության վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմնավորումները, նկատի ունենալով, որ Վաղարշակ Ռ-ազմիկի Խաչատրյանի վերաբերյալ և սույն քրեական գործի փաստական հանգամանքները նույնանման են, և Վ. Խաչատրյանի

վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2001 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման հիմնավորումները, այդ թվում օրենքի մեկնաբանությունները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, պարտադիր են սույն գործի քննության ժամանակ՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում ամբաստանյալ Ռ.Պապյանի կատարած մեկ արարքին տրվել են քրեաիրավական երկու որակումներ, խոշոր չափերով խարդախությունը, ինչպես նաև դրա հանցավորձը որակվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու դրդյություն, մինչդեռ տվյալ դեպքում պաշտոնատար անձին իբրև կաշառք տալու համար տուժողից զումար ստանալը, որպես խաբեության տարր, իրենից ներկայացնում է խարդախության կառուցվածքային հատկանիշ և ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով լրացուցիչ որակում չի պահանջում:

Այսպիսով, ամբաստանյալ Ռ.Պապյանի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ բերված վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ դատական ակտը պետք է բեկանել և փոփոխել ամբաստանյալի կատարած արարքների իրավաբանական որակման մասով՝ նկատի ունենալով, որ դրանք պետք է որակվեին միայն ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով լրացուցիչ որակման (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 264-266):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, կիրառել է քրեական օրենքի այն նորմը, որը ենթակա չէ կիրառման, և արդյունքում սխալ հետևության է հանգել ամբաստանյալ Ռ.Պապյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ:

11. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 4-րդ մասը, եզրահանգում է արել այն մասին, որ կաշառք տալու դրդիչն այն անձն է, ով մեկ ուրիշի դրդում է կաշառք տալուն: Նման անձի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով՝ որպես կաշառք տալու դրդյություն՝ հղում կատարելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համապատասխան մասի վրա:

Բողոքաբերի կարծիքով՝ այն դեպքում, երբ կաշառք տալու նախաձեռնությունը բխում է կարծեցյալ միջնորդից, որն ի սկզբանե նպատակ չունի կաշառքի առարկան փոխանցել պաշտոնատար անձին, այլ ցանկանում է հափշտակել այն, ապա վերջինիս արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝

որպես խարդախություն և կաշառք տալու դրդաբանություն: Քանի որ այս դեպքում կաշառք տալու հանցագործությունն ավարտին չի հասցվում անձի կամքից անկախ պատճառներով, ապա կաշառք տվող անձի արարքը պետք է որակվի որպես կաշառք տալու փորձ, իսկ կարծեցյալ միջնորդի արարքը՝ որպես կաշառք տալու փորձի դրդաբանություն:

Վերոշարադրյալ վերլուծության լույսի ներքո վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները՝ բողոք բերած անձը նշել է, որ նկատի ունենալով, որ Ս.Քոսակյանն իր կողմից կաշառք տալու փորձի մասին հայտնել է իրավապահ մարմիններին, նախաքննության մարմինը որոշում է կայացրել վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին, սակայն հաշվի առնելով, որ Ռ.Պապյանն ինքն է դրդել կաշառք տալու, և նկատի ունենալով, որ կաշառք տալու ավարտված հանցակազմն այս դեպքում բացակայում է, նախաքննության մարմինը Ռ.Պապյանի արարքը որակել է որպես խարդախություն և առանձնապես խոշոր չափի կաշառք տալու դրդաբանության փորձ:

12. Առաջին ստյանի դատարանը, համաձայնելով նախաքննության մարմնի կողմից Ռ.Պապյանի արարքներին տրված քրեաիրավական որակումներին, վերջինիս նկատմամբ այդ հողվածներով կայացրել է մեղադրական դատավճիռ:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չհետազոտելով գործով ձեռք բերված ապացույցները և դրանց նվազ նշանակություն տալով, խնդրո առարկայի վերաբերյալ չարտահայտելով իր սեփական դիրքորոշումը, վկայակոչել է հիմնականում ոչ նույնանման փաստական հանգամանքներով դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, որոնք միևնույն ժամանակ օրենքի միատեսակ կիրառության առումով դատարանների համար որևէ նշանակություն ունենալ չեն կարող, և արդյունքում կայացրել է անհիմն և չպատճառաբանված որոշում Ռ.Պապյանի մեղադրանքի ծավալից ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը հանելու վերաբերյալ:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ստյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի դատավճիռը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ կաշառք տալու դրդաբանությամբ գուգորդված խարդախության դեպքում հանցավորի արարքներին քրեաիրավական ճիշտ որակում տալու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Ռ.Պապյանի արարքում առկա են միայն ծանրացնող հանգամանքներում կատարված խարդախության և դրա փորձի հատկանիշները և բացակայում են կաշառք տալու փորձի դրդչության հատկանիշները:

16. Խարդախության հանցակազմի քրեաիրավական բնութագիրը Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության է ենթարկվել *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ: Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...)Խարդախությունը դասվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ հափշտակությունների շարքին: Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի բովանդակությունից, խարդախությունը «խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերել[[ն]]» է:

Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Արդյոք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում:

(...)Օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը

բացակայում է:

Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա:

Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը, և եթե ապացուցվի, որ ունեցել է, ապա խարդախության հանցակազմն առկա է:

Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում, որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմ առկա չէ» (տե՛ս Լիա Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 22-26-րդ կետերը):

17. Վերահաստատելով և զարգացնելով *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես հափշտակությունների համար ընդհանուր հատկանիշ է հանդիսանում ուրիշի գույքին տիրանալը, որը կատարվում է տարբեր եղանակներով: Խարդախության դեպքում, ինչպես արդեն նշվեց, գույքը հանցավորին է անցնում սեփականատիրոջ կամքով, սակայն խաբեության կամ վստահությունը չարաշահելու հետևանքով: Ընդ որում, գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու նպատակով սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցավորը կարող է ազդել (ներգործել) տարբեր եղանակներով:

Մասնավորապես, իր հանցավոր նպատակն իրագործելու, գույքն իր տիրապետության տակ վերցնելու և այն հափշտակելու նպատակով խարդախություն կատարող անձը կարող է գույքի սեփականատիրոջը համոզել, հորդորել կատարելու այս կամ այն հանցագործությունը: Սեփականատերը, համաձայնելով կատարել նշված հանցագործությունը և խարդախություն կատարող անձին դիտարկելով որպես իրեն հանցակից, ընկնում է մոլորության մեջ և սխալ պատկերացնելով հանցագործության դեպքի զարգացումը, արարքի և հետևանքի միջև պատճառական կապը կամ հանցագործության մյուս հանգամանքները՝ կամավոր կերպով գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները հանձնում է խարդախին կամ այլ անձի կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

18. Սույն գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալ Ռ.Պապյանը իր հանցավոր մտադրությունն իրագործելու և Ս.Քոսակյանի գույքը խարդախությամբ հափշտակելու նպատակով վերջինիս դրդել է իր միջոցով կաշառք տալ պաշտոնատար անձանց, որից հետո Ս.Քոսակյանից ստանալով կաշառքի առարկան՝ հափշտակել է այն (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.Պապյանի արարքին ճիշտ քրեաիրավական

գնահատական տալու համար անհրաժեշտ է համադրված վերլուծության ենթարկել հանցակցությունը և հանցափորձը սահմանող, ինչպես նաև կաշառք տալու և կաշառքի միջնորդության համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմերը:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը»:

Հանցակցության հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝

«(...) հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ.

1. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից
2. գործողությունների համատեղությունը
3. հանցակցության դիտավորյալ բնույթը:

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործության կատարմանը: Հանցակցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիտավորյալ մեղքով և միայն դիտավորյալ հանցագործություններում» (տե՛ս Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռ-աֆիկ Արայիկի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-րդ կետը):

Մեջբերված դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը զարգացրել է *Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի* գործով կայացված որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) հանցակցի քրեական պատասխանատվության հիմքում ընկած է ոչ միայն նրա և կատարողի արարքի միջև պատճառական կապի առկայությունը, այլ նաև

նրա կողմից կատարողի արարքի և դրա հետևանքների նկատմամբ որոշակի գիտակցական-կամային վերաբերմունք դրսևորելը:

Այսպես՝ հանցակցության սուբյեկտիվ կողմը նախատեսում է մեղքի բացառապես դիտավորյալ ձև, ընդ որում, որոշակի հանցանքի կատարմանն այլ անձանց հետ համատեղ մասնակցելու դիտավորությունն արտահայտվում է միայն ուղղակի ձևով, իսկ հանցագործության վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորվող դիտավորյալ մեղքի տեսակը կարող է լինել և՛ ուղղակի, և՛ անուղղակի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ յուրաքանչյուր հանցակից պետք է՝

1) գիտակցի, որ համատեղ գործում է կատարողի կամ այլ հանցակցի հետ.

2) գիտակցի, որ իր արարքն անհրաժեշտ պայման է մյուս հանցակցի կողմից արարք կատարելու համար և ցանկանա համատեղ մասնակցել հանցագործությանը.

3) նյութական հանցակազմի դեպքում նախատեսի հանրորեն վտանգավոր հետևանքը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը» (տե՛ս Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԲԳ/0174/01/11 որոշման 17-րդ կետը):

20. ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դ-րդիչ է համարվում այն անձը, ով մեկ ուրիշ անձի դրդել է հանցանք կատարելու՝ համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով»:

Սույն որոշման նախորդ կետում մեջբերված դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրդիչը, ազդելով կատարողի գիտակցության և կամքի վրա, տարբեր եղանակներով (համոզելով, նյութապես շահագրգռելով, սպառնալով և այլն) վերջինիս մոտ առաջացնում է հանցանք կատարելու դիտավորություն և վճռականություն: Դ-րդության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով մեկ ուրիշին դրդում է հանցանքի կատարմանը, նախատեսում և ցանկանում է այդ հանցանքի կատարումը:

21. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցավորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Մեջբերված քրեափրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Բաղդասարյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Օբյեկտիվ կողմից հանցավորձը բնութագրվում է՝

1. գործողությամբ (անգործությամբ), որն անմիջականորեն ուղղված է հանցանքի կատարմանը,

2. հանցագործությունն անձի կամքից անկախ հանգամանքներով ավարտին

չհասցնելով:

Հանցավորձն առկա է այն ժամանակ, երբ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում, այլ կերպ՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումն սկսվում է, սակայն չի ավարտվում: Նյութական հանցագործության դեպքում չի առաջանում օրենքով նախատեսված հետևանքը կամ հետևանքն առաջանում է, սակայն ոչ հանցավորի դիտավորությամբ նախատեսվածը (...):

Հանցավորձը բնութագրող (...) հատկանիշն այն է, որ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Սուբյեկտիվ կողմից հանցավորձը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ» (տե՛ս Արարատ Վազգենի Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷՂ-0168/01/10 որոշման 16-րդ կետը):

22. Ամփոփելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

ա) դրդչի արարքը ենթակա է որակման կատարողի արարքի համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի 38-րդ հոդվածին: Այն դեպքում, երբ հանցագործությունն ավարտին չի հասցվում կատարողի կամքից անկախ պատճառներով, դրդչի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի 38-րդ և 34-րդ հոդվածներին,

բ) այն դեպքում, երբ դրդչությունը ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված է որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ (օրինակ՝ անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը (ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մաս), որը կատարվում է խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով, ինքնասպանության հակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդված)), արարքը որակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի վրա հղում չի կատարվում,

գ) դրդչությունը կարող է առանձին հանցագործությունների կատարման միջոց հանդիսանալ (օրինակ՝ խարդախությունը, որը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով):

23. ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձին կաշառք տալու, այն է՝ պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալու կամ առաջարկելու կամ տրամադրելու համար՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպատելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է խրախուսական նորմ, որի համաձայն՝ «Կաշառք տվող անձն ազատվում է

քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում կաշառքի միջնորդության, այն է՝ կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելու համար:

Մեջբերված քրեաիրավական դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ կաշառք տալը կարող է կատարվել ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդի միջոցով: Այլ խոսքով՝ կաշառքի միջնորդությունը կաշառք տալուն աջակցելու ձևերից մեկն է, որը տարբերվում է կաշառք տալու հանցակցության ձևերից՝ կազմակերպումից, դրդչությունից և օժանդակությունից: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կաշառքի միջնորդության հանցակազմն իր մեջ չի ներառում այսպես կոչված «կարծեցյալ միջնորդության» դեպքերը: «Կարծեցյալ միջնորդությունն» այն իրադրությունն է, երբ անձը կաշառք տվողից վերցնում է կաշառքի առարկան՝ իբրև թե պաշտոնատար անձին հանձնելու համար, սակայն մտադրություն չունի փոխանցել այն:

Ընդ որում, հնարավոր են «կարծեցյալ միջնորդության» մի քանի իրավիճակներ, այն է՝

1) կաշառք տալու նախաձեռնություն ցուցաբերում է «կարծեցյալ միջնորդը», ով համոզում է կաշառք տվողին, որ ինքն անհրաժեշտ կապեր ունի համապատասխան պաշտոնատար անձի հետ և դրդում է իրեն տալ կաշառքի առարկան՝ համապատասխան պաշտոնատար անձին փոխանցելու համար, սակայն չի կատարում իր խոստումը և չի փոխանցում կաշառքի առարկան,

2) կաշառք տալու նախաձեռնություն ցուցաբերում է կաշառք տվողը, ով «կարծեցյալ միջնորդին» համոզում է կաշառքը տալ պաշտոնատար անձին, իսկ «կարծեցյալ միջնորդը» համաձայնվում է՝ նպատակ չունենալով կաշառքի առարկան փոխանցել պաշտոնատար անձին:

Ինչ վերաբերում է «կարծեցյալ միջնորդի» արարքի որակմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքերում արարքը ճիշտ որակելու համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել և գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորել, թե ով է նախաձեռնել կաշառք տալը՝ «կարծեցյալ միջնորդը», թե կաշառք տվողը: Ուստի, այն դեպքում, երբ «կարծեցյալ միջնորդը» որևէ անձի օգտին գործողություններ (անգործություն) կատարելու նպատակով դրդում է անձին իրեն փոխանցել կաշառքի առարկան, որպեսզի ինքը փոխանցի պաշտոնատար անձին, սակայն ի սկզբանե նման մտադրություն չի ունենում, այլ ցանկանում է հափշտակել այն, ապա արարքը պետք է որակվի հանցակցության կանոններով՝ որպես խարդախություն և կաշառք տալու փորձի դրդչություն: Ընդ որում, որևէ իրավական նշանակություն չունի՝ դրդիչը կոնկրետ նշել է, թե որ պաշտոնատար անձին է ենթադրվում փոխանցել կաշառքի առարկան, թե ոչ:

Հետևաբար «կարծեցյալ միջնորդի» արարքը հանցագործությունների համակցության կանոններով որակելու համար անհրաժեշտ է պարզել, թե գործով

ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվե՞լ է արդյոք, որ կաշառք տալը նախաձեռնել է «կարծեցյալ միջնորդը» և անձի մեղադրանքի ծավալում ընդգրկվե՞լ է արդյոք, որ դրդիչը համոզելու, հորդորելու կամ այլ եղանակով ազդել է կաշառք տվողի գիտակցության և կամքի վրա:

24. Սույն որոշման 16-22-րդ կետերում շարադրված վերլուծության հետ համադրելով սույն որոշման 23-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «կարծեցյալ միջնորդի» արարքը որպես կաշառք տալու դրդաբանություն և խարդախություն որակվում է այն դեպքում, երբ ինչպես «կարծեցյալ միջնորդը», այնպես էլ կաշառք տվողը գիտակցում են, որ հանցանք են կատարում և ցանկանում են դա: Բացի այդ, ինչպես «կարծեցյալ միջնորդը», այնպես էլ կաշառք տվողը գիտակցում են, որ գործում են համատեղ, թեև նրանց նպատակներն ու շարժառիթները տարբեր են:

«Կարծեցյալ միջնորդի» արարքը որպես կաշառք տալու դրդաբանություն և խարդախություն որակելը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կաշառք տալու դրդաբանությունն ինքնուրույն հանցագործություն է և թեև պարունակում է խարդախության հատկանիշներ, այնուամենայնիվ չի հանդիսանում խարդախության միջոց: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «կարծեցյալ միջնորդի» արարքը խարդախությունից բացի, կարող է պարունակել նաև այլ հանցագործության հատկանիշներ (օրինակ՝ անձի գույքին խարդախությամբ տիրանալու նպատակով հանցավորը դրդում է փաստաթղթեր կեղծել: Նման դեպքերում արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ որպես խարդախություն և կեղծ փաստաթղթեր պատրաստելու կամ իրացնելու դրդաբանություն):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ, անկախ այն հանգամանքից, թե ով է նախաձեռնել կաշառք տալը, կաշառք տվողի արարքը պետք է որակվի որպես կաշառք տալու փորձ, քանի որ վերջինս որոշ գործողություններ է կատարում, որոնք անմիջականորեն ուղղված են հանցանք կատարելուն (օրինակ՝ միջնորդին փոխանցում է կաշառքի առարկան), սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվում նրա կամքից անկախ հանգամանքներով:

25. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Պապյանը խաբեության և Ս.Քոսակյանի վստահությունը չարաշահելու եղանակով, վերջինիս որդուն նախնական կալանքից ազատելու պատրվակով համոզել, դրդել է իր միջոցով առանձնապես խոշոր չափերով կաշառք տալ իր ծանոթ պաշտոնատար անձանց, սակայն ստանալով պահանջված գումարը՝ հափշտակել է այն: Բացի այդ, Ռ.Պապյանն իր պաշտպանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու նպատակով, նույն եղանակով Ս.Քոսակյանից պահանջել է խոշոր չափ հանդիսացող գումար՝ 5.000 (հինգ հազար) ԱՄՆ դոլար: Սկզբում համաձայնվելով Ս.Քոսակյանը հետագայում հասկացել է, որ Ռ.Պապյանը խաբում է իրեն, հրաժարվել է նրան գումար տալ, որի պատճառով իր կամքից անկախ հանգամանքներում Ռ.Պապյանը հանցագործությունն ավարտին չի հասցրել (տե՛ս սույն որոշման 5-րդ և 7-րդ կետերը):

Նախաքննության մարմինը Ռ.Պապյանի արարքը որակել է ՀՀ քրեական

օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես երկու դրվագ խարդախություն և կաշառք տալու փորձի դրդչություն (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Ս.Քոսակյանի նկատմամբ որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նկատի ունենալով, որ վերջինս կաշառք տալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ռ.Պապյանին մեղսագրված արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ճիշտ են որակված և նրա նկատմամբ այդ հոդվածներով կայացրել է մեղադրական դատավճիռ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, ընդհակառակը, գտել է, որ Ռ.Պապյանի կատարած արարքների իրավաբանական որակման առումով սխալ է թույլ տրվել: Նրա արարքները պետք է որակվեին միայն ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով լրացուցիչ որակման (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

26. Սույն որոշման 16-24-րդ կետերում շարադրված վերլուծության համատեքստում գնահատելով սույն որոշման 25-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Ռ.Պապյանի արարքում առկա են միայն ծանրացնող հանգամանքներում կատարված խարդախության և դրա փորձի հատկանիշները, և բացակայում են կաշառք տալու փորձի դրդչության հատկանիշները:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին, որոնցով Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է իր որոշումը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ գործերի և սույն գործի փաստական հանգամանքների միջև առկա են էական տարբերություններ, դրանցով «կարծեցյալ միջնորդ» հանդիսացող անձինք կաշառք տալու դրդչություն չեն կատարել: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դատական ակտերը, այդ թվում՝ Վաղարշակ Ռազմիկի Խաչատրյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2001 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը օրենքի միատեսակ կիրառության առումով դատարանների համար պարտադիր չեն:

Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում նաև Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշման հետ, որ Առաջին ատյանի կողմից Ռ.Պապյանի կատարած մեկ արարքին տրվել է քրեաիրավական երկու որակում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ռ.Պապյանը

կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված երկու տարբեր հանցագործություններ, որոնցից մեկն ուղղված է սեփականության դեմ, իսկ մյուսը՝ պետական ծառայության դեմ: Հետևաբար, Ռ.Պապյանի արարքներին Առաջին ատյանի դատարանի կողմից տրված քրեախրավական որակման պայմաններում կրկնակի դատապարտումը բացակայում է:

27. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.Պապյանին առաջադրված մեղադրանքի ծավալից ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը հանելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել քրեական օրենքը և դրա արդյունքում չի կիրառել քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Վերոնշյալ սխալն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատավճռին օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ռադիկ Լիպարիտի Պապյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԳ/0267/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

Ս.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Ա.ԱՐԱՄՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝*

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հետևանքով դատական ակտերը վերանայելու վերաբերյալ դատապարտյալ Նորա Ռ-աֆայելի Էվոյանի պաշտպան Սամվել Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի օգոստոսի 19-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնում հարուցվել է թիվ 52104911 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ Նորա Էվոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2011 թվականի դեկտեմբերի 1-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճռով

Ն.Էվոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ գրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ն.Էվոյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը:

4. Վերոգրյալ որոշման դեմ Ն.Էվոյանի պաշտպանը 2012 թվականի հուլիսի 14-ին վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ թողնվել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

5. Ն.Էվոյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1062 որոշումը:

6. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1062 որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար՝ Ն.Էվոյանի պաշտպան Ս.Հովհաննիսյանը 2013 թվականի հունվարի 8-ին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

7. Վճռաբեկ դատարանը 2013 թվականի փետրվարի 22-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և բողոքի քննության համար Լական նշանակություն ունեցող փաստերը

8. Ն.Էվոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել, և նա դատապարտվել է այն բանի համար, որ 2011 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 21-ի սահմաններում, Սպիտակ-Երևան ավտոճանապարհի 5-րդ կիլոմետրի վրա իր վարած «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի ավտոմեքենայով իրականացնելով ոչ պատշաճ և վտանգավոր երթևեկություն, մասնավորապես, անտեսելով ճանապարհային գծանշումները, հանդիպակաց երթևեկող «ՎԱԶ-21140» մակնիշի ավտոմեքենայի ընթացքն իր երթևեկության համար վտանգավոր գնահատելուց հետո փոխելով իր ավտոմեքենայի շարժման ուղղությունը, մանևրելով ձախ ու իր ավտոմեքենան դուրս բերելով հանդիպակաց ուղեմաս՝ տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն և թույլ տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի, ԴԵԿ-ի 2-րդ, 67-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի ավտոմեքենան առջևի մասով բախվել է իր երթևեկելի ուղեմասի աջ հատվածով երթևեկող «ՎԱԶ-21140» մակնիշի ավտոմեքենայի առաջնամասին,

ինչի հետևանքով վերջինիս վարորդ Թ.Մելքոնյանին անգգուշությամբ պատճառվել է մահ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 100, 266):

9. Գործի քննության ընթացքում Ն.Էվոյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 21-ի սահմաններում, իր վարած «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի ավտոմեքենայով, միայնակ, 70-80 կմ/ժ արագությամբ ընթացել է Երևան-Սպիտակ ավտոճանապարհով: Նշված ավտոճանապարհի Սպիտակի ոլորաններում շուրջ 300 մետր հեռավորությունից նկատելով իր ուղեմասով հանդիպակաց ուղղությամբ մեկ աջ, մեկ ձախ ընթացող «Վազ-21140» մակնիշի ավտոմեքենան, մտածելով, որ վարորդը կարող է քնած լինի կամ վատառողջ է՝ ձայնային ազդանշաններ է տվել, իջեցրել է իր ավտոմեքենայի արագությունը, մոտեցել է ճանապարհի հոծ գծին՝ չհատելով այն, և երբ իր ու հանդիպակաց ընթացող ավտոմեքենայի միջև հեռավորությունը եղել է շուրջ 3 մետր, վերջինս կտրուկ փոխել է շարժման ուղղությունը դեպի իր ուղեմաս և երթևեկելի գոտու իր ուղեմասում բախվել է իր ավտոմեքենային: Վթարի հետևանքով իր վարած ավտոմեքենան կանգնել է ճանապարհին ուղղահայաց՝ հետևի անվադողերը մնալով իր ուղեմասում, իսկ «Վազ-21140» մակնիշի ավտոմեքենան՝ վերջինիս ուղեմասում՝ առջևի մասով դեպի Երևանի ուղղությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 19-22, 23, 112-117):

10. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճի համաձայն՝ «(...) Այսպիսով, դատաքննությամբ, գործի տվյալներով, ամբաստանյալի, տուժողի իրավահաջորդի, փորձագետի ցուցմունքների, ձեռք բերված այլ ապացույցների գնահատմամբ, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ վերլուծության հիման վրա և ներքին համոզմամբ դատարանը հանգեց այն եզրակացության, որ (...) Նորա Ռաֆայելի Էվոյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված 2-րդ մասով նախատեսված արարք, ու նա քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի նշված հանցագործությունը կատարելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 266-268):

11. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. (...) Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, հանգում է այն հետևության, որ ընդհանուր իրավասության դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ հանգել է ճիշտ հետևության, որ ամբաստանյալ Նորա Էվոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքի քրեաիրավական գնահատականը ճիշտ է, ուստի

դատավճիռը, ինչպես արարքի որակման, այնպես էլ նշանակված պատժի մասով բեկանելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու հիմքեր չկան, այն օրինական և հիմնավորված է (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 336-337):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Գտնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՄԳՈ-1062 որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով նոր հանգամանք է՝ բողոք բերած անձը խնդրել է 2012 թվականի հուլիսի 14-ին բերված վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայել Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշումը, ինչպես նաև սույն գործով ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը:

13. 2012 թվականի հուլիսի 14-ի վճռաբեկ բողոքում նշված է, որ սույն գործով նախաքննության մարմինը և դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 25-րդ, 107-րդ, 108-րդ, 125-րդ, 126-րդ, 127-րդ, 218-րդ, 358-րդ հոդվածները, ինչի արդյունքում կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասը, որը ենթակա չէր կիրառման:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ դեպքի վայրի զննությունը կատարվել է ակնհայտ թերի, որևէ նշում չի կատարվել դեպքի վայրում անվաղողորի և արգելակման հետքերի առկայության մասին: Բախման հավանական վայրում թափված են եղել պլաստմասե և ապակու կտորներ, հեղուկ, որոնցից ոչ մի նմուշ չի վերցվել, և դատաքիմիական փորձաքննություն չի նշանակվել՝ դրանց պատկանելիությունը պարզելու համար: Բողոքի հեղինակը նշել է նաև, որ տրանսպորտային միջոցների զննությունը կատարվել է դեպքից հինգ օր հետո տուգանային հրապարակում, և պարզ չէ, թե դեպքի վայրից մեքենաների տեղափոխման արդյունքում արդյոք դրանք չեն վնասվել կամ չեն ենթարկվել այնպիսի փոփոխությունների, որոնք կարող էին ազդել ելակետային տվյալների վրա:

14. Ըստ բողոքաբերի՝ թերի է կատարվել նաև դատավտոտեխնիկական փորձաքննությունը, մասնավորապես՝ այն կազմվել է ենթադրությունների հիման վրա, փորձագետին չեն տրվել ավտովթարի ելակետային տվյալները, ինչի պատճառով փորձագետը չի կարողացել պատասխանել ավտովթարի հանգամանքներին վերաբերող բազմաթիվ հարցերի: Բացի այդ, չի պարզվել, թե ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հարցում յուրաքանչյուր վարորդ մեղքի ինչ աստիճան է ունեցել, ինչ վարքագիծ է դրսևորել մեքենան վարելիս:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ սույն գործով չի նշանակվել դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն՝ պարզելու համար, թե արդյոք դեպքի պահին Ն.Էվոյանը գտնվել է շոկային

վիճակում, թե ոչ և արդյոք ունակ է եղել ընկալել և վերարտադրել կատարվածը:

15. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել նոր դատաքննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Նոր հանգամանքով դատական ակտի վերանայումը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. քաղաքացի Նորա Էվոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԳՈ-1062 որոշումն արդյո՞ք նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշումը վերանայելու համար:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը կարող է բերվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ՝ այդ ակտը ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Քաղաքացի Նորա Էվոյանի դիմումի հիման վրա քննության առնելով նշված դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԳՈ-1062 որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ: (...) սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար: (...)»:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով

այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի:

(...)»:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի որոշման պատճենը պաշտպանության կողմին ուղարկվել է 2012 թվականի հունիսի 11-ին, որը ստացել են 2012 թվականի հունիսի 14-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 346, 352):

Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման դեմ պաշտպանության կողմը վճռաբեկ բողոք է բերել 2012 թվականի հուլիսի 14-ին, այսինքն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վճռաբեկության կարգով բողոքարկելու համար նախատեսված մեկամսյա ժամկետի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդված) խախտմամբ: Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 3-4-րդ կետերը):

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին (...) կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ (...) [դրա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁹-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով»:

20. Մեջբերված քրեադատավարական դրույթների, ինչպես նաև սույն որոշման 17-րդ կետում մեջբերված ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 18-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացի Նորա Էվոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԳՈ-1062 որոշումը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշումը վերանայելու համար: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է,

որ Ն.Էվոյանի պաշտպանի կողմից 2012 թվականի հուլիսի 14-ին ներկայացված վճռաբեկ բողոքի շրջանակներում անհրաժեշտ է վերանայել սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի որոշումը:

II. Ստորադաս դատարանների դատական ակտերի հիմնավորվածությունը.

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Ն.Էվոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով («Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգգուշությամբ առաջացրել է մարդու մահ») ստորադաս դատարանների կողմից կայացվել են արդյոք հիմնավորված և պատճառաբանված դատական ակտեր:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի*, ինչպես նաև *Ս.Սաքանյանի* գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես, *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեադատավարական օրենքով ապացույցներին և ապացուցման գործընթացին ներկայացվող պահանջները հետևյալն են.

ա) ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական

դատողություններ, կարծիքներ, այլ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողությունների, իրադարձությունների վերաբերյալ,

բ) այդ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով նշված աղբյուրներից և վերաբերեն կոնկրետ տվյալ գործին և ապացուցման առարկային,

գ) ապացույցները պետք է ձեռք բերվեն, ամրագրվեն և օգտագործվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով:

Նշված պահանջների պահպանման հետ է անմիջականորեն կապված ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցի լուծումը, որն իր հերթին կազմում է ապացույցների գնահատման բաղկացուցիչ մասը» (տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԴ/0632/01/08 որոշման 13-րդ կետը):

Ս.Սաքանյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված[ի] (...) համաձայն՝ միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

(...) Նշված հանգամանքներն իրենց ամբողջության մեջ կազմում են ապացուցման առարկան, որն օրենքում ձևակերպված է ընդհանուր տեսքով և կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել՝ հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները:

(...) Ապացուցման առարկա կամ ապացուցման ենթակա հանգամանքներ հասկացության հետ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կապում է «ապացույցների բավարարություն» հասկացությունը:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված

է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ինչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:

Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

Ի տարբերություն ապացուցման առարկայի՝ ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև երբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե երբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

- 1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,
 - 2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,
 - 3) անմեղության կանխավարկած:
- (...)

ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով, այդ պատճառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգտագործում է «ապացույցների համակցություն» հասկացությունը: Այնուհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

- 1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,
- 2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,
- 3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում» (տե՛ս Սիրակ Սաքանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 13-15-րդ և 17-րդ կետերը):

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

23.1. 2011 թվականի օգոստոսի 24-ին կազմվել են տրանսպորտային միջոցների զննության արձանագրություններն այն մասին, որ վնասված են «Վազ 21140» մակնիշի 07 SS 825 պետհամարանիշի ավտոմեքենայի առջևի և ձախակողմյան հատվածները, իսկ «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի 60 ՕՕ 990 պետհամարանիշի ավտոմեքենայի՝ առջևի հատվածը (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 36-43):

Մեջբերված փաստաթղթի վերլուծությունից երևում է, որ տրանսպորտային միջոցների զննությունը կատարվել է դեպքից հինգ օր հետո տուգանային հրապարակում, և այդ պայմաններում վարույթն իրականացնող մարմնի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել պարզելու, թե դեպքի վայրից մեքենաների տեղափոխման արդյունքում արդյո՞ք դրանք այլ վնասվածքներ չեն ստացել և չեն ենթարկվել այնպիսի փոփոխությունների, որոնք կարող էին ազդել ելակետային տվյալների վրա:

23.2. 2011 թվականի հոկտեմբերի 24-ին կազմվել է դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 33131108 եզրակացությունը, որի համաձայն՝ «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի 60 ՕՕ 990 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդը, երթևեկության ընթացքում իրականացնելով ոչ պատշաճ և վտանգավոր երթևեկություն, մասնավորապես անտեսելով ճանապարհային գծանշումները, հանդիպակաց երթևեկող «ՎԱԶ-21140» մակնիշի 07 SS 825 պետհամարանիշի ավտոմեքենայի երթևեկությունն իր երթևեկության համար վտանգավոր գնահատելուց հետո փոխելով իր ավտոմեքենայի շարժման ուղղությունը, մանրերով ձախ ու իր ավտոմեքենան դուրս բերելով հանդիպակաց ուղեմաս՝ տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն և թույլ տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի, ՃԵԿ-ի 2-րդ, 67-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, իր այդ գործողություններով ստեղծել է վթարային իրադրություն և դրանցով իսկ պայմանավորել տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը՝ ինքն իրեն գրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 72-81):

Մեջբերված փաստաթղթի վերլուծությունից երևում է, որ դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 33131108 եզրակացությունից պարզ չէ, թե «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի ավտոմեքենան բախման ժամանակ գտնվե՞լ է արդյոք ճանապարհի հոծ գծի նկատմամբ ուղղահայաց դիրքով, թե այդ դիրքն առաջացել է բախման արդյունքում, և հնարավո՞ր է արդյոք, որ «MITSUBISHI PAJERO STATION» մակնիշի ծանր ավտոմեքենան բախման հետևանքով թեքվեր մոտ 90 աստիճան, իսկ «ՎԱԶ-21140» մակնիշի ավտոմեքենան մնար տեղում:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Ն.Էվոյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 21-ի սահմաններում, իր վարած «MITSUBISHI PAJERO

STATION» մակնիշի ավտոմեքենայով, միայնակ, 70-80 կմ/ժ արագությամբ ընթացել է Երևան-Սպիտակ ավտոճանապարհով: Նշված ավտոճանապարհի Սպիտակի ոլորաններում շուրջ 300 մետր հեռավորությունից նկատելով իր ուղեմասով հանդիպակաց ուղղությամբ մեկ աջ, մեկ ձախ ընթացող «Վագ-21140» մակնիշի ավտոմեքենան, մտածելով, որ վարորդը կարող է քնած լինի կամ վատառողջ է՝ ձայնային ազդանշաններ է տվել, իջեցրել է իր ավտոմեքենայի արագությունը, մոտեցել է ճանապարհի հոծ գծին՝ չհատելով այն, և երբ իր ու հանդիպակաց ընթացող ավտոմեքենայի միջև հեռավորությունը եղել է շուրջ 3 մետր, վերջինս կտրուկ փոխել է շարժման ուղղությունը դեպի իր ուղեմաս և երթևեկելի գոտու իր ուղեմասում բախվել է իր ավտոմեքենային: Վթարի հետևանքով իր վարած ավտոմեքենան կանգնել է ճանապարհին ուղղահայաց՝ հետևի անվաղողերը մնալով իր ուղեմասում, իսկ «Վագ-21140» մակնիշի ավտոմեքենան՝ վերջինիս ուղեմասում՝ առջևի մասով դեպի Երևանի ուղղությամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Մինչդեռ, ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները, անտեսելով սույն որոշման 23-րդ կետում շարադրված հանգամանքները, ինչպես նաև Ն.Էվոյանի վերոնշյալ ցուցմունքը, գտել են, որ առկա են բավարար փաստական տվյալներ այն մասին, որ Ն.Էվոյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված 2-րդ մասով նախատեսված արարք (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը):

25. Սույն որոշման 23-24-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 22-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտեր կայացնելիս ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածում սահմանված՝ գործի արդարացի քննության սկզբունքի և 127-րդ հոդվածում ամրագրված՝ գործով ապացույցները գնահատելու կանոնների խախտումներ:

Հետևաբար, Ն.Էվոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի («Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզուգույնությամբ առաջացրել է մարդու մահ») հատկանիշներով հարուցված քրեական գործով ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը հիմնավորված և պատճառաբանված չեն:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված

քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն հիմք է դատական ակտերը բեկանելու և քրեական գործը Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նոր դատական քննությամբ անհրաժեշտ է սույն որոշման մեջ բարձրացրած հարցերի շուրջ կատարել օբյեկտիվ, բազմակողմանի, լրիվ և արդարացի քննություն, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-127-րդ հոդվածների պահանջներից ելնելով՝ հանգել համապատասխան հետևության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426¹-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշումը:

2. Նորա Ռաֆայելի Էվոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

17.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԳ2/0013/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Գ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ տուժողի իրավահաջորդ՝
դատապարտյալ՝*

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արկադի Արամայիսի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Գ.այանե Սահակյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18139510 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ Արկադի Արամայիսի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2011 թվականի օգոստոսի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճռով

Ա.Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 3 (երեք) տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա՝ Ա.Վարդանյանն ազատվել է հիմնական պատժի կրումից:

Տուժողի իրավահաջորդ Գ.այանե Սահակյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության՝ վերջինիս իրավունք վերապահելով վնասի հատուցման պահանջով քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան:

Տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի մարտի 20-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, քաղաքացիական հայցի մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի 2012 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 20-ի որոշման դեմ մեղադրողի և դատապարտյալ Ա.Վարդանյանի պաշտպանի վերաքննիչ բողոքները վերադարձվել են:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 7-ի դատավճռով տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն, դատապարտյալ Ա.Վարդանյանից հօգուտ տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի բռնագանձվել է 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ՝ որպես գերեզմանի կառուցապատման և բարեկարգման գումար:

4. Տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի և դատապարտյալ Ա.Վարդանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 7-ի դատավճիռը:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ վճարելի բողոք է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Գատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Ա.Վարդանյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2010 թվականի նոյեմբերի 5-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, վարելով Գ-ազիկ Փոստոյանին պատկանող «Վազ 2107» մակնիշի 22 ՍԼ 756 պետհամարանիշի ավտոմեքենան, Գ-յումբու Երևանյան խճուղով դեպի Գ.Նժդեհի հրապարակ ընթանալիս խախտել

է ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի կանոնները, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, ավտոմեքենան վարել է սահմանված թույլատրելի 60 կմ/ժ առավելագույն արագությունը գերազանցող արագությամբ և իրականացնելով ավտոմեքենայի ընթացքի ոչ պատշաճ ու վտանգավոր կառավարում՝ դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի ուղեմաս, բախվել «Մերսեդես E 230» մակնիշի WNW 006 պետհամարանիշի ավտոմեքենայի ձախ կողմին, որի հետևանքով «Մերսեդես E 230» մակնիշի ավտոմեքենայի հետևի ձախակողմյան հատվածում նստած ուղևոր՝ 1993 թվականի նոյեմբերի 5-ին ծնված անչափահաս Հենրիկ Կիրակոսյանին պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, և վերջինս դեպքի վայրից անմիջապես տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ ստացած մարմնական վնասվածքներից առանց գիտակցության գալու մահացել է, իսկ «Մերսեդես E 230» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Այվազ Սուքիասյանը ստացել է միջին ծանրության մարմնական վնասվածքներ (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 71-72):

7. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 7-ի դատավճռում առկա է հետևյալ ձևակերպումը. «Տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանը որդու գերեզմանի տարածքի բարեկարգման աշխատանքների համար դիմել է «Երանգ» ՍՊ ընկերությանը և վերջինիս կողմից տրվել է նախահաշիվ, որ գերեզմանի աշխատանքները կատարելու համար նախատեսվում է 8.447.21 ՀՀ դրամ: Տուժողի իրավահաջորդն այն ընդունելով որպես ապացույց այդ նախահաշիվը ներկայացրել է դատարան: Բացի այդ, նշել է, որ դեպքից հետո գտնվել է բժիշկների հսկողության տակ, ձեռք է բերել հիպերտոնիկ և նյարդային տարբեր հիվանդություններ, ստացել է ամբուլատոր և ստացիոնար բուժումներ, բուժման համար ծախսել է 1.000.000 ՀՀ դրամ, դարձել է երրորդ կարգի հաշմանդամ: Քաղ. հայց է ներկայացրել ընդհանուր 8.447.21 ՀՀ դրամի չափով: Նախորդ դատական նիստերի ժամանակ չի պահանջել և այժմ էլ չի պահանջում որդու քաղման և մյուս արարողություններում ծախսված գումարները: Պահանջում է միայն գերեզմանի կառուցապատման համար ծախսվելիք գումարն ըստ նախահաշվի և իր բուժման համար ծախսված 1.000.000 ՀՀ դրամը, որը կազմում է ընդհանուր 8.447.21 ՀՀ դրամ:

Գատապարտյալ Արկաղի Արամայիսի Վարդանյանը ներկայացված քաղ. հայցը ընդունել է մասնակի՝ 1.000.000 ՀՀ դրամից 1.500.000 ՀՀ դրամի չափով:

Քննության առնելով քրեական գործով քաղ. հայցը, լսելով տուժողի իրավահաջորդ Գ.Այանե Սահակյանին, դատապարտյալ Արկաղի Վարդանյանին, նրա շահերի պաշտպան Մ.Մուրադյանին և մեղադրողի կարծիքը հայցը հիմնավորող ապացույցների պարազայում այն բավարարելու մասին, հաշվի առնելով նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները դատարանը գտնում է, որ քաղ. հայցը ենթակա է բավարարման մասնակի՝ 3.000.000 /երեք միլիոն/ ՀՀ դրամի չափով:

Տուժողի իրավահաջորդ Գ.Այանե Սահակյանի կողմից պատվիրված գերեզմանի տարածքի բարեկարգման աշխատանքների համար «Երանգ» ՍՊ

ընկերության տրված նախահաշիվը չի կարող հիմք հանդիսանալ քաղ. հայցն ամբողջությամբ բավարարելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 64-65):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, տուժողի իրավահաջորդ Գ-այանե Սահակյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը մասնակի բավարարելով, հանգել է հիմնավոր հետևության:

Վերաքննիչ դատարանը մման եզրահանգման է գալիս հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանում դատապարտյալ Ա.Վարդանյանը, մասնակի՝ 3.000.000 ՀՀ դրամի չափով, ընդունեց տուժողի իրավահաջորդի հայցապահանջը, ինչը, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, *ex jure* (իրավունքի ուժով), հիմք է քաղաքացիական հայցն այդ չափով բավարարելու առումով:

Վերաքննիչ դատարանը ևս գտնում է, որ տուժողի իրավահաջորդի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացրած՝ որդու գերեզմանի տարածքի բարեկարգման աշխատանքների համար «Երանգ» ՍՊ ընկերության կազմած նախահաշիվը չի կարող հիմք հանդիսանալ քաղաքացիական հայցն ամբողջությամբ բավարարելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 105-106):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները քննության չեն առել քրեական գործում առկա մի շարք ապացույցներ, այն է՝ «Երանգ» ՍՊԸ-ի կողմից տրված նախահաշիվը, որի համաձայն՝ իր որդու գերեզմանի վրա կատարվող աշխատանքների գումարը կազմում է 7.447.210 ՀՀ դրամ, և իր հիվանդանոցային բուժման, դեղորայքների ձեռք բերման, հաշմանդամության փաստը հավաստող փաստաթղթերը: Արդյունքում, Ա.Վարդանյանը համաներման ակտի հիման վրա ազատվել է նշանակված պատժից՝ առանց իրեն պատճառված վնասը հատուցելու:

Բողոքաբերը նշել է նաև, որ «ՎԱԶ 2107» ավտոմեքենայի սեփականատիրոջ՝ Գ-ագիկ Փոստոյանի դեմ քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունք վերապահելու իր խնդրանքը Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով մերժել է:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը և իր քաղաքացիական հայցը բավարարել ամբողջությամբ, Ա.Վարդանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելը, ինչպես նաև իրավունք վերապահել Գ.Փոստոյանի դեմ քաղաքացիական հայց հարուցել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցի քննության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի քաղաքացիական հայցը մասնակիորեն բավարարելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

2. Քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

2. Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը, ելնելով քաղաքացիական հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն, կամ մերժում է դրա բավարարումը, կամ այն թողնում է առանց քննության»:

Քաղաքացիական հայցի հիմքին և առարկային վերաբերող վերոշարադրյալ

քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա.Սկրտչյանի* և *Ա.Ստեփանյանի* գործերով կայացված որոշումներում:

Մասնավորապես, *Ա.Սկրտչյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան է կազմում հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասը, որի հատուցման մասին պահանջը հայցվորը ներկայացնում է մեղադրյալին կամ նրա գործողությունների համար պատասխանատվություն կրող անձին: Քաղաքացիական հայցի առարկայի որոշման համար անհրաժեշտ է, որպեսզի վնասն անմիջականորեն հանցագործությամբ պատճառված լինի: (...)» (տե՛ս Ավետիս Սկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-150/07 որոշումը):

Ա.Ստեփանյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական դատավարությունում մեղադրյալի կամ մեղադրյալի գործողությունների համար պատասխանատվություն կրող անձի դեմ քաղաքացիական հայց կարող է ներկայացվել և, համապատասխանաբար, դատարանում քննության առարկա լինել բացառապես հանցագործությամբ պատճառված և քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի առկայության պարագայում: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության հիմքում ընկած է միասնական իրավաբանական փաստը՝ հանցագործությունը, որի կատարման համար անձը ենթարկվում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության այն դեպքերում, երբ առկա է հանցագործությամբ պատճառված գույքային վնաս (...):

(...) դատարանը, ապացուցված համարելով հանցագործության մեջ մեղադրվող անձի մեղքը, ինչպես նաև հանցավոր արարքի և հասցված վնասի միջև պատճառական կապը, լուծում է նաև քաղաքացիական հայցը՝ գնահատելով ներկայացված հայցադիմումի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքը» (տե՛ս Ալվարո Չուբարի Ստեփանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0327/01/10 որոշման 21-րդ կետը):

14. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և համապատասխանաբար *Ա.Սկրտչյանի*, *Ա.Ստեփանյանի* գործերով կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի լուծման համար պարտադիր է հանցագործության և հատուցման ենթակա վնասի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչպես նաև քաղաքացիական հայցի հիմքի և առարկայի՝ պատշաճ կերպով հիմնավորված լինելը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քաղաքացիական հայցի հիմքը հայց հարուցելու իրավունք առաջացնող փաստերի ամբողջությունն է, իսկ հայցի առարկան՝ այդ փաստերի վրա հիմնված

պահանջը: Ընդ որում, քաղաքացիական հայցի հիմքը կազմող փաստերը պետք է հիմնավորեն վնասի առկայությունն ու այն հանցագործությամբ պատճառված լինելու հանգամանքը: Հետևաբար, քրեական դատավարությունում հայց հարուցելու իրավունքն առկա է այն դեպքում, երբ վնասն անմիջականորեն պատճառվել է հանցագործությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմքը կազմող փաստերն են՝

ա) հակաիրավական արարքը՝ հանցագործությունը, վնաս հասցնելու փաստը և դրանց միջև առկա անմիջական պատճառահետևանքային կապը.

բ) հատուցման ենթակա գույքային վնասը հայցվորին պատճառված լինելու հանգամանքը,

գ) մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի կողմից վնասի հատուցման պարտականությունը կամովին չկատարելու հանգամանքը:

Քաղաքացիական հայցի առարկան, ինչպես արդեն նշվեց, կազմում է հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասը: Քաղաքացիական հայցի առարկա չի կարող հանդիսանալ և հետևաբար, քրեական դատավարության շրջանակներում հատուցման ենթակա չէ այն վնասը, որը թեև այս կամ այն կերպ պայմանավորված է կատարված իրավախախտմամբ, սակայն չի առաջացել հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային և ֆիզիկական վնասի հետևանքով:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության շրջանակներում ենթակա են հատուցման՝

ա) քրեական օրենքով արգելված արարքով անմիջականորեն պատճառված գույքային վնասը,

բ) վնասված կամ ոչնչացված (կորսված) գույքը վերականգնելու, գնելու ծախսերը,

գ) տուժողի բուժման կամ հուղարկավորության համար կատարված անհրաժեշտ ծախսերը (*mutatis mutandis* տե՛ս Ավետիս Մկրտչյանի գործով Վճարելի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-150/07 որոշումը):

Վճարելի դատարանը գտնում է, որ քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա են միայն վերոնշյալ վնասները, իսկ հանցագործության հետևանքով պատճառված այլ վնասների հատուցման վերաբերյալ պահանջները չեն կարող քննության առնվել քրեական գործի հետ համատեղ և պետք է թողնվեն առանց քննության, ինչը շահագրգիռ անձին հնարավորություն կտա իր գույքային պահանջները ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մաս):

16. Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ Ա.Վարդանյանը, վարելով Գ.Փոստոյանին պատկանող «Վազ-2107» մակնիշի ավտոմեքենան, թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ,

գերազանցել է թույլատրելի առավելագույն արագությունը, ընդհարվել է «Մերսեդես E 230» մակնիշի ավտոմեքենային, ինչի հետևանքով «Մերսեդես E 230» մակնիշի ավտոմեքենայի ուղևոր, անչափահաս Հ.Կիրակոսյանը մահացել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանը 8.447.210 ՀՀ դրամի չափով քաղաքացիական հայց է ներկայացրել, որից 7.447.210 ՀՀ դրամը որդու գերեզմանի կառուցապատման, իսկ 1.000.000 ՀՀ դրամը՝ դեպքից հետո իր մոտ առաջացած առողջական խնդիրները վերականգնելուն ուղղված ծախսերի գումար: Առաջին ատյանի դատարանի դատավճռով քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն, դատապարտյալ Ա.Վարդանյանից հոգուտ տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի բռնագանձվել է 3.000.000 ՀՀ դրամ՝ որպես գերեզմանի կառուցապատման և բարեկարգման գումար (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի դատական ակտի բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանն այն թողել է օրինական ուժի մեջ՝ փաստարկելով, որ քաղաքացիական հայցը մասնակիորեն բավարարելու մասին դատարանի հետևությունները հիմնավորված են (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է քաղաքացիական հայցն այն մասով, որը ենթակա չէր բավարաման և դուրս է քրեական դատավարության կարգով քննվող քաղաքացիական հայցի առարկայի սահմաններից:

17.Սույնորոշման 13-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով 16-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Ա.Վարդանյանին տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի կողմից ներկայացված գույքային այն պահանջը, որը կապված է տուժողի իրավահաջորդի բուժման նպատակով կատարված ծախսերի հետ, քրեական դատավարությունում քննվող քաղաքացիական հայցի առարկայի սահմաններից դուրս է: Այլ կերպ՝ տուժողի իրավահաջորդի բուժման նպատակով կատարված ծախսերը չեն հանդիսանում Ա.Վարդանյանի կողմից կատարված հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնաս, ուստի դրանց հատուցման հետ կապված հարցերը ենթակա են լուծման ոչ թե քրեական դատավարության, այլ քաղաքացիական դատավարության կարգով հարուցված քաղաքացիական հայցի շրջանակներում:

Ինչ վերաբերում է հայցապահանջի այն մասին, որը կապված է գերեզմանի կառուցապատման ծախսերի հետ, ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ այդ հարցին անդրադարձել է *Ա.Սկրտչյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գերեզմանի կառուցապատման և գերեզմանաքարի տեղադրման հետ կապված ծախսերը (...) հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնաս չեն, դուրս են 2006 թվականի փետրվարի 27-ի «Հուդարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածով սահմանված

հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերից: Այդպիսի հայցերը ներկայացվում, ապահովվում, ապացուցվում, քննվում և լուծվում են ընդհանուր հիմունքներով՝ քաղաքացիական դատավարության կարգով: (...)» (տե՛ս Ավետիս Սկրտչյանի գործով Վճարելի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-150/07 որոշումը):

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ տուժողի իրավահաջորդի բուժման, ինչպես նաև տուժողի գերեզմանի կառուցապատման ծախսերը քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասներ չեն, հետևաբար, տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի քաղաքացիական հայցը դատարանի որոշմամբ պետք է թողնվեր առանց քննության:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է սույն որոշման 16-րդ կետում քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի քաղաքացիական հայցը մասնակիորեն բավարարելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

18. Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու համար:

Միաժամանակ, Վճարելի դատարանն արձանագրում է, որ տուժողի իրավահաջորդ Գ.Սահակյանի քաղաքացիական հայցը կարող է հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով, ինչը հնարավորություն կտա քննարկման առարկա դարձնել վերջինիս ներկայացրած այն ապացույցները, որոնք չեն կարող հետազոտվել և գնահատվել քրեական դատավարության շրջանակներում, ինչպես նաև գույքային պահանջ ներկայացնել այլ ենթադրյալ պատասխանողների նկատմամբ:

19. Անդրադառնալով բողոքաբերի այն խնդրանքին, որը կապված է մինչև պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելն Ա.Վարդանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունն անփոփոխ թողնելուն և Գ.Փոստոյանի դեմ քաղաքացիական հայց հարուցելու իրավունք վերապահելուն (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նշված հարցերը Վճարելի դատարանի իրավասությունից դուրս են, և դրանց անդրադառնալու դեպքում կխախտվեն Վճարելի դատարանում գործի քննության սահմանները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ՀՀ Սահմադրությամբ և ՀՀ քրեադատավարական օրենսգրքով երաշխավորված՝ օրինականության սկզբունքի խախտման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Արկադի Արամայիսի Վարդանյանի գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 7-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի դատական ակտերը բեկանել և տուժողի իրավահաջորդ Գայանե Սահակյանի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

18.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԳ/0043/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ Հ.ԲԱԲԱՅԱՆԻ Ժ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	
<i>մեղադրող՝</i>	

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Ժորայի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ մեղադրող Ժ.Սահակյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2008 թվականի հոկտեմբերի 4-ին հարուցվել է թիվ 11121808 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի և 139-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ անհայտ անձանց կողմից Էդիտա Գալստյանին բռնաբարելու և նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու փաստի առթիվ:

2009 թվականի մարտի 28-ին քրեական գործի նյութերից անջատվել է Է.Գալստյանին բռնաբարած և նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարած անհայտ անձանց վերաբերյալ գործի նյութերը և անջատված մասին շնորհվել է թիվ 11121808/1 համարը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հունիսի 19-ի որոշմամբ Արսեն Ժորայի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի մայիսի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռով Ա.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Ս.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է վերաքննիչ բողոքը, պատժի մասով փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը և ամբաստանյալ Ա.Սարգսյանին դատապարտել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ժ.Սահակյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ մեղադրող Ժ.Սահակյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Հ.Բաբայանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել մեղադրող Ժ.Սահակյանի վճռաբեկ բողոքը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ա.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել այն բանի համար, որ «2008 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 12-ից 13-ի սահմաններում, գտնվելով Երևանի Գավթաշեն թաղամասում, պատահական հանդիպել է իրեն նախկինում անծանոթ՝ մտավոր հետամնաց Էդիտա Գալստյանին: Վերջինս, հայտնելով, որ կորել է, խնդրել է օգնել իրեն և զանգահարել եղբորը՝ Արթուր Գալստյանի[ն] (...) ու հայտնել իր գտնվելու վայրը: Սակայն Արսեն Սարգսյանը, օգտվելով Էդիտա Գալստյանի առկա վիճակից, խաբեությամբ նրան՝ թիվ 13 երթուղային տաքսիով, տարել է Հայկ Հովսեփյան փողոցի վրա գտնվող «Շողակաթ» հեռուստաընկերության շենքի հարակից այգի, որտեղ քիչ անց հանդիպելով իր կանչով եկած ընկերոջը՝ գործով դեռևս չպարզված ոմն Վոլոդյային, վերջինիս հետ միասին տուն տանելու խոստումներ տալով, ինչպես նաև հոգեկան ազդեցություն գործադրելով Էդիտա Գալստյանի նկատմամբ, մոտակայքում գտնվող մթերային խանութից գնումներ կատարելուց հետո, այդ թվում՝ ոգելից խմիչք, Էդիտա Գալստյանին տարել են Երևան քաղաքի Բագրատունյաց պողոտայի 2/4 հասցեում գտնվող «Մայակ» բենզալցակայանի ետնամաս՝ Հրազդան գետի աջ ափին գտնվող հողամասերից մեկը, որտեղ Արսեն

Սարգսյանը, ովն Վոլոդյան և իրենց կանչով նրանց միացած՝ գործով չպարզված ովն երիտասարդը ստիպողաբար Էդիտա Գալստյանին ոգելից խմիչքներ են խմեցրել, որից հետո, օգտվելով նրա անօգնական վիճակից, բռնություն գործադրելով Էդիտա Գալստյանի կամքին հակառակ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ են կատարել նրա նկատմամբ և դիմել փախուստի» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 111):

6. Ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Վ.Հայրապետյանը նախաքննության ընթացքում հետևյալ բովանդակությամբ դիմում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին. «12.04.2012 թվականին մահացավ պաշտպանյալիս մայրը՝ Ծովիկ Սարգսյանը (...): Պաշտպանյալս հարազատներ չունի, հայրը մահացած է: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 218):

7. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, դատարանը հաշվի է առնում նրա կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալներ՝ այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքերը:

Որպես ամբաստանյալ Արսեն Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում նրա խնամքի տակ կնոջ և մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը:

Որպես ամբաստանյալ Արսեն Սարգսյանի անձը բնութագրող տվյալներ դատարանը հաշվի է առնում նրա նախկինում դատապարտված չլինելը և դրական բնութագրվելը:

Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 123):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարան ներկայացված ապացույցների համաձայն՝ 1991թ. մահացել է ամբաստանյալ Ա.Սարգսյանի հայրը, իսկ 2012թ. ապրիլին՝ վերջինիս կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում, նաև մայրը՝ Ծովիկ Սարգսյանը:

(...) Վերոգրյալի պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով ակնհայտ խիստ է և ենթակա է փոփոխման, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Սարգսյանի կատարած հանցանքի բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, վերջինիս պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող՝ առաջին ատյանի դատարանում մատնանշված, ինչպես նաև նրա ծնողների մահվան վերաբերյալ՝ Վերաքննիչ դատարանում ի հայտ եկած հանգամանքները, որի պայմաններում Ա.Սարգսյանի յոթ տարեկան երեխան մնացել է միայնակ մոր խնամքին:

Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման գալիս հաշվի է առնում նաև այն, որ սույն գործով ամբաստանյալ Ա.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 203):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը փոփոխելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, ինչի արդյունքում Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելիս հիմք է ընդունել նրա ծնողների մահվան հանգամանքը, որի պայմաններում Ա.Սարգսյանի յոթ տարեկան երեխան մնացել է միայնակ մոր խնամքին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի մատնանշած հանգամանքը (խնամքին կնոջ և յոթ տարեկան երեխայի առկայությունը) Առաջին ատյանի դատարանի կողմից արդեն իսկ հաշվի է առնվել որպես Ա.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, իսկ նրա ծնողների մահվան փաստը հայտնի է եղել թե՛ նախաքննության, թե՛ Առաջին ատյանի դատարանի դատաքննության ընթացքում:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանի մատնանշած հանգամանքը չէր կարող դրվել Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատժի մեղմացման հիմքում, քանի որ այն չի նվազեցնում հանցանքը կատարած անձի և նրա կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ նշանակված պատիժը փոփոխելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի դատավճռով ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացման առումով փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական

ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստացնում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով»:

Ն.Սարգսյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա վերաքննիչ դատարանը կարող է փոփոխել առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը, եթե այն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով:

(...) վերաքննիչ դատարանն իրավասու է պատժի մասով փոփոխել առաջին ատյանի դատարանի դատական ակտը հետևյալ դեպքերում.

1) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս չեն պահպանվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները,

2) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի չեն առնվել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ հանգամանք(ներ)ը հաշվի չառնելը հանգեցրել է անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման:

(...) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս վերոնշյալ պահանջների չպահպանման վերաբերյալ վերաքննիչ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված: Այլ կերպ ասած՝ պատիժն ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու հիմքով առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե պատժի նշանակման հատկապես որ սկզբունքը կամ սկզբունքները չեն պահպանվել, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը,

հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող որ հանգամանքները հաշվի չեն առնվել, և արդյոք այդ հանգամանքները հաշվի չառնելն է հանգեցրել անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման: Այսինքն՝ եթե վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, պետք է պատճառաբանի, թե ինչու է արտահայտվել պատժի խստության կամ մեղմության ակնհայտությունը» (տե՛ս Նարեկ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 24-րդ կետը):

14. Ամբաստանյալին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Գ.Մադաթյանի* գործով կայացրած որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Մադաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի 1-ին մասում»:

Մեջբերված քրեաիրավական դրույթին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Պ.Բայրամյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է նաև անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը

զ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները: (...)» (տե՛ս Պարույր Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Սարգսյանը, պատահականորեն հանդիպելով իրեն նախկինում անծանոթ, մտավոր հետամնաց Է.Գալստյանին և տեղեկանալով, որ նա կորել է, կանչել է իր ընկերոջը՝ ոմն Վոլոդյային, և Է.Գալստյանին խաբեությամբ տարել է Հրազդան գետի ափին գտնվող հողամասերից մեկը: Դեպքի վայրում նրանց է միացել նաև գործով չպարզված ևս մեկ երիտասարդ, որից հետո ստիպողաբար Է.Գալստյանին ոգելից խմիչքներ են խմեցրել, այնուհետև, օգտվելով նրա անօգնական վիճակից և բռնություն գործադրելով, Է.Գալստյանի կամքին հակառակ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ են կատարել նրա նկատմամբ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն Ա.Սարգսյանին դատապարտել է 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկման՝ հաշվի առնելով նրա կատարած հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Որպես Ա.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ նրա խնամքին են գտնվում կինը և 7 տարեկան երեխան, իսկ որպես անձը բնութագրող տվյալներ այն, որ նա առաջին անգամ է դատապարտվում և բնութագրվում է դրական (տե՛ս սույն որոշման 2-րդ, և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ գտնելով, որ պատժի մասով այն ակնհայտ խիստ է: Վերաքննիչ դատարանը Ա.Սարգսյանին դատապարտել է ազատազրկման 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատճառաբանելով, որ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում ի հայտ է եկել Ա.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող նոր հանգամանք՝ նրա ծնողների մահը, որի պայմաններում Ա.Սարգսյանի երեխան մնացել է միայնակ մոր խնամքին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով հանցանքի ծանրությունը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները (խնամքին կնոջ և մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը), պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ, Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, նույն հանգամանքների առկայության պայմաններում մեղմացրել է Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ որպես հանցավորի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, նոր ի հայտ եկած հանգամանք մատնանշելով Ա.Սարգսյանի ծնողների մահվան փաստը:

16. Սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Սարգսյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժն ակնհայտ խիստ լինելու հիմքով փոփոխելիս Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե Առաջին ատյանի դատարանի կողմից պատժի նշանակման որ սկզբունքը չի պահպանվել, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող որ հանգամանքները հաշվի չեն առնվել, և արդյոք դա հանգեցրել է անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչու է արտահայտվել Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժի՝ ակնհայտ խիստ լինելը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանի ծնողների մահացած լինելու փաստը հայտնի է եղել թե՛ նախաքննության, թե՛ Առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), հետևաբար վերոհիշյալ հանգամանքները չէին կարող դիտվել որպես Վերաքննիչ դատարանում նոր ի հայտ եկած հանգամանքներ: Բացի այդ, նշված հանգամանքը ողջամտորեն չի նվազեցնում Ա.Սարգսյանի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ուստի չի համապատասխանում նաև *Պ.Բայրամյանի* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն որպես Ա.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք չի դիտել Ա.Սարգսյանի ծնողների՝ մահացած լինելու փաստը:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացման առումով փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ: Վերաքննիչ դատարանը, պատժի մասով փոփոխելով առաջին ատյանի դատարանի դատավճիռը և ամբաստանյալի նկատմամբ նշանակելով մեղմ պատիժ, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման սկզբունքների խախտում, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական և չհիմնավորված դատական ակտի կայացմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի

1-ին մասի 6-րդ կետի հիման վրա հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատավճռին օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը քավարարել: Ամբաստանյալ Արսեն Ժորայի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԼԳ/0033/15/09

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ դատախազ Ա.Մուրադյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով Գարեգին Հենրիկի Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով, 222-րդ հոդվածի 2-րդ մասով: ՌԴ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով Գ.Հովսեփյանը դատարպարտվել է ազատազրկման 10 տարի ժամկետով և տուգանքի 10.000 ՌԴ-ռուբլու չափով՝ ավագակային հարձակման յուրաքանչյուր դրվագի համար, իսկ 222-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 3 տարի ժամկետով: ՌԴ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ Գ.Հովսեփյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 12 տարի ժամկետով և տուգանք 10.000 ՌԴ-ռուբլու չափով:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության

արդարադատության նախարարությունների երկկողմ համաձայնության հիման վրա դատապարտյալ Գ.Հովսեփյանը հետագա պատիժը կրելու համար հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

2. 2009 թվականի օգոստոսի 21-ին ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետը միջնորդություն է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով Ռ.Գ. Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությանը:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է: Գ.Հովսեփյանի վերաբերյալ Ռ.Գ. Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով Ռ.Գ. քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերին, իսկ Ռ.Գ. քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասին: Գ.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ:

3. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ 2012 թվականի օգոստոսի 6-ին վերաքննիչ բողոք են բերել դատապարտյալ Գ.Հովսեփյանը և նրա պաշտպան Մ.Զիլֆուղարյանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Նույն անձինք 2012 թվականի օգոստոսի 15-ին միջնորդություն են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով նույն դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը համարել հարգելի:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է, նույն դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը համարվել է հարգելի և վերականգնվել է:

4. Դատապարտյալ Գ.Հովսեփյանի և նրա պաշտպան Մ.Զիլֆուղարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը բեկանելու մասին: Գ.Հովսեփյանի վերաբերյալ Ռ.Գ. Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքին:

ա) Ռ.Գ. քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերին և պատիժ է սահմանվել ազատազրկում 8 տարի ժամկետով:

բ) Ռ.Գ. քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասին և պատիժ է սահմանվել ազատազրկում 3 տարի ժամկետով:

զ) Ռ-Գ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասին և, հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ. Հովսեփյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 10 տարի ժամկետով:

դ) Գ. Հովսեփյանի պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի մայիսի 28-ից:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատախազ Ա. Մուրադյանը, որը Վճարելի դատարանի 2013 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Առաջին ատյանի դատարանն իր 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման մեջ արձանագրել է. «Դատապարտյալի արարքը որակված՝ Ռ-Գ քր. օր-ի 162 հոդվածի 2-րդ մասով /սանկցիան նախատեսում է ազատազրկում՝ հինգից տասը տարի ժամկետով և տուգանք՝ մինչև մեկ միլիոն ռուբլու չափով կամ աշխատավարձի չափով կամ այլ եկամուտների պահումով մինչև հինգ տարի ժամկետով/ պետք է համապատասխանեցնել 18.04.2003թ. ՀՀ քր. օր-ի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերին /սանկցիան նախատեսում է ազատազրկում՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա/, իսկ Ռ-Գ քր. օր-ի 222 հոդվածի 2-րդ մասով / սանկցիան նախատեսում է ազատազրկում՝ երկուսից վեց տարի ժամկետով/ պետք է համապատասխանեցնել 18.04.2003թ. ՀՀ քր. օր-ի 235 հոդվածի 2-րդ մասին /սանկցիան նախատեսում է ազատազրկում՝ երկուսից վեց տարի ժամկետով/» (տե՛ս նյութեր, թերթ 17):

7. Վերաքննիչ դատարանն իր 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) դատարանը համապատասխանեցման ժամանակ խախտել է Մոսկվայի կոնվենցիայի 12-րդ հոդվածի, ինչպես նաև Ստրասբուրգի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթները՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով պատիժներ չի սահմանել, իսկ Ռ-Գ դատավճռով նշանակված պատիժը՝ 12 տարի ժամկետով ազատազրկումն առանց հիմնավորումների թողել է անփոփոխ, որով թույլ է տվել դատական սխալ՝ ճիշտ չի կիրառել քրեական օրենքը:

Գարեգին Հենրիկի Հովսեփյանն ավազակային հարձակման համար Ռ-Գ դատավճռով իրեն վերագրվող արարքները կատարել է 2004թ. մարտի 1-ին և 2004թ. մարտի 16-ին: Այդ հանցագործությունների համար դրանք կատարելու ժամանակ ՀՀ-ում գործող քրեական օրենքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով որպես պատիժ էր նախատեսվում ազատազրկում 4-8 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վերոնշյալ պատժաչափը խստացվել

է 24.07.2004թ. ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, որով որպես պատիժ է նախատեսվել ազատազրկում 6-10 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

(...)

Առաջին ատյանի դատարանը, Գ.Հովսեփյանի կատարած արարքները համապատասխանեցնելով ՀՀ օրենսդրությանը, վերջինիս նկատմամբ Ռ-Գ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժաչափը՝ ազատազրկում 3 տարի ժամկետով, անփոփոխ թողնելով, չի խախտել Կոնվենցիաներով սահմանված համապատասխան պահանջները, նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրությամբ տվյալ արարքի համար /ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մաս/ ազատազրկման առավելագույն ժամկետը կազմում է 6 տարի, որն ավելի պակաս չէ, քան նշանակվել է Ռ-Գ-ում կայացված դատավճռով:

Սակայն, առաջին ատյանի դատարանն անտեսել է ինչպես Մոսկվայի Կոնվենցիայի 12-րդ հոդվածի, այնպես էլ Ստրասբուրգի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթները Գ.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված պատիժն անփոփոխ թողնելիս և հաշվի չի առել այն հանգամանքը, որ տվյալ հանցանքը կատարելու ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետը եղել է ութ տարի, որն ավելի պակաս է, քան Ռ-Գ դատավճռով Գ.Հովսեփյանի նկատմամբ նշանակված տասը տարի ժամկետով ազատազրկումը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Գ.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի [2-րդ մասի] 1-ին և 4-րդ կետերով պետք է սահմանել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի առավելագույն չափը՝ ազատազրկում ութ տարի ժամկետով:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով Գ.Հովսեփյանին վերագրվող հանցանքների համակցության մեջ մտնող ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված պատժի մեղմացումը, հանգում է այն հետևության, որ անհրաժեշտ է մեղմացնել նաև հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով որոշվող վերջնական պատժաչափը» (տե՛ս նյութեր, թերթ 129-138):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը նշանակված պատժի մասով անհիմն է և անօրինական, դրա արդյունքում խախտվել են միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, դատապարտյալ Գ.Հովսեփյանի նկատմամբ 10 տարի ժամկետով ազատազրկում նշանակելով, խախտել է «Դատապարտյալների փոխանցման մասին» Ստրասբուրգի կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ համապատասխանեցնելու մասին

դատական ակտ կայացնելիս դատարանը պարտավոր է ղեկավարվել դատավճռով նշանակված պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը և Գ.Հովսեփյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ նշանակված պատիժը թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի կատարման (հետագա կրման) նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը ճանաչելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանի իրավագործության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Ռ-Դ Մոսկվայի քաղաքային դատարանի կողմից Գ.Հովսեփյանի նկատմամբ ավագակային հարձակման համար նշանակված պատիժը հանցանքը կատարելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիային համապատասխանեցնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

(...):»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պատժի կատարման (հետագա կրման) նպատակով դատապարտյալների փոխանցման վերաբերյալ երկկողմ իրավահարաբերությունները կարգավորվում են 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում կնքված «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Ստրասբուրգի կոնվենցիա) և 1998 թվականի մարտի

6-ին Մոսկվայում կնքված «Պատժի հետագա կրման համար ազատագրկման դատապարտվածներին փոխանցելու մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Մոսկվայի կոնվենցիա):

Ստրասբուրգի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մի կողմի տարածքում դատապարտված անձը, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող է փոխանցվել մեկ այլ Կողմի՝ պատիժը կրելու համար: (...)»:

Նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կատարող պետության իրավասու մարմինները պետք է.

ա) շարունակեն դատավճռի կատարումն անմիջապես կամ դատական կամ վարչական որոշման հիման վրա՝ 10 հոդվածում սահմանված պայմաններով.

(...)»:

Ստրասբուրգի կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կատարումը շարունակելու դեպքում Կատարող պետությունը պարտավոր է ղեկավարվել Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռի պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

2. Եթե պատժամիջոցի բնույթը և տևողությունը չեն համապատասխանում Կատարող պետության օրենսդրությանը, կամ եթե այդ է պահանջում վերջինիս օրենսդրությունը, ապա Կատարող պետությունը կարող է պատժամիջոցը դատական կամ վարչական որոշմամբ հարմարեցնել (համապատասխանեցնել) իր օրենսդրությամբ նման բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատժին կամ այլ պատժամիջոցների:

Պատժի կամ պատժամիջոցի բնույթը հնարավորության դեպքում պետք է համապատասխանեն կատարման ենթակա դատավճռով սահմանված պատժի կամ պատժամիջոցի բնույթին: Այն իր բնույթով և պատժի ժամկետով չի կարող խստացնել Դատապարտող պետության կողմից նշանակված պատժամիջոցը և ոչ էլ գերազանցել Կատարող պետության օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետը»:

Մոսկվայի կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, ինչպես նաև նրա տարածքում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք ազատագրկման են դատապարտվել մյուս Պայմանավորվող կողմում, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան պատիժը կրելու համար կարող են փոխանցվել այն Պայմանավորվող կողմին, որի քաղաքացիներն են նրանք հանդիսանում կամ որի տարածքում մշտապես բնակվում են (եթե քաղաքացիություն չունեցող անձ են հանդիսանում)»:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռի կատարման պետությունը ապահովում է պատժի կրման շարունակությունն իր օրենսդրությանը համապատասխան՝ չվատթարացնելով դատապարտյալի վիճակը (...)»:

Դատապարտյալը նշանակված պատիժը կրում է վճռի կայացման պետության դատարանի վճռի հիման վրա (...): Վճռի կատարման պետության դատարանը, ելնելով կայացված վճռից, որոշում է ընդունում դրա կատարման մասին՝ համաձայն իր պետության օրենքի սահմանելով ազատագրկման այնպիսի ժամկետ, ինչպիսին

նշանակվել է վճռով:

Եթե վճռի կատարման պետության օրենսդրությամբ տվյալ արարքի համար ազատագրկման առավելագույն պատժաչափը պակաս է, քան նշանակվել է վճռով, ապա դատարանը սահմանում է ազատագրկման առավելագույն պատժաչափը, որը նախատեսված է այդ պետության օրենսդրությամբ»:

13. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների և դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

Սույն որոշման նախորդ կետում շարադրված կոնվենցիոն դրույթները բարեխղճորեն մեկնաբանելով դրանց առարկայի և նպատակի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Ստրասբուրգի կոնվենցիան, այնպես էլ Մոսկվայի կոնվենցիան, նախատեսելով պայմանագրի կողմ հանդիսացող պետության տարածքում դատապարտված անձին պատժի կատարման (հետագա կրման) նպատակով կողմ հանդիսացող մեկ այլ պետությանը փոխանցելու հնարավորություն, սահմանում են նաև դատավճռի կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացման (տվյալ դեպքում՝ դատավճիռը Կատարող պետության օրենսդրությանը համապատասխանեցնելու) ընթացքում իրավասու մարմինների իրավագործության սահմանները, այդ թվում՝ դատավճռով նշանակված պատիժը փոխելու առումով:

Այսպես, քննարկվող երկու միջազգային պայմանագրերն էլ Կատարող պետությանը պարտավորեցնում են պատժի կատարումն ապահովելիս ղեկավարվել Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռի պատժամիջոցի իրավական բնույթով ու տևողությամբ, ինչպես նաև իրավասություն են վերապահում փոփոխության ենթարկել դատավճռով նշանակված պատժի ժամկետը միայն այն դեպքում, երբ Կատարող պետության ներպետական օրենսդրությամբ նույն արարքի համար նախատեսված առավելագույն պատժաչափն ավելի մեղմ է, քան Դատապարտող պետության դատարանի կողմից նշանակված պատժաչափը: Այս դեպքում համապատասխանեցում կատարող մարմինը սահմանում է ներպետական օրենսդրությամբ նույն արարքի համար նախատեսված առավելագույն պատժաչափը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շարադրված կոնվենցիոն դրույթները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ դատավճռի համապատասխանեցման հարցի անհրաժեշտությունը քննելիս Կատարող պետության իրավասու մարմինները ղեկավարվեն հանցավորի կողմից արարքի փաստացի կատարման ժամանակ գործող օրենսդրությամբ: Ինչպես Ստրասբուրգի, այնպես էլ Մոսկվայի կոնվենցիաները նման իրավական պահանջ չեն բովանդակում և խոսքն այստեղ գնում է դատապարտյալի փոխանցման պահին Կատարող պետության տարածքում գործող օրենսդրության մասին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ստրասբուրգի

կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է տալիս դատավճռով նշանակված պատժամիջոցի բնույթի և տևողության համապատասխանեցում (փոփոխություն) կատարել նաև այն դեպքում, եթե այդ է պահանջում Կատարող պետության օրենսդրությունը: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն որոշման շրջանակներում վերլուծության ենթարկել ժամանակի ընթացքում և տարածության մեջ քրեական օրենքի գործողության կանոնները սահմանող ՀՀ քրեաիրավական նորմերը՝ պարզելու համար, թե արդյոք ՀՀ ներպետական օրենսդրությունը պարտավորեցնում է իրավասու մարմիններին համապատասխանեցման հարցի քննության ժամանակ ղեկավարվել հանցանքի կատարման պահին գործող օրենսդրությամբ:

14. Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:

ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների տարածքում անձի կողմից հանցանք կատարելու դեպքում նրա պատասխանատվությունը վրա է հասնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե անձը քրեական պատասխանատվության է կանչվել Հայաստանի Հանրապետության տարածքում, և եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում: Նշված անձանց դատապարտելիս պատիժը չի կարող գերազանցել օտարերկրյա այն պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը, որի տարածքում կատարվել է հանցանքը»:

Ինչպես հետևում է ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության կանոնները սահմանող մեջբերված քրեաիրավական նորմի վերլուծությունից՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, հետևաբար արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը չի կարող կիրառվել այն հանցագործությունների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության վերագրյալ մեխանիզմը գործում է բացառապես

արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշելու ժամանակ, այլ խոսքով՝ դատարանը պետք է ղեկավարվի արարքի կատարման պահին գործող քրեական օրենքով հանցավորի նկատմամբ քրեական պատասխանատվության հարցը լուծելիս: Միջազգային իրավունքի աղբյուրներում համընդհանուր ճանաչում ստացած՝ չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով (nullum crimen, nulla poena sine lege) սկզբունքին Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլոց, անդրադարձել է *Գ. Պողոսյանի* գործով որոշման մեջ (տե՛ս Գասպար Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ Գ-Գ1/0013/01/11 որոշման 13-17-րդ կետերը):

Միևնույն ժամանակ, տարածության մեջ քրեական օրենքի գործողության կանոնները սահմանող շարադրված նորմերից բխում է, որ օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած անձանց, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները (Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք) ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանք քրեական պատասխանատվության են կանչվել Հայաստանի Հանրապետության տարածքում (չեն դատապարտվել այլ պետությունում): Այս դեպքում քրեական պատասխանատվության հարցը լուծելիս հաշվի է առնվում նաև այն պետության օրենսդրությունը, որի տարածքում կատարվել է հանցավոր ոտնձգությունը և նման անձանց նկատմամբ չի կարող նշանակվել տվյալ օտարերկրյա պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը գերազանցող պատիժ:

Մեջբերված դրույթների համադրված վերլուծությունից ակնհայտ է, որ օրենսդիրն արարքի հանցավորությունը և պատժելիությունը պայմանավորում է այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում կատարվել է ոտնձգությունը, իսկ ՀՀ քրեական օրենքի գործողությունը, այդ թվում՝ հանցանքի կատարման պահին գործող օրենքով ղեկավարվելու պահանջը, տարածում է միայն այն անձանց նկատմամբ, որոնց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Պատժի կատարման (հետագա կրման) նպատակով հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ճանաչելու և համապատասխանեցնելու նպատակով իրականացվող դատավարական գործողությունները որևէ կերպ չեն կարող նույնացվել անձին քրեական պատասխանատվության ենթարկելու գործընթացի հետ, հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ ներպետական օրենսդրությունը չի պարտավորեցնում իրավասու մարմիններին համապատասխանեցում կատարելիս ղեկավարվել հանցանքի կատարման պահին գործող քրեական օրենքով:

15. Համադրելով միջազգային պայմանագրերի և ՀՀ ներպետական օրենսդրության վերոգրյալ կարգավորումները և հիմք ընդունելով սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պատժի կատարման (հետագա կրման) նպատակով դատապարտյալների փոխանցման վերաբերյալ երկկողմ իրավահարաբերությունները կարգավորող կոնվենցիաները, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրությունը չեն բովանդակում

իրավական պահանջ առ այն, որ կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացման ընթացքում իրավասու մարմինները (դատարանները) պետք է ղեկավարվեն հանցանքը կատարելու պահին գործող քրեական օրենքով:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ հանցանքը կատարելու պահին գործող օրենքով ղեկավարվելու պահանջը կիրառելի է բացառապես քրեական հետապնդման հարցը լուծելիս, իսկ պատժի կատարման պայմաններն ապահովելու նպատակով իրականացվող համապատասխանեցման ընթացքում դատարանն իրավասու չէ կիրառել այն, քանզի նշված պահանջի հիման վրա օտարերկրյա պետության դատարանի կողմից նշանակված պատիժը փոփոխելու արդյունքում տեղի կունենա Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ պատժի կատարման (հետագա կրման) նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը ճանաչելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանի իրավագործությունը սահմանափակված է փոխանցման պահին գործող քրեական օրենքով: Այլ խոսքով՝ պատժի պայմանները կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը, այդ թվում՝ նշանակված պատժի մասով, պետք է համապատասխանեցվի դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ռ-Գ Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով Գ.Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել Ռ-Գ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով, 222-րդ հոդվածի 2-րդ մասով, հանցանքների համակցությամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 12 տարի ժամկետով և տուգանք 10.000 Ռ-Գ ռուբլու չափով:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունների երկկողմ համաձայնության հիման վրա դատապարտյալ Գ.Հովսեփյանը հետագա պատիժը կրելու համար հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 10-ին որոշում է կայացրել Գ.Հովսեփյանի վերաբերյալ Ռ-Գ Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին: Ռ-Գ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերին, Ռ-Գ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասին, իսկ Գ.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու մասին: Ռ-Գ Մոսկվայի քաղաքային դատարանի 2004 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու արդյունքում Վերաքննիչ դատարանը Գ.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացման առումով փոփոխել է, և հանցանքների համակցությանը նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանել ազատազրկում՝ 10 տարի ժամկետով:

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է նրանով, որ Առաջին ատյանի դատարանը, Գ.Հովսեփյանի նկատմամբ ավազակային հարձակման համար սահմանված պատիժը թողնելով անփոփոխ, հաշվի չի առել, որ տվյալ հանցանքը կատարելու ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետը եղել է 8 տարի, որն իր տևողությամբ ավելի պակաս է, քան Ռ-Գ դատավճռով Գ.Հովսեփյանի նկատմամբ նույն արարքի համար սահմանված պատիժը՝ 10 տարի ժամկետով ազատազրկումը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով ժամանակի և տարածության մեջ քրեական օրենքի գործողության կանոնները սահմանող քրեաիրավական նորմերը, ինչպես նաև անտեսելով Ստրասբուրգի կոնվենցիայի 10-րդ և Մոսկվայի կոնվենցիայի 12-րդ հոդվածների պահանջները, գտել է, որ պատժի կատարման պայմաններն ապահովելու նպատակով օտարերկրյա պետության դատավճռի համապատասխանեցման հարցի քննության ժամանակ պետք է ղեկավարվել հանցանքի կատարման պահին գործող քրեական օրենքով: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը Ռ-Գ Մոսկվայի քաղաքային դատարանի դատավճռով Գ.Հովսեփյանի նկատմամբ ավազակային հարձակման համար նշանակված պատիժը համապատասխանեցրել է Ռուսաստանի Դաշնության տարածքում տվյալ հանցանքի կատարման պահին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող համապատասխան քրեաիրավական նորմի սանկցիային և մեղմացման առումով փոփոխել է այն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ-Գ Մոսկվայի քաղաքային դատարանի կողմից Գ.Հովսեփյանի նկատմամբ ավազակային հարձակման համար նշանակված պատիժը հանցանքը կատարելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիային համապատասխանեցնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ, դրա արդյունքում խախտվել են դատապարտյալ Գ.Հովսեփյանի հանձնման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի և միջազգային պայմանագրերի սխալ մեկնաբանում, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին: Հետևաբար, նշված հանգամանքը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի հիման վրա հիմք է Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմանն օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գատապարտյալ Գարեգին Հենրիկի Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Գատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

20.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԳ/0071/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Կ.ԱԳԱՄՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ մեղադրող Կ.Ադամյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի մայիսի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11117112 քրեական գործը՝ Արթուր Բաղդասարի Կարնազյանի կողմից առանց իրացնելու նպատակի զգալի չափերի թմրանյութ ապօրինի պատրաստելու և պահելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հունիսի 6-ի որոշմամբ Ա.Կարնազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի հուլիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2012 թվականի օգոստոսի 20-ի դատավճռով Ա.Կարնազյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով Ա.Կարնազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան 1 տարի ժամկետով:

3. Վերոգրյալ դատավճռի դեմ 2012 թվականի հոկտեմբերի 26-ին վերաքննիչ բողոք է բերել մեղադրող Կ.Ադամյանը, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Կ.Ադամյանը, որը Վճարելի դատարանի 2013 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ մեղադրողի վերաքննիչ բողոքում նշված է. «(...) Այսպիսով, գտնում եմ, որ (...) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը և խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորվող օրինականության, գործի արդարացի քննության սկզբունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹ հոդվածի 2-րդ կետն ամրագրել է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով, 376¹ հոդվածի 2-րդ կետով (...) խնդրում եմ վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, մասնակիորեն բեկանել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2012 թվականի օգոստոսի 20-ին թիվ ԵՇԳ-0071/01/12 գործով կայացված դատավճիռը՝ Արթուր Կարնազյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով փոփոխել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով համաչափ պատիժ»

(տե՛ս քրեական գործ, թերթ 190-192):

6. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ «(...) Ուսումնասիրելով դատախազ Կ.Ադամյանից ստացված վերաքննիչ բողոքը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ.

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում են՝ առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Ինչպես երևում է գործի նյութերից, առաջին ատյանի դատարանի դատավճիռը հրապարակվել է 2012 թվականի օգոստոսի 20-ին, իսկ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Կ.Ադամյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերաքննիչ քրեական դատարանի գրասենյակ առձեռն հանձնվել է 2012 թվականի հոկտեմբերի 26-ին, այսինքն՝ օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետն ավարտվելուց հետո: Հետևաբար, վերաքննիչ դատարանը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքը համարում է ժամկետանց: (...)» (տե՛ս քրեական գործ, թերթ 195-198):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներ:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը մատնանշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 1-ին, 375³-րդ հոդվածի 6-րդ մասերը և փաստարկել, որ արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանի նշանակած պատիժը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը: Մինչդեռ, սույն գործը քննելով արագացված դատական քննության կարգով Առաջին ատյանի դատարանն Ա.Կարնազյանի նկատմամբ որպես պատիժ է նշանակել ազատազրկում 1 տարի ժամկետով, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժն է:

8. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հնարավորություն են տալիս օրինականուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում վերաքննության կարգով բողոքարկել առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի

այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը: Ըստ բողոքաբերի՝ վերոնշյալ հիմքերով և հիմնավորումներով վեցամսյա ժամկետի պահպանմամբ վերաքննիչ բողոք է ներկայացրել սույն գործով կայացված դատավճռի դեմ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, խախտելով նշված քրեադատավարական դրույթների պահանջները, ժամկետանց լինելու պատճառաբանությամբ բողոքը թողել է առանց քննության՝ դրանով իսկ հնարավորություն չընձեռելով շտկելու Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված խախտումը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը, Ա.Կարնազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը փոփոխել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատիժ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման կարգի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանն առաջին հերթին անդրադառնում է բողոքաբերի բարձրացրած հետևյալ իրավական հարցին. իրավաչափ է արդյոք ժամկետանց լինելու պատճառաբանությամբ մեղադրող Կ.Աղամյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա:

(...)»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:

2. Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վատթարացում:

(...)

6. Սույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

Վերոշարադրյալ իրավանորմերում ամրագրված է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված կարևորագույն սկզբունքներից մեկը՝ կրկնակի դատապարտման անթույլատրելիության (ne bis in idem) սկզբունքը, որն իրենից ներկայացնում է դատարանի վճռի վերջնական և պարտադիր լինելու լայն սկզբունքի (res iudicata) դոկտրինի մեկնաբանություն և նպատակ է հետապնդում արգելել վերջնականապես ավարտված քրեական հետապնդման կրկնությունը: Կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքի կիրառման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Դ.Բաբայանի* գործով կայացված որոշման մեջ (տե՛ս Դ-ավիթ Բորիսի Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ-1/0043/01/11 որոշումը):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ne bis in idem սկզբունքն իմպերատիվ բնույթի չէ, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան նախատեսում են այդ սկզբունքից շեղվելու հնարավորություն: Նշված միջազգային փաստաթուղթը, մասնավորապես, չի բացառում պետության քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հնարավորությունն այն բացառիկ դեպքերում, երբ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա:

13. Սույն որոշման նախորդ կետում նշված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հնարավորությունն ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Այսպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի համաձայն՝

«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների գործն ըստ էության լուծող օրինական

ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում.

2) սույն օրենսգրքի 376¹ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.

(...)

2. Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը կարող է մերժել միայն այն դեպքում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջները, բացառությամբ այն դեպքի, երբ վերաքննիչ բողոքը բերվել է սույն օրենսգրքի 376¹ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դատական ակտի դեմ, որի հիմքերի բավարարության հարցը վերաքննիչ դատարանը լուծում է կողգիակ կազմով»:

Ինչպես հետևում է շարադրված դրույթների համադրված վերլուծությունից, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հստակ սահմանում է վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգն ու պայմանները, ինչպես նաև այդ բողոքի քննության կապակցությամբ վերաքննիչ դատարանի լիազորությունները: Մասնավորապես, առաջին ատյանի դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտած, գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար որևէ առանձնահատուկ պայման նախատեսված չէ, բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից մեկ ամիս է, և այս ժամկետն անցնելուց հետո բերված բողոքները թողնվում են առանց քննության: Մինչդեռ, առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու բացառիկ հնարավորություն նախատեսելով հանդերձ, օրենսդիրը սահմանում է առանձնահատուկ պայման, այն է՝ գործի նախորդ դատական քննության ընթացքում պետք է թույլ տրված լինեն նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը: Այդպիսի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել դրա օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

14. Նախորդ կետում շարադրված վերլուծությունից բխում է, որ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող, օրինական

ուժի մեջ մտած դատական ակտի դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով բերված բողոքը կարող է վարույթ ընդունել և քննել, եթե հանգում է եզրակացության այն մասին, որ բողոքաբերին հաջողվել է առերևույթ հիմնավորել, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը: Հակառակ դեպքում, վերաքննիչ դատարանի որոշմամբ այդպիսի բողոքը վարույթ ընդունելը մերժվում է:

Ընդ որում, եթե վերաքննիչ դատարանի կազմը նախագահող դատավորը ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ բերված բողոքը վարույթ է ընդունում միանձնյա, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված բողոքի հիմքերի բավարարության հարցը վերաքննիչ դատարանը լուծում է կոլեգիալ կազմով (նախագահող դատավոր և դատական կազմում ընդգրկված երկու դատավոր): Վերաքննիչ բողոքարկման փուլում որոշում կայացնելիս դատարանի կազմի հարցում մասն տարբերակված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով բերված բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա բողոքի հիմնավորումների որակին և դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտի, մինչդեռ առաջին դեպքում դրա անհրաժեշտությունը բացակայում է: Այդ հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև նկատի ունենալով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ բերված բողոքի քննությունն ուղղակիորեն շեղվում է կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքից, օրենսդիրը դատավարության մասնակիցներին օժտել է դատարանի կոլեգիալության լրացուցիչ երաշխիքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնարավորություն: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգն ու պայմանները, ինչպես նաև բերված բողոքի քննության կապակցությամբ վերաքննիչ դատարանի լիազորությունները տարբեր են և հստակ սահմանված են օրենքով:

15. Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Կարնազյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի դատավճռի դեմ դրա օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետի պահպանմամբ՝ 2012 թվականի հոկտեմբերի 26-ին, մեղադրող Կ.Ադամյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք (տես սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը):

Վերաքննիչ բողոքի հեղինակը փաստարկել է, որ գործի նախորդ քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության

բուն էութունը: Բողոքաբերը, մատնանշելով, որ բողոքը բերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, խնդրել է այն ընդունել վարույթ և շտկել Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված խախտումները (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, մեղադրողի վերաքննիչ բողոքը դիտարկելով որպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ակտի դեմ բողոք, փաստարկել է, որ այն բերվել է մեկամսյա ժամկետի խախտմամբ, և բողոքը թողել է առանց քննության (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

16. Մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, մեղադրող Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքի հիմնավորումները գնահատելու և նշված բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բավարարության հարցը լուծելու փոխարեն, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ, 379-րդ և 381-րդ հոդվածների պահանջները, որոշում է կայացրել բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ մեղադրող Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ: Վերաքննիչ դատարանը, մասն որոշում կայացնելով, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վերոնշյալ հանգամանքը Վճարելի դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

17. Ինչ վերաբերում է վճարելի բողոքի հեղինակի կողմից բարձրացված այն հարցին, որը կապված է Առաջին ատյանի դատարանի կողմից ենթադրաբար թույլ տրված խախտումներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճարելի դատարանը փաստում է, որ դրան հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումը վերացնելուց հետո: Հետևաբար, Վճարելի դատարանը նշված հարցին սույն որոշման շրջանակներում չի անդրադառնում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրող Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

21.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԳ/0105/06/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ՋԱԳԻՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

ընդհանուր դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ մեղադրյալ Տիգրան Համլետի Հախվերդյանի պաշտպան Ս.Ջաղինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում անհայտ անձի կողմից Հ.Սկրտչյանին ծանր մարմնական վնասվածք պատճառելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 11134012 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ Տիգրան Հախվերդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը Տ.Հախվերդյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)

2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ մեղադրյալ Ս.Հախվերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել պաշտպան Ս.Ջաղինյանը, որը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունվարի 22-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Ս.Ջաղինյանը:

Վճռաբեկ դատարանը 2013 թվականի մարտի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին նախաքննության մարմնի միջնորդության քննությանը մեղադրյալ Ս.Հախվերդյանը ներկա չի եղել: Առաջին ատյանի դատարանը Ս.Հախվերդյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հրապարակել է 2012 թվականի նոյեմբերի 26-ին (տե՛ս նյութեր, թերթ 17-18):

6. 2012 թվականի դեկտեմբերի 25-ին փաստաբան Ս.Ջաղինյանը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ Ս.Հախվերդյանի պաշտպան: 2012 թվականի դեկտեմբերի 28-ին պաշտպան Ս.Ջաղինյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով տրամադրել Ս.Հախվերդյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը: Նույն օրը պաշտպան Ս.Ջաղինյանին է տրամադրվել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշման պատճենը (տե՛ս նյութեր, թերթ 21-23):

7. Մեղադրյալ Ս.Հախվերդյանի պաշտպան Ս.Ջաղինյանն Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել փոստի միջոցով: Վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա է փոստային ծառայության դրոշմակնիքը, որի համաձայն՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2013 թվականի հունվարի 8-ին (տե՛ս նյութեր, թերթ 25-34):

8. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման պատճառաբանական մասում նշել է. «(...) Ինչպես երևում է վերաքննիչ բողոքից, պաշտպան Ս.Ջաղինյանը վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնել 2013թ. հունվարի 8-ին, այն Վերաքննիչ դատարանում ստացվել է 2013թ. հունվարի 10-ին, իսկ Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումից երևում է, որ այն հրապարակվել է 2012թ. նոյեմբերի 26-ին, այսինքն՝ բողոք բերած անձի՝ պաշտպան Ս.Ջաղինյանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2012թ. նոյեմբերի 26-ի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը 2012թ. դեկտեմբերի 3-ն է,

սակայն վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան ուղարկվել է 2013թ. հունվարի 8-ին, հետևաբար բողոքը ժամկետանց է (...)» (տե՛ս նյութեր, քերթ 37-39):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, խախտել է մեղադրյալ Տ.Հախվերդյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբ համարել նշված որոշումը շահագրգիռ անձի կողմից ստանալու պահը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը որպես բողոքարկման ժամկետի սկիզբ է համարել որոշման հրապարակման պահը՝ հաշվի չառնելով, որ նշված որոշման պատճենը պաշտպանության կողմն ստացել է 2012 թվականի դեկտեմբերի 28-ին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունվարի 22-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. պաշտպան Ս.Ջաղինյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակե՞լ է արդյոք մեղադրյալ Տ.Հախվերդյանի դատական պաշտպանության իրավունքը:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի

3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատություններում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում (...)»:

Շարադրված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ հանդիսանում է այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչ է հանդիսանում նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական որոշումների վերանայման և ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրներով և դատական սխալների ու անօրինական դատական ակտերի բացառման և կանխման օբյեկտիվ, անընդհատ գոյություն ունեցող պահանջով:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերը վերադատության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ բարդությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի ողջամտությունն ապահովված կհամարվի նախևառաջ այն դեպքում, եթե շահագրգիռ անձին բավարար ժամանակ տրամադրվի բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար: Իրավունքների ենթադրյալ խախտումներից դատարանի առջև իրավական պաշտպանություն հայցող անձի կողմից հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման ողջամիտ սկզբի սահմանմամբ:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները, մասնավորապես՝ այդ ժամկետների սկիզբը հաշվելու վերաբերյալ կարգավորումները լիարժեք կերպով չեն երաշխավորում իրենց շահերին առնչվող դատական ակտերը վերադաս դատարան բողոքարկելու՝ դատավարության

մասնակիցների իրավունքը:

(...) ՀՀ քրեադատավարական օրենքն առաջին ատյանի դատարանի՝ անձին ազատությունից զրկելու մասին (կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման, անձին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին) գործն ըստ էության չլուծող որոշումների բողոքարկման համար սահմանում է հնգօրյա (...) ժամկետ՝ բողոքարկման ժամկետի սկիզբ համարելով դատական ակտի հրապարակման պահը: Նման կարճ ժամկետների սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնելու օրենսդրի կամքով: Մյուս կողմից, սակայն, բողոքարկման ժամկետների սկիզբը դատական ակտի հրապարակման պահից համարելու պայմաններում նման կարճ ժամկետները կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը:

Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը:

Հետևաբար, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը:

(...) առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է դատական ակտը շահագրգիռ անձին հանձնելու և ոչ թե այն դատական նիստերի դահլիճում հրապարակելու պահից» (տե՛ս Տիգրան Վարազդատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 17-18-րդ և 22-24-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդության քննությանը մեղադրյալ Տ.Հախվերդյանը չի մասնակցել, քանի որ գտնվել է հետախուզման մեջ: Առաջին ատյանի դատարանը որոշումը հրապարակել է 2012 թվականի նոյեմբերի 26-ին (տե՛ս սույն որոշման 1-ին, 5-րդ կետերը):

Փաստաբան Ս.Ջաղինյանը քրեական գործով վարույթին որպես մեղադրյալ Տ.Հախվերդյանի պաշտպան ներգրավվել է 2012 թվականի դեկտեմբերի 25-ին, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշման պատճենն ստացել է 2012 թվականի դեկտեմբերի 28-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ պաշտպանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 2013 թվականի

հունվարի 8-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշման հրապարակման պահից հաշվելով դատական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքը, որպես վերաքննիչ բողոք բերելու վերջին օր է դիտել 2012 թվականի դեկտեմբերի 3-ը և պաշտպան Ս.Ջաղինյանի բողոքը թողել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

14. Սույն որոշման 13-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 12-րդ կետում և համապատասխանաբար նաև *Տ.Հախվերդյանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը պաշտպան Ս.Ջաղինյանի կողմից այն փաստացի ստանալու պահից՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ից, հաշվելու պարագայում ստացվում է, որ պաշտպանի 2013 թվականի հունվարի 8-ի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հնգօրյա ժամկետի պահպանմամբ:

Հետևաբար, Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Տ.Հախվերդյանի պաշտպան Ս.Ջաղինյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Տ.Հախվերդյանի դատական պաշտպանության իրավունքը՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների խախտում: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Մեղադրյալ Տիգրան Համլետի Հախվերդյանի պաշտպան Ս.Ջաղինյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունվարի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0341/06/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Ա.ՋԱԲԱՐՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի փետրվարի 6-ի որոշման դեմ մեղադրյալ Հովհաննես Վոլոդյայի Գ-րիգորյանի պաշտպան Ա.Ջաբարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի մայիսի 16-ին ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում հարուցվել է թիվ 61203311 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ Հովհաննես Գ-րիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 314-րդ հոդվածով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի

դատարան) 2012 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն դատարանի 2012 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ Հ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով:

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է ևս երկու մասով՝ մինչև 2013 թվականի մարտի 28-ը: Նույն որոշմամբ մերժվել է Հ.Գրիգորյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին պաշտպանի միջնորդությունը:

3. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել պաշտպան Ա.Զաքարյանը, որը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի փետրվարի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Ա.Զաքարյանը:

Վճռաբեկ դատարանը 2013 թվականի մարտի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Հ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումը հրապարակել է 2013 թվականի հունվարի 18-ին (տե՛ս նյութեր, թերթ 83-92):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման վերջին էջին առկա է հետևյալ ձեռագիր գրառումը. «ստացա Ա.Զաքարյանին փոխանցելու համար / ստորագրություն/ Լ.Միմոնյան»: Պաշտպան Ա.Զաքարյանը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է գրություն, համաձայն որի՝ Լ.Միմոնյանն Առաջին ատյանի դատարանի որոշումը փոխանցել է իրեն 2013 թվականի հունվարի 21-ին (տե՛ս նյութեր, թերթ 92, 118):

7. Մեղադրյալ Հ.Գրիգորյանի պաշտպան Ա.Զաքարյանն Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել փոստի միջոցով: Վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա է փոստային ծառայության դրոշմակնիքը, որի համաձայն՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2013 թվականի հունվարի 29-ին: Պաշտպան Ա.Զաքարյանը վերաքննիչ բողոքում նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն ստացել է 2013 թվականի հունվարի 21-ին (տե՛ս նյութեր, թերթ 97-101):

8. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման պատճառաբանական մասում նշել է. «(...) Մեղադրյալ Հովհաննես Վոլոդյայի Գրիգորյանի շահերի պաշտպան Ա.Զաքարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ այն ժամկետանց է, քանի

որ սույն գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել 2013 թվականի հունվարի 18-ին, մինչդեռ վերաքննիչ բողոքը բերվել է 2013 թվականի հունվարի 29-ին, երբ արդեն իսկ ավարտված էր բողոքարկման ժամկետը (...» (տե՛ս նյութեր, թերթ 104-105):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, ժամկետանց լինելու պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, սահմանափակել է մեղադրյալ Հ.Գրիգորյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմադրությամբ երաշխավորված՝ վերադաս դատարանում իր կալանավորման օրինականությունը վիճարկելու իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր Հ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբ համարել նշված որոշումը շահագրգիռ անձի կողմից ստանալու պահը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը որպես բողոքարկման ժամկետի սկիզբ է համարել որոշման հրապարակման պահը՝ հաշվի չառնելով, որ նշված որոշման պատճենը պաշտպանության կողմն ստացել է 2013 թվականի հունվարի 21-ին:

10. Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ մեղադրյալ Հ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և նրա նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անհիմն է և չպատճառաբանված: Կրկին շեշտելով, որ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման արդյունքում սահմանափակվել է Հ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքը՝ բողոքի հեղինակը խնդրել է ըստ էության քննել Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված իր բողոքը և դատական ստուգման ենթարկել նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և մեղադրյալ Հ.Գրիգորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնել կամ փոխարինել գրավով:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. պաշտպան Ա.Չաքարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել⁹ է արդյոք մեղադրյալ Հ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքը:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատություններում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում (...):»:

Շարադրված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ հանդիսանում է այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչ է հանդիսանում նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական որոշումների վերանայման և ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրներով և դատական սխալների ու անօրինական դատական ակտերի բացառման և կանխման օբյեկտիվ, անընդհատ գոյություն ունեցող պահանջով:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերը վերադատության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ

բարդությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի ողջամտությունն ապահովված կհամարվի նախևառաջ այն դեպքում, եթե շահագրգիռ անձին բավարար ժամանակ տրամադրվի բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար: Իրավունքների ենթադրյալ խախտումներից դատարանի առջև իրավական պաշտպանություն հայցող անձի կողմից հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման ողջամիտ սկզբի սահմանմամբ:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները, մասնավորապես՝ այդ ժամկետների սկիզբը հաշվելու վերաբերյալ կարգավորումները լիարժեք կերպով չեն երաշխավորում իրենց շահերին առնչվող դատական ակտերը վերադաս դատարան բողոքարկելու՝ դատավարության մասնակիցների իրավունքը:

(...) ՀՀ քրեադատավարական օրենքն առաջին ատյանի դատարանի՝ անձին ազատությունից զրկելու մասին (կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման, անձին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին) գործն ըստ էության չլուծող որոշումների բողոքարկման համար սահմանում է հնգօրյա (...) ժամկետ՝ բողոքարկման ժամկետի սկիզբ համարելով դատական ակտի հրապարակման պահը: Նման կարճ ժամկետների սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնելու օրենսդրի կամքով: Մյուս կողմից, սակայն, բողոքարկման ժամկետների սկիզբը դատական ակտի հրապարակման պահից համարելու պայմաններում նման կարճ ժամկետները կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը:

Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը:

Հետևաբար, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը:

(...) առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական

ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է դատական ակտը շահագրգիռ անձին հանձնելու և ոչ թե այն դատական նիստերի դահլիճում հրապարակելու պահից» (տե՛ս Տիգրան Վարազդատի Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 17-18-րդ և 22-24-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Հ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվել է 2013 թվականի հունվարի 18-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեղադրյալ Հ.Գրիգորյանի պաշտպան Ա.Զաքարյանն Առաջին ատյանի դատարանի որոշման պատճենն ստացել է 2013 թվականի հունվարի 21-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Պաշտպանը վերոնշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել 2013 թվականի հունվարի 29-ին՝ վերաքննիչ բողոքում նշելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն ստացել է 2013 թվականի հունվարի 21-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշման հրապարակման պահից հաշվելով դատական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքը, պաշտպան Ա.Զաքարյանի բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Սույն որոշման 14-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 13-րդ կետում և համապատասխանաբար նաև *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը պաշտպան Ա.Զաքարյանի կողմից այն փաստացի ստանալու պահից՝ 2013 թվականի հունվարի 21-ից, հաշվելու պարագայում ստացվում է, որ պաշտպանի 2013 թվականի հունվարի 29-ի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հնգօրյա ժամկետի պահպանմամբ:

Հետևաբար, Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Հ.Գրիգորյանի պաշտպան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Հ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքը՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների խախտում: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

16. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի որոշումն անհիմն և չպատճառաբանված լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի (...) դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն ըստ էության դատական ստուգման չի ենթարկել Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ նշված որոշման դեմ բերված բողոքը թողնելով առանց քննության, հետևաբար Հ.Գ-րի գորյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորման իրավաչափության, ինչպես նաև կալանքը գրավով փոխարինելու թույլատրելիության հարցերը Վճռաբեկ դատարանի իրավասությունից դուրս են: Հակառակ դեպքում, եթե Վճռաբեկ դատարանն անդրադառնա նշված հարցերին, կխախտվեն Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ՀՀ Սահմադրությամբ և ՀՀ քրեադատավարական օրենսգրքով երաշխավորված՝ օրինականության սկզբունքի խախտման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Հովհաննես Վալդյայի Գ-րի գորյանի պաշտպան Ա.Չաքարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի փետրվարի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

23.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0168/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԱՆԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ տուժողի ներկայացուցիչ՝*

2013 թվականի մայիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Մարգար Գազիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի մարտի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Հակոբյանի պաշտպան Ռ.Միրեկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հուլիսի 11-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում հարուցվել է թիվ 13140312 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով:

2012 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ Մարգար Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ Մարգար Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2012 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ Ջիվան Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ Ջիվան Գասպարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով քրեական հետապնդումը դադարեցվել է ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ:

2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Մ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ թիվ 13140312 քրեական գործից մաս է անջատվել և առանձնացվել առանձին վարույթում՝ անհայտ անձի կողմից Մ.Հակոբյանի հետ նախնական համաձայնությամբ հափշտակություն կատարելու վերաբերյալ, որին տրվել է թիվ 13140312/1 համարը:

2012 թվականի սեպտեմբերի 20-ին Մարգար Հակոբյանի վերաբերյալ թիվ 13140312 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 15-ի դատավճռով Մարգար Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Մ.Հակոբյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 7-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 15-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 7-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Մ.Հակոբյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Հակոբյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Մ.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, նախնական համաձայնության գալով ինքնությունը չպարզված անձնավորության հետ, 2012թ. մայիս ամսվա ընթացքում, միասնական հանցավոր մտադրությամբ միավորված, Երևան քաղաքի «Հաղթանակ» կամուրջի հենասյուների վրայից քանդելով գաղտնի հափշտակել է «Երքադույս» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող զգալի չափի՝ ընդհանուր 180.000 ՀՀ դրամ արժողությամբ 3 հատ լուսարձակներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 160):

6. Անհայտ անձի կողմից Մ.Հակոբյանի հետ նախնական համաձայնությամբ «Հաղթանակ» կամրջի լուսարձակները գաղտնի հափշտակելու վերաբերյալ սույն քրեական գործից մաս անջատելու մասին քննիչի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման մեջ արձանագրված է՝ «Գողությունը միայնակ կատարելու վերաբերյալ մեղադրյալ Մ.Հակոբյանի ցուցմունքը ստուգելու նպատակով վերջինիս առաջարկվել է մասնակցել քննչական փորձարարությանը և միայնակ «Հաղթանակ» կամրջի հենասյանը մոտաժված լուսարձակն ապամոնտաժել և ցած իջեցնել, սակայն մեղադրյալ Մ.Հակոբյանը հրաժարվել է իր իսկ ցուցմունքում նշված հանգամանքը ստուգելու համար նախատեսված քննչական գործողությանը մասնակցելուց, որպիսի պայմաններում ակնհայտ է, որ մեղադրյալ Մ.Հակոբյանը հանցագործությունը կատարել է ինքնությունը չպարզված անձնավորության հետ նախնական համաձայնության գալով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 165-167):

7. Գործով ձեռք բերված ապացույցների իրավական վերլուծության արդյունքում Առաջին ատյանի դատարանը, հաստատված համարելով վերը նշված մեղադրանքը, արձանագրել է, որ «(...) ամբաստանյալ Մ.Հակոբյանի ցուցմունքները՝ լուսարձակները միայնակ հափշտակելու մասին, իրականությանը չեն համապատասխանում, արժանահավատ չեն, քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու հարցում հանցակցին օգնելու, համեմատաբար մեղմ պատիժ ստանալու նպատակ են հետապնդում և հերքվում են արդեն իսկ նշված ապացույցներով:

(...) [Դ-]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մ.Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ գողություն կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 82):

8. Վերաքննիչ դատարանը, քննարկելով Մ.Հակոբյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու վերաբերյալ պաշտպան Ռ.Միրեկանյանի փաստարկը, նշել է՝ « (...) Վերաքննիչ դատարանը ուսումնասիրելով և վերլուծելով գործի ապացույցները, նույնպես հանգում է հանդգման, որ ամբաստանյալ Մ.Հակոբյանի ցուցմունքները՝ լուսարձակները միայնակ հափշտակելու մասին, իրականությանը չեն համապատասխանում և արժանահավատ չեն:

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները, մասնավորապես՝ գողությունը միայնակ կատարելու անհնարինությունը վկայող դեպքի վայրի վերը նկարագրված իրադրությունը, գողությունը միայնակ կատարելու հարցը պարզելու նպատակով քննչական փորձարարությանը մասնակցելուց Մ.Հակոբյանի խուսափելու փաստը, հանգում է հանդգման, որ ամբաստանյալ Մ.Հակոբյանը գողությունը կատարել է մեկ այլ անձի հետ միասին:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ Մ.Հակոբյանի մեղավորության վերաբերյալ

հանգել է ճիշտ հետևության, որ ամբաստանյալ Մ.Հակոբյանի մեղավորությունը հիմնավորված է Առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռում շարադրված՝ ամբաստանյալի հանցանքը հիմնավորող ապացույցներով, որոնցով և հերքվում են վերաքննիչ բողոքում նշված, ինչպես նաև Վերաքննիչ դատարանում՝ դատաքննության ժամանակ, ամբաստանյալ Մ.Հակոբյանի պաշտպան Ռ.Միրեկանյանի բերած ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ պատճառաբանությունները:

(...) Վերաքննիչ դատարանը, քննության ենթարկելով ամբաստանյալ Մ.Հակոբյանի պաշտպան Ռ.Միրեկանյանի վերաքննիչ բողոքի փաստարկները, դրանք համադրելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների հետ, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, նույնպես հանգում է այն հետևության, որ Մարգար Գազիկի Հակոբյանի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքում հաստատված է: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 152-153):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով ստորադաս դատական ատյանների դատական ակտերը օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով նախաքննության և դատաքննության ընթացքում իր պաշտպանյալը ցուցմունք է տվել այն մասին, որ լուսարձակները միայնակ է գողացել, բացի այդ, քրեական գործով ձեռք չեն բերվել ապացույցներ, որոնք կհիմնավորեին, որ իրեն վերագրվող արարքը Մ.Հակոբյանը կատարել է ինքնությունը չպարզված անձի հետ նախնական համաձայնությամբ:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածում ամրագրված դրույթն այն մասին, որ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի, բողոք բերած անձը գտել է, որ իր պաշտպանյալին առաջադրված մեղադրանքը պետք է վերադրակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով:

10. Ուստի, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 15-ի դատավճիռը, Մարգար Հակոբյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի

177-րդ հոդվածի 1-ին մասով, Մարգար Հակոբյանի նկատմամբ նշանակել վերագրվող արարքի համար նախատեսված մեղմ պատիժ՝ տուգանք, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանական չկիրառել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ապացուցված է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Մ.Հակոբյանը հափշտակությունը կատարել է այլ անձի (անձանց) հետ նախնական համաձայնությամբ:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճարելի դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեադատավարական օրենքով ապացույցներին և ապացուցման գործընթացին ներկայացվող պահանջները հետևյալն են.

ա) ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողությունների, իրադարձությունների վերաբերյալ, (...):

(...) Ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի տարր, իրենից ներկայացնում է մտավոր, տրամաբանական գործունեություն, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի

թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վատահոթությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը: (...)» (տե՛ս Մակար Ռ-ազմիկի Հովհաննիսյանի և Աշոտ Վաղարշակի Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ Ե-ԶԲԴ/0632/01/08 որոշման 13-14-րդ կետերը):

13. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝
«(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի»:

Մեջբերված սահմանադրական և քրեադատավարական դրույթները մեկնաբանելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված՝ *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշման համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի **ապացույցներով և ոչ թե ենթադրություններով**: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների

կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը: Այս հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես, Եվրոպական դատարանը կարևորել է կոնկրետ գործով արդար դատական քննություն կատարված լինելու վերաբերյալ իր համոզմունքի ձևավորումը և նշել է, որ քրեական վարույթի իմաստով արդար դատական քննությունը ներառում է նաև անմեղության կանխավարկածի պահպանումը, ինչը նշանակում է, որ դատավորը չպետք է ելնի այն կանխավարկածից, թե անձը կատարել է իրեն մեղսագրվող հանցանքը, հանցանքի կատարման մեջ անձի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը կրում է դատախազությունը և կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի (տե՛ս Թելֆներն ընդդեմ Ավստրիայի (TELFNER v. AUSTRIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33501/96, կետ 15, ինչպես նաև Նատունենն ընդդեմ Ֆինլանդիայի (NATUNEN v. FINLAND) գործով 2009 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատ թիվ 21022/04, կետ 53):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը:

2. Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անգոչությամբ: (...):»:

Հանցակցության հատկանիշների և ձևերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* գործով որոշման մեջ (տե՛ս Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-29-րդ կետերը), ինչպես նաև *Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի* գործով որոշման մեջ (տե՛ս Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԶԳ/0174/01/11 որոշման 17-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ

կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին»:

Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանք կատարելու հարցերին Վճարելի դատարանն անդրադարձել է Հ.Սարգսյանի և այլոց գործով որոշման մեջ (տե՛ս Հակոբ Հայկի Սարգսյանի և այլոց գործով Վճարելի դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԴ/0136/01/10 որոշման 11-18-րդ կետերը):

15. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության ընթացքում Մ.Հակոբյանի հետ միասին «Հաղթանակ» կամրջի հենասյուների վրայից 3 հատ լուսարձակները նախնական համաձայնությամբ մեկ միասնական դիտավորությամբ գաղտնի հափշտակելու մեջ մեղադրվել է նաև այլ անձ, որի նկատմամբ քրեական հետապնդումը արդարացման հիմքով դադարեցվել է ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ: Դրանից հետո, չնայած Մ.Հակոբյանը մշտապես պնդել է, որ գողությունը կատարել է միայնակ, նախաքննության մարմինը քրեական գործից մաս է անջատել և առանձնացրել առանձին վարույթում (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Անհայտ անձի կողմից Մ.Հակոբյանի հետ նախնական համաձայնությամբ «Հաղթանակ» կամրջի լուսարձակները գաղտնի հափշտակելու վերաբերյալ սույն քրեական գործից մաս անջատելու մասին որոշման մեջ նախաքննության մարմինն արձանագրել է, որ մեղադրյալ Մ.Հակոբյանի ցուցմունքն ստուգելու նպատակով նրան առաջարկվել է մասնակցել քննչական փորձարարությանը և միայնակ «Հաղթանակ» կամրջի հենասայանը մոտոտաժված լուսարձակն ապամոնտաժել և ցած իջեցնել, սակայն մեղադրյալ Մ.Հակոբյանը հրաժարվել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Քննչական փորձարարությանը մասնակցելուց Մ.Հակոբյանի հրաժարումը նախաքննության մարմինը գնահատել է որպես հաստատում այն հանգամանքի, որ նա հանցագործությունը կատարել է ինքնությունը չպարզված անձնավորության հետ նախնական համաձայնության գալով: Հետագայում, այդպես էլ չբացահայտելով խմբի մեջ ընգրկված մյուս անձին կամ անձանց՝ նախաքննության մարմինը Մ.Հակոբյանին մեղսագրել է լուսարձակների հափշտակությունը «մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ» կատարելու ծանրացնող հատկանիշը (տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը):

Սույն գործով ձեռք բերված ապացույցների գնահատման արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ամբաստանյալ Մ.Հակոբյանի ցուցմունքները՝ լուսարձակները միայնակ հափշտակելու մասին, իրականությանը չեն համապատասխանում, արժանահավատ չեն, քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու հարցում հանցակցին օգնելու, համեմատաբար մեղմ պատիժ ստանալու նպատակ են հետապնդում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը ևս գտել է, որ ամբաստանյալ Մ.Հակոբյանի ցուցմունքները՝ լուսարձակները միայնակ հափշտակելու մասին, իրականությանը չեն համապատասխանում և արժանահավատ չեն: Իր այս եզրակացության հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է այն հանգամանքը, որ Մ.Հակոբյանը խուսափել է

մասնակցել քննչական փորձարարությանը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

16. Սույն որոշման 15-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հափշտակություն կատարելու մեջ Մ.Հակոբյանի մեղավորությունը Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել՝ հիմք ընդունելով ոչ թե ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ձեռք բերված, վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցների բավարար ամբողջությունը, այլ մեղադրյալի կողմից քննչական փորձարարությանը մասնակցելուց հրաժարվելու փաստի վրա հիմնված ենթադրությունը:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացուցված չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Մ.Հակոբյանը հափշտակությունը կատարել է այլ անձի (անձանց) հետ նախնական համաձայնությամբ: Այս առումով Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով ամրագրված՝ ապացույցների գնահատման պահանջը:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Մ.Հակոբյանի արարքը «մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված լինելու» հատկանիշով որակելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով երաշխավորված՝ անձի մեղավորության մասին հետևությունը ենթադրությունների վրա չհիմնելու, ինչպես նաև բոլոր չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սկզբունքների խախտում:

18. Սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարգար Գազիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 15-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 7-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Մարգար Գազիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

24.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԳ/0126/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Մ.ՄՈՒՐԱԳՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2013 թվականի մայիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հմայակ Սիմոնի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հունվարի 30-ի որոշման դեմ ամբաստանյալ Հ.Դավթյանի պաշտպան Մ.Մուրադյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հուլիսի 31-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 30104412 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ Հմայակ Սիմոնի Դավթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2012 թվականի սեպտեմբերի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության

արագացված կարգ, 2012 թվականի նոյեմբերի 21-ի դատավճռով Հ.Դավթյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ գրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Հ.Դավթյանի պաշտպան Մ.Մուրադյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հունվարի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 21-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունվարի 30-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Դավթյանի պաշտպան Մ.Մուրադյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Դավթյանի պաշտպան Մ.Մուրադյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Հ.Դավթյանը դատապարտվել է այն բանի համար, որ «2012թ. հուլիսի 31-ին՝ ժամը 15-ի սահմաններում, վարելով «Օպել Վեկտրա» մակնիշի 75QP075 պ/հ ավտոմեքենան՝ Գյումրի-Արևիկ ավտոճանապարհով ընթանալիս թույլ է տվել ՃԵԿ-ի 67 կետի պահանջին հակասող գործողություն, այն է՝ Հնայակ Դավթյանը տվյալ վրաերթը կանխելու տեխնիկական հնարավորություն ունեցել է և նա ժամանակին միջոցներ չձեռնարկելով ավտոմեքենան մինչև վրաերթի տեղին հասնելը կանգնեցնելու կամ դանդաղեցնելու համար, որպեսզի Անժելիա Ստեփանի Կաթունյանը դուրս գա վտանգավոր գոտուց, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն դրանով իսկ պայմանավորել տվյալ վրաերթի առաջացումը: Հնայակ Դավթյանն իր երթևեկության համար վտանգավոր գոտում հետիոտի շարժման սկզբնապահից սկսած պետք է ժամանակին կատարված արգելակումով իր վարած ավտոմեքենայի ընթացքը դանդաղեցնելու կամ էլ այն լրիվ կանգնեցնելու միջոցով հնարավորություն տար հետիոտին դուրս գալու վտանգավոր գոտուց: Ավտոմեքենայի ոչ պատշաճ կառավարման արդյունքում վրաերթի է ենթարկել ճանապարհն աջից ձախ արագ քայլերով ուղղահայաց հատող հետիոտն Անժելա Կաթունյանին, որը վրաերթի հետևանքով ստացած մարմնական վնասվածքներից հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին մահացել է» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 54):

6. Գյումրի քաղաքի Նոր Ավան թաղամասի բնակիչների կողմից տրված բնութագրի համաձայն՝ «[Հ.Դավթյանի] [հ]այրը՝ Սիմոն Ժորիկի Դավթյանը և մայրը՝ Սուսաննա Երվանդի Դավթյանը 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամներ են: Աշխատանքի բացակայության պատճառով, քանի որ տանը ոչ ոք չի աշխատում, ամբողջ հոգսը իր վրա է վերցրել Հնայակ Սիմոնի Դավթյանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 96):

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ

բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ 018109 և թիվ 782460 տեղեկանքների համաձայն՝ Հ.Դավթյանի հայրը 2-րդ, իսկ մայրը՝ 3-րդ կարգի հաշմանդամ են (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 98-99):

8. Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու բնակարանների սպասարկման» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հ.Դավթյանի ընտանիքն ունի հետևյալ կազմը՝ հայր, մայր, տատիկ և քույր (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 95):

9. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Պատիժ սահմանելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու ամբաստանյալի անձը, որ նա նախկինում դատված չի եղել, բնութագրվել է դրական, մեղքը ընդունել է և գղջացել է կատարածի համար: Տուժողի իրավահաջորդ Լևոն Կաթունյանն ամբաստանյալի նկատմամբ որևէ պահանջ չի ներկայացրել և խնդրել է մեղմ վերաբերվել:

Նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, որոշակի ժամկետով զրկել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 54-55):

10. Ամբաստանյալի պաշտպան Մ.Մուրադյանը վերաքննիչ բողոքում խնդրել է Հ.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ նշելով, որ «[Առաջին ատյանի] դատարանը պետք է հաշվի առներ նաև դեպքին հաջորդող պահին Հ.Դավթյանի վարքագիծը և նրա ընտանեկան վիճակը (...), մասնավորապես այն, որ դեպքից անմիջապես հետո տուժողին օգնություն է ցուցաբերել և տեղափոխել հիվանդանոց, վերականգնել տուժողին պատճառված վնասը, բացի այդ նրա խնամքին է երեք անձ՝ հաշմանդամ ծնողները և տատը, ընտանիքում միակ աշխատողն է (...), և իր վաստակով հոգում է ընտանիքի սոցիալական խնդիրները» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 93):

11. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Հիմնավորված չէ և քրեական գործի նյութերից չի բխում վերաքննիչ բողոքի այն պնդումը, թե «ամբաստանյալ Հ.Դավթյանի խնամքին են գտնվում երեք անձ և նա ընտանիքի միակ կերակրողն է», այդ փաստը հաստատող ապացույցներ գործում առկա չեն:

Ընդհակառակը, գործում առկա տվյալների համաձայն՝ Հ.Դավթյանին մեղադրանք առաջադրելու պահից վերջինս ապահովվել է հանրային պաշտպանով՝ անվճարունակ լինելու պատճառով:

(...) Վերաքննիչ դատարանը քննության առնելով ամբաստանյալ Հ.Դավթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող տվյալները, վերջինիս պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող վերոնշյալ հանգամանքները, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու և միայն այդ կերպ կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված

պատժի նպատակներին՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 95):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

12. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ և 70-րդ հոդվածները, որոնք ենթակա էին կիրառման: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել մի շարք մեղմացուցիչ հանգամանքներ, այն է՝ պատահարից հետո Հ.Դավթյանի դրսևորած վարքագիծը, տուժողին օգնություն ցուցաբերելը և հիվանդանոց տեղափոխելը, տուժողին պատճառված վնասը հատուցելը, ինչպես նաև Հ.Դավթյանի ընտանեկան վիճակը, ընտանիքի միակ կերակրող լինելը և այն, որ նրա խնամքին եներեք անձ՝ հաշմանդամ ծնողները, տատը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Հ.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը մերժելու հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է այն հանգամանքը, որ նա օգտվում է հանրային պաշտպանի ծառայություններից, մինչդեռ քրեական գործին հանրային պաշտպանի մասնակցությունը քրեական դատավարությունում անձի պաշտպանության ձև է և չի կարող դիտվել նրա անձը բնութագրող հանգամանք:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 21-ի ու Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունվարի 30-ի դատական ակտերը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույցների բարեխիղճ գնահատման, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ որպես առաջին ատյանի դատարանի դատական ակտերը վերանայող վերադաս ատյանի հայեցողության շրջանակների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Ապացույցների բարեխիղճ գնահատումը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Հ.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանն արդյո՞ք բարեխիղճ գնահատման է ենթարկել սույն

գործով ձեռք բերված ապացույցները:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

(...)

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում էիր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենցներքին համոզմամբ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Մ.Հովհաննիսյանի* և *Ա.Մարտիրոսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [ա] պացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...)

Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

(...)

Ապացույցների գնահատումը համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների ձևով՝ (...)» (տե՛ս Մակար

Ռազմիկի Հովհաննիսյանի և Աշոտ Վաղարշակի Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԳ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

17. Չարգացնելով *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների կամայական գնահատման արգելքը ենթադրում է ապացույցները բարեխիղճ վերլուծության ենթարկելու պարտականություն: Այլ խոսքով՝ դատարանը պարտավոր է իր դատական ակտում ամրագրել և համապատասխան վերլուծության ու գնահատման ենթարկել գործի քննության և լուծման, այդ թվում՝ անձի նկատմամբ պատիժ նշանակելու և այդ պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Հետևաբար, անձի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պարտավոր է բարեխիղճ գնահատման ենթարկել նրա անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները հաստատող ապացույցները:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքում պաշտպանը խնդրել է Հ.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ ի թիվս այլ հանգամանքների նշելով, որ Հ.Դավթյանի խնամքին են հաշմանդամ ծնողները, տատը, և նա հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Վերաքննիչ դատարանը մերժել է պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ իր դատական ակտում պատճառաբանելով, որ հիմնավորված չէ և քրեական գործի նյութերից չի բխում, որ ամբաստանյալ Հ.Դավթյանի խնամքին են գտնվում երեք անձ, և նա ընտանիքի միակ կերակրողն է: Ավելին, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ այդ փաստը հաստատող ապացույցներ գործում առկա չեն (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Մինչդեռ, սույն քրեական գործի նյութերում առկա են մի շարք փաստաթղթեր, այն է՝ Գյումրի քաղաքի Նոր-Ավան թաղամասի բնակիչների կողմից տրված բնութագիրը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ 018109, թիվ 782460 և Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու բնակարանների սպասարկման» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքները, որոնք հիմնավորում են, որ ամբաստանյալ Հ.Դավթյանի խնամքին են գտնվում երեք անձ, և նա ընտանիքի միակ կերակրողն է (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

19. Սույն որոշման 16-17-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը բարեխիղճ գնահատման չի ենթարկել սույն գործով ձեռք բերված ապացույցները: Մասնավորապես, քրեական գործում Հ.Դավթյանի անձը բնութագրող, պատասխանատվությունը մեղմացնող

համապատասխան ապացույցների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Հ.Դավթյանի խնամքին երեք անձի առկայությունը և նրա՝ ընտանիքի միակ կերակրողը հանդիսանալու հանգամանքը հաստատող ապացույցներ քրեական գործում առկա չեն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը Հ.Դավթյանի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ, 127-րդ հոդվածների խախտում, ինչի հետևանքով սխալ հետևության է հանգել Հ.Դավթյանի խնամքին երեք անձի առկայությունը և վերջինիս՝ ընտանիքի միակ կերակրողը հանդիսանալու հանգամանքը հաստատված չլինելու վերաբերյալ:

II. Վերաքննիչ դատարանի հայեցողության շրջանակները.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելը որպես Հ.Դավթյանի անձը բնութագրող հանգամանք գնահատելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս չի՞ եկել արդյոք ՀՀ քրեադատավարական օրենքով վերադաս դատական ատյանին վերապահված հայեցողության շրջանակներից:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանի դատական ակտում պետք է նշվեն, թե ինչ հիմքերով է առաջին ատյանի դատարանի դատական ակտը համարվում ճիշտ, իսկ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, ինչն է հիմք ծառայել առաջին ատյանի դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մի մասով բեկանելու կամ փոխելու համար»:

Մեջբերված քրեադատավարական դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները հաստատված չհամարել կամ հաստատված համարել նոր հանգամանք, եթե վերաքննիչ բողոքի

շրջանակներում առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման արդյունքում պատճառաբանված հետևություն կանի այն մասին, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն **ակնհայտ** սխալ է թույլտվել: ՀՀ

քրեադատավարական օրենքում ամրագրված այս մոտեցումը հանդիսանում է վերաքննիչ դատարանի՝ որպես առաջին ատյանի դատարանի դատական ակտերը վերանայելու իրավասությանը օժտված վերադաս դատական ատյանի հայեցողության շրջանակներն ուրվագծող հիմքը, որը յուրաքանչյուր դեպքում հնարավորություն է տալիս պարզել, թե առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանն արդյոք պատշաճ գնահատման է ենթարկել գործի հանգամանքները, հանցավորի անձը և այլն, թե դրսևորել է կամայական մոտեցում՝ չարաշահելով իրեն վերապահված հայեցողությունը:

22. Դատական հայեցողությունը որոշում կայացնելիս ընտրություն կատարելու դատարանի իրավագործությունն է: Նշված ընտրության հիմքերն ու սահմաններն ամրագրված են քրեադատավարական օրենքով, պետք է համապատասխանեն օրենսդրի կամքին և դատավորի իրավագիտակցությանը, բխեն իրավունքի հիմնարար սկզբունքներից, գործի կոնկրետ հանգամանքներից և հանցավորի անձից:

Մեջբերված մոտեցումից հետևում են դատական հայեցողության հատկանիշները, որոնցից առաջինը հայեցողության օրինականությունն է: Այլ կերպ՝ դատական հայեցողությունն օրինական է, եթե հիմնված է օրենքի վրա: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքում առկա ձևակերպումները հաճախ «գնահատողական» բնույթ են կրում (օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «ակնհայտ սխալ» ձևակերպումը), որոնք ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների և հանցագործի անձը բնութագրող հատկանիշների համատեքստում: Հետևաբար, «գնահատողական» բնույթ ունեցող ձևակերպումների կիրառման ժամանակ դատական հայեցողությունն օրինական է, եթե դատարանը որոշում կայացնելիս հիմնվել է **կոնկրետ** գործի հանգամանքների և հանցագործի անձը բնութագրող տվյալների վրա:

Դատական հայեցողությունն օբյեկտիվ երևույթ է, հետևաբար, դատական հայեցողության երկրորդ հատկանիշն այն է, որ դատարանն իրավասու է ընտրություն կատարել օրենքով սահմանված շրջանակներում:

Դատական հայեցողության երկրորդ հատկանիշի հետ սերտորեն փոխկապակցված է երրորդը, որի համաձայն՝ դատական հայեցողությունն օրինական, հիմնավորված և արդարացի հնարավոր որոշումների միջև ընտրություն կատարելու՝ դատարանի իրավասությունն է: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանին վերապահված ընտրության իրավասությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանը հնարավոր օրինական որոշումներից պետք է ընտրի այն, որն առավելագույնս կհամապատասխանի հիմնավորվածության և արդարացիության չափանիշներին:

Դատական հայեցողության չորրորդ հատկանիշն օրինական, հիմնավորված և արդարացի հնարավոր որոշումների միջև ընտրություն կատարելիս դատարանի

կողմից կոնկրետ գործի հանգամանքներն ու հանցագործի անձը բնութագրող տվյալներն առավելագույնս հաշվի առնելու պարտականությունն է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական հայեցողության շրջանակներում դատարանին վերապահված ընտրությունը ենթադրում է ոչ միայն մի քանի որոշումների միջև ընտրություն կատարելու իրավասություն, այլ նաև այնպիսի ընտրություն կատարելու պարտականություն, որի արդյունքում կայացված որոշումն առավելագույնս կհամապատասխանի քննվող կոնկրետ գործի հանգամանքներին և հանցագործի անձին:

23. Դատական հայեցողության՝ սույն որոշման նախորդ կետում ամրագրված չորս հատկանիշները վերաբերելի են նաև վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման դատավարական կարգին: Նշված հատկանիշների հետ մեկտեղ, վերաքննիչ դատարանի հայեցողությունը բնութագրվում է մի շարք այլ հատկանիշներով, որոնք բխում են ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման՝ վերաքննիչ դատարանի գործառնության: Այսպես, առաջին ատյանի դատարանի կողմից դատական հայեցողության շրջանակներում կայացված դատական ակտը վերանայման արդյունքում կարող է բեկանվել և (կամ) փոփոխվել վերաքննիչ դատարանի կողմից այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը պատճառաբանված եզրակացություն կանի այն մասին, որ՝

ա) առաջին ատյանի դատարանը խախտել է դատական հայեցողության՝ օրենքով սահմանված շրջանակները,

բ) առաջին ատյանի դատարանն իրավական նշանակություն է տվել այնպիսի հանգամանքի, որը կոնկրետ գործով **ակնհայտորեն** չէր կարող մնան նշանակություն ունենալ,

գ) առաջին ատյանի դատարանը կայացրել է այնպիսի դատական ակտ, որը չի համապատասխանում ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերին (այդ թվում՝ դրանցում առկա օրենքի մեկնաբանություններին) և առաջին ատյանի դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ չի հիմնավել, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ,

դ) առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական, հիմնավորված և արդարացի չէ:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ իր դատական ակտում Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի՝ ընտանիքի միակ կերակրող հանդիսանալու հանգամանքը հերքել է՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում նրա կողմից իր պաշտպանության իրավունքի իրացման ձևից: Մասնավորապես, իր դատական ակտում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) գործում առկա տվյալների համաձայն՝ Հ.Դավթյանին մեղադրանք առաջադրելու պահից վերջինս ապահովվել է հանրային պաշտպանով՝ անվճարունակ լինելու պատճառով» (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

25. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 21-23-րդ կետերում շարադրված վերլուծության

համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Գավթյանի կողմից հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելու փաստը գնահատելիս Վերաքննիչ դատարանն իրավական նշանակություն է տվել այնպիսի հանգամանքի, որը սույն գործով **ակնհայտորեն** չէր կարող նման նշանակություն ունենալ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է՝ ելնելով անձի գույքային դրությունից, և որ քրեական վարույթում հանրային պաշտպանի ներգրավվածության հանգամանքը որևէ դեպքում չի կարող գնահատվել հանցավորի անձը բնութագրող տվյալների համատեքստում, առավել ևս՝ անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը մերժելու հիմք հանդիսանալ:

Հետևաբար, հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելը որպես Հ.Գավթյանի անձը բնութագրող հանգամանք գնահատելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել ՀՀ քրեադատավարական օրենքով վերադաս դատական ատյանին վերապահված հայեցողության շրջանակներից և դրա արդյունքում կայացրել է անօրինական, անհիմն և անարդար դատական ակտ:

26. Սույն որոշման 21-25-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չարաշահել է վերադաս դատական ատյանի հայեցողության շրջանակները՝ այդպիսով թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 19-րդ և 26-րդ կետերում արձանագրված խախտումները հանդիսանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հանգեցրել են Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ անօրինական և չհիմնավորված դատական ակտի կայացմանը:

Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն հիմք են Հմայակ Սիմոնի Գավթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունվարի 30-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

28. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ նյութական իրավունքի խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման 27-րդ կետում արձանագրված դատավարական իրավունքի խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հմայակ Սիմոնի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունվարի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

25.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0225/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի մայիսի 8-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Տիգրան Սամվելի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, ամբաստանյալ Արտակ Վոլոդյայի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալներ Սարգիս Ռուբենի Գևորգյանի, Գավիթ Հայկազի Քիրամիջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի նոյեմբերի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Ա.Կարապետյանի, Ս.Գևորգյանի և Գ.Քիրամիջյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Բ Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի և 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 15110711 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի օգոստոսի 12-ի որոշումներով Տիգրան Սամվելի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, Արտակ Վոլոդյայի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին մասով, Սարգիս Ռուբենի Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ Գավիթ Հայկազի Քիրամիջյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2011 թվականի նոյեմբերի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 20-ի դատավճռով ամբաստանյալ Տ.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Տ.Առաքելյանը դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով, 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Տ.Առաքելյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ա.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 316-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Ա.Կարապետյանը դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով, 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Կարապետյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Ամբաստանյալներ Ս.Գևորգյանը և Դ.Քիրամիջյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և դատապարտվել են ազատազրկման՝ 2 (երկու)տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Ա.Կարապետյանի, Ս.Գևորգյանի և Դ.Քիրամիջյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 20-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 13-ի որոշման դեմ վճռա-

բել բողոքներ են բերել ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Վ.Գրիգորյանը, ամբաստանյալներ Ա.Կարապետյանը, Ս.Գևորգյանը և Դ.Քիրամիջյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի մարտի 21-ի որոշմամբ ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Ա.Կարապետյանի, Ս.Գևորգյանի և Դ.Քիրամիջյանի վճարելի բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքների պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալներ Տ.Առաքելյանը, Ա.Կարապետյանը, Ս.Գևորգյանը և Դ.Քիրամիջյանը դատապարտվել են հետևյալ արարքների համար. «2011 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 21-ի սահմաններում, Երևան քաղաքի Տերյան փողոցի 42-րդ շենքի մոտակայքում՝ Խնկո Ապր անվան մանկական գրադարանի հարևանությամբ, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի ոստիկաններ՝ տուժողներ, Վուրդյա Գրիգորյանը և Դավիթ Մելիքյանը, ծառայություն իրականացնելիս նկատելով «Պիտրուլտերիեր» ցեղատեսակի առանց դնչկալի, շան հետ զբոսնող վկա Ջաքար Ջաքարյանին, մոտեցել են նրան և բացատրել, որ չի կարելի հասարակական և մարդաշատ վայրերում նման մեծ շանն առանց դնչկալի ման տալ: Վկա Ջաքար Ջաքարյանը, ընդունելով ոստիկանների դիտողությունը, համաձայնվել է նրանց հետ և հեռացել է: Նույն պահին տուժողներ Դ.Մելիքյանին և Վ.Գրիգորյանին են մոտեցել ամբաստանյալներ Տիգրան Առաքելյանն ու Արտակ Կարապետյանը, ովքեր վկա Ջաքար Ջաքարյանին դիտողություն անելու կապակցությամբ սկսել են վիրավորել տուժողներ Դ.Մելիքյանին և Վ.Գրիգորյանին: Վերջիններս փորձել են կարգի հրավիրել նրանց, սակայն ամբաստանյալներ Տ.Առաքելյանն ու Ա.Կարապետյանը քաշքշել են նրանց, շարունակել են վիրավորական արտահայտությունները, հայհոյանքներ են տվել, ամբաստանյալ Տ.Առաքելյանը բռունցքով հարվածել է տուժող Դ.Մելիքյանի պարանոցին և պատճառել առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ ճանկովածքի ձևով, իսկ ամբաստանյալ Ա.Կարապետյանը քաշել ու պոկել է տուժող Դ.Մելիքյանի ուսադիրն ու համազգեստի վրայի տարբերանշանը, իսկ քիչ անց քաշքշուկի ընթացքում, նաև գլխարկի զինանշանը:

Մի քանի րոպե անց ամբաստանյալներ Տ.Առաքելյանին և Ա.Կարապետյանին են միացել ամբաստանյալներ Սարգիս Գևորգյանը, Դավիթ Քիրամիջյանն ու քրեական գործով պարզված և չպարզված մի շարք անձինք, որոնք նույն վայրում՝ Երևան քաղաքի Տերյան փողոցի 42-րդ շենքի մոտ, որի հարևանությամբ գտնվում են բնակելի շենքեր, զբոսայգի ու բազմաթիվ սրճարաններ, մոտ 30 րոպե շարունակ հավաքված քաղաքացիների և զբոսնողների ներկայությամբ ամբաստանյալներ Տ.Առաքելյանի և Ա.Կարապետյանի հետ շարունակել են անհարկի վիրավորել, սեռական և այլ լկտի հայհոյանքներ տալ, քաշքշել ու ձեռքերով և ոտքերով հարվածել ռադիոկապով հրավիրված և տուժողներ Դ.Մելիքյանին ու Վ.Գրիգորյանին օգնության հասած մյուս ոստիկաններին, այդ թվում՝ տուժողներ Վուրդյա Գրիգորյանին, Դավիթ Մելիքյանին, Տիգրան Ավետիսյանին, Հայկ Նաջարյանին, Վարուժան Գասկասյանին, Գևորգ

Սկրտչյանին և Շահեն Հարությունյանին՝ վերջիններիս պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

Ի պատասխան ոստիկանների՝ հակահասարակական կարգի խախտումը դադարեցնելու մասին հորդորներին և պահանջներին, ամբաստանյալները նրանց դիմել են «այ կարմիր բերետավորներ, հերիք չի մարդկանց կյանքն ուտեք, ինչու չեք թողնում հանգիստ գրոսնեն հերիք չի մարդկանց խանգարեք այ բերետներ, այ կարմիր գլխարկներ, ինչու եք մարդկանց անդորրը խանգարում» արտահայտություններով:

Մասնավորապես.

Ամբաստանյալ Տ.Առաքելյանը, բացի վերը նշվածները, քաշել և գետնին է գցել տուժող Շահեն Հարությունյանին, որի հետևանքով վերջինիս պատճառվել է ձեռքերի քերծվածքների ձևով մարմնական վնասվածք, ոտքերով հարվածել է գետնին ընկած վկա Արսեն Մելքոնյանին, դիմադրել և հարվածել է իրեն բերման ենթարկողներին տուժողներ Տ.Ավետիսյանին և Գ.Սկրտչյանին: Ճանկռելով վերջինիս աջ ձեռքը՝ մարմնական վնասվածք է պատճառել նրան:

Ամբաստանյալ Ս.Գևորգյանը ոտքով հարվածել է տուժող Վ.Գրիգորյանի որովայնին, ոտքերով հարվածել է գետնին ընկած վկա Արսեն Մելքոնյանին:

Ամբաստանյալ Դ.Քիրամիջյանը ձեռքով հարվածել է տուժող Հայկ Նաջարյանի պարանոցին, ոտքերով հարվածել է գետնին ընկած վկա Արսեն Մելքոնյանին, ոտքը մտցնելով Վ.Գասկասյանի ոտքերի արանքը նրան իր հետ գցել է գետնին, որի հետևանքով վնասվել է տուժող Վ.Գասկասյանի ոտքը, իսկ ամբաստանյալ Դ.Քիրամիջյանի ճակատը:

Այնուհետև, բերման ենթարկվելիս պարեկային ավտոմեքենայի մեջ նստեցնելուց հետո, ամբաստանյալ Դ.Քիրամիջյանը ոտքերով հարվածել է տուժողներ Վ.Գասկասյանին և Հայկ Նաջարյանին:

Ոստիկանության գումարտակի հրամանատար, վկա Ա.Տեր-Պողոսյանը, տեսնելով ու հասկանալով, որ ստեղծված վիճակն անկառավարելի է դառնում և ամբաստանյալներն ու նրանց համախոհները չեն ենթարկվում հասարակական կարգի խախտումը դադարեցնելու, չհայհոյելու, չքաշքշելու և չհարվածելու վերաբերյալ իր ու օրենքի սահմաններում գործող մյուս ոստիկանների պահանջներին, հրամայել է առավել ակտիվներին բերման ենթարկել ոստիկանության Կենտրոնականի բաժին և դեպքի վայրում գտնվող ոստիկանները նաև ուժի գործադրմամբ, ամբաստանյալներին ու ևս երեք անձի բերման են ենթարկել ոստիկանության Կենտրոնականի բաժին:

Ամբաստանյալ Տ.Առաքելյանին բերման ենթարկելիս պարեկային ավտոմեքենայի մեջ, վերջինս գլխի հետևի մասով հարվածել է տուժող Տիգրան Ավետիսյանի դեմքին նրա առողջությանը պատճառելով գլխուղեղի ցնցման ձևով գլխուղեղի վնասվածքի և քթոսկրի բազմաբեկոր կոտրվածքի ձևերով թեթև վնաս: Հարվածի հետևանքով արյունահոսել է տուժող Տ.Ավետիսյանի քիթը, որի պատճառով արյունոտվել է նաև ամբաստանյալ Տ.Առաքելյանի հագին եղած վերնաշապիկը, որը հետագայում ոստիկանության Կենտրոնականի բաժնում, չպարզված հանգամանքներում անհետացել է:

2011թ. օգոստոսի 9-ին՝ ժամը 21.40-ի սահմաններում, բերման ենթարկվելուց

հետո ոստիկանության Կենտրոնականի բաժնում, ամբաստանյալները, շարունակելով նույն վարքագիծը, բացահայտորեն արհամարհական և անհարգալից վերաբերմունք դրսևորելով ոստիկանության աշխատակիցների նկատմամբ ու չենթարկվելով ոստիկանների օրինական պահանջներին, շուրջ երկու ժամ տևողությամբ դիտավորությամբ կազմալուծել են ոստիկանության Կենտրոնականի բաժնի բնականոն աշխատանքը, պրոֆիլակտիկայի բաժանմունքի սենյակում տեղաշարժել և շրջել են սենյակում գտնվող աթոռներն ու սեղանը, ոտքերով հարվածել են հերթապահ մասի սեղանին և բաժնի պատերին, հայիոյել ու քաշքշել են ոստիկաններին» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 144):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա են հետևյալ ձևակերպումները. «Անդրադառնալով ամբաստանյալների այն հայտարարությանը, որ դեպքի վայրում տուժող Շահեն Հարությունյանի կողմից հեռախոսով նկարահանումներ կատարելուց հետո նրա բջջային հեռախոսը միտումնավոր չի ներկայացվել նախաքննությանը, դատարանը, արժանահավատ համարելով նշված տուժողի ցուցմունքը, որ դեպքի վայրում կորցրել է ձեռքից ընկած հեռախոսը, փաստում է, որ դատաքննությամբ հաստատվել է, որ դեպքի օրը դեպքի վայրում տեսանկարահանումներ են կատարվել նաև ամբաստանյալների համախոհների, մասնավորապես ամբաստանյալ Ս.Գ.Լորգյանի քրոջ կողմից, սակայն նշված նյութերը դատարանի համոզմամբ, չեն ներկայացվել վարույթն իրականացնող մարմիններին՝ նկատի ունենալով, որ դրանցով նույնպես կհաստատվեն ամբաստանյալների կատարած հանցանքները, հետևաբար կհերքվեն նրանց պատճառաբանությունները» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 150):

7. Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալներ Տ.Առաքելյանին, Ա.Կարապետյանին, Ս.Գ.Լորգյանին և Դ.Քիրամիջյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել է ազատազրկման՝ հիմք ընդունելով տուժողներ Շահեն Հարությունյանի, Հայկ Նաջարյանի, Դավիթ Մելիքյանի, Վոլոդյա Գրիգորյանի, Վարուժան Գասկասյանի, Տիգրան Ավետիսյանի, Գ.Լորգ Սկրոչյանի, վկաներ Սահակ Գալստյանի, Մարտիրոս Մարգարյանի, Արսեն Մելքոնյանի, Արթուր Տեր-Պողոսյանի, Սամսոն Դարիբյանի, Գագիկ Ավագյանի, Միշա Մեսրոպյանի, Ջաքար Ջաքարյանի, Ալեքս-Էմիլ Ժոզեֆի Միրզայանցի, Նշե Մողոյանի, Հայկ Մաթևոսյանի, Սերգեյ Փիրումյանի, Հրանտ Միրիջանյանի, Անդրանիկ Պողոսյանի, Ավետիս Ամիրջանյանի, Սերժիկ Սարգսյանի, Վահագն Հակոբյանի, Արտակ Հայրապետյանի, Իգոր Մեսրոպյանի, Կարեն Հովսեփյանի, Էրիկ Պողոսյանի ցուցմունքներ, դեպքի վայրի զննություն կատարելու մասին 2011 թվականի օգոստոսի 9-ի, 11-ի, առարկայի զննություն կատարելու մասին 2011 թվականի օգոստոսի 23-ի, շան զննություն կատարելու մասին 2011 թվականի օգոստոսի 18-ի արձանագրությունները, իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշումները, դատահետքաբանական փորձաքննության թիվ 1696, դատաբժշկական փորձաքննության թիվ 2285, թիվ 2286, թիվ 2309, թիվ 2316, թիվ 2317, թիվ 1121/հ, 2284 եզրակացությունները և այլն (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 145-149):

8. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 12-ի դատական նիստի ձայնային արձանագրության համաձայն՝ պաշտպան Ս.Ոսկանյանը

միջնորդություն է ներկայացրել դատարան՝ տուժող Շ.Հարությունյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ, քանի որ «առաջին ատյանի դատարանը մտացածին կերպով արգելել էր այս տուժողին ապացույցի՝ [հեռախոսի] ձեռք բերմանն ուղղված հարցեր ուղղել»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը որոշել է. «Պաշտպանության կողմի, մասնավորապես պաշտպան Ոսկանյանի միջնորդությունը սույն գործով տուժող Շահեն Հարությունյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ մերժել՝ ի նկատի ունենալով, որ սույն գործով տուժողն արդեն իսկ հրավիրվել է առաջին ատյանի դատարան, այս պահի դրությամբ վերջինիս հրավիրելու և հարցաքննելու անհրաժեշտություն վերաքննիչ դատարանը չի տեսնում»:

8.1. Պաշտպան Ս.Ոսկանյանը միջնորդել է. «որպես վկա կանչել և հարցաքննել սույն գործով որպես վկա հանդիսացող Նշե Մողոյանին, որի տվյալները կից ներկայացված են հարցման փաստաթղթում և դրա թարգմանության տեքստում: Նշված վկան ուղղակիորեն տեսել է, թե ինչպես են ոստիկանները և քաղաքացիական անձինք փոխադարձաբար քաշքշում, իսկ ոստիկաններից մեկն ուղղակիորեն հարվածել է քաղաքացիական անձանցից մեկի երեսին»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը, «տեղում խորհրդակցելով, որոշեց պաշտպանական կողմի, մասնավորապես պաշտպան Ոսկանյանի ներկայացրած միջնորդությունը սույն գործով որպես վկա Նշե Մողոյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ մերժել՝ նկատի ունենալով, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում դատարանը ցուցաբերել է տվյալ դեպքում անհրաժեշտ և բավարար ջանասիրություն վերջինիս մասնակցությունը դատական նիստին ապահովելու և հարցաքննելու ուղղությամբ, ինչը չի հաջողվել: Կա համապատասխան հիմքեր նշվածի վերաբերյալ, որից հետո հրապարակվել և հետագոտվել է վերջինիս նախաքննության ընթացքում տրված ցուցմունքը, բացի այդ դատարանը ցանկանում է նաև արձանագրել, որ պաշտպանության կողմից դատարան ներկայացրած հարցման արձանագրության հայերեն տեքստը պատշաճ վավերացման ենթակա չի և ստորագրված չի, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն դատավարությունը հայերեն է»:

8.2. Պաշտպան Ս.Ոսկանյանը միջնորդել է. «որպես վկա Անի Գևորգյանին, Հայկ Գևորգյանին և Վահագն Հովակիմյանին դատարան հրավիրել և հարցաքննել, [նշելով, որ] նշված անձիք (...) կարող են վկայություն տալ այն մասին, որ դեպքի օրը՝ 2011 թվականի օգոստոսի 9-ին, Անի Գևորգյանը գտնվել է «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրությունում, որտեղից դուրս է եկել և գնացել Կենտրոնի ոստիկանության բաժին, (...) Անի Գևորգյանի դեպքի վայրում լինելու մասին գրեթե բոլոր ոստիկանների ցուցմունքներն ուղղակի ապացույցն են այն իրողության, որ բոլոր ոստիկաններն ուղղակի հրահանգավորված են եղել՝ ինչ ասել ցուցմունք տալուց առաջ և ոչ թե ասել այն, ինչ նրանք իրականում տեսել են կամ լսել են դեպքի վայրում, և փաստն այն է, որ Անի Գևորգյանը (...), ով հանդիսանում է սույն գործով ամբաստանյալ Սարգիս Գևորգյանի քույրը դեպքի

վայրում առհասարակ չի եղել և բնականաբար չէր կարող որևէ նկարահանում կատարել, ինչը հավաստող ապացույցները նույնպես սույն բողոքին ներկայացված են (...), իսկ նշված անձանցից (...) Վահագն Հովակիմյան[ն], Հայկ Գևորգյան[ն], (...) դատարան գալով և ցուցմունք տալով, (...) կարող են հավաստել այդ փաստը, որ Անի Գևորգյանն իսկապես դեպքի վայրում չի եղել, այլ եղել է «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրությունում»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը որոշել է. «պաշտպան Ռսկանյանի կողմից ներկայացված միջնորդությունը վերաքննիչ քրեական դատարան որպես վկաներ Անի Գևորգյանին, Հայկ Գևորգյանին և Վահագն Հովակիմյանին հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ միջնորդության քննարկումը հետաձգել և նշված հարցի լուծմանն անդրադառնալ սույն գործով վերջնական եզրահանգման գալիս՝ խորհրդակցական սենյակում, սույն գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների համակցության վերլուծության գնահատման արդյունքում»:

8.3. Պաշտպան Ս.Ռսկանյանը միջնորդել է. «դատարան հրավիրել և հարցաքննել որպես վկա Վահե Հովսեփյանին (...), նշված վկային դատարան հրավիրելու և հարցաքննելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ վկան կարող է տեղեկություններ հայտնել դեպքի օրը մեր պաշտպանյալների նկատմամբ իրականացված բռնությունների վերաբերյալ, ինչպես նաև վերջիններիս պաշտպանության իրավունքի խախտման հանգամանքը հաստատելու համար»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը որոշել է. «պաշտպան Ռսկանյանի կողմից ներկայացված միջնորդությունը սույն գործով փաստաբան Վահե Հովսեփյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ մերժել՝ նկատի ունենալով, որ սույն քրեական գործում արդեն իսկ առկա է համապատասխան քննչական ծառայության կողմից կայացված որոշում քրեական հետապնդումը չիրականացնելու մասին, մասնավորապես փաստաբանների հաղորդումների վերաբերյալ և ինչպես նշվեց, այդ որոշմամբ քրեական հետապնդում չի իրականացվել ոստիկանության ծառայողների նկատմամբ՝ վերջիններիս գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, վերը նշվածի պարագայում (...) միջնորդությամբ բերված փաստարկներն (...) բավարար չեն (...) միջնորդությունը բավարարելու առումով, բացի այդ, դատարանը դատարան ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության համատեքստում բոլոր դեպքերում նշված բոլոր հարցադրումներին վերաքննիչ բողոքի քննության արդյունքում անդրադառնալու է»:

8.4. Պաշտպան Ս.Ռսկանյանը միջնորդել է. «դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել սույն գործով անջատված մասով, կարճված մասով որպես մեղադրյալ ներգրավված անձանց՝ (...) Վահագն Գևորգյանին, Սահակ Մուրադյանին և Արեգ Գևորգյանին (...), ովքեր կարող են վկայություններ տալ ամբաստանյալների նկատմամբ դեպքի օրը տեղի ունեցած բռնությունների, ինչպես նաև գործի փաստական հանգամանքների վերաբերյալ (...)»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը որոշեց «պաշտպան Ռսկանյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ սույն

գործի անջատված մասով Վահագն Գևորգյանին, Սահակ Մուրադյանին, Արեգ Գևորգյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ մերժել՝ նկատի ունենալով, որ սույն գործով արդեն իսկ որոշակի փաստական հանգամանքներ ձեռք են բերվել, որոնց վերլուծության և գնահատման արդյունքում հնարավոր է ըստ դատարանի գնահատմամբ սույն գործով վերջնական եզրահանգման գալու համար, հետևաբար նշված անձանց վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու անհրաժեշտություն տվյալ պարագայում վերաքննիչ դատարանը չի տեսնում, միաժամանակ դատարանը պարզաբանում է, որ սույն գործով խորհրդակցական սենյակում վերջնական եզրահանգման գալիս դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ իր մոտեցումները վերանայելու առումով»:

8.5. Պաշտպան Ս.Ոսկանյանը միջնորդել է. «ղեպքի հանգամանքները պարզելու և մեր պաշտպանյալների նկատմամբ իրականացված բռնությունները հիմնավորելու համար [դատարան կանչել մի շարք վկաների այն պատճառաբանությամբ, որ իրենց] պաշտպանյալների հետ միաժամանակ ղեպքի վայրում են գտնվել նախաքննության ժամանակ հարցաքննված վկաներ Էմանուելյա Գրիգորյանը, Եվա Թովմասյանը և Մարիամ Մուրադյանը (...) իրադարձությունների ծավալման անմիջապես սկզբից: Վերջիններս հարցաքննվել են նախաքննության ընթացքում, տվել են ցուցմունքներ, սակայն առաջին ատյանի դատարանում նշված անձինք նախ չեն ներգրավվել դատակոչի ցուցակում և, հետևաբար նաև դատարանում չեն հարցաքննվել: Պաշտպանության կողմը գտնում է, որ նշված վկաների ներկայությունը վերաքննիչ դատարանում անհրաժեշտ է»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը որոշել է. «պաշտպան Ոսկանյանի կողմից ներկայացված միջնորդությունը Վերաքննիչ դատարան որպես վկաներ Էմանուելյա Գրիգորյանին, Եվա Թովմասյանին և Մարիամ Մուրադյանին հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ մերժել՝ նկատի ունենալով, որ գործով ձեռք բերված փաստական տվյալներն արդեն իսկ բավարար են սույն գործով միջնորդությամբ բարձրացված հարցերի շուրջ համապատասխան եզրակացություններ անելու համար»:

8.6. Պաշտպան Ս.Ոսկանյանը միջնորդել է. «վերաքննիչ բողոքին կից ներկայացված բազմաթիվ փաստաթղթերը և նաև տեսագրությունները (...) կցել քրեական գործի նյութերին և այդ բոլոր փաստաթղթերը և ապացույցները հետազոտել և գնահատել վերջնական ակտ կայացնելիս»:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունը՝ Վերաքննիչ դատարանը որոշել է. «պաշտպան Ոսկանյանի կողմից ներկայացված միջնորդությունը բողոքին կից ներկայացված փաստաթղթերը քրեական գործին կցելու և հետազոտման առարկա դարձնելու և այլնի վերաբերյալ (...) բավարարել մասնակի: Մասնավորապես բողոքին կից ներկայացված ամբաստանյալների անձը բնութագրող տվյալների և այլնի վերաբերյալ փաստաթղթերը կցել քրեական գործին և համատեղ քննարկման առարկա դարձնել: Ինչ վերաբերում է բողոքին կից ներկայացված մամուլի հաղորդագրումների, կրիչների և այլնի վերաբերյալ կցած փաստաթղթերին, ապա նշվածի վերաբերյալ ըստ էության արդեն իսկ վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է որոշում, հետևաբար նշվածի վերստին անդրադառնալու անհրաժեշտություն չկա, բացի այդ, դատարանն

արձանագրում է, որ (...) արդեն իսկ ծանոթացել է [այդ փաստաթղթերին]: Բացի այդ, ըստ անհրաժեշտության դատարանը որևէ կաշկանդվածություն չունի ապագայում նաև սույն գործով վերջնական եզրահանգման գալիս խորհրդակցական սենյակում նշված հանգամանքներն ըստ անհրաժեշտության վերստին անդրադառնալու հնարավորության առումով»:

8.7. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով պաշտպան Ս.Ոսկանյանի՝ վկաներ Ա.Գ.Լորգյանին, Հ.Գ.Լորգյանին, Վ.Հովակիմյանին հարցաքննելու վերաբերյալ միջնորդության քննության հետաձգմանը, դատական ակտում արձանագրել է, որ «Ինչ վերաբերում է պաշտպանության կողմի միջնորդությանը՝ պաշտպանի կողմից հարցման ենթարկված անձանց՝ Անի Գ.Լորգյանին և մյուսներին վերաքննիչ դատարան հրավիրելուն և հարցաքննելուն, ապա հարկ է նշել, որ (...) սույն գործով արդեն իսկ ձեռք բերված փաստական տվյալներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալներ Տիգրան Առաքելյանին, Արտակ Կարապետյանին, Սարգիս Գ.Լորգյանին և Դավիթ Քիրամիջյանին առաջադրված մեղադրանքները գնահատելու և հիմնավոր հետևության հանգելու համար, հետևաբար նշվածի վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությամբ բերված պատճառաբանություններն այն բավարարելու առումով ևս որևէ իրավական հետևանք առաջացնել չեն կարող» (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 179):

9. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի՝ «Վերաքննիչ բողոքը դատարանի վարույթ ընդունելու և քրեական գործը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին» որոշման և Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի դատական նիստի ձայնային արձանագրության ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանում սույն գործի քննությունն իրականացվել է վերաքննության կարգով:

2012 թվականի հոկտեմբերի 11-ի դատական նիստի ձայնային արձանագրության համաձայն՝ նիստը նախագահողը երկու անգամ անընդմեջ դիտողություն է արել ամբաստանյալներին մեղադրողի ելույթի ժամանակ առանց թույլտվության խոսելու, ծիծաղելու համար և պարզաբանել դատարանում կարգը չպահպանելու հետևանքների մասին:

2012 թվականի նոյեմբերի 2-ի դատական նիստի ձայնային արձանագրության համաձայն՝ նիստը նախագահող դատավորը մեղադրողի ելույթի ժամանակ նախագոշացրել է ամբաստանյալ Ս.Գ.Լորգյանին զուգահեռ չխոսել նիստ նախագահող դատավորի հետ, պահպանել դատական նիստի կարգը: Այնուհետև, նիստը նախագահող դատավորն արձանագրել է, որ ամբաստանյալ Տ.Առաքելյանը չի ենթարկվում նախագահող դատավորի կարգադրություններին:

2012 թվականի նոյեմբերի 12-ի դատական նիստի ձայնային արձանագրության համաձայն՝ նիստը նախագահող դատավորը գոշացրել է ամբաստանյալ Տ.Առաքելյանին, որ նրա «հայտարարություններն ուղղված դատարանին գնահատվում է դատարանի կողմից որպես ակնհայտ անհարգալից վերաբերմունք ուղղված դատարանին», և նշել. «պահպանել[ք] կարգը դատական նիստում և տեղից չխոսել[ք], (...) կարգը չպահպանելու դեպքում դատարանի նկատմամբ նման անհարգալից վերաբերմունք դրսևորելու պարագայում ձեր

նկատմամբ կկիրառվեն համապատասխան սանկցիաներ»։ Նույն դատական նիստի ժամանակ նիստը նախագահող դատավորը բազմիցս զգուշացրել է ամբաստանյալներ Ս.Առաքելյանին և Դ.Քիրամիջյանին բղավելու և տեղից առանց թույլտվության խոսելու համար։ Որոշ ժամանակ անց ամբաստանյալ Ս.Առաքելյանը կրկին զգուշացվում է «պահպանել[] կարգը և ենթարկվել[] դատարանի օրինական կարգադրություններին»։ Ամբաստանյալ Ս.Առաքելյանը չի ենթարկվում նիստը նախագահող դատավորի կարգադրություններին, որին ի պատասխան նիստը նախագահող դատավորը Ս.Առաքելյանին հեռացնում է դատական նիստերի դահլիճից։ Այնուհետև նիստը նախագահող դատավորն ի պատասխան Ս.Գևորգյանի, Դ.Քիրամիջյանի բղավոցների և նկատի ունենալով, որ ամբաստանյալները չեն ենթարկվում նախագահող դատավորի կարգադրություններին, ակնհայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորում դատարանի նկատմամբ, նրանց հեռացրել է դատական նիստերի դահլիճից։

2012 թվականի նոյեմբերի 12-ի դատական նիստի ձայնային արձանագրության ուսումնասիրությունից երևում է նաև, որ պաշտպան Վ.Գրիգորյանը, այնուհետև պաշտպան Ս.Ոսկանյանն առանց նախագահողի թույլտվության հեռացել են նիստերի դահլիճից (տես քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 144)։

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի մի շարք նորմերի պահանջների խախտումներ։ Մասնավորապես՝ ստորադաս դատարանը թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում այն առումով, որ ամբաստանյալների կատարած արարքները որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով և ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածով։ Բողոքաբերները նշել են, որ իրենց նկատմամբ կիրառված բռնությունից պաշտպանվելով՝ ամբաստանյալները դիմել են անհրաժեշտ ինքնապաշտպանության, ինչն էլ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի իմաստով բացառում է նրանց արարքում հանցակազմի առկայությունը։ Այս կապակցությամբ բողոքաբերներն ընդգծել են, որ ստորադաս դատարանը, առանց անդրադառնալու ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բոլոր տարրերին, արձանագրել է, որ վերոհիշյալ հոդվածով նախատեսված հանցակազմը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և Ս.Առաքելյանի արարքը որակել է վերոհիշյալ հոդվածով՝ հիմք ընդունելով ոստիկան Ս.Ավետիսյանի ցուցմունքն առ այն, որ վերջինիս կարծիքով Ս.Առաքելյանը դիտավորյալ գլուխը շեշտակի հետ է դարձրել, հարվածել իրեն, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը։ Ըստ բողոքաբերների՝ ստորադաս դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ս.Առաքելյանը շարունակաբար գտնվել է գլուխը դեպի ներքև վիճակում և չէր կարող տեսնել իր հետևում գտնվող օբյեկտները, հետևաբար հարվածը չէր կարող կրել դիտավորյալ բնույթ։

10.1. Բողոք բերած անձինք նշել են նաև, որ ամբաստանյալներ Տ.Առաքելյանի, Ա.Կարապետյանի արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով որակելիս ստորադաս դատարանները գնահատման առարկա չեն դարձրել մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ ոստիկանների կողմից ենթադրյալ շան տիրոջ նկատմամբ իշխանական լիազորությունների կիրառման իրավաչափությունը և օրինականությունը, ամբաստանյալներին բերման ենթարկելու իրավական հիմքերի բացակայությունը, մինչև ոստիկանություն տեղափոխելը նրանց նկատմամբ արդեն իսկ բռնության գործադրումը, իսկ ոստիկանությունում նրանց անվտանգության նվազագույն պայմանները չապահովելը, պաշտպանյալներին իրենց պաշտպանի հետ հանդիպելու հնարավորությունից զրկելը և այլն:

10.2. Բողոքաբերները նշել են նաև, որ հիմնավորված և օրինական չեն նաև ամբաստանյալների արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով որակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Այս առումով ստորադաս դատարանները գնահատման առարկա չեն դարձրել այն, թե ամբաստանյալների կոչերն ուղղված ոստիկաններին արդյո՞ք կրում էին վիրավորական բնույթ, թե ոչ, ինչպես նաև անտեսվել է ոստիկանների վարքագիծը, նրանց կողմից ամբաստանյալների նկատմամբ բռնություն գործադրելը և այլն:

11. Ըստ բողոքաբերների՝ ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանները հաշվի չեն առել անձը բնութագրող և պատասխանատվությունը ու պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքներ, մասնավորապես այն, որ Տ.Առաքելյանն ունի թերի բարձրագույն կրթություն, նախկինում դատապարտված չի եղել, հասարակական և քաղաքական կյանքում ունի ակտիվ ներգրավվածություն, ծավալում է հանրային շահին անշահախնդիր հետամուտ լինելու գործունեություն, Ա.Կարապետյանն ունի բարձրագույն կրթություն, ամուսնացած է, ունի մանկահասակ երեխա և հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, հանդիսանում է «Հացկար» ՍՊԸ-ի հիմնադիր, նախկինում դատապարտված չի եղել, հասարակական և քաղաքական կյանքում ունի ակտիվ ներգրավվածություն, ծավալում է հանրային շահին անշահախնդիր հետամուտ լինելու գործունեություն, Ս.Գևորգյանը հասարակական և քաղաքական կյանքում ունի ակտիվ ներգրավվածությունը, ծավալում է հանրային շահին անշահախնդիր հետամուտ լինելու գործունեություն: Ս.Գևորգյանի՝ նախկինում դատապարտված չլինելու հանգամանքի կապակցությամբ բողոքաբերները նշել են, որ թեև Վերաքննիչ դատարանը որոշման մեջ նշել էր, որ նա հանդիսանում է դատվածություն չունեցող անձ, սակայն միաժամանակ արձանագրել էր, որ նրա նկատմամբ նախկինում իրականացվել է քրեական հետապնդում:

Բողոք բերած անձանց պնդմամբ Դ.Քիրամիջյանը ծանր հիվանդ է՝ տարել է ոտքի վիրահատություն և ներկայումս ունի ոտքի մասնակի անաշխատունակություն, աշխատում է անիմացիոն կինոարտադրության ոլորտում, ունի արդեն իսկ նկարահանված 3 ֆիլմ, հասարակական և քաղաքական կյանքում ունի ակտիվ ներգրավվածություն, ծավալում է հանրային շահին անշահախնդիր հետամուտ լինելու գործունեություն: Բողոք բերած անձինք նշել են, որ վերոշարադրյալ հանգամանքները հաշվի չառնելու արդյունքում ստորադաս դատարաններն անհիմն մերժել են ՀՀ

քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Գ.Քիրամիջյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

12. Ըստ բողոքաբերների՝ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ դատական ակտերը կայացրել են բացառապես ոստիկանների ցուցմունքների հիման վրա՝ անտեսելով ամբաստանյալների ցուցմունքները և չունենալով չեզոք դիրքորոշում ունեցող որևէ անձի ցուցմունք, միտումնավոր կերպով անտեսել են ոստիկանների կողմից հանցագործությունների կատարումը փաստող ապացույցները, այն է՝ Առաջին ատյանի դատարանն արգելել է ապացույցի ձեռքբերմանն ուղղված հարցեր հղել ոստիկան Շ.Հարությունյանին, իսկ Վերաքննիչ դատարանը մերժել է պաշտպանյալների միջնորդությունը՝ Շ.Հարությունյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ, բացի այդ, Վերաքննիչ դատարանը մերժել է նաև պաշտպանական կողմի՝ վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերը քրեական գործին կցելու և հետազոտման առարկա դարձնելու, ՀՀ ոստիկանապետ Ա.Սարգսյանին, վկա Ն.Մոդոյանին, Ա.Գևորգյանին և նրա՝ դեպքի վայրում չգտնվելը փաստող վկաներ Վ.Հովակիմյանին, Հ.Գևորգյանին դատարան կանչելու և հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները: Ինչ վերաբերում է սույն գործով ցուցմունք տված քաղաքացիական անձանց, ապա նրանք չեն հիշել դեպքի վայրը, մասնակիցներին, կամ դատարանում արել են հայտարարություններ, որոնք պետք է անմիջապես քրեական հետապնդման առիթ հանդիսանային կոնկրետ գործը քննած ոստիկանների նկատմամբ, բացի այդ, հայերեն լեզվին չտիրապետող անձի պարագայում հարցաքննությունն իրականացվել է առանց թարգմանիչի մասնակցության:

13. Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 392-րդ հոդվածի պահանջները, այն է՝ ապացույցների հետազոտման փուլն ավարտելուց հետո դատարանը կողմերին հնարավորություն չի ընձեռել ներկայացնել դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդություններ, արգելել է պաշտպանական կողմին նախապատրաստել և ներկայացնել ինքնաբացարկի պատճառաբանված միջնորդություն, բացի այդ, ամբաստանյալների պաշտպանը գրկվել է պաշտպանական ճառով, իսկ ամբաստանյալները՝ վերջին խոսքով հանդես գալու իրավունքից՝ նրանց նկատմամբ առանց նախազգուշացման կիրառված դատական սանկցիայի պատճառով, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի պահանջների խախտմանը: Բացի այդ, խախտվել է նաև ամբաստանյալ Ա.Կարապետյանի պաշտպանության իրավունքը, քանի որ նա դատական վիճաբանությունների փուլում գրկվել է իր գործի հետագա ընթացքի վերաբերյալ պաշտպանի կողմից իրավական օգնություն ստանալու հնարավորությունից:

14. Բողոքի հեղինակները փաստարկել են, որ Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալ Ա.Գևորգյանը հնարավորություն չի ունեցել ավարտին հասցնել իր վերջին խոսքը, հետևաբար գրկվել է իր այդ իրավունքն արդյունավետ իրականացնելու հնարավորությունից: Իր հերթին, Վերաքննիչ դատարանն

արձանագրել է, որ Ս.Գ.Լորգյանի վերոհիշյալ իրավունքն իրացվել է: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 7-կետի իմաստով՝ դատավճիռն ամեն դեպքում ենթակա է բեկանման, եթե դատարանը գրկել է ամբաստանյալին պաշտպանական ճառով, իսկ հետագայում նաև վերջին խոսքով հանդես գալու հնարավորությունից:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերները խնդրել են բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012 թվականի հուլիսի 20-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 13-ի դատական ակտերը և գործի վարույթը կարճել կամ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

16. Նախքան վճռաբեկ բողոքների բովանդակությանն անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել բողոքաբերների բարձրացրած հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքներում բարձրացվել են երկու խումբ հարցեր, որոնցից առաջինը վերաբերում է ամբաստանյալների արարքների քրեաիրավական որակմանը և նրանց նկատմամբ նշանակված պատիժների արդարացիությանը (նյութական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ հարցեր, տե՛ս սույն որոշման 10-րդ, 11-րդ կետերը), իսկ երկրորդը՝ վերաքննիչ վարույթի ընթացքում թույլ տրված՝ արդար դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտումների (դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ հարցեր, տե՛ս սույն որոշման 12-14 -րդ կետերը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նյութական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ հարցերին հնարավոր է անդրադառնալ միայն դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց հետո, քանի որ դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումները կարող են ազդած լինել ամբաստանյալների արարքների քրեաիրավական որակման և (կամ) նրանց նկատմամբ նշանակված պատիժների մասով կայացված դատական ակտերի օրինականության վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ հարցերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ վարույթում արդար դատական քննության իրավունքի, մասնավորապես՝ դատաքննությունը լրացնելու վերաբերյալ կողմերի միջնորդությունները քննության առնելու, ինչպես նաև դատական սանկցիա կիրառելու առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ

նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն ապահովե՞լ է արդյոք ամբաստանյալների արդար դատական քննության իրավունքի իրացումը՝ ապացույց հետազոտելու վերաբերյալ վերջիններիս միջնորդությունները մերժելու վերաբերյալ հիմնավորված որոշում կայացնելու առումով:

18. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Արդար դատական քննության իրավունքն ամրագրող վերոգրյալ միջազգային և ներպետական իրավանորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Բարսյանի* և *Ս.Թումանյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկյունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է:

Մրցակցության սկզբունքը կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում: Դրանք են՝

ա) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար,

բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառույթների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառույթից,

գ) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն:

Մրցակցային դատավարության ընթացքում դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն էլ այն է, որ որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է

ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով նրանց անվտանգության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը: (...)» (տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 13-րդ կետը):

19. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Որևէ հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից օրենքի համաձայն»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով»:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք: (...)»:

Շարադրված իրավանորմերի վերլուծությունից երևում է, որ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման իրավունքի բաղկացուցիչ մաս է կազմում նաև քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքը վիճարկելու իր նկատմամբ կայացված դատական ակտի իրավաչափությունն ավելի բարձր դատական ատյանում: Նշված իրավունքի արդյունավետ կենսագործումը պահանջում է հնարավորություն ընձեռել անձին օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանում վիճարկել իր նկատմամբ կայացված դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը: Այս իրավունքն ունի բացարձակ բնույթ և ենթակա չէ սահմանափակման ոչ սուբյեկտների շրջանակի և ոչ էլ վերանայման ենթակա դատավճիռների բնույթի առումով:

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի իրավաչափությունն ավելի բարձր դատական ատյանում վիճարկելու անձի իրավունքն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է փաստելու, որ պետությունն իրականացրել է իր պոզիտիվ պարտականությունը՝ ուղղված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի վերանայման քրեադատավարական մեխանիզմը կարող է իրապես արդյունավետ ճանաչվել և ապահովել անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը միայն այն դեպքում, երբ օժտված լինի արդար դատական քննության հիմնարար երաշխիքներով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կախված դատական ակտի վերանայման նպատակով հարուցված վարույթի քրեադատավարական

ձևից (վերաքննություն, վճռաբեկություն), արդար դատական քննության սկզբունքի որոշ բաղադրատարրերի կիրառելիությունը կարող է ենթարկվել սահմանափակումների, ինչը սակայն, չի կարող լինել այնպիսին, որ իմաստագրկի նշված հիմնարար իրավական արժեքի բուն էությունը:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը հիմնված է *Դելկուրն ընդդեմ Բելգիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշման վրա, որի համաձայն՝ եթե պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված է վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, ապա պետությունը պետք է երաշխավորի, որ պետք է այդ դատարաններում իրականացվող վարույթի ընթացում անձինք օժտված լինեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված հիմնարար երաշխիքներով (տե՛ս *Delcourt v. Belgium* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1970 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝
«(...)

2. Միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը: (...):

3. Միջնորդության և պահանջի վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված: (...)

4. Միջնորդության կամ պահանջի մերժումը չի խոչընդոտում դրա կրկին ներկայացնելուն քրեական դատավարության հետագա փուլերում կամ քրեական վարույթն իրականացնող այլ մարմնին: Քրեական դատավարության նույն փուլում կամ քրեական վարույթն իրականացնող նույն մարմնին միջնորդության և պահանջի կրկին ներկայացում հնարավոր է, եթե դրանք հիմնավորելու համար բերվում են նոր փաստարկներ, կամ քրեական դատավարության ընթացքում հաստատվել է դրանք բավարարման անհրաժեշտությունը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախագահողը հարցնում է մեղադրանքի կողմին և պաշտպանության կողմին, թե արդյոք նրանք ունեն միջնորդություններ նոր ապացույցներ պահանջելու և գործին կցելու մասին: Միջնորդություն հարուցող անձը պարտավոր է ցույց տալ, թե հատկապես ինչ հանգամանքներ պարզելու համար են անհրաժեշտ լրացուցիչ ապացույցները:

2. Յուրաքանչյուր հարուցված միջնորդություն դատարանը պարտավոր է քննարկել, լսել կողմերի կարծիքը: Եթե հանգամանքները, որոնց բացահայտման համար հարուցված է միջնորդությունը, կարող են նշանակություն ունենալ գործի համար, կամ նյութը, որի ապացուցողական նշանակությունը վիճարկվում է, ստացված է օրենքի էական խախտումով, դատարանը բավարարում է միջնորդությունը: Միջնորդությունը մերժելու մասին դատարանը կայացնում է

պատճառաբանված որոշում: Դատարանի կողմից միջնորդության մերժումը չի սահմանափակում միջնորդություն հարուցող անձի իրավունքը՝ նույն միջնորդությունը հարուցել հետագայում:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ սույն օրենսգրքի 45¹ գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատաքննությունն սկսվում է նախագահողի կողմից դատական

ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրմամբ:

2. Նախագահողի գեկուցումից հետո դատարանը լսում է բողոքում ներկայացված՝ իր հետևությունները հիմնավորելու մասին կողմի ելույթը և դատական ակտը չբողոքարկած հակառակ կողմի պատասխանները:

(...)

4. Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները վերաքննիչ դատարանում հետազոտվում են միայն կողմի միջնորդությամբ, և եթե դատարանը դա համարում է անհրաժեշտ:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 392-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապացույցների հետազոտումն ավարտելուց հետո նախագահողը կողմերին հարցնում է, թե նրանք միջնորդում են արդյոք լրացնելու դատաքննությունը, և լուծելով այդ միջնորդությունները, անցնում է դատական վիճաբանություններին:

2. Դատական վիճաբանությունները կատարվում են սույն օրենսգրքի 354 հոդվածով սահմանված կանոններով, ընդ որում, առաջինը ելույթ է ունենում բողոք բերած անձը:

3. Դատական վիճաբանություններն ավարտելով՝ նախագահողն ամբաստանյալին տալիս է վերջին խոսքի իրավունք, որից հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ վերանայումը՝ որպես դատավարական ընթացակարգ, նպատակ է հետապնդում ուղղել ստորադաս դատարանի թույլ տված դատական սխալները և ապահովել ստարադաս դատական ակտի մեջ շարադրված հետևությունների համապատասխանությունը գործի փաստերին: Վերաքննիչ վերանայումն ունի օբյեկտիվ-իրավական և սուբյեկտիվ-իրավական հիմքեր և կարևոր երաշխիք է մարդու իրավունքների սահմանափակումների իրավաչափությունն ապահովելու համար: Այլ կերպ՝ վերաքննիչ վարույթը երաշխիքային համակարգ է սահմանում, որպեսզի ոչ մի անմեղ անձ չդատապարտվի և հանցանք կատարած ոչ մի անձ քրեական պատասխանատվությունից չխուսափի, բացի այդ, վերաքննության միջոցով իրավական հնարավորություն է ընձեռվում լրացնել գործով ապացույցների զանգվածը և դրա հիման վրա ուղղակիորեն վերանայել գործի փաստական կողմը:

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է նաև, որ վերաքննիչ վարույթի հիմքում ընկած է սահմանափակ վերանայման հայեցակարգը, ինչը թույլ չի տալիս վերաքննիչ դատարանին իրականացնել գործի ամբողջ ծավալով քննություն. վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում, իսկ նոր ապացույցների հետազոտում կարող է իրականացնել միայն կողմի միջնորդության հիման վրա, և բացառապես այն դեպքում, երբ միջնորդություն հարուցած կողմը հիմնավորում է, որ օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին կամ ստորադաս դատարանում միջնորդելու նշանակել

փորձաքննություն, կամ ներկայացված միջնորդությունն անհիմն մերժել է: Այլ կերպ՝ առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների վերաբերյալ եզրակացություն անելու նպատակով վերաքննիչ դատարանը գործի դատաքննությունը նոր ապացույցներով լրացնելու հարցում ունի սահմանափակ հայեցողական մոտեցում դրսևորելու հնարավորություն, ինչն ամբողջապես բխում է վերաքննիչ վարույթի առանձնահատկություններից:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի սահմանափակ վերանայման հայեցակարգն՝ ընդհանրապես, և վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցների հետազոտման հարցում սահմանափակ հայեցողական մոտեցում դրսևորելու հնարավորությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն շահագրգիռ անձի՝ արդար դատական քննությունն ապահովող իրավական արժեքների հետ: Վերաքննիչ վարույթի ընթացքում դատաքննությունը նոր ապացույցներով լրացնելու հնարավորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս, սակայն, հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել արդար դատական քննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի, խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ շահագրգիռ անձը չզրկվի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ վարույթում արդար դատական քննության հիմնարար իրավունքն ապահովված կլինի միայն այն դեպքում, երբ բացառվեն դատաքննությունը նոր ապացույցներով լրացնելու վերաբերյալ կողմի միջնորդությունների չհիմնավորված և չպատճառաբանված մերժման դեպքերը: Անձի վերաքննիչ վերանայման իրավունքը պահանջում է որպեսզի նրան ոչ միայն հնարավորություն ընձեռվի հարուցելու միջնորդություններ, այլև նշված միջնորդությունները պատշաճ քննության առնվեն և դրանց վերաբերյալ կայացվեն հիմնավորված և պատճառաբանված որոշումներ: Հետևաբար, վերաքննիչ վարույթի ընթացքում նոր ապացույցներ հետազոտելու վերաբերյալ կողմի միջնորդություն հարուցելու իրավունքը չպետք է կրի ձևական բնույթ, այն պետք է իրապես ապահովի անձի՝ իր վերաբերյալ կայացված դատական ակտի վերանայման իրավունքը, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների մասով:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Տ.Առաքելյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, ամբաստանյալ Ա.Կարապետյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալներ Ս.Գևորգյանին և Գ.Քիրամիջյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով մեղավոր է ճանաչել և դատապարտել է ազատազրկման՝ հիմք ընդունելով տուժողներ Շ.Հարությունյանի, Հ.Նաջարյանի, Գ.Սելիքյանի, Վ.Գրիգորյանի, Վ.Գասկասյանի, Տ.Ավետիսյանի, Գ.Սկրտչյանի, վկաներ

Ս.Գալստյանի, Մ.Մարգարյանի, Ա.Մելքոնյանի, Ա.Տեր-Պողոսյանի, Ս.Ղարիբյանի, Գ.Ավագյանի, Մ.Մեսրոպյանի, Զ.Զաքարյանի, Ա.Միրզայանցի, Ն.Մոդոյանի, Հ.Մաթևոսյանի, Ս.Փիրումյանի, Հ.Միրիջանյանի, Ա.Պողոսյանի, Ա.Ամիրջանյանի, Ս.Սարգսյանի, Վ.Հակոբյանի, Ա.Հայրապետյանի, Ի.Մեսրոպյանի, Կ.Հովսեփյանի, Է.Պողոսյանի ցուցմունքներ, դեպքի վայրի զննություն կատարելու մասին 2011 թվականի օգոստոսի 9-ի, 11-ի, առարկայի զննություն կատարելու մասին 2011 թվականի օգոստոսի 23-ի, շան զննություն կատարելու մասին 2011 թվականի օգոստոսի 18-ի արձանագրությունները, իրեղեն ապացույց ճանաչելու մասին ոորոշումները, դատահետքաբանական փորձաքննության թիվ 1696, դատաբժշկական փորձաքննության թիվ 2285, թիվ 2286, թիվ 2309, թիվ 2316, թիվ 2317, թիվ 1121/հ, 2284 եզրակացությունները և այլն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանում պաշտպանական կողմը ներկայացրել է մի շարք միջնորդություններ, մասնավորապես, պաշտպան Ս.Ոսկանյանը միջնորդու-թյուն է ներկայացրել տուժող Շ.Հարությունյանին, վկաներ Ն.Մոդոյանին, Ա.Գևորգյանին, Հ.Գևորգյանին, Վ.Հովակիմյանին, Վ.Հովսեփյանին, Ա.Սարգսյանին, Վ.Գևորգյանին, Ս.Մուրադյանին, Ա.Գևորգյանին, Է.Գրիգորյանին, Եվ.Թովմասյանին, Մ.Մուրադյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ, ինչպես նաև քրեական գործի նյութերին կցել վերաքննիչ բողոքին կից ներկայացված բազմաթիվ փաստաթղթեր՝ դրանք հետազոտելու և գնահատելու համար:

Քննության առնելով ներկայացված միջնորդությունները Վերաքննիչ դատարանը կամ մերժել է դրանք կամ բավարարել է մասնակիորեն: Այսպես՝

ա) պաշտպանության կողմը միջնորդություն էր ներկայացրել Վերաքննիչ դատարան տուժող Շ.Հարությունյանին վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանը պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռել հարցեր հղել տուժողին՝ հեռախոսի ձեռք բերման հետ կապված:

Վերաքննիչ դատարանը միջնորդությունը մերժել է այն պատճառաբանությամբ, որ սույն գործով տուժողն արդեն իսկ հրավիրվել է առաջին ատյանի դատարան, այս պահի դրությամբ վերջինիս հրավիրելու և հարցաքննելու անհրաժեշտություն վերաքննիչ դատարանը չի տեսնում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող Շ.Հարությունյանին Վերաքննիչ դատարան հրավիրելու և հարցաքննելու միջոցով հնարավոր կլինի պարզել, թե նա հեռախոսով որևէ տեսագրություն կատարե՞լ է արդյոք, ի՞նչ բովանդակություն ունի այդ ենթադրյալ տեսագրությունը և արդյո՞ք սույն քրեական գործով ամբաստանյալները ծեծի էին ենթարկվել ոստիկանների կողմից:

բ) պաշտպանության կողմը միջնորդել է վերաքննիչ դատարան հրավիրել և հարցաքննել վկա Ն.Մոդոյանին՝ պատճառաբանելով, որ նա ուղակիորեն տեսել է, թե ինչպես են ոստիկանները և քաղաքացիական անձինք փոխադարձաբար քաշքշել, իսկ ոստիկաններից մեկն ուղակիորեն հարվածել քաղաքացիական անձանցից մեկի երեսին:

Վերաքննիչ դատարանը մերժել է միջնորդությունը՝ արձանագրելով, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ցուցաբերել է

անհրաժեշտ և բավարար ջանասիրություն վերջինիս մասնակցությունը դատական նիստին ապահովելու և հարցաքննելու ուղղությամբ, ինչը չի հաջողվել, որից հետո հրապարակվել և հետազոտվել է վերջինիս նախաքննության ընթացքում տրված ցուցմունքը (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը): Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է անհրաժեշտ և բավարար միջոցներ ձեռնարկեր վկա Ն.Մոդոյանի ներկայությունը Վերաքննիչ դատարանում ապահովվելու ուղղությամբ և չբավարարվեր Առաջին ատյանի դատարանի կողմից ձեռնարկված միջոցառումներով:

զ) պաշտպանության կողմը միջնորդել է Ա.Գևորգյանին, Հ.Գևորգյանին և Վ.Հովակիմյանին որպես վկա դատարան հրավիրել և հարցաքննել՝ պատճառաբանելով, որ նշված անձինք կարող են հավաստել, որ դեպքի օրը՝ 2011 թվականի օգոստոսի 9-ին, Ա.Գևորգյանը դեպքի վայրում չի եղել, որևէ նկարահանում չի կատարել, այլ գտնվել է «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրությունում:

Վերաքննիչ դատարանը միջնորդության քննարկումը հետաձգել է մինչև սույն գործով վերջնական եզրահանգման գալը՝ խորհրդակցական սենյակում, սույն գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների համակցության վերլուծության գնահատման արդյունքում: Այնուհետև, դատական ակտում անդրադառնալով վերոհիշյալ միջնորդությանը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն գործով ձեռք բերված փաստական տվյալներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները գնահատելու և հիմնավոր հետևության հանգելու համար, հետևաբար պաշտպանության կողմի միջնորդությամբ բերված պատճառաբանություններն այն բավարարելու առումով որևէ իրավական հետևանք առաջացնել չեն կարող (տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը): Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկաներ Ա.Գևորգյանի, Հ.Գևորգյանի և Վ.Հովակիմյանի հարցաքննությունն ապահովելու միջոցով հնարավոր կլինի պարզել, թե իրապես Ա.Գևորգյանը գտնվել է դեպքի վայրում, թե ոչ, արդյոք նրա կողմից որևէ տեսաձայնագրություն կատարվել է, թե ոչ, տեսաձայնագրության առկայության պայմաններում ի՞նչ բովանդակություն է այն պարունակում և այլն:

Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից միջնորդության քննարկման հետաձգումը «(...) մինչև սույն գործով վերջնական եզրահանգման գալը՝ խորհրդակցական սենյակում (...)», քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ միջնորդության լուծումը կարող է հետաձգվել մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքերի պարզումը, այլ կերպ՝ մինչև դատաքննության ավարտը:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքներում նշված և Վերաքննիչ դատարանի կողմից մերժված բողոքաբերների մյուս միջնորդություններին, այն է՝ Վերաքննիչ դատարան հրավիրել և հարցաքննել Ա.Սարգսյանին, Վ.Հովսեփյանին, Վ.Գևորգյանին, Ս.Մուրադյանին, Ա.Գևորգյանին, Է.Գրիգորյանին, Եվ.Թովմասյանին, Մ.Մուրադյանին, քրեական գործին կցել և հետազոտել վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ապահովելով արդար դատաքննության իրավունքը

և քրեական դատավարության մրցակցության սկզբունքը, պաշտպանության կողմի հարուցած միջնորդությունները պատշաճ կերպով քննարկել է, լսել կողմերի կարծիքները և կայացրել պատճառաբանված որոշումներ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի իմաստով, որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնվում այն հարցի գնահատումը, թե արդյոք անհրաժեշտ է հրավիրել վկաներ, թե ոչ, և չի պահանջվում ամբաստանյալի կողմից հանդես եկող յուրաքանչյուր վկայի հրավիրումը և հարցաքննությունը (տե՛ս Բրիկմոնտն ընդդեմ Բելգիայի (BRICMOUNT v. BELGIUM) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1989 թվականի հուլիսի 7-ի որոշումը, գանգատ թիվ 10857/84, կետ 89): Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը դատարաններին պարտավորեցնում է պատճառաբանել իր որոշումները, սակայն այն չի կարող մեկնաբանվել որպես կողմի ներկայացրած յուրաքանչյուր փաստարկին դատարանի կողմից մանրամասն պատասխան տալու պահանջ (տե՛ս Ռուիզ Տորեխան ընդդեմ Իսպանիայի (RUIZ TORIJA v. SPAIN) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 18390/91, կետ 29, Վան դե Հուրքն Նիդեռլանդների (VAN DE HURK v. THE NETHERLANDS) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 16034/90, կետ 61):

24. Սույն որոշման 18-22-րդ կետերում շարադրված վերլուծության համատեքստում գնահատելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի ապահովել ամբաստանյալների արդար դատական քննության իրավունքի իրացումը՝ ապացույց հետազոտելու վերաբերյալ վերջիններիս միջնորդությունները մերժելու վերաբերյալ հիմնավորված որոշում կայացնելու առումով:

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն ապահովե՞լ է արդյոք ամբաստանյալների արդար դատական քննության իրավունքի իրացումը՝ դատարանի կողմից կիրառվող սանկցիաների առումով:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա

գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

- 1) նախազգուշացում.
- 2) նիստերի դահլիճից հեռացնելը.
- 3) դատական տուգանք.

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

2. Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը:

Նախազգուշացումը և նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են նույն դատական նիստում կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչև դատաքննության ավարտը:

Քրեական դատավարությանը մասնակցող՝ նիստերի դահլիճից հեռացված անձի փաստաբանի կամ ներկայացուցչի հիմնավորված միջնորդությամբ դատարանն իրավունք ունի մինչև սանկցիայի կիրառման ժամկետի լրանալը վերականգնելու հեռացված անձի մասնակցությունը դատական նիստին:

(...)

6. Ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախազահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում դատարանը կիրառում է նախազգուշացում: Միաժամանակ, նախազահող դատավորն ամբաստանյալին բացատրում է, որ դատական նիստի կարգը կրկին խախտելու և նիստի բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելու կամ նախազահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում նա կարող է հեռացվել նիստերի դահլիճից: Նույն դատական նիստում ամբաստանյալի կողմից դատական նիստի բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելը կամ նախազահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելը հիմք է սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան կիրառելու համար, որի դեպքում գործի քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճիռը հրապարակվում է ամբաստանյալի ներկայությամբ կամ հրապարակումից հետո անհապաղ հանձնվում է նրան:

Եթե դատարանը գտնում է, որ ամբաստանյալը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա դատավորը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան ամբաստանյալի նկատմամբ կիրառում է առանց նախազգուշացման, և գործի քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճիռը հրապարակում է ամբաստանյալի ներկայությամբ կամ հրապարակումից հետո անհապաղ հանձնվում է նրան:

(...):»:

Վերը շարադրված իրավանորմի վերլուծությունից բխում է, որ դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու, նախագահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, ինչպես նաև դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավասու է նիստերի դահլիճից հեռացնել ամբաստանյալին մինչև 36 ժամով: Ամբաստանյալին նիստերի դահլիճից հեռացնելը հանդիսանում է դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտելուն ուղղված վերջինիս գործողությունների հակազդման միջոց, ինչի արդյունքում ժամանակավորապես սահմանափակվում է ամբաստանյալի արդար դատական քննության իրավունքն այն առումով, որ սահմանափակվում է նրա մասնակցությունն իր վերաբերյալ իրականացվող դատական քննությանը:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իր վերաբերյալ իրականացվող դատական քննությանը մասնակցելու՝ ամբաստանյալի իրավունքը չի նշանակում, որ այն պետք է երաշխավորված լինի վերջինիս կողմից դատական նիստի կարգը խախտելու, նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու, ինչպես նաև դատավարության մասնակիցների՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքների իրացման համար խոչընդոտներ ստեղծելու պայմաններում: Ուստի, դատական սանկցիաների կիրառման հնարավորությունը, մասնավորապես, ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելը, հետապնդում է իրավաչափ նպատակներ և այդ կապակցությամբ շահագրգիռ անձի՝ արդար դատական քննությունն ապահովող իրավական արժեքների սահմանափակումը նույնպես իրավաչափ է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական սանկցիաներ կիրառելու դատարանի հնարավորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի ունենալ, որ դրանք չեն կարող հանգեցնել արդար դատական քննության իրավունքի չեզոքացմանը: Այս կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ շահագրգիռ անձը չզրկվի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից: Այս առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու և նրան դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում, վերջինիս պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման, ինչպես նաև մրցակցային դատավարության սկզբունքի կենսագործման առումով առաջնային նշանակություն է ստանում դատական քննությանը պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու հարցը քննարկելու դատարանի պարտականությունը: Ընդ որում, քրեական դատավարությանը պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը կանոնակարգող համապատասխան քրեադատավարական դրույթներն ուղղակիորեն պարտավորեցնում են քրեական վարույթն իրականացնող մարմնին ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցությունն ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդված):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դատական սանկցիան ամբաստանյալի նկատմամբ կիրառելու և նրան դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում, տվյալ դատական քննությունը կարող է շարունակվել բացառապես պաշտպանի պարտադիր մասնակցության հարցը քննարկելու պայմաններում: Հակառակ դեպքում, կիսախտվեն ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և մրցակցության սկզբունքը, ինչն էլ կհանգեցնի արդար դատական քննության հիմնարար իրավունքի անհամաչափ սահմանափակման:

28. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն: (...):»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանը պարտավոր է՝

1) կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն:

(...):»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաբանը պարտավոր է»

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

(...)

6) չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, (...):»:

Մեջբերված իրավադրույթների վերլուծությունից երևում է, որ դրանք սահմանում են պաշտպանի մի շարք պարտականություններ, որոնք կարևոր երաշխիք են անձի պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար: Մասնավորապես, պաշտպանը պարտավոր է անձի պաշտպանությունն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներով, պաշտպանությունն իրականացնելիս ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի օրինական կարգադրություններին, գործի դատական քննության փուլում առանց նախագահող դատավորի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը, չկատարել որևէ գործողություն, որը հակասում է իր պաշտպանյալի շահերին: Այլ կերպ, պաշտպանը պարտավոր է բարեխիղճ վերաբերմունք դրսևորել իր պարտականությունների նկատմամբ ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ գործի դատական քննության ընթացքում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր պարտականությունների նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ գործի դատական քննության ընթացքում պաշտպանը պետք է ներկա գտնվի դատական նիստին և իրավական

օգնություն ցույց տա իր պաշտպանյալին, որպեսզի վերջինս պատշաճ կերպով օգտվի իր պաշտպանության իրավունքից: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձի պաշտպանության իրավունքի սահմանափակումը պայմանավորված է նրա պաշտպանի վարքագծով, անձը չպետք է զրկվի պաշտպանի միջոցով իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից, և մնան իրավիճակում դատարանը *ex officio* պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել անձի պաշտպանության իրավունքի իրացումը:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալներ Տ.Առաքելյանը, Ս.Գևորգյանը և Դ.Քիրամիջյանը բազմիցս խախտել են դատական նիստի կարգը: Այսպես՝ ամբաստանյալ Տ.Առաքելյանը բազմաթիվ անգամ խախտել է դատական նիստի կարգը և արհամարհել նիստը նախագահող դատավորի նախազգուշացումները, մասնավորապես, 2012 թվականի նոյեմբերի 12-ի դատական նիստի ժամանակ, անտեսելով նիստը նախագահող դատավորի բազմակի զգուշացումները, ընդհատել է վերջինիս խոսքը, բղավել է, անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, խոսել և խանգարել մեղադրողին ելույթի ժամանակ, ինչպես նաև չի արձագանքել նիստը նախագահող դատավորի դիտողություններին:

Ամբաստանյալ Ս.Գևորգյանն անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի կազմի նկատմամբ, չի ենթարկվել նախագահողի օրինական կարգադրություններին, այն է՝ նիստը նախագահող դատավորի հետ զուգահեռ չխոսելու, դատական նիստի կարգը պահպանելու վերաբերյալ կարգադրություններին, խոչընդոտել է դատարանի բնականոն գործունեության իրականացմանը, բազմաթիվ անգամ խախտել է դատական նիստի կարգը, այդ թվում, 2012 թվականի նոյեմբերի 12-ի դատական նիստի ժամանակ չի արձագանքել նիստը նախագահող դատավորի դիտողություններին:

Ամբաստանյալ Դ. Քիրամիջյանը բազմիցս խախտել է դատական նիստի անցկացման կարգը, խանգարել է նիստը նախագահող դատավորին, չի ենթարկվել և չի արձագանքել նիստը նախագահող դատավորի կարգադրություններին և դիտողություններին:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ պաշտպան Վ.Գրիգորյանն առանց նախագահողի թույլտվության հեռացել է դատական նիստերի դահլիճից իր պաշտպանյալ Տ.Առաքելյանի նիստերի դահլիճից հեռացված լինելու պայմաններում, ինչպես նաև պաշտպան Ս.Ոսկանյանը մույնպես առանց նախագահողի թույլտվության հեռացել է դատական նիստերի դահլիճից այն պայմաններում, երբ իր պաշպանյալներ Տ.Առաքելյանը, Ս.Գևորգյանը և Դ.Քիրամիջյանը դատարանի կողմից հեռացված են եղել նիստերի դահլիճից, իսկ դատարանը, ուղղակի արձանագրելով այդ փաստը, շարունակել է դատական նիստը՝ առանց իրավական գնահատական տալու պաշտպանների գործողություններին, ինչպես նաև մնան պայմաններում չի քննարկել նիստը շարունակելու հնարավորությանը (տես սույն որոշման 9-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ամբաստանյալներ Տ.Առաքելյանի, Ս.Գևորգյանի, Դ.Քիրամիջյանի նկատմամբ

դատական սանկցիա (նիստերի դահլիճից հեռացնելու ձևով) կիրառվելուց և պաշտպանների նիստերի դահլիճն առանց նիստը նախագահող դատավորի թույլտվության լքելուց հետ գործի քննությունը շարունակվել է միայն ամբաստանյալ Ա.Կարապետյանի մասնակցությամբ:

30. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 26-28-րդ կետերում շարադրված վերլուծության համատեքստում՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալներ Տ.Առաքելյանը, Ս.Գևորգյանը և Դ.Քիրամիջյանն անբարեխղճորեն են օգտվել իրենց դատավարական իրավունքներից, ոչ պատշաճ են կատարել իրենց դատավարական պարտականությունները, խախտել են դատական նիստի կարգը, խոչընդոտել են նիստի բնականոն ընթացքը ու նիստը նախագահող դատավորի բազմաթիվ նախազգուշացումներից հետո չեն ենթարկվել նրա օրինական կարգադրություններին, որի պայմաններում ամբաստանյալներին դատական նիստերի դահլիճից հեռացնելու օրինական է, կատարվել է օրենքի հիման վրա և չի կարող համարվել իբրև ամբաստանյալների պաշտպանության իրավունքի խախտում: Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատարանի կողմից նիստից հեռացված ամբաստանյալների պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովվելու հարցը չքննարկելը հանգեցրել է ամբաստանյալներ Տ.Առաքելյանի Ս.Գևորգյանի և Դ.Քիրամիջյանի՝ օրենքով երաշխավորված պաշտպանության իրավունքի խախտման:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի ապահովել ամբաստանյալների արդար դատական քննության իրավունքի իրացումը՝ դատարանի կողմից կիրառվող սանկցիաների առումով, որ Տ.Առաքելյանին, Ս.Գևորգյանին, Դ.Քիրամիջյանին դատական նիստերի դահլիճից հեռացրել է և դրանից հետո չի ապահովել պաշտպանի ներկայությունը գործի հետագա քննությանը, իսկ Ա.Կարապետյանի՝ պաշտպանից հրաժարվելու դեպքում չի քննարկել նրան պաշտպանով ապահովելու հարցը:

31. Հիմք ընդունելով սույն որոշման 18-30-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես պաշտպանական կողմի ներկայացրած միջնորդություններն անհիմն մերժելով՝ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, իսկ ամբաստանյալների պաշտպանական իրավունքը չապահովելով թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտում: Վերոհիշյալ խախտումներն իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը բեկանելու հիմք են հանդիսանում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեադատավարական օրենքի էական խախտումներն են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու

կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

2. Դատավճիռը պետք է բեկանվի, երբ դատաքննության միակողմանիությունը կամ ոչ լրիվությունը հետևանք են թույլատրելի ապացույցները գործից սխալմամբ հանելու կամ այն ապացույցների հետազոտման հարցում կողմի միջնորդությունն անհիմն մերժելու համար, որոնք կարող էին նշանակություն ունենալ գործի համար»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի իմաստով հանդիսանում են քրեադատավարական օրենքի էական խախտումներ, հետևաբար, Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են հանդիսանում:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի խախտման հետ փոխկապակցված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման (տե՛ս սույն որոշման 10-րդ և 11-րդ կետերը) հարցին հնարավոր կլինի անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Տիգրան Սամվելի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Արտակ Վոլոդյայի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 316-րդ հոդվածի 1-ին մասով, Սարգիս Ռուբենի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Դավիթ Հայկազի Քիրամիջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԳ/0150/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Օգսեն Դազարի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի մարտի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վաղարշապատի քննչական բաժնում հարուցվել է թիվ 57115612 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2012 թվականի սեպտեմբերի 11-ին Օգսեն Մկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2012 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ Օ.Մկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2012 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ Օ.Մկրտչյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական

օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2012 թվականի նոյեմբերի 14-ին Օ.Սկրտչյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 21-ի դատավճռով Օ.Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Օ.Սկրտչյանը գրկվել է նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Օ.Սկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Տուժողի իրավահաջորդ Գեղեցիկ Գևորգյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի հարցը՝ 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, համարվել է լուծված, իսկ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի պահանջի վերաբերյալ կողմերի միջև կայացած համաձայնության շուրջ, պարտավորությունը չկատարելու պայմաններում, տուժողի իրավահաջորդ Գ.Գևորգյանին իրավունք է վերապահվել ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով դիմելու դատարան:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 18-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 21-ի դատավճիռը՝ նշանակված պատժի մասով, թողել է օրինական ուժի մեջ: Քաղաքացիական հայցի հարցը համարվել է լուծված: Դատավճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 18-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Օ.Սկրտչյանը և նշելով, որ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են, արդարացի, իսկ վճարելի բողոքը՝ անհիմն, հակասական, չպատճառաբանված, չի բխում օրենքի պահանջներից, խնդրել է այն մերժել և ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 21-ի դատավճիռը:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Օ.Սկրտչյանը դատապարտվել է այն բանի համար, որ «2012 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 21.00-ի սահմաններում, Էջմիածին քաղաքի Ռ.Եսայան փողոցում իր կողմից վարած «Վագ 21063» մակնիշի 64 ՕՏ 371 պետհամարանիշի ավտոմեքենայով երթևեկել է տվյալ պայմանների

համար սահմանված թույլատրելի առավելագույն արագությունը գերազանցող արագությամբ, ու իր երթևեկության համար վտանգն առաջանալու՝ հանդիպակաց ուղղությամբ ընթացող ավտոմոբիլի հեռահար լույսերից շլանալու սկզբնապահից սկսած, արգելափակում չկատարելով, այլ շլացած վիճակում շարունակելով երթևեկությունը, թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների 65, 67 և 129 կետերի պահանջներին հակասող գործողություններ և վրատերքի է ենթարկել իր ավտոմեքենային համընթաց քայլող հետիոտն, Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի բնակիչ Արսեն Նորիկի Ենոքյանին և անգաղափարաբար պատճառել մահ»:

6. 2013 թվականի հունիսի 28-ին Վճարելի դատարանում ստացված մահվան վկայականի պատճենի համաձայն՝ ամբաստանյալ Օ.Սկրտչյանը 2013 թվականի հունիսի 16-ին մահացել է տեխնիկական էլեկտրահարության պատճառով:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը բերվել է հետևյալ հիմքերով ու հիմնավորումներով.

7. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 18-ի որոշումը հիմնավորված և օրինական չէ, դրանով թույլ են տրվել նյութական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Բողոքի հեղինակը, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ, 70-րդ հոդվածների, Վճարելի դատարանի նախկինում ընդունված որոշումների վկայակոչմամբ, նշել է, որ ամբաստանյալ Օ.Սկրտչյանի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ դրույթների պահանջները, ինչի արդյունքում նշանակել է ոչ արդարացի պատիժ՝ հաշվի չառնելով Օ.Սկրտչյանի կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, ինչպես նաև նրա պատժի անհատականացման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների ամբողջ ծավալը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը չի վերլուծել պատժի բոլոր նպատակների իրականացման համատեքստում, մինչդեռ դրանց պատշաճ վերլուծությունը ցույց կտար, որ նշանակված պատժի կրումից Օ.Սկրտչյանին ազատելը զգալիորեն նվազեցնում է պատժի նպատակների իրականացման հնարավորությունը:

8. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 18-ի որոշումը բեկանել և փոփոխել, գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով նախևառաջ պետք է պատասխանել հետևյալ իրավական հարցին. առկա՞ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական գործի վարույթը բացառող հանգամանք:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի

կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.

6) անցել են վաղեմության ժամկետները.

7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.

8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.

9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանցամասնների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաներման ակտ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ «(...) թեև (...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած

փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման» (տե՛ս Արամ Սարգսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը):

11. Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված հիմքի՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի մահվան դեպքում, այդ անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճվի:

Նշվածից բացառություն կարող է լինել միայն այն դեպքերում, երբ տվյալ գործով վարույթի իրականացումն անհրաժեշտ է.

ա) մահացածի իրավունքների վերականգնման համար,

բ) այլ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար:

Հետևաբար, եթե բացառություն կազմող վերոգրյալ անհրաժեշտությունը բացակայում է, ապա անձի մահվան դեպքում նրա նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման, անկախ նրանից, թե գործը քննության որ փուլում է գտնվում:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով Օ.Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով, և նա գրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Օ.Սկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը՝ վիճարկելով ամբաստանյալ Օ.Սկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը: Գործի քննության արդյունքներով Վերաքննիչ դատարանը բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ նշանակված պատժի մասով, թողել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը՝ փաստարկելով, որ ամբաստանյալ Օ.Սկրտչյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ դատարանը սահմանել է ոչ արդարացի պատիժ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքը՝ վերը նշված հիմնավորումներով, Վճարելի դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2013 թվականի հունիսի 28-ին Վճարելի դատարանում ստացվել է սույն գործով ամբաստանյալ Օ.Սկրտչյանի մահվան փաստը հաստատող վկայականի

պատճենը, որի համաձայն՝ Օ.Սկրտչյանն էլեկտրահարվելու պատճառով 2013 թվականի հունիսի 16-ին մահացել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

13. Սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 12-րդ կետում նշված փաստական հանգամանքները, այն է՝ ամբաստանյալ Օ.Սկրտչյանի մահվան փաստը, ինչպես նաև այն, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքը բերված չէ ամբաստանյալի իրավունքների վերականգնման նպատակով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված՝ Օ.Սկրտչյանի նկատմամբ քրեական հետապնդումը, ինչպես նաև նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը բացառող հանգամանք: Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացակայում է մահացածի իրավունքների վերականգնման նպատակով գործի վարույթը շարունակելու անհրաժեշտությունը, ինչպես նաև առկա չէ այլ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու անհրաժեշտություն:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օգսեն Ղազարի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 18-ի որոշումը պետք է բեկանել, Օ.Սկրտչյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ ամբաստանյալի մահվան հիմքով:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Օգսեն Ղազարի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 18-ի որոշումը բեկանել, Օգսեն Ղազարի Սկրտչյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ նրա մահվան կապակցությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԳ/0009/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ դատախազ Գ.Գասպարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում 2011 թվականի մայիսի 31-ին հարուցվել է թիվ 14113611 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ քրեական գործն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայություն:

2. ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում 2011 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ թիվ 14113611 քրեական գործով Ն.Սուրիասյանի հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է նոր քրեական գործ, որին շնորհվել է 90277311 համարը:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ

կայագորային քննչական բաժնում 2012 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ թիվ 90277311 քրեական գործի վարույթը կարճվել է, և Ա.Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի մարտի 6-ի որոշմամբ բավարարվել է Ն.Սուքիասյանի ներկայացուցիչ Ս.Շաբբաթյանի բողոքը՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել թիվ 90277311 քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի 2012 թվականի փետրվարի 1-ի որոշումը և վերսկսել քրեական գործի վարույթը:

3. Երևանի կայագորի զինվորական դատախազության դատախազ Ջ.Խորասանյանի 2012 թվականի մարտի 23-ի որոշմամբ վերացվել է թիվ 90277311 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2012 թվականի փետրվարի 1-ի որոշումը և քրեական գործի վարույթը վերսկսվել է:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայագորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Վ.Հակոբյանի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ թիվ 90277311 քրեական գործով Ա.Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի սեպտեմբերի 21-ի որոշմամբ Ա.Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով:

Ա.Բաղդասարյանը 2012 թվականի հոկտեմբերի 10-ին դիմում է ներկայացրել քննիչ Վ.Հակոբյանին՝ հայտնելով, որ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում, և խնդրում է իր նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) և քրեական հետապնդումը դադարեցնել:

Նախաքննության մարմինը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով դադարեցրել է:

Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 90277311 քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով:

Քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու

մասին քննիչ Վ.Հակոբյանի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումների դեմ Ա.Բաղդասարյանի բողոքը ՀՀ զինվորական դատախազ Գ.Կոստանյանի 2013 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ մերժվել է:

4. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ Ա.Բաղդասարյանի բողոքը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչ Վ.Հակոբյանի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումները վերացնելու պահանջի վերաբերյալ, մերժվել է:

Ա.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի հունիսի 5-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի որոշումը՝ վերացրել: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել Ա.Բաղդասարյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ վճարելի բողոք է քերել դատախազ Գ.Գասպարյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ դատախազ Գ.Գասպարյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել Ա.Բաղդասարյանը՝ նշելով որ նախաքննության ընթացքում համաներում կիրառելու վերաբերյալ համաձայնություն տալու իր իրավունքից օգտվելը՝ անկախ նրանից, գիտակցել է դրա իրավական հետևանքները, թե ոչ, մեկնաբանվել է ի վնաս իրեն, իր համար առաջացրել անբարենպաստ հետևանքներ: Ուստի, խնդրել է դատախազ Գ.Գասպարյանի վճարելի բողոքը մերժել և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Ա.Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, ծառայելով ՀՀ ՊՆ 79512 զորամասում որպես գլխավոր ինժեներ-հրամանատարի տեխնիկական մասի գծով տեղակալ, կոչումով փոխգնդապետ, 2007թ. մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում քաղաքացի Նունե Բաֆֆիի Սուբխասյանին պարտքով տվել է 22.000 ԱՄՆ դոլար և 2.000 եվրո ու մինչև 2011թ. սկիզբը, յուրաքանչյուր ամիս որպես տոկոսադրույք նրանից ստացել է տրված գումարի 10 տոկոսը, որը գերազանցում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, թերթեր 102-107):

7. «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ քննիչը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, թիվ 90277311 քրեական գործով Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին

մասով քրեական հետապնդումը դադարեցրել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով՝ արձանագրելով՝ «(...) Ինչ վերաբերվում է Ա.Բաղդասարյանի կողմից ՀՀ քր. օր-ի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելուն, ապա թեև նա կատարել է հանցանք, սակայն նկատի ունենալով, որ 26.05.2011թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու» մասին որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն անձինք, որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում, նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում, ինչպես նաև կարճվում են մինչև 01.05.2011թ. կատարած հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերը: Տվյալ պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատժի առավելագույն ժամկետը երկու տարի ժամկետով ազատազրկում է, արարքը կատարվել է մինչև 01.05.2011թ., իսկ Ա.Բաղդասարյանը 11.10.2012թ. դիմում է ներկայացրել ՀՀ ՊՆ 4-րդ կայազորային քննչական բաժին և խնդրել, որ իր նկատմամբ կիրառվի 26.05.1011թ. ընդունված համաներում հայտարարելու մասին որոշման պահանջները: (...)» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, թերթեր 144-151):

8. Քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ թիվ 90277311 քրեական գործի վարույթը կարճվել է սույն որոշման նախորդ կետում շարադրված հիմնավորմամբ (տե՛ս նյութեր, թերթեր 152-154):

9. Առաջին ատյանի դատարանը, քննելով դիմող Ա.Բաղդասարյանի բողոքը, գտել է, որ «ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Վ.Հակոբյանի 25.10.2012թ. քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումները կայացվել են օրենքին համապատասխան և որևէ անձի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 41-45):

10. Վերաքննիչ դատարանը վերացրել է Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ արձանագրելով, որ «(...) քննիչը միաժամանակ վերոնշյալ [քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին] որոշումների պատճառաբանական մասերում դատողություններ անելով դիմող Ա.Բաղդասարյանին մեղսագրված արարքի հիմնավորված, ապացուցված լինելու, ապացույցները գնահատելու մասին, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և ՀՀ ԱԺ «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման պահանջները:

Քննիչը որոշման պատճառաբանական մասում, ապացուցված համարելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Բաղդասարյանին

մեղսագրված արարքը և դրան տալով իրավական գնահատական, խախտել է վերջինիս իրավունքները և ազատությունները:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական հետապնդման մարմինը համաներման ակտը կիրառելու համաձայնության մասին դիմում ներկայացնելու պայմաններում իրավունք չունեի Ա.Բաղդասարյանին մեղսագրված արարքի ապացուցված լինելու մասին տվյալներ նշել, որոնք կարող են նրա համար իրավական հետևանքներ առաջացնել:

Մեղադրանքի կողմի տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում նյութերի նախապատրաստման կամ քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո, ինչպես նաև Դատարանում՝ դատաքննության ընթացքում, երբ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի մեղավորության փաստը հաստատելու մասին դեռևս լիարժեք ապացույցներ ձեռք չեն բերվել, այդպիսիք չեն վերլուծվել, հետազոտվել և գնահատվել, համաներման ակտը կիրառելու մասին համաձայնություն ստանալուց հետո քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է շարունակեր նյութերի նախապատրաստումը, քրեական գործի քննությունը, ապացույցներ անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի կատարման հանգամանքը, ինչից հետո միայն քննարկել համաներման ակտը կիրառելու հարցը: Մինչդեռ, օրենսդիրը մյուս պայման չի նախատեսել՝ սահմանել է, որ համաներման ակտը կիրառելու մասին դիմումը՝ համաձայնությունը, ստանալուց անմիջապես հետո քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննարկել նշված ակտը կիրառելու հարցը:

Ուստի, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնի ՀՎԳ քննիչ Վ.Հակոբյանի 2012թ. հոկտեմբերի 25-ի՝ Ա.Բաղդասարյանի վերաբերյալ կայացված որոշումների պատճառաբանական մասերի՝ վերջինիս մեղավորությունը հաստատող դատողությունները ենթակա են վերանայման, այսինքն՝ պետք է վերացվեն վերջինիս իրավունքների և ազատությունների խախտումները: (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 132-138):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի բխում օրենքից, կայացվել է դատավարական իրավունքի պահանջների խախտմամբ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ քննիչ Վ.Հակոբյանը, հիմնվելով քրեական գործով ձեռք բերված՝ Ա.Բաղդասարյանի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցության վրա, պատճառաբանված որոշում է կայացրել Ա.Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջինիս մեղադրանք է առաջադրել: Դրանից որոշ ժամանակ անց Ա.Բաղդասարյանը դիմում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ իր նկատմամբ Համաներման ակտը կիրառելու խնդրանքով:

Քննիչ Վ.Հակոբյանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է՝ Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով: Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի շարադրանքից հետևում է, որ այն կիրառելի է անձանց նկատմամբ «որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են (...) հանցագործության կատարման մեջ»: Հետևաբար, քննիչը պարտավոր է եղել քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցության հիման վրա Ա.Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ մեղադրելու մասին իր դատողություններն արտահայտել որոշման մեջ՝ կատարելով քրեական դատավարության օրենսդրության պահանջները:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա.Բաղդասարյանին մեղաազրված արարքը հիմնավորված, ապացուցված լինելու, ապացույցները գնահատելու մասին դատողություններ անելով, քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և Համաներման ակտի պահանջները: Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը որևէ ձևով չի հիմնավորել, թե նշված ակտերի հատկապես որ պահանջներն են խախտվել, ինչպես նաև չի պարզաբանել, թե քննիչի կողմից կայացված որոշումների հատկապես որ դատողություններն են ենթակա վերանայման, Ա.Բաղդասարյանի որ իրավունքներն ու ազատություններն են խախտվել, որոնք ենթակա են վերանայման:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը բեկանել, Առաջին ստյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման և դրա իրավական հետևանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշմամբ խախտվել են Ա.Բաղդասարյանի իրավունքներն ու ազատությունները:

14. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն

ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

13) ընդունվել է համաներման ակտ:

(...)

3. Գատախազը, քննիչը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է:

(...)

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են մեղադրյալի անունը, ազգանունը և նրա անձի մասին այլ տվյալներ, մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչը կայացնում է պատճառաբանված որոշում:

2. Գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման ներածական մասում նշվում են որոշումը կազմելու ժամանակը և տեղը, քննիչի անունը, ազգանունը և պաշտոնը, քննվող գործի վերաբերյալ տեղեկություններ:

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում շարադրվում են այն հանգամանքները, որոնք առիթ և հիմք են հանդիսացել քրեական

գործը հարուցելու համար, նախաքննության ընթացքում բացահայտված այն հանգամանքները, որոնց հիման վրա քրեական գործով վարույթը կարճվում է:

4. Որոշման եզրափակիչ մասում շարադրվում են քրեական գործը կարճելու հիմքերը, օրենքի նորմը, որի հիման վրա կայացվում է որոշումը, խափանման միջոցը վերացնելու, կալանքի տակ գտնվող գույքի և սույն օրենսգրքով սահմանված կարգով իրեղեն ապացույցների տնօրինման վերաբերյալ հարցերը:

5. Սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հանգամանքների առկայությամբ գործով վարույթը կարճելիս և քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կղնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է»:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ հանցագործության կատարման մեջ կասկածվողի կամ մեղադրվողի մեղքն ապացուցված կարող է համարվել միայն դատարանի՝ օրենքով սահմանված կարգով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այլ խոսքով՝ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորությունը կարելի է հաստատված համարել միայն այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: Դատավճռից բացի այլ դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներ, մեղադրական եզրակացություն) անձի մեղավորության մասին առկա դատողություններն արտացոլում են վարույթն իրականացնող մարմնի ենթադրությունն այն մասին, որ կասկածյալը (մեղադրյալը) հանցանք է կատարել:

15. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ նախաքննական մարմինն արձանագրում է գործի քննության տվյալ փուլում իր մոտ առկա ենթադրությունն այն մասին, որ մեղադրյալը կատարել է նրան մեղսագրվող հանցանքը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասում առկա՝ «բավարար ապացույցների համակցություն» ձևակերպումը նշանակում է, որ գործի քննության տվյալ փուլում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք են բերվել ապացույցներ, որոնք բավարար են անձին որպես մեղադրյալ ներգրավելու և ոչ թե հանցանքի կատարման մեջ նրա մեղքը հաստատված համարելու համար: Հետևաբար, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը հանցանքի կատարման մեջ անձի մեղավորությունը հաստատող վերջնական փաստաթուղթ չէ:

Գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական կարգը սահմանող՝ սույն որոշման 14-րդ կետում մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից երևում է, որ նշված որոշումները ևս անձի մեղավորությունը հաստատող դատավարական փաստաթղթեր չեն: Այսպես՝ քննիչը, դատախազը, քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում հայտնաբերելով գործի վարույթը բացառող հանգամանքներ, որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ որոշման մեջ նշելով այն հանգամանքները, որոնք առիթ և հիմք են հանդիսացել քրեական գործը հարուցելու համար, նախաքննության

ընթացքում բացահայտված այն հանգամանքները, որոնց հիման վրա քրեական գործով վարույթը կարճվում է:

16. Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ նշված հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝

ա) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով:

բ) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով:

«Արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերում օրենսդիրն արգելում է որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կղնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մաս):

«Ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի համար օրենսդիրը մնան արգելք չի սահմանել: Հետևաբար, «ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ քրեական հետապնդման մարմինն արձանագրում է գործի քննության տվյալ փուլում իր մոտ առկա ենթադրությունն այն մասին, որ կասկածյալը կամ մեղադրյալը կատարել է իրեն մեղսագրվող հանցավոր արարքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը հանդիսանում է ինքնուրույն դատավարական փաստաթուղթ և չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող մեկ այլ դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ: Այլ խոսքով՝ «ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինն արտահայտում է իր ենթադրությունն առ այն, որ անձը կատարել է հանցավոր արարքը, ինչը, նշանակում է, որ «ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը չի կարող հավասարեցվել վերջնական մեղադրական դատավճռի հետ և անձի իրավունքների սահմանափակման առումով առաջացնել նույն իրավական հետևանքները, ինչ վերջնական մեղադրական դատավճիռը:

17. Վճռաբեկ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, որի իմաստով անմեղության կանխավարկածի

խախտում է այն դեպքը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով (տե՛ս Garycki v. Poland գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, կետ 66): Սեկ այլ՝ Դակթարասն ընդդեմ Լիտվայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե պաշտոնատար անձը կարծիք արտահայտի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորության վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտադրել է պաշտոնատար անձանց կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին (տե՛ս Daktaras v. Lithuania գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, կետ 41):

18. «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների կամ դատարանի վարույթում գտնվող քրեական գործերը, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի, որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի (...) 13-րդ [կետում] նշված [հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: (...)»:

Քրեական գործի վարույթը համաներման ակտի ընդունման հիմքով կարճելու հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Թ. Գևորգյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործ չհարուցելու, քրեական հետապնդում չիրականացնելու և հարուցված քրեական գործը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի լիազորության իրականացման համար անհրաժեշտ իմպերատիվ պահանջ է հանդիսանում անձի համաձայնությունը: Համաներման ակտի կիրառման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում անձի համաձայնությունը հանդիսանում է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք և կապված է բացառապես իր

նկատմամբ համաներման ակտ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ անձի ցանկության հետ: Հետևաբար, համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը ենթադրում է, որ վերջինս յուրաքանչյուր դեպքում պարտավոր է քննարկման առարկա դարձնել համաներման ակտի կիրառման հարցը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ ամբաստանյալը համաձայն չէ համաներման ակտի կիրառման հետ, պարտավոր է բացառել դրա կիրառումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իր նկատմամբ համաներման ակտի կիրառման դեպքում անձի համաձայնությունը վերաբերում է բացառապես նշված ակտի կիրառմանը, և դրա բացակայության դեպքում գործի վարույթը շարունակվում է ընդհանուր կանոններով՝ հնարավորություն տալով անձին հասնելու ամբողջական «ռեաբիլիտացիայի»: Հետևաբար, Համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթի կարճման հնարավորության դեպքում որևէ այլ, այդ թվում՝ անձի կողմից հանցանք կատարելն ընդունելու կամ չընդունելու հիմքով համաներման ակտի չկիրառումը հանդիսանում է անձի իրավունքների խախտում, որը դրսևորվել է Համաներման ակտի կիրառման ոչ իրավաչափ սահմանափակման ձևով» (տես Թադևոս Ավետիքի Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԳ/0203/01/11 որոշման 18-րդ կետը):

19. Վերահաստատելով *Թ.Գևորգյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը դասվում է «ոչ արդարացնող» հիմքերի շարքին: Հետևաբար նման հիմքով քրեական հետապնդման դադարեցման պարագայում նախապես անձի համաձայնությունն ստանալու օրենսդրական պահանջը նպատակ է հետապնդում պարզել իր նկատմամբ համաներման ակտ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ անձի դիրքորոշումը: Անձի համաձայնությունը վերաբերում է միայն համաներման ակտի կիրառմանը, այն ոչ մի պարագայում չի կարող մեկնաբանվել որպես անձի կողմից մեղքն ընդունելու հանգամանք: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ համաներման կիրառման հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեպքում քրեական հետապնդման մարմինը ոչ թե հաստատված է համարում մեղսագրված արարքում անձի մեղքի առկայությունը, այլ ենթադրություն է արտահայտում այն մասին, որ անձին մեղսագրված արարքն իր մեջ պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ: Հետևաբար, համաներման կիրառմամբ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, անկախ դրանում տրված ձևակերպումներից և արտահայտություններից, չի կարող նույնացվել անձի մեղքը հաստատող միակ դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ և որպես այդպիսին, սահմանափակել կամ որևէ կերպ խախտել այդ անձի իրավունքներն ու ազատությունները:

20. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական

օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով: Ա.Բաղդասարյանը դիմում է ներկայացրել քննիչին և նշելով, որ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում, խնդրել է կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը և իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել: Նախաքննության մարմինը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է՝ Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացրել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Քննիչը, նշելով, որ թեև Ա.Բաղդասարյանը կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով, սակայն նկատի ունենալով ընդունված Համաներման ակտը թիվ 90277311 քրեական գործի վարույթը կարճել է (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը, քննելով դիմող Ա.Բաղդասարյանի բողոքը, գտել է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումները կայացվել են օրենքին համապատասխան և որևէ անձի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն: Վերաքննիչ դատարանը, վերացրել է Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ արձանագրելով, որ նախաքննության մարմինը, որոշումների պատճառաբանական մասերում դատողություններ անելով դիմող Ա.Բաղդասարյանին մեղսագրված արարքի հիմնավորված, ապացուցված լինելու, ապացույցները գնահատելու մասին, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և Համաներման ակտի պահանջները, Ա.Բաղդասարյանի իրավունքները և ազատությունները: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա.Բաղդասարյանի գործով կայացված որոշումների պատճառաբանական մասերում առկա՝ նրա մեղավորությունը հաստատող դատողությունները ենթակա են վերանայման (տե՛ս սույն որոշման 3-5-րդ և 9-10-րդ կետերը):

21. Սույն որոշման 14-19-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներում նախաքննության մարմինն իր ենթադրությունն է արտահայտել այն մասին, որ Ա.Բաղդասարյանին մեղսագրվող արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները, և ոչ թե հաստատված է համարել նշված արարքում Ա.Բաղդասարյանի մեղքի առկայությունը: Այս առումով նախաքննության մարմինը կայացրել է որոշում, որն իր հետևանքներով չի նույնացվում անձի մեղքը հաստատող միակ դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ և որպես այդպիսին, չի սահմանափակում կամ որևէ կերպ չի խախտում անձի իրավունքներն

ու ազատությունները: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ սույն գործով Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշմամբ խախտվել են Ա.Բաղդասարյանի իրավունքներն ու ազատությունները:

22. Գատավարական իրավունքի վերոնշյալ խախտումները հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշման կայացմանը և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա՝ Ա.Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը պետք է բեկանել՝ օրինական ուժ տալով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արմեն Պավլուշի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

28.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՎԲ-01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ փաստաբան՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Լ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումների դեմ դատապարտյալ Արարատ Նարիմանի Մուրադխանյանի փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2002 թվականի հունիսի 25-ին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում հարուցվել է թիվ 12207102 քրեական գործը՝ 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ կետերի, 232-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2002 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Արարատ Մուրադխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2002 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Ա.Մուրադխանյանի նկատմամբ

որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ 2 ամիս ժամկետով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2002 թվականի սեպտեմբերի 11-ին Ա.Մուրադխանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ կետերով, 15-99-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ կետերով և 232-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2002 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է:

2003 թվականի հունվարի 27-ին Ա.Մուրադխանյանը Ուկրաինայի Հանրապետությունում իրավախախտում կատարելու կասկածանքով Պոլտավա քաղաքում ձերբակալվել է, 2003 թվականի հունվարի 30-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: 2004 թվականի մայիսի 18-ին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ Ա.Մուրադխանյանը հանձնվել է ՀՀ իրավապահ մարմիններին և տեղափոխվել ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

2004 թվականի մայիսի 24-ի որոշմամբ թիվ 12207102 քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

2004 թվականի հունիսի 21-ի որոշմամբ Ա.Մուրադխանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, այն համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով, 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ Ա.Մուրադխանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամսով՝ մինչև 2004 թվականի սեպտեմբերի 18-ը:

2004 թվականի սեպտեմբերի 24-ին Ա.Մուրադխանյանի վերաբերյալ թիվ 12207102 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Ա.Մուրադխանյանի վերաբերյալ քրեական գործը վերադարձվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ լրացուցիչ նախաքննության:

Ա.Մուրադխանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ:

3. Ա.Մուրադխանյանի, նրա պաշտպաններ Վ.Յավրույանի, Լ.Միմոնյանի, տուժողներ Բ.Մեհրաբյանի և Ա.Հասրաթյանի, տուժողի իրավահաջորդներ Թ.Ղուշյանի և Մ.Մեհրաբյանի, մեղադրողներ Ա.Ամիրզադյանի և Ա.Շահինյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2005 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ բողոքները մերժել է, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի

հոկտեմբերի 14-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

Ա.Մուրադխանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ:

4. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2005 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը թողնվել է անփոփոխ, մեղադրողներ Ա.Շահինյանի, Ա.Ամիրզադյանի, տուժողներ Ք.Մեհրաբյանի, Ա.Հասարթյանի, տուժողի իրավահաջորդներ Թ.Դուշյանի, Ս.Մեհրաբյանի վճռաբեկ բողոքները՝ առանց բավարարման, իսկ Ա.Մուրադխանյանի և նրա պաշտպանների Վ.Յավրումյանի, Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը՝ առանց քննության:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 29-ի, 2006 թվականի փետրվարի 23-ի որոշումներով Ա.Մուրադխանյանին կալանքի տակ պահելու ժամկետը յուրաքանչյուր դեպքում երկարացվել է երկուսկան ամսով, իսկ 2006 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ Ա.Մուրադխանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մեկ ամսով:

Նշված որոշումների դեմ Ա.Մուրադխանյանի և նրա պաշտպաններ Վ.Յավրումյանի, Լ.Սիմոնյանի վերաքննիչ բողոքները Վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 3-ի, 2006 թվականի մարտի 21-ի և 2006 թվականի մայիսի 23-ի որոշումներով թողնվել են առանց բավարարման:

Վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 3-ի որոշման դեմ Ա.Մուրադխանյանի և նրա պաշտպաններ Վ.Յավրումյանի, Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2006 թվականի փետրվարի 27-ին վերադարձրել է, իսկ Վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 21-ի որոշման դեմ պաշտպաններ Վ.Յավրումյանի, Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքները 2006 թվականի մայիսի 4-ի որոշմամբ թողել է առանց քննության:

6. 2006 թվականի մայիսի 25-ին Ա.Մուրադխանյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճռով Ա.Մուրադխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 117-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և հանցանքների համակցության կանոններով դատապարտվել է ցմահ ազատազրկման: Պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի մայիսի 18-ից:

7. Ա.Մուրադխանյանի և նրա պաշտպան Լ.Սիմոնյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ բողոքները մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 8-ի որոշման դեմ

պաշտպան Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի մարտի 20-ի որոշմամբ վերադարձվել է:

8. Ա.Մուրադխանյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) 2012 թվականի հունիսի 5-ին *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 12895/06) վճիռ է կայացրել, որով ճանաչել է Ա.Մուրադխանյանի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը:

Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 5-ի *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ դատապարտյալ Ա.Մուրադխանյանի փաստաբան Լ.Սիմոնյանը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի և 2006 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ վճռաբեկ բողոք է ներկայացրել, որի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2013 թվականի հունիսի 21-ի որոշմամբ հարուցել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի և 2006 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները

9. Ա.Մուրադխանյանը դատապարտվել է այն բանի համար, որ «Ռուկրաինայի Պոլտավա քաղաքում ծավալած տնտեսական գործունեության ընթացքում հարևան գյուղացի, Կիևում բնակվող Լյովա Մեհրաբյանից պահանջելով և չստանալով իրեն պատկանող առանձնապես խոշոր չափի գումարները, թշնաբար է տրամադրվել նրա նկատմամբ և որոշել է վրեժխնդիր լինել՝ սպանել նրան: Այդ նպատակով ապօրինի կերպով ձեռք է բերել և տևական ժամանակով կրել «ՏՏ» տեսակի հրազեն՝ ատրճանակ և 7.62 մմ տրամաչափի փամփուշտներ: Այնուհետև, տեղեկանալով, որ Լյովա Մեհրաբյանը գտնվում է Երևանում, և ճշտելով, որ նա հաճախ լինում է Երևանի Տիգրան Մեծ փողոցի 3-րդ նրբանցքի թիվ 50 հասցեում գտնվող եղբոր՝ Ռուբեն Մեհրաբյանի տանը, իր հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով 2002 թվականի հունիսի 24-ին՝ ժամը 23-ի սահմաններում, եկել է հիշյալ տան մոտ, իր նշված ատրճանակից կրակոցներ է արձակել բակում նստած Լյովա Մեհրաբյանի և նրա հարազատների վրա և ուղղակի դիտավորությամբ սպանել է Լյովա Մեհրաբյանին, անուղղակի դիտավորությամբ վերջինիս հորն ու եղբորը՝ Վազգեն և Ռուբեն Մեհրաբյաններին, քեռուն՝ Սուրեն Հասրաթյանին, տարբեր աստիճանի հրազենային վնասվածքներ է պատճառել քրոջը՝ Քնարիկ Մեհրաբյանին, և քեռու տղային՝ Արմեն Հասրաթյանին:

Բացի այդ, ամբաստանյալ Ա.Մուրադխանյանն ապօրինի կերպով ձեռք է բերել ռազմամթերք հանդիսացող 392 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ, որոնցից 385-ը պահել է հոր՝ Նարինյան Մուրադխանյանի՝ Կոթի գյուղի տանը և Մյմաձոր կոչվող հողամասի վազոն-տնակում, իսկ 7-ը կնոջ՝ Նատաշա Խաչատրյանի

անունով ձեռք բերած Երևան քաղաքի Կոմիտաս փողոցի 39 շենքի թիվ 25-26 միացված բնակարանում» (տե՛ս քրեական գործ, հատոր 18, թերթեր 178-192):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Եվրոպական դատարանը 2012 թվականի հունիսի 5-ին *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռ է կայացրել, որով հաստատված է համարել, որ ներպետական դատական ակտերով խախտվել է դիմող Ա.Մուրադխանյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը:

Բողոքի հեղինակը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հունվարի հանձնարարականի, Եվրոպական դատարանի մի շարք գործերով վճիռների, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշման վկայակոչմամբ գտել է, որ սույն գործով պետք է կիրառվի «*restitution in integrum*» սկզբունքը, որի արդյունքում նախ պետք է ներպետական դատական ակտով ճանաչվի Ա.Մուրադխանյանի՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստը, ապա իրականացվի կալանքի վերաբերյալ դատական ակտերի վերանայում:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է հարուցել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման վարույթ, այդ որոշումները բեկանել, վարույթ ընդունել Ա.Մուրադխանյանի պաշտպանների վճռաբեկ բողոքները և ճանաչել Ա.Մուրադխանյանի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 5-ի վճիռն արդյո՞ք նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումները վերանայելու համար:

13. Կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական

դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա

(...):»:

Մեջբերված կոնվենցիոն դրույթից հետևում է, որ դրանում ամրագրված non bis in idem սկզբունքը ենթադրում է իրավաչափ սահմանափակման հնարավորություն: Այդպիսի իրավաչափ սահմանափակման հնարավորություն է նախատեսված նաև ՀՀ ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12¹ բաժնում սահմանված են կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքից շեղվելու իրավաչափ հիմքերը, որոնց թվին են դասվում նոր հանգամանքները:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածը սահմանում է.

«1. (...) [Ն]որ հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. (...) [Ն]որ հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանքները հաստատված են համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դրանց ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հաստատվել է անձի՝ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

14. *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռում Եվրոպական դատարանը, վերահաստատելով իր նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ

Կոնվենցիայի «5-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտություններն ըստ էության վերագրվում են ներպետական օրենսդրությանը և սահմանում են դրա նյութական և դատավարական նորմերին ենթարկվելու պարտավորությունը (տե՛ս, այլ աղբյուրներում, Benham v. the United Kingdom, 10 հունիս 1996, § 41, Չեկոյցներ 1996-III, և Assanidze v. Georgia [ՄՊ], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԳ- 2004-II)», նշել է. «Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված կալանավորման «օրինականությունը» առաջնային, բայց ոչ միշտ վճռորոշ տարր է: Դատարանը պետք է նաև համոզվի, որ քննարկվող ժամանակահատվածի ընթացքում կալանքի տակ պահելը համահունչ է եղել 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին, այն է՝ կանխել կամայական կերպով մարդկանց ազատությունից զրկելը: Ավելին, Դատարանը պետք է պարզի, թե արդյոք ներպետական օրենսդրությունն ինքնին համապատասխանում է Կոնվենցիային, ներառյալ դրանում ամրագրված և կիրառվող ընդհանուր սկզբունքները (տե՛ս, այլ աղբյուրներում, Winterwerp, վկայակոչված վերևում, պարբ. 45, և Erkalo v. the Netherlands, 2 սեպտեմբեր 1998, պարբ. 52, Չեկոյցներ վճիռների և որոշումների մասին 1998-VI):

(...) [Ա]նհրաժեշտ է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ազատությունից զրկելու պայմանները հստակ սահմանված լինեն, և օրենսդրությունն իր կիրառելիության մեջ ինքնին կանխատեսելի լինի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով նախատեսված «օրինականության» չափանիշներին, որոնց համաձայն՝ օրենսդրությունը պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդատվության պայմաններում, տվյալ հանգամանքներում ողջամիտ ժամկետներում կանխատեսել կատարված գործողության հնարավոր հետևանքները (տե՛ս, Steel and Others v. the United Kingdom, 23 սեպտեմբեր 1998, պարբ. 54, Չեկոյցներ վճիռների և որոշումների մասին 1998-VII)» (տե՛ս *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 12895/06, կետեր 65-67):

Այնուհետև, վերլուծելով Ա.Մուրադխանյանի վերաբերյալ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին առաջին ատյանի դատարանի և դրա բողոքարկման արդյունքում վերադաս դատական ատյանների կայացրած որոշումները՝ Ա.Մուրադխանյանի նկատմամբ կիրառված կալանավորումն անփոփոխ թողնելու մասով, գործը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելուց հետո Ա.Մուրադխանյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը (տե՛ս սույն որոշման 2-5-րդ կետերը), ինչպես նաև այդ պահին գործող ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «դիմումատուի՝ 2005թ. դեկտեմբերի 14-ից 29-ն ընկած ժամանակահատվածի կալանքը չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջներին: Դա պայմանավորված էր կալանքի ընթացակարգը կարգավորող հստակ նորմերի բացակայությամբ, երբ առաջին ատյանի դատարանը կայացնում էր գործը լրացուցիչ նախաքննության

ուղարկելու մասին որոշում»։ Արդյունքում Եվրոպական դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (տես *Մորադիխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, կետեր 70-73)։

Եվրոպական դատարանը գտել է, որ սույն գործով տեղի է ունեցել նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում։ Այդ առումով Եվրոպական դատարանը, մասնավորապես, նշել է հետևյալը. «(...) Ողջամիտ կասկածի առկայությունը, որ ձերբակալված անձը կատարել է իրավախախտում, հանդիսանում է sine qua non պայման՝ շարունակվող կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն արդեն բավարար չէ։ Դատարանն այնուհետև պետք է որոշի, թե արդյոք դատական մարմինների կողմից տրված այլ հիմքերը «վերաբերելի» ու «բավարար» են եղել ազատությունից զրկելու արդարացույր շարունակելու համար (տես *Kudła v. Poland* [ՄՊ], թիվ 30210/96, պարբ. 110-111, ՄԻԵԳ 2000-XI, և *Ječius v. Lithuania*, թիվ 34578/97, պարբ. 93, ՄԻԵԳ 2000-IX)։

(...) Եթե սահմանված հիմքերը «վերաբերելի» են ու «բավարար», Դատարանը պետք է նաև պարզի, թե արդյոք իրավասու ազգային մարմինները վարույթի ընթացքում ցուցաբերել են «հատուկ ջանասիրություն»։ Քննության ծավալը և առանձնահատկություններն այս առումով գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն (տես, մյուս հեղինակների հետ մեկտեղ, *Letellier v. France*, 26 հունիս 1991, պարբ. 35, Սերիա Ա թիվ 207, և *Van der Tang v. Spain*, 13 հուլիս 1995, պարբ. 55, Սերիա թիվ 321)։

(...) Դատարանն ընդունում է, որ իրավախախտումները, որոնց մեջ դիմումատուն կասկածվում էր, իրենց բնույթով շատ լուրջ էին և պատժվում էին խստագույն կերպով, այն է՝ ցմահ ազատազրկմամբ։ Այդուհանդերձ, անձին մեղսագրվող՝ ծանր հանցանքների կատարման հիմնավոր կասկածի առկայությունը թեև վերաբերելի գործոն է, սակայն չի կարող ինքնին արդարացնել մինչդատական վարույթում երկարաժամկետ կալանքը (տես *Tomasi v. France*, 27 օգոստոս 1992, պարբ. 89, Սերիա Ա թիվ 241-Ա)»։

Ապա Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի կալանքի հիմքում Հայաստանի դատարանները դրել են փախուստի դիմելու վտանգը, որին առաջին անգամ անդրադարձել են 2002 թվականի հուլիսին, հաջորդ անգամ՝ 2006 թվականի փետրվարին՝ 2004 թվականի մայիսին դիմումատուի ձերբակալումից մոտավորապես երկու տարի անց։ Եվրոպական դատարանը գտել է, որ ներպետական դատարանների կողմից հիմնավորումների տրամադրումը մնան մեծ ընդհատումներով չի կարող համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով դիմումատուի շարունակական կալանքը հիմնավորելու պահանջներին։

Անդրադառնալով վարույթի իրականացման եղանակին՝ Եվրոպական դատարանն ընդունել է, որ «գործը բավական բարդ է, որը պահանջում էր բազմաթիվ քննչական գործողությունների կատարում։ Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմումատուի ազատությունից զրկված լինելը՝ իշխանությունները պետք է գործեին հատուկ ջանասիրությամբ, ինչը նրանք չեն կատարել։ Այս առումով Դատարանը

նշում է, որ վարույթի էական և անհարկի ձգձգումը վերագրելի է իշխանությունների վարքագծին: Մասնավորապես, քննչական մարմնի կողմից վարույթի սկզբնական փուլում օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չանցկացնելու պատճառով դատարանը, որին գործն ըստ էության քննության էր հանձնվել, ստիպված էր մի ամբողջ տարվա ընթացքում անցկացնել 52 դատական նիստ և քննել բազմաթիվ վկաների զուտ այն բանի համար, որպեսզի վերջում եզրահանգեր, որ անկարող է որոշում ընդունել դիմումատուի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ և ստիպված է եղել գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության (...): Ավելին, այդպիսի որոշման ընդունումը բողոքարկման ընթացակարգ սկսելու պատճառ է հանդիսացել և հանգեցրել է վարույթի ձգձգմանը՝ նվազագույնը երկու ամսով (...): Վերջապես, ոչ մի պատճառաբանություն չի տրվել 2006թ. հունիսի 2-ից մինչև հոկտեմբերի 16-ի չորս ամսվա ընդմիջման համար, որի ընթացքում բացարձակապես ոչ մի վարույթ չի իրականացվել (...): Այսպիսով, իշխանությունների կողմից ջանասիրության բացակայության պատճառով դիմումատուի կալանքը ընդհանուր առմամբ նվազագույնը մեկ ու կես տարով ձգձգվել է:

(...) Վերոնշյալ նկատառումները բավարար են Դատարանի կողմից եզրահանգելու համար, որ դիմումատուն պահվել է շարունակական կալանքի տակ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտմամբ» (տե՛ս *Մորադիսանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, կետեր 80-87):

Անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի ենթադրյալ խախտման մասին դիմումատուի փաստարկներին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը Բարձր Պայմանավորվող Պետություններին չի պարտավորեցնում սահմանել կալանքի օրինականության ստուգման և ազատ արձակելու մասին դիմումների քննության երկաստիճանի համակարգ: Այդուհանդերձ, պետությունը, որը սահմանել է նման համակարգ, պետք է սկզբունքորեն կալանավորվածների համար ապահովի այն նույն երաշխիքները, որոնք սահմանված են առաջին ատյանում (տես *Toth v. Austria*, 12 դեկտեմբեր 1991, պարբ. 84, Սերիա Ա թիվ 224): Ավելին, չնայած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը կալանքի օրինականության մասին որոշումները բողոքարկելու իրավունք չի երաշխավորում, այս դրույթի նպատակից հետևում է, որ դրա պահանջները պետք է հարգվեն վերաքննիչ դատարանների կողմից, եթե որոշման դեմ բերված բողոքը հիմնված է կալանքի օրինականության հարցի վրա (տես *Rutten v. the Netherlands*, զանգատ թիվ 32605/96, պարբ. 53, 24 հուլիս 2001):

(...) Անդրադառնալով համապատասխան ներպետական նորմերին, իսկապես, ԶԳՕ-ի 137-րդ հոդվածի 5-րդ մասը և 288-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք կարգավորել են այս խնդիրը, ուղղակիորեն սահմանում են վերաքննիչ դատարան բողոք ներկայացնելու իրավունք, մինչդեռ վճռաբեկ դատարանի մասին ոչինչ չի ասվում (...): Այսպիսով, հնարավոր չէ ասել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում դիմումատուին օրենքով հստակորեն վերապահված էր մինչդատական վարույթի ընթացքում կալանքի մասին որոշումների դեմ վճռաբեկ

դատարան բողոք ներկայացնելու իրավունք:

(...) Ճիշտ է, որ 2005թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումներից առաջ այդպիսի իրավունք պրակտիկայում, բայց ոչ օրենքով, գոյություն ունեցել է: Այդուհանդերձ, սահմանադրական բարեփոխումներից հետո այդ պրակտիկական դադարեցվել է և այդ բարեփոխումներով, *inter alia*, վերասահմանվել է վճռաբեկ դատարանի կարգավիճակը, որի դերը սահմանափակվել է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթով (...): Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ վերոնշյալ սահմանադրական բարեփոխումներից հետո դիմումատուն պրակտիկայում դադարել է ունենալ այդ իրավունքը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքերով խնդիր չի առաջացնում» (տե՛ս *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, կետեր 91-93):

Բացի վերոգրյալից, Եվրոպական դատարանը, քննարկելով դիմումատուի կողմից Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա բարձրացրած մի շարք այլ բողոքներ, որ իր կալանքը հիմնված չէր ողջամիտ կասկածի վրա, որ միջնդատական վարույթի ընթացքում իր կալանքը տևել է ավելի երկար, քան ՀՀ ներպետական օրենսդրությամբ թույլատրված առավելագույն ժամկետը, և որ 2004 թվականի սեպտեմբերի 18-ից 24-ն ընկած կալանքի համար բացակայել է դատական որևէ որոշում, գտել է, որ դրանցում առկա չեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումներ» (տե՛ս *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, կետեր 95-96):

15. Ամփոփելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական դատարանն իր վճռում եզրահանգել է, որ.

ա) Ա.Մուրադխանյանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 14-ից 29-ն ընկած ժամանակահատվածի կալանքը չի համապատասխանել Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջներին, ինչը պայմանավորված էր գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում կայացնելիս կալանքի ընթացակարգը կարգավորող հստակ նորմերի բացակայությամբ (Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում),

բ) Ա.Մուրադխանյանը գործի քննության ընթացքում պահվել է շարունակական կալանքի տակ «ողջամիտ ժամկետի» խախտմամբ (Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում):

16. Հիմք ընդունելով միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 5-ի վճիռը նոր հանգամանք է՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի և 2006 թվականի մայիսի 4-ի որոշումները վերանայելու համար:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով

Եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 5-ի վճիռը, որով արձանագրվել են Ա.Մուրադխանյանի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով երաշխավորված իրավունքների խախտումներ, արդյո՞ք վերջինիս նախնական կալանքին վերաբերող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումները բեկանելու հիմք է:

18. Բարձրացված հարցին պատասխանելու նպատակով Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումները բեկանել, վարույթ ընդունել Ա.Մուրադխանյանի պաշտպանների վճռաբեկ բողոքները, ճանաչել Ա.Մուրադխանյանի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Այս առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական դատարանի վճռով արդեն իսկ ճանաչվել է Ա.Մուրադխանյանի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը, և որոշվել է որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում դիմումատուին տրամադրել համարժեք գումար:

19. Ինչ վերաբերում է բողոքարկված որոշումները բեկանելու մասին բողոքաբերի խնդրանքին, ապա Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձի իրավունքների խախտում ճանաչելու դեպքերում Եվրոպական դատարանն ընդունելի է համարում ներպետական մակարդակում այնպիսի միջոցների կիրառումը, որոնց արդյունքում հնարավոր չափով կվերականգնվի մինչ խախտումն առկա իրավիճակը: Ընդ որում, Եվրոպական դատարանը, համարելով, որ վարույթի վերակսումը կարող է տեղի ունենալ միայն «բացառիկ» հիմքերով, այդպիսիք է համարում հատկապես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման դեպքերը, երբ գործի քննությունն իրականացվել է արդար դատաքննության իրավունքի խախտմամբ: Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում շեշտել է, որ այս դեպքում հատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նոր քննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ: Եվրոպական դատարանի համար կայուն պրակտիկա է դարձել նաև գործերի վերաբացման վերաբերյալ դրույթներն ընդգրկել վճռի մեջ:

Մասնավորապես, *Գարրիեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում ճանաչելու դեպքում դիմումատուն որքան հնարավոր է պետք է գտնվի այն իրավիճակում, որում նա կլիներ, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (տե՛ս, *mutatis mutandis*, *Sejdovic v. Italy* [ՄՊ], գանգատ թիվ 56581/00, § 127, ՄԻԵԳ-2006 և *Yanakiev v. Bulgaria*, գանգատ թիվ 40476/98, § 89,10 օգոստոսի 2006թ.):

Այս առնչությամբ Դատարանը (...) այն կարծիքին է, որ այն դեպքում, երբ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված

արդար դատաքննության իրավունքի խախտմամբ, փոխհատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նորից քննումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս, *mutatis mutandis*, *Lungoci*, վերը ցիտած, § 56)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետեր 103-104):

Եվրոպական դատարանը, ինչպես նշված, այնպես էլ իր մի շարք վճիռներում արձանագրելով 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, նշել է, որ խախտման վերացման ամենահարմար միջոցը դատաքննության վերաբացումն է (Տե՛ս *Ocalan v. Turkey*, 2005 թվականի մայիսի 12-ի վճիռ, գանգատ թիվ. 46221/99, §210 և *Clacs and others v. Belgium*, 2005 թվականի հունիսի 2-ի վճիռը, §53):

Մասնավորապես, *Օջալանն ընդդեմ Թուրքիայի* վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է. «Դիմողի կողմից պահանջվող վճռի կատարման անհատական միջոցառումների վերաբերյալ Դատարանը պնդում է, որ վճիռներն իրենց բնույթով հռչակագրային են, և պետությունները Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ իրենք են ընտրում իրենց իրավական համակարգին համապատասխան միջոցառումներ, որպեսզի ապահովեն Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված իրենց պարտավորությունները (ի թիվս այլոց, տե՛ս *Assanidze v. Georgia* [GC], գանգատ թիվ 71503/01, կետ 202, ECHR 2004-II; *Scozzari and Giunta v. Italy* [GC], գանգատ թիվ 39221/98 և 41963/98, կետ 249, ECHR 2000-VIII; և *Brumărescu v. Romania* (just satisfaction) [GC], գանգատ թիվ 28342/95, կետ 20, ECHR 2001-I):

Ինչևէ, բացառիկ դեպքերում Դատարանը, պատասխանատու պետությանը 46-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունները կատարելուն օժանդակելու նպատակով, նպատակահարմար է գտնում մատնանշել այն միջոցառման տեսակները, որոնք կարող են իրականացվել: Նման դեպքերում Դատարանը կարող է առաջարկել տարբեր կարգավորումներ, սակայն կոնկրետ միջոցառման ընտրությունը թողնել պետության հայեցողությանը (Տե՛ս, *Broniowski v. Poland* [GC], գանգատ թիվ 31443/96, կետ 194, ECHR 2004-V):

Սակայն որոշ դեպքերում խախտման բնույթը կարող է այնպիսին լինել, որն ընտրության հնարավորություն չթողնի, և Դատարանը պետք է մատնանշի կոնկրետ միջոցառումը (տե՛ս, *Assanidze v. Georgia* [GC], գանգատ թիվ 71503/01, կետ 202):

Մեծ պալատը հավանություն է տալիս վերը մատնանշված նախադեպային իրավունքին: Նա գտնում է, որ եթե անձը դատապարտվել է այնպիսի դատարանի կողմից, որը չի համապատասխանում Կոնվենցիայի պահանջներին, ինչպես այս դեպքում, վերաքննությունը կամ գործի վերաբացումը ըստ էության հանդիսանում է խախտման վերացման ամենաճիշտ ճանապարհը: Ինչևէ, պատասխանատու պետությունից պահանջվող միջոցառումները կախված են կոնկրետ գործի հանգամանքներից և պետք է սահմանվեն գործի վերաբերյալ Դատարանի կայացրած վճռի լույսի ներքո՝ հաշվի առնելով նաև Դատարանի նախադեպային իրավունքը»:

20. ՀՀ ներպետական օրենսդրությունը նույն կերպ նախատեսում է,

որ դատարանը նոր հանգամանքի հիմքով վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը կարող է չփոփոխել: Սակայն օրենսդիրը լուրջ վերապահում է կատարում՝ նման դեպքերում պարտադրելով դատարանին իր որոշումը հիմնավորել ծանրակշիռ փաստարկներով:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝

«(...) [Ն]որ հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԳՌ-1099 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ «(...) [Ս]ահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ**: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում /մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս/, ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ վճարելի դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին» (տե՛ս քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի և Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԳՌ-

1099 որոշումը):

Որպես հիմնավորում Վճռաբեկ դատարանը ցանկանում է քննարկել մի իրավիճակ, երբ, օրինակ՝ միջազգային դատարանը ճանաչել է անձի՝ միայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ գործի դատաքննության ողջամիտ ժամկետի խախտում: Այս դեպքում գործի քննությունն արդեն իսկ ողջամիտ ժամկետի խախտմամբ իրականացված լինելու պայմաններում գործը նորից վերաբացելը և նոր քննության ուղարկելը կպարունակի նույն խախտումը կրկին թույլ տալու վտանգը: Նշված օրինակում բերված փաստարկը կարող է համապատասխանել «ծանրակշիռ փաստարկի» չափանիշին և հիմք հանդիսանալ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու, հետևաբար նաև դատական ակտը չբեկանելու համար:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքարկված որոշումները վերաբերել են Ա.Մուրադխանյանի նախնական կալանքին: Դրանց կայացումից հետո՝ 2006 թվականի մայիսի 25-ին, նրա վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, կատարվել է դատաքննություն, և գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա Ա.Մուրադխանյանի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճռով Ա.Մուրադխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 117-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և հանցանքների համակցության կանոններով դատապարտվել է ցմահ ազատազրկման: Ընդ որում, նրա պատժի սկիզբը հաշվարկվել է 2004 թվականի մայիսի 18-ից՝ ներառելով այն ժամկետները, որոնց վերաբերյալ Եվրոպական դատարանը խախտում է արձանագրել: Նշված դատավճիռը վերադաս դատական ատյանների կողմից թողնվել է անփոփոխ և ստացել է օրինական ուժ, որի հիման վրա Ա.Մուրադխանյանը ներկայում պատիժ է կրում (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

22. Սույն որոշման 18-20-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով 21-րդ կետում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված և սույն որոշման 15-րդ կետում մեջբերված խախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չէին կարող ազդել գործի ելքի վրա: Մասնավորապես, որպես խախտումներ Եվրոպական դատարանը նշել է, որ Ա.Մուրադխանյանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 14-ից 29-ն ընկած ժամանակահատվածի կալանքը չի համապատասխանել Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջներին, որ Ա.Մուրադխանյանը պահվել է շարունակական կալանքի տակ «ողջամիտ ժամկետի» խախտմամբ: Դրա հետ մեկտեղ, գործի քննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատվել է Ա.Մուրադխանյանի մեղավորությունը նրան մեղսագրվող արարքներում և նա դատապարտվել է ցմահ ազատազրկման: Անցկացված դատաքննության և կայացված դատավճռի օրինականության հետ կապված որևէ խախտում Եվրոպական դատարանը չի արձանագրել, իսկ գործի քննության ընթացքում

Ա.Մուրադխանյանին կալանքի տակ պահելու գործընթացում թույլ տրված խախտումները կայացված վերջնական դատական ակտի վրա որևէ ներագդեցություն չեն ունեցել:

Բացի այդ, սույն գործով Ա.Մուրադխանյանի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության պայմաններում նախնական կալանքի վերաբերյալ կայացրած դատական ակտի բեկանումը ոչ միայն չի վերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը, այլև իրավական առումով անիրագործելի է, քանի որ օրինական դատավճռի հիման վրա ազատագրկման ձևով պատիժ կրող անձի նախնական կալանքի հարցի կրկին քննարկումը կհանգեցնի իրավական անորոշության:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 18-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով *Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 5-ի վճիռը, որով արձանագրվել է դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով երաշխավորված իրավունքների խախտումներ, հիմք չէ սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումները բեկանելու համար:

Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի, 2006 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման արդյունքում փաստաբան Լ.Միմոնյանի բողոքը ենթակա է մերժման:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426¹-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գատապարտյալ Արարատ Նարիմանի Մուրադխանյանի փաստաբան Լիպարիտ Միմոնյանի բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի, 2006 թվականի փետրվարի 27-ի և 2006 թվականի մայիսի 4-ի որոշումները վերանայել:

2. Վերանայման արդյունքում վճռաբեկ բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

29.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՎԳ/0015/07/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի մարտի 19-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 15-ի որոշումների դեմ Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Վ.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի փետրվարի 28-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Սարգսյանի որոշմամբ անհայտ անձի կողմից իրացնելու նպատակով կեղծ մետաղադրամ պատրաստելու և 2012 թվականի մայիս ամսին՝ «Արարատբանկ» ԲԲԸ-ի Արտաշատի մասնաճյուղում 1 հատ 200 ՀՀ դրամ անվանական արժեքով կեղծ մետաղադրամ իրացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 27103313 քրեական գործը:

2. 2013 թվականի մարտի 18-ին որոշում է կայացվել թիվ 27103313 քրեական գործով միջնորդություն հարուցել Առաջին ատյանի դատարան՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ ներկայացված միջնորդությունը մերժվել է:

3. Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Վ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումը՝ մերժելով դատախազի վերաքննիչ բողոքը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Վ.Պողոսյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հունիսի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Սարգսյանի 2013 թվականի մարտի 18-ի՝ «Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» որոշման մեջ նշված է. «ՀՀ կենտրոնական բանկի 2012 թվականի հունիսի 15-ին կազմված թիվ 5 ակտի համաձայն՝ «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղի կողմից ուղարկված 200 ՀՀ դրամ անվանական արժեքով կեղծ մետաղադրամը փաթեթավորված է եղել 2012 թվականի մայիսի 21-ին: «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղի դրամական գործառնությունների բաժնի պետ Ռոզա Կարապետյանը ցուցմունք է տվել, որ 200 դրամ անվանական արժեքով մետաղադրամները բանկի իրենց մասնաճյուղում 5-7 օր ժամանակում կուտակվելուց հետո փաթեթավորվում են և ուղարկվում ՀՀ կենտրոնական բանկ, իսկ 2012 թվականի մայիսի 21-ին փաթեթավորված 200 դրամ անվանական արժեքով մետաղադրամները կուտակվել են 2012 թվականի մայիսի 15-ից մինչև 21-ն ընկած ժամանակահատվածում կատարված դրամական մուծումների արդյունքում:

«Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղում պահպանվում են 2012 թվականի մայիսի 15-ից մինչև 21-ն ընկած ժամանակահատվածում դրամական մուծումներ կատարված անձանց վերաբերյալ տվյալները, որոնք կարևոր նշանակություն ունեն քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար:

(...)

Թիվ 27103313 քրեական գործով միջնորդություն հարուցել Արարատի և

Վալոց ճորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին՝ «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղից առգրավելու 2012 թվականի մայիսի 15-ից մայիսի 21-ն ընկած ժամանակահատվածում դրամական մուծումներ կատարած անձանց վերաբերյալ տվյալները» (տե՛ս նյութեր, թերթ 3):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) անձնական կյանքի, այդ թվում՝ անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների անձեռնմխելիության իրավունքը ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությամբ երաշխավորված կարևոր իրավունքներից է, որը պետք է պաշտպանվի կամայական և անօրինական միջամտությունից:

(...)անձիբանկայինգաղտնիքկազմողտեղեկություններիանձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշման հիման վրա» (տե՛ս նյութեր, թերթ 12):

7. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա (...):

(...) Դատարանը մասնավորապես պատճառաբանել է, որ տեղեկատվությունը պարտադիր պետք է վերաբերի բանկի հաճախորդին, որը քրեական գործով ներգրավված է կասկածյալ կամ մեղադրյալ (կամ քաղաքացիական գործով հանդիսանում է կողմ):

Մինչդեռ տվյալ դեպքում միջնորդություն է ներկայացվել ոչ թե կասկածյալի կամ մեղադրյալի, այլ «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղում 2012 թվականի մայիսի 15-ից մինչև մայիսի 21-ն ընկած ժամանակահատվածում դրամական մուծումներ կատարած բոլոր անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն առգրավելու նպատակով խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը չի բխում ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային օրենսդրությամբ ամրագրված պահանջներից, և դրանից բխող հնարավոր սահմանափակումներն արդարացված դիտարկվել չեն կարող» (տե՛ս նյութեր, թերթ 37):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 23-րդ, 43-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասը և եզրահանգում է արել այն մասին, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները դատարանի որոշման հիման վրա կարող են ստանալ միայն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվությունը: Այլ խոսքով՝ օրենսդիրը կանոնակարգել է միայն կասկածյալին կամ մեղադրյալին վերաբերող բանկային գաղտնիքի կապակցությամբ քննչական և դատավարական գործողություններ կատարելու ընթացակարգը:

Վերոգրյալից բողոքաբերը եզրակացություն է արել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասում ամրագրված չէ որևէ սահմանափակում կամ արգելք՝ կապված որոշակի ժամանակահատվածում անձանց անորոշ շրջանակի կողմից կատարված բանկային գործարքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ:

9. Բողոք բերած անձի պնդմամբ սույն գործի շրջանակներում քրեական հետապնդման մարմինները ոչ թե կոնկրետ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություն են պահանջել, այլ խնդրել են տեղեկություն տրամադրել 2012 թվականի մայիսի 15-ից մինչև 21-ն ընկած ժամանակահատվածում բանկում մուծումներ կատարած անձանց մասին: Այս նկատառումով քրեական հետապնդման մարմինը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ բանկում մուծումներ կատարած անձանց վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով բանկում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Քրեական հետապնդման մարմնի կողմից դատարան ներկայացված միջնորդությունը նպատակ է ունեցել պարզել կեղծված դրամը իրացրած անձի ինքնությունը, մինչդեռ, ըստ բողոքաբերի, դատարաններն անհիմն կերպով մերժել են վերոնշյալ միջնորդությունը:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշումները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր այն հարցի կապակցությամբ, թե դատարանի որոշմամբ կարող են արդյոք ստացվել քրեադատավարական կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ դատարանի որոշմամբ կարող են ստացվել միայն կասկածյալի

կամ մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական մնուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ: (...)»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: (...)»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված վերոշարադրյալ դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա կարող է ձեռք բերվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը: Այլ խոսքով՝ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է տրամադրվել քրեական վարույթն իրականացնող մարմնին, եթե՝

ա) անձը ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,

բ) առկա է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման նպատակով խուզարկություն կամ առգրավում կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ դատարանի որոշումը:

13. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները. (...) ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները (...) կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից երևում է, որ նշված օրենքը թույլ է տալիս դատարանի որոշման հիման վրա գաղտնի կերպով ստանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

14. Համադրելով սույն որոշման 12-րդ և 13-րդ կետերում շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է հակասություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասում և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում ամրագրված մոտեցումների միջև այն առումով, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը թույլ է տալիս վերահսկել քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն ամրագրում է, որ դատարանի որոշման հիման վրա կարող է ստացվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը:

15. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր որ իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակների կամ չի նախատեսված օրենքով: (...)»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝

Սահմանադրության 23[-րդ] (...) [հոդվածով] (...) ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն լայն հասկացություն է և ենթակա չէ սպառնիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը (տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10593/08, կետ 151):

16. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և դրա վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անձի միջև հաստատված հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անձի հարաբերությունների տարատեսակ, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու

անձնական կյանքի մաս: Հետևաբար, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները՝ որպես մարդու անձնական կյանքի մաս, անձեռնմխելի են և դրանց ստացման վրա տարածվում են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանափակումները:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Այլ օրենքներում պարունակվող քրեական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքով կարգավորվում են օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները: Օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից, (...) սույն օրենքից, այլ իրավական ակտերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»:

Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Միևնույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միևնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, (...)»:

ՀՀ Սահմանադրության 23-րդ և 43-րդ հոդվածներում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական

կոնվենցիայի 8-րդ հոդվածում (տե՛ս սույն որոշման 15-16-րդ կետերը), «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում և 24-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կարգավորման լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասում և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում ամրագրված դիրքորոշումների միջև առկա հակասությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բանկային գաղտնիքի վերահսկման կապակցությամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասում ամրագրված դրույթը: Այլս խոսքով՝ վերահսկման ենթակա է բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ կենտրոնական բանկ ուղարկված 200 ՀՀ դրամ անվանական արժեքով կեղծ մետաղադրամը փաթեթավորված է եղել 2012 թվականի մայիսի 21-ին: Այս կապակցությամբ «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղի դրամական գործառույթների բաժնի պետը ցուցմունք է տվել՝ նշելով, որ 2012 թվականի մայիսի 21-ին փաթեթավորված 200 դրամ անվանական արժեքով մետաղադրամները կուտակվել են 2012 թվականի մայիսի 15-ից մինչև 21-ն ընկած ժամանակահատվածում կատարված դրամական մուծումների արդյունքում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

«Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» որոշման մեջ նախաքննության մարմինը Առաջին ատյանի դատարանին խնդրել է թույլատրել «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղից առգրավելու 2012 թվականի մայիսի 15-ից մայիսի 21-ն ընկած ժամանակահատվածում դրամական մուծումներ կատարած անձանց վերաբերյալ տվյալները, քանի որ դրանք կարևոր նշանակություն ունեն քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը մերժել է նախաքննության մարմնի միջնորդությունը՝ նշելով, որ անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշման հիման վրա (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննության կարգով բողոքարկված Առաջին ատյանի դատարանի որոշումը Վերաքննիչ դատարանը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվությունը պարտադիր պետք է վերաբերի բանկի հաճախորդին, որը քրեական գործով ներգրավված է կասկածյալ կամ մեղադրյալ (կամ քաղաքացիական գործով հանդիսանում է կողմ): Մինչդեռ տվյալ դեպքում միջնորդություն է ներկայացվել ոչ թե կասկածյալի կամ մեղադրյալի, այլ «Արարատբանկ» ԲԲԸ Արտաշատի մասնաճյուղում 2012 թվականի մայիսի 15-ից մինչև մայիսի 21-ն ընկած ժամանակահատվածում դրամական մուծումներ կատարած բոլոր անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն առգրավելու նպատակով խուզարկություն կատարելու

թույլտվություն ստանալու մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

19. Սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կոնկրետ քրեական գործի շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է ստանալ բանկի այն հաճախորդի բանկային գաղնիք կազմող տեղեկությունները, ով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Այլ խոսքով՝ քրեական գործի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները չեն կարող տրամադրվել հետաքննության կամ նախաքննության մարմիններին: Այս տրամաբանությամբ նշված մարմիններին չեն կարող տրամադրվել նաև անձանց անորոշ շրջանակի կողմից որոշակի ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

20. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ դատարանի որոշմամբ կարող են ստացվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը հիմնավորված ու պատճառաբանված է, այն բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշումները թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0120/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ս.ԳԱԶԱՐՅԱՆԻ
Վ.ԶՈՒՌՆԱԶՅԱՆԻ
Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝
պաշտպան՝
տուժողի ներկայացուցիչ՝*

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամսոն Սերյոժայի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հունվարի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13100912 քրեական գործը:

2012 թվականի հունիսի 5-ին Սամսոն Սերյոժայի Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի հունիսի 15-ին Ս.Ղազարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի հունիսի 20-ին Ս.Ղազարյանին առաջադրված մեղադրանքը կրկին փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի հուլիսի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 13-ի դատավճռով Ս.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 213-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ս.Ղազարյանը դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 213-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի հիման վրա՝ Ս.Ղազարյանն ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժի կրումից:

Տուժողի ներկայացուցիչ Հ.Գևորգյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության՝ վերջինիս իրավունք վերապահելով քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան:

3. Ամբաստանյալ Ս.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Ս.Ղազարյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի հունիսի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Ս.Ղազարյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակից՝ տուժող Մ.Գաբրիելյանի ներկայացուցիչ Հ.Գևորգյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ամբաստանյալ Ս.Ղազարյանի վճարելի բողոքը, քանի որ ստորադաս դատարանների դատական ակտերը հիմնավորված և պատճառաբանված են:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ս.Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսադրույքի կրկնապատիկը գերազանցող չափով չհաշվառված եկամուտ ստանալու դիտավորությամբ, 2006 թվականի նոյեմբեր ամսին Մեխակ Սարգսի Գաբրիելյանին է տվել 45.139.200 ՀՀ դրամին համարժեք 120.000 ԱՄՆ դոլար գումար, որի դիմաց նույն ժամանակահատվածից սկսած մինչև 2011 թվականի մարտ ամիսն ստացել է ՀՀ

կենտրոնական բանկի սահմանված 1% տոկոսադրույքի կրկնապատիկը գերազանցող ամսական 3.5%, ապա 5%, այնուհետև՝ 10%-ի չափով տոկոսային հավելավճարներ, որոնք ընդհանուր կազմել են 70.253.600 ՀՀ դրամին համարժեք 190.725 ԱՄՆ դոլար:

Ավելին, Մեխակ Գաբրիելյանից ամբողջ մայր գումարն ու տոկոսագումարները մարված լինելու պարագայում, խարդախությամբ Մ.Գաբրիելյանից գումար հավշտակելու դիտավորությամբ, իր մոտ ունենալով, ըստ էության իր բնույթով առջինչ, չոչնչացված ստացականը (այն համարվում է փոխառության պայմանագիր), գումարի բռնագանձման հայցով 06.06.2011թ. դիմել է դատարան՝ պահանջելով Մ.Գաբրիելյանին վճարել արդեն իսկ վճարված 60.000 ԱՄՆ դոլար գումարն ու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված մայր գումարի չափով՝ 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի գումարի տոկոսներ, իսկ դատական վճռի բավարարում ստանալով՝ գումարի բռնագանձումը տարածել է Մ.Գաբրիելյանի գույքի վրա, դրանով իրավունք ձեռք բերել վերջինիս 60.000 ԱՄՆ դոլար գումարի և 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ, որի հետևանքով Մ.Գաբրիելյանն ընկել է նյութական ծանր կացության մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 41):

6. Գործի նյութերում առկա է հետևյալ բովանդակությամբ ստացական. «Ես, Մեխակ Գաբրիելյանս, Սամսոն Ղազարյանից ստացա 70.000 (յոթանասուն հազար) ամերիկյան դոլար, որը պարտավորվում եմ վերադարձնել մեկամսյա ժամկետում» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 65):

7. Գործում առկա է հետևյալ գրությունը. «Ես, Մեխակ Գաբրիելյանս, առ 14.08.2010թ. Սամսոն Ղազարյանին պարտք եմ մնացել 60.000 (վաթսուն հազար) դոլար ամերիկյան» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 34):

8. Գործում առկա՝ Մ.Գաբրիելյանին ուղղված հիշեցում նախապահանջն ունի հետևյալ բովանդակությունը. «Սույնով հիշեցնում եմ, որ Դուք 14.08.2010 թվականի դրությամբ ըստ Ձեր իսկ կողմից գրված պարտավորության պարտք եք ինձ 60.000 (վաթսուն հազար) ԱՄՆ դոլար: Առ այսօր Ձեր կողմից ոչ մի քայլ չի ձեռնարկվել պարտավորության գումարը մարելու ուղղությամբ: Առաջարկում եմ Ձեզ մինչև սույն թվականի հունիսի 1-ը մարել պարտավորության գումարը կամ առաջարկություն ներկայացնել այդ գումարի մարման վերաբերյալ համաձայնեցնելով ինձ հետ, հակառակ դեպքում ես ստիպված եմ լինելու միջոցներ ձեռնարկել պարտավորության գումարը բռնագանձելու ուղղությամբ՝ օրենքով սահմանված կարգով: Պարտատեր՝ Սամսոն Մերյոժայի Ղազարյան» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 32):

9. Ս.Ղազարյանի ներկայացուցիչ Յ.Մարտիրոսյանը 2011 թվականի հունիսի 6-ին հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պատասխանող Մ.Գաբրիելյանից հօգուտ հայցվոր Ս.Ղազարյանի բռնագանձել պարտավորության գումարը՝ 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարը՝ սկսած պարտավորության կատարման խախտման պահից (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 11):

10. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի վճռի համաձայն՝ Մ.Ղազարյանի ներկայացուցչի հայցն ամբողջությամբ բավարարվել է, պատասխանող Մ.Գաբրիելյանից հոգուտ հայցվոր Մ.Ղազարյանի բռնագանձվել է 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ որպես հայցվորին վերադարձման ենթակա փոխառության գումար, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսների գումարը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 71):

11. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի վճռի դեմ Մ.Գաբրիելյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2012 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 2012 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Մ.Գաբրիելյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 203):

12. Տուժող Մ.Գաբրիելյանի Առաջին ատյանի դատարանի դատաքննական ցուցմունքների համաձայն՝ «(...) 2011թ. մարտի 18-ին Մ.Ղազարյանի հետ նրա ավտոմեքենայում կայացած հանդիպման ժամանակ նրան ամբողջությամբ վերադարձրել է մայր գումարը և վերջին ամսվա տոկոսը, սակայն Մ.Ղազարյանը հրաժարվել է իր տված ստացականը վերադարձնել կամ նոր ստացական տալ՝ պատճառաբանելով, որ 2006թ. համեմատությամբ դոլարն արժեզրկվել է, որպես փոխհատուցում նրան պետք է տա ևս 10.000 ԱՄՆ դոլար գումար» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 46):

Վկա Ազատ Արշակյանի ցուցմունքի համաձայն՝ «(...) Մ.Ղազարյանը զանգահարել է [իրեն] (...) պատճառաբանելով, որ Մ.Գաբրիելյանի հետ համաձայնության չգալու դեպքում դիմելու է Դատարան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 47):

13. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ «(...) ամբաստանյալ Սամսոն Ղազարյանը կատարել է վաշխառություն, սպա, օգտագործելով վաշխառության կատարման ընթացքում կազմված և որպես երաշխիք իրեն ներկայացված, մարված ստացականը, կատարել է առանձնապես խոշոր չափի գույքի խարդախություն, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

Ունենալով ազատ դրամական միջոցներ՝ Սամսոն Ղազարյանը 2006 թվականին ձեռնարկատիրական գործունեության մեջ ներդնելու և ընդլայնելու նպատակով 120.000 ԱՄՆ դոլար գումար է առաջարկել գործարար Մեխակ Գաբրիելյանին՝ պայմանով, որ նրան տրամադրվեն ամսական տոկոսներ: Մ.Ղազարյանի առաջարկին և ներկայացված պայմաններին Մ.Գաբրիելյանը համաձայնվել է 2006թ. նոյեմբերի 16-ին նրանից ստացել է 45.139.200 ՀՀ դրամին համարժեք 120.000 ԱՄՆ դոլար գումար՝ պարտավորվելով մինչև մայր գումարի վերջնական մարումը վճարել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած տոկոսադրույքի կրկնապատիկը գերազանցող ամսական 3.5 տոկոս գումարներ, թեև նույն օրը կազմած գրավոր ստացականում (պարտավորագրում) նշել է միայն

Ս.Ղազարյանից 120.000 ԱՄՆ դոլարը պարտքով ստանալու և այն 5 ամիս անց վերադարձնելու վերաբերյալ:

Ի կատարումն ստանձնած պարտավորության՝ Մ.Գաբրիելյանը 2006թ. դեկտեմբերից մինչև 2011թ. մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում ամբաստանյալ Ս.Ղազարյանին յուրաքանչյուր ամիս վճարել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2006-2011թթ. սահմանված տարեկան 11-14% տոկոսադրույքի կրկնապատիկը գերազանցող, նախ՝ ամսական 3.5%, ապա Ս.Ղազարյանի պահանջով բարձրացված ամսական 5% և 10% տոկոսադրույքով, ընդհանուր առմամբ՝ 67.935.200 ՀՀ դրամին համարժեք 184.425 ԱՄՆ դոլար գումարներ, 2011թ. մարտի 18-ին Երևանի Մաշտոցի պողոտայի վրա կայանած, Ս.Ղազարյանի ավտոմեքենայի մեջ ամբողջությամբ մարել է նաև 120.000 ԱՄՆ դոլարի վերջնամասը՝ 25.000 ԱՄՆ դոլարը, սակայն Ս.Ղազարյանը, մայր գումարը դոլարով տրամադրելու և նույն արժույթով մարում ստանալու պայմաններում, որպես դոլարի արժեզրկման փոխհատուցում, Մ.Գաբրիելյանից պահանջել է հավելյալ 10.000 ԱՄՆ դոլար գումար և ստանալով վերոհիշյալ հիմնավորմամբ փաստարկված մեթոմ՝ այդ պատրվակով չի վերադարձրել մայր գումարի ընթացիկ մարման վերաբերյալ դեռևս 2010թ. օգոստոսի 14-ին կազմված 60.000 ԱՄՆ դոլար պարտքի վերաբերյալ ստացականը (պարտավորագիրը)՝ փաստացի հրաժարվելով Մ.Գաբրիելյանին տրամադրել նաև 2010թ. օգոստոսի 14-ից մինչև այդ օրը մայր գումարները մարելու փաստն հաստատող այլ գրավոր փաստաթուղթ: Նախկինում ձևավորված ջերմ փոխհարաբերությունների ուժով վստահելով Ս.Ղազարյանին՝ Մ.Գաբրիելյանը նույնպես մայր գումարն ամբողջությամբ մարելու վերաբերյալ ստացական չստանալու պարագայում այդ օրը նրան հանձնած գումարը հետ չի պահանջել՝ հեռանալով և համոզված լինելով, որ Ս.Ղազարյանը վերլուծության և/կամ իրենց ընդհանուր ընկերների հետ քննարկելու արդյունքում կհամոզվի 10.000 ԱՄՆ դոլար պահանջն անհիմն ներկայացնելու հանգամանքը:

Մինչդեռ, չվերադարձրած ստացականի շահարկմամբ հետագայում Մ.Գաբրիելյանից լրացուցիչ 10.000 ԱՄՆ դոլարը պահանջելուց, սակայն հրաժարում ստանալուց հետո՝ ստացականում նշած արդեն 60.000 ԱՄՆ դոլար գումարի պահանջ ներկայացնելու և Մ.Գաբրիելյանի այդ գույքին խարդախությամբ տիրանալու դիտավորությամբ, Ս.Ղազարյանը, 2011թ. հունիսի 6-ին գումարի բռնագանձման հայցապահանջով, քաղաքացիական դատավարության կարգով դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որպես փոխառության պայմանագրի կնքման և փոխառու Մ.Գաբրիելյանի պարտավորության չկատարման փաստարկ՝ հայցադիմումին կից ներկայացրել և դրանով իսկ օգտագործել վերոնշյալ, 2011թ. մարտի 18-ի դրությամբ ըստ էության մարված ստացականը (պարտավորագիրը)՝ պահանջելով Մ.Գաբրիելյանից հոգուտ նրա բռնագանձել ստացականում նշված, ըստ էության հավելյալ 60.000 ԱՄՆ դոլար գումար:

Ս.Ղազարյանի պահանջը վերոնշյալ ստացականի հիման վրա 2011թ. նոյեմբերի 8-ին կայացված վճռով ամբողջությամբ բավարարվել է (վճիռը ստացել է օրինական ուժ), որով որոշվել է Մեխակ Գաբրիելյանից հոգուտ Սամսոն Ղազարյանի

բռնագանձել 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես վերջինիս վերադարձման ենթակա փոխառության գումար, որով ավարտվել է Մ.Գաբրիելյանի գույքը հափշտակելուն ուղղված Ս.Ղազարյանի հանցավոր դիտավորությունը, և վերջինս խարդախությամբ իրավունք է ձեռք բերել Մ.Գաբրիելյանի առանձնապես խոշոր չափի գույքի՝ 22.980.000 ՀՀ դրամին համարժեք 60.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 42-43):

14. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Ամբաստանյալ Ս.Ղազարյանի՝ վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանություններն անհիմն են, ամբաստանյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքները կատարելը և նրա մեղքը հաստատված է, իսկ ներկայացված պատճառաբանությունները հերքված են՝ քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներով» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 90):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

15. Բողոքաբերը նշել է, որ ստարադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ սխալ են կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 213-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 25-րդ, 105-րդ, 106-րդ, 124-րդ, 126-րդ, 358-րդ, 360-րդ հոդվածների պահանջները:

Բողոքի հեղինակը նշել է, որ թե՛ առաջին ատյանի դատարանը, և թե՛ վերաքննիչ դատարանը չեն հիմնավորել իր արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը, մասնավորապես՝ դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել տուժողի ցուցմունքներն ու բացատրությունը, նրա կողմից ներկայացված փաստաթղթերը, բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ չեն գնահատել գործում առկա ապացույցները, ինչպես նաև թույլատրելի են համարել քրեադատավարական օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույցները:

Ըստ բողոքաբերի՝ քաղաքացիական դատավարության կարգով դատարան դիմելով՝ ինքն ունեցել է հստակ համոզմունք, որ Մ.Գաբրիելյանը չի մարել իր հանդեպ ունեցած պարտավորությունը:

16. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարաններն անհիմն կերպով հաստատված են համարել նաև իր արարքում վաշխառության հանցակազմի առկայությունը: Մասնավորապես, քրեական գործում առկա և ստորադաս դատարաններում հետազոտված որևէ ապացույցով չի հաստատվել իր արարքում վաշխառության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը, այն է՝ պարտք տված գումարի համար իր կողմից ՀՀ կենտրոնական բանկի սահմանած

բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը:

17. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշումը և իր նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված խարդախության հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ս.Ղազարյանի արարքում առկա են առանձնապես խոշոր չափերով խարդախության (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) և վաշխառության (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մաս) հանցակազմերի հատկանիշներ:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում խարդախության, այն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակության կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար:

Խարդախության հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Լ. Ավետիսյանի* և *Վ. Մաթևոսյանի* գործերով կայացված որոշումներում:

Մասնավորապես, *Լ. Ավետիսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

(...) Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

(...) Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է

նախատեսի և ցանկանա դա:

(...) Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է:

(...) Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա:

Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը, և եթե ապացուցվի, որ ունեցել է, ապա խարդախության հանցակազմն առկա է:

(...) Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում, որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմն առկա չէ:

(...)

29. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

30. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական

հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ» (տե՛ս Լիա Արտյոմի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 25-26-րդ և 29-30-րդ կետերը):

Վ.Մաթևոսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) խարդախությունը և քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն օբյեկտիվ կողմի հատկանիշներով հաճախ համընկնում են: Հետևաբար, այստեղ պետք է նկատի ունենալ, որ խարդախությունը՝ որպես հանցագործություն, քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից տարբերվում է սուբյեկտիվ կողմով: Մասնավորապես՝ խարդախությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, ինչը ենթադրում է, որ հանցավորը գիտակցում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև նախատեսում և ցանկանում է դա:

Միևնույն ժամանակ խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքին կամ գույքային իրավունքին տիրանալը հանցավորը նպատակ է ունենում հափշտակել այն, չվերադարձնել գույքը, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Մինչդեռ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքում անձը նման նպատակ չի ունենում:

(...) խարդախության մեղադրանքով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ապացույցների բավարար ամբողջությամբ հիմնավորել, որ հանցավորը դիտավորություն է ունեցել խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Այն դեպքում, երբ առկա է մասնավոր-իրավական պայմանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտում, ապա նշվածը որպես խարդախություն որակելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ անձն ի սկզբանե նպատակ չի ունեցել իրականացնելու գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի փոխանցման հետ կապված իր վրա վերցրած պարտավորությունները:

(...) Անձի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն ստեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն:

(...) վերը նշված փաստական հանգամանքների հետ մեկտեղ յուրաքանչյուր դեպքում, գործով ձեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ, պետք է հիմնավորվի, որ անձը նպատակադրված չի եղել իրականացնելու իր վրա վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է

խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերագրյալը, ապա անձի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրություն՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով» (տե՛ս Վարդան Մարատի Մաթևոսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԳ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը):

21. Սույն գործի նյութերի և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի վճռի ուսումնասիրությունից երևում է, որ

ա) 2006 թվականի նոյեմբեր ամսին Ս.Ղազարյանը փոխառության կարգով Մ.Գաբրիելյանին տվել է 45.139.200 ՀՀ դրամին համարժեք 120.000 ԱՄՆ դոլար (տե՛ս սույն որոշման 5-րդ և 13-րդ կետերը),

բ) Մ.Գաբրիելյանը 2006 թվականի դեկտեմբերից մինչև 2011 թվականի մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում Ս.Ղազարյանին յուրաքանչյուր ամիս վճարել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2006-2011թթ. սահմանված տարեկան 11-14% տոկոսադրույքի կրկնապատիկը գերազանցող, նախ՝ ամսական 3,5%, ապա՝ Ս.Ղազարյանի պահանջով բարձրացված ամսական 5% և 10% տոկոսադրույքով, ընդհանուր առմամբ՝ 67.935.200 ՀՀ դրամին համարժեք 184.425 ԱՄՆ դոլար (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը),

գ) Ս.Ղազարյանը, մայր գումարը դոլարով տրամադրվելու և նույն արժույթով մարում ստանալու պայմաններում, որպես դոլարի արժեզրկման փոխհատուցում, Մ.Գաբրիելյանից պահանջել է հավելյալ 10.000 ԱՄՆ դոլար գումար և ստանալով մերժում՝ չի վերադարձրել մայր գումարի ընթացիկ մարման վերաբերյալ դեռևս 2010 թվականի օգոստոսի 14-ին կազմված 60.000 ԱՄՆ դոլար պարտքի վերաբերյալ ստացականը (պարտավորագիրը)՝ փաստացի հրաժարվելով Մ.Գաբրիելյանին տրամադրել նաև 2010 թվականի օգոստոսի 14-ից մինչև այդ օրը մայր գումարները մարելու փաստը հաստատող այլ գրավոր փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 12-րդ և 13-րդ կետերը),

դ) 2011 թվականի մայիսի 25-ին Ս.Ղազարյանը հիշեցում նախապահանջ է ներկայացրել Մ.Գաբրիելյանին առ այն, որ Մ.Գաբրիելյանը 2010 թվականի օգոստոսի 14-ի դրությամբ Ս.Ղազարյանին պարտք է 60.000 (վաթսուն հազար) ԱՄՆ դոլար, և մինչև սույն թվականի հունիսի 1-ը այն չմարելու կամ դրա մարման վերաբերյալ համաձայնեցում ձեռք չբերելու դեպքում Ս.Ղազարյանը պարտավորության գումարը բռնագանձելու ուղղությամբ կղիմի օրենքով սահմանված միջոցների, ինչպես նաև Մ.Գաբրիելյանի հետ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում դատարան դիմելու իր մտադրության մասին տեղեկացրել է նաև վկա Ա.Արշակյանին (տե՛ս սույն որոշման 8-րդ և 12-րդ կետերը),

ե) Ս.Ղազարյանի ներկայացուցիչ Յ.Մարտիրոսյանը 2011 թվականի հունիսի 6-ին հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պատասխանող Մ.Գաբրիելյանից հոգուտ հայցվոր Ս.Ղազարյանի բռնազանձել պարտավորության գումարը՝ 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարը՝ սկսած պարտավորության կատարման խախտման պահից (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը),

զ) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի վճռով Ս.Ղազարյանի ներկայացուցչի հայցն ամբողջությամբ բավարարվել է, պատասխանող Մ.Գաբրիելյանից հոգուտ հայցվոր Ս.Ղազարյանի բռնազանձվել է 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ որպես հայցվորին վերադարձման ենթակա փոխառության գումար, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսների գումարը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-րդ կետում շարադրված և համապատասխանաբար, *Լ.Ավետիսյանի* և *Վ.Մաթևոսյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ս.Ղազարյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների շարքում առկա չէ որևէ փաստական տվյալ, որով կհիմնավորվեր, որ Ս.Ղազարյանը խաբել կամ մոլորության մեջ է գցել Մ.Գաբրիելյանին, ինչի արդյունքում իրավունք է ձեռք բերել վերջինս 60.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ: Այլ կերպ՝ սույն գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված չէ Ս.Ղազարյանի արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը: Բացի այդ, սույն գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում, որ Ս.Ղազարյանը 60.000 ԱՄՆ դոլար հավիշտակելու ուղղակի դիտավորություն և շահադիտական նպատակ է ունեցել: Այսինքն՝ սույն գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված չէ Ս.Ղազարյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը:

Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ս.Ղազարյանի արարքում առկա են առանձնապես խոշոր չափերով խարդախության (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) հանցակազմի հատկանիշներ:

Ինչ վերաբերում է Մ.Գաբրիելյանի կողմից Ս.Ղազարյանին ստացականով վճարման ենթակա գումարն արդեն իսկ վճարված լինելու փաստին, ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրա ապացուցման հիմնախնդիրը վերաբերում է մասնավոր իրավունքի ոլորտին, քանի որ գործի նյութերում առկա են նաև մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են Ս.Ղազարյանի և Մ.Գաբրիելյանի միջև պարտավորական հարաբերությունների առկայության մասին: Այսպես՝ գործի նյութերում առկա է՝

ա) ստացական, որի համաձայն՝ Մ.Գաբրիելյանը Ս.Ղազարյանից ստացել է 70.000 (յոթանասուն հազար) ԱՄՆ դոլար, որը պարտավորվում է վերադարձնել

մեկ ամսյա ժամկետում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը),

բ) գրություն, որի համաձայն՝ Մ.Գաբրիելյանը 2010 թվականի օգոստոսի 14-ի դրությամբ Ս.Ղազարյանին պարտք է մնացել 60.000 (վաթսուն հազար) ԱՄՆ դոլար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը),

գ) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի վճռով վճռվել է Մ.Գաբրիելյանից հօգուտ Ս.Ղազարյանի բռնագանձվել է 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ որպես հայցվորին վերադարձման ենթակա փոխառության գումար (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:

Ինչպես նշվել է սույն որոշման նախորդ կետում, Ս.Ղազարյանի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար Ս.Ղազարյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով: Հետևաբար, Ս.Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել և քրեական գործի վարույթը կարճել:

24. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ նրա արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի՝ վաշխառության, հատկանիշները (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ առումով ստորադաս դատարանների դատական ակտերը հիմնավորված և պատճառաբանված են (վաշխառության հանցակազմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները տե՛ս Քննարկի Նորիկի Պետրոսյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ին կայացված թիվ ԵԿԴ/0102/01/11 որոշման 12-27-րդ կետերը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սամսոն Սերյոժայի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 213-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի որոշումը մասնակիորեն բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական գործի վարույթը կարճել և Սամսոն Սերյոժայի Ղազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իսկ մնացած մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԳ/0122/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա.ԱՌԱԶԵԼՅԱՆԻ
Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

*մեղադրող՝
տուժողի իրավահաջորդ՝*

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արթուր Սերգեյի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ մեղադրող Լ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում հարուցվել է թիվ 60122512 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի և 244-րդ հոդվածի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Արթուր Սերգեյի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով:

2012 թվականի դեկտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 4-ի դատավճռով Ա.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով: ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Ա.Առաքելյանը դատապարտվել է ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով դատապարտվել է ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով, առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Առաքելյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 2 (երկու) տարի ժամկետով:

3. Երևանի քաղաքի դատախազ Հ.Բադալյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 4-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Լ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ մեղադրող Լ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ա.Առաքելյանը դատապարտվել է այն բանի համար, որ «2012թ. սեպտեմբերի 6-ին՝ ժամը 01:10-ի սահմաններում, «Մեծն Կայգեր» տաքսի ծառայությանը պատկանող «Նիսսան-Սանի» մակնիշի Լ 1997 պետհամարանիշի մեքենան վարել է Երևան քաղաքի Գայի պողոտայի կողմից Մյասնիկյան պողոտայով դեպի Հերացի փողոցի ուղղությամբ, շուրջ 65կմ/ժամ արագությամբ, իր ուղեմասի ձախ եզրային գոտով, բետոնե միջնապատից 0,5-0,6 մետր հեռավորությամբ: Չհասած «Վեներիա» ռեստորանային համալիրին՝ թույլ է տվել ԴԵԿ-ի 65, 67 և 129 կետերի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ ավտոմեքենան վարել է սահմանված թույլատրելի առավելագույն 60կմ/ժամը գերազանցող մոտ 65կմ/ժամ արագությամբ, իր երթևեկության համար վտանգ առաջացրած՝ հանդիպակաց ուղղությամբ ընթացող ավտոմեքենայի հեռահար լույսերից շլանալու

սկզբնապահից սկսած չիդիտելով երթևեկության գոտին, ժամանակին կատարած արգելակումով չի կանգնեցրել ավտոմեքենան, չի համոզվել երթևեկության անվտանգության, մասնավորապես ճանապարհի երթևեկելի մասում առկա խոչընդոտների ու վտանգի աղբյուրների բացակայության մեջ, շարունակել է երթևեկությունը նույն արագությամբ և ուղղությամբ, շլացումն ավարտելուց հետո տեսել է իր ավտոմեքենայի ձախ ընթացագոտում կանգնած հետիոտն Ալեքսանդր Սանասարի Հովսեփյանին, չի հասցրել արգելակել կամ մանևրել, ինքն իրեն գրկել է վրաերթը կանխելու տեխնիկական հնարավորությունից, ավտոմեքենայի առջևի ձախ մասով վրաերթի է ենթարկել վերջինիս և անգոշությանը պատճառել մահ:

Այնուհետև Ա.Առաքելյանը ՃԵԿ-ի պահանջները խախտելու հետևանքով վրաերթ կատարելուց հետո՝ ավտոմեքենան թողել է դեպքի վայրում և ճանապարհատրանսպորտային պատահարի վայրից հեռացել» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 208):

6. Դատաբժշկական փորձագետի թիվ 782 եզրակացության համաձայն՝ «Փորձաքննությունը սկսված է 2012 թվականի սեպտեմբերի 6-ին ժամը՝ 11:30-12:30 [ընկած ժամանակահատվածում], (...) [Ա.Հովսեփյանի] մահը վրա է հասել փորձաքննությունից մոտ 12-14 ժամ առաջ: (...) դիակի [ստացած] վնասվածքները կենդանի անձանց մոտ դասվում են առողջության ծանր վնաս պատճառող մարմնական վնասվածքների շարքին, որոնցով էլ պայմանավորված է եղել մահը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 95-97):

7. Դատափետրաբանական և դատաբժշկական համալիր փորձագետի թիվ 32011202 եզրակացության համաձայն՝ «(...) ինչ վերաբերում է Ա.Հովսեփյանի մահվան պատճառ հանդիսացող մարմնական վնասվածքներին, ապա վերջիններս պատճառվել են «NISSAN» մակնիշի ավտոմոբիլի կողմից, որը հիմնավորվում է դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված կենսական կարևոր օրգանների վնասվածքներով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 135):

8. Ա.Առաքելյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որի համաձայն՝ «(...) [վրաերթից հետո մեքենան] կանգնեցրեցի աջ մասում, իջա ավտոմեքենայից, վախեցած և շփոթված էի, հետո վազքով մոտեցա վրաերթի տեղը, տեսա, որ տուժող տղամարդն ընկած է հանդիպակաց ուղեմասում բաժանարար բետոնե միջնապատի մոտ, [նրա] գլխից արյուն էր հոսում և գտնվում էր անշարժ վիճակում, հասկացա, որ մահացել է, ավելի վախեցա, գնացի ավտոմեքենայի մոտ և մոտ տաս րոպե մնալուց հետո, մի պատահական ավտոմեքենայով եկա Հարավ-Արևմտյան թաղամաս, ընթացքում կապվեցի մեր տնօրեն Էդգար Օխոյանի հետ և ասացի, որ նշված տեղը վրաերթ են կատարել (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 155):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է «(...) Ամբաստանյալ Ա.Առաքելյանի [նկատմամբ] պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես կատարված հանցագործության բնույթը, հանրության համար վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա անձը: Դատարանն ամբաստանյալ Ա.Առաքելյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ նա նախկինում դատված չի եղել, մեղայականով ներկայացել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական բաժին,

իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կատարվածի համար, բնութագրվում է դրական, ամբողջությամբ հատուցել է տուժողին պատճառված վնասը, խնամքին ունի մինչև 14 տարեկան երեխա, 3-րդ կարգի հաշմանդամ մայր: Գատարանն ամբաստանյալ Ա.Առաքելյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

Հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Առաքելյանի կատարած հանցանքների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ինչպես նաև այն, որ վերջինիս մեղսագրվել է նաև միջին ծանրության հանցագործություն, որի համար պատիժ է նախատեսված միայն ազատազրկման ձևով՝ դատարանը գտնում է, որ նրա ուղղվելու, նոր հանցագործությունները կանխելու, ինչպես նաև սոցիալական արդարությունը վերականգնելու համար նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 205-209):

10. Վերաքննիչ դատարանի դատական ակտը պատճառաբանված է հետևյալ կերպ. «(...) Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը պատճառաբանված ու հիմնավորված է գործի փաստական հանգամանքներով, ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներով, այդպիսիք ծանրացնող հանգամանքների բացակայությամբ, որոնց պայմաններում դատարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61 հոդվածների պահանջները, Արթուր Առաքելյանի նկատմամբ նշանակել է պատիժ՝ երկու տարի ժամկետով ազատազրկում, նույն ժամկետով զրկելով նրան տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, ինչը համապատասխանում է կատարված հանցանքի բնույթին ու ամբաստանյալի անձնավորությանը, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար է նրան ուղղելու ու նոր հանցագործությունները կանխելու համար: Վերոնշյալ հանգամանքները և հանցանքի վտանգավորության աստիճանը հաշվի առնելով՝ վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ուղղվելու համար առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժն ամբաստանյալ Առաքելյանը պետք է կրի, և վերաքննիչ բողոքում մատնանշված հանգամանքները, որոնք նաև հաշվի են առնվել պատիժ նշանակելիս, բավարար հիմք չեն կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ՝ Արթուր Առաքելյանին պայմանականորեն դատապարտելու համար, ուստի Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը պետք է թողնել անփոփոխ:(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 42-45):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը թույլ են տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, ինչի հետևանքով չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը, վկայակոչելով *Է.Ասատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, այնուհետև նշել է, որ պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել Ա.Առաքելյանի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքի հետ կապված հարցերը: Մասնավորապես, հաշվի չեն առել, որ կոնկրետ իրադրությունում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունն Ա.Առաքելյանի համար քիչ հավանական, իսկ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման և դրա արդյունքում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը ոչ ակնհայտ է եղել:

Ըստ բողոքաբերի՝ դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել մաս Ա.Առաքելյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և հանցագործության կատարումից հետո նրա դրսևորած վարքագիծը, այն, որ վերջինս կատարել է պատճառված նյութական վնասը հարթելուն ուղղված գործողություններ: Բացի այդ, թեև վրաերթից հետո, համոզված լինելով, որ տուժողը մահացել է, Ա.Առաքելյանը հեռացել է ճանապարհատրանսպորտային պատահարի վայրից, սակայն դեպքի վայրում է թողել ավտոմեքենան, մույն օրը մեղայականով ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունքներ, որպիսի պայմաններում ամբաստանյալը նպաստել է դեպքի հանգամանքների բացահայտմանը:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ ստորադաս դատարանների դատական ակտերը հակասում են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, քանի որ պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկվել այն հանգամանքները, որոնք անհրաժեշտ են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելու համար:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած

և ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողած (ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած) անձանց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը լուծելու ընթացքում դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ և պատճառաբանվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Ա.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելու ընթացքում դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներին Վճարելի դատարանն անդրադարձել է թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇԳ/0029/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09, ԼԳ-2/0019/01/09 և այլ որոշումներում:

Ա.Սահակյանի գործով կայացված որոշմամբ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված] հանցակազմի սուբյեկտիվ կողմի բնութագրիչ առանձնահատկությունն այն է, որ հանցանք կատարող անձը հասկանում է, որ իր գործողությունների (անգործության) արդյունքում կարող է հանրության համար վտանգավոր հետևանքներ առաջանան, այսինքն՝ նա գիտակցում է, որ իր կողմից թույլ տված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում հնարավոր է տեղի ունենա վթար և մարդու (մարդկանց) կյանքին կամ առողջությանը հասցվի վնաս, սակայն, ցուցաբերելով հանցավոր անգոյություն, այնուամենայնիվ, թույլ է տալիս նշված խախտումը՝ հույս ունենալով խուսափել հնարավոր ծանր հետևանքների առաջացումից:

Օբյեկտիվ կողմից նշված արարքը դրսևորվում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ, որոնցից առավել կոպիտ խախտումներն ամրագրված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

(...)Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով պատժի տեսակ և չափ ընտրելիս դատարանները պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները,

հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ գործերով դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին, որի արդյունքում տեղի է ունեցել հանցագործությունը: Նշված հանգամանքի կարևորումը պայմանավորված է նրանով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով նախատեսված՝ ճանապարհային երթևեկության կանոնների առավել կոպիտ խախտումները (լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը և այլն) վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը կարևոր նշանակություն ունի նաև հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար» (տե՛ս Արամ Սերյոժայի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ-1/0003/01/10 որոշման 19-20-րդ կետերը):

16. Չարգացնելով *Ա.Սահակյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Է.Սաստրյանի* գործով որոշման մեջ շեշտել է, որ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով տրանսպորտային միջոցի վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը ճիշտ գնահատելու համար պետք է առանձնակի ուշադրություն դարձվի կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին:

(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի] վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հետևանքների նկատմամբ դրսևորվող անզգույշ մեղքի ձևը կարող է տարբեր կերպ արտահայտվել: Այսպես՝ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է իր արարքի (գործողության կամ անգործության) պոտենցիալ վտանգավորությունը, նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և չնայած դրան, հույսը դնելով իր հմտությունների, անձանց, սարքավորումների և այլնի վրա՝ թույլ է տալիս սահմանված անվտանգության կանոնների խախտում՝ առանց բավարար հիմքերի հույս ունենալով, որ վտանգավոր հետևանքները կկանխվեն:

Հանցավոր անփութության օրենսդրական բնորոշումը ցույց է տալիս, որ

անգոյությունն այս տեսակը բնութագրվում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը չնախատեսելով: Այլ խոսքով՝ անփութությամբ գործող անձը, իրական հնարավորություն և պարտավորվածություն ունենալով նախատեսել վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բավարար չըջահայացություն, ուշադրություն և հոգատարություն չի ցուցաբերում այդ հետևանքների առաջացումը թույլ չտալու համար:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անգոյությունը մեղքի վերագրյալ տարատեսակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցավոր անփութության դեպքում անձը չի նախատեսում իր արարքի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, հետևաբար չի գիտակցում նաև իր կողմից տվյալ իրադրությունում թույլ տրված խախտման վտանգավորությունը: Մինչդեռ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է, որ իր կողմից թույլ տրված խախտման արդյունքում կարող են վտանգավոր հետևանքներ առաջանալ, այսինքն՝ նա գիտակցում է իր արարքի վտանգավորությունը և, չնայած դրան, թույլ է տալիս նշված խախտումը, ինչը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել: Բացի այդ, դատարանները պետք է գնահատեն, թե տվյալ խախտման արդյունքում, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը և որքանով էր ակնհայտ տրանսպորտային միջոցը վարողի համար իր կողմից թույլ տված խախտման և հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման միջև պատճառական կապի զարգացման հավանականությունը: Այլ խոսքով՝ համապատասխան գնահատականի պետք է արժանացվի կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց նշված հանգամանքների գնահատման հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին (տե՛ս Էդմոն Գարասիմի Ասատրյանի

գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 15-18-րդ կետերը):

17. Հիմքը նույնիսկ վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելու վերաբերյալ դատարանի որոշումը, ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան և այլն) պետք է հիմնված լինի կատարված հանցագործության առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին ճիշտ պատկերացում կազմել և որպես հետևանք՝ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառել հնարավոր չէ, առանց բացահայտելու թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը և կատարված հանրորեն վտանգավոր արարքի, դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Բացի այդ, պատժի նպատակների իրագործման տեսանկյունից Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորում է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումից անմիջապես հետո հանցավորի դրսևորած վարքագծի գնահատումը:

Վերոգրյալով հանդերձ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ քրեաիրավական հետևանքներ առաջացնող ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ մեղադրվող անձին միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեղսագրումն ինքնին նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը բացառող հանգամանք չէ:

18. Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում «ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնել[ու համար] տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից՝ սույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում (...):»:

Մեջբերված քրեաիրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ելնելով ճանապարհային երթևեկության մասնակիցների շահերից, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարի փաստով պայմանավորված նրանց փոխադարձ պարտավորությունների ապահովման

անհրաժեշտությունից, տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձանց քրեական պատժի սպառնալիքի տակ պարտավորեցնում է մնալ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում, եթե դրա արդյունքում մարդու (մարդկանց) առողջությանն անգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացել է մարդու (մարդկանց) մահ:

ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը նպատակ է հետապնդում պատժել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում թույլ տված այն անձանց, ովքեր, թողնելով դեպքի վայրը, խուսափել են ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժած անձանց օգնություն ցուցաբերելուց, չեն ցանկացել ճանապարհատրանսպորտային պատահարի մասին տեղեկացնել իրավապահ մարմիններին և աջակցել կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանը:

19. Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած և ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողած (ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած) անձանց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը լուծելու ընթացքում դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է պարզի, թե ինչ դրդապատճառներով է անձը թողել ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը և արդյոք դրանով փորձել է խուսափել պատահարի փաստով պայմանավորված իր պարտավորությունների կատարումից:

Հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության մասին ճիշտ պատկերացում կազմելու համար դեռևս բավարար չէ այն հանգամանքի պարզաբանումը, որ տրանսպորտային միջոց վարող անձն առանց ծայրահեղ անհրաժեշտության թողել է ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը: Նման իրավիճակներում անձի նկատմամբ համարժեք քրեաիրավական ներգործության միջոց կիրառելու համար անհրաժեշտ է պարզել և համապատասխան գնահատականի արժանացնել այն, թե արդյոք հանցավորը, դեպքի վայրը թողնելով, փորձել է խուսափել`

ա) ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժած անձանց օգնություն ցուցաբերելուց,

բ) ճանապարհատրանսպորտային պատահարի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելուց,

գ) կատարված արարքի և դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելուց:

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձը, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելով, կարող է փորձել թաքցնել հանցագործության կատարման փաստը, խուսափել իր պարտավորությունների կատարումից, և հակառակ դրան` հանցավորը կարող է մնան նպատակներ չհետապնդել, միջոցներ ձեռնարկել տուժած անձանց օգնություն ցույց

տալու, պատահարի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու ուղղությամբ, սակայն ինչ-ինչ պատճառներով լքել ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկու իրավիճակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը, հետևաբար պետք է իրենց արտացոլումը գտնեն քրեաիրավական ներգործության միջոցի ընտրության ժամանակ, այլապես կխախտվեն արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները:

20. Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Առաքելյանը 2012 թվականի սեպտեմբերի 6-ի գիշերը՝ ժամը 01:10-ի սահմաններում, «Մեծն Կայգեր» տաքսի ծառայությանը պատկանող «Նիսսան-Սանի» մակնիշի ավտոմեքենան վարել է Երևանի Մյասնիկյան պողոտայով դեպի Հերացի փողոցի ուղղությամբ, իր ուղեմասի ձախ եզրային գոտով: Այդ ընթացքում թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ ավտոմեքենան վարել է սահմանված թույլատրելի առավելագույն 60կմ/ժամը գերազանցող մոտ 65կմ/ժամ արագությամբ, իր երթևեկության համար վտանգ առաջացրած՝ հանդիպակաց ուղղությամբ ընթացող ավտոմեքենայի հեռահար լույսերից շլանալու սկզբնապահից սկսած չի փոխել երթևեկության գոտին, ժամանակին կատարած արգելակումով չի կանգնեցրել ավտոմեքենան, չի համոզվել երթևեկության անվտանգության, մասնավորապես ճանապարհի երթևեկելի մասում առկա խոչընդոտների ու վտանգի աղբյուրների բացակայության մեջ, շարունակել է երթևեկությունը նույն արագությամբ և ուղղությամբ, շլացումն ավարտելուց հետո տեսել է իր ավտոմեքենայի ձախ ընթացագոտում կանգնած հետիոտն Ա.Հովսեփյանին, որից հետո չի հասցրել արգելակել կամ մանևրել և ավտոմեքենայի առջևի ձախ մասով վրաերթի է ենթարկել վերջինիս՝ անգուշությամբ պատճառելով մահ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ամբաստանյալ Ա.Առաքելյանը դեպքից հետո կանգնեցրել է ավտոմեքենան, մոտեցել է տուժողին և համոզվելով, որ տուժողը մահացել է, կատարվածի մասին տեղեկացրել է իր վարած տաքսի ծառայության կենտրոնական մարմնին, ապա ավտոմեքենան թողել է պատահարի վայրում, իսկ ինքը հեռացել է: Նույն օրը՝ ժամը 16:40-ի սահմաններում, Ա.Առաքելյանը մեղայականով ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

Առաջինատյանի դատարանն Ա.Առաքելյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, 244-րդ հոդվածով և արձանագրելով վերջինիս անձը բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև դատավճռում ամրագրելով, որ հաշվի է առնում կատարված հանցանքների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը և այն, որ Ա.Առաքելյանին մեղաազրվել է նաև միջին ծանրության հանցագործություն, որի համար պատիժ է նախատեսված միայն ազատազրկման ձևով, գտել է, որ պատժի նպատակների իրագործման համար անհրաժեշտ է հանցավորի նկատմամբ նշանակել ազատազրկման ձևով պատիժ, որը նա պետք

է կրի (տե՛ս սույն որոշման 2-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, իր համաձայնությունն արտահայտելով Առաջին ատյանի դատարանի դիրքորոշման հետ, իր դատական ակտում արձանագրել է, որ Ա.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժը համապատասխանում է կատարված հանցանքի բնույթին ու ամբաստանյալի անձնավորությանը, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար է նրան ուղղելու, նոր հանցագործությունները կանխելու համար: Վերաքննիչ դատարանը ևս գտել է, որ ամբաստանյալ Ա.Առաքելյանը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 10-րդ կետերը):

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 15-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններն Ա.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ուշադրություն չեն դարձրել թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին և այն պատշաճ գնահատականի չեն արժանացրել, ինչպես նաև որևէ միջոց չեն ձեռնարկել պարզելու թույլ տրված խախտման և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ Ա.Առաքելյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Բացի այդ, ստորադաս դատարանները որևէ վերլուծության և գնահատման չեն արժանացրել Ա.Առաքելյանի դրսևորած վարքագիծն անմիջապես ճանապարհատրանսպորտային պատահարից հետո: Մասնավորապես, գործի նյութերը վկայում են այն մասին, որ Ա.Առաքելյանը, դեպքի վայրից հեռանալով, չի խուսափել պատահարի հետևանքով տուժած անձին օգնություն ցույց տալուց, քանի որ նախքան հեռանալը նա համոզվել է, որ անձը մահացել է և նման օգնության անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ, Ա.Առաքելյանը ճանապարհատրանսպորտային պատահարի մասին տեղեկացրել է իրավապահ մարմիններին և աջակցել է կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանը, այդ մասին են վկայում ավտոմեքենան պատահարի վայրում թողնելը և նույն օրը քննչական բաժին ներկայանալը: Այլ կերպ՝ Ա.Առաքելյանը, թողնելով ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը, չի փորձել թաքցնել իր կողմից հանցագործության կատարման հանգամանքը, խուսափել իր պարտավորությունների կատարումից:

22. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ա.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս պատշաճ չեն գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները: Ուստի, Ա.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները չեն կարող համարվել հիմնավորված և պատճառաբանված:

23. Վերը նշված խախտումը, որը կարող էր ազդել պատժի կրման անհրաժեշտության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ

հողվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 4-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի դատական ակտերը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Սերգեյի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 4-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0082/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ս.ԱՂԱԽԱՆՅԱՆԻ
Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝
դատախազ՝*

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սեյրան Կառլենի Աղախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Աղախանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի նոյեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 27120612 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Սեյրան Կառլենի Աղախանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի դեկտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2013 թվականի փետրվարի 5-ի դատավճռով Ս.Աղախանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել է ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ս.Աղախանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 5-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Ս.Աղախանյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ ամբաստանյալ Ս.Աղախանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ս.Աղախանյանը դատապարտվել է այն բանի համար, որ «2012 թվականի օգոստոս ամսվա կեսերին, նկատելով իր տան բակում եգիպտացորենի բույսերի հետ ինքն իրեն աճած կանեփի բույսերը, առանց իրացնելու նպատակի, իր օգտագործման համար դրանց գլխիկները պոկել, չորացրել է, որից հետո ձեռքով մանրացնելու եղանակով պատրաստել է մարիխուանա տեսակի թմրամիջոց ու լցնելով ծխախոտի գլանակի մեջ, միայնակ ծխել է: Դրանից շուրջ մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 8-ին կամ 9-ին, Սեյրան Աղախանյանն իր օգտագործման համար, կրկին իր տան բակում աճած կանեփի բույսերի գլխիկները պոկել է ու նույն եղանակով թմրամիջոց պատրաստելու նպատակով դրանք լցրել է սկոտեղի մեջ ու այն դրել իրենց տան բակում գտնվող պահարանի վրա, որն էլ 2012 թվականի օգոստոսի 10-ին նրա տան բակում ոստիկանության Արտաշատի բաժնի աշխատակիցների կողմից կատարված գննությամբ հայտնաբերվել ու վերցվել է՝ պետրահիդրոկաննաբինոլ պարունակող խոշոր չափի՝ 9,4 գրամ չորացված մարիխուանա տեսակի թմրամիջոցը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 162-163):

6. Արարատի մարզի Ոստանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ «Սեյրան Կառլենի Աղախանյանի ընտանիքը բաղկացած է հետևյալ շնչերից. 1. Ինքը՝ Աղախանյան Սեյրան Կառլենի, 1972թ., 2. Կինը՝ Աղախանյան Սիրուն Ժուղեքսի 1977թ., 3. Տղան՝ Աղախանյան Գրիգոր Սեյրանի, 1996թ., 4. Տղան՝ Աղախանյան Գեղամ Սեյրանի, 1998թ., 5. Տղան՝ Աղախանյան Կառլեն Սեյրանի 2000թ.» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 70):

7. Ոստան համայնքի ղեկավար Հ.Խաչատրյանի կողմից տրված բնութագրի համաձայն՝ «Սեյրան Կառլենի Աղախանյանը (...) [ա]շխատասեր, լուրջ, խելացի անձնավորություն է, ընկերասեր, հարևանների և ընկերների կողմից սիրված ու հարգված է, հավասարակշռված է: Ամուսնացած է, ունի երեք անչափահաս

երեխա: Ընտանիքը վայելում է համագյուղացիների սերն ու հարգանքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 71):

8. ՀՀ սոցիալական ապահովության նախարարության տեղեկանքի համաձայն՝ «(...) Սեյրան Աղախանյանի ընտանիքը (...) 1994 թվականից հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (...): Ընտանիքը սոցիալապես անապահով է և ստանում է աղքատության նպաստ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 76):

9. Ըստ «Արտաշատի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի գրության՝ Ս.Աղաջանյանի կինը տառապում է էպիլեպսիկ հիվանդությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 72):

10. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի համաձայն՝ Ս.Աղախանյանն երկու անգամ դատապարտվել է (1992 թվականին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածով դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով և 1995 թվականին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել 1 տարի ուղղիչ աշխատանքներ) (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 18-19):

11. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Սեյրան Կառլենի Աղախանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը որպես մեղմացուցիչ հանգամանք հաշվի է առնում այն, որ նա խոստովանեց ու զոջաց կատարած արարքի համար, բնութագրվում է դրականորեն, խնամքին են գտնվում երեք անչափահաս երեխաները: (...) Դատարանը գտնում է, որ Սեյրան Կառլենի Աղախանյանի հետագա ուղղումն ու վերադաստիարակումը հնարավոր չէ նրան առանց հասարակությունից մեկուսացնելու» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 163):

12. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ու վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, արդեն իսկ հաշվի է առել և դատավճռի հիմքում դրել է ամբաստանյալի կողմից վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջները և բավարար չափով ստուգման ու պատշաճ գնահատության է ենթարկել նրա կողմից կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ ամբաստանյալը բնութագրվում է դրականորեն, խնամքին են գտնվում երեք անչափահաս երեխաները, իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զոջում է կատարածի համար, պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում ամբաստանյալի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամբագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքների ծանրությանը, դրանք կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները

կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը քննության առնելով վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ, հաշվի առնելով վերջինիս մեղաազրված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ անձը բնութագրող դատարանի կողմից մատնանշված վերոգրյալ բոլոր հանգամանքները, ինչպես նաև գործի կոնկրետ տվյալները, որ ամբաստանյալը նախկինում երկու անգամ դատապարտվել է, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Սեյրան Աղախանյանի ուղղվելը հնարավոր չէ առանց ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու, հետևաբար նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքեր չկան:

Ինչ վերաբերում է ամբաստանյալի այն պատճառաբանությանը, որ իր ընտանիքը ստանում է աղքատության նպաստ, կինը վատառողջ է, ապա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի կողմից բերված փաստարկները սույն գործի շրջանակներում չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 30):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

13. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում այն առումով, որ իր նկատմամբ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր նկատմամբ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս պետք է հաշվի առներ ոչ միայն այն, որ ինքը լիովին ընդունել է իրեն առաջադրած մեղադրանքը, զղջացել է կատարած արարքի համար, այլ նաև այն, որ ունի երեք անչափահաս երեխա, կինը վատառողջ է, տառապում է էպիլեպսիա հիվանդությամբ, ընտանիքն ստանում է աղքատության նպաստ, ինքը հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, բնութագրվում է դրականորեն:

Ըստ բողոք բերած անձի՝ վերոնշյալ հանգամանքների առկայության պարագայում Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի հիմնավորել, թե ինչու իր նկատմամբ չի կարող կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, և իր ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը փաստացի կրելու:

14. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 4-ի որոշումը և իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

15. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված է արդյոք Ս.Ադախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթները Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլ որոշումների (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇԴ-0029/01/08, ԱՎԴ-2/0059/01/08, ԼԴ-2/0019/01/09 որոշումները և այլն), վերլուծության է ենթարկել *Դ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ կրելու դատապարտյալի

ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

(...) պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին» (տե՛ս Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0078/01/09 որոշման 11-12-րդ կետերը):

18. Հ.Հարությունյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (տե՛ս Հազարապետ Ալբերտի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Ն.Սարգսյանի գործով կայացված որոշման մեջ զարգացնելով Հ.Հարությունյանի գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շատ դեպքերում պատժի տեսակի և չափի վրա ազդում են հանցավորի սեռը, տարիքը, առողջական վիճակը» (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 19-րդ կետը):

Հ.Հարությունյանի, Ն.Սարգսյանի գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը զարգացրել է *Ս.Սարգսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) «հանցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: ՀՀ գործող քրեական օրենսդրության իմաստով «հանցավորի անձնավորություն» եզրույթը դիտարկվում է որպես քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք, հանցավորի անձը բնութագրող առանձին հատկանիշները և վարքագիծը օրենքում նախատեսված են որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև դատապարտյալին պատժից ազատելու նախապայման:

(...) պատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ:

(...) հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող սահմանափակվել միայն անձի բարոյական հատկանիշներով և ներառում են նաև անձի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, կրթությունը, նրա դրական կամ բացասական բնութագիրը, խրախուսանքների կամ տույժերի առկայությունը և այլն: Անձը բնութագրող տվյալների նշված մեկնաբանությունը վերաբերելի է հատկապես հանցանք կատարած զինծառայողների անձնավորությանը, ինչը պայմանավորված է զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձնահատուկ տեսակով և այդ ծառայությունը կրող զինծառայողների հատուկ կարգավիճակով» (տե՛ս Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ-0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցագործության կատարման եղանակ և այլն), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում

նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ անձի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա: Մասնավորապես, սույն գործով գնահատման էր արժանի այն հանգամանքը, որ ամբաստանյալին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործություն, նրա խնամքին են գտնվում երեք անչափահաս երեխաները, իսկ կինը վատառողջ է, և ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը նրանց կյանքի պայմանների վրա կարող է բացասական ազդեցություն ունենալ:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Ս.Աղախանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտել այն, որ նա զոջացել է կատարածի համար, բնութագրվում է դրական, նրա խնամքին են գտնվում երեք անչափահաս երեխաները: Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ Ս.Աղախանյանի ուղղումն ու վերադաստիարակումը հնարավոր չէ առանց նրան հասարակությունից մեկուսացնելու (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, բավարար չափով ստուգման ու պատշաճ գնահատության է ենթարկել Ս.Աղախանյանի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ ամբաստանյալը բնութագրվում է դրական, նրա խնամքին են գտնվում երեք անչափահաս երեխաները, զոջում է կատարածի համար և նրա նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչն անհրաժեշտ ու բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրագործմանը հասնելու համար:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Ս.Աղախանյանը նախկինում երկու անգամ դատապարտվել է, հանգել է հետևության, որ վերջինիս ուղղվելը հնարավոր չէ առանց ազատագրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու, հետևաբար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը բացակայում են: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ բողոքաբերի կողմից բերված փաստարկները (ընտանիքը ստանում է աղքատության նպաստ, կինը վատառողջ է) սույն գործի շրջանակներում չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին

ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալ Ս.Աղախանյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունն արդյոք համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին ու պատժի արդարացիության սկզբունքին: Այս առումով հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանն արժանի գնահատման չի ենթարկել ամբաստանյալ Ս.Աղախանյանի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների՝ գործում առկա ամբողջ զանգվածը, մասնավորապես այն, որ վերջինիս ընտանիքը 1994 թվականից հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է աղքատության նպաստ, ամբաստանյալի կինը վատառողջ է, տառապում է էպիլեպսիկ հիվանդությամբ (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

Դրա փոխարեն Վերաքննիչ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ իր որոշումը հիմնավորելու համար փաստարկել է, որ ամբաստանյալ Ս.Աղախանյանը նախկինում երկու անգամ դատված է եղել:

21. ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

2. Դատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս:

(...)

8. Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: (...):»:

Մեջբերված քրեաիրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ դատվածությունը բնորոշվում է որպես անձի հանրային բարձր վտանգավորության մասին վկայող հանգամանք, հետևաբար դատվածություն ունեցող անձի համար նոր հանցագործություն կատարելու դեպքում ծագում են քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ: Միևնույն ժամանակ, նախկինում դատվածություն ունենալը չի նշանակում, որն անձն իր ամբողջ կյանքի ընթացքում համարվում է հանրային բարձր վտանգավորություն ունեցող: Քրեական օրենքը նախատեսում է դատվածությունը հանելու կամ մարելու հնարավորություն, որի դեպքում անձը օրենքի տեսանկյունից համարվում է որևէ հանցանք չկատարած, ուստի և նրա դատվածությունը չի կարող առաջացնել քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ, այդ թվում՝ չի կարող հաշվի առնվել նոր հանցագործության համար պատիժ նշանակելիս:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալ Ս.Աղախանյանի նախկին դատվածություններն օրենքով սահմանված կարգով մարված են (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Այլ կերպ՝ Ս.Աղախանյանը համարվում է դատվածություն չունեցող անձ, հետևաբար սույն քրեական գործի շրջանակներում նրա նախկին դատվածությունները որևէ իրավական հետևանք

չեն կարող առաջացնել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի փաստարկն այն մասին, որ Ս.Աղախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի է, այն հիմնավորմամբ որ վերջինս նախկինում դատված է եղել: Վերաքննիչ դատարանը, փաստորեն, Ս.Աղախանյանի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս հաշվի է առել վերջինիս մարված դատվածությունները, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի պահանջների խախտում է:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 17-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չէ Ս.Աղախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի, մասնավորապես՝ 5-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության և արդարության սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սեյրան Կառլենի Աղախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0087/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Դավիթ Գեորգիի Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանի, ամբաստանյալ Վարդան Հրաչիկի Եղիազարյանի պաշտպան Վ.Գեորգյանի, ամբաստանյալ Կարեն Վաչագանի Հովհաննիսյանի և նրա պաշտպան Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 15141911 քրեական գործը՝ Վաժա Ազարիաշվիլու, Երվանդ Ղամբարյանի, Դավիթ Ղամբարյանի, Վարդան Եղիազարյանի, Կարեն Հովհաննիսյանի կողմից գողություն և գողության փորձ կատարելու դեպքերի առթիվ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումներով Դավիթ Ղամբարյանը, Վարդան Եղիազարյանը և Կարեն Հովհաննիսյանը

ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի մայիսի 10-ին Դ.Ղամբարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի մայիսի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճռով Դավիթ Ղամբարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վարդան Եղիազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Կարեն Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Վաժա Ազարիաշվիլին, Երվանդ Ղամբարյանը, Հասմիկ Դուրգարյանը և Աբգար Հովսեփյանը:

Վճռվել է նաև Վ.Ազարիաշվիլուց, Ե.Ղամբարյանից, Դ.Ղամբարյանից, Վ.Եղիազարյանից, Կ.Հովհաննիսյանից, Հ.Դուրգարյանից և Ա.Հովսեփյանից համապարտության կարգով բռնագանձել 918.862 ՀՀ դրամ՝ որպես դատական ծախս:

3. Ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի, ամբաստանյալ Դ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանի և ամբաստանյալ Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Դ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանը, ամբաստանյալ Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանը, ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպան Ս.Սաֆարյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալներ Գ.Ղամբարյանը, Վ.Եղիազարյանը և Կ.Հովհաննիսյանը մեղադրվում են հետևյալ արարքների կատարման մեջ.

2011 թվականի դեկտեմբերի կեսերին Վ.Ազարիաշվիլին նախնական համաձայնության է եկել Կ.Հովհաննիսյանի և Վ.Եղիազարյանի հետ՝ «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գրապահոցներ ապօրինի մուտք գործելով՝ առանձնապես խոշոր չափերով գրքերի գողություն կատարելու վերաբերյալ: Հափշտակության կատարման վայրը և այնտեղ գտնվող գրքերը նախապես ուսումնասիրելու նպատակով նրանք ստացել են նույն շենքի պահպանությունն իրականացնող, ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ՀՁՊ գնդի ոստիկան Գ.Ղամբարյանի՝ իրենց օժանդակելու վերաբերյալ համաձայնությունը: 2011 թվականի դեկտեմբերի 25-ի առավոտյան՝ ժամը 08-ի սահմաններում, առանձնապես խոշոր չափերի գրքերի գողության գործում Վ.Ազարիաշվիլուն և մյուսներին օժանդակելու նպատակով Գ.Ղամբարյանը բացել է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի վարչական շենքի կենտրոնական մուտքի դուռը և ներս է թողել Վ.Ազարիաշվիլուն և Կ.Հովհաննիսյանին: Վերջիններս գրապահոցների դռների վրայից դանակով առանձնացրել են պլաստիլինե դրոշմակնիքները, հարմարեցված բանալիներով բացել են դռները և գրապահոցներում ուսումնասիրել են այնտեղ առկա գրքերը, դրանց տեղաբաշխումը, ինչպես նաև վերացրել են «Թամանյանական» մասնաճյուղի շենքի մուտքի դռան մոտ գտնվող խոչընդոտները՝ տեղահանելով դրսից դուռը բացելուն խոչընդոտող արգելաձողերը:

2011 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ժամը 03-ի սահմաններում, Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և Վ.Եղիազարյանը, իրենց հետ վերցնելով հանցագործության կատարումը հեշտացնելու համար նախատեսված երկու լապտեր, դանակ, լինգ, սպորտային տասներկու պայուսակ, գրապահոցների դռների փականներին հարմարեցված բանալիների տրցակ, Վ.Եղիազարյանին պատկանող ավտոմեքենայով գնացել են Երևան քաղաքի Տերյան փողոց, ապօրինի մուտք գործելու և առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու նպատակով մոտեցել են «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի «Թամանյանական» մասնաճյուղի շենքի մուտքի դռանը, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը, քանի որ ոստիկանության աշխատակիցները նրանց բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին (տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթ 74-78):

6. ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի ՊՊԳՎ ոստիկան, ոստիկանության ավագ Արսեն Գազիկի Ասիկյանի զեկուցագրի համաձայն՝ 2011 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ժամը 03.00-ին, ծառայություն իրականացնելով Կենտրոնի վարչական տարածքում, Տերյան փողոցի վրա՝ Հանրային գրադարանի և այգուն կից փողոցում նկատել են «Վագ 2107» մակնիշի, 29 ՍԼ 606 պետհամարանիշի ավտոմեքենա, որի միջից դուրս են հրավիրել, ապա

բերման ենթարկել Կարեն Հովհաննիսյանին, Վաժա Ազարիաշվիլուն և Վարդան Եղիազարյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 8):

7. Ամբաստանյալներին բերման ենթարկելու մասին թիվ 1390, թիվ 1388 և թիվ 1389 արձանագրությունների համաձայն՝ Վ.Եղիազարյանը, Կ.Հովհաննիսյանը և Վ.Ազարիաշվիլին բերման են ենթարկվել Երևանի Տերյան փողոցի վրա գտնվող Հանրային գրադարանի մոտից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 9, 13, 16):

8. Դեպքի վայրի գննության մասին 2012 թվականի հունվարի 13-ի արձանագրության և դրան կից լուսանկարչական հավելվածի ու սույն ասիլությունից երևում է, որ Վ.Եղիազարյանը, Կ.Հովհաննիսյանը և Վ.Ազարիաշվիլին բերման են ենթարկվել «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի փակուղու և Տերյան փողոցի հատման վայրից (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 184):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) Ամբաստանյալ Դավիթ Գեորգիի Ղամբարյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելուն օժանդակելու փորձ կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ամբաստանյալ Վարդան Հրաչիկի Եղիազարյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով գողության փորձ կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ամբաստանյալ Կարեն Վաչագանի Հովհաննիսյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով գողության փորձ կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթ 51-74):

10. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը, վերլուծության և գնահատության ենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, հանգում է այն հետևության, որ (...) Կարեն Հովհաննիսյանի, Վարդան Եղիազարյանի, Դավիթ Ղամբարյանի (...) արարքներին տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական, և կիրառվել է քրեական այն օրենքը, որը ենթակա է եղել կիրառման:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործը քննելիս և լուծելիս դատարանի կողմից քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել կամ կարող էին ազդել սույն գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, թույլ չեն տրվել (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթ 19-71):

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Ըստ ամբաստանյալ Գ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանի՝

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, այն օրինական և հիմնավորված չէ: Ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա և դրա հետևանքով Դ.Ղամբարյանի նկատմամբ կայացվել է անհիմն դատավճիռ, նշանակվել է ակնհայտ խիստ պատիժ:

Բողոքաբերի պնդմամբ Դ.Ղամբարյանին առաջադրված մեղադրանքը կառուցված է միայն մյուս ամբաստանյալների հակասական ցուցմունքների, նախաքննության մարմնի ենթադրությունների վրա և չի հիմնավորվել գործում առկա ապացույցների բավարար ամբողջությամբ: Նախաքննության մարմնի կողմից Դ.Ղամբարյանի մեղադրանքը ձևակերպվել է անորոշ, դրանից պարզ չէ, թե կոնկրետ ինչ ծավալի և ինչ արժեքի գրքերի գողության փորձ է վերագրվել վերջինիս: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված հանցանքը, ինչպես նաև դրա օժանդակությունը կարող են կատարվել բացառապես դիտավորությամբ, մինչդեռ քրեական գործի նյութերով հիմնավորվել է, որ Դ.Ղամբարյանը տեղյակ չի եղել Վ.Ազարիաշվիլու, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի մտադրությունների մասին, հետևաբար չէր կարող նաև նրանց օժանդակելու դիտավորություն ունենալ:

12. Ամբաստանյալ Դ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ և 35-րդ հոդվածները, ինչպես նաև վերլուծելով գործում առկա մի շարք ապացույցներ, նշել է, որ ամբաստանյալները գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկվել գրադարանին հարակից՝ Տերյան փողոցի տարածքից, այսինքն՝ վերջիններս դեռևս չէին հասել գրադարանի շենք և չէին հասցրել որևէ գործողություն կատարել, որն անմիջականորեն ուղղված կլիներ գրադարանի շենք մուտք գործելուն և հանցանք կատարելուն: Նման պայմաններում նախաքննության մարմնին ամբաստանյալների գործողություններին տվել է սխալ քրեաիրավական գնահատական՝ նրանց արարքները որակելով որպես առանձնապես խոշոր չափերի գրքերի գողության փորձ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը եզրահանգել է, որ Դ.Ղամբարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքն անհիմն է, քանի որ նրա գործողություններում բացակայում է ոչ միայն օժանդակության, այլ նաև գողության հանցակազմի օբյեկտիվ կողմը:

13. Պաշտպան Է.Աղաջանյանը, վկայակոչելով ամբաստանյալ Դ.Ղամբարյանի անձը բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, փաստարկել է, որ վերջինիս նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ է, չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին: Հիշատակելով Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված մի շարք նախադեպային որոշումներ՝ բողոքի հեղինակը կարծիք է հայտնել, որ Դ.Ղամբարյանի փաստացի կատարած արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալուց հետո նրա նկատմամբ պետք է նշանակվի մեղմ պատիժ և պայմանականորեն չկիրառվի:

14. Անդրադառնալով ամբաստանյալներից համապարտության կարգով

որպես դատական ծախս 918.862 ՀՀ դրամ բռնագանձելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշմանը՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով նշանակված փորձաքննություններից ոչ մեկը որևէ կապ չունի Գ.Ղամբարյանին առաջադրված մեղադրանքի հետ, դրանք նշանակվել են նրա հետ առնչություն չունեցող այլ փաստական հանգամանքներ և տեղեկություններ հիմնավորելու համար: Ուստի այս մասով ստորադաս դատարանների դատական ակտերը նույնպես հիմնավորված չեն:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտպան Է.Աղաջանյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Գ.Ղամբարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և նրա կատարած արարքին տալ ճիշտ քրեաիրավական գնահատական, Գ.Ղամբարյանի նկատմամբ նշանակել մեղմ պատիժ և այն պայմանականորեն չկիրառել, իսկ Գ.Ղամբարյանից որպես դատական ծախս 918.862 (ինը հարյուր տասնութ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամի բռնագանձումը վերացնել:

16. Ամբաստանյալ Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանը նշել է, որ իր պաշտպանյալի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերում առկա են նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը հիմնավորող ապացույցներն իրենց համակցությամբ սխալ վերլուծելու, համադրելու և գնահատելու արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, գործի փաստական հանգամանքների մասին դատարանների հետևությունները չեն համապատասխանում հետազոտված ապացույցներին:

Ըստ բողոքաբերի՝ Վ.Եղիազարյանին մեղսագրվող արարքի նկարագրությունը հանդիսանում է հանցագործության նախապատրաստություն, այլ ոչ թե հանցավոր՝ Վ.Եղիազարյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից ակնհայտ է, որ հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված որևէ գործողություն նրան չի մեղսագրվում, այլ մեղսագրվում են գործողություններ, որոնք ուղղված են հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելուն կամ հարմարեցնելուն, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելուն: Բողոքաբերը գործում առկա ապացույցների վերլուծության հիման վրա փաստարկել է, որ ամբաստանյալներ Վ.Եղիազարյանը, Վ.Ազարիաշվիլին և Կ.Հովհաննիսյանը գրադարանի մուտքի դռանը չեն մոտեցել, այլ բերման են ենթարկվել Երևան քաղաքի Տերյան փողոցում գտնվող հանրային գրադարանի մոտից, երբ նրանք գտնվել են ավտոմեքենայի մեջ:

17. Ամբաստանյալ Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանը նշել է նաև, որ անհասկանալի է, թե քրեական գործում առկա հատկապես որ ապացույցների հիման վրա են նախաքննության մարմինը և դատարանները հաստատված համարել, որ Վ.Եղիազարյանի դիտավորությունն ուղղված է եղել առանձնապես խոշոր չափերի գույքի գողություն կատարելուն: Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալները գործել են հափշտակություն կատարելու չլոնկրետացված դիտավորությամբ, և նրանցից ոչ

մեկը նախապես չի իմացել, թե կոնկրետ ինչ քանակի, տեսակի և արժեքի գրքեր պետք է հափշտակվի:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը կարծիք է հայտնել, որ ստորադաս դատարանները Վ.Եղիազարյանի արարքին տվել են սխալ քրեաիրավական գնահատական, ճիշտ չեն կիրառել քրեական օրենքը, կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որը ենթակա չէր կիրառման և չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 35-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որի հատկանիշներին համապատասխանում է Վ.Եղիազարյանի կատարած արարքը:

18. Անդրադառնալով Վ.Եղիազարյանի նկատմամբ նշանակված պատժի տեսակին և չափին՝ պաշտպան Վ.Գևորգյանը, հիշատակելով Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև շարադրելով ամբաստանյալի անձը բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, նշել է, որ Վ.Եղիազարյանի նկատմամբ նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ լինելու պատճառով: Ըստ բողոքաբերի՝ գործով ձեռք բերված և ստորադաս դատարաններում հետազոտված ապացույցները հնարավորություն են տալիս Վ.Եղիազարյանի նկատմամբ արդարացի պատիժ նշանակել տուգանքի ձևով կամ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտպան Վ.Գևորգյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը, Վ.Եղիազարյանին վերագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից վերադարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 35-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Վ.Եղիազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

20. Ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպան Ս.Սաֆարյանը գտնում են, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա՝ հանգեցնելով դատական սխալի:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերները նշել են, որ գործով ձեռք բերված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ չի հիմնավորվել, որ ամբաստանյալները գողություն կատարելու վերաբերյալ նախնական համաձայնություն են ունեցել, և առկա է եղել հանցակիցների միջև դերերի բաշխում: Նշվածից բողոք բերած անձինք եզրակացություն են արել այն մասին, որ հիմնավորված չէ ենթադրվող գողությանը Կ.Հովհաննիսյանի անմիջական մասնակցությունը, բացի այդ, գործով չի պարզվել, թե հատկապես ինչ գրականություն էր պատրաստվում հափշտակել գրադարանից Վ.Ազարիաշվիլին, և ինչ արժեք ուներ այն, հետևաբար այս պայմաններում առանձնապես խոշոր չափի գույք հափշտակելու փորձի մեջ Կ.Հովհաննիսյանին մեղադրելն անհիմն է:

21. Բողոքի հեղինակները նշել են, որ ամբաստանյալները գողության

կասկածանքով բերման են ենթարկվել գրադարանին հարակից տարածքից, չեն հասցրել որևէ գործողություն կատարել, որն անմիջականորեն ուղղված կլիներ գրադարանի շենք մուտք գործելուն, այլ խոսքով՝ հափշտակության օբյեկտի նկատմամբ ոտնձգության իրական վտանգ չի ստեղծվել: Հետևաբար, Կ.Հովհաննիսյանի գործողությունները չէին կարող որակվել որպես գողության հանցափորձ, այլ պետք է որակվեին ՀՀ քրեական օրենսգրքի 35-177-րդ հոդվածի 2-րդ մասով, և հաշվի առնելով նույն օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ նրա նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվեր:

22. Բողոքաբերները փաստարկել են նաև, որ Կ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառելու արդյունքում հնարավոր է հասնել պատժի նպատակների իրագործմանը: Այս առումով ստորադաս դատարաններն անարդարացի են գտնվել՝ հաշվի չառնելով Կ.Հովհաննիսյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող՝ գործում առկա բոլոր հանգամանքները:

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպան Ս.Սաֆարյանը խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, Կ.Հովհաննիսյանի մասով քրեական գործի վարույթը կարճել կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

24. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չավարտված հանցագործության տեսակների, այն է՝ հանցափորձի (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված) և հանցագործության նախապատրաստության (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդված) սահմանազատման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանը քննության է առնում այն հարցը, թե իրավաչափ են արդյոք ամբաստանյալներ Դ.Ղամբարյանի, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի արարքներում հանցափորձի հատկանիշների առկայության և հանցագործության նախապատրաստության հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

26. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Բաղդասարյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական

դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Օբյեկտիվ կողմից հանցավորձը բնութագրվում է՝

1. գործողությամբ (անգործությամբ), որն անմիջականորեն ուղղված է հանցանքի կատարմանը,

2. հանցագործությունն անձի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցնելով:

Հանցավորձն առկա է այն ժամանակ, երբ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում, այլ կերպ՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումն սկսվում է, սակայն չի ավարտվում: Նյութական հանցագործության դեպքում չի առաջանում օրենքով նախատեսված հետևանքը կամ հետևանքն առաջանում է, սակայն ոչ հանցավորի դիտավորությամբ նախատեսվածը (...):

Հանցավորձը բնութագրող հաջորդ հատկանիշն այն է, որ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Սուբյեկտիվ կողմից հանցավորձը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ» (տե՛ս Արարատ Վազգենի Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ-0168/01/10 որոշման 16-րդ կետը):

27. Վերահաստատելով և զարգացնելով սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար *Ա.Բաղդասարյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցավորձն առկա է այն դեպքում, երբ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող օբյեկտի դեմ ոտնձգությունն սկսվում է, նշված օբյեկտին վնաս պատճառելու իրական սպառնալիք է ստեղծվում, սակայն հանցավորի կամքից անկախ հանգամանքներով փաստացի վնաս հասցնելը տեղի չի ունենում կամ պատճառվում է նախատեսածից տարբերվող վնաս: Այլ խոսքով՝ հանցավորձի դեպքում հանցագործության սուբյեկտն սկսում է կատարել կամ մասամբ կատարում է քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված այս կամ այն հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունը կամ անգործությունը, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցնում իր կամային գործողությունների հետ չկապված հանգամանքների ուժով:

Հանցավորձը, ըստ կատարվող գործողությունների բնույթի և հանցավոր մտադրության իրականացման աստիճանի, լինում է երկու տեսակ՝ ավարտված և չավարտված: Հանցավորձն ավարտված համարելու համար անհրաժեշտ է, որ հանցավորը կատարի բոլոր այն գործողությունները, որոնք նա անհրաժեշտ է համարում հանցագործությունն ավարտին հասցնելու համար (օրինակ՝ տուժողի վրա հրազենով կրակում է սպանելու նպատակով, բայց մահը վրա չի հասնում բժշկական միջամտության շնորհիվ, կամ գողին բնակարանում բռնում են և այլն): Հանցավորձի այս տեսակի առկայությունը հավաստելու համար վճռորոշ է հանցավորի վստահությունն այն բանում, որ իր կողմից որևէ լրացուցիչ գործողություն չի պահանջվում, և որ արդեն իսկ կատարվածը բավարար է հանցավոր մտադրությունն իրականացնելու համար:

Մինչդեռ, չավարտված հանցավորձի դեպքում հանցավորը չի կատարում բոլոր այն գործողությունները, որոնք նա անհրաժեշտ է համարում հանցագործությունն

ավարտելու համար (օրինակ՝ ուժը չի բավականացնում տուժողին խեղդելու համար, ցանկանում է կրակել տուժողին, բայց զենքն անսարք է լինում, և կրակոց տեղի չի ունենում և այլն): Հանցավորձի այս տեսակը բնորոշվում է գործողությունների անավարտությամբ, օբյեկտիվ կողմի մասնակի կատարմամբ: Ընդ որում, հանցավորը գիտակցում է, որ հանցագործությունն ավարտելու համար անհրաժեշտ է կատարել ևս ինչ-որ գործողություններ, որոնք կատարել նրան չի հաջողվում:

28. ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Մեջբերված նյութաիրավական դրույթի վերլուծությունից հետևում է, որ հանցագործության նախապատրաստությունը դիտավորյալ արարք է, որը հետագայում հանցագործության կատարման համար պայմաններ է ստեղծում: Ընդ որում, նախապատրաստությունը՝ որպես հանցագործության փուլ, քրեորեն պատժելի է միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մաս):

Հանցագործության նախապատրաստության հասկացությունը սահմանող քրեաիրավական նորմից հետևում է, որ այն դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

- ա) հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերել,
- բ) հանցանք կատարելու համար միջոցները կամ գործիքները հարմարեցնել,
- գ) հանցանք կատարելու համար այլ պայմաններ ստեղծել:

29. Հանցագործության միջոցը կամ գործիքն արտաքին աշխարհի այն իրերն են, որոնց միջոցով հեշտացվում է հանցավոր ոտնձգության կատարումը կամ որոնք օբյեկտիվորեն կարելի է օգտագործել հանցագործության անմիջական կատարման համար: Հանցագործության միջոց կամ գործիք ձեռք բերելը ցանկացած եղանակով (օրինական կամ անօրինական ճանապարհով) այդպիսիք հայթայթելն է:

Հանցագործության գործիքները և միջոցները հարմարեցնել է համարվում դրանց կառուցվածքի և ձևի այնպիսի փոփոխությունը, որն անհրաժեշտ է հանցավոր ոտնձգությունն իրականացնելու համար:

Առավել լայն հասկացություն է հանցանք կատարելու համար այլ պայմաններ ստեղծելը, որը կարող է իր մեջ ընդգրկել տարաբնույթ գործողություններ (անգործություն), որոնք անհրաժեշտ են հանցագործությունը հետագայում կատարելու համար: Նախապատրաստական գործունեության այս ձևին են դասվում այնպիսի գործողությունները, որոնք չեն կարող բնորոշվել որպես միջոցներ և գործիքներ ձեռք բերել կամ հարմարեցնել, բայց որոնց կատարմամբ հանցավոր ոտնձգության համար անհրաժեշտ և իրական պայմաններ են ստեղծվում:

Հարկ է նկատի ունենալ, որ հանցագործության նախապատրաստությունն իր մեջ կարող է պարունակել նաև մեկ այլ ավարտված հանցագործության

հատկանիշներ: Օրինակ՝ սպանության նպատակով հրազեն ձեռք բերելն իրենից ներկայացնում է սպանության նախապատրաստություն, սակայն միևնույն ժամանակ նշված գործողությունն իր մեջ կարող է պարունակել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներ: Այդպիսի դեպքերում արարքը ենթակա է որակման հանցանքների համակցությամբ:

Սուբյեկտիվ կողմից հանցագործության նախապատրաստությունը, ինչպես և հանցափորձը, բնութագրվում է բացառապես ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ ձեռք է բերում միջոցներ կամ գործիքներ կամ դրանք հարմարեցնում է կամ ստեղծում է այլ պայմաններ հանցանք կատարելու համար և ցանկանում է դա:

30. Սույն որոշման 26-27-րդ և 28-29-րդ կետերում շարադրված վերլուծությունը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես հանցագործության նախապատրաստությունը, այնպես էլ հանցափորձը հանդիսանում են չավարտված հանցագործության տարատեսակներ: Դրանցից յուրաքանչյուրի համար քրեական պատասխանատվության հարցը ծագում է միայն այն դեպքում, երբ հանցագործությունն ավարտին չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Հանցագործության նախապատրաստությունը հանցափորձը միմյանցից տարբերվում են օբյեկտիվ կողմի առանձնահատկություններով, այն է՝ կատարված գործողության (անգործության) բնույթով և հանցավոր մտադրության իրականացման աստիճանով: Այսպես՝ հանցագործության նախապատրաստության ժամանակ հանցագործության օբյեկտի նկատմամբ անմիջական ներգործություն առկա չէ: Չավարտված հանցագործության այս տեսակը որոշակի պայմաններ է ստեղծում, որոնք ուղղված են հանցանքի կատարմանը: Մինչդեռ, հանցափորձի ժամանակ տեղի է ունենում անմիջական ներգործություն հանցավոր ոտնձգության օբյեկտի վրա, ստեղծվում է դրան վնաս պատճառելու իրական վտանգ, սակայն հանցավոր հետևանքները վրա չեն հասնում: Այս առումով որպես հանցափորձ ենթակա են որակման ոչ միայն այն արարքները, որոնք նկարագրված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում, այլև նրանք, որոնք անմիջականորեն նախորդում են դրանց, հանդիսանում են վերջիններիս բաղկացուցիչ մասը և չեն կարող առանձնացվել (օրինակ՝ մարմնական վնասվածք հասցնելու համար դանակը գրպանից հանելը, սպանության նպատակով հրազենից նշան բռնելը և այլն): Միևնույն ժամանակ, այն գործողությունները, որոնք օրենքում նկարագրված արարքների բաղկացուցիչ մաս չեն և օբյեկտիվ կողմի հատկանիշ չեն հանդիսանում, կարող են որակվել միայն որպես հանցագործության նախապատրաստություն (օրինակ՝ հանցագործության վայր ժամանելը, ապագա զոհին հետևելը և այլն):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ որակելու համար անհրաժեշտ է գործում առկա ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ պարզել, թե հատկապես որ փուլում է ընդհատվել անձի՝ հանցավոր մտադրության իրագործմանն ուղղված գործունեությունը: Արարքը հանցափորձ որակելու համար պարտադիր է հանցավորի կողմից այնպիսի արարքների կատարումը, որոնք

անմիջականորեն ուսնձգում են քրեախրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտի դեմ և կազմում են տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը: Մինչդեռ հանցագործության նախապատրաստության ժամանակ քրեախրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտի դեմ ուսնձգության վտանգ առկա չէ, իսկ հանցավորի գործողությունները (անգործությունը) սահմանափակվում են այնպիսի պայմանների ստեղծմամբ, որոնք անմիջականորեն ուղղված են հանցավոր արարքի կատարմանը:

31. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ և 35-րդ հոդվածների վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև գողության հանցակազմի օբյեկտիվ կողմի առանձնահատկություններին:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում գողության՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակության համար:

Հափշտակություն ասելով հասկացվում է՝ ուրիշի գույքն ապօրինի անհատույց շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:

Վերոգրյալից հետևում է, որ գողության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը՝ գործողությունը, դրսևորվում է նրանում, որ ուրիշի գույքը հանցավորի կողմից վերցվում և հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում: Միաժամանակ, հարկ է նշել, որ տվյալ գործողությունները կարող են կատարվել բազմաթիվ եղանակներով, սակայն արարքն ավարտված կհամարվի այն պահից, երբ հանցավորը գույքը վերցնելուց, իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելուց հետո այն տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենա:

Հետևաբար հանցավորի կամքից անկախ հանգամանքներով ընդհատված այն գործողությունները, որոնք, ստեղծելով իրական վտանգ ուրիշի գույքին վնաս պատճառելու համար, անմիջական ներգործությամբ կտունձգեն ուրիշի գույք հանդիսացող սեփականության դեմ կամ կնախորդեն ուրիշի գույքը վերցնելուն և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելուն և կհանդիսանան տվյալ արարքների բաղկացուցիչ մասը (օրինակ՝ պահեստարան, շինություն կամ բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով կատարված գողության օբյեկտիվ կողմը սկսված է համարվում այն պահից, երբ հանցավորի կողմից կխախտվեն փականների ամբողջականությունը, կկիրառվեն նախօրոք հարմարեցված բանալիները, կօգտագործվի գույքը տիրապետողի անուշադրությունը և այլն), պետք է որակվեն որպես գողության փորձ, իսկ այն գործողությունները, որոնք կսահմանափակվեն միայն գողության կատարման համար որոշակի պայմաններ ստեղծելով կամ չեն հանդիսանա ուրիշի գույքը վերցնելու և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելու արարքի բաղկացուցիչ մաս և դրան նախորդող, պետք է որակվեն որպես գողության նախապատրաստություն:

32. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և Վ.Եղիազարյանը, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գրապահոցներ

ապօրինի մուտք գործելով, առանձնապես խոշոր չափերով գրքերի գողություն կատարելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով, հափշտակության կատարման վայրը և այնտեղ գտնվող գրքերը նախապես ուսումնասիրելու նպատակով ստացել են նույն շենքի պահպանությունն իրականացնող ոստիկան Դ.Ղամբարյանի՝ իրենց օժանդակելու վերաբերյալ համաձայնությունը: 2011 թվականի դեկտեմբերի 25-ի առավոտյան՝ ժամը 08-ի սահմաններում, Դ.Ղամբարյանը բացել է գրադարանի վարչական շենքի կենտրոնական մուտքի դուռը և ներս է թողել Վ.Ազարիաշվիլուն և Կ.Հովհաննիսյանին, ովքեր գրապահոցների դռների վրայից դանակով առանձնացրել են պլաստիլինե դրոշմակնիքները, հարմարեցված բանալիներով բացել են դռները և գրապահոցներում ուսումնասիրել են այնտեղ առկա գրքերը, դրանց տեղաբաշխումը, ինչպես նաև վերացրել են «Թամանյանական» մասնաճյուղի շենքի մուտքի դռան մոտ գտնվող խոչընդոտները՝ տեղահանելով դրսից դուռը բացելուն խոչընդոտող արգելաձողերը:

2011 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ժամը 03-ի սահմաններում, Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և Վ.Եղիազարյանը, իրենց հետ վերցնելով հանցագործության կատարումը հեշտացնելու համար նախատեսված երկու լապտեր, դանակ, լինգ, սպորտային տասներկու պայուսակ, գրապահոցների դռների փականներին հարմարեցված բանալիների տրցակ, ավտոմեքենայով գնացել են Երևան քաղաքի Տերյան փողոց, մոտեցել են «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի «Թամանյանական» մասնաճյուղի շենքի մուտքի դռանը, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը, քանի որ ոստիկանության աշխատակիցները նրանց բերման են ենթարկել ոստիկանության բաժին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Գործում առկա նյութերից հետևում է, որ Վ.Ազարիաշվիլին, Վ.Եղիազարյանը և Կ.Հովհաննիսյանը բերման են ենթարկվել Երևանի Տերյան փողոցի վրա գտնվող գրադարանի մոտակայքից: Ընդ որում, ամբաստանյալներին բերման ենթարկված ոստիկաններից մեկի՝ Ա.Ասիկյանի զեկուցագրից հետևում է, որ Վ.Եղիազարյանը և Կ.Հովհաննիսյանը դեռևս գտնվելիս են եղել ավտոմեքենայի մեջ և միայն ոստիկանների պահանջով են դուրս եկել, որից անմիջապես հետո տեղափոխվել են ոստիկանության բաժին (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և Վ.Եղիազարյանը, նախնական համաձայնության գալով առանձնապես խոշոր չափերով գրքերի հափշտակություն կատարելու վերաբերյալ, իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով կատարել են որոշակի գործողություններ: Մասնավորապես, Վ.Ազարիաշվիլին և Կ.Հովհաննիսյանը, Դ.Ղամբարյանի օժանդակությամբ, նախապես մուտք են գործել գրադարանի տարածք, որտեղ գրապահոցների դռների վրայից դանակով առանձնացրել են պլաստիլինե դրոշմակնիքները, հարմարեցված բանալիներով բացել են դռները և գրապահոցներում ուսումնասիրել են այնտեղ առկա գրքերը և դրանց տեղաբաշխումը, ինչպես նաև վերացրել են շենքի մուտքի դռան մոտ գտնվող խոչընդոտները՝ տեղահանելով դրսից դուռը բացելուն խոչընդոտող արգելաձողերը: Հաջորդ օրը Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և

Վ.Եղիազարյանը, իրենց հետ վերցնելով հանցագործության կատարման համար նախատեսված գործիքներ և միջոցներ, ավտոմեքենայով մոտեցել են գողության կատարման վայրին՝ գրադարանի շենքին, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել մուտք գործել գրադարան և իրենց հանցավոր մտադրությունն իրականացնել:

Վ.Ազարիաշվիլու, Կ.Հովհաննիսյանի և Վ.Եղիազարյանի վերոնշյալ գործողություններն ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ դատարանները որակել են որպես հանցավոր:

33. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը պատշաճ հետազոտման և գնահատման չի ենթարկել քրեական գործում առկա բոլոր ապացույցները, ինչի արդյունքում չի պարզել, թե հատկապես որ փուլում է ընդհատվել Վ.Ազարիաշվիլու, Կ.Հովհաննիսյանի և Վ.Եղիազարյանի՝ հանցավոր մտադրության իրագործմանն ուղղված գործունեությունը: Վերը նշված խախտումը, որը կարող էր ազդել ամբաստանյալների արարքների որակման մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, որը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներով, պետք է պատշաճ հետազոտման և գնահատման ենթարկի գործում առկա ապացույցները, որից հետո միայն սույն որոշման 26-31-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գա համապատասխան եզրահանգման այն մասին, թե արդյոք մինչև ոստիկանության աշխատակիցների կողմից Վ.Ազարիաշվիլու, Կ.Հովհաննիսյանի և Վ.Եղիազարյանի գործողությունների խափանումը վերջիններս հասցրել են կատարել որևէ գործողություն, որով անմիջականորեն ոտնձգել են քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտի դեմ, թե նրանց փաստացի կատարած արարքները սահմանափակվել են միայն պայմանների ստեղծմամբ, որոնք անմիջականորեն ուղղված են եղել հանցավոր մտադրության իրականացմանը:

Վերոգրյալ հանգամանքի պարզաբանումից հետո միայն հնարավոր կլինի իրավական գնահատական տալ ամբաստանյալներ Գ.Գամբարյանի, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի արարքներին և համապատասխան եզրահանգման գալնրանց գործողություններում հանցավոր ձևով հանցագործության նախապատրաստության հատկանիշների առկայության վերաբերյալ:

34. Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ գործը պետք է ուղարկվի ստորադաս դատարան՝ նոր քննության, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում անդրադառնալ բողոքաբերների մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ և 22-րդ կետերը):

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-

406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Գավիթ Գեորգիի Գամբարյանի, Վարդան Հրաչիկի Եղիազարյանի և Կարեն Վաչագանի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

34.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱԲԳ/0002/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Սկրտիչի Սերոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և Էդվարդ Վահանի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ մեղադրող Ա.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում հարուցվել է թիվ 14140512 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի և 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նույն օրն Արսեն Սերոբյանը ձերբակալվել է, իսկ Էդվարդ Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ Ա.Սերոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ Ա.Սերոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ Է.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի դեկտեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2013 թվականի ապրիլի 18-ի դատավճռով Ա.Սերոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով: Է.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կալանք՝ 2 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով Է.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

3. Երևան քաղաքի դատախազ Հ.Բադալյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հունիսի 20-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Ա.Պետրոսյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ա.Սերոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշման և 2012 թվականի դեկտեմբերի 28-ի մեղադրական եզրակացության համաձայն՝ «[Ա.Սերոբյանը] մեղադրվում է նրանում, որ 2012թ. նոյեմբերի 22-ին Երևան քաղաքի Գրիբոյեդով փողոցում իրացնելու նպատակով Էդվարդ Վահանի Պետրոսյանին հյուրասիրելու միջոցով ապօրինի իրացրել է 0.39 գրամ ափիոն տեսակի թմրանյութ, որը հայտնաբերվել է վերջինիս անձնական խուզարկությամբ:

Բացի այդ, Ա.Սերոբյանը 2012թ. սեպտեմբեր ամսվա սկզբներին Երևան քաղաքի Ն.Զարյան փողոցում իրացնելու նպատակով Էդվարդ Վահանի Պետրոսյանին հյուրասիրելու միջոցով ապօրինի իրացրել է 0.2-0.3 գրամ ափիոն

տեսակի թմրանյութ:

Այնուհետև, Ա.Սերոբյանը 2012թ. սեպտեմբեր ամսվա վերջերին կրկին Երևան քաղաքի Ն.Ջարյան փողոցում իրացնելու նպատակով Էդվարդ Վահանի Պետրոսյանին հյուրասիրելու միջոցով ապօրինի իրացրել է 0.2-0.3 գրամ ափիոն տեսակի թմրանյութ:

Այսպիսով, Արսեն Սկրտիչի Սերոբյանը զգալի չափերով ապօրինի թմրանյութ է իրացրել, այսինքն՝ կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 266 հոդվածի 1-ին մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 78-80, 204-209):

Է.Պետրոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2012 թվականի նոյեմբերի 28-ի որոշման և 2012 թվականի դեկտեմբերի 28-ի մեղադրական եզրակացության համաձայն՝ «[Է.Պետրոսյանը] մեղադրվում է նրանում, որ 2012թ. սեպտեմբեր ամսվա սկզբներին Երևան քաղաքի Ն.Ջարյան փողոցում առանց իրացնելու նպատակի, իր օգտագործման համար սույն գործով մեղադրյալ Արսեն Սկրտիչի Սերոբյանից ապօրինի ձեռք է բերել զգալի չափ հանդիսացող 0.2-0.3 գրամ ափիոն տեսակի թմրանյութ:

Բացի այդ, Է.Պետրոսյանը 2012թ. սեպտեմբեր ամսվա վերջերին Երևան քաղաքի Ն.Ջարյան փողոցում առանց իրացնելու նպատակի, իր օգտագործման համար սույն գործով մեղադրյալ Արսեն Սկրտիչի Սերոբյանից ապօրինի ձեռք է բերել զգալի չափ հանդիսացող 0.2-0.3 գրամ ափիոն տեսակի թմրանյութ:

Բացի այդ, 2012թ. նոյեմբերի 22-ին Երևան քաղաքի Գրիբոյեդով փողոցում առանց իրացնելու նպատակի, իր օգտագործման համար սույն գործով մեղադրյալ Արսեն Սկրտիչի Սերոբյանից ապօրինի ձեռք է բերել զգալի չափ հանդիսացող 0.39 գրամ ափիոն տեսակի թմրանյութ, որը հայտնաբերվել է Է.Պետրոսյանի անձնական խուզարկությամբ:

Այսպիսով, Էդվարդ Վահանի Պետրոսյանն առանց իրացնելու նպատակի զգալի չափերով ապօրինի ձեռք է բերել թմրանյութ, այսինքն՝ կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 268 հոդվածի 1-ին մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 98-100, 204-209):

6. 2013 թվականի հունվարի 30-ին՝ Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած առաջին դատական նիստի ժամանակ՝ գործի քննության նախապատրաստական փուլում, մեղադրող Ա.Քալաշյանը դատարան է ներկայացրել երկու որոշում, որոնց համաձայն՝ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները փոփոխվել, լրացվել են, և Ա.Սերոբյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Է.Պետրոսյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 13-22):

7. 2013 թվականի մարտի 26-ին պաշտպան Ա.Հոբոսյանը դատարան է ներկայացրել միջնորդություն, որտեղ փաստարկելով, որ առաջադրված մեղադրանքները փոփոխելու, լրացնելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին մեղադրողի որոշումները կայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

309¹-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, խնդրել է դրանք ճանաչել անհիմն և օրենքի պահանջներին հակասող (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 51-53):

Դատարանը որոշել է պաշտպանի միջնորդության քննարկումը հետաձգել:

Նույն օրը մեղադրողը հրապարակել է սույն գործով կազմված մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրման համառոտագրում և լազերային սկավառակ, թերթ 44-46 և 61):

8. 2013 թվականի ապրիլի 18-ի դատական նիստի ժամանակ պաշտպանության կողմը միջնորդել է կիրառել դատական քննության արագացված կարգ:

Մեղադրողը, թեև արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում, հայտնել է, որ փոխել է իր դիրքորոշումը և դատական քննության արագացված կարգի կիրառման դեմ չի առարկում:

Դատարանը որոշել է կիրառել դատական քննության արագացված կարգ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրման համառոտագրում և լազերային սկավառակ, թերթ 58-61):

9. Առաջին ատյանի դատարանը, իր դատավճռում քննարկելով ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները փոփոխելու, լրացնելու, և նրանց նոր մեղադրանքներ առաջադրելու մասին մեղադրողի որոշումներն ապօրինի ճանաչելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը, գտել է, որ ամբաստանյալների մեղադրանքը փոփոխելու և լրացնելու` օրենքով նախատեսված հիմքերը բացակայում են, քանի որ «(...) [մեղադրողի կողմից] դատարանին չեն ներկայացվել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և որը կարող է հիմք հանդիսանալ առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: [Որոշումների] մեջ տրված են մեղադրական եզրակացության նախկին ձևակերպումները, այսինքն` չեն փոփոխվել մեղադրանքի փաստական հանգամանքները, չեն բացահայտվել հանցագործության այլ դրվագներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 68-70):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ` նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն ասվածի` բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և դատական քննության արագացված կարգ է կիրառել` չնայած այն հանգամանքին, որ ակնհայտ է եղել ամբաստանյալների արարքների իրավաբանական որակման ոչ ճիշտ լինելը, մասնավորապես այն, որ Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի կողմից կատարված երեք հանցավոր արարքները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով միայն մեկ անգամ:

Ըստ բողոք բերած անձի` մեղադրական եզրակացության մեջ արարքի

նկարագրությունը դրա իրավաբանական որակմանը չհամապատասխանելու պայմաններում դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը դատարանի կողմից չմերժելը հանդիսանում է քրեադատավարական օրենքի էական խախտում:

11. Բացի այդ, բողոքաբերը, վկայակոչելով հանցանքների համակցության հասկացությունը և հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգը սահմանող քրեաիրավական նորմերը, փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը, հիմնավորված համարելով Ա.Սերոբյանին և Է.Պետրոսյանին առաջադրված մեղադրանքները, որոնցից յուրաքանչյուրում նկարագրված են նրանց կողմից կատարված հանցագործության երեք դեպք, և անտեսելով այն հանգամանքը, որ մեղադրողն իր մեղադրական ճառում ամբաստանյալների կատարած յուրաքանչյուր արարքի համար միջնորդել է նշանակել առանձին պատիժ և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատիժները գումարել, ամբաստանյալների նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացրել մեկական դրվագով՝ անտեսելով մյուս երկու դրվագները:

Բողոք բերած անձը գտել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, քանի որ գրկել է մեղադրողին օրենքով սահմանված իր լիազորությունն իրականացնելու հնարավորությունից՝ այն է՝ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը:

Վերաքննիչ դատարանն իր հերթին անտեսել է Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ խախտումները, ինչի արդյունքում օրինական ուժի մեջ է թողնվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառմամբ կայացված դատական ակտը:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 20-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքերի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Դատական քննության արագացված կարգի կիրառման մերժումը

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. սույն գործով դատական քննության արագացված կարգ կիրառելիս Առաջին ատյանի դատարանը թո՞ւյլ է տվել արդյոք քրեադատավարական օրենքի էական խախտում:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում:

(...)

3. (...) Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: Այս դեպքում դատարանն իր նախաձեռնությամբ սույն օրենսգրքի 309¹ հոդվածի հիմնված մասով սահմանված կարգով և ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերադրակելու որոշում չի կայացնում կամ վերադրակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը:

Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ»:

ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի ապրիլի 2-ի ՍԳ-Ո-872 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր: Իր որոշման 6-րդ կետում ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք անմիջականորեն ուղղված են դատարանում մեղադրանքը փոփոխելուն, այդպիսի նպատակով դատարանի նախաձեռնության հնարավոր դրսևորումն ուղղակիորեն կարող է վերաբերել մեղադրական եզրակացությունը վերահաստատելու վերաբերյալ մեղադրողին առաջարկություն անելուն: Ընդ որում, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք վերաբերում են մեղադրանքի փոփոխմանը թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով, դատարանի նախաձեռնությունը կարող է վերաբերել մեղադրանքի փոփոխմանը միայն խստացման առումով, այսինքն՝ դատարանը «հուշում է» մեղադրողին կատարել մեղադրանքը խստացման առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ: Սահմանադրական դատարանը գտնում

է, որ այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարևոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ. օր-ի 23-րդ հոդված)՝ սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության, ինչպես նաև մրցակցային դատավարության և կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը»:

ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի ՍԳՈ-872 որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը համահունչ մոտեցում Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի* գործով որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը:

(...) [Գ.]ատարանն ընդհանրապես (...) իրավասու չէ հանդես գալ առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու նախաձեռնությամբ: Նման նախաձեռնությունը կհանգեցնի մրցակցության և անմեղության կանխավարկածի սկզբունքների խախտման, ինչն էլ իր հերթին կբերի արդար դատական քննության հիմնարար արժեքի առարկայազրկման (...)» (տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԳ-0044/01/11 որոշման 13-րդ և 17-րդ կետերը):

16. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված օրենսդրական դրույթներն ու իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ արագացված դատական քննության կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու ընթացակարգը չի բխում դատարանի անկախության սկզբունքից: Վերոնշյալ ընթացակարգը կիրառելիս դատարանն ուղղորդում է մեղադրանքի կողմին կատարել մեղադրանքը խստացման առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ՝ այդպիսով խախտելով մրցակցության սկզբունքն ու անմեղության կանխավարկածը և արդյունքում իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակման ոչ ճիշտ լինելը որպես դատական քննության արագացված կարգի կիրառումը բացառող նախապայման դիտելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի դիրքորոշման արտահայտում, ինչն օբյեկտիվ հիմքեր է տալիս պնդելու, որ դատարանը, ի սկզբանե, տվյալ գործով որոշակի նախատրամադրվածություն է ունեցել:

Դատական քննության փուլում դատարանի խնդիրը ոչ թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի կողմից՝ իրենց լիազորություններն իրականացնելու ընթացքում թույլ տրված թերացումներն ու բացթողումները շտկելն է, այլ քրեադատավարական օրենքի հիմնարար սկզբունքների պահպանմամբ՝ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը ստուգելը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն իրավասու չէ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժել այն պատճառաբանությամբ, թե ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ կամ թերի է:

17. Իր վճռաբեկ բողոքում բողոքաբերը փաստարկել է, թե դատական քննության արագացված կարգ կիրառելով՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ ակնհայտ է եղել, որ ամբաստանյալների արարքների իրավաբանական որակումը թերի է, մասնավորապես, որ Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի կողմից կատարված երեք հանցավոր արարքները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով միայն մեկ անգամ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Մինչդեռ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով, որ առկա է քննարկվող քրեադատավարական ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ հիմնական նախապայմանը՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի համաձայնությունը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), ինչպես նաև բացակայում են արագացված կարգ կիրառելուն խոչընդոտող հանգամանքներ, իրավացիորեն անցել է դատական քննության արագացված կարգի:

18. Սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված վերլուծության համատեքստում գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված բողոքաբերի փաստարկն ու գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական քննության արագացված կարգ կիրառելիս Առաջին ատյանի դատարանը քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ չի տվել, այդ առումով ստորադաս դատարանների դատական ակտերը օրինական են և հիմնավորված, իսկ բողոքաբերի փաստարկները հիմնագուրկ են:

II. Բողոքաբերի բարձրացրած մյուս հարցերը

19. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. սույն գործով Առաջին ատյանի դատարանը թո՞ւյլ է տվել արդյոք նյութական իրավունքի խախտում և սահմանափակե՞լ է արդյոք մեղադրողի իրավունքը՝ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքը:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

2. Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան:

3. Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է: (...))»

Մեղադրանքի հասկացությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ.Ճաղարյանի և այլոց* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության

իրականացման գործառույթը:

Քրեական դատավարությունում մեղադրանքը բնորոշվում է որպես կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը» (տե՛ս Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԳ/0002/01/11 որոշման 15-րդ կետը):

Ա.Մերոբյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ «(...) Թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանն ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սուսկ «քրեաիրավական որակում» իմաստով, և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայագուրկ է: (...)» (տե՛ս Արթուր Խաչատուրի Մերոբյանի վերաբերյալ 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշումը):

Ա.Բարայանի և Ս.Թումանյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) մեղադրողը օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի, այդ թվում՝ մեղսագրվող արարքին տրված քրեաիրավական որակման հիմնավորվածության ռիսկը և օրենսդրական կարգավորման մակարդակով ստանում է առաջին ատյանի դատարանում այն փոփոխելու իրավական հնարավորություն: Դատախազի կողմից վերոնշյալ հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները և դուրս գալ ամբաստանյալին

նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը, և եթե ապացույցների հետազոտման արդյունքում մեղսագրվող արարքը կհաստատվի, դատարանը պարտավոր է կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե ոչ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը չիրացնելով՝ մեղադրողը քրեական գործի հետագա քննությունների ընթացքում գրկվում է նման նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունից: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում նաև այն իրավիճակը, երբ վերադաս դատարանի կողմից կարող է բեկանվել գործով կայացված դատավճիռը և գործն ուղարկվել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, որպեսզի նոր քննության ընթացքում մեղադրողը հնարավորություն ստանա շտկելու նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված բացթողումը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի գործադրմամբ փոփոխի առաջադրված մեղադրանքը: Նման մոտեցման դեպքում ուղղակիորեն կիմաստագրվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը» (տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 23-րդ կետը):

21. Չարգացնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողին քրեադատավարական օրենքով տրված՝ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոխելու իրավունքը բացարձակ չէ, և մեղադրողն իր վերոգրյալ լիազորությունը պետք է իրականացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ, որոնք հստակ սահմանում են ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու կարգն ու սահմանները: Այսպես, նշված իրավանորմը սահմանում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու ռեժիմ՝ փոփոխում քննչական գործողությունների կատարմամբ, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասեր) և փոփոխում առանց քննչական գործողություններ կատարելու, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցներն անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մաս) (առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իրավական ընթացակարգերի մասին տե՛ս Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԶԴ-2/0144/01/09 որոշման 19-25-րդ կետերը):

22. Առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը պատշաճ իրականացնելու համար դատախազը պետք է գործի քրեադատավարական օրենքով սահմանված վերոգրյալ երկու իրավական ռեժիմներից որևէ մեկով, հակառակ դեպքում, նրա գործողություններն ապօրինի են և որևէ իրավական հետևանք առաջացնել չեն կարող: Այլ խոսքով՝ դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ՝ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու մասին որոշման կայացումը հավասարազոր է օրենքով սահմանված կարգով՝ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իրավական հնարավորությունը չօգտագործելուն: Այս դեպքում ևս դատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները, դուրս գալ ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատարանը պարտավոր է դատաքննության արդյունքներով կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե ոչ:

23. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ միևնույն փարույթն իրականացնող մարմինը թեև համապատասխան դատավարական փաստաթղթերում արձանագրել է, որ Ա.Սերոբյանը և Է.Պետրոսյանը կատարել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված երեք տարբեր արարքներ, այդուհանդերձ, վերջիններիս մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով միայն մեկ անգամ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Նույն փաստական հանգամանքների պայմաններում, միևնույն իրավաբանական որակմամբ կազմվել է նաև մեղադրական եզրակացություն, որը հաստատվել է դատախազի կողմից, և գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած առաջին դատական նիստի ժամանակ՝ գործի քննության նախապատրաստական փուլում, մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածով, դատարան է ներկայացրել երկու որոշում, որոնց համաձայն՝ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները փոփոխվել են, և դատավարական փաստաթղթերում առկա միևնույն գործողություններին տրվել են այլ իրավաբանական որակումներ, մասնավորապես Ա.Սերոբյանի գործողությունները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Է.Պետրոսյանի գործողությունները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Պաշտպանը 2013 թվականի մարտի 26-ին դատարան է ներկայացրել միջնորդություն, որտեղ փաստարկելով, որ առաջադրված մեղադրանքները փոփոխելու մասին մեղադրողի որոշումները կայացվել են ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի պահանջների խախտմամբ՝ խնդրել է դրանք ճանաչել անհիմն և օրենքի պահանջներին հակասող: Դատարանը որոշել է միջնորդության քննարկումը հետաձգել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Այս պայմաններում գործով մեղադրողը հրապարակել է մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը, իսկ այնուհետև, երբ պաշտպանության կողմը դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդություն է ներկայացրել, հայտնել է, որ արագացված կարգի կիրառման դեմ չի առարկում (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը դատական քննության արագացված կարգի կիրառմամբ ամբաստանյալներ Ա.Սերոբյանի և Է.Պետրոսյանի նկատմամբ կայացրել է մեղադրական դատավճիռ՝ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նրանց կատարած հանցավոր արարքներին տրվել է մեղադրական եզրակացությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը կայացված դատավճռով ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները փոփոխելու վերաբերյալ մեղադրողի որոշումներն իրավացիորեն ճանաչել է ապօրինի՝ փաստարկելով, որ դատարանին չեն ներկայացվել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և որը կարող է հիմք հանդիսանալ առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ է համարում նաև բողոքաբերի փաստարկն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Հիշատակված քրեադատավարական նորմով նախատեսված ընթացակարգը կիրառելի է միայն դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման պարագայում, մինչդեռ սույն գործի դատական քննությունն իրականացրել է արագացված կարգով, որի դեպքում ապացույցների հետազոտություն չի կատարվում: Այլ խոսքով՝ դատական քննության արագացված կարգի կիրառման դեմ չառարկելով՝ մեղադրողը դրանով իսկ հրաժարվել է դատարանում հետազոտված ապացույցների հիման վրա ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքը փոխելու իր իրավունքից, հետևաբար Առաջին ատյանի դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված մեղադրողի իրավունքի սահմանափակման մասին խոսք լինել չի կարող:

24. Սույն որոշման 20-22-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում, որի պայմաններում նշված դատական ակտը բեկանելու օրենսդրական հիմքեր Վերաքննիչ դատարանը չի ունեցել:

Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում

Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, իսկ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Արսեն Սկրտիչի Սերոբյանի և Էդվարդ Վահանի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունիսի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

35.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԳ2/0007/15/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ դատախազ Ա.Պապիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հոկտեմբերի 22-ին դատապարտյալ Արթուր Աշոտի Այվազյանի ներկայացուցիչ Հայկ Ալումյանը բողոք է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշումը Ա.Այվազյանի մասով և պարտավորեցնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմին դատարան ներկայացնել միջնորդագիր՝ դատապարտյալ Ա.Այվազյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին՝ այն նախապես ներկայացնելով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ

դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքն ըստ ենթակայության ուղարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ բողոքը վերադարձվել է Առաջին ատյանի դատարան:

2. 2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունվարի 25-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը բեկանվել է, և նյութերն ուղարկվել են նույն դատարան:

3. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 14-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը վերադարձվել է վերջինինս՝ ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:

4. Վերոնշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Շիրակի մարզի դատախազի տեղակալ Ա.Պապիկյանը:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ դատախազ Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 14-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Պապիկյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքն ըստ ենթակայության ՀՀ վարչական դատարան ուղարկելու մասին իր 2012 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) «Արթիկ» ՔԿՀ-ի վարչական հանձնաժողովի որոշումը բխում է հանրային իրավահարաբերություններից, այն ըստ էության կապված է ՀՀ արդարադատության նախարարության գործառույթների հետ, և ՔԿՀ-ի վարչական հանձնաժողովի բողոքի քննության վերաբերյալ գործող քրեադատավարական օրենսդրությամբ քրեադատավարական ընթացակարգ սահմանված չէ: Համանման բողոքների ընթացքն արդեն իսկ լուծվել է ՀՀ վարչական դատարանի ակտերով» (տե՛ս նյութեր, թերթ 32):

7. ՀՀ վարչական դատարանը բողոքն Առաջին ատյանի դատարանին վերադարձնելու մասին իր 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշման մեջ նշել է. «(...) թեև բողոքով ներկայացվածն իր բնույթով հանդիսանում է հանրային իրավահարաբերություններից բխող վեճ, այդուհանդերձ ՀՀ վարչական

դատարանի գնահատմամբ դատապարտյալ Արթուր Այվազյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ-ի վարչական հանձնաժողովի 03.10.2012թ. որոշման դեմ դատապարտյալ Արթուր Այվազյանի ներկայացուցիչ Հայկ Ալումյանի բողոքը ՀՀ վարչական դատարանի կողմից չի կարող վարույթ ընդունվել, քանի որ այդ դեպքում կխախտվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ, 72-րդ, 77-րդ, 78-րդ հոդվածների պահանջները, ինչն իր հերթին կարող է հանգեցնել նաև նույն օրենսգրքի 53-րդ, 71-րդ հոդվածների պահանջների խախտմանը:

Այսպես՝ ՀՀ վարչական դատարան ներկայացվում է ոչ թե բողոք, այլ հայցադիմում, երկրորդ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված են հայցադիմումին ներկայացվող պահանջները, որոնք սույն բողոքում բացարձակապես պահպանված չեն և բողոքը, պայմանականորեն անգամ հայցադիմում դիտարկելու պարագայում, ենթակա կլիներ վերադարձման՝ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (...)» (տե՛ս նյութեր, թերթ 72-74):

8. Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հունվարի 25-ի որոշման մեջ նշել է. «(...) որոշում կայացնելիս Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հղում է կատարել քրեական դատավարության օրենսգրքի 41, 44 և 49 հոդվածներին, որոնք վերաբերում են բացառապես քրեական գործերին: Մինչդեռ բողոքը վերաբերում է «Արթիկ» ՔԿՀ-ի վարչակազմի գործողություններին:

Վարչական դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ թեև վարչակազմի գործողությունների դեմ բերված բողոքներն ընդդատյա են վարչական դատարանին, սակայն դատարանին դիմելու ձևը չպահպանելու պատճառով այն վերադարձվել է:

Ինչից ևս հետևում է, որ դատապարտյալի բողոքը քննության ենթակա է վարչական դատարանին:

Ուստի պետք է բավարարել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ (...) Ա.Թամազյանի վերաքննիչ բողոքը և նյութերը վերադարձնել Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան (...)» (տե՛ս նյութեր, թերթ 166-167):

9. Առաջին ատյանի դատարանն իր 2013 թվականի մարտի 14-ի որոշման մեջ նշել է. «(...) Այսպիսով, դատարանը կրկին անգամ փաստում է, որ բողոքում նշված պահանջները բխում են հանրային իրավահարաբերություններից, այն չի կարող ընդունվել դատարանի վարույթ և ներկայումս գործող ՀՀ քրեական դատավարական ընթացակարգով լսվել, որի պայմաններում էլ բողոքը պետք է հետ վերադարձնել բողոքաբերին, որն էլ իր իրավունքի խախտման վերաբերյալ հայցադիմումով կարող է դիմել ՀՀ վարչական դատարան» (տե՛ս նյութեր, թերթ 220):

10. Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 11-ի որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «(...) Վերաքննիչ դատարանը, քննության առնելով դատապարտյալ Արթուր Այվազյանի ներկայացուցիչ Հայկ Ալումյանի բողոքի ընդդատության հարցը, նկատի ունենալով Առաջին ատյանի և Վարչական դատարանների հետևությունները, արձանագրում է, որ դատապարտյալի ներկայացուցչի բողոքով վիճարկվել է ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ-ի վարչական

հանձնաժողովի որոշումը, իսկ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ բերված բողոքներն ընդդատյա են վարչական դատարանին, ուստի և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում, և այն բեկանելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, թերթ 255-257):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործի քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հետ կապված ցանկացած հարց բխում է քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից: Ընդհանուր իրավասության դատարանները ոչ միայն քննում են քրեական գործերը և վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ, այլև լուծում են իրենց կողմից կայացված դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված հարցերը:

Բողոքաբերի կարծիքով՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշման դեմ դատապարտյալ Ա.Ավագյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը վերաբերում է քրեական վարույթից բխող իրավահարաբերություններին, հետևաբար՝ ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և պետք է քննվի և լուծվի ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 11-ի որոշումը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ բերված բողոքների դատական ընդդատության հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մասն գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանը քննության է առնում հետևյալ իրավական հարցը՝ ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չլինելու

հիմքով դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը վերադարձնելու արդյունքում սահմանափակվե՞լ է արդյոք Ա.Այվազյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

15. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Մեջբերված միջազգային և ներպետական իրավանորմների համադրված վերլուծությունից բխում է, որ դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից մեկն է: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը գրկված է դատարանի մատչելիության իրավունքից, իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է: Ընդ որում, այս եզրակացությունը հիմնված է նշված հոդվածի առաջին մախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները (տե՛ս *Golder v. The United Kingdom* գործով 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետեր 28, 36):

Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև (տե՛ս *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50):

16. Վերոնշյալ կոնվենցիոն, սահմանադրական և օրենսդրական դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և չթեպալարանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները:

17. Դատարանի մատչելիության իրավունքի կապակցությամբ սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդար դատաքննության իրավունքի ինստիտուցիոնալ տարրից, այն է՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ասպակովելու պետության պոզիտիվ պարտականությունից բխող հիմնարար իրավունք է նաև գործերի պատշաճ ընդդատությունը: Հանդիսանալով դատարանի իրավասության դատավարական արտահայտություն՝

ընդդատության ինստիտուտը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել դատական պաշտպանություն հայցող անձի գործը: Ուստի, գործերի քննության ընդդատության կանոնների պահպանումն անհրաժեշտ երաշխիք է գործը վարույթ ընդունելիս կամայականությունների բացառման և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության՝ անձի իրավունքների ապահովման համար: Թերևս այս նկատառումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է, որ «Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով» (ընդդատության վերաբերյալ *mutatis mutandis* տե՛ս *Գ.Հարությունյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշումը):

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով արդարադատություն իրականացնում են առաջին ատյանի դատարանները, քրեական վերաքննիչ դատարանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը: Արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անթույլատրելի է:

2. Գատարանի լիազորություններն են, մասնավորապես՝

(...)

6) դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցեր լուծելը.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծում է դատական որոշում կայացրած դատարանը:

2. Եթե դատական որոշումն ի կատար է ածվում որոշումը կայացրած դատարանի դատական տարածքից դուրս, ապա այդ հարցը լուծում է տվյալ դատական տարածքի միևնույն ատյանի դատարանը (...):

3. (...) պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերը լուծվում են դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի որոշմամբ, անկախ այն բանից, թե որ դատարանն է կայացրել դատական որոշումը:

(...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատիժներ կատարող մարմնի և հիմնարկի վարչակազմը դատարանին հայտնում է պատիժը կատարելու մասին:

2. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում

է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ»:

Մեջբերված իրավանդությունների վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենքը սահմանում է հարցերի որոշակի շրջանակ, որոնք ենթակա են լուծման ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Նման հարցերից են, մասնավորապես, դատական ակտն ի կատար ածելիս ծագող հարցերը, որոնք ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-434-րդ հոդվածներում: Նշված հոդվածների իմաստով՝ դատական ակտն ի կատար ածելիս ընդհանուր իրավասության դատարանն իրավասու է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

ա) դատական ակտի վերաբերյալ կասկածների և անհստակությունների լուծումը,

բ) դատական որոշման կատարման հետաձգումը,

գ) պատիժը կրելուց ազատելը հիվանդության պատճառով,

դ) այն դատապարտյալին պատժից ազատելը, ում նկատմամբ դատական որոշման կատարումը հետաձգված է, ինչպես նաև դատական որոշման կատարման հետաձգումը վերացնելը,

ե) պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը,

զ) դատապարտյալի հետախուզումը:

19. Հիմք ընդունելով ընդդատության և ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական ակտի կատարման փուլում ունեցած իրավասության վերաբերյալ սույն որոշման 17-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը քրեաիրավական ինստիտուտներ են, որոնք կարգավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ և 77-րդ հոդվածներով: Այդ ինստիտուտների կիրառման կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ քրեադատավարական և քրեակատարողական օրենսգրքերով՝ որպես դատական ակտն ի կատար ածելիս ծագող հարցեր: Այլ խոսքով՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հետ կապված իրավահարաբերություններն իրենց բնույթով քրեաիրավական են, հետևաբար ենթակա են լուծման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից:

20. Սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգման կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկվող քրեաիրավական ինստիտուտի գործադրման ընթացքում դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի իրավասությունները չեն սահմանափակվում միայն դատարան ներկայացվող միջնորդությունները լուծելով: Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածը սահմանում է որոշակի ժամկետով կամ ցմահ ազատագրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի

մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը, որի ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմին վերապահված է որոշակի գործողություններ կատարելու և որոշումներ կայացնելու իրավասություն: Այս առումով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված գործողություններն ու որոշումները հանդիսանում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու քրեաիրավական ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ տարրեր, հետևաբար դրանք նույնպես բխում են քրեաիրավական հարաբերություններից, և դրանց դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեաիրավական նորմերի կիրառմամբ:

Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ այս դեպքում մասնավոր անձը (դատապարտյալը) վիճարկում է վարչական մարմնի՝ իր շահերին առնչվող որոշման կամ գործողության օրինականությունն ու հիմնավորվածությունը, այդուհանդերձ, տվյալ վեճը չի կարող համարվել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճ, որի լուծումն ընդդատյա է վարչական դատարանին: Քրեաիրավական հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերությունների տեսակ են, սակայն այս դեպքում շահագրգիռ անձի բողոքի քննարկման և լուծման իրավասությունն օրենսդրորեն վերապահված է ընդհանուր իրավասության (քրեական) դատարանին և դուրս է վարչական դատարանի իրավասության շրջանակներից:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ մոտեցումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...):

2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը»:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 19-րդ և 20-րդ կետերում շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ շահագրգիռ անձանց բողոքները ենթակա են քննության դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավագործության սահմաններում:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2012 թվականի հոկտեմբերի 22-ին դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանը Ա.Այվազյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին

միջնորդագիր դատարան չներկայացնելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշման դեմ բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքն ըստ ենթակայության ուղարկել է ՀՀ վարչական դատարան՝ պատճառաբանելով, որ հանձնաժողովի որոշումը բխում է հանրային իրավահարաբերություններից, և դրա դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգ գործող օրենսդրությամբ սահմանված չէ (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

ՀՀ վարչական դատարանը 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ բողոքը վերադարձրել է Առաջին ատյանի դատարան՝ նշելով, որ թեև բողոքով ներկայացվածն իր բնույթով հանդիսանում է հանրային իրավահարաբերություններից բխող վեճ, այդուհանդերձ վարչական դատարան ներկայացվում է ոչ թե բողոք, այլ հայցադիմում, և դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի կողմից չի պահպանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հայցադիմումին ներկայացվող պահանջները (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հունվարի 25-ի որոշմամբ բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը և նյութերն ուղարկել նույն դատարան (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի մարտի 14-ի որոշմամբ բողոքը վերադարձրել է դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանին՝ պատճառաբանելով, որ բողոքն ընդդատյա չէ ընդհանուր իրավասության դատարանին և դատապարտյալն իր իրավունքի խախտման վերաբերյալ հայցադիմումով կարող է դիմել ՀՀ վարչական դատարան (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, իր համաձայնությունը հայտնելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների հետ, 2013 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ վիճարկվող դատական ակտը թողել օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 10-րդ կետերը):

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները կամայական մեկնաբանության են ենթարկել գործերի առարկայական ընդդատության վերաբերյալ գործող օրենսդրական կանոնները, ինչի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել է դատապարտյալ Ա.Այվազյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը, ինչն էլ կարող է հանգեցնել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի

1-ին մասի պահանջների խախտման:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն հիմք է՝ դատական ակտերը բեկանելու և դատապարտյալ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքն առաջին ատյանի դատարանի քննությանը հանձնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Արթուր Աշոտի Այվազյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը վերադարձնելու մասին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 14-ի որոշումը, այն օրինական ուժ մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 11-ի որոշումը բեկանել և բողոքը հանձնել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քննությանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

36.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՎԲ-04/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հետևանքով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը վերանայելու վերաբերյալ Արտակ Պետրոսի Գաբրիելյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Դազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հունիսի 2-ի դատավճռով Արտակ Գաբրիելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով Ա.Գաբրիելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

2. Ա.Գաբրիելյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2004 թվականի հուլիսի 12-ի դատավճռով վերաքննիչ բողոքը թողել է առանց բավարարման, իսկ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի

դատարանի 2004 թվականի հունիսի 2-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել է: Ա.Գաբրիելյանը սնդավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Գաբրիելյանի արգելանքի տակ գտնված ժամանակահատվածը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 ամիս 6 օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով Ա.Գաբրիելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

3. Վերոգրյալ դատական ակտի դեմ Ա.Գաբրիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ թողնվել է առանց բավարարման, իսկ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 12-ի դատավճիռը՝ անփոփոխ:

4. Ա.Գաբրիելյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի ապրիլի 10-ին կայացրել է վճիռ:

5. Նկատի ունենալով, որ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար, Արտակ Գաբրիելյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանը և Ա.Գազարյանը 2013 թվականի հուլիսի 8-ին բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Ա.Գաբրիելյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար. «Արտակ Գաբրիելյանը 2004թ. ապրիլի 8-ին «Ազգային միաբանություն» կուսակցության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք տարածքի գրասենյակից ստացել է «Ազատության» հրապարակում 2004թ. ապրիլի 9-ին՝ ժամը 16-ին կայանալիք հանրահավաքի վերաբերյալ թռուցիկներ, դրանք բաժանել է Նորքի 1-ին զանգվածում գտնվող թիվ 7 շուկայի տարածքում աշխատող, առևտուր կատարող քաղաքացիներին ու հրապարակային կոչեր արել բռնությամբ զավթել պետական իշխանությունն ու փոխել սահմանադրական կարգը: Մասնավորապես, Նորայր Սուքիասյանին, Մկրտիչ Միքայելյանին, Վլոդյա Ջարգարյանին, Օնիկ Վարդանյանին և Սամվել Խաչատրյանին թռուցիկներ բաժանելու ժամանակ կոչեր է արել մասնակցել հանրահավաքին՝ նշելով՝ «անպայման կգաք, ջարդելու ենք, հաղթելու ենք, իշխանությունների վերջը պետք է տանք և հարցերը լուծենք, կատարելու ենք հեղաշրջում, ուժով տապալելու ենք ներկա իշխանությունը,

հաստատելու ենք նոր կարգեր»» (տե՛ս քրեական գործ, թերթ 188):

7. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանն Ա.Գաբրիելյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքում դրել է հետևյալ ապացույցները՝ Ա.Գաբրիելյանի ցուցմունքները, վկաներ Ն.Սուքիասյանի, Մ.Միքայելյանի, Վ.Զարգարյանի, Օ.Վարդանյանի, Ս.Խաչատրյանի, Գ.Ասրյանի, Գ.Դավաթյանի ցուցմունքները, իրենցն ապացույց ճանաչված թվով 26 թուղիկները, դրանց մի մասն Ա.Գաբրիելյանի կողմից ոստիկանության աշխատակիցներին ներկայացնելու, թուղիկները զննելու մասին արձանագրությունները (տե՛ս քրեական գործ, թերթ 188-189):

Առաջին ատյանի դատարանում՝ դատաքննության ընթացքում, հարցաքննվել են վկաներ Ն.Սուքիասյանը, Մ.Միքայելյանը, Գ.Ասրյանը և Գ.Դավաթյանը: Գործով մյուս վկաները՝ Վ.Զարգարյանը, Օ.Վարդանյանը և Ս.Խաչատրյանը, դատարան չեն ներկայացել, առաջին ատյանի դատարանի որոշմամբ վերջիններիս նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները հրապարակվել են դատաքննության ընթացքում (տե՛ս քրեական գործ, թերթ 164-187):

8. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում ևս գործի դատաքննությունն անցել է վկաներ Վ.Զարգարյանի, Օ.Վարդանյանի և Ս.Խաչատրյանի բացակայությամբ:

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ վկա Վ.Զարգարյանի ցուցմունքները չեն կարող դրվել դատավճռի հիմքում, նշված ապացույցը համարել է անթույլատրելի (տե՛ս քրեական գործ, թերթ 223-251):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջները

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակները գտնում են, որ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը հանդիսանում է նոր հանգամանք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը վերանայելու համար:

Շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերները փաստել են, որ Եվրոպական դատարանն արձանագրել է Ա.Գաբրիելյանի արդար դատաքննության իրավունքի խախտում՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու առումով:

Մեջբերելով նոր հանգամանքի հիման վրա դատական ակտերի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոք բերած անձինք եզրահանգել են, որ Ա.Գաբրիելյանի արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը նրա նկատմամբ կայացված դատական ակտերը դարձրել է անօրինական, հետևաբար դրանք ենթակա են բեկանման:

10. Գտնելով, որ սույն գործով հաստատված փաստական հանգամանքները և հիշատակված վճռում Եվրոպական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հնարավորություն են տալիս կայացնել նոր դատական ակտ՝ առանց դատաքննություն իրականացնելու, բողոք բերած անձինք խնդրել են հարուցել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշման վերանայման վարույթ, բեկանել այդ որոշումը, ինչպես նաև բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հունիսի 6-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 12-ի դատավճիռները, քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ կատարված հանցագործությանն Ա. Գաբրիելյանի մասնակցությունն ապացուցված չլինելու կամ նրա արարքի մեջ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ կամ բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 12-ի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռն արդյո՞ք նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը վերանայելու համար:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ [դրա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված քրեադատավարական նորմի վերլուծությունից բխում է, որ, ի թիվս այլոց, դատական ակտերը վերանայելու համար նոր հանգամանք է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հաստատվել է տվյալ գործով դատապարտված անձի՝ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

13. *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռում

Եվրոպական դատարանը վերահաստատել է իր կայուն նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետն արտացոլում է այն սկզբունքը, որ մինչև մեղադրյալի դատապարտումը ներկայացված բոլոր ապացույցները պետք է պատշաճ դիտարկվեն իր ներկայությամբ հրապարակային դատաքննության ընթացքում՝ հաշվի առնելով մրցակցության սկզբունքը: Այս սկզբունքից հնարավոր է բացառություններ կատարել, սակայն այդ դեպքում չպետք է խախտվի պաշտպանության իրավունքը, որը, որպես կանոն, պահանջում է, որպեսզի մեղադրյալին ընձեռվի բավարար և պատշաճ հնարավորություն առարկություններ ներկայացնելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկաներին, ինչպես վկայի ցուցմունք տալու ընթացքում, այնպես էլ դատավարության հետագա փուլերում (տե՛ս *Delta v. France*, 19 դեկտեմբերի 1990թ., § 36, Series A թիվ 191-A, *Van Mechelen and Others v. the Netherlands*, 23 ապրիլի 1997թ., § 51, Reports of Judgments and Decisions 1997-III, *Luca v. Italy*, թիվ 33354/96, § 39, ՄԻԵԴ 2001-II)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետ 76):

Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ վկաներին մեղադրյալի ներկայությամբ հարցաքննելու սկզբունքից բացառություն անելու դեպքում պետք է պահպանվի երկու պահանջ: «(...) Առաջին՝ պետք է լինի հարգելի պատճառ վկայի չներկայանալու համար: Երկրորդ՝ երբ դատապարտումը հիմնվում է միայն կամ վճռորոշ կերպով գրավոր ցուցմունքների վրա, որոնք արել է անձը, ում մեղադրյալը չի կարողացել հարցաքննել ինքնուրույն հետաքննության կամ դատաքննության փուլում, ապա պաշտպանական կողմի իրավունքները սահմանափակվում են այն չափով, որքանով չեն համապատասխանում հոդված 6-ով ամրագրված երաշխիքներին (տե՛ս *AL-Khawaja and Tahery v. the United Kingdom*, 2iv 26766/05, 22228/06, § 119, 15 դեկտեմբերի 2011թ.)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետ 77):

Այնուհետև Եվրոպական դատարանը շեշտել է, որ «Բացակայող վկայի կողմից ներկայացված ապացույցներն ընդունելու համար լավ պատճառաբանման պահանջն առաջնային քննարկման խնդիր է, որը պետք է ուսումնասիրվի մինչ այդ ապացույցները միակը կամ վճռորոշը համարելը: Նույնիսկ, երբ բացակայող վկայի ապացույցը միակը կամ վճռորոշը չի եղել, Դատարանն այնուամենայնիվ գտել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում, քանի որ վկային չհարցաքննելու համար լավ պատճառաբանություն չի ներկայացվել: Սա այն պատճառով է, որ որպես կանոն, վկաները պետք է տան ցուցմունքներ դատաքննության ընթացքում, և որ բոլոր ողջամիտ ջանքերը պետք է ներդրվեն նրանց ներկայությունն ապահովելու համար: Այսպիսով, եթե վկան չի ներկայանում բանավոր ցուցմունք տալու համար, ապա պարտավորվածություն կա տեղեկանալու, թե արդյոք բացակայությունն արդարացված էր (տե՛ս նույն տեղում, § 120)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական

դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետ 78):

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված դիրքորոշումների հիման վրա Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Ա.Գաբրիելյանի դատապարտումը, *inter alia*, հիմնված է եղել վկաներ Օ.Վարդանյանի և Ս.Խաչատրյանի ցուցմունքների վրա, որոնց անձամբ հարցաքննելու հնարավորություն Ա.Գաբրիելյանը ոչ մինչդատական վարույթի ժամանակ և ոչ էլ դատարանում չի ունեցել, բացի այդ, որևէ դատարան երբևէ չի լսել այս վկաներին: Չնայած այն հանգամանքին, որ նշված վկաների դատաքննությանը չներկայանալու պատճառը եղել է նրանց ենթադրյալ բացակայությունը Հայաստանի Հանրապետությունից, այնուամենայնիվ Եվրոպական դատարանն այս հանգամանքը չի գնահատել որպես հարգելի պատճառ, որը կարողարացներ այդ վկաներին մեղադրյալի ներկայությամբ չհարցաքննելու փաստը: Այս առումով Եվրոպական դատարանը նշել է, որ «(...) եթե վկան բացակայում է երկրից, որտեղ վարույթն ընթանում է, դա ինքնին բավարար չէ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի պահանջները բավարարելու համար, որը Պայմանավորվող պետություններից պահանջում է ձեռնարկել դրական քայլեր՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին (տե՛ս Sadak and Others v. Turkey, թիվ 29900/96, 29901/96, 29902/96 և 29903/96, § 67, ՄԻԵԴ 2001-VIII): Այդպիսի միջոցառումները կազմում են Պայմանավորվող պետությունների կողմից կատարման ենթակա պարտավորությունների մաս, որը պետք է երաշխավորի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ իրականացում (տե՛ս Colozza v. Italy, 12 փետրվարի 1985թ., § 28, Series A թիվ 89)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետեր 80-81):

Եվրոպական դատարանը, ընդունելով հանդերձ, որ սույն գործով դատարանները որոշ միջոցներ են ձեռնարկել վկաներ Օ.Վարդանյանի և Ս.Խաչատրյանի բացակայության պատճառների մասին տեղեկանալու և դատաքննությանը նրանց ներկայությունն ապահովելու համար, այնուամենայնիվ գտել է, որ «(...) գործադրված ջանքերն այս գործի շրջանակներում բավարար չեն կարող համարվել (այս առնչությամբ տե՛ս Artner v. Austria, 28 օգոստոսի 1992թ., § 21, Series A թիվ 242-A, որով ավստրիական ոստիկանությունը գործը քննող դատարանի կողմից կարգադրություն էր ստացել ձեռնարկել բոլոր միջոցները բացակայող վկաներին գտնելու համար, Berisha v. the Netherlands (որոշում), թիվ 42965/98, 4 մայիսի 2000թ., որով հոլանդական իշխանությունները փորձել են զանգահարել Սլովակիայի Հանրապետությունում գտնվող վկային սլովակ իշխանությունների միջոցով և Haas v. Germany (որոշում), թիվ 73047/01, 17 նոյեմբերի 2005թ., որով գերմանական իշխանությունները ձեռնարկել են զգալի միջոցառումներ Լիբանանի բանտում պատիժը կրող վկայի ներկայությունն ապահովելու համար): Այսպիսով, չի կարելի պնդել, որ առկա էին հարգելի պատճառներ վկաներ Օ.Վ.-ին և Ս.Խ.-ին չհարցաքննելու համար, կամ որ ներպետական իշխանություններն իրականացրել են իրենց պարտականությունը՝ ճշտելու՝ արդյոք նրանց բացակայությունն արդարացված էր:

(...) Վերը նշված դիտարկումները բավարար են Դատարանին միանշանակ

եզրակացնելու, որ դատապարտման հարցը լուծելիս առանց հիմնավորման սահմանափակվել է դիմումատուի [Ա.Գաբրիելյանի]՝ վճռորոշ դեր ունեցող վկաներին հարցաքննելու իրավունքը: Նա չէր կարող նրանց արժանահավատ լինելու հանգամանքը ենթարկել մանրակրկիտ ստուգման կամ կասկածի տակ դնել նրանց գրավոր ցուցմունքները: Սա հատկապես անհանգստացնող է հաշվի առնելով, որ նշված վկաներն անձամբ ծանոթ չեն եղել դիմումատուին և վարույթի ոչ մի փուլում երբևէ նրանցից չի պահանջվել ճանաչել դիմումատուին» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետեր 84 և 86):

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատապարտման հիմքում դրված ապացույցների կապակցությամբ պաշտպանության կողմի հակընդդեմ հարցում իրականացնելու (կոնֆրոնտացիայի) իրավունքին («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին») Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 կետի (դ) ենթակետ), շեշտել է, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվում հարցեր ուղղել իր դեմ ցուցմունք տված վկային, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից: Եվրոպական դատարանը, սակայն, փաստել է, որ առանց հակընդդեմ հարցման ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում: Այդպիսի ապացույցն օգտագործելու համար անհրաժեշտ է պահպանել երկու պահանջ, այն է՝

ա) պետք է լինի հարգելի պատճառ վկայի չներկայանալու համար,

բ) անձի դատապարտումը ամբողջապես կամ վճռական չափով չպետք է հիմնված լինի այդպիսի ապացույցի վրա:

Այլ խոսքով՝ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված վկայի ցուցմունքը մեղադրական դատավճռի հիմքում դնելն արդար դատաքննության իրավունքի խախտման չի հանգեցնի, եթե վկայի բացակայությունը եղել է արդարացված, և եթե այդ ապացույցը վճռական կշիռ չի ունեցել անձի մեղքը հաստատող ապացույցների գանգվածում: Ընդ որում, մնան ապացույցն օգտագործելու համար դատարանը պարտավոր է ներկայացնել պատշաճ պատճառաբանություններ: Եվրոպական դատարանը շեշտել է, որ նույնիսկ այն դեպքում, երբ բացակայող վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցը չէ, վկային չհարցաքննելու համար լավ պատճառաբանություն չներկայացնելը հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի խախտման:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատողություններ են, այլ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն, որը բազմիցս վերահաստատվել ու կիրառվել է մի շարք գործերով: Վճռաբեկ դատարանը պաշտպանության կողմի հակընդդեմ հարցման իրավունքին անդրադարձել է Հ.Սահակյանի գործով որոշման մեջ (տե՛ս Համայակ Չալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի

20-ի թիվ ԼԳ/0212/01/10 որոշման 22-23-րդ կետերը):

16. Մինևույն ժամանակ, *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանն անդրադարձել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով պետությունների կողմից կատարման ենթակա պարտավորություններին: Այս առումով Եվրոպական դատարանը շեշտել է, որ վկայի բացակայությունը երկրից ինքնին բավարար չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 կետի (դ) ենթակետի պահանջները բավարարված դիտելու համար: Նշված պահանջների իմաստով պետությունը պոզիտիվ պարտականություն ունի ձեռնարկել քայլեր՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկաներին: Հետևաբար, վկայի բացակայության դեպքում դատարանները պետք է ձեռնարկեն ողջամիտ բոլոր ջանքերը նրա ներկայությունն ապահովելու համար, այդ թվում՝ հանձնարարեն իրավասու մարմիններին հնարավոր բոլոր միջոցներով պարզել վկայի գտնվելու վայրը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դիմեն մասն միջազգային իրավական օգնության:

Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վկաներ Օ.Վարդանյանի և Ս.Խաչատրյանի ցուցմունքները վճռորոշ նշանակություն են ունեցել Ա.Գաբրիելյանի դատապարտման համար, որոնց անձամբ հարցաքննելու հնարավորություն Ա.Գաբրիելյանը ոչ մինչդատական վարույթի ժամանակ և ոչ էլ դատարանում չի ունեցել: Բացի այդ, Եվրոպական դատարանը փաստել է, որ սույն գործի քննության ընթացքում դատարաններն անհրաժեշտ բոլոր ջանքերը չեն գործադրել նշված վկաների ներկայությունը դատաքննությանն ապահովելու համար, ինչը հնարավորություն կտար Ա.Գաբրիելյանին իրականացնել իր հակընդդեմ հարցման իրավունքը: Վերոգրյալի գնահատմամբ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դատապարտման հարցը լուծելիս առանց հիմնավորման սահմանափակվել է Ա.Գաբրիելյանի՝ վճռորոշ դեր ունեցող վկաներին հարցաքննելու իրավունքը:

Արդյունքում, Եվրոպական դատարանը *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռել է, որ «առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի հետ միասին վերցված՝ [Ա.Գաբրիելյանի] կողմից իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու առնչությամբ»:

17. Այսպիսով նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը հաստատված է համարել սույն գործով դատապարտված անձի՝ Ա.Գաբրիելյանի՝ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով

պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը վերանայելու համար:

18. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը շեշտել է, որ «(...) վճիռը, որով հաստատվում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իրավական պարտավորություն է դնում պատասխանող Պետության վրա ոչ միայն վճարել շահագրգիռ անձանց արդարացի փոխհատուցման ձևով շնորհված գումարները, այլ նաև ընտրել ներպետական մակարդակում ընդունելի ընդհանուր և/կամ անհատական այնպիսի միջոցներ, որոնք վերջ կդնեն Գատարանի կողմից ճանաչված խախտմանը և կնպաստեն բոլոր հետևանքների հավանական հատուցմանն այնպես, որ հնարավոր չափով վերականգնվի մինչ խախտումն առկա իրավիճակը (տե՛ս Scozzari and Giunta v. Italy [ՄՊ], թիվ 39221/98 և 41963/98, § 249, ՄԻԵԳ- 2000-VIII, Ilascu and Others v. Moldova and Russia [ՄՊ], թիվ 48787/99, § 487, ՄԻԵԳ- 2004-VII և Lungoci v. Romania, թիվ 62710/00, § 55, 26 հունվարի 2006թ.): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում ճանաչելու դեպքում դիմումատուն որքան հնարավոր է պետք է գտնվի այն իրավիճակում, որում նա կլիներ, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (տե՛ս, mutatis mutandis, Sejdovic v. Italy [ՄՊ], թիվ 56581/00, § 127, ՄԻԵԳ- 2006 և Yanakiev v. Bulgaria, թիվ 40476/98, § 89,10 օգոստոսի 2006թ.):

Այս առնչությամբ Գատարանը նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ և 426.4-րդ հոդվածները թույլ են տալիս ներպետական վարույթի վերաբացում, եթե Գատարանը հայտնաբերի Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում (...): Գատարանը ցանկացած դեպքում այն կարծիքին է, որ այն դեպքում, երբ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ, փոխհատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նորից քննումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս, mutatis mutandis, Lungoci, վերը ցիտած, § 56)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետ 103-104):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Գաբրիելյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը պետք է վերանայել, բեկանել ստորադաս դատարանների դատավճիռները և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, ինչը հնարավորություն կտա վերացնել Ա.Գաբրիելյանի՝ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված արդար դատաքննության իրավունքի խախտումը և գործում առկա ապացույցների զանգվածի գնահատմամբ (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը) եզրահանգման գալ Ա.Գաբրիելյանի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426¹-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արտակ Պետրոսի Գ-աբրիելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի օգոստոսի 6-ի որոշումը վերանայել:

2. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հունիսի 2-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 12-ի դատավճիռները բեկանել և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՍԳ/0001/15/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՋԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

ընդհանուր դատական նիստում, քննության առնելով Գարիկ Էդիկի Սողոմոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի մարտի 22-ի որոշման դեմ դատապարտյալ Գ.Սողոմոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճռով Գարիկ Էդիկի Սողոմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Գ.Սողոմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որպես պատիժ նշանակվել է տուգանք՝ 550.000 ՀՀ դրամի չափով, իսկ 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Սողոմոնյանի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 650.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ հաշվի առնելով Գ.Սողոմոնյանի կալանքի տակ լինելու ժամանակահատվածը, նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 550.000 ՀՀ դրամի չափով:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 30-ի որոշմամբ տուգանքի վճարումը հետաձգվել է 1 տարի ժամկետով՝ մինչև 2013 թվականի հունվարի 10-ը:

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշմամբ բավարարվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ալյընտրանքային պատիժների կատարման բաժնի Սյունիքի բաժանմունքի պետի միջնորդությունը և դատապարտյալ Գ.Սողոմոնյանի նկատմամբ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճռով նշանակված 550.000 ՀՀ դրամ տուգանքի չվճարված մասը՝ 450.000 ՀՀ դրամը փոխարինվել է 2.200 ժամ հանրային աշխատանքներով:

3. Գատապարտյալ Գ.Սողոմոնյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 22-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, իսկ բողոքարկված դատական ակտը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դատապարտյալ Գ.Սողոմոնյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2013 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Գատապարտյալ Գ.Սողոմոնյանի նկատմամբ նշանակված տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուգանքը չվճարելու դեպքում, այն փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 4-րդ մասի՝ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակում է երկու հարյուր յոթանասուն ժամ, իսկ եթե այն գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ:

Փաստորեն դատապարտյալը դատապարտվել է տուգանքի՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրիսնապատիկի՝ 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, որից չի վճարվել 450.000

(չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, որը կազմում է 2250 (երկու հազար երկու հարյուր հիսուն) ժամ հանրային աշխատանքներ: Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 4-րդ մասի համաձայն նրա նկատմամբ պետք է նշանակել 2200 (երկու հազար երկու հարյուր) ժամ հանրային աշխատանքներ (...)» (տես նյութեր, հատոր 1, թերթ 13-14):

6. Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 22-ի որոշմամբ եզրահանգել է, որ «(...) Առաջին ատյանի դատարանը, բավարարելով ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Սյունիքի բաժանմունքի պետի միջնորդությունը և դատապարտյալ Գարիկ Սողոմոնյանի նկատմամբ կայացված ու օրինական ուժի մեջ մտած դատավճռով սահմանված տուգանքի չվճարված մասը փոխարինելով հանրային աշխատանքներով, նյութական օրենքը ճիշտ է կիրառել՝ արդյունքում կայացնելով օրինական, հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ, որը բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան (...)» (տես նյութեր, հատոր 2, թերթ 51-55):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

7. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով կայացված որոշումն իրավաչափ չէ, այն չի բխում պատժի նպատակներից և հակասում է ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև մարդասիրության սկզբունքներին:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ նյութական ծանր վիճակում գտնվելու պատճառով չի կարողացել վճարել իր նկատմամբ որպես պատիժ նշանակված տուգանքի մի մասը, սակայն Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ինքն արժանի չէ պատժի, իսկ նշանակված հանրային աշխատանքները կատարելն իր համար ծանր հետևանքներ կառաջացնի:

8. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 22-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ նշանակված պատիժը կրելուց իրեն ազատելու մասին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակվում է երկու հարյուր յոթանասուն ժամ,

իսկ եթե այն գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ»:

10. 2013 թվականի ապրիլի 23-ին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է ՍԳՈ-1082 որոշումը, որի եզրափակիչ մասը շարադրված է հետևյալ կերպ.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

(...):»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ «Քրեական օրենսգրքի (...) վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այդ դրույթն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից: Այդ դրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման»:

11. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Գ.Սողոմոնյանը վճարել է դատավճռով իր նկատմամբ որպես պատիժ նշանակված տուգանքից 100.000 ՀՀ դրամ, իսկ տուգանքի չվճարված մասի, այն է՝ 450.000 ՀՀ դրամի վճարումը դատարանի որոշմամբ հետաձգվել է 1 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Գատապարտյալ Գ.Սողոմոնյանը, բացի վերոհիշյալ 100.000 ՀՀ դրամի վճարումից, այլ վճարում չի կատարել՝ պատճառաբանելով նյութական ծանր վիճակում գտնվելու հանգամանքը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1082 որոշման լույսի ներքո գնահատելով սույն գործի հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը դատապարտյալ Գ.Սողոմոնյանի նկատմամբ չի կարող կիրառվել, քանի որ ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

12. Անդրադառնալով բողոք բերած անձի այն պնդումներին, որ բողոքարկվող որոշումն իրավաչափ չէ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշումը, այնպես էլ այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 22-ի որոշումը կայացվել են տվյալ պահին գործող օրենսդրության պահպանմամբ և այդ առումով չեն կարող համարվել ապօրինի,

չհիմնավորված և չպատճառաբանված: Նշված դատական ակտերի վերանայումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն գործով կիրառված իրավանորմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը, հակասահմանադրական է ճանաչվել:

13. Հիմք ընդունելով շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Գ.Սողոմոնյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 22-ի դատական ակտերը պետք է բեկանել և տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Գարիկ Էդիկի Սողոմոնյանի վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 18-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 22-ի որոշումները բեկանել և տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ վարույթը կարճել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

38.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԳ/0020/06/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի սեպտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Անդրեյ Արկադևիչ Ջյաբլիցկի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի պաշտպան Անուշ Մխիթարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի քննիչ Հ.Աբրահամյանի 2013 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Անդրեյ Ջյաբլիցկը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի հունիսի 14-ի որոշմամբ մերժվել է մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը:

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Վարդանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 14-ի որոշումը բեկանվել է, և մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի

նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Ա.Չյաբլիցկի պաշտպան Ա.Մխիթարյանը վճարել բողոք է բերել, որը Վճարելի դատարանի 2013 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Վարդանյանը՝ խնդրելով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ, իսկ վճարելի բողոքը՝ մերժել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից Ա.Չյաբլիցկին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար.

Ա.Չյաբլիցկը 2012 թվականի հունվարին, գողություն կատարելու դիտավորությամբ համաձայնության գալով կնոջ՝ Նատալյա Քրմոյանի հետ, իրենց պատկանող «Օպել» մակնիշի ավտոմեքենայով Երևանից մեկնել են Հրազդան քաղաք և մտնելով Հրազդան քաղաքի «Սթար» սուպերմարկետի առևտրի սրահ, հագուստի մեջ թաքցնելու միջոցով գողացել են 18.800 ՀՀ դրամ ընդհանուր արժողության հակաարևահարման կրեմ, սակայն իրենց հանցավոր մտադրությունն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ հանգամանքներում, քանի որ առևտրի սրահից դուրս գալու պահին բռնվել են անվտանգության աշխատակիցների կողմից և գողոնը հետ են վերադարձրել:

Այնուհետև, Հրազդան քաղաքում գործող տարբեր առևտրի սրահներից գողություններ կատարելու դիտավորությամբ, հանցավոր համաձայնության գալով Նատալյա Քրմոյանի և Անահիտ Թարվերդյանի հետ, տաքսի ավտոմեքենայով Երևան քաղաքից մեկնել են Հրազդան քաղաք և մտնելով Միկրոշրջան թաղամասի 105-րդ շենքի 1-ին հարկում գտնվող՝ Համեստ Փիլիպոսյանին պատկանող կոշիկի սրահ, հագուստի մեջ թաքցնելու միջոցով կատարել են զգալի չափի՝ 10.000 ՀՀ դրամ արժողության մեկ զույգ տղամարդու կոշիկի գողություն:

Դրանից հետո, շարունակելով իրենց հանցավոր մտադրությունը, նույն օրը մտել են Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 75-րդ շենքի առաջին հարկում գտնվող՝ Լուսիկ Կոստանյանին պատկանող խանութի սրահ և այնտեղից հագուստի տակ թաքցնելու միջոցով կատարել են զգալի չափի՝ 6.300 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 6 հատ շամպունների գողություն:

Այնուհետև, 2013 թվականի մայիսի 18-ին Հրազդան քաղաքում գործող տարբեր առևտրի սրահներից գողություններ կատարելու դիտավորությամբ, հանցավոր համաձայնության գալով Ն.Քրմոյանի և Ա.Թարվերդյանի հետ, տաքսի ավտոմեքենայով Երևանից մեկնել են Հրազդան քաղաք և մտնելով Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 75-րդ շենքի 1-ին հարկում գտնվող՝ Լուսիկ Կոստանյանին պատկանող խանութի սրահ՝ հագուստի տակ թաքցնելու միջոցով կատարել են զգալի չափի՝ 6.300 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 6 հատ շամպունների գողություն:

Նույն օրը մտել են Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 73-րդ շենքի

առաջին հարկում գտնվող Գոհար Խաչատրյանին պատկանող խանութի սրահ՝ այնտեղից հագուստի տակ թաքցնելու միջոցով կատարել են 1.450 ՀՀ դրամ արժողության 1 հատ «Վելատոն» մազի ներկի գողություն:

Նույն օրը մտել են Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 20 շենքի 1-ին հարկում գտնվող՝ Համբարձում Վարդանյանին պատկանող խանութի սրահ և այնտեղից հագուստի տակ թաքցնելու միջոցով կատարել են 2.000 ՀՀ դրամ արժողության 2 հատ շամպունների գողություն:

Նույն օրը, գողություն կատարելու նպատակով, մտել են Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 2-րդ շենքի 1-ին հարկում գտնվող՝ Համբարձում Վարդանյանին պատկանող «Արման և քույրեր» ՍՊԸ-ի խանութի սրահ, որտեղ Ա.Չյաբլիցկը հագուստի տակ թաքցրել է 2 հատ շամպուն, իսկ կինը՝ Ն.Քրմոյանը հագուստի տակ թաքցրել է 1 հատ մազի ներկ: Ա.Թարվերդյանը, դեմքով կանգնելով դեպի վաճառողուհին, ապահովել է վերջիններիս անվտանգությունը, սակայն նրանց գործողությունները նկատվել է խանութի վաճառողուհի Ալվինա Հովհաննիսյանի կողմից և երբ նրանք փորձել են դուրս գալ խանութից, Ա.Հովհաննիսյանը պահանջել է կանգնել: Ա.Չյաբլիցկը և Ն.Քրմոյանը, հասկանալով, որ իրենց գործողությունները դարձել են բացահայտ, խանութից վերցրած իրերը բացահայտ հափշտակելու դիտավորությամբ դիմել են փախուստի՝ վազելով դուրս են եկել խանութից և նստելով իրենց սպասող տաքսի ավտոմեքենան, հեռացել են՝ հափշտակելով 12.000 ՀՀ դրամ արժողության շամպունները և մազի ներկը:

6. Առաջին ատյանի դատարանն իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) քննիչի կողմից ներկայացված և սույն որոշման մեջ շարադրված փաստական տվյալներն ու տեղեկությունները Դատարանի համար, դատավարության տվյալ փուլում, ողջամտորեն բավարար են հիմնավորված համարելու Անդրեյ Չյաբլիցկի առևտրությունն իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 34-177 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 176 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող ենթադրյալ հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած): Սակայն, դրանք բավարար չեն արդարացված համարելու նախաքննության մարմնի ապագային վերաբերվող կանխատեսումներն առ այն, որ մշտական բնակության վայր, խնամքին 3, այդ թվում 2 անչափահաս երեխա և մշտական աշխատանք ունեցող, միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող Անդրեյ Չյաբլիցկը մնալով ազատության մեջ, կթաքնվի քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ կխոչընդոտի գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառի չներկայանալու կամ այլ ճանապարհով, կամ կկատարի քրեական օրենքով չթույլատրված արարք կամ կխուսափի քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց կամ կխոչընդոտի դատարանի դատավճռի կատարմանը: (...) դատարանը գտնում է, որ առկա չեն Անդրեյ Չյաբլիցկի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրական բավարար հիմքեր» (տե՛ս նյութեր, թերթ 51-60):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ մասնավորապես նշել է հետևյալը. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի՝ մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի կողմից քննությանը խոչընդոտելու հիմնավորումները բավարար են՝ մեղադրյալներ են հանդիսանում նաև մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի կինը՝ Նատալյա Սուրենի Քրմոյանը և վերջինիս ընկերուհի Անահիտ Ռաֆիկի Թարվերդյանը, և մեծ է հավանականությունը, որ մնալով ազատության մեջ կարող է խոչընդոտել քննությանը՝ վերոնշյալ անձանց վրա ապօրինի ազդեցություն գործադրելու ճանապարհով: Այդ առթիվ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում մեղադրող կողմի պատճառաբանությունները, որ դատարանի որոշմամբ ազատ արձակվելուց հետո վերոնշյալ անձինք փոխել են ցուցմունքները՝ հրաժարվելով նախկինում տված ցուցմունքներից: Վերաքննիչ դատարանը նաև արձանագրում է, որ մեղադրյալ Ա.Ջյաբլիցկին մեղսագրված է հափշտակությունների՝ այդ թվում նաև կողոպուտի բազմադրվազ հանցանք, որը հիմք է տալիս հիմնավոր հետևություն անելու, որ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալը կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք (...):

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում չկիրառելով՝ հաշվի չի առել նրան վերագրվող՝ բազմադրվազ միջին ծանրության հանցագործության բնույթն ու վտանգավորությունը: Մեղադրյալ Ա.Ջյաբլիցկին մեղսագրվող միջին ծանրության հանցանքների համար նախատեսվող պատժի խստությունը՝ մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը մեծացնում է հավանականությունը, որ մեղադրյալն ազատության մեջ մնալով կարող է թաքնվել քննությունից:

Քննիչի միջնորդության համաձայն՝ նույն գործով կասկածյալներ Անահիտ Ռաֆիկի Թարվերդյանի և Նատալյա Սուրենի Քրմոյանի նկատմամբ, որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին և որպես կասկածյալ տված ցուցմունքներով հայտնել են, որ Անդրեյ Ջյաբլիցկի հետ նախնական համաձայնությամբ Երևան և Հրազդան քաղաքների գործող տարբեր առևտրի սրահներից կատարել են տարբեր տեսակի իրերի գողություններ:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի՝ վերաքննիչ բողոքում և Դատարանում բերած այն փաստարկը, որ հաշվի առնելով, որ հանցանքը համակատարողներ են կինը՝ Նատալյա Սուրենի Քրմոյանը և վերջինիս ընկերուհի Անահիտ Ռաֆիկի Թարվերդյանը, վերջիններս որպես կասկածյալ հարցաքննվելիս մանրամասն նշել են իրենց և մեղադրյալ Անդրեյ Ջյաբլիցկի համատեղ կատարած հանցագործությունների վերաբերյալ փաստերը, սակայն վերջինիս արգելանքից ազատելուց հետո արդեն փոխել են իրենց դիրքորոշումը և հրաժարվել՝ ցուցմունքներ տալուց: Ուստի, մեծ է հավանականությունը, որ ազատ արձակվելուց հետո մեղադրյալը նշված դատավարության մասնակիցների վրա ապօրինի ազդեցություն կարող է գործադրել՝ դրանով ազդելով գործի օբյեկտիվ քննության ընթացքի վրա՝ խանգարելով հանցագործության բացահայտմանը ու հետազայում ևս մեծ է մեղադրյալի կողմից քննությանը խոչընդոտելու վտանգը» (տե՛ս նյութեր, թերթ 100-106):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

8. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, Ա.Ջյաբլիցևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելով՝ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վճռաբեկ բողոքի հեղինակի կարծիքով՝ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն մերժել է Ա.Ջյաբլիցևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ի վնաս Ա.Ջյաբլիցևի մեկնաբանելով Վճռաբեկ դատարանի՝ նմանօրինակ գործերով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, ոչ իրավաչափ եզրահանգման է եկել Ա.Ջյաբլիցևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Բողոքաբերը նշել է, որ իր պաշտպանյալն իրեն մեղավոր չի ճանաչել և հրաժարվել է ցուցմունքներ տալ, իսկ մյուս երկու մեղադրյալները ցուցմունքներ տվել են, սակայն ներկայումս, օգտվելով իրենց իրավունքից, հրաժարվել են ցուցմունքներ տալ: Այս կապակցությամբ բողոքաբերը պնդում է, որ գործով մյուս մեղադրյալների կողմից ցուցմունքներ տալուց հրաժարվելու, այն է՝ իրենց իրավունքից օգտվելու հանգամանքը Վերաքննիչ դատարանը դիտել է որպես արդարադատությանը խոչընդոտելու փաստ Ա.Ջյաբլիցևի կողմից:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ Ա.Ջյաբլիցևի ընտանեկան վիճակը, խնամքին երկու անչափահաս երեխաների առկայությունը, դրականորեն բնութագրվելը, մշտական բնակության վայր ունենալը, կալանավորման դեպքում՝ ընտանիքի ծանր դրության մեջ հայտնվելը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 3-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 14-ի որոշմանը, իսկ Ա.Ջյաբլիցևին՝ անհապաղ ազատ արձակել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորման հիմքերից մեկի՝ մեղադրյալի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու հանգամանքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանը քննության է առնում այն հարցը, թե հիմնավորված և պատճառաբանված է արդյոք մեղադրյալ Ա.Ջյաբլիցևի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Վերաքննիչ

դատարանի որոշումը:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...):»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված կարգով և դեպքերում (...): Մարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր անձ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

13. Սույն որոշման նախորդ կետում շարադրված դրույթների վերլուծությունից

բխում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքներից է, որի նշանակության և արժեքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել *Ա.Ավետիսյանի* գործով որոշման մեջ: Վկայակոչված որոշման համաձայն՝ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված): Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից:

Նշված սկզբունքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կբովանդակազրկվի:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա» (տե՛ս Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ-/0022/06/08 որոշման 18-20-րդ կետերը):

Ա.Ճուղուրյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված

մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս Արամ Սեյրանի Դուդուրյանի գործով Վճարելի դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

14. Վճարելի դատարանը վերահաստատում է վերոնշյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումներն առ այն, որ կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է, հետևաբար մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշման մեջ դատարանը պարտավոր է ծանրակշիռ փաստարկների վկայակոչմամբ հիմնավորել մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու հավանականությունը:

Վերոշարադրյալը բխում է անձին ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից: Հակառակ պարագայում կխախտվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի անհարկի սահմանափակման:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ փաստել է, որ չնայած առկա է հիմնավոր կասկած Ա.Չյաբլիցևի կողմից իրեն մեղսագրվող արարքները կատարած լինելու մասին, այնուամենայնիվ, դա բավարար չէ արդարացված համարելու նախաքննության մարմնի՝ ապագային վերաբերող կանխատեսումներն առ այն, որ մշտական բնակության վայր, խնամքին երեք անձ և մշտական աշխատանք ունեցող, միջին ծանրության հանցագործություն կատարման մեջ մեղադրվող Ա.Չյաբլիցևը, մնալով ազատության մեջ, կկատարի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունների որևէ մեկը: Դրանից ելնելով Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ առկա չեն Ա.Չյաբլիցևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու բավարար հիմքեր (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով ստորադաս դատարանի դիրքորոշման հետ, արձանագրել է, որ մեղադրյալ Ա.Չյաբլիցևին մեղսագրված է հափշտակությունների բազմադրվազ հանցանք, որը հիմք է տալիս հետևություն անել, որ ազատության մեջ գտնվելու դեպքում վերջինս կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կամ թաքնվել քննությունից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քանի որ սույն գործով մեղադրյալներ են հանդիսանում նաև Ա.Չյաբլիցևի կինը՝ Ն.Քրմոյանը և վերջինիս ընկերուհին՝ Ա.Թարվերդյանը, ուստի մեծ է հավանականությունը, որ ազատ արձակվելուց

հետո մեղադրյալը նշված անձանց վրա ապօրինի ազդեցություն կարող է գործադրել՝ դրանով ազդելով գործի օբյեկտիվ քննության ընթացքի վրա՝ խանգարելով հանցագործության բացահայտմանը: Վերաքննիչ դատարանն իր վերոգրյալ դիրքորոշումը հիմնավորելու համար փաստարկել է, որ Ն.Քրմոյանը և Ա.Թարվերդյանը, որպես կասկածյալ հարցաքննվելիս, մանրամասն նշել են իրենց և Ա.Ջյաբլիցկի համատեղ կատարած հանցագործությունների փաստերը, սակայն վերջինիս արգելանքից ազատելուց հետո փոխել են իրենց դիրքորոշումը և հրաժարվել ցուցմունքներ տալուց (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում դրել է գործով մյուս մեղադրյալների՝ ցուցմունք տալուց հրաժարվելու հանգամանքը: Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանը, անտեսելով մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձանց պաշտպանության իրավունքը, անմեղության կանխավարկածի սկզբունքը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով նրանց տրված երաշխիքները, սույն գործով մյուս մեղադրյալների կողմից իրենց դատավարական իրավունքից օգտվելը գնահատել է որպես մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի հավանական անօրինական արարք կատարելու հիմնավորում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե հատկապես որ փաստական հանգամանքն է հիմք տվել գալու այն եզրահանգման, որ Ն.Քրմոյանի և Ա.Թարվերդյանի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը պայմանավորված է եղել մեղադրյալ Ա.Ջյաբլիցկի ազատության մեջ լինելու և նշված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի կողմից ընդհանրապես, իսկ տվյալ դեպքում՝ գործով անցնող մյուս մեղադրյալների կողմից մասնավորապես, ցուցմունք տալուց հրաժարվելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմք դիտարկելը և դրանով պայմանավորված՝ անձին ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված ազատության իրավունքից զրկելն իրավաչափ չէ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա փաստարկը չէր կարող դիտվել որպես Ա.Ջյաբլիցկի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմք, քանի որ այն ակնհայտորեն հակասում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված պաշտպանության իրավունքին և անմեղության կանխավարկածի սկզբունքին:

Լռություն պահպանելու մեղադրյալի իրավունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Աշոտ Առաքելյանի* վերաբերյալ որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է հայտնել, որ «Կալանավորման կիրառման հիմքերի էության և նպատակային նշանակության ոչ ճիշտ ընկալումը հանգեցրել է այն բանին, որ ըստ էության տարբերություն չի դրվել մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու և նրա պաշտպանության իրավունքի միջև: Մեղադրյալի կողմից

իր դատավարական իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի և հիմք հանդիսանալ ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու համար» (տե՛ս Աշոտ Գագիկի Առաքելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԿԳ/0580/06/09 որոշման 19-րդ կետը):

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված և պատճառաբանված չէ մեղադրյալ Ա.Ջյաբլիցևի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը: Այդ որոշման հիմքում դրված հիմնավորումները չեն բխում կալանավորման թույլատրելի հիմքերը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Ջյաբլիցևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չհիմնավորված, չպատճառաբանված և ոչ իրավաչափ դատական ակտի կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

18. Նոր քննությամբ անհրաժեշտ է, կալանավորման միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերից ելնելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական ստուգման ենթարկել մեղադրյալ Ա.Ջյաբլիցևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը մերժելու որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և հանգել համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Անդրեյ Արկադևիչ Ջյաբլիցևի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

39.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0045/14/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ն.ԱՎԱԳՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արտավազ Արտուշի Ծատուրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ դատախազ Ն.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում հարուցվել է թիվ 15100510 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2010 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ Արտավազ Արտուշի Ծատուրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի հունվարի 12-ի որոշմամբ թիվ 15100510 քրեական գործով Ա.Ծատուրյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ:

2011 թվականի փետրվարի 15-ին Ա.Ծատուրյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործն ուղարկվել է Երևանի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Ա.Ծատուրյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից: Նրա նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում՝ հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում:

3. 2013 թվականի մայիսի 24-ին ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս.Թորոսյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով դադարեցնել քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձ Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը՝ տեղափոխելով նրան արտահիվանդանոցային հարկադիր բուժման տարածքային հոգեբույժի հսկողության ներքո:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս.Թորոսյանի միջնորդությունը բավարարվել է, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխվել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ:

4. Դատախազ Ն.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ն.Ավագյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ դատախազ Ն.Ավագյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Նախաքննության մարմինը Ա.Ծատուրյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա, 2010 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 15.30-ի սահմաններում, Երևանի Խանջյան փողոցի հարևանությամբ գտնվող «Վերնիսաժ» կոչվող տոնավաճառում պատահաբար հանդիպելով իր նախկին համադասարանցի Արտաշես Վարդանյանին և վերհիշելով նրա կողմից ուսանողական տարիներին

ստորացումների ենթարկվելու հանգամանքը, այնուհետև վրեժ լուծելու ցանկությունից ծագած անձնական անբարյացակամ փոխհարաբերությունների հողի վրա, վերջինին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, դանակով հարվածել է Ա.Վարդանյանի գլխին, կրծքավանդակին, պարանոցին և թիկունքին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ միջամտել է Ա.Վարդանյանի բարեկամ Հայկ Հարությունյանը և կանխել նրա հետագա գործողությունները, իսկ այդ ընթացքում նշված հարվածներով Ա.Վարդանյանի առողջությանը պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս (տե՛ս նյութեր, թերթեր 6-7):

7. Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 4-ի որոշմամբ Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ՝ արձանագրելով, որ «(...) ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ս.Թորոսյանի միջնորդությունը (...) հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Արտավազ Ծատուրյանը երկարատև գտնվում է կոմպենսացված վիճակում, չունի ագրեսիվ նկատառումներ շրջապատի նկատմամբ, ներկայում վտանգավոր չէ հասարակության և շրջապատի համար, նրա մոտ վարքային և աֆեկտիվ խանգարումներ չեն հայտնաբերվում, այսինքն՝ նրա առողջական վիճակը բարելավվել է և վերացել կիրառվող բժշկական բնույթի հարկադրական միջոցի տվյալ տեսակի՝ ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժման հետագա կիրառման անհրաժեշտությունը» (տե՛ս նյութեր, թերթ 24):

8. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ «(...) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու և տեսակը փոփոխելու դեպքում օրենսդիրը չի նախատեսում, որ դատարանը պետք է հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը: Այդ դեպքում միակ պայմանը բժշկական հաստատության եզրակացության առկայությունն է» (տե՛ս նյութեր, թերթ 74):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջը, կայացված դատական ակտով թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական եզրակացության հիման վրա դատարանը կարող է փոփոխել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը, այսինքն՝ դատարանը նշված հարցը քննարկելիս ունի հայեցողական լիազորություն և չպետք է հիմնվի միայն բժշկական եզրակացության վրա:

Բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Ծատուրյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առանձնապես ծանր

հանցագործություն, ինչը վկայում է վերջինիս անձի և կատարած հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին: Անձի վտանգավորության աստիճանը որոշվում է ոչ միայն նրա ներկա հոգեկան վիճակով, այլ նաև նրա կողմից կատարված հանցագործության բնույթով:

Վերոգրյալից բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ հարկադիր բուժումը փոփոխելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, այդ թվում՝ արարքի ծանրության աստիճանը, բուժման ժամանակահատվածը, արտահիվանդանոցային հսկողության պայմաններում անկանոն բուժման, բժշկական հսկողության բացակայության և նոր հանցագործություն կատարելու հավանականությունը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածով սահմանված՝ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու, փոփոխելու և դադարեցնելու հիմքերի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. բժշկական հաստատության եզրակացության հիման վրա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին միջնորդությունը քննելիս դատարանն օժտված է արդյո՞ք հայեցողական լիազորությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա:

2. Հանրության համար վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ դատարանը կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝

«Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ դատարանը կարող է նշանակել այն անձի նկատմամբ՝

1) ով սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նախատեսված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում.

(...)

2. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց նկատմամբ նշանակվում են միայն այն դեպքերում, երբ հոգեկան խանգարումները կապված են այդ անձանց կողմից այլ էական վնաս պատճառելու հնարավորության կամ իր կամ այլ անձանց համար վտանգավորության հետ:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են՝

1) հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը.

2) հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը.

3) հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

2. Անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխության դեպքում, երբ վերանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, դատարանը բժշկական հաստատության եզրակացության հիման վրա որոշում է կայացնում դրանց կիրառումը դադարեցնելու մասին:

3. Բժշկական հաստատության եզրակացության հիման վրա դատարանը կարող է որոշում կայացնել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին»:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները քրեական օրենսգրքով նախատեսված պետական հարկադրանքի միջոցներ են, որոնք կարող են նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված անձանց նկատմամբ՝ նրանց բուժելու և նոր հանրորեն վտանգավոր արարքների կատարումը կանխելու նպատակով: Ընդ որում, այդ միջոցների կիրառման հիմքը նշված անձանց կողմից հանրորեն վտանգավոր արարք կատարելն է: Այլ կերպ, եթե առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված հիմքերից մեկը, ապա դատարանը որոշում է կայացնում ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներից որևէ մեկը կիրառելու մասին: Միաժամանակ հարկ է շեշտել, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելը դատարանի իրավունքն է: Այսինքն՝ հոգեկան հիվանդության կամ խանգարման առկայությունն ինքնին չի ենթադրում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների պարտադիր նշանակում, դրանք նշանակվում են միայն այն դեպքում, երբ անձը քրեորեն պատժելի արարք կատարելուց հետո

վտանգ է ներկայացնում իր կամ շրջապատի համար:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Շուքուրյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է հայտնել է այն մասին, որ «(...) անձի մեղսունակությունն օրենսդիրը կապում է նրա կողմից իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը, դրա վտանգավորությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու ունակության հետ: Ընդ որում, օրենսդիրը հստակ տարանջատում է երկու խումբ անձանց՝

1) հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին անմեղսունակության վիճակում գտնվող անձինք, ովքեր քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէին կարող գիտակցել իրենց գործողությունների (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

2) անձինք, ովքեր հանցանքը կատարել են մեղսունակության վիճակում, սակայն մինչև դատարանի կողմից դատավճիռ կայացնելը հիվանդացել են հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրանց իրենց գործողությունների (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից:

Վերը նշված անձանց նկատմամբ կիրառվում են տարբեր իրավական հետևանքներ՝ եթե առաջին դեպքում անձինք ենթակա չեն քրեական պատասխանատվության, ապա երկրորդ դեպքում անձինք չեն ազատվում քրեական պատասխանատվությունից:

(...) [Ե]շված անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթները ևս տարբեր են: Այսպես, անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում առկա իրավադրույթներով, իսկ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ գլխում» (տե՛ս Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի թիվ Ե-ԲԲԳ/0350/01/08 որոշման 17-18-րդ կետերը):

Նշված որոշման մեջ մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ փորձագետները խորհուրդ են տվել Հ.Շուքուրյանի հարկադրական բուժումն իրականացնել ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեբուժական բաժանմունքի տեսակի ընտրության հարցում փորձագետների առաջարկությունները կրում են խորհրդատվական բնույթ, կարող են հաշվի առնվել, սակայն դատարանի համար պարտադիր չեն (...)» (տե՛ս Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի թիվ Ե-ԲԲԳ/0350/01/08 որոշման 29-րդ կետը):

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված քրեաիրավական դրույթների, ինչպես նաև Հ.Շուքուրյանի գործով ձևավորված իրավական դիրքորոշումների վերլուծությունից երևում է, որ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը քննարկելիս դատարանն ունի հայեցողական լիազորություն (հայեցողական լիազորության մասին *mutatis mutandis* տե՛ս Հմայակ Սիմոնի Գավթյանի վերաբերյալ գործով Վճարելի դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԳ/0126/01/12 որոշումը):

Վերահաստատելով Հ.Շուքուրյանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն ընդգծում է, որ դատարանը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելիս անձի հոգեկան հիվանդության հետ միասին պետք է հաշվի առնի կատարված արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը և դրանց համակցված գնահատման արդյունքում որոշում կայացնի ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակներից որևէ մեկը նշանակելու մասին (արարքի բնույթի ու հանրության համար վտանգավորության աստիճանի մասին *mutatis mutandis* տե՛ս Գարուշ Նորիկի Մադաթյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշումը):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելիս դատարանը համանման կերպով օժտված է հայեցողական լիազորությամբ: Հայեցողական լիազորության առկայության մասին է վկայում օրենսդրի կողմից օգտագործված «կարող է» եզրույթը, որի մեկնաբանության արդյունքում Վճարելի դատարանը գտնում է, որ դատարանը կաշկանդված չէ բժշկական հաստատության եզրակացությամբ: Այլ խոսքով՝ բժշկական հաստատության եզրակացությունը դատարանի համար պարտադիր բնույթ չունի և ենթակա է գնահատման նույն հոդվածում թվարկված մյուս հանգամանքների հետ մեկտեղ: Գնահատման արդյունքում դատարանը կարող է չհամաձայնվել եզրակացության հետ և չփոփոխել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը կամ փոփոխել այն, սակայն նշանակել բժշկական հաստատության եզրակացության մեջ նշված տեսակից տարբերվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակ:

Վճարելի դատարանի այս եզրահանգումը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համեմատական վերլուծությունից: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասում, ի տարբերություն 3-րդ մասում առկա ձևակերպման, օրենսդիրը կատեգորիկ կերպով սահմանել է, որ անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխության դեպքում, երբ վերանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, դատարանը բժշկական հաստատության եզրակացության հիման վրա որոշում է կայացնում դրանց կիրառումը դադարեցնելու մասին: Այս դեպքում, փաստորեն, օրենսդիրը դատարանին հայեցողություն դրսևորելու լիազորությամբ չի օժտել՝ սահմանելով, որ եթե բժշկական հաստատության եզրակացությամբ հաստատվում է, որ անձն առողջացել է կամ նրա հիվանդության

բնույթն այնպիսի փոփոխության է ենթարկվել, որ վերացել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, ապա դատարանը որոշում է կայացնում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը դադարեցնելու մասին: Այլ խոսքով՝ նման իրավիճակում բժշկական հաստատության եզրակացությունը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը դադարեցնելու պարտադիր հիմք է, և դատարանը պարտավոր է դադարեցնել հարկադիր բուժումը:

15. Ընդհանրացնելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու դեպքում, այնպես էլ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն քննելիս դատարանը կաշկանդված չէ բժշկական հաստատության եզրակացությամբ:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդության քննարկման յուրաքանչյուր դեպքում դատարանը բժշկական հաստատության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ պետք է քննարկման առարկա դարձնի և հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը: Մասնավորապես, դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի այն հարցը, թե ինչ օբյեկտի, ինչպիսի հասարակական հարաբերությունների դեմ է ուղղված եղել անձի ոտնձգությունը: Օրինակ՝ մարդու կյանքի և առողջության դեմ կատարված հանրորեն վտանգավոր արարքը կարող է վկայել այն կատարած անձի ավելի բարձր վտանգավորության մասին:

Դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի նաև հանրորեն վտանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը: Մասնավորապես՝ դատարանը պետք է քննարկի նրա նկատմամբ իրականացվող բուժման տևողությունը, պայմանները, նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը: Դատարանը պետք է ուշադրություն դարձնի նաև այն հանգամանքների վրա, թե արդյոք տվյալ անձը նախկինում հանրորեն վտանգավոր արարք կատարել և համապատասխան բուժում ստացել է, թե ոչ: Այս հանգամանքների պարզումը ևս կարող է էական նշանակություն ունենալ անձի՝ իր կամ շրջապատի համար վտանգավորության աստիճանը պարզելու հարցում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքների համատեղ գնահատմամբ միայն դատարանը կարող է հիմնավորված որոշում կայացնել անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու կամ անփոփոխ թողնելու մասին:

16. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմինն Ա.Ծատուրյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության մարմնի մեկ այլ որոշմամբ Ա.Ծատուրյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ (տե՛ս սույն որոշման 1-ին, 6-րդ կետերը):

Առաջին ստյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ

Ա.Ծատուրյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից, և նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ նշանակվել է հարկադիր բուժում հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 4-ի որոշմամբ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա.Թորոսյանի միջնորդության հիման վրա Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ (տե՛ս սույն որոշման 3-րդ, 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ նշելով, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու և տեսակը փոփոխելու դեպքում օրենսդիրը չի նախատեսում, որ դատարանը պետք է հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը: Այդ դեպքում միակ պայմանը բժշկական հաստատության եզրակացության առկայությունն է (տե՛ս սույն որոշման 4-րդ, 8-րդ կետերը):

17. Սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բժշկական հաստատության եզրակացության հիման վրա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին միջնորդությունը քննելիս դատարանն օժտված է հայեցողական լիազորությամբ:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի փոփոխության միակ պայմանը բժշկական հաստատության եզրակացության առկայությունն է, հիմնավորված չէ և ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի դրույթների սխալ մեկնաբանման արդյունք է:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական օրենքի սխալ մեկնաբանությունը, որը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող որոշման կայացմանը և կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արտավագդ Արտուշի Ծատուրյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԵԿԳ/0045/14/13

Դատավոր՝

Ս.Ավետիսյան

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2013 թվականի հոկտեմբերի 18-ի կայացրած դատական ակտի պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի վերաբերյալ.

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում հարուցվել է թիվ 15100510 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2010 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ Արտավազ Արտուշի Ծատուրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի հունվարի 12-ի որոշմամբ թիվ 15100510 քրեական գործով Ա.Ծատուրյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ:

2011 թվականի փետրվարի 15-ին Ա.Ծատուրյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործն ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Ա.Ծատուրյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից: Նրա նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում՝ հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում:

3. 2013 թվականի մայիսի 24-ին ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս.Թորոսյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով դադարեցնել քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձ Ա.Ծատուրյանի նկատմամբ

կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը՝ տեղափոխելով նրան արտահիվանդանոցային հարկադիր բուժման տարածքային հոգեբույժի հսկողության ներքո:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս.Թորոսյանի միջնորդությունը բավարարվել է, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխվել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ:

4. Դատախազ Ն.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ն.Ավագյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ դատախազ Ն.Ավագյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

6. Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է: Արտավագդ Արտուշի Ծատուրյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 4-ի որոշմամբ Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ՝ արձանագրելով, որ «(...) ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ս.Թորոսյանի միջնորդությունը (...) հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Արտավագդ Ծատուրյանը երկարատև գտնվում է կոմպենսացված վիճակում, չունի ագրեսիվ նկատառումներ շրջապատի նկատմամբ, ներկայում վտանգավոր չէ հասարակության և շրջապատի համար, նրա մոտ վարքային և աֆեկտիվ խանգարումներ չեն հայտնաբերվում, այսինքն՝ նրա առողջական վիճակը բարելավվել է և վերացել կիրառվող բժշկական բնույթի հարկադրական

միջոցի տվյալ տեսակի՝ ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժման հետագա կիրառման անհրաժեշտությունը» (տե՛ս նյութեր, թերթ 24):

8. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ «(...) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու և տեսակը փոփոխելու դեպքում օրենսդիրը չի նախատեսում, որ դատարանը պետք է հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը: Այդ դեպքում միակ պայմանը բժշկական հաստատության եզրակացության առկայությունն է» (տե՛ս նյութեր, թերթ 74):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջը, կայացված դատական ակտով թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական եզրակացության հիման վրա դատարանը կարող է փոփոխել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը, այսինքն՝ դատարանը նշված հարցը քննարկելիս ունի հայեցողական լիազորություն և չպետք է հիմնվի միայն բժշկական եզրակացության վրա:

Բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Ծատուրյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առանձնապես ծանր հանցագործություն, ինչը վկայում է վերջինիս անձի և կատարած հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին: Անձի վտանգավորության աստիճանը որոշվում է ոչ միայն նրա ներկա հոգեկան վիճակով, այլ նաև նրա կողմից կատարված հանցագործության բնույթով:

Վերոգրյալից բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ հարկադիր բուժումը փոփոխելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, այդ թվում՝ արարքի ծանրության աստիճանը, բուժման ժամանակահատվածը, արտահիվանդանոցային հսկողության պայմաններում անկանոն բուժման, բժշկական հսկողության բացակայության և նոր հանցագործություն կատարելու հավանականությունը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Գատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումը

11. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ բերված դատախազ Ն.Ավագյանի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով ներկայացված նյութերին և վճռաբեկ բողոքը բավարարելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չեմ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման պատճառաբանական

մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

12. Ինչպես երևում է Վճռաբեկ դատարանի որոշումից, բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածով սահմանված՝ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու, փոփոխելու և դադարեցնելու հիմքերի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *բժշկական հաստատության եզրակացության հիման վրա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին միջնորդությունը քննելիս դատարանն օժտված է արդյո՞ք հայեցողական լիազորությամբ:*

Վճռաբեկ դատարանը, մեջբերելով ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ, 98-րդ, 101-րդ հոդվածները, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի առանձնահատկություններին վերաբերող Հ.Շուքուրյանի գործով 2010 թվականի մայիսի 4-ին կայացրած ԵԲԲԳ/0350/01/08 որոշումը, բավարարել է դատախազի բողոքը՝ հանգելով հետևյալ եզրահանգումների.

1) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելը և միջոցի տեսակը փոփոխելը դատարանի իրավունքն է (որոշման 12-րդ, 14-րդ կետեր),

2) դատարանը որոշում ընդունելիս կաշկանդված չէ բժշկական հաստատության եզրակացությամբ:

Բժշկական հաստատության եզրակացությունը դատարանի համար պարտադիր բնույթ չունի և ենթակա է գնահատման ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված մյուս հանգամանքների՝ կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը հաշվի առնելու հետ մեկտեղ: Գնահատման արդյունքում դատարանը կարող է չհամաձայնվել եզրակացության հետ և չփոփոխել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը կամ փոխել այն, սակայն նշանակել բժշկական հաստատության եզրակացության մեջ նշված տեսակից տարբերվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակ:

Վճռաբեկ դատարանը փաստարկել է, որ տվյալ եզրահանգումը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերից (որոշման 14-րդ կետ),

3) «...Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդության քննարկման յուրաքանչյուր դեպքում դատարանը բժշկական հաստատության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ պետք է քննարկման առարկա դարձնի և հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության

աստիճանը, ինչպես նաև անձի նկատմամբ իրականացված բուժման պայմանները, տևողությունը, նրա ներկա հոգեկան վիճակը: Նշված հանգամանքների համատեղ գնահատմամբ միայն դատարանը կարող է հիմնավորված որոշում կայացնել անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու կամ անփոփոխ թողնելու մասին» (որոշման 15-րդ կետ),

4) «Բժշկական հաստատության եզրակացության հիման վրա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին միջնորդությունը քննելիս դատարանն օժտված է հայեցողական լիազորությամբ: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի փոփոխության միակ պայմանը բժշկական հաստատության եզրակացության առկայությունն է, հիմնավորված չէ և ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի դրույթների սխալ մեկնաբանման արդյունք» (որոշման 17-րդ կետ):

13. Ընդհանրացնելով Վճռաբեկ դատարանի որոշման 12-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ կետերում շարադրված վերլուծությունը և արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հարկ եմ համարում նշել, որ Վճռաբեկ դատարանի որոշման առանձին պատճառաբանությունների և եզրահանգումների վերաբերյալ ունեմ վերապահումներ:

13.1. Նախ և առաջ գտնում եմ, որ իրավունքի զարգացման գործառույթի արդյունավետ իրացման համատեքստում սկզբունքային նշանակություն ունեն մի շարք իրավական հարցեր, մասնավորապես՝

ա) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների և քրեական պատժի հարաբերակցությունը,

բ) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի նպատակները,

գ) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների իրավաբանական և բժշկական չափորոշիչները,

դ) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու, փոփոխելու և դադարեցնելու հիմքերն ու պայմանները (նախադրյալները),

ե) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու քրեաիրավական և քրեադատավարական նորմերի առանձնահատկությունները:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների ինստիտուտին առնչվող վերոհիշյալ հարցադրումների պարզաբանումը, իմ կարծիքով, ունի սկզբունքային նշանակություն, ուստի հարկ եմ համարում համառոտ անդրադառնալ դրանց էությանը:

13.2. Մարդու իրավունքները, անկախ նրա առողջական վիճակից, իրավական կարգավիճակից և այլ հանգամանքներից, բարձրագույն սոցիալական արժեքներ են, իսկ դրանց արդյունավետ պաշտպանությունը պետության հիմնական պարտականություններից է:

Մարդու հիմնարար անձնական բարիք համարվող հոգեկան առողջության և հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են 2004 թվականի մայիսի 25-ին ընդունված «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով:

Նշված օրենքի 5-րդ հոդվածում սահմանված է՝

«Հոգեկան առողջության պահպանումը ներառում է՝

1) հոգեկան առողջության բարելավումն ու հոգեկան խանգարումների կանխարգելումը.

2) հոգեկան խանգարումներով տառապող անձանց անհրաժեշտ բազմակողմանի և մատչելի բժշկական օգնության, խնամքի ու օգնության այլ ձևերի ապահովումը.

3) հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ հասարակության կողմից համապատասխան վերաբերմունքի, առաջին հերթին՝ հանդուրժողականության, բարյացակամության ձևավորումը, որը, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ և 16-րդ հոդվածների, բացառում է որևէ խտրականություն»:

Նույն օրենքի 6-րդ հոդվածում սահմանված է, որ հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը երաշխավորվում է օրենքի, մարդասիրության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:

Այդ տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն հոգեկան առողջության ոլորտում միջազգային իրավունքի նորմերը, որոնք սահմանված են մի շարք միջազգային փաստաթղթերում (օրինակ՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված թիվ 46/119 ՄԱԿ-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները»):

13.3. ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ, 5-րդ և 10-րդ հոդվածներից հետևում է, որ «քրեական պատիժ» և «քրեախրավական ներգործության այլ միջոցներ» եզրույթները օգտագործվում են ինքնուրույն և ունեն իրարից տարբերվող բովանդակություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2. Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

Չնայած այն հանգամանքի, որ քրեախրավական ներգործության այլ միջոցների, այդ թվում՝ բժշկական բնույթի հարկադրանքների միջոցների հասկացությունը և նպատակները օրենքում սահմանված չեն, այնուամենայնիվ ակնհայտ է, որ քրեական իրավունքի տվյալ ինստիտուտների նպատակները էականորեն տարբերվում են միմյանցից:

Ի տարբերություն քրեական պատժի նպատակների՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների հիմնական նպատակներն են՝

ա) հոգեկան հիվանդի բուժումը կամ հոգեկան վիճակի այնպիսի փոփոխությունը, որը վկայում է նրա՝ հանրության համար վտանգավոր չլինելու մասին.

բ) հոգեկան հիվանդի կողմից հանրորեն վտանգավոր նոր արարքի կատարման կանխումը.

գ) հոգեկան հիվանդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

դ) հոգեկան հիվանդի սոցիալական ռեադապտացիան:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ արձանագրենք, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նպատակները կարելի է բաժանել երկու խմբի՝ բժշկական և իրավաբանական բնույթի:

Հարկ է ընդգծել, որ վերը նշված նպատակները բացառում են հոգեկան հիվանդի նկատմամբ պատժիչ միջոցների կիրառումը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նպատակը ոչ թե մեղքի քավումն է, այլ հիվանդի հարկադիր բուժումն է:

13.4. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝

«Դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով»:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և մյան այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը: Ուղղման միջոցների առանձին տեսակներ անչափահասների համար կրում են պարտադիր բնույթ»:

2. Ուղղման միջոցները կիրառվում են՝ հաշվի առնելով պատժի տեսակը, դատապարտյալի անձը և պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագիծը, կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցագործությանը, պատժի ժամկետը, ուղղիչ հիմնարկի տեսակը, ինչպես նաև պատժի կատարումը տարբերակելու ու անհատականացնելու սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ:

3. Սոցիալական, հոգեբանական, իրավական և դաստիարակչական աշխատանքներին դատապարտյալի մասնակցությունը հաշվի է առնվում նրա ուղղման աստիճանը որոշելիս, ինչպես նաև նրա նկատմամբ սահմանված կարգով խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելիս»:

Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նախատեսված արարքը անմեղսունակության վիճակում կատարած անձի ուղղումը և ուղղման միջոցները օրենսդրորեն նախատեսված չեն, ինչը միանգամայն տրամաբանական է և արդարացի:

Այլ խոսքով՝ հոգեկան հիվանդների նկատմամբ սահմանվում են բուժիչ վերականգնողական, այլ ոչ թե պատժողական միջոցներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ փաստենք, որ բժշկական բնույթի հարկադրանքի

միջոցների կիրառումը չի կարող հետապնդել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված քրեական պատժի նպատակները: Ուստի, կիրառելի չեն նաև նույն օրենսգրքի 61-րդ հոդվածում սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

13.5. Այսպիսով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները քրեական օրենսգրքով նախատեսված պետական հարկադրանքի յուրահատուկ տեսակ են, որոնք կարող են նշանակվել, փոփոխվել կամ վերացվել վերոնշյալ նպատակներով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այլ խոսքով՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները բժշկական օգնության և անվտանգության ապահովման միջոցներ են, որոնք կարող են կիրառվել այն անձանց նկատմամբ, ում հոգեկան խանգարումները կապված են այդ անձանց կողմից այլ էական վնաս պատճառելու հնարավորության կամ իր, կամ այլ անձանց համար վտանգավորության հետ (ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդված):

Ընդ որում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակները ընտրելու, դրանք փոփոխելու կամ վերացնելու հարցում առաջնային նշանակություն ունի անձի հոգեկան վիճակը, այլ ոչ թե կատարված արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

14. Հաջորդ իրավական հարցը հետևյալն է. որոնք են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման, փոփոխման և դադարեցման հիմքերն ու պայմանները:

Չարգացնելով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ Հ.Շուքուրյանի գործով որոշման մեջ բերված եզրահանգումները՝ Վճարելի դատարանը սույն վարույթով կայացրած որոշմամբ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

ա) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հիմքը նշված անձանց կողմից հանրորեն վտանգավոր արարք կատարելն է:

Վճարելի դատարանի որոշման մեջ առկա է նաև հետևյալ ձևակերպումը. «Այլ կերպ՝ եթե առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված հիմքերից մեկը, ապա դատարանը որոշում է կայացնում ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներից որևէ մեկը կիրառելու մասին»:

Վերոնշյալ ձևակերպումից պարզ չէ, թե որն է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների հիմքը՝ հանրորեն վտանգավոր արարք կատարելը, թե օրենքում սահմանված հոգեկան հիվանդությամբ պայմանավորված անձի հոգեկան վիճակը (օրենքով արգելված արարքը կատարելու պահին, կամ դրա կատարումից հետո):

բ) Վճարելի դատարանն արձանագրել է, որ «... դատարանը կաշկանդված չէ բժշկական հաստատության եզրակացությամբ, այդ եզրակացությունը դատարանի համար պարտադիր բնույթ չունի և ենթակա է գնահատման ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածում թվարկված մյուս հանգամանքների հետ մեկտեղ»:

գ) դատական ակտերը բեկանելով և գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ նոր քննության, Վճարելի դատարանը պատճառաբանել է, որ

Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը *դադարեցնելու և տեսակը փոխելու* դեպքում օրենսդիրը չի նախատեսել, որ դատարանը հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, ճիշտ չէ:

14.1. Վճարելի դատարանի վերոնշյալ եզրահանգումների վերաբերյալ հարկ են համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ անձի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ չորս դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) ով սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նախատեսված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում.

2) ում մոտ հանցանքը կատարելուց հետո առաջացել է պատժի նշանակումը կամ կատարումն անհնար դարձնող հոգեկան խանգարում.

3) ով հանցանք է կատարել սահմանափակ մեղսունակության վիճակում.

4) ով հանցանք է կատարել և ճանաչվել է ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցող:

ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

2. Անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխության դեպքում, երբ վերանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, դատարանը բժշկական հաստատության եզրակացության հիման վրա որոշում է կայացնում դրանց կիրառումը դադարեցնելու մասին:

3. Բժշկական հաստատության եզրակացության հիման վրա դատարանը կարող է որոշում կայացնել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին»:

14.2. ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ այդ հոդվածում սահմանված են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների՝

ա) նշանակման կարգը,

բ) դադարեցման կարգը,

գ) միջոցի տեսակը փոխելու կարգը:

Այլ խոսքով՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման, փոփոխման և դադարեցման կարգը տարանջատված է և հանգում է հետևյալի.

1) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները **նշանակելիս** դատարանը պարտավոր է հաշվի առնել երկու հանգամանք՝ անձի հոգեկան հիվանդությունը և նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը (քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մաս):

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց *նշանակելիս*, բացի անձի հոգեկան հիվանդությունից, նաև արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը հաշվի առնելու օրենսդրական պահանջը միանգամայն արդարացի

է, քանի որ, ինչպես արդեն նշվել է, հոգեկան հիվանդության կամ խանգարման առկայությունը ինքնին չի ենթադրում այդպիսի միջոցների պարտադիր նշանակում: Դրանք նշանակվում են միայն այն դեպքում, երբ անձը քրեորեն պատժելի արարք կատարելուց հետո վտանգ է ներկայացնում իր կամ շրջապատի համար:

2) ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների **դադարեցնելու** հիմքը, դա անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխությունն է, երբ վերանում է այդպիսի միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը: Այդ դեպքում դատարանը *պարտավոր* է, բժշկական հաստատության եզրակացության հիման վրա, որոշում կայացնել դրանց կիրառումը դադարեցնելու մասին:

3) ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը դատարանը *կարող է փոփոխել* բժշկական հաստատության եզրակացության հիման վրա:

Դժվար չէ նկատել, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի վերացումը կամ փոփոխումը իրականացվում է միայն բժշկական հաստատության եզրակացության հիման վրա: Տարբերությունը կայանում է նրանում, որ կիրառված միջոցի *դադարեցումը* դատարանի համար պարտադիր պայման է, իսկ միջոցի *փոփոխումը* դատարանի իրավունքն է:

Արդյունքում ստացվում է, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները *դադարեցնելու* համար բժշկական հաստատության եզրակացությունը դատարանի համար պարտադիր հիմք է, իսկ նշանակված միջոցը *փոփոխելու* համար՝ ոչ: Դա, իմ կարծիքով, իրավաչափ չէ:

Փաստորեն, հարկադրանքի միջոցը դադարեցնելու և փոփոխելու դեպքում իրավաբանական չափորոշիչ՝ կատարված արարքի բնույթի և վտանգավորության աստիճանի մասին օրենքում նշում չկա:

Այլ խոսքով՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի վերացման կամ փոփոխման դեպքում կատարած արարքի որակական և քանակական բնութագրող հատկանիշները նշանակություն չունեն:

14.3. Համակարգային վերլուծության ենթարկելով մեջբերված իրավական նորմերը՝ գտնում եմ, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կարող են նշանակվել **իրավաբանական** (քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելը) և **բժշկական** (հոգեկան խանգարման առկայությունը) հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ փաստում եմ, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու միակ հիմքը հոգեկան հիվանդի հանրության վտանգավորությունն է, ով քրեորեն հետապնդելի արարք է կատարել:

Տվյալ եզրահանգումը բխում է մաս ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասից, որում սահմանված են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու պայմանները, դրանք են՝ ա) հոգեկան խանգարումները պետք է կապված լինեն այդ անձանց կողմից այլ էական վնաս պատճառելու հնարավորության հետ, կամ բ) իր կամ այլ անձանց համար վտանգավորության հետ:

Եթե այդպիսի վտանգավորությունը բացակայում է, անձի նկատմամբ

բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակվել չեն կարող (ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մաս):

14.4. Հոգեկան վիճակով պայմանավորված անձանց հանրային վտանգավորությունը բնութագրվում է իրավաբանական և բժշկական չափորոշիչներով:

Իրավաբանական չափորոշիչն արտացոլում է կատարած արարքի ծանրությունը և հանրության համար վտանգավորության աստիճանը, հիվանդի վարքագիծը մինչև արարքի կատարումը և դրանից հետո, նրա սոցիալ-հոգեբանական կողմնորոշումները և այլն:

Բժշկական չափորոշիչը բնութագրվում է հոգեկան հիվանդության կլինիկական ձևը՝ դրա խորությամբ և բարդությամբ, հիվանդության ընթացքով և այլն: Մի խոսքով, հոգեկան հիվանդի հանրային վտանգավորությունը պահպանվում է նաև արարքը կատարելուց հետո, ուստի դուրս է գտնվում հանցակազմի շրջանակներից:

Պետք է արձանագրել, որ Խորհրդային Հանրապետությունների քրեական օրենսդրության հիմքում դրված էր «*արարքի*», այլ ոչ թե «*անձի*» հայեցակարգը, ուստի հաշվի էր առնվում արարքի իրական հանրային վտանգավորությունը, այլ ոչ թե հոգեկան հիվանդի պոտենցիալ վտանգավորությունը, ինչը, իմ կարծիքով, չի բխում խնդրո առարկային առնչվող ժամանակակից քրեական իրավունքի դրույթներից:

Հանրորեն վտանգավոր արարք կատարած հոգեկան հիվանդը պետք է իրավունք ունենա բժշկական բնույթի հարկադրանքի այն միջոցի նշանակմանը և փոփոխմանը, որը համապատասխանում է նրա հոգեկան վիճակին:

Մի խոսքով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները նշանակելու կամ փոփոխելու հարցում կարևոր նշանակություն ունի ոչ թե կատարած արարքի բնույթը, այլ դրա կատարումից հետո անձի հոգեկան վիճակի զարգացումը և իր կամ այլ անձանց համար վտանգավորության աստիճանը:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարելը դեռևս բավարար չէ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու համար:

Այլ խոսքով՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման իրավաբանական հիմքի առկայությունն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար նախապայման է այդպիսի միջոցներ նշանակելու համար: Անհրաժեշտ է նաև բժշկական չափորոշիչների առկայությունը (հոգեկան վիճակով վտանգավորություն ներկայացնելը):

14.5. Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի նշանակման և փոփոխման իրավական ռեժիմները տարբեր են, ուստի իմ անհամաձայնությունն են հայտնում Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած այն եզրահանգմանը, որ «*բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդության քննարկման յուրաքանչյուր դեպքում դատարանը բժշկական հաստատության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ պետք է քննարկման առարկա դարձնի և հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու հանրության*

համար վտանգավորության աստիճանը...»:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանի որոշման արդյունքում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները *նշանակելու* և *փոփոխելու* հիմքերն ու պայմանները նույնացվել են, ինչը չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածից:

Գտնում են, որ այս եզրահանգումը չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածից: Բանն այն է, որ հարկադրանքի միջոցի փոփոխումը չի կարող կախվածության մեջ դրվել կատարած արարքի բնույթից և վտանգավորության աստիճանից, քանի որ իր կամ շրջապատի համար վտանգավորություն ներկայացնելու հնարավորության աստիճանը ուղղակի կապված է անձի հոգեկան վիճակից, հիվանդության բնույթից, բուժման պայմաններից, տևողությունից և այլ բժշկական տվյալներից, այլ ոչ թե անցյալում կատարած քրեորեն պատժելի արարքի քրեախրավական հատկանիշներից:

Գտնում են նաև, որ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու կամ անփոփոխ թողնելու մասին դատարանի հետևությունը, բացի բժշկական տվյալներից, նաև կատարված արարքի բնույթով և վտանգավորության աստիճանով պայմանավորելը, կխոչընդոտի ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմանը, և բացի այդ, քրեական օրենքը և իրավակիրառ պրակտիկան լինելու են անորոշ և անկանխատեսելի:

Անձի հանրորեն վտանգավոր կատարած արարքը կարող է ծանր լինել, սակայն իր կամ շրջապատի համար վտանգավորության աստիճանը կոնկրետ դեպքում նվազ լինել, և հակաակը՝ ոչ մեծ կամ միջին ծանրության արարք կատարած անձի առողջանալը կամ դրական զարգացումը կարող են երկարատև լինել և ընդանալ բժշկական հարկադրանքի ամենախիստ միջոցի կիրառման պայմաններում:

Այսպիսով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակը փոփոխելիս պետք է հաշվի առնել ոչ թե կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այլ հոգեկան հիվանդությամբ պայմանավորված անձի վտանգավորության աստիճանը, որը փոփոխական է և կարող է բնութագրվել միայն բժշկական տվյալներով:

Հակառակ դեպքում, նշանակված հարկադրանքի միջոցը փոխելու մասին միջնորդությունը արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու պատրվակով միշտ կարելի է մերժել, ինչը չի նպաստելու իրավունքի արդյունավետ և արդարացի զարգացմանը:

14.6. Ինչ վերաբերում է բժշկական հաստատության եզրակացության գնահատման հարցին, հարկ են համարում նշել հետևյալը:

«Բժշկական հաստատության եզրակացության հիման վրա դատարանը կարող է» օրենսդրական արտահայտությունը նշանակում է, որ դատարանը նշանակված միջոցը փոխելու մասին միջնորդությունը կարող է մերժել միայն այն դեպքում, երբ համաձայն չէ եզրակացության հետ:

Փաստորեն, միակ ապացույցը, որ դատարանը պետք է գնահատի, դա բժշկական հաստատության եզրակացությունն է: Եզրակացության հետ չհամաձայնվելու դեպքում, կամ երբ այն հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ

հողվածով սահմանված կարգով կարող է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն: Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է հարցաքննել եզրակացությունը տված փորձագետների (252-րդ հոդված):

Հետևապես, այն դեպքերում, երբ բժշկական հաստատության եզրակացությունը կասկած չի հարուցում, դատարանը դրա հիման վրա պետք է բավարարի միջնորդությունը և նշանակված հարկադրանքի միջոցը փոխի:

Այլ խոսքով՝ հարկադրանքի միջոցը փոխելու մասին միջնորդությունը քննարկելիս օրենսդիրը դատարանին հայեցողական լիազորություն է վերապահել միայն բժշկական հաստատության եզրակացության, այլ ոչ թե արարքի բնույթի և վտանգավորության աստիճանի գնահատման արդյունքում հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու կամ մերժելու վերաբերյալ:

Հարկ է ընդգծել, որ բժշկական հաստատությունը կարող է դիմել դատարան՝ նշանակված հարկադրանքի միջոցը փոխելու ինչպես ավելի մեղմ, այնպես էլ ավելի խիստ տեսակով:

Չնայած այն հանգամանքի, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասում հիշատակվում է միայն բժշկական հաստատության եզրակացությունը, այնուամենայնիվ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցների շարքին են դասվում նաև այլ փաստաթղթերը:

Ուստի, անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին միջնորդությունը քննելիս դատարանը, բացի բժշկական հաստատության եզրակացությունից, պետք է գնահատի նաև վարություն առկա այլ տվյալները, որոնք ճիշտ որոշում կայացնելու համար կարող են էական նշանակություն ունենալ (օրինակ՝ բուժվող անձի վերաբերյալ բնութագիրը և այլն):

Այլ խոսքով՝ փաստաթղթերում առկա են այնպիսի տվյալներ, որոնք դուրս են գտնվում վերագրվող հանցակազմի շրջանակներից և բնութագրում են անձի հոգեկան վիճակի վտանգավորությունը՝ ինչպես իր, այնպես էլ այլ անձանց համար:

Հարկ է ընդգծել, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները նշանակելիս դատարանը չի կարող նշել դրա ժամկետը, քանի որ հայտնի չէ, թե երբ կվերանա այդ միջոցը վերացնելու անհրաժեշտությունը: Այդ հանգամանքը նույնպես վկայում է, որ հարկադրանքի միջոցը փոխելու հարցը քննելիս կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը սկզբունքային նշանակություն չունեն: Տարբեր երկրների քրեական օրենսդրության փորձի ուսումնասիրությունը (Ռուսաստանի Դաշնություն և այլն) վկայում է, որ բժշկական հաստատությունը բուժվող անձի հոգեկան վիճակը հետազոտում է պարբերաբար օրենքով սահմանված ժամկետում և լուծում է դատարան միջնորդություն ներկայացնելու հարցը՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

14.7. Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթը կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում առկա իրավադրույթներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասում

սահմանված է. «Բժշկական բնույթի հարկադրական միջոցները դատարանը կիրառում է այն անձանց նկատմամբ, ովքեր քրեական օրենքով չքույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար»:

Նույն օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե անձի առողջական վիճակի բարելավումից կամ լրիվ առողջանալուց հետո վերանում է բժշկական բնույթի հարկադրական միջոցի հետագա կիրառման անհրաժեշտությունը, դատարանը, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, առողջապահության մարմնի միջնորդությամբ քննում է բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու հարցը»:

Մեջբերված նորմերի և ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի համադրությունը վկայում է, որ նշանակված հարկադրանքի միջոցը փոխելու միջնորդությունը դատարանը քննում և որոշում է կայացնում բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Հարկադրանքի միջոցի վերացման կամ փոփոխման հիմքում դրված է անձի առողջության վիճակի բարելավումը կամ լրիվ առողջանալը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերում նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցներ նշանակելու, փոփոխելու և դադարեցնելու պայմանները տարբեր են, ուստի նշանակված միջոցի փոփոխելու հարցը չի կարող կախվածության մեջ դրվել հարկադրանքի միջոցը նշանակելու՝ օրենքով սահմանված պայմաններից:

15. Գործում առկա բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման մինչգերատեսչական հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի թիվ 12/13 վեզրակացության համաձայն՝ փորձաքննվող Ա.Ծատուրյանը կատարած արարքի համար գղջացել է, հասկացել է իր արարքի հակաօրինականությունը և պատժելիությունը: Հոգեբուժական կենտրոն 2011 թվականի օգոստոսի 5-ին ընդունվելուց հետո նա եղել է անհանգիստ, աֆեկտիվ, անկայուն վիճակում: Մոտ մեկ տարի 8 ամիս բուժման ընթացքում հիվանդի վիճակը բարելավվել է, երկար ժամանակ վերաբերման մտքեր չունի, հանգիստ է, հուզականային ոլորտը կայուն է, վարքը կանոնակարգված է, ագրեսիվ գործողություններ բուժման ընթացքում չեն եղել, ենթարկվում է բաժանմունքի ռեժիմին, նրա մոտ առկա չեն ագրեսիվ նկատառումներ և մտքեր: Հասարակության համար ներկայումս վտանգավոր չէ, ունի ռեալ պլաններ ապագայի վերաբերյալ:

Հանձնաժողովը հետազոտության արդյունքում հանգել է հետևյալ եզրակացության.

«1. Ա.Ծատուրյանը նախկինում տառապել է և ներկայումս տառապում է հոգեկան հիվանդությամբ՝ «Անձի և վարքի օրգանական խանգարում ինտելեկտի թերզարգացումով, սակավամտությամբ»:

2. Ա.Ծատուրյանը երկարատև գտնվում է կումպեսացված վիճակում, չունի ագրեսիվ նկատառումներ շրջապատի նկատմամբ: Ներկայումս վտանգավոր չէ հասարակության և շրջապատի համար: Ունի դրական վերաբերմունք հետագա

բուժման վերաբերյալ: Ա.Ծատուրյանի մոտ ներկայումս վարքային և աֆեկտիվ խանգարումներ չեն հայտնաբերվում:

3. Ուստի, Ա.Ծատուրյանի նկատմամբ հարկ է դադարեցնել հարկադիր բուժումը ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցի պայմաններում, և նշանակել արտահիվանդանոցային հարկադիր բուժում և հսկողություն տարածքային հոգեբուժի հսկողության ներքո» (տե՛ս նյութեր, թերթ 2-5):

Հարկ է նշել, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատության ենթարկելով վերը նշված փորձագիտական եզրակացությունը, այն համարելով հիմնավորված և պատճառաբանված, դրել են դատական ակտերի հիմքում:

Վճռաբեկ դատարանը հանձնաժողովի եզրակացության հիմնավորվածության վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

15.1. Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Ա.Ծատուրյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից, և նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց. նշանակվել է հարկադիր բուժում հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում (տե՛ս նյութեր, թերթ 11-12):

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 4-ի որոշմամբ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա.Թորոսյանի միջնորդության հիման վրա Ա.Ծատուրյանի նկատմամբ կիրառվող ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխել է հոգեբուժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ (տե՛ս նյութեր, թերթ 24):

15.2. Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ նշելով, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու և տեսակը փոփոխելու դեպքում օրենսդիրը չի նախատեսում, որ դատարանը պետք է հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը: Այդ դեպքում միակ պայմանը բժշկական հաստատության եզրակացության առկայությունն է (տե՛ս նյութեր, թերթ 74):

16. Սույն կարծիքում շարադրված վերլուծության արդյունքում գտնում են, որ դատախազ Ն.Ավագյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժվի, իսկ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշումը թողնվի օրինական ուժի մեջ, քանի որ այն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361¹-րդ, 369-րդ, 414²-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, չհամաձայնվելով դատավորների մեծամասնության կարծիքի հետ՝ մնում են

հատուկ կարծիքի՝

Դատախազ Ն.Ավագյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել: Արտավագդ Արտուշի Ծատուրյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի

միջոցի տեսակը փոխելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 4-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 2-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Դատավոր՝

ստորագրություն

40.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԼԳ/0008/15/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Գ.ՊԱՊՈՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի օգոստոսի 21-ի որոշման դեմ դատապարտյալ Վաղարշակ Էդիկի Գալոյանի պաշտպան Գ.Պապոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 4-ի դատավճռով Վաղարշակ Գալոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Վ.Գալոյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ պատժի սկիզբը հաշվվել է 2011 թվականի մարտի 16-ից:

Նշված դատավճիռը չի բողոքարկվել, և 2013 թվականի մայիսի 6-ին մտել է օրինական ուժի մեջ:

2. Դատապարտյալ Վ.Գալոյանը 2013 թվականի մայիսի 14-ին դիմել է Երևանի

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) և խնդրել կիրառել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, 69-րդ հոդվածի 3-րդ մասը և իր կալանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցել նշանակված պատժի ժամկետին՝ մեկ օրը մեկուկես օրվա դիմաց:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ դատապարտյալ Վ.Գալոյանի դիմումը մերժվել է:

3. Դատապարտյալ Վ.Գալոյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով վերոգրյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի օգոստոսի 21-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Վ.Գալոյանի պաշտպան Գ.Պապոյանը, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Վ.Գալոյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանցավոր համաձայնության գալով այլ անձանց հետ, ավազակային հարձակման միջոցով հափշտակել են Սուքիաս Հակոբյանին պատկանող 6.436.560 ՀՀ դրամ արժողությամբ «ԲՄՎ 520» մակնիշի 61 US 455 պետհամարանիշի ավտոմեքենան, այն է՝ 1999 թվականի մարտի 23-ին՝ ժամը 18-ի սահմաններում, ավտոմեքենա գնելու պատրվակով տանից դուրս են հանել Երևան քաղաքի Ջառուբյան փողոցի 28-րդ տան բնակիչ Ս.Հակոբյանին և նրան՝ իր «ԲՄՎ 520» մակնիշի ավտոմեքենայով տարել են Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի գերեզմանոցի մոտակայքում գտնվող ձորը, որտեղ դանակի սպառնալիքի տակ, Ս.Հակոբյանի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով հափշտակել են նշված ավտոմեքենան: Գրանից հետո Վ.Գալոյանը ավտոմեքենան տեղափոխել է Երևանի Նոր Նորքի 2-րդ զանգված, իսկ Ս.Հակոբյանի մոտ մնացած Ա.Համբարձումյանը և Հ.Ստեփանյանը պարանով և թափանցիկ կաշուն ժապավենով կապել են նրա ձեռքերը և բերանը, որից հետո նրան պահել են նշված ձորում, որպեսզի նա չկարողանա որևէ տեղ դիմել: Նույն օրը հափշտակված ավտոմեքենան տեղափոխել են Վրաստան, ապա Ռուսաստանի Դաշնություն:

6. Վ.Գալոյանը հանցագործությունը կատարելուց հետո գտնվել է հետախուզման մեջ, 2011 թվականի մարտի 16-ին հայտնաբերվել է և արգելանքի է վերցվել Ռուսաստանի Դաշնությունում, իսկ 2011 թվականի օգոստոսի 27-ին հանձնվել է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին:

7. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) իրեն մեղսագրվող արարքը Վ.Գալոյանը կատարել

է 1999թ. մարտի 23-ին, այսինքն, այն ժամանակ, երբ դեռևս գործել է 1961թ.-ի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը: Ամբաստանյալի կատարած արարքը նախկինում համապատասխանել է նույն օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչը նշված օրենսգրքի 7.1 հոդվածի համաձայն՝ հանդիսացել է ծանր հանցագործություն և պատժվել է ազատազրկմամբ 8-15 տարի ժամկետով՝ անձնական գույքի բռնագրավմամբ:

Սույն գործով ամբաստանյալի կողմից կատարած արարքը համապատասխանեցվել է 18.04.2003 թվականին ընդունված և նույն թվականի օգոստոսի 01-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, ինչը նշված օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույնպես հանդիսացել է ծանր հանցագործություն, սակայն պատժվել է ազատազրկմամբ 6-10 տարի ժամկետով՝ անձնական գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Այնուհետև, 01.07.2004 թվականի ՀՀ ԱԺ կողմից ընդունված օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան փոփոխվել և խստացվել է՝ նշված քրեական օրենքով արգելված արարքի համար որպես պատիժ է նախատեսվել դարձյալ ազատազրկումը 8-15 տարի ժամկետով՝ անձնական գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

(...) [Հ]աշվի առնելով, որ ներկայումս գործող օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում ամբաստանյալի կողմից 1999թ.-ին կատարած արարքի համար, ուստի նրա նկատմամբ պետք է պատիժ նշանակվի 18.04.2003 թվականին ընդունված, նույն թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված և մինչև 01.07.2004 թվականի ՀՕ 97-Ն օրենքով փոփոխված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի շրջանակներում, նկատի ունենալով, որ ներկայումս նմանատիպ արարք կատարելու համար նախատեսված պատժաչափը խստացված լինելով չի կարող տարածվել մինչ այդ կատարած հանցանքի վրա: Այսինքն, խստացնող օրենքը չի կարող հետադարձ ազդեցություն ունենալ Վաղարշակ Գալոյանի նկատմամբ նշանակվելիք պատժի վրա (...)) (տե՛ս Վաղարշակ Էդիկի Գալոյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 4-ի թիվ ԿԳ-1/0088/01/11 դատավճիռը):

8. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2013 թվականի հուլիսի 10-ի որոշման մեջ արձանագրել է. «(...) [Գ]ատասպարտյալ Վաղարշակ Գալոյանը հանցավոր արարքը կատարել է 1999թ.-ին: Վերջինս ձերբակալվել է 16.03.2011թ., իսկ նրա վերաբերյալ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 06.05.2013թ., հետևաբար դատարանը գտնում է, որ ինչպես հանցավոր արարքը կատարելու ժամանակ, այնպես էլ դատավճիռը կայացնելու պահին նրա նկատմամբ կիրառելի չէ կալանքի տակ պահելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվարկելու համար, քանի որ ինչպես հանցավոր արարքը կատարելու ժամանակ, այնպես էլ դատավճիռը կայացնելու ժամանակահատվածներում չի գործել և չէր գործում օրենքի այդ նորմը:

(...)[Թ]են 2003թ-ին ընդունվել է հանցանք կատարած անձի վիճակը բարելավող օրենք, այն է՝ մինչև դատավճռի օրինական ուժի ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց, որը գործել է 01.08.2003թ-ից մինչև 01.07.2004թ., իսկ դատապարտյալ Վաղարշակ Գալոյանը նախնական կալանքի տակ գտնվել է 16.03.2011թ-ից մինչև 06.05.2013թ., փաստորեն՝ օրենքի նշված դրույթը գործելու ժամանակահատվածում դատապարտյալը չի գտնվել կալանքի տակ, հետևաբար վերջինիս կալանքի տակ պահելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվելու հիմքեր չկան, ուստի դատարանը գտնում է, որ դատապարտյալ Վաղարշակ Գալոյանի դիմումն անհիմն է և ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, թերթ 9-10):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված է: Դատարանը ճիշտ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 12 և 13 հոդվածների պահանջները՝ իրավացիորեն հանգելով այն եզրակացության, որ ինչպես հանցավոր արարքը կատարելու ժամանակ, այնպես էլ դատավճիռը կայացնելու պահին Վաղարշակ Գալոյանի նկատմամբ կիրառելի չէ կալանքի տակ պահելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվարկելու համար, քանի որ այդ երկու ժամանակահատվածներում էլ չի գործել և ներկայումս էլ չի գործում օրենքի այդ նորմը:

Դատապարտյալի դիմումը քննելիս և լուծելիս Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեադատավարական օրենսդրության, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների պահանջները չեն խախտվել» (տե՛ս նյութեր, թերթ 36-38):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ դատապարտյալ Վ.Գալոյանի դիմումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները կայացվել են նյութական իրավունքի խախտմամբ: Մասնավորապես, խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված իրավանորմերի պահանջները:

Բողոքաբերը նշել է, որ Գ. Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ-1/0013/01/11 որոշմամբ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածները, հենվելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների վրա, արձանագրել է,

որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի բոլոր դեպքերում: Այդ պայմաններում ստորադաս դատարանների այն հետևությունը, որ նախնական կալանքի տակ պահելու ժամկետը՝ մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվելու կանոնը դատապարտյալ Վ.Գալոյանի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ ինչպես հանցավոր արարքը կատարելու, այնպես էլ դատավճիռ կայացնելու պահին այդ նորմը չի գործել, հիմնավորված չէ և չի համապատասխանում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Այնուհետև, վկայակոչելով այլ գործերով կայացված տարբեր դատական ակտեր՝ բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրությամբ սահմանված՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը նախնական կալանքի տակ պահելու ժամկետը՝ մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվելու վերաբերյալ դրույթը և այն կիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը դատարանները տարբեր կերպ են մեկնաբանում և կիրառում:

11. Հինք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բավարարել դատապարտյալ Վ.Գալոյանի դիմումը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի և մինչև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2004 թվականի հունիսի 9-ին ընդունված թիվ ՀՕ-97-Ն օրենքով փոփոխված ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ 2011 թվականի մարտի 16-ից մինչև Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 4-ի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը Վ.Գալոյանի կալանքի տակ գտնվելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվարկելով՝ պատժի ժամկետը կրճատել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված՝ «քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում» և «քրեական օրենքի հետադարձ ուժը» հասկացությունների ճիշտ մեկնաբանման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված են արդյո՞ք դատապարտյալ Վ.Գալոյանի նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նրա նկատմամբ նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

14. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որոնք կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չեն համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ թողություն հետևանքով որևէ քրեական հանցագործություն կատարելու մեջ, որը, այն կատարվելու պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հավասարապես չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի թեթև պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Արգելվում է նշանակվել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով: Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

2. Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ (...):»:

15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի* գործով շեշտել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ միայն օրենքով կարող է սահմանվել, թե որ արարքներն են համարվում հանցագործություն, և ինչ պատիժներ են նախատեսվում դրանց կատարման համար, ինչպես նաև արգելում է ի վնաս մեղադրյալի՝ հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառումը (տե՛ս *G. v France*, գանգատ թիվ 15312/89, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ, կետ 24):

Կոկլինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսված չէ միայն այն բանի համար, որ ի վնաս մեղադրյալի հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառումն արգելվի: Այն ընդհանուր առմամբ ամրագրում է նաև այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (*nullum crimen, nulla poena sine lege*), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով: Դրանից հետևում է, որ հանցանքը պետք է հստակորեն սահմանված լինի օրենքում, իսկ այս պայմանն ապահովված է այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից,

անհրաժեշտության դեպքում՝ դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարող է հասկանալ, թե հատկապես ո՞ր գործողության ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության (տե՛ս Kokkinakis v. Greece, զանգատ թիվ 14307/88, 1993 թվականի մայիսի 25-ի վճիռ, կետ 52):

Երկու այլ՝ *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* և *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները, լինելով օրենքի գերակայության էական տարրեր, Կոնվենցիայի պաշտպանության համակարգում կայուն տեղ ունեն, և դա հատկապես ընդգծվում է այն փաստով, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ անգամ պատերազմի կամ արտակարգ դրության ժամանակ 7-րդ հոդվածից որևէ շեղում չի թույլատրվում: Վերջինս, ելնելով իր առարկայից և նպատակից, պետք է այնպես մեկնաբանվի ու կիրառվի, որպեսզի նախատեսի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիքներ (տե՛ս C.R. v. The United Kingdom, զանգատ թիվ 20190/92, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, կետ 32 և S.W. v. The United Kingdom, զանգատ թիվ 20166/92, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, կետ 34):

16. Արարքը քրեականացնող կամ հանցագործության համար պատասխանատվությունը խստացնող, ինչպես նաև անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության և հակառակ դրան՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքին հետադարձ ուժ տալու պարտադիր լինելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Գ.Պողոսյանի* գործով որոշմամբ: Մասնավորապես, նշված որոշմամբ արձանագրվել է, որ «(...) «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Մա նշանակում է, որ անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել, ինչպես նաև՝ հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն օրենքով, որը գործել է նրա կողմից արարքը կատարելու ժամանակ: Nullum crimen, nulla poena sine lege սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապարքեականացում),
2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,
3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառնիչ են և ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն:

Այն դեպքերում, երբ նոր ընդունված օրենքը միաժամանակ բովանդակում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող դրույթներ, ապա օրենքը հետադարձ ուժ է ստանում միայն մեղմացման առումով» (տե՛ս Գ-սսպար Արամի Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ Գ-Դ-1/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը):

17. Վերահաստատելով և զարգացնելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և համապատասխանաբար Գ. Պողոսյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի կառուցակարգերը ճիշտ կիրառելու համար ելակետային նշանակություն ունի հանցավոր արարքի կատարման պահը: Քրեական օրենքի իմաստով՝ հանցանքը կատարելու պահ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքների վրա հասնելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ: Նշված կանոնը՝ որպես կամայական մեղադրման, դատապարտման և պատժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիք, «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) սկզբունքի անկյունաքարն է, և դրանից ցանկացած շեղում, բացառությամբ քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնի, կհանգեցնի սույն որոշման 14-րդ կետում մեջբերված միջազգային և ներպետական իրավանորմերի պահանջների խախտման:

Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության վերը նշված ընդհանուր կանոնի միակ բացառությունը՝ քրեական օրենքի հետադարձության կանոնը, ենթադրում է, որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված, հանցանք կատարած անձի համար բարենպաստ հետևանքներ առաջացնող նոր օրենքը պետք է տարածվի այդ անձի վրա: Այս դեպքում ևս

որևէ նշանակություն չունի, թե մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու հարցը լուծելիս այն գործում է, թե արդեն իսկ կորցրել է իր իրավաբանական ուժը: Քրեական օրենքի իրավաբանական ուժ կորցնելը նշանակում է, որ այդ օրենքը դադարեցնում է իր գործողությունը, և դրա նորմերը չեն կիրառվում այն հասարակական հարաբերությունների (հանցագործությունների) նկատմամբ, որոնք ծագում են (կատարվում են) դրանից հետո: Իրավաբանական ուժը կորցրած քրեական օրենքը մինչ այդ ծագած հասարակական հարաբերությունների նկատմամբ կիրառելի է այնքանով, որքանով բարենպաստ հետևանքներ է առաջացնում հանցանք կատարած անձի համար:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի գործողության տարածումը մինչև դրա ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա կարող է իրականացվել երկու եղանակով՝ պարզ և վերստուգիչ (ռեիզիոն) կարգով:

Քրեական օրենքի պարզ հետադարձությունը ենթադրում է, որ տվյալ գործով դեռևս դատավճիռ կամ գործն ըստ էության լուծող այլ վերջնական ակտ չի կայացվել: Այս դեպքում իրավակիրառող մարմինները նոր քրեական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ղեկավարվում են դրանով և կատարված արարքին իրավական գնահատական են տալիս և պատժի նշանակման հարցը լուծում են նոր, ավելի մեղմ օրենքին համապատասխան:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ անձի վիճակը բարելավող քրեական օրենքը տարածվում է նաև այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն: Այլ խոսքով՝ հնարավոր է իրավիճակ, երբ մեղադրական դատավճիռն արդեն իսկ մտել է օրինական ուժի մեջ և գտնվում է կատարման փուլում կամ արդեն իսկ ի կատար է ածվել, սակայն անձի դատվածությունը դեռևս չի մարվել: Այս դեպքում քրեական օրենքի գործողության տարածումը մինչև դրա ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա կատարվում է վերստուգիչ (ռեիզիոն) եղանակով, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայվում են:

19. Անդրադառնալով քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող, եթե դրանով արարքը դադարում է հանցագործություն համարվել (լրիվ ապաքրեականացում) կամ հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում): Ընդ որում, արարքի հանցավորությունը կարող է վերացվել նաև քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթների փոփոխության միջոցով, օրինակ՝ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը կարող է փոփոխվել, ինչի արդյունքում անձը կարող է դադարել քրեական պատասխանատվության սուբյեկտ լինելուց:

Նոր օրենքը համարվում է պատիժը մեղմացնող, եթե հոդվածի սանկցիայով

նախատեսված ա) պատժի նվազագույն կամ առավելագույն չափերը իջեցվում են, բ) պատժատեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, գ) պարտադիր լրացուցիչ պատժատեսակը վերացվում է կամ վեր է ածվում ֆակուլտատիվի, դ) նախատեսվում է երկրնորելի առավել մեղմ պատժատեսակ:

Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող է համարվում այն օրենքը, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերի և պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար: Նման իրավիճակները կարող են բազմազան լինել և վերաբերել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի տարբեր ինստիտուտներին, այդ թվում՝ պատժի ժամկետները հաշվարկելու և պատիժը հաշվակցելու կարգին:

20. 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածում նախատեսված էր, որ «[դ]ատարանը նախնական կալանքը պատժի ժամկետի մեջ հաշվում է ազատագրկման կամ կարգապահական գումարտակ (...) ուղարկման դատապարտելիս մեկ օրը մեկ օրվա դիմաց (...)»:

2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրված էր հետևյալ կերպ. «[մ]ինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց (...)»:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-97-Ն օրենքի ընդունումից հետո, որն ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 24-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ. «[մ]ինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց (...)»:

Մեջբերված քրեաիրավական նորմերը գնահատելով սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսացել է հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք, քանի որ նախատեսել է նախնական կալանքը պատժի ժամկետին հաշվակցելու առավել բարենպաստ կարգ, քան գործել է մինչ այդ: Հետևաբար, դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձանց վրա, անկախ նրանից, թե երբ է սկսվել այդ անձանց նկատմամբ քրեական հետապնդումը:

Մինևույն ժամանակ, 2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը գործել է մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը, որից հետո «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-97-Ն օրենքով այն ենթարկվել է փոփոխության և սահմանվել է նախնական կալանքը պատժի ժամկետին հաշվակցելու այնպիսի կարգ, ինչպիսին գործել է նախքան գործող քրեական օրենսգրքի ընդունումը: Այսինքն,

տեղի է ունեցել անձի վիճակը վատթարացնող օրենսդրական փոփոխություն, որը քրեական օրենքի հետադարձության կանոնի համաձայն՝ չի կարող տարածվել մինչ այդ փոփոխությունը հանցանք կատարած անձանց վրա:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը նշանակված պատժին՝ մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվակցելու վերաբերյալ դրույթը գործել է 2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը, այդ օրենքն իր բնույթով հանդիսացել է անձի վիճակն այլ կերպ բարելավող, հետևաբար դրա ներգործության տակ են ընկնում ոչ միայն այն անձինք, որոնք հանցանք են կատարել օրենքի գործողության ընթացքում, այլև նրանք, ովքեր համապատասխան արարք են կատարել մինչև այդ օրենքի ընդունումը: Այլ խոսքով՝ մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը հանցանք կատարած անձանց նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը վերջնական պատժի ժամկետին պետք է հաշվակցվի՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց, անկախ այն հանգամանքից, թե երբ են նրանք գտնվել կալանքի տակ, և այդ ընթացքում նշված օրենքը գործել է, թե ոչ:

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև նախնական կալանքը պատժի ժամկետին հաշվակցելու վերոգրյալ բարենպաստ օրենքին հետադարձ ուժ տալու քրեադատավարական ընթացակարգին:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը հանցանք կատարած անձանց նկատմամբ արդեն իսկ կայացված և կատարման փուլում գտնվող դատավճիռներով՝ անձի վիճակն այլ կերպ բարելավող վերոգրյալ քրեաիրավական նորմին հետադարձ ուժ տալու հարցը պետք է լուծվի դատական որոշման վերաբերյալ կասկածների և անհատակությունների լուծման կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի կիրառմամբ: Մասնավորապես, դատավճիռ կայացրած դատարանը շահագրգիռ անձի դիմումի հիման վրա պետք է քննարկի ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ դրույթների կիրառելիության հարցը և նախքան դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձի կալանքի տակ եղած ժամկետը ազատագրկման ձևով նշանակված պատժին մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվակցելու հարցում հանգի համապատասխան հետևության:

Միևնույն ժամանակ, այն դեպքում, երբ մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը հանցանք կատարած անձի նկատմամբ դեռևս դատավճիռ չի կայացվել, ապա գործն ըստ էության քննող դատարանը պարտավոր է դատավճռով լուծել նախնական կալանքը պատժի ժամկետին հաշվակցելու վերոգրյալ բարենպաստ օրենքին հետադարձ ուժ տալու հարցը: Մասնավորապես, եթե այդպիսի անձի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, որը գործի քննության ընթացքում վերացվել է կամ փոխարինվել է ազատությունից զրկելու հետ կապ չունեցող մեկ այլ խափանման միջոցով կամ գրավով, ապա դատարանը պետք է անձի փաստացի կալանքի տակ գտնվելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվակցի նրա նկատմամբ ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին:

Այն դեպքում, երբ հնարավոր չէ կատարել հաշվակցում, քանի որ անձն

անընդմեջ գտնվում է կալանքի տակ և դատավճիռ կայացնելու պահին նրա կալանքը դեռևս շարունակվում է, ապա դատարանը պետք է իր դատավճռում արձանագրի, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձի կալանքի տակ եղած ժամկետը ենթակա է հաշվակցման ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց, և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար սահմանի նշված հաշվակցումը կատարելու պարտականություն: Այս դեպքում փաստացի հաշվակցումը և դատարանի կողմից սահմանված պատժի ժամկետի կրճատումը պետք է կատարվի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ պատիժը կրելու վայրի վարչակազմի կողմից:

23. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վ.Գալոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ 1999 թվականի մարտի 23-ին ավազակային հարձակման միջոցով հափշտակել է Ս.Հակոբյանին պատկանող 6.436.560 ՀՀ դրամ արժողությամբ «ԲՄՎ 520» մակնիշի ավտոմեքենան (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Նախաքննության մարմնի կողմից Վ.Գալոյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, վերջինս 2011 թվականի մարտի 16-ին հայտնաբերվել և արգելանքի է վերցվել Ռուսաստանի Դաշնությունում, իսկ 2011 թվականի օգոստոսի 27-ին հանձնվել է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2013 թվականի ապրիլի 4-ի դատավճռով Վ.Գալոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատագրկում 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Վ.Գալոյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ պատժի սկիզբը հաշվվել է 2011 թվականի մարտի 16-ից:

Նշված դատավճիռը չի բողոքարկվել, և 2013 թվականի մայիսի 6-ին մտել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Ընդ որում, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, իր դատավճռում փաստելով, որ Վ.Գալոյանի կողմից հանցավոր արարքը կատարելուց հետո 2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքով առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով կատարված ավազակության համար նախատեսվել է ավելի մեղմ պատիժ, քան արարքը փաստացի կատարելու պահին գործող օրենքով, իրավացիորեն գտել է, որ նշված օրենքին պետք է հետադարձ ուժ տալ և Վ.Գալոյանի նկատմամբ պատիժ նշանակել մեղմացված սանկցիայի շրջանակներում: Մինևույն ժամանակ դատարանն արձանագրել է, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան 2004 թվականին ընդունված օրենքով կրկին խստացվել է, սակայն նշված փոփոխությունը Վ.Գալոյանի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ պատիժը խստացնող օրենքը

հետադարձ ուժ չունի:

Գատավճռում Վ.Գալոյանի նախնական կալանքի տակ գտված ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու վերաբերյալ որևէ անդրադարձ չի կատարվել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Գատապարտյալ Վ.Գալոյանը 2013 թվականի մայիսի 14-ին դիմել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան և խնդրել իր նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցել նշանակված պատժի ժամկետին՝ մեկ օրը մեկուկես օրվա դիմաց:

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ դատապարտյալի դիմումը մերժել է՝ պատճառաբանելով, որ Վ.Գալոյանի կալանքի տակ գտնված ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նրա նկատմամբ նշանակված պատժին հաշվակցելու հիմքեր չկան, քանի որ ինչպես հանցավոր արարքը կատարելու պահին, այնպես էլ Վ.Գալոյանի կալանքի տակ գտնված ժամանակ և նրա նկատմամբ դատավճիռ կայացնելիս նման կարգ չի գործել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, համաձայնելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների հետ և շեշտելով, որ դատարանի կողմից միջազգային և ներպետական օրենսդրության, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների պահանջները չեն խախտվել, բողոքարկված դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

24. Սույն որոշման 16-22-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Վ.Գալոյանն իրեն մեղսագրված հանցավոր արարքը կատարել է մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը, հետևաբար Վ.Գալոյանի նախնական կալանքի տակ եղած ժամկետը՝ 2011 թվականի օգոստոսի 27-ից մինչև 2013 թվականի մայիսի 6-ը, ենթակա է եղել հաշվակցման նրա նկատմամբ նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Վ.Գալոյանի նկատմամբ դատավճիռ կայացնելիս այս հարցին չի անդրադարձել և նման հաշվակցում կատարելու պարտականություն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար չի սահմանել: Միևնույն ժամանակ դատապարտյալի դիմումի հիման վրա քննարկելով կալանքի ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու հարցը, ստորադաս դատարանները սխալ եզրահանգման են եկել դրա անթույլատրելիության վերաբերյալ:

Ուստի, անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքին հետադարձ ուժ չտալով, դրա գործողությունը չտարածելով մինչև փոփոխության ընդունումը հանցանք կատարած անձի նկատմամբ՝ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի, ինչպես նաև

սույն որոշման 14-րդ կետում շարադրված միջազգային-իրավական ակտերի համապատասխան նորմերի պահանջների խախտում:

25. Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Վ.Գալոյանի նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նրա նկատմամբ նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն օրինական և հիմնավորված չեն:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատապարտյալ Վ.Գալոյանի վիճակն այլ կերպ բարելավող քրեական օրենքին հետադարձ ուժ չտալով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գատապարտյալ Վաղարշակ Էդիկի Գալոյանի դիմումը մերժելու վերաբերյալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի օգոստոսի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԳ/0227/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպաններ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ռ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ընդհանուր դատական նիստում, քննության առնելով Արթուր Ռոբերտի Բաղայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Մացակ և Արմեն Ռոբերտի Բաղայանների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ ամբաստանյալների պաշտպաններ Ռ.Հակոբյանի և Ա.Ոսկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հունիսի 25-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սպիտակի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 52103812 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ Արթուր Բաղայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2012 թվականի դեկտեմբերի 4-ին Մացակ և Արմեն Բաղայանները ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի դեկտեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի դատավճռով Արթուր Բաղալյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Բաղալյանի՝ նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 11 (տասնմեկ) ամիս 9 (ինը) օր ժամկետով:

Մացակ և Արմեն Բաղալյանները մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Պաշտպանների վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ վճարել բողոք են բերել ամբաստանյալների պաշտպաններ Ռ.Հակոբյանը և Ա.Ոսկանյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ վճարել բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալներ Արթուր, Մացակ և Արմեն Բաղալյաններին առաջադրվել են հետևյալ մեղադրանքները.

5.1. Արթուր Բաղալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա 2012թ. հունիսի 23-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի կենտրոնական մասում՝ հասարակական վայրում՝ գյուղապետարանի մոտ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և գուգորդվել Արմեն Սկրտչյանի նկատմամբ որպես զենք օգտագործվող հրացանի գործադրմամբ:

Այն է՝ 2012թ. հունիսի 23-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչ Արմեն Նիկոլի Սկրտչյանը, տեղեկանալով նախորդ օրն Արմեն Բաղալյանի կողմից հորեղբորը՝ Միեր Սկրտչյանին ծեծի ենթարկելու մասին, նպատակ ունենալով պարզաբանել նշված հանգամանքը, նույն օրը՝ ժամը 19⁰⁰-ի սահմաններում,

գործով չպարզված անձանց հետ «Գ.Ա.Ձ-31» մակնիշի անհայտ համարանիշի ավտոմեքենայով գնացել է Լոռու մարզի Հարթագյուղ գյուղ, որտեղ գյուղի կենտրոնական մասում՝ գյուղապետարանի մոտ, հանդիպել է Սպիտակ քաղաքի բնակիչներ, եղբայրներ Արմեն, Մացակ և Արթուր Ռոբերտի Բաղայաններին: Հիշյալ հարցի շուրջ նրանց միջև ծագել է վիճաբանություն և ծեծկռտուք, ինչը տևել է մոտ 20 րոպե, որի ընթացքում բարձրացված աղմուկից հավաքված շուրջ 15-20 բնակիչների ներկայությամբ, դրսևորելով անթաքույց արհամարհանք, նրանք աղմկել են և տվել սեռական բնույթի հայհոյանքներ, դրանով իսկ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, որն արտահայտվել է գյուղի հավաքված բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Այնուհետև, չենթարկվելով հավաքված գյուղացիների՝ կռիվն ու հայհոյանքները դադարեցնելու պահանջներին և շարունակելով խուլիգանական գործողությունները՝ Արթուր Բաղայանն իր ավտոմեքենայից վերցրել է որպես զենք օգտագործվող «Սայգա-12Կ» մոդելի որսորդական ողորկափող ինքնալից հրացանը, գործադրել է այն՝ 2 անգամ դիտավորությամբ կրակելով Արմեն Սկրտչյանի ոտքերի ուղղությամբ՝ նրան պատճառելով առողջության միջին ծանրության վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 163-165):

5.2. Մացակ Բաղայանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա մի խումբ անձանց՝ իր եղբայրներ Արմեն և Արթուր Բաղայանների հետ, 2012թ. հունիսի 23-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի կենտրոնական մասում՝ հասարակական վայրում՝ գյուղապետարանի մոտ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված և նրանց կարգի հրավիրող գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Այն է՝ 2012թ. հունիսի 23-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչ Արմեն Նիկողի Սկրտչյանը, տեղեկանալով նախորդ օրն Արմեն Բաղայանի կողմից հորեղբորը՝ Սիեր Սկրտչյանին ծեծի ենթարկելու մասին, նպատակ ունենալով պարզելու նշված հանգամանքը, նույն օրը՝ ժամը 19⁰⁰-ի սահմաններում, եղբոր՝ Արթուր Սկրտչյանի հետ «Գ.Ա.Ձ-31» մակնիշի ավտոմեքենայով գնացել է Լոռու մարզի Հարթագյուղ համայնք, որտեղ գյուղի կենտրոնական մասում՝ գյուղապետարանի մոտ, հանդիպել է Սպիտակ քաղաքի բնակիչներ, եղբայրներ Արմեն, Մացակ և Արթուր Ռոբերտի Բաղայաններին, ովքեր հիշյալ հարցի կապակցությամբ վիճաբանության և ծեծկռտուքի մեջ են մտել նրանց հետ, ինչը տևել է մոտ 20 րոպե: Այդ ընթացքում բարձրացված աղմուկից հավաքված շուրջ 15-20 բնակիչների ներկայությամբ, չենթարկվելով վերջիններիս կարգի հրավիրելու, վիճաբանությունը և կռիվը դադարեցնելու պահանջներին, Մացակ Բաղայանը և իր եղբայրները՝ Արմեն և Արթուր Բաղայանները, աղմկել են և տվել սեռական բնույթի հայհոյանքներ, դրանով իսկ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 99-101):

5.3. Արմեն Բաղայանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի

1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա մի խումբ անձանց՝ իր եղբայրներ Մացակ և Արթուր Բաղալյանների հետ 2012թ. հունիսի 23-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի կենտրոնական մասում՝ հասարակական վայրում՝ գյուղապետարանի մոտ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված և նրանց կարգի հրավիրող գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Այն է՝ 2012թ. հունիսի 23-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչ Արմեն Նիկոլի Սկրտչյանը, տեղեկանալով նախորդ օրն Արմեն Բաղալյանի կողմից հորեղբորը՝ Մհեր Սկրտչյանին ծեծի ենթարկելու մասին, նպատակ ունենալով պարզելու նշված հանգամանքը, նույն օրը՝ ժամը 19⁰⁰-ի սահմաններում, եղբոր՝ Արթուր Սկրտչյանի հետ «Գ.Ա.Ձ-31» մակնիշի ավտոմեքենայով գնացել է Լոռու մարզի Հարթագյուղ համայնք, որտեղ գյուղի կենտրոնական մասում՝ գյուղապետարանի մոտ, հանդիպել է Սպիտակ քաղաքի բնակիչներ, եղբայրներ Արմեն, Մացակ և Արթուր Ռոբերտի Բաղալյաններին, ովքեր հիշյալ հարցի կապակցությամբ վիճաբանության և ծեծկռտուքի մեջ են մտել նրանց հետ, ինչը տևել է մոտ 20 րոպե: Այդ ընթացքում բարձրացված աղմուկից հավաքված շուրջ 15-20 բնակիչների ներկայությամբ, չենթարկվելով վերջիններիս կարգի հրավիրելու, վիճաբանությունը և կռիվը դադարեցնելու պահանջներին, Արմեն Բաղալյանը և նրա եղբայրները՝ Մացակ և Արթուր Բաղալյանները, աղմկել են և տվել սեռական բնույթի հայհոյանքներ, դրանով իսկ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 112-114):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Այսպիսով, գործով հավաքված ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ստուգմամբ, ձեռք բերված ապացույցների համադրության և վերլուծության միջոցով դատարանը եկավ այն եզրահանգման, որ նախաքննական մարմնի կողմից Արթուր, Արմեն և Մացակ Բաղալյանների կատարած արարքը որակվել է ճիշտ, Արթուր Բաղալյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ Մացակ և Արմեն Բաղալյանները ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքներ, որի համար պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության և պատժի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 404-405):

7. Վերաքննիչ դատարանը, իր համաձայնությունն արտահայտելով Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա պատճառաբանությունների հետ, նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը, ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, հանգում է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանը,

պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Արթուր Բաղալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Մացակ Բաղալյանի և Արմեն Բաղալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, նրանց մեղսագրված արարքների քրեաիրավական գնահատականները ճիշտ են տրվել, ուստի ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. ապրիլի 18-ի դատավճիռը բեկանելու և ամբաստանյալների նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու հիմքեր չկան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 98-99):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձինք նշել են, որ գործի փաստական հանգամանքների մասին ստորադաս դատարանների հետևությունները չեն համապատասխանում դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներին: Դատարանների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնց արդյունքում ամբաստանյալների արարքներին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական. կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման:

Ըստ բողոքաբերների՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում բռնության գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը, մինչդեռ այդ հատկանիշը բնութագրող և դրա առկայությունը հաստատող որևէ փաստական տվյալ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքներում չի նկարագրվել, հետևաբար նաև չի մեղսագրվել: Այս կապակցությամբ բողոքաբերներն ընդգծել են, որ անձին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք առաջադրելու համար բավարար չէ, որ նա խմբի կազմում կատարած լինի խուլիգանություն: Դրա համար անհրաժեշտ նախապայման է, որ հանցավորի գործողությունները, ի թիվս այլոց, զուգորդվեն բռնության գործադրմամբ: Հետևաբար, խմբի կազմում բռնության գործադրմամբ խուլիգանություն կատարելու համար մեղադրանք առաջադրելու դեպքում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դատավարական փաստաթղթերում արտացոլել, թե հանցակիցներից յուրաքանչյուրն ինչպիսի բռնություն է գործադրել և ում նկատմամբ:

Մինչդեռ, սույն գործով քրեական հետապնդման մարմինը, ամբաստանյալներ Արմեն և Մացակ Բաղալյաններին մեղադրանք առաջադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, չի հստակեցրել նրանցից յուրաքանչյուրի կատարած արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած

փաստերը: Մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում չի ապահովվել մեղադրյալների իրավունքը տեղեկանալու իրենց դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, չի ապահովվել նաև ամբաստանյալների պաշտպանության իրավունքի և մրցակցության սկզբունքի իրականացումը:

9. Շարադրելով և վերլուծելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները՝ բողոքաբերները նշել են, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճիռը հիմնավորել է նաև վկաներ Մանվել Ալեքսանյանի և Արթուր Սկրտչյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներով, մինչդեռ նշված ապացույցները դատաքննության ընթացքում չեն հետազոտվել, իսկ այդ վկաները մեղադրական եզրակացությանը կցված դատակոչի ցուցակում նշված չեն և դատարանում չեն հարցաքննվել:

Բողոքում նշվում է նաև, որ քրեական գործը հարուցվել է 2012 թվականի հունիսի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, որը 2012 թվականի հուլիսի 26-ին կարճվել է Արթուր Բաղայանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմի բացակայության հիմքով: Մինչդեռ գործը կարճելուց հետո նախաքննական մարմինը շարունակել է կատարել նախաքննություն, այնուհետև ամբաստանյալներին մեղադրանք է առաջադրվել խուլիգանություն կատարելու համար: Հետևաբար, մեղադրանքի հիմքում դրված բոլոր ապացույցները համարվում են անթույլատրելի:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձինք խնդրել են ամբողջությամբ բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ճանաչել և հռչակել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ ամբաստանյալներ Արմեն և Մացակ Բաղայանների անմեղությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ամբաստանյալ Արթուր Բաղայանի անմեղությունը կամ վերջինիս առաջադրված մեղադրանքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ տուժողի բողոքի բացակայության հիմքով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշների, ինչպես նաև նշված հոդվածով առաջադրված մեղադրանքի ձևակերպման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին

իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Արմեն և Մացակ Բադալյանների արարքներում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի, այն է՝ մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու հատկանիշները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բարձրացված հարցին պատասխանելու նպատակով անհրաժեշտ է վերլուծության ենթարկել մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանության (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) քրեաիրավական որակման առանձնահատկությունները, ինչպես նաև նշված հոդվածով առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը ներկայացվող քրեադատավարական պահանջները: Ուստի, Վճռաբեկ դատարանն առաջին հերթին քննության է առնում վերոնշյալ երկու քրեաիրավական և քրեադատավարական հարցերը:

1. Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից խուլիգանություն կատարելը.

13. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝

«1. Խուլիգանությունը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտել[ն է], որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (...):

2. Նույն արարքը, որը գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով (...):

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, (...):»:

Խուլիգանության հանցակազմի առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Շ.Հախվերդյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) արարքը խուլիգանություն կարող է որակվել այն դեպքում, երբ անձի մոտ առկա են խուլիգանական դրդումներ: Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ արարքը խուլիգանություն կարող է որակվել նաև այն դեպքերում, երբ անձի մոտ առկա են հանցանքի կատարման այլ դրդումներ, սակայն հանցանքի կատարման ընթացքում ձևավորվում են խուլիգանական դրդումներ, այլխոսքով՝ արարքը կվերաճի խուլիգանության՝ հասարակական կարգի կոպիտ խախտման, որը դրսևորվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

(...)

[Ա]րարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) այն դեպքերում, երբ՝

ա) արարքը կատարվում է ոչ հասարակական վայրում և (կամ) հասարակության անդամների բացակայությամբ,

բ) արարքի հետևանքով հասարակությանը լուրջ անհանգստություն չի պատճառվել,

զ) հանցավորի գործողությունները պայմանավորված են տուժողի հակաօրինական, հակաբարոյական վարքագծով և ուղղված են նրա, այլ ոչ թե հասարակության դեմ,

դ) բացակայում են խուլիգանական դրդումները, իսկ անձի արարքները պայմանավորված են նրա հուզական վիճակով,

ե) հասարակական կարգի կոպիտ խախտման նկատմամբ դրսևորվել է անզգուշություն,

զ) հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող արարքը համընկնում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի հատկանիշների հետ, սակայն դրա կատարմամբ հանցավորը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ չունի,

է) այլ դրդումներով կատարված հանցանքը չի վերաճել հասարակական կարգի կոպիտ խախտման, որը դրսևորվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով» (տե՛ս Շահեն Նշանի Հախվերդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԳ/0014/01/11 որոշման 27-րդ և 29-րդ կետերը):

14. Հանցակցության հատկանիշներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ՝

4. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից

5. գործողությունների համատեղությունը

3. հանցակցության դիտավորյալ բնույթը (...)» (տե՛ս Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռ.աֆիկ Արայիկի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-րդ կետը): Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված հանցագործությունների որակման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Հ.Սարգսյանի և այլոց* գործով որոշման մեջ (տե՛ս *mutatis mutandis* Հակոբ Սարգսյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԳ/0136/01/10 որոշման 12-18-րդ կետերը):

Գ.Ճաղարյանի և այլոց գործով որոշման մեջ անդրադառնալով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանության որակման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) անձին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելու համար դեռ բավարար չէ, որ նա խմբի կազմում կատարած լինի խուլիգանություն: Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որակելու համար անհրաժեշտ նախապայման է, որ հանցավորի գործողությունները, ի թիվս այլնի, գուգորդվեն անձի նկատմամբ բռնության գործադրմամբ: Հետևաբար, խմբի կազմում բռնության գործադրմամբ խուլիգանություն կատարելու համար մեղադրանք առաջադրելու դեպքում մինչդատական վարույթն իրականացնող

մարմինը պարտավոր է համապատասխան դատավարական փաստաթղթերում արտացոլել, թե հանցակիցներից յուրաքանչյուրն ինչպիսի բռնություն է գործադրել և ում նկատմամբ» (տե՛ս Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԳ/0002/01/11 որոշման 30-րդ կետը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված և, համապատասխանաբար, *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի, Հ.Սարգսյանի և այլոց*, ինչպես նաև *Գ.Ճաղարյանի և այլոց* գործերով որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես մի խումբ անձանց կողմից կատարված խուլիգանություն կարող է որակվել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) կատարված արարքը բնութագրվում է որպես դիտավորությամբ հասարակական կարգի կոպիտ խախտում, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով,

բ) (ա) ենթակետում նշված արարքը զուգորդվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով,

գ) (բ) ենթակետում նկարագրված արարքի կատարմանը մասնակցել են երկու կամ ավելի համակատարողներ, այսինքն՝ այնպիսի անձինք, որոնցից յուրաքանչյուրը անմիջականորեն մասնակցել է հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքների կատարմանը, այն է՝ բռնություն է գործադրել կամ բռնություն գործադրելու սպառնալիք է տվել կամ ուրիշի գույք է ոչնչացրել կամ վնասել:

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ խուլիգանության կատարմանը մասնակցել են երկու կամ ավելի անձինք, սակայն վերջիններիս արարքները չեն զուգորդվել բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, ապա արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Այլ խոսքով՝ բռնության գործադրումը կամ դա գործադրելու սպառնալիքը, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը հանդիսանում են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, որի բացակայությունը բացառում է արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որակելու հնարավորությունը:

II. Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը ներկայացվող քրեադատավարական պահանջները

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորումն է՝ որոշակի անձի կողմից

քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է:

2. Սույն հոդվածի առաջին մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում է] (...) մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները:

(...):

3. Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը:

(...):»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Գ.Ճաղարյանի և այլոց* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է, և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը (...)» (տե՛ս Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԳ/0002/01/11 որոշման 15-րդ կետը):

Գ.Ճաղարյանի և այլոց գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման, ինչպես նաև հանցակիցների քրեաիրավական պատասխանատվության

անհատականացման միջոց՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [մեղադրանքի ձևակերպման մեջ], բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: Նույն կերպ անընդունելի է, երբ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարված լինելու դեպքում հանցակիցներին ներկայացվում է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ գործողությունները, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակցությամբ կատարված արարքը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեղի է ունեցել հանցավոր արարք, որի կատարմանը մասնակցել են երկու և ավելի անձինք, ովքեր գործել են համատեղ, դիտավորյալ և կատարել են դիտավորյալ հանցագործություն: Ուստի, իրավախախտման փաստը պետք է կոնկրետացվի յուրաքանչյուր հանցակցի մասով, իսկ դրա հանգամանքները անհատականացվեն՝ հաշվի առնելով անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն այս հանգամանքների հստակ պարզման և դատավարական փաստաթղթերում ամրագրման դեպքում է հնարավոր լուծել այդ արարքները կատարած անձանց քրեական պատասխանատվության հարցը» (տե՛ս Գ-րիգոր Խաչատուրի Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԳ/0002/01/11 որոշման 21-րդ և 27-րդ կետերը):

18. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար *Գ.Ճաղարյանի և այլոց* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի հանցակիցներից յուրաքանչյուրին մեղսագրվող գործողությունների (անգործության) մանրակրկիտ նկարագրությունը, այդ թվում՝ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, որի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պաշտպանության իրավունքի և մրցակցային դատավարության իրականացումը:

Բացի այդ, արարքը մի խումբ անձանց կողմից կատարված լինելու դեպքում մեղադրանք առաջադրելիս համապատասխան դատավարական փաստաթղթերում հանցակիցներից յուրաքանչյուրի հանցավոր գործողությունների նկարագրությունն անհրաժեշտ նախապայման է՝ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծելու համար:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 17-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելիս քրեական հետապնդում իրականացնող մարմինը համապատասխան դատավարական փաստաթղթերում, ի թիվս այլոց, պարտավոր է ամրագրել նշված քրեախրավական նորմով նախատեսված, հանրության համար վտանգավոր և քրեորեն պատժելի արարքի բոլոր հատկանիշները, այդ թվում՝ այն, թե հանցակիցներից յուրաքանչյուրը ում նկատմամբ և ինչպիսի բռնություն է գործադրել կամ աշղյիսին գործադրելու սպառնալիք է տվել կամ ինչ գույք է ոչնչացրել կամ վնասել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց նշված փաստական հանգամանքները պարզելու և մեղադրանքի ձևակերպման մեջ արտացոլելու հնարավոր չէ հանցակիցների արարքները որակել որպես մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանություն:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արմեն և Մացակ Բաղալյաններին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով, և նրանցից յուրաքանչյուրին առաջադրված մեղադրանքը շարադրվել է հետևյալ կերպ. «նա մի խումբ անձանց՝ իր եղբայրների (...) հետ, 2012թ. հունիսի 23-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի կենտրոնական մասում՝ հասարակական վայրում՝ գյուղապետարանի մոտ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված և նրանց կարգի հրավիրող գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Այն է՝ 2012թ. հունիսի 23-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչ Արմեն Նիկոլի Սկրտչյանը, տեղեկանալով նախորդ օրն Արմեն Բաղալյանի կողմից հորեղբորը՝ Մհեր Սկրտչյանին ծեծի ենթարկելու մասին, նպատակ ունենալով պարզելու նշված հանգամանքը, նույն օրը՝ ժամը 19⁰⁰-ի սահմաններում, եղբոր՝ Արթուր Սկրտչյանի հետ «Գ-Ա-Ձ-31» մակնիշի ավտոմեքենայով գնացել է Լոռու մարզի Հարթագյուղ համայնք, որտեղ գյուղի կենտրոնական մասում՝ գյուղապետարանի մոտ, հանդիպել է Սպիտակ քաղաքի բնակիչներ, եղբայրներ Արմեն, Մացակ և Արթուր Ռոբերտի Բաղալյաններին, ովքեր հիշյալ հարցի կապակցությամբ վիճաբանության և ծեծկռտուքի մեջ են մտել նրանց հետ, ինչը տևել է մոտ 20 րոպե: Այդ ընթացքում բարձրացված աղմուկից հավաքված շուրջ 15-20 բնակիչների ներկայությամբ, չենթարկվելով վերջիններիս կարգի հրավիրելու, վիճաբանությունը և կռիվը դադարեցնելու պահանջներին, Արմեն Բաղալյանը և

նրա եղբայները՝ Մացակ և Արթուր Բաղայանները, աղմկել են և տվել սեռական բնույթի հայեցողություններ, դրանով իսկ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով» (տե՛ս սույն որոշման 5.2-5.3-րդ կետերը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմինները, ամբաստանյալներ Արմեն և Մացակ Բաղայաններին մեղադրանք առաջադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով, չեն հատակեցրել հանցակիցներից յուրաքանչյուրի կատարած արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը: Քրեական հետապնդման մարմիններն ամբաստանյալներին առաջադրել են բացարձակապես նույնաբովանդակ մեղադրանքներ՝ սահմանափակվելով նրանց կատարած արարքների ընդհանրական նկարագրությամբ, այն է՝ աղմուկից հավաքված շուրջ 15-20 բնակիչների ներկայությամբ, չենթարկվելով վերջիններիս կարգի հրավիրելու, վիճաբանությունը և կռիվը դադարեցնելու պահանջներին՝ Արմեն և Մացակ Բաղայանները շուրջ 20 րոպե տևողությամբ աղմկել են և տվել սեռական բնույթի հայեցողություններ, դրանով իսկ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, որն արտահայտվել է հավաքված գյուղի բնակիչների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Մեղադրանքի վերոշարադրյալ ձևակերպումից պարզ չէ, թե ամբաստանյալներ Արմեն և Մացակ Բաղայանների կողմից կատարված խուլիգանական գործողությունները զուգորդվել են արդյոք բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալըջով, կամ այդ ընթացքում որևէ մեկի գույքը ոչնչացվել է կամ վնասվել է, թե ոչ: Նախաքննության մարմինը չի կոնկրետացրել հանցավոր արարքի կատարման ժամանակ վերջիններիս կոնկրետ գործողությունների շրջանակը: Այլ խոսքով, Արմեն և Մացակ Բաղայաններին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելով՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը նրանց չի վերագրել նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողություններից որևէ մեկը, որպիսի պայմաններում խմբի կազմում կատարված խուլիգանության հանցակազմը բացառվում է:

21. Ինչ վերաբերում է մեղադրանքի ձևակերպման մեջ առկա «վիճաբանության և ծեծկռտուքի մեջ են մտել» արտահայտությանը, ապա Վճարելի դատարանը *Արևիկ և Ծովինար Սահակյանների* գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը գրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք» (տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԲԳ/0176/01/11 որոշման 18-րդ կետը):

Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշման հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է,

որ վիճաբանության առկայությունը դեռևս հիմք չէ պնդելու, թե տեղի է ունեցել բռնություն: Ինչ վերաբերում է մեղադրանքի ձևակերպման մեջ առկա «ծեծկռտուք» բառին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինս հանդիսանում է բռնության դրսևորման տարատեսակ, սակայն սույն գործի նյութերից չի երևում, թե ինչումն է արտահայտվել «ծեծկռտուքը», և արդյո՞ք Արմեն և Մացակ Բադալյանների կողմից որևէ անձի նկատմամբ գործադրվել է բռնություն:

22. Սույն որոշման 20-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-19-րդ և 21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալներ Արմեն և Մացակ Բադալյաններին առաջադրված մեղադրանքների ձևակերպումից չի երևում, թե նրանցից յուրաքանչյուրին մեղաազրված արարքն ինչումն է արտահայտվել: Մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում չի ապահովվել քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձանց իրավունքը տեղեկանալու իրենց դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, հետևաբար չի ապահովվել նաև ամբաստանյալների պաշտպանության իրավունքի և մրցակցային դատավարության սկզբունքի իրականացումը, որպիսի պայմաններում արդար դատաքննության հիմնարար իրավունքի պահանջները բավարարող դատաքննությունն անհնար է:

Բացի այդ, մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում, երբ յուրաքանչյուր հանցակցի մասով իրավախախտման փաստը կոնկրետացված չէ, իսկ դրա հանգամանքներն անհատականացված չեն, հնարավոր չէ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան լուծել հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը:

23. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն և Մացակ Բադալյանների արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի, այն է՝ մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու հատկանիշների առկայության մասին ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն: Այդ առումով ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական ու հիմնավորված չեն և չեն բխում գործի փաստական տվյալներից:

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Արթուր Բադալյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

25. Սույն որոշման նախորդ կետում բարձրացված հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները, հանգել են հիմնավոր հետևության այն մասին, որ Արթուր Բադալյանը, չենթարկվելով հավաքված

գյուղացիների կռիվն ու հայիոյանքները դադարեցնելու պահանջներին և շարունակելով խուլիգանական գործողությունները, իր ավտոմեքենայից վերցրել է որպես զենք օգտագործվող «Սայգա-12Կ» մոդելի որսորդական ողորկափող ինքնալից հրացանը, գործադրել է այն՝ 2 անգամ դիտավորությամբ կրակելով Արմեն Սկրտչյանի ոտքերի ուղղությամբ՝ նրան պատճառելով առողջության միջին ծանրության վնաս: Այլ խոսքով՝ Արթուր Բաղալյանի արարքը ուղղված է եղել հասարակական կարգի դեմ, որը զուգորդվել է զենքի գործադրմամբ և տուժողի առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելով (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

Ստորադաս դատարանների դատական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ Արթուր Բաղալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորվել է ինչպես Արթուր Բաղալյանի որպես կասկածյալ տված ցուցմունքներով, այնպես էլ վկաներ Սիեր Սկրտչյանի, Ժորա Ջագարյանի, Մարո Ջագարյանի, Սամվել Մաթոսյանի, այլ վկաների ցուցմունքներով, դատաբժշկական փորձաքննության թիվ 441, դատաբժշկական կրկնակիփորձաքննության թիվ 2972, դատաձգաբանական, դատահետքաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննության թիվ 12-2973 եզրակացություններով (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 397-403, հատոր 3, թերթ 98):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Արթուր Բաղալյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

26. Ինչ վերաբերում է բողոքաբերների այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատավճռի հիմքում դնել վկաներ Մանվել Ալեքսանյանի և Արթուր Սկրտչյանի նախաքննական ցուցմունքները (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում իրամրագրումը ստացած՝ արդար դատական քննության իրավունքը, *inter alia*, ենթադրում է, որ դատավարության յուրաքանչյուր մասնակից պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ դատավարական հակառակորդի ներկայացրած ցանկացած ապացույցի և, դատարանի դիրքորոշման վրա ազդելու ակնկալիքով, իր վերաբերմունքը հայտնել դրա առնչությամբ: Բացի այդ, ապացույցների հետազոտումը, որպես կանոն, պետք է իրականացվի հրապարակային դատաքննության պայմաններում: Դա ապահովում է արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության վերահսկողությունը, ինչը կարևոր հանրային արժեք է: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից (տե՛ս *Լոբո Մաչադոն ընդդեմ Պորտուգալիայի (Lobo Machado v. Portugal)* գործով Պալատի 1996թ. փետրվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ 15764/89, կետ 31, *Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի (K.S. v. Finland)* գործով Մեծ Պալատի 2001թ. մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 29346/95, կետ 21, *Աքսենն ընդդեմ Գերմանիայի (Axen v. Germany)* գործով Պալատի 1983թ. դեկտեմբերի 8-ի վճիռը,

գանգատ թիվ 8273/78, կետ 25, *Դիենեն ընդդեմ Ֆրանսիայի (Diennet v. France)* գործով Պալատի 1995թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 18160/91, կետ 33):

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը որպես ամբաստանյալներ Արթուր, Արմեն և Մացակ Բադալյանների մեղադրանքը հիմնավորող ապացույցներ է վկայակոչել վկաներ Մանվել Ալեքսանյանի և Արթուր Սկրտչյանի նախաքննական ցուցմունքները, մինչդեռ նշված վկաները դատարանում չեն հարցաքննվել, և նրանց ցուցմունքները դատաքննության ընթացքում չեն հետազոտվել (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 402):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում է դրել այնպիսի ապացույցներ, որոնք հրապարակային դատաքննության ժամանակ չեն հետազոտվել և որոնց վերաբերյալ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել արտահայտելու իր դիրքորոշումը:

28. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ»:

Մեջբերված իրավադրույթների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 27-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկաներ Մանվել Ալեքսանյանի և Արթուր Սկրտչյանի նախաքննական ցուցմունքները իր դատական ակտի հիմքում դնելով՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել քրեադատավարական իրավունքի խախտում, մասնավորապես խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 340-րդ, 342-րդ և 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջները: Ուստի, Արթուր Բադալյանի մեղադրանքի հիմքում դրված անթույլատրելի ճանաչված ցուցմունքները պետք է հանել:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, (...)»:

Շարադրված դրույթի վերլուծությունից հետևում է, որ դատարանի դատավճիռը չի կարող հիմնավորված համարվել, եթե դրա նկարագրական-պատճառաբանական մասում բովանդակվող հետևությունները էապես հիմնված են դատաքննության ժամանակ չհետազոտված ապացույցների վրա:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Արթուր Բադալյանի մեղավորության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները էապես հիմնված չեն դատարանում չհետազոտված և, հետևաբար, անթույլատրելի ապացույց հանդիսացող վկաներ Մանվել Ալեքսանյանի և Արթուր Սկրտչյանի նախաքննական ցուցմունքների վրա: Արթուր Բադալյանին ՀՀ

քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված է բազմաթիվ այլ թույլատրելի և վերաբերելի ապացույցներով (տե՛ս սույն որոշման 25-րդ կետը):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումը (տե՛ս սույն որոշման 28-րդ կետը) չի կարող հիմք հանդիսանալ Արթուր Բաղալյանի մասով ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

30. Անդրադառնալով բողոքաբերների այն փաստարկին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), որ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, որը 2012 թվականի հուլիսի 26-ին կարճվել է Արթուր Բաղալյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմի բացակայության հիմքով, ուստի խուլիգանության դեպքով նախաքննություն չէր կարող կատարվել, հետևաբար, մեղադրանքի հիմքում դրված բոլոր ապացույցները համարվում են անթույլատրելի, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2013 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ կարճվել է թիվ 52103812 քրեական գործի մասը և ոչ թե ամբողջ քրեական գործի վարույթը: Քննիչն արձանագրել է, որ վիճաբանության ընթացքում Արթուր Բաղալյանը մոտեցել է նրանց, իր մեքենայում եղած հրացանով խուլիգանական դրդումներով դիտավորությամբ կրակել է Արմեն Մկրտչյանի ուղղությամբ՝ նրան պատճառելով առողջության միջին ծանրության վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 114):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի մասը կարճելուց հետո նախաքննության մարմինը քրեադատավարական նորմերի պահանջներին համապատասխան շարունակել է գործի նախաքննությունը:

31. Հիմք ընդունելով սույն որոշման 13-23-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն և Մացակ Բաղալյանների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրական դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները: Արդյունքում՝ կիրառվել է քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս Արմեն և Մացակ Բաղալյանների մասով բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Մինչդեռ ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արթուր Բաղալյանի մասով վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝
Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Մացակ և Արմեն Ռոբերտի Բաղայանների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արթուր Ռոբերտի Բաղայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

42.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՏԳ/0018/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վանյա Ռաֆիկի Բեգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ մեղադրող Ա.Գևորգյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի հունվարի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 38100613 քրեական գործը՝ Վանյա Բեգյանի կողմից Արմեն Գրիգորյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2013 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ Վ.Բեգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը Վ.Բեգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չիեռանալու մասին ստորագրությունը:

2013 թվականի մարտի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի

դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի դատավճռով Վ.Բեգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հունիսի 27-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը պատժի մասով փոփոխելու մասին: Ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Վերաքննիչ դատարանի կազմում ընդգրկված դատավոր Գ.Մելիք-Սարգսյանը հայտնել է հատուկ կարծիք այն մասին, որ Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժն արդարացի է, և այն պայմանականորեն չկիրառելու հիմքերը բացակայում են:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Ա.Գևորգյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Վ.Բեգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Աղավնավանք գյուղ տանող ճամփեզրին վեճի մեջ է մտել համագյուղացի Արմեն Գառնիկի Գրիգորյանի հետ, դիտավորությամբ ձեռքով հարվածել վերջինիս դեմքին, այնուհետև վայր ընկած տեղում ոտքով հարվածել գլխի աջակողմյան քունքային մասին՝ պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 67):

6. Դատաբժշկական փորձագետի թիվ 226 եզրակացության համաձայն՝ «(...) Ա.Գրիգորյանի ստացած մարմնական վնասվածքները՝ բաց զանգուղեղային վնասվածք՝ աջից քունքոսկրի խրթեշի կոտրվածքի անցումով զանգի հիմ՝ բուրգի շրջան, որի հետևանքով առաջացել է աջակողմյան օտոլիկվորեա, գլխուղեղի միջին աստիճանի սալջարդի՝ կոնտուզիոն-հեմոռագիկ օջախի առաջացումով, սուբարախնոիդալ արյունազեղման, աջից ծոծրակային շրջանի վերքի՝ այժմյան սպիի, ձևով, պատճառվել են բութ, կոշտ առարկաների ներգործությամբ (...), որոնք պատճառել են առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող» (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 30-31):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ոչ միայն կատարված հանցագործության

բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, այլև ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները, այն, որ երիտասարդ է, նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն, տուժողի հետ հաշտվել է, վերջինս բողոք կամ պահանջ չունի: (...) [Դ-]ատարանը գտնում է, որ առանց [Վ.Բեգյանին] հասարակությունից մեկուսացնելու հնարավոր չէ ապահովել պատժի նպատակները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 65-66):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) առաջին ատյանի դատարանը հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, արարքի կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը գնահատելու տեսանկյունից չի անդրադարձել ամբաստանյալ Վ.Բեգյանի արարքի վտանգավորության աստիճանին:

Քրեական գործի նյութերով (...) պարզվում է, որ հանցագործությունից անմիջապես հետո ամբաստանյալը և վկա Գ.Գրիգորյանն օգնել են տուժողին ոտքի կանգնելու և տուն տանելու: Նույն օրն ամբաստանյալի հոր՝ Ռ-աֆիկ Բեգյանի, առաջարկությամբ տուժողին տեղափոխել են Դ-իլիջանի հիվանդանոց, իսկ այնտեղից հաջորդ օրը բժիշկների խորհրդով Երևանի «Էրեբունի ԲԿ»: (...) Հիվանդանոցի հետ կապված ֆինանսական ծախսերը հատուցել է Ռ-աֆիկ Բեգյանը: Ներկայումս տուժողը հաշտվել է ամբաստանյալի հետ և որևէ բողոք կամ պահանջ չունի: Բացի այդ, առաջին ատյանի դատարանում տուժողը խնդրել է ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ մեղմ վարվել և նշանակել հնարավորինս մեղմ պատիժ (...):

(...) Վերաքննիչ դատարանը, գնահատման ենթարկելով սույն որոշման մեջ նշված հանգամանքները իրենց համակցությամբ, հանգում է հետևության, որ սույն գործով օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալները վկայում են ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 34-44):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ թեև Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում վկայակոչել է պատժի նշանակման և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմանն առնչվող՝ Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, սակայն դրանք միակողմանի է մեկնաբանել և ի վերջո հանգել է սխալ հետևության:

Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը

լուծելիս հաշվի չի առել Վ.Բեգյանի կողմից տուժողի կարևոր կենսական օրգանի՝ գլխի շրջանում պատճառված վնասվածքների բնույթը, ինչը պարտավոր էր անել:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի դատավճիռ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման ենթարկել¹ է արդյոք կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Դ.Հովհաննիսյանի* գործով, ինչպես նաև մի շարք այլ որոշումներում (տե՛ս, օրինակ, թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇԴ/0029/01/08, ԱՎԴ-2/0059/01/08, ԼԴ-2/0019/01/09 և այլն):

Դ.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

(...) Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված՝ ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն

ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս Գավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0078/01/09 որոշման 11-12-րդ կետերը):

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և համապատասխանաբար նաև Գ.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումից երևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ դիրքորոշում Վճարելի դատարանն արտահայտել է Գ.Մաղաթյանի գործով որոշման մեջ, որի համաձայն՝ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաթյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

14. Գ.Մաղաթյանի գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշման համատեքստում զարգացնելով Գ.Հովհաննիսյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը: Այլ խոսքով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի՝

- ա) կատարված հանցագործության նպատակն ու շարժառիթը,
- բ) քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը,
- գ) կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը,
- դ) հանցագործության կատարման եղանակը,
- ե) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը,
- զ) հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Բեգյանը 2012

թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Աղավնավանք գյուղ տանող ճանփեզրին վեճի մեջ է մտել համագյուղացի Ա.Գրիգորյանի հետ, դիտավորությանը ձեռքով հարվածել վերջինիս դեմքին, այնուհետև վայր ընկած տեղում ոտքով հարվածել գլխի աջակողմյան քունքային մասին՝ պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ Վ.Բեգյանը երիտասարդ է, նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն, տուժողի հետ հաշտվել է, վերջինս բողոք կամ պահանջ չունի, նրա նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ՝ 3 տարի ժամկետով ազատազրկում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառել, պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել այն, որ Վ.Բեգյանը տուժողի դստեր՝ վկա Գ.Գրիգորյանի հետ օգնել է նրան տուն տանել, ամբաստանյալի հոր առաջարկությամբ տուժողին տեղափոխել են հիվանդանոց, որի հետ կապված ֆինանսական ծախսերը հատուցել է ամբաստանյալի հայրը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

16. Սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով հանցանքի ծանրությունը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ Վ.Բեգյանի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ և այն կրելու նպատակահարմարության հարցում հանգել է ճիշտ եզրահանգման:

Մինչդեռ, Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ամբաստանյալ Վ.Բեգյանը, դիտավորությանը ձեռքով հարվածելով տուժողի դեմքին, այնուհետև վայր ընկած տեղում ոտքով հարվածել է նրա գլխի աջակողմյան քունքային մասին, ինչի արդյունքում վերջինս ստացել է բաց գանգուղեղային վնասվածք՝ աջից քունքոսկրի խրթեշի կտրվածքի անցումով գանգի հիմ՝ բուրգի շրջան, որի հետևանքով առաջացել է աջակողմյան օտոլիկվորեա, գլխուղեղի միջին աստիճանի սալջարդի՝ կոնտուզիոն-հեմոռագիկ օջախի առաջացումով, սուբարախնոդալ արյունազեղման, աջից ծոծրակային շրջանի վերքի՝ այժմյան սպիի ձևով, որոնք պատճառել են առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից որպես Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք գնահատված այն հանգամանքներին, որ ամբաստանյալը և տուժողի դուստրը

օգնել են վերջինիս տուն տանել, նույն օրն ամբաստանյալի հոր առաջարկությամբ տուժողին տեղափոխել են հիվանդանոց, որի հետ կապված ֆինանսական ծախսերը հատուցել է ամբաստանյալի հայրը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), ապա Վճարելի դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները սույն գործով ողջամտորեն չեն նվազեցրել Վ.Բեգյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և չեն կարող նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանալ:

17. Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված և պատճառաբանված չէ:

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելով և ամբաստանյալ Վ.Բեգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը:

Վճարելի դատարանը գտնում է, որ վերը նշված նյութական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատիժը կրելու նպատակահարմարության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատավճռին օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վանյա Ռաֆիկի Բեգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունիսի 27-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 15-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

43.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0044/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
դիմողի ներկայացուցիչ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ
Լ.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ դատախազ Ա.Շահբազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հետաքննության բաժանմունքում ստացվել է դիմող Գագիկ Գևորգի Գևորգյանի դիմումն այն մասին, որ 2006 թվականին Երևան քաղաքի Վ.Փափազյան 21 հասցեում գտնվող գրասենյակում իր և Արտակ Երիցյանի միջև տեղի է ունեցել գումարային պարտք և պահանջի հետ կապված խոսակցություն, որի ժամանակ Ա.Երիցյանը պահանջել է իր հետ կնքել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Այգեճոր 1-ին նրբանցքի թիվ 15 տան առուվաճառքի պայմանագիր՝ սպառնալով պահանջը չկատարելու դեպքում վտանգավոր բռնություն գործադրել որդու և թոռների կյանքի ու առողջության նկատմամբ:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ Դ.Վարդանյանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Գ.Գևորգյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված

նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայությամբ պատճառաբանությամբ:

2. 2013 թվականի հունվարի 30-ին դիմող Գ.Ղևոնդյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ավագ տեսուչ Գ.Վարդանյանի 2013 թվականի հունվարի 18-ի որոշումը և հարուցել քրեական գործ:

Երևան քաղաքի դատախազ Հ.Բաղայանի 2013 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ դիմող Գ.Ղևոնդյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. 2013 թվականի մարտի 20-ին դիմող Գ.Ղևոնդյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ Գ.Վարդանյանին հարուցել քրեական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 22-ի որոշմամբ դիմող Գ.Ղևոնդյանի բողոքը մերժվել է:

4. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք են բերել դիմող Գ.Ղևոնդյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանը և Ե.Վարոսյանը:

Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել դիմող Գ.Ղևոնդյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 22-ի որոշումը վերացնելու մասին: Վերաքննիչ դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել Գ.Ղևոնդյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Շահբազյանը:

Վճռաբեկ դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

2013 թվականի հոկտեմբերի 18-ին դիմողի ներկայացուցիչներ Լ.Սահակյանը և Ե.Վարոսյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել դատախազ Ա.Շահբազյանի վճռաբեկ բողոքը և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի հունվարի 18-ի որոշումը պատճառաբանված է հետևյալ կերպ. «(...) Այսպիսով՝ նախապատրաստված նյութերով հիմնավորվել է, որ Արտակ Երիցյանի արարքում բացակայում է ՀՀ քր. օր-ի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Միաժամանակ, հիմնավորվել է, որ Արտակ Երիցյանի և Գազիկ Ղևոնդյանի միջև առկա են պայմանագրից ծագող քաղաքացիաիրավական բնույթի

փոխհարաբերություններ, որոնք պետք է լուծվեն դատական կարգով, քաղիայի շրջանակներում (...)» (տե՛ս նյութեր, թերթ 9-12):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, ուսումնասիրելով բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերը և լսելով կողմերին, գտնում է, որ բողոքը պետք է մերժել, քանի որ ավագ տեսուչը հաղորդման կապակցությամբ Գագիկ Ղևոնդյանի, Վարդան Մաթևոսյանի, Աբրահամ Աղաջանյանի, Նիկոլայ Հակոբյանի, Գևորգ Ղևոնդյանի, Ալբերտ Երիցյանի, Դավիթ Էլոյանի, Կարեն Բաղայանի, Հովհաննես Գրիգորյանի բացատրությունների և «ՄԷԿՏ» համակարգում առկա տեղեկության հիման վրա օրինական և հիմնավորված որոշում է կայացրել Գագիկ Ղևոնդյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ Արտակ Երիցյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (...)» (տե՛ս նյութեր, թերթ 44-47):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Նման պայմաններում քրեական հետապնդման մարմինն անհրաժեշտ միջոցառումներ պետք է կատարեր՝ պարզելու համար, թե ինչու է տան գրավադրման գործընթացի արդյունքում վարկը ստացել Արտակ Երիցյանը, ինչպես նաև՝ պարզեր, թե ինչու վիճարկվող տան առուվաճառքից հետո այդ տան նոր տիրոջ վարկային պարտավորությունները կատարել է Գագիկ Ղևոնդյանը:

Նշված հանգամանքները էական նշանակություն կարող են ունենալ բողոքում բարձրացված հարցերի շուրջ ճիշտ եզրահանգման գալու համար, սակայն, ինչպես նշվեց վերևում, այդ հանգամանքները պարզելու ուղղությամբ քրեական հետապնդման մարմինն անհրաժեշտ աշխատանքներ չի կատարել:

(...) Քրեական հետապնդման մարմինը պետք է պարզեր, թե ճիշտ է արդյոք Գևորգ Ղևոնդյանի այդ ցուցմունքը, եթե ոչ, ապա հիմնավորեր այդ համապատասխան փաստարկներով, իսկ եթե ճիշտ է Գևորգ Ղևոնդյանի ցուցմունքն առ այն, որ ինքն ընդհանուր առմամբ 36.000 ԱՄՆ դոլար է պարտքով վերցրել Արտակ Երիցյանից, ապա ինչ 42.700 ԱՄՆ դոլար և 30.000 ԱՄՆ դոլար գումարների մասին է խոսքը, որն Արտակը խնդրել է վճարել համապատասխանաբար Ռ-Դ-ում «Նեստլե» ֆիրմային և իր ծանոթ Տիգրանին:

Բողոքում բարձրացված հարցերի շուրջ վերոհիշյալ հանգամանքների պարզաբանումը և դրանց իրավական գնահատական տալը նույնպես էական է գործով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն ապահովելու համար, որը քրեական հետապնդման մարմնի կողմից չի կատարվել:

Քրեական հետապնդման մարմինը նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություն չի վերցրել Արտակ Երիցյանից, որի ենթադրյալ հակաօրինական գործողությունների դեմ բողոք է ներկայացրել Գագիկ Ղևոնդյանը:

(...) Վերը նշված բացատրության գնահատման պարագայում քրեական հետապնդման մարմնի ուղղակի պարտականությունն էր պարզել արդյոք միայն մեկ վարորդ-թիկնապահ ունի Ա.Երիցյանը, թե այդպիսիք մի քանի հոգի են, եթե մի քանի հոգի են, ապա Գագիկ Ղևոնդյանին առերևույթ սպառնալիքներ տալու պահին կոնկրետ որ վարորդ-թիկնապահն է եղել Ա.Երիցյանի հետ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզ չի դարձել, թե իրական առուվաճառքի գործարք կատարվել է, թե ոչ, Արտակ Երիցյանը տունը գնելիս Գագիկ Ղևոնդյանին գումար տվել է, թե ոչ, ինչ տվյալներով է հիմնավորվում Գագիկ Ղևոնդյանի որդու՝ Արտակ Երիցյանին պարտք լինելու հանգամանքը, ինչքան է եղել այդ պարտքի գումարը, ինչքան է Արտակ Երիցյանը պահանջել նրանից, ինչ է ի վերջո ստացել Արտակ Երիցյանը» (տե՛ս նյութեր, թերթ 105-111):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների պահանջները:

Վկայակոչելով և վերլուծելով գործի փաստական հանգամանքները՝ բողոքաբերը կարծիք է հայտնել առ այն, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրինական է և հիմնավորված, հետևաբար այն վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի դատական ակտը չի կարող համարվել իրավաչափ: Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Գ.Ղևոնդյանի հաղորդման վերաբերյալ նյութերը նախապատրաստվել են թերի, հիմնականում շեշտը դրել է այն չպարզված հանգամանքների վրա, որոնք իրենց բնույթով քաղաքացիաիրավական են և ենթակա են պարզման քաղաքացիական գործի քննության ընթացքում:

10. Միևնույն ժամանակ բողոքաբերը փաստարկել է, որ սույն գործով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում դատարանի կողմից իրականացվող քննության սահմանների որոշակիության և հայտնաբերված իրավախախտումների նշանակության հարցերը: Քրեադատավարական օրենսդրությունը չի սահմանում, թե օրենքի ինչպիսի խախտումը պետք է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերացման հիմք հանդիսանա, և դրա հայտնաբերման նպատակով գործի քննությունը դատարանում ինչ խորությամբ պետք է իրականացվի:

Բողոքաբերի կարծիքով՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների բողոքարկման արդյունքում դատարանները կարող են բողոքը բավարարել բացառապես այն դեպքում, երբ թույլ են տրվել անձանց իրավունքների էական խախտումներ, իսկ եթե խախտումներ չկան, կամ դրանք ոչ էական կամ ձևական բնույթ են կրում, ապա բողոքը չի կարող բավարարվել: Հակառակ մոտեցման պարագայում, ըստ բողոքաբերի, ստացվում է, որ հետաքննության կամ նախաքննության մարմնի վրա պարտականություն է դրվում նյութերի նախապատրաստության փուլում կատարել բոլոր հնարավոր դատավարական գործողությունները, ինչն էլ իր հերթին ենթադրում է, որ հանցագործության վերաբերյալ յուրաքանչյուր հաղորդման դեպքում հետաքննության կամ

նախաքննության մարմինը պետք է քրեական գործ հարուցի և բոլոր հնարավոր քննչական գործողությունները կատարի, եթե նույնիսկ դրանց կատարումը ոչ անհրաժեշտ է և ձևական բնույթ է կրում:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 22-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատական վերահսկողության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Գ.Ղևոնդյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության սահմանման մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում

ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

(...)

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Մեջբերված քրեադատավարական դրույթների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլը քրեադատավարական ընթացակարգի ինքնուրույն փուլ է, որն ունի իր սկիզբն ու ավարտը, խնդիրները, սուբյեկտները և այլն: Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պարզում է քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի առկայության կամ բացակայության փաստը: Այս փուլում հանցագործության փաստի հաստատման և անձի մեղքի հարց չի քննարկվում:

Քրեական գործ հարուցելու մասին օրինական, հիմնավորված և ժամանակին կայացված որոշումն անհրաժեշտ նախապայման է հանցագործությունների արագ և ամբողջական բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Միևնույն ժամանակ, քրեական գործի չհիմնավորված հարուցմամբ սահմանափակվում են անձանց իրավունքներն ու ազատությունները, նրանց վնաս է պատճառվում: Այլ խոսքով՝ ինչպես քրեական գործի անհիմն հարուցումը, այնպես էլ հարուցման անհիմն մերժումը օրինականության կոպիտ խախտումներ են և զգալի վնաս են պատճառում անձին, հասարակությանն ու պետությանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ միասնական և պարտադիր կարգ, որը ենթադրում է հանցագործության մասին հաղորդման ընդունում և գրանցում, դրա մեջ արձանագրված փաստական տվյալ-

ների ստուգում և պատճառաբանված որոշման կայացում: Օրենքը համապատասխան իրավասությանը օժտված պաշտոնատար անձին պարտավորեցնում է հանցագործության մասին հաղորդումները ստուգել և լուծել անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ հաղորդումը ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Ընդ որում, պարզելու համար, թե հաղորդման մեջ մատնանշված փաստական տվյալները պարունակում են արդյոք հանցագործության հատկանիշներ և առկա չեն արդյոք քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքներ, հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը լիազորված են կատարելու բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակ թվով դատավարական և քննչական գործողություններ:

15. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլը, ի համեմատ քրեադատավարական ընթացակարգի մյուս փուլերի, ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկությունները: Մասնավորապես, քրեադատավարական այս փուլի ընթացքում հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և հանրային-իրավական պարտավորություններին համապատասխան, ժամանակային, ինչպես նաև քննչական և այլ դատավարական գործիքակազմի սահմանափակության պայմաններում պետք է իրականացնեն որոշակի միջոցառումներ, պարզելու համար ներկայացված հաղորդման մեջ տեղ գտած այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին և ըստ այդմ, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնեն քրեական գործ հարուցելու կամ գործի հարուցումը մերժելու մասին: Նշված սահմանափակումներով պայմանավորված՝ քրեական գործի հարուցման հարցը լուծելու իրավասությանը օժտված մարմինը (պաշտոնատար անձը), օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով, պետք է ընտրություն կատարի, թե որ քննչական կամ այլ դատավարական գործողություններն են առաջնային և իրականացնի դրանք՝ հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հավաստող փաստական տվյալների վերհանման նպատակով:

Այս փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, որից հետո միայն իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բազմակողմանի և լրիվ քննություն: Հակառակ դրան, եթե նյութերի նախապատրաստության ընթացքում այնպիսի փաստական տվյալներ են ձեռք բերվել, որոնք հերքում են հանցագործության հատկանիշների առկայությունը, վկայում են քաղաքացիական, վարչական կամ այլ իրավահարաբերություններից բխող գործողությունների առկայության մասին, ինչպես նաև առկա են գործի վարույթը բացառող

դատավարական արգելքներ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

16. Քրեական գործի հարուցման փուլի իրավական բովանդակությունը բնորոշող վերոգրյալ առանձնահատկությունների լույսի ներքո գնահատելով դատավարական այս փուլի նկատմամբ իրականացվող հետագա դատական վերահսկողության սահմանների հարցը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են նյութերի նախապատրաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմնին կամ քննիչին ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատախազը: Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության և դատախազական հսկողության առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լ. Չարյանի* գործով որոշմամբ (տե՛ս՝ *mutatis mutandis* Լաուրա Գաբեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

Դատարանի խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվել է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխում է արդյոք նյութերի նախապատրաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ հետագա դատական վերահսկողության վերոշարադրյալ առանձնահատկությունները վերաբերելի չեն այն դեպքերին, երբ քրեական գործի հարուցումից հետո դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով իրականացնում է մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման (գործողության) օրինականության և հիմնավորվածության ստուգում:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում իրականացվող դատական վերահսկողության վերոգրյալ առանձնահատկություններով է պայմանավորված քրեադատավարական օրենսդրության մեջ առկա այն տարբերակված մոտեցումը, որը վերաբերում է գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման և մինչդատական վարույթի ընթացքում կայացվող այլ որոշումների կամ իրականացվող գործողությունների (անգործության) բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է

մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ընդհանուր կարգը, ամրագրում է, որ եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, ապա դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (տե՛ս՝ Լաուրա Գարեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ նորմ, որը հստակ կարգավորում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները: Մասնավորապես, հիշատակված իրավանորմը սահմանում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ:

Վճռաբեկ դատարանը Հ.Հարությունյանի գործով որոշման մեջ անդրադարձել է այս հարցին՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանորմեր, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը՝ արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում

իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը» (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ-0004/11/11 որոշման 20-21-րդ կետերը):

18. Ամփոփելով սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության շրջանակներում դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, դատարանը պետք է պարզի, թե հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են արդյոք հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, դատարանի խնդիրն է պարզել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով խախտվել են արդյոք անձի իրավունքները և ազատությունները:

Ի թիվս այլոց, պարզաբանման ենթակա են հետևյալ հարցերը՝

1) պահպանվե՞լ է արդյոք հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված կարգը,

2) առկա՞ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված օրինական հիմքերը,

3) պահպանվե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված պահանջները:

Գտնելով, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրինական և հիմնավորված չէ՝ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով, որոշում է կայացնում վիճարկվող որոշումը վերացնելու մասին, որի դեպքում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը պարտադիր է: Հակառակ դեպքում դատարանը մերժում է ներկայացված բողոքը՝ հաստատելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

19. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Գ.Ղևոնդյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն այն մասին, որ 2006 թվականին Երևան քաղաքի Վ.Փափազյան 21 հասցեում գտնվող գրասենյակում իր և Արտակ Երիցյանի միջև տեղի է ունեցել գումարային պարտք և պահանջի հետ կապված խոսակցություն, որի ժամանակ Ա.Երիցյանը պահանջել է իր հետ կնքել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Այգեճոր 1-ին նրբանցքի թիվ 15 տան առուվաճառքի պայմանագիր՝ սպառնալով պահանջը չկատարելու դեպքում վտանգավոր բռնություն գործադրել որդու և թոռների կյանքի ու առողջության նկատմամբ (տե՛ս՝ սույն որոշման 1-ին կետը):

Դիմող Գ.Ղևոնդյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված

նյութերով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ Գ.Վարդանյանը 2013 թվականի հունվարի 18-ին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Վարույթն իրականացնող մարմինն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ նախապատրաստված նյութերով հիմնավորվել է Ա.Երիցյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայությունը, միաժամանակ հիմնավորվել է, որ Ա.Երիցյանի և Գ.Ղևոնդյանի միջև առկա են պայմանագրից ծագող քաղաքացիաիրավական բնույթի փոխհարաբերություններ, որոնք պետք է լուծվեն քաղաքացիական դատավարության կարգով (տե՛ս՝ սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Դիմող Գ.Ղևոնդյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը հաղորդման կապակցությամբ իրականացված ստուգման արդյունքում օրինական և հիմնավորված որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ Ա.Երիցյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի մայիսի 22-ին որոշում է կայացրել դիմող Գ.Ղևոնդյանի բողոքը մերժելու մասին (տե՛ս՝ սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Դիմող Գ.Ղևոնդյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ նյութերի նախապատրաստության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր կատարել նաև անհրաժեշտ այլ միջոցառումներ, պարզել մի շարք հանգամանքներ, բացատրություններ վերցնել անձանցից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ մատնանշված հանգամանքները պարզելու ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ չկատարելով՝ վարույթն իրականացնող մարմինը բազմակողմանի և լրիվ քննություն չի իրականացրել: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերացնելու մասին, իսկ վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել Գ.Ղևոնդյանի իրավունքների և ազատությունների խախտումը (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, նյութերի նախապատրաստության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների բավարարության, ինչպես նաև նյութական և դատավարական օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից քրեական գործի հարուցումը մերժելու մասին վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը գնահատելու փոխարեն, իր դատական ակտով անդրադարձել է հարցերի այնպիսի շրջանակի, որոնք գտնվում են բացառապես նախնական քննության մարմնի իրավասության ներքո: Ընդ որում,

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից չպարզված փաստական տվյալներ է մատնանշել այնպիսի հանգամանքներ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), որոնք որևէ նշանակություն չեն կարող ունենալ հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության փաստը պարզելու համար և առավելապես վերաբերում են Ա.Երիցյանի, Գ.Ղևոնդյանի ու վերջինիս որդու միջև առկա քաղաքացիաիրավական փոխհարաբերություններին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դիմողի ներկայացուցիչների բողոքը ենթակա է բավարարման, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու փոխարեն, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոշում է կայացրել դիմող Գ.Ղևոնդյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտավորություն սահմանելու մասին:

Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Ղևոնդյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության սահմանման մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

22. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Գ.Ղևոնդյանի հաղորդման կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են փաստելու, որ հաղորդման մեջ նշված հանգամանքները հանցագործության հատկանիշներ չեն պարունակում, իսկ Ա.Երիցյանի և Գ.Ղևոնդյանի միջև առկա են պայմանագրից ծագող քաղաքացիաիրավական բնույթի փոխհարաբերություններ: Վարույթն իրականացնող մարմինը նախապատրաստված նյութերով քրեական գործի

հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի էական խախտումներ թույլ չի տվել, հետևաբար նշված որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 22-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Գ-ագիկ Գ-ևորգի Գևորգյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 22-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԳ/0207/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Պ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Ռ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝
պաշտպան՝*

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Համլետ Խոսրովի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ մեղադրող Պ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել են թիվ 33105811 և թիվ 33105911 քրեական գործերը:

2011 թվականի դեկտեմբերի 27-ին թիվ 33105811 և թիվ 33105911 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում և նախաքննությունը շարունակվել է թիվ 33105811 համարով:

2011 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել են թիվ 33107511 և թիվ 33107611 քրեական գործերը, որոնք միացվել են թիվ 33105811 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ Համլետ Խոսրովի Սահակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի հոկտեմբերի 11-ին Հ.Սահակյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի նոյեմբերի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 12-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Հ.Սահակյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

3. Մեղադրող Ա.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի հունիսի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 12-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Պ.Մարտիրոսյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ մեղադրող Պ.Մարտիրոսյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից Հ.Սահակյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, 2010 թվականի սեպտեմբերի 30-ից աշխատելով «Հայանտառ» ՊՈԱԿ «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում որպես անտառպահպանության ինժեներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, ի պաշտոնն պարտավոր լինելով պարբերաբար հսկել անտառների պահպանության և պաշտպանության վիճակն անտառպետություններում, պահաբաժիններում և տեղամասերում, կազմել անտառխախտումների արձանագրություններ, ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իր վրա դրված հիշյալ պարտականությունները պատշաճ չի կատարել, մասնավորապես պարբերաբար չի հսկել անտառների պահպանության վիճակը նույն մասնաճյուղի Վահագնիի անտառպետության թիվ 2,3,4,5,7-րդ և Եղեգնուտի անտառպետության թիվ 2-րդ և 4-րդ պահաբաժինների տարածքներում, հաստատապես իմանալով 2010 թվականի հոկտեմբերի 1-ից Եղեգնուտի անտառպետության անտառպետ և 2011 թվականի մարտի 28-ից Վահագնիի անտառպետության անտառպետի պաշտոնակատար հրամանագրված Սամվել Հովհաննիսյանի կողմից հիվանդության պատճառով

2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 3-ը, դեկտեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 30-ը, 2011 թվականի մարտի 9-ից մինչև հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածներում աշխատանքի պատշաճ չհաճախելու հանգամանքի մասին, հիշյալ պահաբաժինների անտառների պահպանության և ծառերի ապօրինի հատումները կանխելու համար միջոցներ չի ձեռնարկել, որի արդյունքում 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածում հիշյալ պահաբաժինների տարածքներից քննությանը ինքնությունը չպարզված անձանց կողմից ապօրինի հատվել են 294 հատ տարբեր տեսակի ծառեր և դրա հետևանքով Համլետ Սահակյանի անփութության պատճառով պետությանն անգոյությունը պատճառվել է էական՝ 7.730.700 դրամի վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 523):

6. Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Հ.Սահակյանը ցուցմունք է տվել այն մասին, որ համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի № 463-Ա հրամանի՝ պետք է պահաբաժիններով պարբերաբար շրջագայվի, վերահսկվի անտառայտերի, անտառապահների աշխատանքային գործունեությունը, իսկ անտառապետերը, անտառապահները պարտավոր են ճիշտ ժամանակին հայտնաբերել բոլոր տեսակի անտառախախտումները, դրանք արձանագրել և երկօրյա ժամկետում ներկայացնել իրեն, որից հետո ինքը պարտավոր է ճշտել իսկությունը և քառօրյա ժամկետում արձանագրությունը ներկայացնել ըստ պահանջվող հասցեի: Հատված ծառերի համար պատասխանատու են տվյալ տարածքների անտառապահները կամ անտառապետը և ինքը նրանց նկատմամբ պարբերաբար հսկողություն է կատարել (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 523):

7. Գործով վկա Գեորգի Իվանի Պողոսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է բնապահպանության նախարարության աշխատակազմի ԲՊՏ-ում՝ որպես ավագ տեսուչ: 2011 թվականի հունիս ամսին բնապահպանության նախարարի հանձնարարագրի համաձայն ստուգող խմբի կազմում մասնակցել է Գուգարքի անտառտնտեսության մասնաճյուղի ստուգմանը, որի արդյունքում Եղեգնուտի անտառայտության չորրորդ և Վահագնիի անտառայտության հինգերորդ պահաբաժիններում հայտնաբերել են յուրաքանչյուրում 90 հատ ապօրինի հատված ծառ: Վահագնիի անտառայտության յոթերորդ պահաբաժնում հայտնաբերվել է ևս 30 հատ ապօրինի հատված ծառ: Անտառտնտեսության ներկայացուցիչները հայտնել են, որ տեղյակ չեն, թե ովքեր են հատել այդ ծառերը: Հատված ծառերի վրա որևէ նշան և կնիքի համար չի եղել, այդ պատճառով դրանք հաշվառել են որպես ապօրինի հատված: Ստուգումները տևել են մոտ 13-14 օր, ստուգումներն իրականացրել են 7-8 հոգով (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 527):

8. Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի № 463-Ա հրամանի.

«1. «Հայանտառ ՊՈԱԿ «Գուգարքի անտառայտություն» մասնաճյուղի անտառային տեխնիկ Համլետ Սահակյանին 2010թ. սեպտեմբերի 30-ից փոխադրման կարգով նշանակել նույն մասնաճյուղում որպես անտառապահպանության ինժեներ:

Աշխատողի աշխատանքային գործառույթներն են՝

ա) պարբերաբար հսկել անտառների պահպանության և պաշտպանության վիճակը անտառպետություններում, պահաբաժիններում և տեղամասերում,

բ) կազմակերպել անտառային հրդեհների մարման աշխատանքները՝ մինչև համապատասխան ուժերի ներգրավումը,

գ) կազմել անտառխախտումների, անտառային հրդեհների, որսի կանոնների ու ժամկետների խախտման արձանագրություններ և վարել դրանց հաշվառումը,

դ) հետևել անտառպահախմբի կողմից կազմված անտառխախտումների, որսի կանոնների և ժամկետների խախտումների արձանագրությունների կազմման և ձևակերպման ճշտությունը,

ե) հետևել անտառխախտումների, անտառային հրդեհների, որսի կանոնների ու ժամկետների խախտումների վերաբերյալ իրավապահ մարմիններում և բնապահպանական պետական տեսչությունում գտնվող գործերի ընթացքին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 56):

9. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Սույն քրեական գործով ձեռք բերված ապացույցները իրենց համակցությամբ թույլ են տալիս հանգելու հետևության, որ «Հայանտառ» ՊՈԱԿ «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառպահպանության ինժեներ Համլետ Սահակյանի աշխատանքային պարտականությունները որևէ իրավական ակտով սահմանված չեն եղել: Նա հանդիսացել է պետական ոչ առևտրային կազմակերպության ծառայող, մատուցել է մասնագիտական ծառայություններ և նպաստել է մասնաճյուղի կանոնադրական խնդիրների իրականացմանը: Միակ ներքին իրավական ակտը, որով անտառպահպանության ինժեներին որոշակի հանձնարարական է տրվել անտառպահպանության բնագավառում, դա «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի 30.09.2010 թվականի թիվ 463-Ա հրամանի հիման վրա «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի 30.09.2010 թվականի թիվ 49-Կ հրամանն է, որի համաձայն, անտառպահպանության ինժեներին հանձնարարվել է պարբերաբար հսկել անտառների պահպանության և պաշտպանության վիճակն անտառպետություններում, պահաբաժիններում և տեղամասերում: Ելնելով վերոգրյալից՝ անտառպահպանության ինժեները չի հանդիսանում պաշտոնատար անձ, քանի որ վերջինս չի իրականացնում իշխանության ներկայացուցչի գործառույթներ, ինչպես նաև կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հետևաբար նա պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ չի կարող հանդիսանալ: Բացի այդ, անտառպահպանության ինժեներ Համլետ Սահակյանը չի հանդիսանում նաև նյութական պատասխանատու անձ, անտառպետության ղեկավարումը և աշխատանքների անմիջական հսկողությունը վերջինիս աշխատանքային գործառույթների մեջ չեն մտնում: Դատաքննությամբ հաստատվեց նաև, որ անտառպահպանության ինժեներ Համլետ Սահակյանը օբյեկտիվորեն կամ սուբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու իր պարտականությունները: Սույն քրեական գործով նախաքննական մարմնի կողմից չի հստակեցվել, թե ամբաստանյալը կոնկրետ իր որ պարտականությունը

չի կատարել կամ ի գորու էր արդյոք այդ պարտականությունը կատարել, այն դեպքում, երբ վերջինս չի հանդիսանում նյութական պատասխանատու անձ, նրա աշխատաժամանակը սահմանափակվում է ամեն օր ժամը 09.00-ից մինչև 18.00-ն, իսկ շաբաթ և կիրակի օրերը նրա համար հանգստյան օրեր են, լինելով անհարթ ռեյիեֆումնեցող 32.000 հեկտար տարածքով անտառամասի անտառապահպանության ինժեներ, չունենալով հատուկ հանդերձանք, տրանսպորտ կամ ձի, հատուկ միջոցներ, նա օբյեկտիվորեն չէր կարող հսկել այդ ողջ տարածքը: Այսպիսով, բացակայում է պատճառական կապը Հ.Սահակյանի կողմից ծառայության նկատմամբ ենթադրյալ անփույթ վերաբերմունքի դրսևորման և պատճառված էական վնասի միջև, որը պարտադիր պայման է անփութության համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Նման պայմաններում դատարանը գտնում է, որ Համլետ Սահակյանի արարքում վերը նշված հանցակազմի տարրերը բացակայում են, իսկ հանցագործության որակումը կոնկրետ հանրորեն վտանգավոր արարքի մեջ հանցակազմի առկայության հավաստումն է, իսկ հանցակազմի տարրերից մեկի բացակայությունը, հակառակը, նշանակում է, որ կատարված արարքը հանցագործություն չէ, ուստի և բացակայում է քրեական պատասխանատվության հիմքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 531):

10. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 12-ի դատավճիռը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ անտառապահպանության ինժեները չի հանդիսանում պաշտոնատար անձ, քանի որ վերջինս չի իրականացնում իշխանության ներկայացուցչի գործառույթներ, ինչպես նաև կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հետևաբար նա պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ չի կարող հանդիսանալ: Բացի այդ անտառապահպանության ինժեներ Համլետ Սահակյանը չի հանդիսանում նաև նյութական պատասխանատու անձ, անտառպետության ղեկավարումը և աշխատանքների անմիջական հսկողությունը վերջինիս աշխատանքային գործառույթների մեջ չեն մտնում:

Նախաքննական մարմինը Համլետ Սահակյանին առաջադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեղադրանքը, չի հստակեցրել, թե ամբաստանյալը կոնկրետ իր որ պարտականությունը չի կատարել կամ ի գորու էր արդյոք այդ պարտականությունը կատարել, այդ պարտականությունը կոնկրետ որ օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով է դրված եղել մեղադրյալի վրա, հնարավորություն ունեցել է նա կոնկրետ տվյալ պայմաններում կատարել այդ պարտականությունները, հավաստել կատարված արարքի և վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

Վերաքննիչ դատարանը նաև հարկ է համարում փաստել, որ ամբաստանյալ Հ.Սահակյանը չի հանդիսանում նյութական պատասխանատու անձ, նրա աշխատաժամանակը սահմանափակվում է ամեն օր ժամը 09.00-ից մինչև 18.00-ն, իսկ շաբաթ և կիրակի օրերը նրա համար հանգստյան օրեր են, լինելով անհարթ ռեյիեֆ ունեցող 32.000 հեկտար տարածքով անտառամասի

անտառպահպանության ինժեներ, չունենալով հատուկ հանդերձանք, տրանսպորտ կամ ձի, հատուկ միջոցներ, նա օբյեկտիվորեն չէր կարող հսկել այդ ողջ տարածքը:

Այսպիսով, բացակայում է ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտը, այլև օբյեկտիվ կողմը, այն է պատճառական կապը Հ.Սահակյանի կողմից ծառայության նկատմամբ ենթադրյալ անփույթ վերաբերմունքի դրսևորման և պատճառված էական վնասի միջև, որը պարտադիր պայման է անփութության համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 49):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 7-րդ, 10-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ:

Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չեն հետազոտել գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում անհիմն և չպատճառաբանված հետևություններ են արել այն մասին, որ Հ.Սահակյանը 32.000 հեկտար անտառտարածքը օբյեկտիվորեն չէր կարող հսկել, ինչպես նաև այն, որ անտառպահպանության ինժեները չի հանդիսանում պաշտոնատար անձ, վերջինս չի իրականացնում իշխանության ներկայացուցչի գործառնություններ, հետևաբար նա պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ չի կարող հանդիսանալ: Մինչդեռ Հ.Սահակյանի գործառնությունների մեջ ներառված է եղել անտառխախտումների վերաբերյալ արձանագրությունների կազմումը, ինչը նշանակում է, որ վերջինս, կազմակերպության անունից պաշտոնական փաստաթղթեր կազմելով, կարող էր ազդել անձանց վարքագծի վրա:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները բավարար չափով չեն պատճառաբանել նաև այն հետևությունները, որ Հ.Սահակյանի աշխատանքային պարտականությունները որևէ իրավական ակտով սահմանված չեն եղել: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածների հիման վրա՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 463-Ա հրամանը հանդիսանում է իրավական ակտ, որով էլ սահմանվել են Հ.Սահակյանի աշխատանքային պարտականությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը հանգել է հետևության, որ Հ.Սահակյանը հանդիսացել է պետական հիմնարկություն համարվող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի անտառատնտեսության մասնաճյուղում առանձին լիազորությամբ օժտված պաշտոնատար անձ, օժտված է եղել կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական լիազորություններով, սակայն պատշաճ չի կատարել նորմատիվ ակտով սահմանված իր պարտականությունները, ինչի արդյունքում պետությանը պատճառվել է էական վնաս:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել

Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտոնեական անփութության հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մաս) մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Հ.Սահակյանի արարքում բացակայում են պաշտոնեական անփութության հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մաս) տարրերն ու հատկանիշները:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

Մեջբերված հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից երևում է, որ պաշտոնեական անփութության՝ որպես պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հիմնական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորում են պետական մարմինների բնականոն գործունեությունը, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս քաղաքացիների, կազմակերպությունների, ինչպես նաև հասարակության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Պաշտոնեական անփութության հանցակազմն օբյեկտիվ կողմից որպես կանոն դրսևորվում է անգործությամբ, այն է՝ պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով (պարտականությունները կատարվում են թերի): Այսինքն՝ պաշտոնատար անձը պատասխանատվության է ենթարկվում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով, եթե նա չի կատարել կամ թերի է կատարել այն գործողությունները, որոնք մտնում են նրա պարտականությունների մեջ: Այդ իսկ պատճառով հանցակազմի առկայությունը հավաստելու համար նախևառաջ

անհրաժեշտ է պարզել, թե որոնք են պաշտոնատար անձի՝ օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանված պարտականությունները: Բացի այդ, հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ պաշտոնատար անձը հնարավորություն է ունեցել կատարելու իր վրա դրված պարտականությունները: Եթե պաշտոնատար անձն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների ազդեցության պատճառով (արտաքին պայմաններ, առողջական վիճակ և այլն) հնարավորություն չի ունեցել կատարելու իր պարտականությունները, ապա նրա արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը բացակայում է:

Պաշտոնեական անփութության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանրորեն վտանգավոր հետևանքները: Օրենքը նման հետևանք է դիտում անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված էական վնասը: Ընդ որում, եթե գույքային վնասի դեպքում նախատեսված է որոշակի շեմ (հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը), ապա ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները (այդ թվում՝ անձանց, կազմակերպություններին, հասարակությանը կամ պետությանը պատճառված բարոյական վնասի չափը, տուժողների քանակը, խախտված իրավունքների և ազատությունների բնույթն ու խախտման աստիճանը, հիմնարկության կամ ձեռնարկության բնականոն գործունեության խաթարման աստիճանը և այլն):

ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը նյութական է, ուստի դրա օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում պատճառական կապը արարքի և հետևանքների միջև: Վճարելի դատարանն ընդգծում է, որ հանցավոր անգործության և հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապն առկա է այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր հետևանքն առաջացել է պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում: Այլ կերպ՝ հանրորեն վտանգավոր հետևանքները չէին առաջանա, եթե պաշտոնատար անձը պատշաճ կերպով կատարեր իր վրա դրված պարտականությունները:

16. Սուբյեկտիվ կողմից պաշտոնեական անփութությունը բնութագրվում է անզգուշությամբ, որն իր հերթին կարող է դրսևորվել

ա) ինքնավստահությամբ, երբ պաշտոնատար անձը գիտակցում է, որ չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր պարտականությունները, նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, բայց առանց բավարար հիմքերի հույս է ունենում, որ դրանք կկանխվեն,

բ) անփութությամբ, երբ պաշտոնատար անձը չի նախատեսում իր անգործության՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն պարտավոր էր և կարող էր նախատեսել:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտը հատուկ է: Անձը կարող է պատասխանատվության ենթարկվել պաշտոնեական անփութության համար, եթե նա հանդիսանում է պաշտոնատար անձ, այսինքն՝ բավարարում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասում նշված չափանիշներին:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ գորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից հետևում է, որ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնավարող այն անձինք, ովքեր իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված են կարգադրիչ լիազորություններով:

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող են համարվում այն պետական ծառայողները, ովքեր ղեկավարում են իրենց ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը: Այս առումով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ է հանդիսանում յուրաքանչյուր պետական ծառայող, ով իր ենթակայության տակ այլ ծառայողներ ունի, ղեկավարում է նրանց գործունեությունը:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներն այն անձինք են, ովքեր օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով, մասնավորապես, գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանման, դրամական միջոցների ստացման, հանձնման և այլ գործառույթներով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտելու համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք նրանք օժտված են իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթուղթ տրամադրել

քաղաքացիներին և դրանով կարգավորել նրանց վարքագիծը:

Չուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: Սակայն, եթե նշված անձինք օժտված են նաև կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով, ապա, այդ լիազորություններն իրականացնելիս հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարզելու համար, թե արդյոք անձը հանդիսանում է պաշտոնեական անփութության հանցակազմի սուբյեկտ, անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե արդյոք նա իրականացնում է իշխանության ներկայացուցչի կամ կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ, ինչ իրավական ակտով սահմանված, ինչ կոնկրետ պարտականությունների կատարում է նրա վրա դրված: Բացի այդ, անձի արարքում պաշտոնեական անփութության հանցակազմի առկայությունը պարզելու համար անհրաժեշտ է քննության առնել նաև այն հարցը, թե օբյեկտիվորեն կամ սուբյեկտիվորեն պաշտոնատար անձն արդյոք հնարավորություն ունեցել է պատշաճ կատարելու իր վրա դրված պարտականությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը պարզելու համար անհրաժեշտ է հաջորդաբար քննության առնել հետևյալ հանգամանքները՝

1) իրավական ակտերով սահմանված կարգով ի՞նչ պարտականություններ են դրված եղել պաշտոնատար անձի վրա,

2) պաշտոնատար անձն իր վրա դրված ո՞ր պարտականությունը չի կատարել կամ կատարել է ոչ պատշաճ,

3) պարտականությունների չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը հանգեցրե՞լ է արդյոք քաղաքացիների, կազմակերպությունների, ինչպես նաև հասարակության կամ պետության օրենքով պաշտպանվող իրավունքների ու օրինական շահերի էական խախտմանը,

4) պաշտոնատար անձն օբյեկտիվորեն կամ սուբյեկտիվորեն հնարավորություն ունեցե՞լ է արդյոք պատշաճ կատարել իր վրա դրված պարտականությունները և կանխել վնասի առաջացումը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Հ.Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, աշխատելով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում որպես անտառպահպանության ինժեներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, ի պաշտոնե պարտավոր լինելով պարբերաբար հսկել անտառների պահպանության և պաշտպանության վիճակն անտառպետություններում, պահաբաժիններում և տեղամասերում, կազմել անտառխախտումների արձանագրություններ,

ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իր վրա դրված հիշյալ պարտականությունները պատշաճ չի կատարել, մասնավորապես պարբերաբար չի հսկել անտառների պահպանության վիճակը նույն մասնաճյուղի Վահագնիի և Եղեգնուտի անտառպետությունների համապատասխան պահաբաժինների տարածքներում, հիշյալ պահաբաժինների անտառների պահպանության և ծառերի ապօրինի հատումները կանխելու համար միջոցներ չի ձեռնարկել, որի արդյունքում 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածում հիշյալ պահաբաժինների տարածքներից քննությամբ ինքնությունը չպարզված անձանց կողմից ապօրինի հատվել են 294 հատ տարբեր տեսակի ծառեր և պետությանն անգողությունամբ պատճառվել է էական` 7.730.700 ՀՀ դրամի վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Հ.Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով արդարացրել է` փաստարկելով, որ

ա) նախաքննության մարմնի կողմից չի հստակեցվել, թե ամբաստանյալը կոնկրետ իր որ պարտականությունը չի կատարել,

բ) Հ.Սահակյանի աշխատանքային պարտականությունները որևէ իրավական ակտով սահմանված չեն եղել,

գ) Հ.Սահակյանը չի իրականացրել իշխանության ներկայացուցչի գործառույթներ, ինչպես նաև` կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հետևաբար պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ չի կարող հանդիսանալ,

դ) Հ.Սահակյանն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու իր պարտականությունները (տե՛ս սույն որոշման 2-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, իր համաձայնությունն արտահայտելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների հետ, Հ.Սահակյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ, իսկ դրա դեմ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել է (տե՛ս սույն որոշման 3-րդ և 10-րդ կետերը):

19. Մինչդեռ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Հ.Սահակյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ հստակ ամրագրված է, թե վերջինս կոնկրետ իր որ պարտականությունները չի կատարել, այն է` «ի պաշտոնն պարտավոր լինելով պարբերաբար հսկել անտառների պահպանության և պաշտպանության վիճակն անտառպետություններում, պահաբաժիններում և տեղամասերում, կազմել անտառխախտումների արձանագրություններ, ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով իր վրա դրված հիշյալ պարտականությունները պատշաճ չի կատարել»:

ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն` անտառների պահպանությունը հրդեհների, ինքնակամ զավթումների, ապօրինի հատումների, արածեցումների, աղտոտման, աղբոտման և օրենսդրությամբ արգելված

անտառային կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողությունների դեմ ուղղված համալիր միջոցառումների իրականացումն է:

Մեջբերված իրավադրույթի իմաստով՝ անտառների պահպանության և պաշտպանության վիճակը հսկելու գործառույթն իր մեջ ներառում է նաև ապօրինի հատումների և օրենսդրությամբ արգելված անտառային կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողությունների դեմ ուղղված համալիր միջոցառումների իրականացումը:

Բացի այդ, Հ.Սահակյանին անտառապահպանության ինժեներ նշանակելու մասին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 463-Ս հրամանով, որը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետի իմաստով նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրանով սահմանված շրջանակներում ընդունված ներքին իրավական ակտ է, հստակ սահմանված են վերջինիս աշխատանքային պարտականությունները, որոնց մեջ, ի թիվս այլնի, մտնում է նաև անտառների պահպանության և պաշտպանության վիճակի պարբերաբար հսկումը անտառապետություններում, պահաբաժիններում և տեղամասերում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների փաստարկներն այն մասին, որ նախաքննության մարմինը չի հստակեցրել, թե Հ.Սահակյանը կոնկրետ իր որ պարտականությունները չի կատարել, ինչպես նաև այն, որ Հ.Սահակյանի աշխատանքային գործառույթերը որևէ իրավական ակտով սահմանված չեն եղել, հիմնազուրկ են և չեն բխում սույն գործի փաստական տվյալներից:

20. ՀՀ անտառային օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Անտառային պետական ծառայության պաշտոնատար անձինք պարտավոր են՝ ա) իրենց իրավասության սահմաններում կանխել անտառային օրենսդրության խախտումները.

բ) սահմանված կարգով վարել անտառային օրենսդրության խախտումների վերաբերյալ գործերը.

գ) անտառային օրենսդրության խախտումների համար համապատասխան պետական մարմնին միջնորդություն ներկայացնել անձանց վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև իրենց իրավասության սահմաններում դատարան հայց ներկայացնել անտառային տնտեսությանը հասցված վնասի հատուցման պահանջով.

դ) վերցնել անտառային օրենսդրությունը խախտող անձանց իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ համարվող իրերն ու փաստաթղթերը.

ե) քաղաքացիներին, պաշտոնատար և իրավաբանական անձանց իրենց իրավասության շրջանակներում պարտադիր ցուցումներ տալ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսդրության խախտումների և դրանց հետևանքների վերացման վերաբերյալ.

զ) իրենց իրավասության շրջանակներում ընդունել անտառօգտագործման կասեցման վերաբերյալ որոշումներ.

է) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ»:

Անտառային պետական ծառայության պաշտոնատար անձանց օրենքով վերապահված վերոգրյալ գործառույթները համադրելով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 463-Ա հրամանով սահմանված՝ Հ.Սահակյանի աշխատանքային պարտականությունների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Սահակյանը, աշխատելով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում որպես անտառպահպանության ինժեներ, օժտված է եղել անտառային պետական ծառայության պաշտոնատար անձանց լիազորություններով: Մասնավորապես, Հ.Սահակյանի աշխատանքային պարտականություններն են կազմել.

ա) պարբերաբար հսկել անտառների պահպանության և պաշտպանության վիճակը անտառպետություններում, պահաբաժիններում և տեղամասերում,

բ) կազմակերպել անտառային հրդեհների մարման աշխատանքները՝ մինչև համապատասխան ուժերի ներգրավումը,

գ) կազմել անտառախախտումների, անտառային հրդեհների, որսի կանոնների ու ժամկետների խախտման արձանագրություններ և վարել դրանց հաշվառումը,

դ) հետևել անտառպահախմբի կողմից կազմված անտառախախտումների, որսի կանոնների և ժամկետների խախտումների արձանագրությունների կազմման և ձևակերպման ճշտությանը,

ե) հետևել անտառախախտումների, անտառային հրդեհների, որսի կանոնների ու ժամկետների խախտումների վերաբերյալ իրավապահ մարմիններում և բնապահպանական պետական տեսչությունում գտնվող գործերի ընթացքին:

Բացի այդ, Հ.Սահակյանն իր ցուցմունքներում հայտնել է, որ իր աշխատանքային պարտականությունների մեջ է մտել պարբերաբար վերահսկել անտառպետերի, անտառապահների աշխատանքային գործունեությունը, իսկ անտառապետերը, անտառապահները պարտավոր են եղել հայտնաբերել բոլոր տեսակի անտառախախտումները, դրանք արձանագրել և երկօրյա ժամկետում ներկայացնել իրեն, որից հետո ինքը պետք է ճշտեր դրանց իսկությունը և քառօրյա ժամկետում արձանագրությունները ներկայացնել ըստ պահանջվող հասցեի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Սահակյանն իր աշխատանքային պարտականությունները կատարելիս օժտված է եղել կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական լիազորություններով, այսինքն, ունեցել է անտառային պետական ծառայության պաշտոնատար անձի կարգավիճակ, հետևաբար ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Հ.Սահակյանը չի հանդիսանում պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ, նույնպես հիմնագուրկ են:

Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում նաև ստորադաս դատարանների այն հետևությունների հետ, որ Հ.Սահակյանը հնարավորություն չի ունեցել կատարելու իր պարտականությունները: Գործի նյութերով հիմնավորված է, որ բնապահպանական պետական տեսչության աշխատակիցները ընդամենը 13-14 օրվա ընթացքում ստուգում են իրականացրել Գուգարքի անտառտնտեսության մասնաճյուղի տարածքում և հայտնաբերել ապօրինի հատված թվով 294 հատ ծառ

(տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Մինչդեռ Հ.Սահակյանը 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում հիշյալ տարածքում որևէ ապօրինի հատված ծառ չի հայտնաբերել, անտառախախտման վերաբերյալ որևէ արձանագրություն չի կազմել:

21. Սույն որոշման 18-20-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Հ.Սահակյանի արարքում բացակայում են պաշտոնեական անփութության հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մաս) հատկանիշները, հիմնավոր չեն և չեն բխում սույն գործի փաստական տվյալներից: Ամբաստանյալ Հ.Սահակյանի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, ինչի արդյունքում չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վերը նշված նյութական իրավունքի խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Համլետ Խոսրովի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 12-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳ/0031/12/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Զ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ընդհանուր դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 11-ի որոշման դեմ դատախազ Զ.Ստեփանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճռով Արմեն Արսենի Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ գրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի 2012 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 1-ին ենթակետը, դատապարտյալ Ա.Սկրտչյանի պատժի չկրած մասը կրճատվել է երկու երրորդով՝ 4 (տարի) 8 (ութ) ամսով, և վերջնական պատիժ է թողնվել կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 4

(չորս) ամիս ժամկետով:

2. 2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալ Ա.Մկրտչյանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին միջնորդագիր է ներկայացրել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 23-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը բավարարվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի հիման վրա՝ դատապարտյալ Ա.Մկրտչյանի պատժի չկրած մասը՝ 1 (մեկ) տարի 4 (չորս) ամիս 14 (տասնչորս) օր ժամկետով ազատազրկումը, փոխարինվել է տուգանքով՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Դատախազ Ջ.Ստեփանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 23-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 11-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատախազ Ջ.Ստեփանյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ դատախազ Ջ.Ստեփանյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի 2013 թվականի ապրիլի 30-ի միջնորդագրի համաձայն՝ «Դատապարտյալ Արմեն Արսենի Մկրտչյանը պատիժը կրելու ընթացքում կարգապահական տույժի չի արժանացել: Դատապարտյալի ռիսկայնությունը ցածր աստիճանի է, ընթացիկ գնահատման արդյունքները բարձր են: (...) Ունեցել է 1.000.000 ՀՀ դրամ քաղաքացիական հայց, որը մուծվել է: (...) Միջնորդում ենք դատապարտյալի պատժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով» (տե՛ս նյութեր, թերթ 1):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Այսպիսով, դատապարտյալ Արմեն Մկրտչյանը, ազատազրկման դատապարտված լինելով միջին ծանրության հանցագործություն կատարելու համար, կրել է նշանակված պատժի ավելի քան մեկ երրորդը, (...), պատիժը կրելու ընթացքում դրսևորել է դրական վարքագիծ, հարթել է տուժողին պատճառված վնասը, «Կոշ»ՔԿՀ-ի վարչական հանձնաժողովը ընդունել է որոշում՝ ներկայացնել միջնորդություն դատապարտյալ Արմեն Մկրտչյանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ, որն էլ հավանության է

արժանացել անկախ հանձնաժողովի կողմից:

Դատապարտյալ Արմեն Սկրտչյանը խնդրել է իր նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը փոխարինել տուգանքով և դատարանը հաշվի է առնում նաև դատապարտյալի գույքային դրությունը» (տե՛ս նյութեր, թերթ 13):

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ. «Բավարարել միջնորդությունը և Արմեն Արսենի Սկրտչյանի նկատմամբ պատժի չկրած մասը՝ 1 (մեկ) տարի 4 (չորս) ամիս 14 (տասնչորս) օրը ՀՀ Քր. օր-ի 77-րդ հոդվածին համապատասխան փոխարինել տուգանքով՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: (...)» (տե՛ս նյութեր, թերթ 13):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով դատապարտյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը փոխարինել է տուգանքով: Նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ Առաջին ատյանի դատարանը տուգանքի չափը որոշել է՝ հաշվի առնելով կատարած հանցանքի ծանրությունն ու դատապարտյալ Ա.Սկրտչյանի գույքային դրությունը: Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով արձանագրել է, որ (...) դատապարտյալ Ա.Սկրտչյանի՝ պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը, տուժողին պատճառված վնասը հարթելու և մյուս հանգամանքները հիմք են հանդիսանում քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովի միջնորդությունը բավարարելու համար: Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավոր է համարում նաև Վերաքննիչ դատարանը և գտնում է, որ Դատարանի նշված որոշումը բխում է նաև սույն որոշման 20-րդ կետում մատնանշված իրավական ակտերի պահանջներից» (տե՛ս նյութեր, թերթ 61-62):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ, 51-րդ և 77-րդ հոդվածների պահանջները, ինչի արդյունքում դատապարտյալ Ա.Սկրտչյանի պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով՝ տուգանքով:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածում հստակ սահմանված են դատարանի կողմից որպես պատժատեսակ տուգանք նշանակելու չափորոշիչները, միաժամանակ, ի տարբերություն ազատագրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելուն՝ սահմանված չեն ազատագրկման ձևով նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով՝ տուգանքով փոխարինելու չափորոշիչները, այն է՝ ազատագրկման մեկ օրը որքան ՀՀ դրամ տուգանքով պետք է փոխարինվի: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը, դատապարտյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը փոխարինելով ավելի մեղմ պատժատեսակով՝

տուգանքով և տուգանքի չափ սահմանելով 800.000 ՀՀ դրամը, թույլ է տվել դատական սխալ:

9. Ուստի, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ու փոփոխել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 11-ի որոշումը և մերժել դատապարտյալ Ա.Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածներով նախատեսված՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մասն գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք դատապարտյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը տուգանքով փոխարինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկում կրող անձի պատժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով՝ հաշվի առնելով պատիժը կրելու ժամանակահատվածում նրա վարքագիծը և պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից:

2. Պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով դատապարտյալի կողմից պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը փաստացի կրելուց հետո:

3. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելիս դատարանը կարող է ընտրել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածում նշված պատիժներին համապատասխան ցանկացած ավելի մեղմ պատժատեսակ՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը:

(...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը

ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը:

2. Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն օրենսգրքի 115-րդ և 116-րդ հոդվածներին համապատասխան:

(...)

3. Միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

(...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում:

2. (...) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդագրի հետ ներկայացվում է նաև դատապարտյալի անձնական գործը:

(...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով

փոխարինելու իրավագործությունը սահմանելիս օրենսդիրն օգտագործել է «կարող է» ձևակերպումը՝ այդպիսով դատարանին հնարավորություն տալով դատական հայեցողության ընդհանուր հատկանիշների հիման վրա ընտրություն կատարել ազատագրկման ձևով անձի նկատմամբ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կամ չփոխարինելու վերաբերյալ որոշումների միջև, ինչպես նաև ընտրել այն պատժատեսակն ու պատժաչափը, որով պետք է փոխարինվի ազատագրկման ձևով նշանակված պատիժը (դատական հայեցողության ընդհանուր հատկանիշների մասին *mutatis mutandis* տե՛ս, Հմայակ Գավթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԳ/0126/01/12 որոշման 22-րդ կետը):

13. Ընդ որում, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու պայմանների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով դատարանը պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագրի քննության ժամանակ պետք է հաջորդաբար քննության առնի հետևյալ հարցերը՝

ա) անձի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվե՞լ է արդյոք ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով:

բ) անձը կրե՞լ է արդյոք իր նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը:

գ) դատապարտյալն ամբողջությամբ հարթե՞լ է արդյոք տուժողին պատճառված վնասը:

դ) անձի վարքագծի վերաբերյալ դատարան ներկայացված տվյալները վկայո՞ւմ են արդյոք այն մասին, որ նրա ուղղման նպատակին (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մաս) հնարավոր է հասնել ավելի մեղմ պատժատեսակի կիրառման միջոցով:

ե) անձի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված ո՞ր պատժատեսակով պետք է փոխարինվի և ի՞նչ ժամկետով:

զ) դատապարտյալի նկատմամբ նշանակվե՞լ է արդյոք լրացուցիչ պատիժ և ենթակա՞ է արդյոք նա այդ պատժից լրիվ կամ մասնակի ազատման:

14. Իր հերթին, սույն որոշման 13-րդ կետի (ե) ենթակետում ամրագրված հարցադրման վերլուծության համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված պատժատեսակով փոխարինելու մասին որոշում կայացնելիս դատարանն իր հայեցողության շրջանակներում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշում է կայացնում թե ինչ պատժատեսակով պետք է փոխարինվի անձի նկատմամբ նշանակված պատիժը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս դատարանի հայեցողությունը սահմանափակված է օրինականության, հիմնավորվածության և

արդարացիության հատկանիշներով (տե՛ս Հմայակ Դավթյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԳ/0126/01/12 որոշման 22-րդ կետը), որոնց լույսի ներքո դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման ենթարկի դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև նրա նկատմամբ ավելի մեղմ պատժատեսակի կիրառման դեպքում պատժի նպատակների իրականացման հնարավորությունը: Դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները գնահատելիս՝ դատարանն ի թիվս այլոց պետք է հաշվի առնի քրեակատարողական հիմնարկում նրա դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ կարգապահական տույժերի բացակայությունը, կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, ռիսկայնության աստիճանը, ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները, կարգապահությունը, մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին, ներգրավվածությունը աշխատանքին և այլն (տե՛ս, Լևոն Գազարյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԳ/0057/12/08 որոշման 22-րդ կետը, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի հրամանով հաստատված՝ «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգի՝ «Դատապարտյալների ախտորոշումը, գնահատումը և բնութագրումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացնելիս» 7-րդ գլխում գետեղված 45-49-րդ կետերը):

15. Ինչ վերաբերում է պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս դատարանի կողմից սահմանվող պատժաչափին, ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասն ընդհանուր չափորոշիչ է սահմանում՝ դատարանին հնարավորություն տալով կոնկրետ դեպքում իր հայեցողության շրջանակներում պատժաչափ ընտրել ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր պատժատեսակի համար նախատեսված սահմաններում: ՀՀ քրեական օրենսգրքում ընդհանուր չափորոշիչի առկայությունը ենթադրում է, որ դատարանը, սահմանափակված լինելով դատական հայեցողության օրինականության, հիմնավորվածության և արդարացիության հատկանիշներով, ինչպես նաև կոնկրետ պատժատեսակի համար ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում նախատեսված նվազագույն և առավելագույն չափերով ու կիրառման պայմաններով, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշի, թե ինչ պատժաչափ պետք է սահմանվի այն անձի նկատմամբ, ում պատժի չկրած մասը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով:

16. Սույն որոշման 13-րդ կետի (գ) ենթակետում ամրագրված հարցադրման կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նշանակված լրացուցիչ պատժից դատապարտյալին լրիվ կամ մասնակի ազատելու հարցը լուծելիս դատարանը նույնպես պետք է ղեկավարվի դատական հայեցողության ընդհանուր հատկանիշներով, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման ենթարկի դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները և լրացուցիչ պատժից դատապարտյալին լրիվ կամ մասնակի ազատելու դեպքում

պատժի նպատակների իրականացման հնարավորությունը:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետում որպես պատժի ինքնուրույն տեսակ նախատեսված է տուգանքը:

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի (...) երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով:

2. Տուգանքի չափը դատարանը որոշում է՝ հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրությունը և դատապարտվողի գույքային դրությունը:

(...)»:

Մեջբերված իրավադրույթները մեկնաբանելով սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը տուգանքով փոխարինելիս դատարանը պետք է հաջորդաբար քննության առնի սույն որոշման 13-րդ կետում շարադրված հարցադրումները:

Ինչ վերաբերում է անձի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը տուգանքով փոխարինելիս կոնկրետ պատժաչափի սահմանմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված չափորոշիչը, ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված՝ տուգանք պատժատեսակի չափերի, կիրառման կարգի ու պայմանների շրջանակում պետք է կոնկրետ անձի նկատմամբ տուգանքի չափ սահմանի: Տուգանքի չափը սահմանելիս դատարանը պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման ենթարկի դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև նրա նկատմամբ տուգանք պատժատեսակի կիրառման դեպքում պատժի նպատակների իրականացման հնարավորությունը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առկա են դատապարտյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու պայմանները (պատիժը կրելու ընթացքում կարգապահական տույժի բացակայությունը, ռիսկայնության ցածր աստիճանը, ընթացիկ գնահատման բարձր արդյունքները, ինչպես նաև պատճառված վնասը հարթելը), համապատասխան միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը բավարարել է միջնորդագիրը և դատապարտյալ Ա.Սկրտչյանի պատժի չկրած մասը փոխարինել է տուգանքով՝ տուգանքի չափ սահմանելով 800.000 ՀՀ դրամը: Որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել այն, որ Ա.Սկրտչյանը կատարել է միջին ծանրության

հանցագործություն, փաստացի կրել է նշանակված պատժի ավելի քան մեկ երրորդը, պատժի կրման ընթացքում դրսևորել է դրական վարքագիծ, ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը: Առաջին ատյանի դատարանը տուգանքի չափը սահմանելիս հաշվի է առել նաև Ա.Սկրտչյանի գույքային դրությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել այն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

19. Սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված վերլուծության և եզրահանգման լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարաններն Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը տուգանքով փոխարինելիս պատշաճ ստուգման և գնահատման են ենթարկել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-115-րդ հոդվածներով սահմանված պայմանների առկայությունը: Բացի այդ, ստորադաս դատարաններն իրենց հայեցողության շրջանակներում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման են ենթարկել դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները, նրա նկատմամբ տուգանք պատժատեսակի կիրառման դեպքում պատժի նպատակների իրականացման հնարավորությունը և, հաշվի առնելով տուգանք պատժատեսակի համար ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում նախատեսված նվազագույն և առավելագույն չափերը և այդ պատժատեսակի կիրառման պայմանները, մասնավորապես՝ Ա.Սկրտչյանի գույքային դրությունը, նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը տուգանքով փոխարինելու վերաբերյալ հիմնավորված, պատճառաբանված և օրինական որոշում են կայացրել:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը տուգանքով փոխարինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ են, իսկ բողոքաբերի փաստարկն այն մասին, որ սույն գործով ստորադաս դատարանները դատապարտյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը փոխարինելով ավելի մեղմ պատժատեսակով՝ տուգանքով, և տուգանքի չափ սահմանելով 800.000 ՀՀ դրամը, թույլ են տվել դատական սխալ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), անհիմն է:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Արմեն Արսենի Սկրտչյանի վերաբերյալ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

46.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԼԳ/0030/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝
պաշտպան՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Տ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Վ.ԲԱԲԱՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Գևորգ Սերոբի Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի, Տիգրան Ռուբենի Կոստանդյանի վճռաբեկ բողոքները և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ մեղադրող Տ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 90278811 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումներով Հարություն Կառլենի Պետրոսյանը, Վահե Վարուժանի Պարանյանը, Նարեկ Արկադիի Սահակյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2011 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումներով Սերգո Արմենի Մելիքբեկյանը, Տիգրան Ռուբենի Կոստանդյանը և Գևորգ Սերոբի Խնուսյանը ներգրավվել

են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի մարտի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Հ.Պետրոսյանը, Վ.Պարանյանը, Ն.Սահակյանը, Ս.Մելիքբեկյանը, Տ.Կոստանդյանը և Գ.Խնուսյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել Ն.Սահակյանի, Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանը, Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանը և Վ.Բաբայանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Վ.Պարանյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքով և 2012 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի վերաքննիչ բողոքով վերաքննիչ վարույթները կարճվել են՝ իրենց դիմումների հիման վրա, իսկ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ Ն.Սահակյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը կարճվել է, իսկ քրեական հետապնդումը դադարեցվել:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

4. Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի, Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանի, Տ.Կոստանդյանի պաշտպան Գ.Մադոյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը Գ.Խնուսյանի, Վ.Պարանյանի, Տ.Կոստանդյանի մասով կարճել է, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցրել:

Հ.Պետրոսյանի պաշտպան Ղ.Պապոյանի, Ս.Մելիքբեկյանի պաշտպան Ա.Քալաշյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, Հ.Պետրոսյանին, Ս.Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացրել է, և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ կարճելով քրեական գործի վարույթը:

Գատավարության մասնակիցները Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի, 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումները վճռաբեկության կարգով չեն բողոքարկել, և դրանք մտել են օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի, Տ.Կոստանդյանի և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ մեղադրող Տ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով բերվել են վճռաբեկ բողոքներ:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի, Տ.Կոստանդյանի և մեղադրող Տ.Հարությունյանի վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Հ.Պետրոսյանին, Վ.Պարանյանին, Ս.Սելիքբեկյանին, Տ.Կոստանդյանին և Գ.Խնուսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ 54574 զորամասի ժամկետային զինծառայողներ, կոչումով կրտսեր սերժանտներ, 2011 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, զորամասի հրետանային դիվիզիոնի զորանոցում, առանց որևէ պատճառի շուրջ 7-ից 10 րոպե տևողությամբ ծաղրածանակի են ենթարկել, ստորացրել պատիվն ու արժանապատվությունը և բռնություն են գործադրել նույն զորամասի ժամկետային զինծառայող՝ կրտսեր սերժանտ Սամվել Արսենի Պապիկյանի նկատմամբ, այն է՝ ձեռքերով և ոտքերով անկանոն հարվածներ են հասցրել նրա գլխին ու մարմնի տարբեր մասերին, ինչպես նաև սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել նրա հասցեին» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 14):

7. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման համաձայն՝ «(...) քրեական գործի նյութերով հիմնավորվել է, որ ամբաստանյալներ Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կոստանդյանը 14.10.2011թ. ժամը 11:30-ի սահմաններում ՀՀ ՊՆ 54574 զորամասի հրետանային դիվիզիոնի զորանոցում նվաստացրել և ծեծի են ենթարկել նույն զորամասի ականանետային մարտկոցի պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Սամվել Պապիկյանին, ինչի կապակցությամբ ՀՀ ՊՆ Երևանի կայագրի ՌՌ բաժնի պետի կողմից նրանց տրվել է կալանք 10-ական օր ժամկետով:

Նույն անձանց նույն արարքի համար մեղադրանք է առաջադրվել, իսկ հետագայում Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.08.2012թ. դատավճռով՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կոստանդյանը դատապարտվել են մեկական տարի ժամկետով ազատազրկման:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերով հաստատված է, որ սույն գործով մեղադրանքի փաստական կողմը կազմող գործողությունները կատարելու համար Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կոստանդյանի նկատմամբ ՀՀ ՊՆ 54574 գորամասի հրամանատարի 15.10.2011թ. թիվ 237 հրամանով նշանակվել է կարգապահական տույժ՝ 10-ական օր ժամանակով:

Նույն օրը Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կոստանդյանը տեղափոխվել են ՀՀ ՊՆ Երևանի կայազորի Ռազմական Ոստիկանության կարգապահական մեկուսարան: Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանդյանը կարգապահական մեկուսարանում գտնվել են 15.10.2011թ.-ից մինչև 25.10.2011թ., երբ 15.10.2011թ. հարուցված սույն քրեական գործի շրջանակներում նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը և մեղադրյալները տեղափոխվել են կալանավորվածներին պահելու վայր:

Իսկ Վահե Պարանյանը կարգապահական մեկուսարանում գտնվել է 15.10.2011թ.-ից մինչև 22.10.2011թ.: Այսինքն՝ ամբաստանյալներ Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանդյանը կարգապահական մեկուսարանում անազատության մեջ պահվել են 10 (տասը) օր, իսկ Վահե Պարանյանը՝ 7 (յոթ) օր: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Գևորգ Խնուսյանի և Տիգրան Կոստանդյանի նկատմամբ կիրառված 10 (տասը) օր, իսկ Վահե Պարանյանի նկատմամբ կիրառված՝ 7 (յոթ) օր կարգապահական կալանքն իր բնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պատիժ:

(...)

Վերոգրյալի հիման վրա՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կոստանդյանի կողմից կարգապահական կալանքը կրելուց հետո նույն արարքի համար նրանց դատապարտումը խախտել է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կոստանդյանը կրկին անգամ դատվել են նույն արարքի համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 141-142):

Վերաքննիչ դատարանն իր 2013 թվականի մարտի 19-ի որոշման եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ.

«1. Ամբաստանյալ Գևորգ Խնուսյանի պաշտպաններ Կրումվել Գրիգորյանի և Վահագն Բաբայանի, ամբաստանյալ Վահե Պարանյանի շահերի պաշտպան Ժորա Վարոսյանի, ամբաստանյալ Տիգրան Կոստանդյանի շահերի պաշտպան Գուրգեն Մադոյանի վերաքննիչ բողոքները բավարարել:

2. Գևորգ Սերոբի Խնուսյանի, Վահե Վարուժանի Պարանյանի, Տիգրան Ռուբենի Կոստանդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական

շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել, գործի վարույթը Գևորգ Մերոբի Խնուսյանի, Վահե Վարուժանի Պարանյանի և Տիգրան Ռուբենի Կոստանդյանի մասով կարճել և նրանց նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 142):

8. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման համաձայն՝ «Այսպիսով, նկատի ունենալով, որ քրեական գործի նյութերով հիմնավորվել և հաստատվել է Հարություն Պետրոսյանին և Մերգո Մելիքբեկյանին նույն արարքի համար կրկին դատվելու հանգամանքը, ուստի Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատավճռով խախտվել է նրանց՝ Սահմանադրության 22-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածներով երաշխավորված կրկին անգամ դատվելու անթույլատրելիության իրավունքը, (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 208):

Վերաքննիչ դատարանն իր 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ.

«1. Ամբաստանյալ Հարություն Պետրոսյանի շահերի պաշտպան Գևորգ Պապոյանի և ամբաստանյալ Մերգո Մելիքբեկյանի շահերի պաշտպան Ավետիս Քալաշյանի վերաքննիչ բողոքները բավարարել:

2. Հարություն Կառլենի Պետրոսյանի և Մերգո Արմենի Մելիքբեկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել, Հարություն Կառլենի Պետրոսյանին, Մերգո Արմենի Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել և դադարեցնել նրանց նկատմամբ քրեական հետապնդումը՝ կարճելով քրեական գործի վարույթը» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 208):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Տ.Կոստանդյանը և Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ, 6-րդ, 21-րդ և 66-րդ հոդվածների պահանջների խախտում: Բողոքների հեղինակները փաստարկել են, որ միևնույն փաստական հանգամանքների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանը կայացրել է երկու իրարամերժ դատական ակտեր: Մասնավորապես, 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ Գ.Խնուսյանի, Վ.Պարանյանի, Տ.Կոստանդյանի մասով քրեական գործի վարույթը կարճել և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է, մինչդեռ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Հ.Պետրոսյանին և Ս.Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքներում արդարացրել է:

Վերոգրյալի հիման վրա բողոքների հեղինակները խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումը, Գ.Խնուսյանին և Տ.Կոստանդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքներում արդարացնել:

10. Մեղադրող Տ.Հարությունյանը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 24-րդ, 385-րդ, 386-րդ և 395-րդ հոդվածների պահանջների խախտում: Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից, 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման եզրափակիչ մասում անդրադարձել է առաջադրված մեղադրանքների հիմնավորվածությանը և արդարացրել Հ.Պետրոսյանին, Ս.Մելիքբեկյանին, մինչդեռ 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ նույն փաստական հանգամանքների պայմաններում Գ.Խնուսյանի, Վ.Պարանյանի, Տ.Կոստանդյանի մասով կայացրել է հիմնավորված և օրինական որոշում՝ կարճելով քրեական գործի վարույթը:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է Հ.Պետրոսյանին և Ս.Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված համապատասխան հիմքի մատնանշման անհրաժեշտության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական, հիմնավորված և պատճառաբանված են արդյոք քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներն այն դեպքում, երբ դրանցում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

2. Գատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների

պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա,

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրված բոլոր հետևությունները և որոշումները»:

Մեջբերված քրեադատավարական նորմը Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է *Ֆ.Գալստյանի* գործով կայացված որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «Դատական ակտն օրինական է, եթե կայացվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և հիմնավորված՝ եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, քե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) շարադրված մոտեցմանը համահունչ իրավական դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս *Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine)* 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, *Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania)* 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, *Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova)* 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02)» (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԳ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

14. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ արտահայտված

իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի բովանդակում որևէ նորմ, որը կսահմաներ դատարանի կողմից կայացվող այլ դատական ակտերի (որոշումների) օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու պահանջ: Այդուհանդերձ, հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված՝ դատավճռին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները վերաբերելի են նաև դատարանի կողմից կայացվող այլ դատական ակտերին, այդ թվում՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.

6) անցել են վաղեմության ժամկետները.

7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.

8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.

9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաձայնության ակտ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ»:

Ա.Բաղդասարյանի գործով որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ նշված հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝

ա) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով:

բ) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով» (տե՛ս Արմեն Բաղդասարյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԳ/0009/11/13 որոշման 15-րդ կետը):

16. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Բաղդասարյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն ապահովելու համար անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, այլև՝ բացառելու ցանկացած անձի անօրինական և չիմնավորված մեղադրումը (դատապարտումը), նրա իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ինչպես նաև՝ վերականգնելու ապօրինի քրեական հետապնդման ենթարկվածների իրավունքները: Քրեական դատավարության նշված խնդիրն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում իր ամրագրումը ստացած հիմնարար իրավունքից, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: Նշված սահմանադրական նորմի ուժով պետությունն իր վրա է վերցնում քրեական վարույթն իրականացնող մարմինների ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցման պարտականությունը, որի իրավական հիմքերը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

1064-րդ հոդվածներում:

Շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի նշված դատավարական ակտը ոչ միայն վերացնում է առաջադրված մեղադրանքը և բացառում գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, այլև կախված քրեական հետապնդումը դադարեցնելու օրենքով նախատեսված հիմքի բովանդակությունից, տարբեր իրավական հետևանքներ է առաջացնում շահագրգիռ անձանց համար: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով կամ 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս կամ գործի վարույթը կարճելիս անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ, հետևաբար ստանում է նաև անօրինական կամ չհիմնավորված քրեական հետապնդման արդյունքում իր խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման, ինչպես նաև պատճառված վնասի հատուցման իրավունք: Մինչդեռ, քրեադատավարական օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս անձն արդարացվածի կարգավիճակ չի ստանում, հետևաբար չի ստանում նաև դատավարական այդ կարգավիճակից բխող այլ իրավունքներից օգտվելու հնարավորություն:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը քրեական դատավարության ցանկացած փուլում անվերապահորեն պետք է հանգեցնի քրեական հետապնդման դադարեցման (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի), այնուամենայնիվ նշված հիմքերն իրենց բովանդակությամբ և կիրառման իրավական հետևանքներով տարբեր են: Հետևաբար, նշված հիմքերից որևէ մեկի հայտնաբերման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ոչ միայն որոշում կայացնել քրեական գործի վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այլ նաև իր որոշման մեջ հստակ պետք է ամրագրի քրեադատավարական օրենքի այն նորմը, որի հիման վրա կայացվում է այդ որոշումը:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման մեջ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի հստակ ամրագրման պահանջը պարտադիր է ոչ միայն քննարկվող քրեադատավարական ակտի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջն ապահովելու համար, այլ նաև անհրաժեշտ նախապայման է դատական ակտի որոշակիության, արդարադատության մատչելիության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներին համարժեք՝ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Այլ կերպ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և (կամ) քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որևէ հիմքի հստակ ամրագրումը պարտադիր է և ի

թիվս ալոց, պայմանավորված է.

ա) անձի իրավական կարգավիճակի հստակեցման, և դրանից ելնելով՝ քրեական հետապնդման հետևանքով խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման, ինչպես նաև պատճառված վնասի հատուցման իրավունք վերապահելու անհրաժեշտությամբ,

բ) քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի, այդ թվում՝ արդարացման հիմքի մասով բողոքարկելու իրավունք վերապահող քրեադատավարական նորմերի գործողության ապահովման անհրաժեշտությամբ:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Խնուսյանը, Տ.Կոստանդյանը, Հ.Պետրոսյանը և Ս.Սելիքբեկյանը ՀՀ ՊՆ 54574 գործնասի հրետանային դիվիզիոնի գորանոցում նվաստացրել և ծեծի են ենթարկել նույն գործնասի ականանետային մարտկոցի պարտադիր ժամկետային զինծառայող Ս.Պապիկյանին, ինչի կապակցությամբ ՀՀ ՊՆ Երևանի կայագրի Ռ-Ռ բաժնի պետի կողմից նրանց տրվել է կալանք՝ 10-ական օր ժամկետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռով Գ.Խնուսյանը, Տ.Կոստանդյանը, Հ.Պետրոսյանը և Ս.Սելիքբեկյանը նույն արարքի համար մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել մեկական տարի ժամկետով ազատազրկումը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերաքննիչ բողոքների հիման վրա վերանայելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Վերաքննիչ դատարանը

ա) 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ արձանագրել է, որ նույն արարքի համար Գ.Խնուսյանի և Տ.Կոստանդյանի դատապարտումը հանգեցրել է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը, նրանց մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և կարճել քրեական գործի վարույթը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

բ) 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ արձանագրել է, որ նույն արարքի համար Հ.Պետրոսյանի և Ս.Սելիքբեկյանի դատապարտումը հանգեցրել է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը, նրանց մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, և վերջիններիս արդարացրել՝ կարճելով քրեական գործի վարույթը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը միևնույն գործի շրջանակներում միևնույն փաստական հանգամանքների պայմաններում կայացրել է երկու հակասական որոշում: Ընդ որում, կարճելով քրեական գործի վարույթը և դադարեցնելով քրեական հետապնդումը՝ Վերաքննիչ դատարանն ինչպես 2013 թվականի մարտի 19-ի որոշման, այնպես էլ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման մեջ չի արձանագրել, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի հատկապես որ կետով է ղեկավարվում:

19. Սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշման լուսի ներքո գնահատելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, քանի որ դրանցում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք չմատնանշելով՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Գ.Խնուսյանի, Տ.Կոստանդյանի, Հ.Պետրոսյանի և Ս.Մելիքբեկյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...)»:

Սույն որոշման 19-րդ կետում արձանագրված դատավարական իրավունքի խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի դատական ակտերը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներում առկա հակասությունը և իր որոշման մեջ հստակեցնի, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված որ հիմքով է կարճում քրեական գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումը Գևորգ Սերոբի Խնուսյանի և Տիգրան Ռուբենի Կոստանդյանի մասով և նույն դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումը Հարություն Կառլենի Պետրոսյանի, Սերգո Արմենի Մելիքբեկյանի վերաբերյալ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

47.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՍԳ/0389/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ\
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 18-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով Հայկ Արտավազդի Մովսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 16-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Բ Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90855311 քրեական գործը:

2011 թվականի օգոստոսի 3-ին Հայկ Արտավազդի Մովսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ Հ.Մովսիսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով:

2011 թվականի դեկտեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռով Հ.Մովսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

2012 թվականի նոյեմբերի 28-ին Հ.Մովսիսյանը ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քննչական մեկուսարանում մահացել է:

Դատավարության մասնակիցներն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չեն բողոքարկել, և այն մտել է օրինական ուժի մեջ:

3. ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռը, Հ.Մովսիսյանին ճանաչել է անմեղ և արդարացրել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 16-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ա.Թամազյանը:

Վճարելի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ա.Թամազյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

2013 թվականի հունիսի 26-ին Հ.Մովսիսյանի պաշտպան Վ.Խաչատրյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից Հ.Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, հանդիսանալով թիվ 49971 գորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, նռնակածիգի օգնական, կոչումով շարքային, 2011 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակով, նույն գումարտակի հրամանատարի աշխատասենյակում կատարել է անդամախեղում՝ սափրվելու սայրով վնասվածքներ է հասցրել իր ձախ նախաբազկի շրջանին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 121):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Դատարանը բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտելով դատաքննությամբ հավաքված ապացույցները, ստուգման ենթարկելով ամբաստանյալի, վկաների ցուցմունքները, հետազոտելով դատաբժշկական, ռազմաբժշկական, դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացությունները և գործով ձեռք բերված այլ փաստական տվյալները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ներքին համոզմամբ հանգում է այն հետևության, որ դատաքննությամբ ձեռք

բերված ապացույցներով հիմնավորվել և հաստատվել է, որ ամբաստանյալ Հ.Մովսիսյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի:

(...):

Գատական նիստում ՀՀ ԱՆ կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի թիվ 364/11 եզրակացության հրապարակումից հետևում է, որ Հայկ Արտավազդի Մովսիսյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում: Նրա մոտ հայտնաբերվում է «օրգանական փսիխոպաթոնման խանգարում, կոնպենսացիայի փուլ»: Վերոնշյալ ախտորոշմանը բնորոշ անձի առանձնահատկություններն արտահայտված չեն փորձաքննվողի մոտ այն աստիճան, որ գրկեն նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու հնարավորությունից ինչպես իրավախախտումը կատարելու պահին, այնպես էլ ներկայումս: Ուստի Հայկ Արտավազդի Մովսիսյանին իրեն մեղսագրվող արարքի համար հարկ է ճանաչել մեղսունակ: Իր ներկա հոգեկան վիճակով նա կարող է մասնակցել դատաքննչական գործողություններին» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 165):

7. Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռի դեմ 2013 թվականի ապրիլի 11-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազը՝ փաստարկելով, որ Հ.Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքում մեղավոր ճանաչելու և դատապարտելու վերաբերյալ դատական ակտն ապօրինի և ակնհայտ անարդար է: Բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը և Հ.Մովսիսյանին արդարացնել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերաքննիչ բողոքը քննության է առնվել հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է մի քանի արարքների կատարմամբ, այդ թվում՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելը զինծառայողի կողմից իրեն վնասվածք պատճառելու՝ անդամախեղելու միջոցով: Սուբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Նպատակը զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես կամ վերջնականապես խուսափելն է, այսինքն զինծառայողը զիտակցում է, որ նշված գործողության՝ անդամախեղման միջոցով կարող է ազատվել զինվորական ծառայությունից և ցանկանում է այդ: Տվյալ հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ զինվորական ծառայողը, այսինքն՝ անձ, որը պիտանի է զինվորական ծառայության համար և գտնվում է զինվորական ծառայության մեջ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող

հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

Ինչպես վարույթն իրականացնող մարմինը, այնպես էլ դատարանը, անտեսել և որևէ կերպ չեն հերքել դեպքին հաջորդող առաջին իսկ օրերին Հայկ Մովսիսյանի բացատրությունն ու նախաքննության ողջ ընթացքում տված ցուցմունքներն այն մասին, որ զինվորական ծառայությունից չի խուսափում, այլ ընդամենն առողջական վիճակի՝ նյարդային խնդիրների հետևանքով չի կարողանում համակերպվել ծառայության պայմաններին, հաճախ կորցնում է ինքնատիրապետումը:

Ի վերջո, ինչպես վարույթն իրականացնող մարմինը, այնպես էլ դատարանը անտեսել են կարևորագույն այն փաստը, որ Հայկ Մովսիսյանը տվյալ հանցագործության սուբյեկտ չի հանդիսացել, քանի որ ինչպես հայտնի է, ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ է հանդիսանում զինծառայողը՝ անձ, ով պիտանի է զինվորական ծառայության և գտնվում է ծառայության մեջ:

Դեռևս նախաքննության սկզբնական փուլում, ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2011թ. օգոստոսի 02-ի թիվ 1445 որոշման համաձայն, Հայկ Արտավազյի Մովսիսյանի մոտ ախտորոշվել է «Օրգանական փսիխոպաթոնման խանգարում, դեզադապտացիոն դեկոմենսացիա՝ սուիցիդի փորձով», որի պատճառով, ՀՀ պաշտպանության նախարարության 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175 հրամանի 2 «բ» հոդվածի 1-ին սյունակի համաձայն՝ վերջինս «Պիտանի չէ զինծառայության խաղաղ ժամանակ, պիտանի է ոչ շարային ծառայության պատերազմի ժամանակ»:

Նշված ախտորոշումը հաստատվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2011թ. օգոստոսի 30-ի թիվ 49-112 փորձագիտական եզրակացությամբ, որի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի 2011թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1077 հրամանով Հայկ Մովսիսյանը վաղաժամկետ գորացրվել է պահեստագործ՝ առողջական վիճակի պատճառով:

Այսինքն, Հայկ Մովսիսյանի գորացրման հիմքը եղել է ոչ թե ինքնավնասման փաստը, այլ դրա պատճառ հանդիսացած «Օրգանական փսիխոպաթոնման խանգարումը», որպիսի պայմաններում բացակայում է նաև տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը: Չնայած դրան, վարույթն իրականացնող մարմինը Հայկ Մովսիսյանին ապօրինի մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ դատարանն անարդար դատավճիռ է կայացրել, որից օրեր անց, Հայկ Մովսիսյանն ինքնասպանություն է գործել:

Վերը շարադրված հանգամանքների վերլուծությունը վկայում է առ այն, որ թիվ ՍԳ/0389/01/11 քրեական գործով դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 4-6):

8. Վերաքննիչ դատարանը բավարարելով ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը, Հ.Մովսիսյանի նկատմամբ կայացրել է արդարացման դատական ակտ՝ մասնավորապես պատճառաբանելով, որ «գործում առկա են այնպիսի փաստական տվյալներ, որոնք վկայում են Հայկ Մովսիսյանի արարքում հանցակազմի բացակայության մասին, ինչն անտեսվել է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից:

(...):

Ամբաստանյալ Հայկ Մովսիսյանի խաղաղ ժամանակ զինծառայությանը ոչ պիտանի լինելու և առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ գորացրվելու (վերջինիս քննարկվող հանցակազմի սուբյեկտ չհանդիսանալու) պարագայում, (...) վերջինիս նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը չի դադարեցվել:

Դեռ ավելին, որոշում են կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրա նկատմամբ առավել խիստ՝ նույն հոդվածի 2-րդ մասով՝ անդամախեղման եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակով մեղադրանք առաջադրելու, ինչպես նաև հետագայում հաստատված մեղադրական եզրակացությամբ գործը դատարան ուղարկելու մասին:

(...) Հայկ Մովսիսյանը, ինչպես իրեն վերագրվող արարքը կատարելուց առաջ, այնպես էլ կատարելու պահին և դրանից հետո գտնվել է «Օրգանական փսիխոպաթոնման խանգարում, դեզադապտացիոն դեկոմպենսացիոն սուիցիդի փորձով» իրավիճակում, ինչը հաստատվել է նաև դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ:

Նշված հիվանդությունը փորձաքննվողի մոտ արտահայտվել է ծառայության ընթացքում, դեզադապտացիայի պայմաններում, արտաքին միջավայրի, իրադարձությունների և անձնային առանձնահատկությունների ազդեցության ներքո:

(...)

Վերոշարադրյալից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ զինվորական ծառայության համար պիտանի չլինելու, այսինքն՝ զինվորական հարաբերությունների ոչ պատշաճ սուբյեկտ լինելու ժամանակահատվածում կատարած արարքը, այն է՝ իրեն վնասվածք պատճառելը, բացառում է նրան պատշաճ սուբյեկտ դիտելու հնարավորությունը:

Նման պայմաններում, գործում առկա ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունն այն մասին, որ Հ.Մովսիսյանն իրեն մեղաագրվող արարքի համար ճանաչվել է մեղսունակ, չի կարող հիմք հանդիսանալ նրան քրեական պատասխանատվության պատշաճ սուբյեկտ դիտելու համար, քանի որ վերջինս զինվորական ծառայության գորակոչվելու

օրվանից գտնվել է այնպիսի հոգեկան վիճակում, որը հիմք է եղել նրան ոչ պիտանի ճանաչելու և ծառայությունից արձակելու համար:

(...)

Սույն գործի ուսումնասիրությունը վկայում է, որ գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ այն մասին, որ Հայկ Մովսիսյանը նպատակ է հետապնդել զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես կամ վերջնականապես խուսափել: Մինչդեռ, տվյալ հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 26-28):

**Վճարելի բողոքի և դրա դեմ ներկայացված պատասխանի
հիմքերը, հիմնավորումները և պահանջները**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարն իր վճարելի բողոքում փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը և կարող է հանգեցնել ծանր հետևանքների:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անձին զինվորական ծառայության և հետևաբար զինվորական հանցագործության սուբյեկտ դիտելու հանգամանքը պայմանավորել է բացառապես կատարված անդամախեղման և դրա հետևանքով զորացրման փաստի պատճառական կապի առկայությամբ և դրա համադրությամբ: Վերոնշյալ վերլուծությունից պարզ չէ, թե արդյոք անպայման պետք է առկա լինի պատճառական կապ անձի զորացրման և իրեն մարմնական վնասվածք պատճառելու միջոցով անդամախեղելու փաստի միջև, այսինքն պարտադիր է արդյոք, որ զորացրումը լինի ինքն իրեն վնաս պատճառելու միջոցով մարմնական վնասվածք հասցնելու հետևանքով, որպեսզի անձը հանդիսանա զինվորական ծառայության և հետևաբար զինվորական հանցագործության սուբյեկտ, թե ոչ: Այս հանգամանքը հստակեցման կարիք ունի, քանի որ խնդրահարույց են լինելու այն դեպքերը, երբ անձը զորակոչվել է զինվորական ծառայության որևէ հիվանդության առկայությամբ կամ հիվանդությունը ձեռք է բերել զինվորական ծառայության ընթացքում, և այդ հիվանդությունը ծառայության ընթացքում արտահայտվել կամ զարգացել է այն աստիճան, որ անկախ անդամախեղվելու փաստից, վերջինս դարձել է զինվորական ծառայությանը ոչ պիտանի, կամ դադարեցրել է վերջինիս զինվորական հանցագործության իրավասուբյեկտությունը:

Բողոքաբերը միաժամանակ նշել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ մոտեցում չի ցուցաբերել վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքին, որ Հ.Մովսիսյանն անդամախեղում է կատարել ոչ թե զինվորական ծառայությունից

խուսափելու նպատակով, այլ նյարդայնացած լինելու պատճառով, հետևաբար նրա կատարած գործողությունները ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածում նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշներ չեն պարունակում: Վերաքննիչ դատարանը բողոքում նշված նույն հանգամանքին, առանց բավարար չափով պատճառաբանելու, տվել է այլ գնահատական՝ նշելով, որ գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ այն մասին, որ Հ.Մովսիսյանը նպատակ է հետապնդել զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես կամ վերջնականապես խուսափել և հետևաբար, վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածում նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը:

10. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է Հ.Մովսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 16-ի որոշումը բեկանել:

11. Պաշտպան Վ.Խաչատրյանը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով հանգել է ճիշտ հետևության և հիմնավորված ու պատճառաբանված որոշում է կայացրել այն մասին, որ Հ.Մովսիսյանը վերագրվող արարքի համար պատշաճ հանցագործության սուբյեկտ չէ, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ նրա մոտ հայտնաբերվել է այնպիսի հոգեկան հիվանդություն, որը հիմք է հանդիսացել նրան ոչ պիտանի ճանաչելու և ծառայությունից պահեստագործ արձակելու համար:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Հ.Մովսիսյանին մեղսագրված արարքի կատարումը պայմանավորված է եղել ծառայության ընթացքում արտահայտված հոգեկան հիվանդությամբ: Մինչդեռ գործով բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել այն մասին, որ Հ.Մովսիսյանն իրեն մարմնական վնասվածք պատճառելու եղանակով ցանկացել է զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափել:

12. Պաշտպան Վ.Խաչատրյանը, փաստարկելով, որ Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքն անհիմն է, խնդրել է ամբողջությամբ մերժել այն, իսկ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտի, սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ

նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի օրինական ուժի մեջ մտած դատավճռի և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 16-ի որոշման դեմ բերված համապատասխանաբար ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված հանցակազմի մեկնաբանության, ինչպես նաև Հ.Մովսիսյանի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ ներկայացվել են իրարից տարբերվող իրավական դիրքորոշումներ:

Հաշվի առնելով վերոնշյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2012 թվականի նոյեմբերի 28-ին Հ.Մովսիսյանը մահացել է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է քննարկել ոչ միայն նյութական, այլ նաև դատավարական ասպեկտներով հարցերը: Մասնավորապես քննարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված հիմքի՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի մահվան դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու հնարավորության հարցը:

14. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքի ընդունումից առաջ, Հ.Մովսիսյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրված էր հետևյալ կերպ.

«Սույն գլխում նախատեսված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում գորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները»:

Մեջբերված նյութաիրավական նորմի իմաստով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հատուկ սուբյեկտ հանդիսանալու համար անձը մեղսունակ և քրեական պատասխանատվության տարիքի հասած լինելուց բացի (ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդված), պետք է հանդիսանա՝

ա) գորակոչի հիման վրա կամ պայմանագրային հիմունքներով ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում զինվորական ծառայություն անցնող անձ,

բ) ռազմական հավաք անցնելու ժամանակ՝ զինապարտ:

15. Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հատուկ սուբյեկտի՝ վերոնշյալ հատկանիշների վերլուծությունից երևում է, որ Հ.Մովսիսյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված չէր օրենքով սահմանված կարգով գորակոչված լինելու հիմքով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հատուկ սուբյեկտ հանդիսանալու նախապայմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության հատուկ սուբյեկտի համար նախատեսված այս պահանջը կիրառելի է նաև «զինծառայող» հասկացության օրենսդրական բնութագրի նկատմամբ: Առավել ևս, որ զինվորական

ծառայությունը հանդիսանում է ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ, յուրահատուկ հասարակական հարաբերություն, որը ծագում և զարգանում է պետական կարևոր նշանակություն ունեցող սոցիալական արժեքի՝ զինվորական ծառայության կարգի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հատուկ սուբյեկտի վերոնշյալ հատկանիշի, այն է՝ իրավահարաբերությունների պատշաճ սուբյեկտ լինելու կարևորությունն ընդգծվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքով, որով փոփոխության է ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ մասը: Նշված փոփոխությամբ օրենսդիրը լրացրել է նշված հոդվածում առկա բացը՝ սահմանելով, որ «(...) զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք և վարժական հավաքներ անցնող զինապարտները (այսուհետ՝ զինծառայող)»:

Մեջբերված օրենսդրական դրույթում առկա՝ «օրենքով սահմանված կարգով» ձևակերպման իմաստով զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ հանդիսանալու համար անձը պետք է օրենսդրական հատուկ ընթացակարգ անցնի:

16. Չինվորական ծառայության հարաբերությունների բնագավառ ընդգրկվելու օրենսդրական հատուկ ընթացակարգը սահմանված է մի շարք իրավական ակտերով:

Այսպես՝ «Չինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում սահմանված է՝

«Չինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է:

Չինծառայող են համարվում զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիներն ու ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտները»:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Չինվորական ծառայության սկիզբ համարվում է՝

1) զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիների համար՝ ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը.

(...)

2. Չինվորական ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը:

«Չինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում սահմանված է՝

«1. Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (...) արական սեռի զորակոչիկները (...), ովքեր առողջական վիճակի

պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:
(...)»:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝

ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին(...)»:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով և այլ հիմքերով տարկետում ստանալու կարգը սահմանված է նույն օրենքի 13-16-րդ հոդվածներում:

Վերը նշված օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ

«Ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները ժամկետից շուտ արձակվում են պահեստագոր, եթե նրանք կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից հետագա զինվորական ծառայության համար ճանաչվում են ոչ պիտանի՝ առողջական վիճակի պատճառով(...)»:

Մեջբերված իրավանորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ զինվորական ծառայության հարաբերությունների մասնակից, հետևաբար նաև զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ կարող է լինել տասնութ տարին լրացած մեղսունակ այն քաղաքացին, ով օրենքով սահմանված կարգով իրականացված զորակոչի հիման վրա կամ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայություն է անցնում ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ վարժական հավաքներ է անցնում: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ անձը կարող է համարվել օրենքով սահմանված կարգով զորակոչված, եթե իր առողջական վիճակով համապատասխանում է զինվորական ծառայության պահանջներին, այլ խոսքով՝ զինվորական ծառայության համար ճանաչվել է պիտանի՝ խաղաղ պայմաններում, և առկա չեն նրան զորակոչից տարկետում տալու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերը:

Սահմանված կարգի խախտմամբ անձին զորակոչելու մասին զինվորական կառավարման մարմինների ակտերն անօրինական են, հետևաբար չեն կարող հիմք հանդիսանալ անձին զինվորական ծառայության հատուկ սուբյեկտ՝ զինծառայող ճանաչելու համար: Ուստի զինծառայողի հատուկ կարգավիճակից բխող ընդհանուր և հատուկ բնույթի պարտականությունների կատարումը կարող է դրվել միայն այն անձի վրա, ով ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում զինվորական ծառայության է անցել կամ ռազմական հավաքների է մասնակցում օրենքով սահմանված կարգով:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ զորակոչված, հետևաբար զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ հանցագործություն է նա կատարել: Մասնավորապես,

ա) եթե անձը կատարել է այնպիսի հանցագործություն, որն ուղղված է

բացառապես զինվորական ծառայության դեմ (օրինակ՝ հրամանը չկատարելը, զինվորական ծառայությունից խուսափելը, հատուկ տեսակի զինվորական ծառայություն կրելու կանոնները խախտելը և այլն), ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ նրա արարքում բացակայում է հանցակազմի տարրերից մեկը՝ հանցագործության սուբյեկտը: Այս առումով նշանակություն չունի, թե սխալ գորակոչի վերաբերյալ իրավասու մարմնի ակտը երբ է կորցրել իր ուժը՝ հանրորեն վտանգավոր արարքը կատարելուց առաջ, թե հետո. անօրինական գորակոչից մինչև գորացրման հրամանն անձը հանդիսանում է զինվորական իրավահարաբերությունների, հետևաբար նաև զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների ոչ պատշաճ սուբյեկտ:

բ) Եթե անձը կատարել է այնպիսի հանցագործություն, որի անմիջական օբյեկտը զինվորական ծառայության կարգն է, իսկ լրացուցիչ օբյեկտն այլ է (օրինակ՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը, ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների և նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը և այլն), ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության ոչ թե զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներով, այլ օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան նորմերով, որոնք պատասխանատվություն են նախատեսում կյանքի, առողջության, սեփականության և այլնի դեմ ուղղված հանցագործությունների համար:

Օրինակ՝ ծառայությանն անօրինական կարգով գորակոչված անձի արարք՝ կապված զինծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու հետ, ըստ հետևանքի ենթակա է որակման անձի կյանքի կամ առողջության, այլ ոչ թե զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ նախատեսող հոդվածներով, համանման կերպով պահպանվող օբյեկտից գողություն կատարած ժամապահը պատասխանատվության պետք է ենթարկվի ոչ թե պահակային ծառայության կանոնները խախտելու, այլ գույքը հափշտակելու համար:

18. Սույն որոշման նախորդ կետում շարադրված մոտեցումների հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ անձը գորակոչվել է օրենքով սահմանված կարգով, սակայն զինվորական ծառայության ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից հետագա զինվորական ծառայությանը ոչ պիտանի է ճանաչվել և արձակվել է պահեստագոր, ապա այդ անձը զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է համարվում մինչև գորացրման պահը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության ընթացքում ծառայությանը ոչ պիտանի ճանաչված և զինվորական ծառայության դեմ ուղղված հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և նրա արարքին ճիշտ քրեաիրավական որակում տալու համար պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

ա) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությանը ոչ պիտանի ճանաչված զինծառայողը մինչև սահմանված կարգով զորացրումը զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է, քանի որ զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակելու մասին նշված պայմանները քրեական պատասխանատվության հիմքը և արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ չեն:

Վերոշարադրյալը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ զինծառայողը զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու նպատակով իր առողջությանը վնաս է պատճառում (անդամախեղելը) և այդ հիմքով օրենսդրությամբ սահմանված կարգով զինվորական ծառայության համար ճանաչվում է ոչ պիտանի և վաղաժամկետ զորացրվում է զինծառայությունից: Նման դեպքերում զինծառայողի կողմից իր առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելը զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես կամ վերջնականապես դադարեցնելու եղանակ է: Այլ խոսքով՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելը հանցագործությամբ իրեն վնաս պատճառելու հետևանք է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված դեպքերում զինծառայողը քրեական պատասխանատվության ենթակա չէ միայն այն դեպքում, երբ բացի զինծառայությանը ոչ պիտանի լինելուց, նա կճանաչվի անմեղսունակ:

բ) Օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայության զորակոչված և հատուկ տեսակի ծառայություններ կրելու կարգի դեմ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու համար պետք է հաշվի առնել այդ ծառայությունները (մարտական, պահակային, ներքին, սահմանապահ) կրելու կարգը սահմանող նորմատիվ ակտերի, մասնավորապես, «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», «ՀՀ զինված ուժերի կայագորային ու պահակային ծառայությունների կանոնագիրք» ՀՀ օրենքների և այլնի պահանջները:

գ) Հատուկ տեսակի ծառայության ընթացքում այլ արարքներ կատարելու դեպքում (զենք հափշտակելը, բռնություն գործադրելը և այլն) զինծառայողը ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի, քանի որ հանդիսանում է զինվորական հարաբերությունների սուբյեկտ:

19. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքի ընդունումից առաջ Հ.Մովսիսյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր նախատեսում իրեն վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության միջոցով կամ ապօրինի այլ եղանակով զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն էր նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել էր զինվորական ծառայության

պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակով:

Մեջբերված հանցակազմերի վերլուծությունից երևում է, որ դրանք երկօբյեկտ են. հիմնական օբյեկտ է հանդիսանում զինվորական ծառայության կարգը, իսկ լրացուցիչ օբյեկտ է զինծառայողի առողջությունը: Երկօբյեկտ զինվորական հանցագործությունների առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) հանցակազմի հիմնական օբյեկտին վնաս հասցնելը հնարավոր է լրացուցիչ օբյեկտին (...) վնաս հասցնելու միջոցով: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ [լրացուցիչ օբյեկտին] վնաս հասցնելն ինքնին չի նշանակում, որ հանցավորի արարքն ուղղված է եղել հիմնական օբյեկտի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ(...)» (տե՛ս Մրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԳ/0204/01/11 որոշման 15-րդ կետը):

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեջբերված ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը սուբյեկտիվ կողմից կարող է կատարվել բացառապես դիտավորությամբ, ինչը նշանակում է, որ հանցավորը գիտակցում է, որ իրեն վնասվածք է պատճառում (անդամախեղում է) կամ հիվանդության սիմուլյացիա է անում կամ կեղծ փաստաթղթեր է օգտագործում կամ խաբւում է: Մեղքի դիտավորյալ ձևից բացի, նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակի առկայությամբ: Այլ խոսքով՝ զինծառայողի արարքում նշված հանցակազմի առկայությունը հիմնավորվում է ոչ միայն իրեն որևէ վնասվածք պատճառելու (անդամախեղման), հիվանդության սիմուլյացիայի կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբելու փաստի առկայությամբ, այլ նման արարքների միջոցով զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակի առկայությամբ: Չինծառայողը պետք է գիտակցի, որ կատարում է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված արարքներից մեկը, պետք է ցանկանա այդ արարքների հետևանքների վրա հասնելը՝ նպատակ ունենալով վերջնականապես ազատվել զինվորական ծառայության պարտականությունները կրելուց: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված արարքների և հատկապես իրեն վնասելու (անդամախեղման) նպատակները կարող են տարբեր լինել (օրինակ՝ անձը կարող է իրեն վնասել՝ նպատակ ունենալով հասնել իր պահանջի կատարմանը, ցուցադրել իր դժգոհությունը կամ անհամաձայնությունը, ցուցադրել կոնկրետ հարցի կապակցությամբ իր մտադրության լրջությունը և այլն), ուստի զինծառայողի կողմից իրեն վնասելը կամ քննարկվող հոդվածով նախատեսված այլ արարքներից որևէ մեկը կատարելը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով միայն այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցների ամբողջությամբ հիմնավորվի, որ վերոնշյալ արարք(ներ)ը զինծառայողը կատարել է զինվորական ծառայության պարտականությունները

կրելուց վերջնականապես ազատվելու և ոչ թե այլ նպատակով (զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտիվ կողմի մասին *mutatis mutandis* տե՛ս Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՄԳ/0204/01/11 որոշման 17-18-րդ կետերը):

21. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածը ենթարկվել է օրենսդրական փոփոխության: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) համար, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով:

Նույն հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողի կողմից հիվանդության սիմուլյացիայի կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության համար, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով կատարելու համար:

Նախկին խմբագրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասի և ներկայիս խմբագրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասի համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ զինվորական ծառայության պարտականությունները կրելուց (զինվորական ծառայությունից) վերջնականապես ազատվելու նպատակով կատարված ինքնավնասման (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմը սուբյեկտիվ կողմի առումով որևէ փոփոխության չի ենթարկվել: Ինչպես մինչև փոփոխությունը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասը, այնպես էլ փոփոխությունից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասը սուբյեկտիվ կողմից բնութագրվում են բացառապես ուղղակի դիտավորությամբ, ինչը նշանակում է, որ հանցավորը ոչ միայն գիտակցաբար կատարում է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված արարքներից մեկը, այլև ցանկանում է այդ արարքների հետևանքների վրա հասնելը՝ նպատակ ունենալով վերջնականապես ազատվել

զինվորական ծառայությունից:

Ոստի զինծառայողի արարքը «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքի ընդունումից առաջ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել զինծառայողի կողմից իրեն վնասելու (անդամախեղման) կամ նշված հոդվածով նախատեսված այլ արարքների կատարման նպատակները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել զինծառայողի անձը, այդ թվում՝ նրա հոգեկան առողջությունը բնութագրող տվյալները, նշված արարքների կատարմանը նախորդող և հաջորդող ժամանակահատվածում զինծառայողի վարքագիծը, նշված արարքների կատարման և հատկապես իրեն վնասելու (անդամախեղման) եղանակն ու մեխանիզմը, գործիքներն ու միջոցները, ինքնախեղման տեղում ժամանակը, վնասվածքների քանակը, բնույթը, տեղակայումը, հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի և վկաների ցուցմունքները, կոնկրետ գործի այլ հանգամանքները, որոնք կարող են էական նշանակություն ունենալ զինծառայողի արարքի սուբյեկտիվ կողմի՝ նպատակի պարզաբանման համար, քանի որ զինծառայողի արարք(ներ)ը կարող են պայմանավորված լինել ինչպես զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը վերջնականապես դադարեցնելու հետ չկապված այլ նպատակներով, այնպես էլ նրա մոտ առկա հուզական լարվածությամբ, արտաքին միջավայրի հետ կապված դժվարություններով, անձնային առանձնահատկություններով, բռնկվող, անզուսպ բնավորությամբ և այլն:

Բացի այդ, քրեական հետապնդման ենթարկվող զինծառայողի՝ զինվորական ծառայությանը պիտանի լինելու հարցը քննության առնելիս, բացի ռազմաբժշկական փորձաքննությունից, վերագրվող արարքի բնույթը, առկա հիվանդությունը և գործի կոնկրետ հանգամանքները հաշվի առնելով, կարող են նշանակվել նաև այլ փորձաքննություններ՝ դատահոգեբուժական, դատահոգեբանական, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածում նախատեսված դեպքերում նաև համալիր փորձաքննություններ», որոնք ի թիվս այլ փաստական տվյալների՝ կարող են էական նշանակություն ունենալ արարքի ճիշտ քրեաիրավական գնահատման հարցում:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշները բացահայտելիս հաշվի են առնվում արարքի և դրա հետևանքների նկատմամբ անձի դրսևորած մեղքի ձևերը, ինչպես նաև արարքի դրդապատճառները, շարժառիթները, նպատակներն ու հույզերը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, անհրաժեշտ է ձեռք բերված բավարար փաստական տվյալներով հիմնավորել անձի մեղավորությունը կամ մեղավորության բացակայությունը տվյալ արարքը կատարելու մեջ:

Այլ խոսքով՝ կոնկրետ հանցակազմի էությունից և բովանդակությունից ելնելով՝ յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է պարզել, թե փաստական ինչպիսի

հանգամանքներ պետք է ընդգրկվեն սուբյեկտիվ հոգեբանական վերաբերմունքի մեջ, որպեսզի հնարավոր լինի հանգել ճիշտ հետևության վերագրվող արարքում մեղքի առկայության (բացակայության) վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ հատուկ հանցակազմերի, այդ թվում՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործությունների վերաբերյալ գործերով պետք է պարզել, թե արդյոք անձը գիտակցել է, որ հանրորեն վտանգավոր արարքը ուղղված է եղել այդ կարգի դեմ, գործի հանգամանքներից ելնելով՝ նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը կամ չի ցանկացել, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանց առաջացումը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ հնարավոր են դեպքեր, երբ զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործության կատարումը պայմանավորված լինի օրենքով սահմանված կարգով գորակոչված զինծառայողի առողջական վիճակով՝ հիվանդությամբ կամ ֆիզիկական թերություններով: Օրինակ, ծառայության ընթացքում հոգեկան հիվանդություն ձեռք բերած զինծառայողի՝ զինվորական ծառայության դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքը (ծառայությունից խուսափելը, անդամախեղելը և այլն) կարող է անմիջական պատճառահետևանքային կապի մեջ գտնվել տվյալ հիվանդության հետ, ինչը էական նշանակություն կարող է ունենալ արարքի սուբյեկտիվ կողմի գնահատման հարցում:

23. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասով (նախկին խմբագրությամբ 2-րդ մասով) կարող է որակվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում:

1) Հանցանք կատարած անձը հանդիսանում է զինվորական հանցագործությունների հատուկ սուբյեկտ՝ զինծառայող, այսինքն՝ հանդիսանում է տասնութ տարին լրացած, մեղսունակ անձ, ում վերաբերյալ առկա չեն գորակոչից տարկետում տալու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերը և ով խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ճանաչվել է պիտանի: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքով սահմանված կարգով գորակոչված, սակայն զինվորական ծառայության ընթացքում իրավասու մարմնի կողմից հետագա զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված անձը (այդ թվում՝ անդամախեղման հետևանքով) զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է մինչև գորացրման պահը:

2) Զինծառայողի կողմից իրեն վնասելը (անդամախեղումը) կամ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված այլ արարքներից որևէ մեկը կատարելը պայմանավորված է եղել զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ այն դեպքում, երբ անձը օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայության է անցել ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում և ծառայության ընթացքում կատարել է ինքնավնասում (անդամախեղում) ոչ թե ծառայությունից

վերջնականապես խուսափելու նպատակով, այլ ցանկացած այլ դրդապատճառով, ապա նա չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասով (նախկին խմբագրությամբ 2-րդ մասով) արարքի սուբյեկտիվ կողմի բացակայության պատճառով, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դեպքում ինքնավնասումը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել հետագա զինվորական ծառայության դադարեցման, թե ոչ:

24. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից Հ.Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա զինվորական ծառայության պարտականությունները կրելուց վերջնականապես ազատվելու նպատակով, գումարտակի հրամանատարի աշխատասենյակում կատարել է անդամախեղում՝ սափրվելու սայրով վնասվածքներ է հասցրել իր ձախ նախաբազկի շրջանին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը գործով ձեռք բերված ապացույցների գնահատմամբ հաստատված է համարել, որ Հ.Մովսիսյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ 2012 թվականի նոյեմբերի 20-ին կայացրել է մեղադրական դատավճիռ:

Հ.Մովսիսյանը 2012 թվականի նոյեմբերի 28-ին մահացել է: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը դատավարության մասնակիցների կողմից չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

2013 թվականի ապրիլի 11-ին ՀՀ գլխավոր դատախազը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոք է բերել Առաջին ատյանի դատարանի կողմից 2012 թվականի նոյեմբերի 20-ին կայացված, օրինական ուժի մեջ մտած դատավճռի դեմ՝ փաստարկելով, որ նշված դատական ակտն ապօրինի և ակնհայտ անարդար է, ուստի խնդրել է Հ.Մովսիսյանին արդարացնել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Հ.Մովսիսյանի նկատմամբ արդարացման դատական ակտ է կայացրել՝ պատճառաբանելով, որ Հ.Մովսիսյանը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ, և գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ այն մասին, որ Հ.Մովսիսյանը նպատակ է հետապնդել զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց վերջնականապես խուսափել: Այսինքն՝ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

Վերոգրյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարը՝ փաստարկելով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի հիմնարար

խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը և կարող է հանգեցնել ծանր հետևանքների: Ուստի, բողոքաբերը խնդրել է բեկանել Հ.Մովսիսյանին արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը(տե՛ս սույն որոշման 4-րդ և 9-10-րդ կետերը):

25. Անդրադառնալով այն իրավական հարցին, թե արդյոք Հ.Մովսիսյանի մահացած լինելու դեպքում հնարավոր է շարունակել սույն գործի քննությունը և վերջնական եզրահանգաման հանգել նրա մեղավորության կամ անմեղության վերաբերյալ, Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործըվերակսելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճարելի դատարանն անդրադարձել է *Ա.Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ «(...) թեև վարկված [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման» (տե՛ս Արամ Սարգսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը):

26. Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված հիմքի՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի մահվան դեպքում, քրեական հետապնդումն այդ անձի նկատմամբ պետք է դադարեցվի, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճվի:

Նշվածից բացառություն կարող է լինել միայն այն դեպքերում, երբ տվյալ գործով վարույթի իրականացումն անհրաժեշտ է.

ա) մահացածի իրավունքների վերականգնման համար,

բ) այլ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների

կապակցությամբ գործը վերսկսելու համար:

Հետևապես, եթե բացառություն կազմող վերոգրյալ անհրաժեշտությունը բացակայում է, ապա անձի մահվան դեպքում քրեական հետապնդումը նրա նկատմամբ ենթակա է դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման, անկախ նրանից, թե գործը քննության որ փուլում է գտնվում:

27. Սույն գործով Առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ՀՀ գլխավոր դատախազը բողոքարկել է՝ գտնելով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը: Այլ խոսքով՝ ՀՀ գլխավոր դատախազը սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքարկել է ոչ թե մահացած անձի իրավունքների, այլ հանրային շահի վերականգնման համար: Այս կապակցությամբ, սակայն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ և ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի վճռաբեկ բողոքներում առկա է հակասություն այն առումով, որ ՀՀ գլխավոր դատախազն իր վերաքննիչ բողոքում խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իսկ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարը վճռաբեկության կարգով բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքը բավարարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը: Նշված հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս փաստելու, որ վճռաբեկ բողոք բերելով դատախազությունը՝ որպես միասնական և կենտրոնացված համակարգ, հրաժարվել է իր վերաքննիչ բողոքից:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Հ.Մովսիսյանի իրավահաջորդը վերջինիս իրավունքների վերականգնման նպատակով վարույթը շարունակելու պահանջ չի ներկայացրել, մասնավորապես՝ վերաքննության կարգով չի բողոքարկել Հ.Մովսիսյանի գործով Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը:

28. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Գրադինարն ընդդեմ Մոլդովայի* գործով կայացված վճռում իրավական դիրքորոշում է ձևավորվել այն մասին, որ լուրջ վերապահումներ ունի այն իրավական համակարգերի կապակցությամբ, որոնք թույլ են տալիս մահացած անձանց վերաբերյալ դատական քննություն իրականացնել կամ այդ անձանց դատապարտել, քանի որ նման դեպքերում առկա է նշված անձանց կողմից իրենց պաշտպանելու ակնհայտ անհնարինություն (տե՛ս GRADINAR v. MOLDOVA գործով 2008 թվականի ապրիլի 8-ի վճիռը, գանգատ թիվ 7170/02, կետ 109):

Մեջբերված իրավական դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 27-րդ կետում շարադրված հանգամանքները՝ մասնավորապես այն, որ դատախազությունը, փաստորեն, հրաժարվել է հանրային շահի վերականգնման համար ներկայացված բողոքից, իսկ Հ.Մովսիսյանի իրավահաջորդը նրա իրավունքների վերականգնման նպատակով վարույթը շարունակելու պահանջ չի ներկայացրել՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը

շարունակելու իրավական հիմքերը բացակայում են:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը: Ուստի, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայկ Արտավազդի Մովսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 16-ի որոշումը պետք է բեկանել, Հ.Մովսիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ նրա մահվան կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Հայկ Արտավազդի Մովսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 16-ի որոշումը բեկանել, Հայկ Արտավազդի Մովսիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ նրա մահվան կապակցությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

48.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՎԲ-05/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ՍԻՐՈՒՆՅԱՆԻ
Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչներ՝*

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հետևանքով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ Գրիշա Յաշայի Վիրաբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Սիրունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Բ Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2004 թվականի ապրիլի 23-ին Արարատի մարզի դատախազությունում հարուցվել է թիվ 27203404 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2004 թվականի մայիսի 3-ին Գրիշա Վիրաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով:

2004 թվականի մայիսի 21-ից քրեական գործի քննությունը շարունակվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազ Հ.Բաբայանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ Գ.Վիրաբյանի

նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է և քրեական գործի վարույթը կարճել այն պատճառաբանությամբ, որ Գ.Վիրաբյանի առողջությանը նույնպես միջին ծանրության վնաս է պատճառվել, և փաստորեն, զրկանքներ կրելով նա բավել է մեղքը, ուստի նպատակահարմար չէ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել:

2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը Գ.Վիրաբյանը բողոքարկել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ Գ.Վիրաբյանի բողոքը մերժվել է:

Գ.Վիրաբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2004 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Գ.Վիրաբյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2005 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ բեկանել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը և նյութերը վերադարձրել նույն դատարան՝ նոր քննության:

3. Նոր քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի մարտի 3-ի որոշմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը թողել է անփոփոխ, Գ.Վիրաբյանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը, քննելով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 3-ի որոշման դեմ Գ.Վիրաբյանի վճռաբեկ բողոքը, 2005 թվականի մայիսի 13-ի որոշմամբ այն թողել է անփոփոխ, իսկ Գ.Վիրաբյանի բողոքը՝ առանց բավարարման:

4. Գ.Վիրաբյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 40094/05) գործով վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Վիրաբյանի իրավունքի խախտման փաստը:

Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Գ.Վիրաբյանի ներկայացուցիչ Ա.Սիրունյանը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել, որի հիման վրա Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ հարուցվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման վարույթ:

5. 2013 թվականի սեպտեմբերի 24-ին ստացվել է Արտակ Ջեյնայանի և Արա Գազարյանի դիմումն այն մասին, որ միանում են Գ.Վիրաբյանի ներկայացուցիչ Ա.Սիրունյանի վճռաբեկ բողոքին:

Դատավարության մասնակիցների կողմից բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշման համաձայն՝ «2004 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 17⁰⁵-ին, ոստիկանության Արտաշատի բաժին ահագանգ է ստացվել այն մասին, որ Արարատի մարզի Շահումյան գյուղի բնակիչ Գրիշա Յաշայի Վիրաբյանը 2004 թվականի ապրիլի 12-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հանրահավաքին մասնակցել է զենքով և շարունակել իր վրա զենք կրել:

Այդ հանգամանքը ստուգելու համար ոստիկանության Արտաշատի բաժնի պետի տեղակալ Արմեն Գարբուզյանի հանձնարարությամբ՝ ոստիկանության բաժին բերելու նպատակով, Գ.Վիրաբյանի բնակության հասցեով մեկնել են քրեական հետախուզության բաժնի օպերիվազոր Ռուդիկ Սահակյանը և պրոֆիլակտիկայի բաժանմունքի տեղամասային տեսուչ Աբրահամ Սահակյանը: Նրանք Գրիշա Վիրաբյանին հանդիպել են իր տան մոտակայքում և հրավիրել են ոստիկանության Արտաշատի բաժին: Գ.Վիրաբյանը ոգելից խմիչք օգտագործած վիճակում զազրախոսել է, հրաժարվել է ենթարկվել ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, իսկ այնուհետև՝ նստելով նրանց ավտոմեքենան, սկսել է վիրավորանքներ հասցնել ոստիկանության աշխատակիցներին: Ոստիկանության Արտաշատի բաժնում Գ.Վիրաբյանի հետ՝ զենք կրելու և հանրահավաքներին դրանով մասնակցելու կապակցությամբ, զրուցել է քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանը: Գ.Վիրաբյանը հերքել է զենք կրելու և ընդհանրապես այն ունենալու հանգամանքը: Գ.Վիրաբյանի կողմից զազրախոսելու և լկտի պահվածք դրսևորելու մասին Հ.Մովսիսյանը զեկուցել է ոստիկանության Արտաշատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Ա.Գարբուզյանին, որի ներկայությամբ նույնպես Գ.Վիրաբյանը դրսևորել է նույն պահվածքը, և Ա.Գարբուզյանը հանձնարարել է վարչական իրավախախտման վերաբերյալ նյութեր նախապատրաստել: Օպերիվազոր Ռ.Սահակյանի աշխատասենյակում նույն բաժնի օպերիվազոր Արսեն Մկրտչյանը Գ.Վիրաբյանի կողմից կատարված վարչական զանցանքի վերաբերյալ նյութեր է նախապատրաստել, որի ժամանակ վերջինս հրաժարվել է բացատրության տալ և իր վերաբերյալ որևէ տեղեկություններ հայտնել: Ժամը 18³⁰-ի սահմաններում աշխատասենյակ է եկել Հ.Մովսիսյանը, և տեսնելով, որ Գ.Վիրաբյանը չի ենթարկվում ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, փորձել է Գ.Վիրաբյանին բացատրել, որ նա պարտավոր է իր վերաբերյալ տեղեկություններ հայտնել, սակայն վերջինս անտեսել է Հ.Մովսիսյանի բացատրությունը և շարունակել է զազրախոսել: Հ.Մովսիսյանը կրկին փորձել է Գ.Վիրաբյանին կարգի հրավիրել, ապա հայտնել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ նախապատրաստվող նյութերը պետք է ուղարկվեն մարզի առաջին ատյանի դատարանի քննարկմանը: Այդ լսելով, Գ.Վիրաբյանը, գործադրելով առողջության համար վտանգավոր բռնություն, սեղանի վրա

դրված բջջային հեռախոսի լիցքավորման սարքով հարվածել է իշխանության ներկայացուցիչ հանդիսացող և իր ծառայողական պարտականությունները կատարող Հ.Մովսիսյանի աջ աչքի շրջանին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել է միջին ծանրության վնաս, այնուհետև սեղանի վրայից վերցրել է լարային հեռախոսի ապարատը և փորձել նրանով նույնպես հարված հասցնել Հ.Մովսիսյանին, սակայն աշխատասենյակում գտնվող Ա.Արսենյանին հաջողվել է կանխել հարվածը, որից հետո Գ.Վիրաբյանը հարձակվել է Հ.Մովսիսյանի վրա և վերջինս պաշտպանվելու համար ոտքով հարվածել է Գ.Վիրաբյանի ամորձիներին, գրկախառնվել նրա հետ և միասին վայր են ընկել աթոռին, ապա հատակին:

Գեպքի հետևանքով Գ.Վիրաբյանի ամորձին վնասվել, վիրահատության միջոցով հեռացվել է և նրա առողջությանը նույնպես պատճառվել է միջին ծանրության վնաս:

Քանի որ Հ.Մովսիսյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում, նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, իսկ Գ.Վիրաբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 3-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և գործը քննիչի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 272 հոդվածի կարգով ներկայացվել է համայնքների դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և առաջին ատյանի դատարան ուղարկելու համար:

Նկատի ունենալով, որ իր կատարած հանցագործության ընթացքում մեղադրյալ Գ.Վիրաբյանի առողջությանը նույնպես միջին ծանրության վնաս է պատճառվել՝ նրա ամորձին վնասվել և վիրահատվել, հեռացվել է, որն անբուժելի է, և փաստորեն գրկանքներ կրելով՝ նա քավել է իր մեղքը, իսկ նման պայմաններում նպատակահարմար չէ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել (...))» (տե՛ս նյութեր, էջ 11-12):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռ է կայացրել, որով հիմնավորվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) նախատեսված՝ Գ.Վիրաբյանի իրավունքների խախտման փաստը:

Եվրոպական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ թիվ 27203404 քրեական գործի քննության և դատարանում Գ.Վիրաբյանի բողոքի քննության ընթացքում տեղի են ունեցել՝

- Կոնվենցիայի 3-րդ հոդվածի էական խախտում՝ Գ.Վիրաբյանը ենթարկվել է խոշտանգումների,

- Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում՝ պետական մարմիններն արդյունավետ քննություն չեն իրականացրել Գ.Վիրաբյանին

խոշտանգումների ենթարկելու մասին նրա բողոքների առնչությամբ,

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում՝ խախտվել է Գ.Վիրաբյանի անմեղության կանխավարկածը,

- Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ընթացակարգային խախտում՝ չի իրականացվել արդյունավետ քննություն Գ.Վիրաբյանի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին բողոքների առնչությամբ:

Ըստ բողոքաբերի՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 3-ի որոշման եզրափակիչ մասի վերանայումը տվյալ դեպքում անհրաժեշտ է, քանի որ թիվ 27203404 քրեական գործի շրջանակներում Գ.Վիրաբյանի և ոստիկանության աշխատակիցների գործողություններին տրվել են ոչ համարժեք գնահատականներ, այն է՝ Գ.Վիրաբյանին խոշտանգելը և նրա իրավունքների մյուս խախտումները որակվել են որպես անհրաժեշտ պաշտպանություն, իսկ Գ.Վիրաբյանի գործողությունները որակվել են որպես քրեորեն պատժելի արարք՝ խախտելով անմեղության կանխավարկածի սկզբունքը: Բացի այդ, *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է այնպիսի հանգամանքներ, որոնք ունեն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների հատկանիշներ և որոնց պետք է քրեաիրավական գնահատական տրվի:

Մեջբերելով *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը խնդրել է հարուցել դատական ակտի վերանայման վարույթ, բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 3-ի որոշումը, փոփոխել այն և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանին ուղղված Գ.Վիրաբյանի բողոքը բավարարել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) [Ն]որ հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. (...) [Ն]որ հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանքները հաստատված են համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դրանց ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հաստատվել է անձի՝ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

1. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը

9. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ իր նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է. «[Կոնվենցիայի] 3-րդ հոդվածում սահմանվում են ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքները: Նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպես, օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցագործության դեմ պայքարում Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ զոհի պահվածքից (տե՛ս *Labita v. Italy* [GC], թիվ 26772/95, «119, ՄԻԵԿ 2000-IV, և *Chahal v. the United Kingdom*, 1996 թվականի նոյեմբերի 15, «79 , Չեկույցներ 1996-V): 3-րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում (տե՛ս *Selmouni v. France* [GC], թիվ 25803/94, «95, ՄԻԵԿ 1999-V, և *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28, «93, Չեկույցներ 1998-VIII):

(...) [Վ]ատ վերաբերմունքը պետք է լինի նվազագույն ծանրության, որպեսզի համարվի 3-րդ հոդվածով նախատեսված: Այս նվազագույն հասկացության որոշումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես, օրինակ՝ վերաբերմունքի տևականությունից, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցություններից և որոշ դեպքերում՝ տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից (տե՛ս *Labita*, վերևում մեջբերված, «120, և *Assenov and Other*, վերևում մեջբերված, «94): Ազատությունից զրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելը, եթե դա չի արվել վերջինիս սեփական պահվածքից առաջացած խիստ անհրաժեշտության հանգամանքներում, նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և ըստ էության հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանված իրավունքի խախտում (տե՛ս *Ribitsch v. Austria*, 1995

թվականի դեկտեմբերի 4, «38, Սերիա Ա թիվ 336, Selmouni, վերևում մեջքերված, «99, և Sheydayev v. Russia, թիվ 65859/01, «59, 2006 թվականի դեկտեմբերի 7):

Երբ Դատարանը գնահատում էր այն ապացույցները, որոնց վրա անհրաժեշտ էր հիմնվել 3-րդ հոդվածով նախատեսված խախտման մասին որոշում կայացնելիս, այն գլխավորապես կիրառել է ապացուցման «ողջամիտ կասկածից դուրս» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցը կարող է բխել այն հանգամանքից, որ առկա են բավարար լուրջ, պարզ և համապատասխան հետևություններ կամ փաստի նման անհերքելի կանխավարկածներ (տե՛ս Ireland v. the United Kingdom, 1978 թվականի հունվարի 18, «161, Սերիա Ա թիվ 25, Labita, վերևում մեջքերված, «121, և Jalloh v. Germany [GC], թիվ 54810/00, «67, ՍԻԵԿ 2006-IX):

Այն դեպքում, երբ իրավասու մարմինները ամբողջությամբ կամ մեծամասամբ ծանոթ են խնդրահարույց իրադարձություններին, ինչպես, օրինակ՝ իրենց վերահսկողության տակ անազատության մեջ գտնվող անձանց դեպքում, փաստի մասին նման կալանավորման ընթացքում ծագող վնասվածքների առումով լուրջ կանխավարկածներ կարող են առաջանալ: Իրականում, ապացուցման պարտականության առումով կարելի է համարել, որ մարմինների պարտականությունն է տալ բավարար և համոզիչ բացատրություն (տե՛ս Salman v. Turkey [GC], թիվ 21986/93, «100, ՍԻԵԿ 2000-VII, և Varnava and Others v. Turkey [GC], թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 և 16073/90, «183, ՍԻԵԿ 2009-...): Նմանապես, երբ անհատին առողջ տանում են ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայր, իսկ ազատվելուց պարզվում է, որ նա վնասվածքներ է ստացել, ապա պետության պարտականությունն է տալ արժանահավատ բացատրություն այն մասին, թե ինչպես են առաջացել այդ վնասվածքները (տե՛ս, այլ մարմինների շրջանակում, Aksoy v. Turkey, 1996 թվականի դեկտեմբերի 18, «61, Չեկույցներ 1996-VI, Selmouni, վերևում մեջքերված, «87; և Gafgen v. Germany [GC], թիվ 22978/05, «92, ՍԻԵԿ 2010-...): Այլապես, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կասկածները փարատվում են հօգուտ դիմումատուի, և այս կապակցությամբ հարց կարող է բարձրացվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն (տե՛ս Mikheyev v. Russia, թիվ 77617/01, «127, 2006 թվականի հունվարի 26)» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետեր 148-151):

10. Վերոգրյալ դրույթների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Գ.Վիրաբյանի ստացած վնասվածքների և դրանց շուրջ հետաքննության ընթացքում տրված բացատրությունների առումով Եվրոպական դատարանը գտել է, որ «(...) թե՛ Կառավարության և թե՛ ներպետական մարմինների կողմից դիմումատուի վնասվածքների առումով տրված բացատրությունը խիստ կասկածելի է և անհավանական: Միևնույն ժամանակ, այն նշում է, որ հետաքննության բոլոր փուլերում դիմումատուն ներկայացրել է համապատասխան և մանրամասն նկարագրություն այն մասին, թե ով է իր նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերել և ինչպես է դա տեղի ունեցել: Նրա պնդումները համապատասխանում էին տարբեր բժշկական արձանագրություններում առկա

նրա վնասվածքների նկարագրությամբ (...):

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը չի կարող դիմումատուի վնասվածքների վերաբերյալ Կառավարության բացատրությունը համարել բավարար և համոզիչ, և հետևաբար, այն եզրակացնում է, որ նրա վնասվածքները վերաբերելի են վատ վերաբերմունքի այն դրսևորումներին, որոնց մասով մարմինները պատասխանատու էին» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով* Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 154-155):

11. Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) դիմումատուն ենթարկվել է առանձնապես դաժան վատ վերաբերմունքի, որը նրան պատճառել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ և տառապանք: Մասնավորապես, նրա ամորձիներին շարունակաբար հասցվել են հարվածներ ոտքերով, ձեռքերով և մետաղական առարկաներով: Այս վնասվածքները երկարատև հետևանքներ թողեցին նրա առողջության վրա, քանի որ նրա ձախ ամորձին այնպես էր պատռվել, որ այն ստիպված հեռացվեց: Այնուհետև նրան, ձեռնաշղթաներով ձեռքերը մեջքին կապած, ծեծի էին ենթարկել, և նա ստացել էր հարվածներ կրծքավանդակին և կողոսկրերին: Այս գործի հանգամանքներից կարելի է լուրջ հետևություններ անել, որ դիմումատուի նկատմամբ մտադրաբար է ցուցաբերվել վատ վերաբերմունք՝ նրան պատժելու կամ ահաբեկելու նպատակով, կամ էլ երկուսը միասին: Հաշվի առնելով վատ վերաբերմունքի բնույթը, աստիճանը և նպատակը՝ Դատարանը գտնում է, որ այն կարելի է բնորոշել որպես խոշտանգումների ենթարկելու գործողություններ (տե՛ս Selmouni, վերևում մեջբերված, «96-105, և Salman, վերևում մեջբերված, «115») (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 157):

Արդյունքում Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի էական խախտում:

II. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտումը

12. Անդրադառնալով իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին Գ. Վիրաբյանի պնդումների շուրջ արդյունավետ քննություն իրականացնելու վերաբերյալ հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը վերահաստատում է, որ երբ անհատը ենթադրաբար պնդում է այն մասին, որ նրա նկատմամբ 3-րդ հոդվածի խախտմամբ ցուցաբերվել է խիստ վատ վերաբերմունք ոստիկանության կողմից կամ Պետության այլ նման գործակալների կողմից, ապա այդ դրույթով, որը ընթերցվում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն Պետության հիմնական պարտականության մասին դրույթի հետ հետևյալ կերպ՝ «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահանջվում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի ...», [ա]նուղակի կերպով պահանջվում է արդյունավետ պաշտոնական հետաքննության իրականացում (տե՛ս Assenov and Others, վերևում մեջբերված, «102, և Labita, վերևում մեջբերված, «131):

Հետաքննություն իրականացնելու պարտականությունը «արդյունքի պարտականություն չէ, այլ միջոցների պարտականություն է»: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր հետաքննություն լինի հաջողված կամ հանգի մի եզրակացության,

որը համապատասխանում է դիմումատուի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, ապա նաև հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը, ու արդարացված լինելու դեպքում՝ նրանց պատժելուն: Այսպիսով, վատ վերաբերմունքի մասին լուրջ պնդումներով հետաքննությունը պետք է ամբողջական լինի: Դրանից հետևում է, որ մարմինները միշտ պետք է լրջորեն ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է հիմնվեն հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունների վրա իրենց հետաքննությունը փակելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները պարզելու համար, որը ներառում է, մասնավորապես, առերեսումը, դատաբժշկական փորձաքննության ապացույցները և այլն: Հետաքննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատմանը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել (տե՛ս Mikheyev, վերևում մեջբերված, «108, և Akulinin and Babich, վերևում մեջբերված, «46, և Vladimir Fedorov, վերևում մեջբերված, «67):

Ավելին, հետաքննությունը պետք է նպատակահարմար լինի: Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, երբ պաշտոնական հետաքննության արդյունավետությունը կասկած է առաջացնում, Դատարանը հաճախ գնահատում է այն փաստը, թե արդյոք մարմինները պատշաճ և համապատասխան ժամկետներում են արձագանքել բողոքներին (տե՛ս Labit, վերևում մեջբերված, «133-135): Ուշադրություն է դարձվում հետաքննությունը սկսելու, ցուցմունքներ վերցնելը ուշացնելու (տե՛ս Timurtaş v. Turkey, թիվ 23531/94, «89, ՄԻԵԿ 2000 VI, և Tekin v. Turkey, 1998 թվականի հունիսի 9, «67, Ձեկույցներ 1998 IV), ինչպես նաև հետաքննության ընթացքում պահանջված ժամկետի տևողության վրա (տե՛ս Indelicato v. Italy, թիվ 31143/96, «37, 2001 թվականի հոկտեմբերի 18):

Վերջապես, Դատարանը վերահաստատում է այն հանգամանքը, որ որպեսզի Պետության գործակալների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքը հետաքննության արդյունավետության նպատակով համարվի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Հետաքննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն (տե՛ս Oğur v. Turkey [GC], թիվ 21594/93, «91, ՄԻԵԿ 1999 III, Mehmet Emin Yaksel v. Turkey, թիվ 40154/98, «37, 2004 թվականի հուլիսի 20, ինչպես նաև Ergi v. Turkey, 1998 թվականի հուլիսի 28, «83, Ձեկույցներ 1998 IV, երբ աղջկա մահը հետաքննող պետական դատախազը անվտանգության ուժերի և PKK-ի ենթադրյալ բախման ժամանակ անկախության պակաս ցույց տվեց՝ հիմնվելով միայն դեպքի մեջ ներգրավված ոստիկանների կողմից տրամադրված տեղեկությունների վրա» (տե՛ս Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 161-164):

13. Վերոգրյալ դրույթները կիրառելով սույն գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը, ընդունելով հանդերձ, որ սույն գործով քրեական վարույթը հարուցվել է դիմումատուի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի ցուցաբերման հենց նույն օրը և սկսվել է հետաքննություն, այնուամենայնիվ նշել է, որ «(...) քրեական գործի հանգամանքները բացառապես հիմնվել են իրադարձությունների մասին ոստիկանների կողմից տրամադրված տարբերակի վրա, ներառյալ՝ հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց և նրանց այն գործընկերների կողմից տրամադրված տեղեկությունների վրա, ովքեր բոլորը որոշակիորեն ներգրավված էին 2004 թվականի ապրիլի 23-ի իրադարձություններում՝ չլսելով նույնիսկ դիմումատուին կամ որևէ այլ վկայի: Ավելին, հենց սկզբից իրադարձությունների մասին այս տարբերակը համարվել է հաստատված փաստ (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ «34 մեջ նշված դատաբժշկական փորձաքննություն կարգադրելու մասին քննիչի որոշումը) և ամբողջ հետաքննությունը իրականացվել է այդ կանխավարկածով: Անհրաժեշտ է նշել, որ ոստիկանության տարբերակը քննիչի կողմից հենց այդպես ընդունվել է այն ժամանակ, երբ նա նույնիսկ իր տրամադրության տակ չի ունեցել դիմումատուի վնասվածքների բնույթի և հնարավոր պատճառների մասին դատաբժշկական փորձաքննության եզրակացությունները: Արդյունքում, դիմումատուն դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված ոստիկանները երբեք չեն համարվել հնարավոր կասկածյալներ և, ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ, իսկ ոստիկանության աշխատակից Հ.Մ.-ի դեպքում՝ որպես գոհ» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 165):

Եվրոպական դատարանը, կասկած հայտնելով, որ հետաքննություն իրականացնող մարմնի միակ նպատակն է եղել դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը և դրա շուրջ ապացույցներ հավաքելը, նշել է, որ «Հետաքննություն իրականացնող մարմինները հետաքննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևէ բացատրություն այն մասին, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմումատուի ցուցմունքները՝ ոչ վստահելի: Վատ վերաբերմունքի մասին իր պնդումների առումով ամբողջական հետաքննություն իրականացնելու և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու մասին դիմումատուի բազմաթիվ պահանջները անտեսվել են, կամ դրանց տրվել է մակերեսային պատասխան (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ «54): Այսպիսով, պարզվում է, որ հետաքննություն իրականացնող մարմինները առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել են ոստիկանների կողմից տրամադրված վկայությանը և դրանով կարելի է ասել չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվությունը և անկախությունը» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, կետ 167):

Այնուհետև Եվրոպական դատարանը, փաստելով, որ հետաքննությունը սկսվելուց մոտ մեկ ամիս անց դիմումատուի դեմ քրեական գործը մարզի դատախազությունից ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն, նշել է, որ «(...) դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի ուղարկումը, անկախ դրա

պատճառից և նպատակից, առանձնապես տարբեր արդյունքներ չի տվել, քանի որ Երևան քաղաքի դատախազությունը առանց վարանելու անփութորեն մերժել է վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումները (...) և շարունակել է իրականացնել նույն տիպի հետաքննություն՝ հիմնվելով իրադարձությունների մասին նույն տարբերակի վրա» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, կետ 168):

Անդրադառնալով իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին Գ.Վիրաբյանի պնդումների շուրջ քննությանը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ քննության ընթացքում առկա են եղել մի շարք էական բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնք կարող էին վտանգել դրա վստահելիությունը և արդյունավետությունը:

Եվրոպական դատարանը, մասնավորապես, անդրադառնալով դիմումատուի դատաբժշկական փորձաքննության անցկացման կարգին, նշել է, որ «Նման փորձաքննություն անցկացնելու կարգադրություն տվող քննիչի որոշումը կայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքի ցուցաբերման հաջորդ օրը, մասնավորապես՝ 2004 թվականի ապրիլի 24-ին (...): Դիմումատուն պնդել է, որ դատաբժշկական փորձագետ Գ.-ն սկսել է իր փորձաքննությունը միայն 2004 թվականի մայիսի 5-ին: Փորձագետի զեկույցից միանգամայն պարզ չէ, թե արդյո՞ք դա այդպես է, սակայն կարելի է վստահաբար ենթադրել, որ փորձագետը չի սկսել փորձաքննությունը քննիչի որոշումից հետո առնվազն երեք օրվա ընթացքում (...): Անհրաժեշտ է նշել, որ արդյունքում կազմված փորձագետի զեկույցը չէր պարունակում որևիցե նշում դիմումատուի կրծքավանդակի և կողոսկրերի վնասվածքների մասին (...), ինչն ընդամենը մի քանի օր առաջ արձանագրվել էր Արտաշատի հիվանդանոցի բժիշկների կողմից (...): Այսպիսով, չի կարելի բացառել, որ դատաբժշկական փորձագետի կողմից այս բացթողման պատճառ է հանդիսացել հենց նշված ուշացումը: Չի կարելի բացառել նաև այն, որ դա արվել է հպանցիկ քննության արդյունքում՝ հնարավոր անկախության պակասի պատճառով: Ամեն դեպքում, այս հանգամանքը ստիպում է Գ-ատարանին կասկածել դատաբժշկական եզրակացությունների հավաստիության մեջ: Ավելին, եթե դատաբժշկական փորձագետը արձանագրեր այս վնասվածքները, ապա նրա՝ դիմումատուի վնասվածքների հնարավոր պատճառների մասին եզրակացությունները կարող էին միանգամայն տարբեր լինել» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 170):

Եվրոպական դատարանը շեշտել է նաև, որ դատաբժշկական փորձագետ Գ.-ի կողմից կազմված զեկույցում առկա են մի շարք կարևոր թերություններ՝ նշելով. «(...) ինչպես հետաքննության ամբողջ ընթացքը, այնպես էլ այստեղ կասկածելի է, որ զեկույցը, որը ամբողջությամբ հիմնված էր իրադարձությունների մասին հապճեպ ընդունված ոստիկանության տարբերակի վրա, կարող էր համարվել այնպիսի միջոց, որն իսկապես ուղղված էր և կարող էր տալ անկախ և օբյեկտիվ բացատրություն դիմումատուի վնասվածքների հնարավոր պատճառների մասին (...): Երկրորդ. զեկույցով որևէ պատասխան չէր տրվել քննիչի կողմից առաջադրված հիմնական հարցերից մեկին, այն է՝ թե արդյո՞ք դիմումատուի

ամորձիին հասցված վնասվածքը պատճառվել է մեկ, թե մի քանի հարվածով, ինչը, ելնելով գործի հանգամանքներից և միմյանց հակասող իրադարձությունների մասին տարբերակներից, էական նշանակություն ունեն հետաքննության համար: Երրորդ. փորձագետի նախնական եզրակացությունը պարունակում էր հետևյալ արտահայտությունը՝ «Չախ ամորձիին հասցված վնասվածքը տրավմատիկ բնույթի է և կարող էր պատճառված լինել ցանկացած տեսակի հարվածով» (...), որով առաջարկվում էր դիմումատուի վնասվածքների հնարավոր պատճառների լայն շրջանակ, բայց որը, անբացատրելի պատճառներով, հանվել է նույն եզրակացության թարմացված տարբերակից (...): Սա ևս մեկ անգամ կասկած է առաջացնում դատաբժշկական փորձագետի թե՛ անկախ լինելու և թե՛ ամբողջական փորձաքննություն անցկացնելու մեջ, ինչպես նաև նրա եզրակացությունների հավաստիության մեջ» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 171):

Եվրոպական դատարանը, արձանագրելով, որ հետաքննություն իրականացնող մարմինները նշյալ դատաբժշկական փորձաքննության որևէ թերության չեն անդրադարձել, և դատաբժշկական նոր փորձաքննությունն անցկացվել է դեպքից մոտ երեք ամիս անց, եզրահանգել է. «(...) Դատարանը համոզված է, որ մնան հետաձգված փորձաքննությամբ հնարավոր չէր լինի ճշգրիտ կերպով արձանագրել դիմումատուի վնասվածքները և հետևաբար տալ հավաստի եզրակացություններ: Այսպիսով Դատարանը լրջորեն կասկածում է, որ այս եղանակով հնարավոր եղավ շտկելու առաջին դատաբժշկական փորձաքննության թերությունները: Սա հաստատվեց նաև այն փաստով, որ նոր փորձաքննության արդյունքում կազմված զեկույցը պարունակում էր այնպիսի եզրակացություններ, որոնք ըստ էության նույնն էին, ինչ որ առաջին զեկույցի եզրակացությունները (...)» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 172):

Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ հետաքննություն իրականացնող մարմինները չեն իրականացրել այլ բժշկական ապացույցների գնահատում, մասնավորապես, չեն գնահատվել Արտաշատի հիվանդանոցի արձանագրությունները, հիվանդանոցի բժիշկները հարցաքննվել են դեպքից մոտ երկուսուկես ամիս հետո: Այս ապացույցների և դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների միջև առկա հակասությունները չեն պարզվել և պատասխան չի տրվել այն հարցին, թե արդյոք դիմումատուի վնասվածքներն ամբողջությամբ կարող էին պատճառված լինել ոստիկանների կողմից նշված հանգամանքներում (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 173):

Ամփոփելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ հետաքննություն իրականացնող մարմիններին չի հաջողվել համապատասխան ժամկետներում իրականացնել հետաքննության արդյունավետ արդյունքի հասնելու համար կարևոր նշանակություն ունեցող բժշկական ապացույցների պատշաճ և օբյեկտիվ ձեռքբերում և գնահատում (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, կետ 174):

Անդրադառնալով այլ ապացույցների՝ Եվրոպական դատարանը նկատել է նաև, որ «(...) հետաքննություն իրականացնող մարմինները անմիջապես չեն մեկուսացրել և հարցաքննել դեպքի մեջ ներգրավված ոստիկաններին՝ դրանով իսկ չեն կանխել հնարավոր հանցավոր պայմանավորվածությունը»: Անդրադառնալով ոստիկանների հարցաքննության ընթացակարգին և բովանդակությանը՝ Եվրոպական դատարանը գտել է, որ «(...) տվյալ հարցաքննությունները ունեցել են պարզապես ձևական բնույթ, և Դատարանը չի կարող դրանք համարել լուրջ և պատշաճ ժամկետներում կատարված փորձ, ուղղված պարզելու այն հանգամանքները, որոնց ժամանակ դիմումատուն ստացել է իր վնասվածքները»:

Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ ոստիկանության աշխատակիցներից ցուցմունքներ վերցնելու ընթացքում ջանքեր չեն գործադրվել դիմումատուի ձեռքակալության, ոստիկանության բաժին բժիշկների այցի, դիմումատուի հարբածության վիճակի զննության և վնասվածքները ստանալու ժամերի հետ կապված գործի նյութերում առկա անհամապատասխանությունները պարզաբանելու համար: Համապատասխան հարցեր չեն տրվել նաև բժիշկ Ա.Գ.-ին, ով դեպքի օրը երկու անգամ այցելել է ոստիկանության բաժին (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 175-176):

Վերոգրյալից բացի, Եվրոպական դատարանը նշել է մի շարք այլ թերություններ և բացթողումներ, այն է՝ չեն հարցաքննվել Գ.Վիրաբյանի փաստաբանն ու ոստիկան Օ.Բ-ն, դիմումատուի և ոստիկանների առերեսումներն անցկացվել են մեկուկես ամսից մինչև երեք ու կես ամիս ուշացումներով, իսկ դիմումատուի և ոստիկանապետի տեղակալ Գ-ի միջև առերեսում չի անցկացվել: Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ դրանով զգալիորեն նվազագույնի է հասցվել այդ միջոցների արդյունավետությունը: Եվրոպական դատարանը նշել է նաև, որ պարզ չէ, «(...)» թե ինչ հիմքերով է քրեական վարույթը կարճելու մասին դատախազի որոշմամբ սահմանվում, որ ոստիկան Հ.Մ.-ն ինքնապաշտպանվելու նպատակով է ոտքով հարվածել դիմումատուի ամորձիներին (...) այն դեպքում, երբ գործի ապացույցները նման պնդում չեն պարունակում: Վերջապես, ներպետական դատարանները հետաքննության ընթացքում լիովին չեն անդրադարձել վերոնշյալ հետաքննության թերություններից որևիցե մեկին, և պարզվում է, որ այդ ընթացքում իրականացվել է դիմումատուի պնդումների միայն մակերեսային քննություն (...)» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 177):

14. Ամփոփելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) վատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների առումով մարմինների կողմից ձեռնարկված հետաքննությունը եղել է անարդյունավետ, ոչ պատշաճ և միանգամայն թերի: Դրանով հնարավոր չի եղել տալ հավաստի եզրակացություններ և արձանագրել գործի փաստերը: Իրավասու մարմինները բավականաչափ բարեխիղճ չեն եղել, և չի կարելի ասել, որ մտադրված են եղել բացահայտելու և պատժելու հանցագործներին» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 178):

Հետևաբար, Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի

3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

III. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումը

15. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Անդրադառնալով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտելու վերաբերյալ դիմումատուի պնդումներին՝ Եվրոպական դատարանը, վկայակոչելով իր նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է, որ «(...) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածը արդար քրեական դատավարության այն բաղադրիչներից մեկն է, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով (տե՛ս Deweer v. Belgium, 1980 թվականի փոտրվարի 27, «56, Սերիա Ա թիվ 35, և Minelli v. Switzerland, 1983 թվականի մարտի 25, «27, Սերիա Ա թիվ 62): Այն կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնյայի ցուցմունքում կարծիք արտահայտվի այն մասին, որ նա մեղավոր է, նախքան դա ապացուցված կլինի օրենքի համաձայն: Նույնիսկ որևիցե պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում, դա բավարար պատճառ կարող է հանդիսանալ կարծելու, որ պաշտոնյան գտնում է, որ մեղադրյալը մեղավոր է (տե՛ս Dakaras v. Lithuania, թիվ 42095/98, «41, ՄԻԵԿ 2000 X): Ավելին, անմեղության կանխավարկածի սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի կողմից, այլ նաև այլ պետական մարմինների կողմից, այդ թվում նաև դատախազների կողմից (տե՛ս Allenet de Ribemont v. France, 1995 թվականի փոտրվարի 10, «36, Սերիա Ա թիվ 308, և Dakaras, վերևում մեջբերված, «42):

Բացի դրանից, հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ, պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացություն, կատարել է տվյալ հանցագործությունը (տե՛ս Matijašević v. Serbia, թիվ 23037/04, «48, ՄԻԵԿ 2006 X, և Khaydarov v. Russia, թիվ 21055/09, «149, 2010 թվականի մայիսի 20): Վերջինով խախտվում է անմեղության կանխավարկածի դրույթը, մինչդեռ առաջին տեսակի հայտարարությունը Դատարանի կողմից քննված զանազան իրավիճակներում համարվել է անառարկելի (տե՛ս Garycki v. Poland գործը, թիվ 14348/02, «67, 2007 թվականի փետրվարի 6): Այն հարցը, թե արդյոք պետական պաշտոնյայի կողմից արված հայտարարությամբ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը, պետք է որոշվի այն կոնկրետ հանգամանքների համատեքստում, որոնց պայմանում արվել է վիճարկվող հայտարարությունը (տե՛ս Dakaras, վերևում մեջբերված՝ «43» (տե՛ս *Վիրաքյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 185-186):

16. Վերոգրյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո մեկնաբանելով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազ Հ.Բաբայանի 2004

թվականի օգոստոսի 30-ի որոշումը, որով Գ.Վիրաբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել է՝ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը) Եվրոպական դատարանը նշել է, որ «(...) այս որոշումը ձևակերպվել է այնպես, որ կասկած չի առաջացել այն առումով, որ դատախազի կարծիքով դիմումատուն հանցանք է կատարել: Մասնավորապես, դատախազը սկզբում ամփոփ տեսքով հավաքել է գործի փաստական հանգամանքները, ինչպես նշված են դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի մեջ, և ներկայացրել այնպես, որ դրանով առաջարկվում էր հաստատել, որ ոստիկան Հ.Մ.-ն գործել է ինքնապաշտպանության նկատառումներով, իսկ դիմումատուն կանխամտածված վնասվածքներ էր հասցրել նրան: Այնուհետև դատախազը եզրակացրել է, որ նպատակահարմար չէր քրեական հետապնդում իրականացնել դիմումատուի նկատմամբ, քանի որ կատարվածի պատճառով նա նույնպես վնասվել է: Սա նշելով՝ դատախազը հատուկ օգտագործել է «Հանցանքը կատարելու ժամանակ [դիմումատուն] նույնպես վնաս է ստացել» և «գրկանքների միջոցով [դիմումատուն] քավել է իր մեղքը» բառերը (...):»

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն անփոփոխ են թողել դատախազի որոշումը և ըստ էության, չեն առարկել դրա դեմ, և շեշտել է, որ դատարաններում անցկացվող վարույթներով չի որոշվել դիմումատուի քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, այլ որոշվել է այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ էր կարճել գործը դատախազի որոշման հիմքերով: Հետևաբար, Եվրոպական դատարանը գտել է, որ այս վարույթները նպատակաուղղված չեն եղել դիմումատուի «մեղավորությունը օրենքի համաձայն ապացուցելուն»:

Այնուհետև, Եվրոպական դատարանը, շեշտելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (այն ժամանակ գործող խմբագրությամբ) նախատեսված քրեական գործի վարույթը կարճելու հիմքն ինքն իրեն ենթադրում էր, որ մեղսագրվող արարքի կատարումն անվիճարկելի փաստ է, գտել է, որ դիմումատուի դեմ քրեական գործի կարճման համար դատախազի պատճառաբանությունները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (այն ժամանակ գործող խմբագրությամբ) կարճված որոշումն անփոփոխ թողնելը անմեղության կանխավարկածի խախտումներ էին (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 189-192):

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

IV. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտումը

17. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Յուրաքանչյուր վատ վերաբերմունքն իր քաղաքական հայացքներով

պայմանավորված լինելու մասին Գ.Վիրաբյանի պնդումներին Եվրոպական դատարանը անդրադարձել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի և՛ նյութական, և՛ ընթացակարգային երաշխիքների տեսանկյունից և հիշեցրել է, որ «Խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի (տես՝ Willis v. United Kingdom, թիվ 36042/97, §48, ՄԻԵԿ 2002-IV): Նախկինում Դատարանում քննվել են մի շարք գործեր, որոնց ժամանակ դիմումատուները, Կոնվենցիայի 2-րդ կամ 3-րդ և 14-րդ հոդվածների համաձայն, հայտարարել են, որ մահը կամ վատ վերաբերմունքը խտրականության, մասնավորապես ռասայական ատելության, դրսևորման արդյունք է եղել: (...) Այդ իսկ պատճառով պետական մարմինները պետք է բոլոր հասանելի ձևերով պայքարեն ռասիզմի և ռասայական հիմքով բռնության դեմ՝ այդպիսով իսկ խթանելով հասարակության՝ ժողովրդավարության պատկերացումը խթանելու նպատակով, որում բազմազանությունն ընկալվում է ոչ թե որպես սպառնալիք, այլ որպես զարգացման աղբյուր (տես՝ Nachova and Others v. Bulgaria [GC], թիվ: 43577/98 և 43579/98, §145, ՄԻԵԿ 2005VII, Bekos and Koutropoulos v. Greece, թիվ 15250/02, §63, ՄԻԵԿ 2005XIII (հատվածներ) և Stoica v. Romania, թիվ 42722/02, §126, 2008 թվականի մարտի 4-ին)» (տես՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 199):

Եվրոպական դատարանը գտել է, որ վերոգրյալը կիրառելի է նաև այնպիսի գործերի դեպքում, երբ հայտարարվում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքը դրսևորվել է՝ ելնելով քաղաքական դրդապատճառներից և շեշտել է, որ «(...) Քաղաքական բազմակարծությունը, որը ենթադրում է քաղաքական բազմազան համոզմունքների և շարժումների խաղաղ գոյակցություն, առանձնակի կարևորություն է ներկայացնում օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության գոյատևման համար, մինչդեռ քաղաքական տարակարծությունը ճնշելու, վերացնելու կամ դրանից խուսափելու կամ քաղաքական տարակարծություն ունեցող կամ այն բարձրաձայնող անձանց պատժելու նպատակով Պետության ներկայացուցիչների կողմից իրականացվող բռնության գործողությունները վտանգում են ժողովրդավարական հասարակության սկզբունքներն ու արժեքները» (տես՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 200):

Անդրադառնալով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի նյութաիրավական կողմին՝ Եվրոպական դատարանը, վկայակոչելով իր նախադեպային իրավունքը, հիշեցրել է, որ ապացույցներն ուսումնասիրելիս դատարանը սահմանել է «հիմնավոր կասկածներից վեր» ապացույցի ստանդարտ, և որ ապացույցը կարող է բխել համատեղ գոյություն ունեցող՝ բավականաչափ հիմնավորված, պարզ և համահունչ եզրահանգումներից կամ մմանատիպ փաստերի անհերքելիության կանխավարկածից:

18. Գործի փաստական տվյալների գնահատման և ամփոփման արդյունքում Եվրոպական դատարանը գտել է, որ չի ապացուցվել, որ ոստիկանության կողմից դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը պայմանավորված է

եղել քաղաքական դրդապատճառներով և վճռել, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի նյութաիրավական կողմը չի խախտվել:

19. Այնուհետև, անդրադառնալով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «(...) բռնությամբ ուղեկցվող միջադեպեր հետաքննելիս պետական մարմինները լրացուցիչ պարտավորություն են ստանձնում. այն է՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ քաղաքական ցանկացած դրդապատճառ բացահայտելու և պարզելու, թե արդյոք տարբերվող քաղաքական համոզմունքների նկատմամբ անհանդուրժողականությունն իր դերն է ունեցել այդ դեպքերում: Այդ պարտավորությունը չկատարելը և քաղաքական նկատառումներով պայմանավորված բռնությունը որևէ քաղաքական երանգ չունեցող գործերի հետ նույն հիմքով քննելը կնշանակի աչք փակել այն գործողությունների վրա, որոնցով խախտվում են հիմնարար իրավունքները: Էսպես տարբեր իրավիճակները կարգավորելու եղանակների միջև տարբերակում չկատարելը կարող է հանգեցնել չհիմնավորված վերաբերմունքի, որը չի համապատասխանում Կոնվենցիայի 14-րդ հոդվածին (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *Nachova and Others v. Bulgaria*, թիվ 43577/98 և 43579/98, §158, 2004 թվականի փետրվարի 26, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, §69):

(...) [Բ]աղաքական դրդապատճառների առկայության փաստի ապացուցումը չափազանց դժվար է գործնականում: Բռի գործողության քաղաքական հնարավոր երանգները հետաքննելու՝ պատասխանող Պետության պարտականությունը ենթադրում է հնարավոր, սակայն ոչ ծայրահեղ ջանքերի գործադրում: Պետական մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան քայլերը վկայություններ հավաքելու ու ապահովելու, ճշմարտությունը բացահայտելու բոլոր գործնական միջոցներն օգտագործելու և ամբողջովին հիմնավորված, անկողմնակալ և օբյեկտիվ որոշումներ ընդունելու համար՝ բաց չթողնելով որևէ կասկածելի փաստ, որը կարող է մատնանշել քաղաքական նկատառումներով բռնությանը (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *Nachova and Others*, վերևում մեջբերված, §159, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, §69)» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 218-219):

20. Վերոգրյալ դրույթները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) դիմումատուն բազմաթիվ առիթներով հետաքննության մարմիններին պնդել է, որ իր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը կապված է ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին իր մասնակցության հետ, և ունի քաղաքական դրդապատճառներ և պահանջել, որ այս հանգամանքը հետաքննվի, իսկ մեղավորները պատժվեն (...): Երկու այլ վկաներ այս պնդումը հիմնավորող փաստարկներ են ներկայացրել (...): Վերջապես Դատարանը նկատում է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը նշել է ձեռքակալման պատճառների բացակայությունը (...):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ հետաքննության մարմիններն ունեին հավաստի և բավարար տեղեկություններ, որոնց հիման վրա

ակնհայտ էր դառնում նախնական ստուգում և, կախված արդյունքից, դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի հնարավոր քաղաքական դրդապատճառների հետաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, պետական մարմինները գրեթե ոչինչ չեն արել այս տեղեկությունները ստուգելու համար: Ոստիկանության միայն երկու աշխատակիցներից՝ Ա.Ս.-ից և Ռ.Ս.-ից էին հարցրել, թե արդյոք իրենք տեղյակ են եղել դիմումատուի քաղաքական պատկանելիության մասին, սակայն սա չի կարող համարվել նման լուրջ պնդումը հետաքննելու իրական փորձ և պարզապես ձևական բնույթ է կրում (...): Այլ հարցեր չեն տրվել, իսկ ոստիկանության մյուս աշխատակիցները, այդ թվում՝ Հ.Մ.-ն և Ա.Կ.-ն, ում դիմումատուն ուղղակիորեն մատնանշել է որպես իր նկատմամբ բռնի գործողություններ կատարելուց առաջ և հետո քաղաքական տեսանկյունից անհանդուրժողական հայտարարություններ արած անձանց, նույնիսկ չեն հարցաքննվել այդ պնդումների առնչությամբ: Ոչ մի փորձ չի կատարվել՝ պարզելու դիմումատուի ձեռքակալման հանգամանքները, այդ թվում՝ բազմաթիվ անճշտություններ և ձեռքակալման հնարավոր քաղաքական երանգը մատնանշող այլ տարրեր, իսկ ներկայացված նյութերից ոչ մի եզրակացություն չի արվել: Ոստի Գատարանը եզրակացնում է, որ պետական մարմինները չեն կատարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի համաձայն ստանձնած իրենց պարտավորությունը, այն է՝ ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը՝ պարզելու, թե արդյոք դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը ցուցաբերվել է խտրականության հիմքով» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետեր 222-224):

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմը:

21. Այսպիսով, նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը հաստատված է համարել սույն գործով դիմումատու Գ.Վիրաբյանի՝ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի մայիսի 13-ի որոշումը վերանայելու համար:

22. *Սկոցցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի* գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ վճիռը, որով Գատարանը խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Գատարանի արձանագրած խախտումները և հնարավորինս շտկելու դրա հետևանքները: Բացի այդ,

Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում՝ պայմանով, որ դրանք համատեղելի են Դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ (տե՛ս Scozzari and Giunta v. Italy, 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետ 249):

Սելջուկը և Ակսերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճռով պատասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...» (տե՛ս Selcuk and Asker v. Turkey, 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125):

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է. «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում ճանաչելու դեպքում դիմումատունն որքան հնարավոր է պետք է գտնվի այն իրավիճակում, որում նա կլիներ, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (տե՛ս, *mutatis mutandis*, Sejdovic v. Italy [ՄՊ], գանգատ թիվ 56581/00, §127, ՄԻԵԴ- 2006 և Yanakiev v. Bulgaria, գանգատ թիվ 40476/98, §89, 10 օգոստոսի 2006թ.):

Այս առնչությամբ Դատարանը (...) այն կարծիքին է, որ այն դեպքում, երբ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ, փոխհատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նորից քննումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս, *mutatis mutandis*, Lungoci, վերը ցիտած, §56)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետեր 103-104):

23. Հետևաբար, Գ.Վիրաբյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման արդյունքում Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի նոյեմբերի 12-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 3-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, ինչը հնարավորություն կտա վերացնել Գ.Վիրաբյանի՝ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքների խախտումները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426¹-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գրիշա Յաշայի Վիրաբյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2005 թվականի մայիսի 13-ի որոշումը վերանայել:

2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի նոյեմբերի 12-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 3-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ-3/0080/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վարդգես Ալեքսեյի Մանասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ դատախազ Ս.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ կայագորային քննչական բաժնում 2012 թվականի մարտի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91251812 քրեական գործը:

2012 թվականի հունիսի 28-ին Վարդգես Մանասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը Վ.Մանասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

2012 թվականի օգոստոսի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 7-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և Վ.Մանասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել դատախազ Ս.Խաչատրյանը:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատախազ Ս.Խաչատրյանը, որը Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ըստ մեղադրական եզրակացության՝ Վ.Մանասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, հանդիսանալով ՊԲ թիվ 36534 գորամասի 4-րդ ՀԳՄ-ի ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, 2012 թվականի մարտի 6-ին թիվ 167 մարտական դիրքի գետնատնակի առջև, խախտելով զենքի հետ վարվելու կանոնները, վերցրել է իրեն ամրակցված, համաժառայող Արման Հակոբյանի ոտքերին դրված ու վերջինիս կողմից լիցքավորված ԱԿ-74 տեսակի 1272877 համարի ինքնաձիգը, ցանկացել բացել ապահովիչը՝ փամփշտանոցում գտնվող փամփուշտը ցույց տալու համար, որի ընթացքում մատը պատահաբար կպել է ձգանին, արձակել կրակոց, որի հետևանքով նշված ժամանակ առույգ հերթափոխի պարտականություն կատարող, շարքային Վ.Մարտիրոսյանն անզգուշությամբ ստացել է ձախ ազդրի ստորին կեսի փափուկ հյուսվածքների հրազենային միջանցիկ վիրավորման ձևով առողջության միջին վնաս՝ առողջության տևական քայքայումով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 98):

6. Համաձայն 2012 թվականի մարտի 7-ի Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի կողմից տրված մեկուսացման գրության՝ Վ.Մանասյանը զինվորական կանոնադրքերի խախտման համար մեկուսարան ընդունվել է 2012 թվականի մարտի 7-ին, ազատվել է 2012 թվականի մարտի 17-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 190):

7. 2012 թվականի մարտի 8-ի թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի քաղվածքում արձանագրվել է հետևյալը. «Համարել կալանված Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի կալանատանը 10 (տասը) օր ժամկետով ներքոհիշյալ ժամկետային զինծառայողները և հանել կաթսայական բավարարումից.

1. 12հվ 3հղ 2հջ հրամանատար կրտսեր սերժանտ Վարդգես Ալեքսեյի Մանասյանին (1/2010 գորակոչ, Ստեփանակերտի ՋԿ) (...)» (տե՛ս քրեական գործ,

հատոր 3, թերթ 191):

8. Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «(...) Դատաքննության ընթացքում հիմնավորված ապացույցներով պարզվեց, որ մեղադրանքում նշված հանցագործությունները կատարելու համար թիվ 36534 գորամասի հրամանատարի 08.03.2012թ. թիվ 68 հրամանի համաձայն՝ Վ.Մանասյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանք 10 օր ժամկետով, որը համաձայն Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի պետի 07.03.2012թ. մեկուսացման գրության՝ փաստացի կրել է 07.03.2012թ.-ից 17.03.2012թ. ժամանակահատվածում և ազատվել 17.03.2012թ.-ին (...):

(...) հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալ Վարդգես Ալեքսեյի Մանասյանը ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար, համաձայն թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի, ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանք 10 (տասը) օր ժամկետով, որը համաձայն Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի կողմից տրված մեկուսացման գրության՝ կրել է 07.03.2012թ.-ից մինչև 17.03.2012թ.-ը, այսինքն՝ Վ.Մանասյանը կատարած հանցանքի համար, ելնելով ՀՀ վճռաբեկ դատարանի (...) որոշման պահանջներից, փաստացի ենթարկվել է քրեական պատասխանատվության և չի կարող կրկին անգամ նույն արարքի համար դատվել, ուստի դատարանը գտնում է, որ վերջինիս նկատմամբ քրեական գործի վարույթը պետք է կարճել, այդ մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնել՝ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 20-25):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է. «(...) Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանը եկավ հետևության, որ կայացված որոշումը օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի այն բեկանելու և մեղադրական դատական ակտ կայացնելու հիմքեր չկան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 84):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձի պնդմամբ Վ.Մանասյանի կրկնակի դատապարտման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն անհիմն են:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով գորամաս կատարված հարցմամբ պարզվել է, որ Վ.Մանասյանը գորամասի հրամանատարության կողմից մեկուսացվել է՝ առանց ծառայողական քննություն անցկացնելու և նրա կատարածը պարզելու: Թիվ 68 հրամանում գրված է, որ Վ.Մանասյանը մեկուսացվել է մարտական հերթապահությունում անվտանգության կանոնների խախտման համար: Բացի այդ, Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնից ստացված մեկուսացման գրությունների վրա «Խախտման պատճառը» տողի առջև նշված է «ԶԿԽ», այսինքն՝ զինվորական կանոնագրքի խախտում:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ 2012 թվականի մարտի 8-ի թիվ 68 հրամանն

արձակվել է այն ժամանակ, երբ Վ.Մանասյանն արդեն իսկ 2012 թվականի մարտի 7-ի գրությամբ զինվորական կանոնադրքի խախտման պատճառով մեկուսացվել է Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի կարգապահական մեկուսարանում, այլ ոչ թե զենքի հետ վարվելու կանոնները խախտելու և դրա հետևանքով տուժողի առողջությանը միջին վնաս պատճառելու համար:

11. Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վ.Մանասյանի՝ Ռ-Ռ բաժնում 10 օր տևողությամբ մեկուսացնելը որևէ կապ չունի ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով նրան մեղսագրվող արարքի հետ, և Վ.Մանասյանն առանց բավարար հիմքերի ազատվել է քրեական պատասխանատվությունից: Ուստի, խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, կայացնել նոր դատական ակտ. այն է՝ Վ.Մանասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով: Նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելու և Վ.Մանասյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարանները պատշաճ գնահատե՞լ են արդյոք գործում առկա փաստական տվյալները:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար (...)»:

Մեջբերված իրավադրույթները Վճարելի դատարանը վերլուծության է

ենթարկել *Դ.Բարայանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում, «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:

(...) «նույն արարքի համար» ձևակերպումը ճիշտ կիրառելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած «քրեական մեղադրանք» եզրույթի մեկնաբանմանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով իրավախախտումը որպես «քրեական» որակելու չափորոշիչներն են՝ ա) իրավախախտման դասակարգումն ըստ ազգային օրենսդրության, բ) իրավախախտման բնույթը, գ) նշանակված կամ հնարավոր պատժի խստության աստիճանը: Ընդ որում, իրավախախտումը «քրեական» որակելու համար բավարար է այդ չափորոշիչներից միայն մեկի, այլ ոչ թե բոլորի պարտադիր առկայությունը» (տե՛ս Դավիթ Բորիսի Բարայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԳ-1/0043/01/11 որոշման 22-24-րդ կետերը):

14. Վ.Մանասյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ N 247 որոշման 51-րդ կետի համաձայն՝ զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման համար զինծառայողն անձամբ կրում է կարգապահական պատասխանատվություն:

Չինծառայողի կողմից զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման դեպքում հրամանատարը (պետը) կարող է (...) կարգապահական տույժ տալ: Ընդ որում, նա պետք է հաշվի առնի, որ տույժը (...) պետք է համապատասխանի զանցանքի ծանրությանը և մեղքի աստիճանին, որը քննությամբ որոշում է հրամանատարը (պետը):

Նույն որոշման 54-րդ կետի համաձայն՝ «Չինվորներին կարող են տրվել հետևյալ տույժերը՝

(...)

ե) ժամկետային ծառայության զինվորների մեկուսացում և պահում կարգապահական մեկուսարանում՝ մինչև տասն օր, իսկ պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորներին՝ մինչև յոթ օր»:

Նույն որոշման 91-րդ կետի համաձայն՝ «Հրամանատարի (պետի) կողմից ենթակային կարգապահական տույժ տալու որոշմանը պետք է նախորդի քննությունը, որը կատարվում է մեղավորներին հայտնաբերելու և զանցանքի կատարմանը

նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու նպատակով:

Քննության ընթացքում հրամանատարը (պետը) պարզում է՝ կատարվել է արդյոք զանցանք՝ երբ, որտեղ, ինչ պարագաներում, ինչ զանցանք է, մեղքի առկայությունը կոնկրետ անձանց գործողություններում կամ անգործության մեջ, յուրաքանչյուրի մեղքի աստիճանը (...):»

Նույն որոշման 92-րդ կետի համաձայն՝ «մեղքի աստիճանը և կարգապահական տույժի միջոցը որոշելիս հաշվի են առնվում զանցանքի բնույթը, դրա կատարման հանգամանքները, հետևանքները, մեղավորի նախկին վարքը, ինչպես նաև նրա զինվորական ծառայության տևողությունն ու ծառայության անցկացման կարգի և իմացության աստիճանը (...):»

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնադիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի թիվ 14 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ «Կայազորային կարգապահական մեկուսարանը նախատեսված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության հիման վրա կարգապահական տույժի կարգով մեկուսացված, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա ձերբակալված կամ կալանավորված, դատարանի կողմից դատապարտված զինծառայողներին պահելու համար»:

Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ Վ.Մանասյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող՝ զինված ուժերի կարգապահական կանոնադրության համաձայն՝ զինծառայողների նկատմամբ որպես կարգապահական տույժի տեսակ կիրառվում էր մինչև 7 կամ 10 օր ժամկետով կարգապահական մեկուսարանում պահելը: Ընդ որում, նույն մեկուսարանում են պահվել նաև քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված կամ կալանավորված, ինչպես նաև դատապարտված զինծառայողները: Կարգապահական մեկուսարանում պահվող զինծառայողների համար սահմանված են եղել նույնպիսի իրավունքներ և պարտականություններ, ինչպիսիք ունեցել են ձերբակալվածները, կալանավորվածները կամ դատապարտվածները: Այլ խոսքով՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված անձանց ազատությունը սահմանափակվել է, և նրանք պահվել են մեկուսացման նույն պայմաններում, ինչ որ ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձինք:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Մանասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): 2012 թվականի մարտի 7-ին Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի կողմից տրված մեկուսացման գրության համաձայն՝ Վ.Մանասյանը զինվորական կանոնադրքերի խախտման համար մեկուսարան ընդունվել է 2012 թվականի մարտի 7-ին, ազատվել է 2012 թվականի մարտի 17-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի քաղվածքում արձանագրվել է, որ կրտսեր սերժանտ Վարդգես Ալեքսեյի Մանասյանը կալանավորված է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Վ.Մանասյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանքի ձևով, իսկ

կալանավորման հիմքի մասին նշումը ընդհանրական բնույթի է՝ «ՉԿԽ», այսինքն՝ զինվորական կանոնագրքերի խախտում: Ինչ վերաբերում է թիվ 36534 գործամասի հրամանատարի 2012 թվականի մարտի 8-ի թիվ 68 հրամանին, ապա դրանում հստակ նշված չէ, թե Վ.Մանասյանն ինչի համար է ենթարկվել կարգապահական տույժի՝ կալանքի 10 (տասը) օր ժամկետով՝ սույն գործով վերջինիս վերագրվող արարքի^օ (ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մաս), թե այլ իրավախախտում թույլ տալու համար: Գործի նյութերից չի երևում նաև, թե հրամանատարի կողմից ենթակային կարգապահական տույժ տալու որոշմանը նախորդե՞լ է արդյոք քննություն, որի ընթացքում հրամանատարը պետք է պարզեր, թե երբ, որտեղ, ինչ պարագաներում, ինչ զանցանք է կատարվել և այլն:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, առանց վերոնշյալ հանգամանքները պարզելու, արձանագրել է, որ դատաքննության ընթացքում հիմնավորված ապացույցներով պարզվեց, որ մեղադրանքում նշված հանցագործությունները կատարելու համար թիվ 36534 գործամասի հրամանատարի թիվ 68 հրամանի համաձայն Վ.Մանասյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանք 10 օր ժամկետով, որը համաձայն Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի պետի մեկուսացման գրության՝ փաստացի կրել է: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Վ.Մանասյանը կատարած հանցանքի համար փաստացի ենթարկվել է քրեական պատասխանատվության և չի կարող կրկին անգամ նույն արարքի համար դատվել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

16. Սույն որոշման 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում և համապատասխանաբար նաև *Դ.Բարսյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, ինչի արդյունքում սխալ են մեկնաբանել ինչպես Վճռաբեկ դատարանի կողմից *Դ.Բարսյանի* գործով կայացված որոշումը, այնպես էլ քրեական օրենքը և միջազգային պայմանագիրը: Մասնավորապես, դատարանները նախքան Վ.Մանասյանին կրկնակի դատապարտման ենթարկելու վերաբերյալ եզրահանգում անելը չեն պարզել, թե նա ինչի համար է ենթարկվել կարգապահական տույժի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելու և Վ.Մանասյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարանները պատշաճ չեն ստուգել գործում առկա փաստական տվյալները: Այս առումով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի («Ապացույցների ստուգումը») խախտում, քանի որ վերլուծության, այլ ապացույցների հետ համադրելու և նոր ապացույցներ հավաքելու միջոցով բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման չեն ենթարկել Վ.Մանասյանի կարգապահական պատասխանատվության հիմքի վերաբերյալ

ապացույցները:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոնշյալ դատավարական իրավունքի խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե Վ.Մանասյանն ինչի համար է ենթարկվել կարգապահական տույժի, որից հետո միայն եզրակացություն անել նրան կրկնակի դատապարտման ենթարկելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վարդգես Ալեքսեյի Մանասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և այդ մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 7-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԳ-3/0046/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Անդրեյ Վլադիմիրի Համզոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Համզոյանի և նրա պաշտպան Ա.Ապրեսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91258112 քրեական գործը:

2013 թվականի մարտի 15-ին Անդրեյ Վլադիմիրի Համզոյանը ձերբակալվել է, իսկ 2013 թվականի մարտի 18-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2013 թվականի մարտի 18-ին Ա.Համզոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի մարտի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի

դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2013 թվականի մայիսի 31-ի դատավճռով Անդրեյ Վլադիմիրի Համզոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկմանը գումարել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Անդրեյ Համզոյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումից 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է սահմանել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժն հաշվակցվել է Ա.Համզոյանի ձերբակալված լինելու ժամանակահատվածը՝ 3 (երեք) օրը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել թիվ 2-րդ կայագործի զինվորական դատախազության դատախազ Ս.Խաչատրյանը:

Վերաքննիչ դատարանը 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի դատավճիռը: Ա.Համզոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժն գումարվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Ա.Համզոյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումից 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժն հաշվակցվել է Ա.Համզոյանի՝ ձերբակալման 3 (երեք) օրը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Ա.Համզոյանը և նրա պաշտպան Ա.Ապրեսյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Համզոյանի և պաշտպան Ա.Ապրեսյանի վճռաբեկ բողոքն

ընդունվել է վարույթ:

5. Թիվ 2-րդ կայագրի զինվորական դատախազության դատախազ Ս.Խաչատրյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան, որտեղ փաստարկել է, որ վճռաբեկ բողոքում շարադրված հանգամանքները Վերաքննիչ դատարանը հաշվի է առել Ա.Համգոյանի նկատմամբ պատժատեսակ և պատժաչափ սահմանելիս, իսկ վճռաբեկ բողոքում առկա հետևությունները հիմնավորելու համար բողոքաբերները որևէ լրացուցիչ փաստարկ չեն ներկայացրել: Ուստի, դատախազը խնդրել է մերժել ամբաստանյալ Ա.Համգոյանի և նրա պաշտպան Ա.Ապրեսյանի վճռաբեկ բողոքը և անփոփոխ թողնել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշումը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Ա.Համգոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ «հանդիսանալով ՊԲ 38401 գորամասի 5-րդ գումարտակի հրամանատարի տեղակալ-շտաբի պետ, կոչումով մայոր, պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, իր գերակայությունն ամրապնդելու, խստապահանջ սպայի տպավորություն ստեղծելու, սեփական անձի վարկանիշը բարձրացնելու նպատակով, չկատարելով ՁՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 134-րդ և ՁՈՒ կարգապահական կանոնագրքի 3-րդ, 4-րդ հոդվածների պահանջները, կատարել է իշխանազանցություն, այն է՝ 2012 թվականի ամռանը՝ ժամը 11:30-ի սահմաններում, ծառայության անհրաժեշտությունից չբխող տրված հանձնարարությունը չկատարելու պատճառով իր աշխատասենյակում ապտակել է նույն գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գարեգին Դուրիկի Ջիլֆուղարյանի ձախ ականջի շրջանին՝ պատճառելով ձախ ականջի սուր կատարյալ օտիտի ձևով առողջության միջին վնաս՝ առողջության տևական քայքայումով մարմնական վնասվածք, դրանով իսկ էական վնաս է պատճառել զինվորական ղեկավարման բնականոն գործընթացին, զինվորական պետերի, պաշտոնատար անձանց կողմից ծառայողական գործառույթների իրականացման հաստատված կարգին, ոտնահարել Գ.Ջիլֆուղարյանի իրավունքներն ու ազատությունները, հեղինակագրկել պետական զինվորական իշխանության մարմինները» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 38-39):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Ամբաստանյալ Անդրեյ Համգոյանը բնութագրվում է դրականորեն, բարձրագույն զինվորական կրթությամբ հեռանկարային կադրային սպա է, եղել է ուսման գերազանցիկ, ՀՀ զինված ուժերում ծառայության է անցել 2005 թվականից, արժանացել է մի շարք խրախուսանքների՝ շնորհակալագրերի, պատվոգրերի, պարգևատրվել է դրամական պարգևներով, թանկարժեք նվերներով, իսկ ՀՀ ՊՆ-ի 13.01.2011 և 21.12.2011 թվականի հրամաններով՝ «Գարեգին Նժդեհ» և «Ջինված ուժեր 20 ամյակ» մեդալներով, նոր է կազմել ընտանիք, որի միակ կերակրողն է:

Տուժող Գարեգին Ջիլֆուղարյանը հայտնել է, որ ամբաստանյալից պարտք ու

պահանջ չունի:

Ամբաստանյալ Անդրեյ Համզոյանը սույն քրեական գործով հանցագործությունը կատարել է մինչև Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 27-ին դատավճիռ կայացնելը:

Տվյալ դեպքում պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը, որը սահմանում է հանցանքների համակցության մեթոդի մշակման կանոնները: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը: 3-րդ մասի համաձայն՝ եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն զումարելու միջոցով:

(...)

Դատարանը, վերլուծելով և գնահատելով գործի վերը նշված տվյալները, հաշվի առնելով Անդրեյ Համզոյանի կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, գտնում է, որ վերը թվարկված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու, և վերջինիս նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 40-43):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ամբաստանյալ Ա.Համզոյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել նրա կողմից կատարված հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, դրա առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելուց հետո՝ մինչև այդ հանցանքի համար դատավճիռ կայացնելը, կատարել է նույն հոդվածով նախատեսված հանցանք, այսինքն՝ համապատասխան հետևություններ չի արել և շարունակել է հակաօրինական վարքագիծ դրսևորել: Դատավճռում նշված՝ նրա պատիժը ու պատասխանատվությունը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանքները Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել նրա նկատմամբ պատիժ սահմանելիս և նշանակել է օրենքով նախատեսված նվազագույն

պատիժ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանց մատնանշումը չի կարող հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

Վերը թվարկված փաստարկները և գործի հանգամանքները վկայում են ինչպես կատարված հանցագործության, այնպես էլ ամբաստանյալի անձնավորության՝ հանրության համար բարձր վտանգավորության աստիճանի մասին:

Անդրեյ Համգոյանը դեռևս 2012թ. փետրվար ամսին համանման (...) հանցանք կատարելու համար Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել էր ազատազրկման 2 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ:

Սակայն մինչ այդ դատավճիռը կայացնելը և պայմանականորեն նշանակված պատիժը կրելը, նա, փաստորեն, երկրորդ անգամ՝ 2012թ. օգոստոս ամսին, կատարել է նույնանման երկրորդ հանցագործությունը, որի համար Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի դատավճռով հանցանքների համակցությամբ կրկին դատապարտվել է ազատազրկման, կրկին կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, և վճռվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, ինչը հակասում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

Ուստի և նախորդ՝ 27.09.2012թ. դատավճռով, և սույն գործով՝ 31.05.2013թ. դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմքեր չեն եղել, և դրանցով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը ենթակա է վերացման՝ ազատազրկման ձևով ռեալ պատիժ նշանակելու պատճառով:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը համաչափ է, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ այն պայմանականորեն չկիրառելը չի նպաստի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների իրականացմանը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 120):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Ըստ բողոքի հեղինակների՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջներից և ենթակա է բեկանման:

Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքի հեղինակները նշել են, որ Վերաքննիչ դատարանն իր ակտում չի պատճառաբանել, թե ինչից ելնելով է Ա.Համգոյանի նկատմամբ նշանակել ազատազրկման ձևով ռեալ պատիժ, և ինչու ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելի չէ այն դեպքում,

երբ հաստատված է, որ առկա չեն Ա.Համգոյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ, և, ընդհակառակը, առկա են նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող բազմաթիվ հանգամանքներ: Մասնավորապես այն, որ Ա.Համգոյանի կողմից երկրորդ հանցանքը կատարելուց հետո անցել է շուրջ մեկ տարի, և այդ ընթացքում վերջինս, գտնվելով ազատության մեջ, դրսևորել է պատշաճ վարքագիծ, զինվորական ծառայությունը շարունակել է նույն պաշտոնում և նրան շնորհվել է մայրոհի զինվորական կոչում:

10. Վերագրյալի հիման վրա բողոքաբերները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանի իրավական վերլուծությունները չեն բխում Վճարելի դատարանի նախադեպային իրավունքից, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներից, ուստի խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշումը և ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի դատավճիռը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-7-րդ մասերով նախատեսված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հիմքերի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի կողմից քննության առնվող իրավական հարցը հետևյալն է. իրավաստ՞ է ին արդյոք ատորադաս դատարանները Ա.Համգոյանի նկատմամբ պատիժ նշանակել հանցանքների համակցության կանոններով այն դեպքում, երբ նրա նկատմամբ նախորդ՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով:

2. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, գումարելիս վերջնական պատիժը չի կարող գերազանցել 5 տարին:

3. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության

կամ միջին ծանրության և ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատագրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասը տարին:

4. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատագրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել քսանհինգ տարին: Եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատագրկում, ապա վերջնական հիմնական պատիժը որոշվում է կլանելու միջոցով:

(...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելը բաղկացած է միմյանց հաջորդող հետևյալ երկու փուլերից՝

1) համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցագործության համար հիմնական և լրացուցիչ պատիժ նշանակելը: Այս փուլում դատարանը, ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով և հատուկ կանոններով, հանցանքների համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցագործության համար նշանակում է ռեալ պատիժ: Հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու այս փուլում դատարանը չի քննարկում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը:

2) համակցության մեջ մտնող հանցագործությունների համար վերջնական պատիժ սահմանելը, որն իրականացվում է յուրաքանչյուր հանցագործության համար առանձին նշանակված ռեալ պատիժները մասնակիորեն կամ լրիվ գումարելու, իսկ այն դեպքում, երբ համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար նշանակվել է ցմահ ազատագրկում, ապա կլանելու միջոցով: Նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական ռեալ պատիժ նշանակելուց հետո դատարանը քննարկում է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը:

ՀՀ քրեական օրենսգրքը չի սահմանում, թե որ դեպքերում դատարանը պետք է կիրառի պատիժների մասնակիորեն, որ դեպքերում՝ լրիվ գումարման կանոնները: Այս հարցը գտնվում է դատարանի հայեցողության շրջանակներում և յուրաքանչյուր դեպքում լրիվ կամ մասնակիորեն գումարման կանոնների միջև ընտրություն կատարելիս դատարանը հաշվի է առնում և իր դատական ակտում շարադրում, թե հանցագործությունների համակցության որ տեսակն է առկա, մեղքի ինչ ձևով են բնութագրվում հանցագործությունների համակցության մեջ մտնող արարքները, հանրային վտանգավորության ինչ աստիճան ու բնույթ ունեն դրանք և այլն:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ (...) պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ազատագրկման մեկ օրվան համապատասխանում է՝

1) կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը.

2) (...)

3) հանրային աշխատանքների երեք ժամը:

2. Տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով պատիժները կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, ազատագրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ այն սահմանում է հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս տարբեր պատժատեսակների գումարման կարգը: Դրանում, մասնավորապես, սպառնիչ թվարկված են այն պատժատեսակները, որոնք կարող են լրիվ կամ մասնակիորեն գումարվել, ինչպես նաև սահմանված են այդ պատժատեսակների չափերի գումարման կանոնները: Այսպես՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելիս գումարման կանոնը կիրառելի է ազատագրկման, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու և հանրային աշխատանքների նկատմամբ: Ընդ որում, գումարման ենթակա են վերոնշյալ ռեալ պատժատեսակների հետևյալ ժամանակային միավորները՝ ազատագրկման մեկ օրը, կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը, հանրային աշխատանքների երեք ժամը:

Ինչ վերաբերում է տուգանքին, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելուն, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելուն, ինչպես նաև գույքի բռնագրավմանը, սպա դրանք կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, ազատագրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին:

15. Ամփոփելով սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս դատարանն իրավասու է լրիվ կամ մասնակիորեն գումարել համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցանքի համար ազատագրկման, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու, հանրային աշխատանքների, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով նշանակված պատիժները: Ընդ որում, ազատագրկման, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու, հանրային աշխատանքների ձևով նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարվում են դրանց գումարման ժամանակային միավորներին համապատասխան, իսկ տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ի կատար են ածվում առանձին:

Վճարելի դատարանի վերոշարադրյալ մոտեցումը բխում է ինչպես ՀՀ քրեական

օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու, 68-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները գումարելու կանոններից, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ քրեական օրենքն անալոգիայով կիրառելու արգելից:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ կայացնելուց հետո պարզվում է, որ նա մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարել է նախքան դատավճռի կայացումը, ապա նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակվում է հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոններով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Է. Ներսիսյանի* գործով որոշման մեջ (տե՛ս *mutatis mutandis* Էդուարդ Աշոտի Ներսիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԷԴ/0124/01/09 որոշման 17-18-րդ կետերը): Հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս կիրառելի գումարման կանոնները հստակ սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ կայացնելուց հետո պարզվում է, որ նա մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարվել է նախքան առաջին դատավճռի կայացումը, անձի նկատմամբ վերջնական պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով և լրիվ կամ մասնակիորեն գումարել համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցանքի համար նշանակված ռեալ պատիժները:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը»:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ նշանակում սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում նաև նոր անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե դատարանը

վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը»:

Մեջբերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը կարող է վերացվել այն դեպքում, երբ՝

ա) դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց,

բ) դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք է կատարում,

գ) դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք է կատարում:

Պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու վերոնշյալ հիմքերը սպառնիչ են, ինչը նշանակում է, որ անձի պայմանական դատապարտումը նշված հիմքերից բացի որևէ այլ հիմքով վերացվել չի կարող:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համեմատական վերլուծությունից երևում է նաև, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու՝ սույն որոշման նախորդ կետի (ա) և (բ) ենթակետերում նշված հիմքերը գտնվում են դատարանի հայեցողության շրջանակներում: Յուրաքանչյուր դեպքում դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ կամ փորձաշրջանի ընթացքում կատարված անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանքի համար պատիժ նշանակելիս որոշում է կայացնում պայմանական դատապարտումը վերացնելու կամ անփոփոխ թողնելու մասին: Մինչդեռ սույն որոշման նախորդ կետի (գ) ենթակետում նշված հիմքի առկայության դեպքում դատարանն անվերապահորեն պարտավոր է վերացնել պայմանական դատապարտությունը:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 13-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնը կիրառելի է այն դեպքում, երբ առաջին գործով կայացված դատավճռով անձի նկատմամբ նշանակվել է ռեալ պատիժ: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելի չէ այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ է կայացվում և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշված դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում, սակայն հետագայում պարզվում է, որ անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարվել է նախքան առաջին գործով դատավճռի կայացումը: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ Վճարելի դատարանի եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակ և ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում սպառնիչ թվարկված այն պատժատեսակների շարքում, որոնց նկատմամբ կիրառելի են լրիվ կամ մասնակիորեն գումարման կանոնները: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չի նախատեսում պայմանական դատապարտումը

վերացնելու հնարավորություն այն դեպքում, երբ դատավճիռ կայացնելուց հետո պարզվում է, որ այդ անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարել է նախքան առաջին դատավճռի կայացումը:

Հետևաբար, այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ է կայացվում և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում, սակայն հետագայում պարզվում է, որ անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարել է նախքան առաջին գործով դատավճռի կայացումը, երկրորդ դատավճռով դատարանը պետք է ինքնուրույն պատիժ նշանակի՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կիրառման, ինչը ենթադրում է, որ առաջին և երկրորդ դատավճիռները պետք է կատարվեն առանձին:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի դատավճռով Ա.Համգոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով: Այնուհետև, գտնելով, որ Ա.Համգոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը և անտեսելով այն, որ նախորդ դատավճռով Ա.Համգոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել՝ Առաջին ատյանի դատարանը նշանակված պատժին գումարել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Ա.Համգոյանի նկատմամբ նշանակված 2 տարի ժամկետով ազատազրկումից 1 տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է սահմանել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով, որը պայմանականորեն չի կիրառել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Ա.Համգոյանը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ: Սակայն, մինչ այդ դատավճիռը կայացնելը նա երկրորդ անգամ՝ 2012 թվականի օգոստոս ամսին, կատարել է նույնանման հանցագործություն, որի համար Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի դատավճռով հանցանքների համակցությամբ կրկին պայմանականորեն դատապարտվել է ազատազրկման: Այնուհետև Վերաքննիչ դատարանը գտել է, որ ինչպես սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի դատավճռով, այնպես էլ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմքեր չեն եղել, և դրանցով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը ենթակա է վերացման՝ ազատազրկման ձևով ռեալ պատիժ նշանակելու պատճառով: Վերաքննիչ դատարանը Ա.Համգոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցանքների համակցությամբ նշանակված

պատժին գումարվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Ա.Համգոյանի նկատմամբ նշանակված 2 տարի ժամկետով ազատազրկումից 1 տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

21. Սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-19-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Համգոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը և արդյունքում նրա նկատմամբ նշանակված պատժին մասնակիորեն գումարել են Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով նշանակված և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառված՝ 2 տարի ժամկետով ազատազրկումից 1 տարի ժամկետով ազատազրկումը: Մասնակիորեն գումարման կանոնը կիրառելիս ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակ և ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ թվարկված այն պատժատեսակների շարքում, որոնց նկատմամբ կիրառելի են լրիվ կամ մասնակիորեն գումարման կանոնները (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը):

Բացի այդ, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Ա.Համգոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն փաստը, որ նշված դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ և վերաքննության առարկա չի հանդիսանում: Արդյունքում խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, քանի որ որպես Ա.Համգոյանի պայմանական դատապարտության վերացման հիմք նշել է այնպիսի հանգամանքներ, որոնք ներառված չեն պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սպառիչ թվարկված հիմքերի շարքում:

22. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն իրավասու չէին Ա.Համգոյանի նկատմամբ պատիժ նշանակել հանցանքների համակցության կանոններով այն դեպքում, երբ նրա նկատմամբ նախորդ՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել: Այս առումով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը, 70-րդ հոդվածի 6-7-րդ մասերը, ինչը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի

դատավճռով Ա.Համգոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, Վերաքննիչ դատարանը գնահատական է տվել օրինական ուժի մեջ մտած և չբողոքարկված դատավճռին, ինչով խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու պահանջը, ինչը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեադատավարական օրենքի էական խախտում:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը քրեական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Ուստի, հիմք ընդունելով վերը շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ և 70-րդ հոդվածի 6-7-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի հիման վրա հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

24. Ինչ վերաբերում է սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի դատավճռով Ա.Համգոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորվածությանը, որը վիճարկված է սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Անդրեյ Վլադիմիրի Համգոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

51.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԳ/0032/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով Գարեգին Սուրենի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ մեղադրող Վ.Մխիթարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18139512 քրեական գործը:

2013 թվականի մարտի 29-ին Գարեգին Սուրենի Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի ապրիլի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2013 թվականի մայիսի 6-ի դատավճռով Գ.Մուրադյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Տուժող Ա.Չաքարյանին իրավունք է վերապահվել քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան:

3. Ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, պատժի մասով փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 6-ի դատավճիռը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել և սահմանել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Վ.Մխիթարյանը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ մեղադրող Վ.Մխիթարյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Ա.Դավթյանը և տուժող Ա.Չաքարյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխաններ՝ խնդրելով մերժել մեղադրող Վ.Մխիթարյանի վճռաբեկ բողոքը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Գ.Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «2012 թվականի հոկտեմբերի 4-ին՝ ժամը 14-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Անի թաղամասում՝ իրենց բակի ավտոտնակի մոտ, իր և ՀՀ ՊՊԳ-Վ Գյումրիի ՊՊԲ բաժնի ոստիկան, հարևան Աշոտ Չաքարյանի միջև անձնական հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ, նախ գլխով հարվածել է վերջինիս դեմքին և ճակատային մասին, ապա զցել է գետնին և ոտքերով հարվածել է գլխին, մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով գլխուղեղի խրոնիկ սուբդուրալ հեմատոմիա, քթի ոսկրերի բեկորային կոտրվածք՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 58):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, Գ.Մուրադյանի քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ համարելով՝ կատարածի համար անկեղծորեն զղջալը, նախկինում արատավորված չլինելը, բնակության վայրից դրական բնութագրվելը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 59):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) առաջին ատյանի դատարանը հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, արարքի կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը գնահատելու տեսանկյունից չի անդրադարձել ամբաստանյալ Գ.Մուրադյանի արարքի վտանգավորության աստիճանին:

(...) Վերաքննիչ դատարանում, դատաքննության ընթացքում վերաքննիչ բողոքի կապակցությամբ տուժող Ա.Ջաքարյանի արտահայտած դիրքորոշումից պարզ է դառնում, որ ամբաստանյալը դեպքից հետո՝ տուժողի բուժման ընթացքում և դրանից հետո, ցույց է տվել նյութական օգնություն, ներկայումս իրենք գտնվում են նորմալ, բարիդրացիական հարաբերությունների մեջ, տուժողն ամբաստանյալից որևէ պահանջ չունի:

Բացի այդ, վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ թե նախաքննության ընթացքում, և թե վերաքննիչ դատարանում տուժող Ա.Ջաքարյանը բազմիցս պնդել է, որ ներել և հաշտվել է ամբաստանյալ Գ.Մուրադյանի հետ, և խնդրել է նրա նկատմամբ մեղմ վարվել, իսկ վերաքննիչ դատարանում միանալով պաշտպանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքին՝ խնդրել է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

(...)

Վերաքննիչ դատարանը գնահատման ենթարկելով սույն որոշման մեջ նշված հանգամանքերը՝ իրենց համակցությամբ, հաշվի առնելով գործի հանգամանքները (...) տուժողի դիրքորոշումը՝ բերված վերաքննիչ բողոքի կապակցությամբ, հանգում է այն հետևության, որ սույն գործով օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալները վկայում են ամբաստանյալ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 41):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածները, որի արդյունքում անհիմն որոշում է կայացրել Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրել է այնպիսի հանգամանքներ, որոնք արդեն իսկ հաշվի են առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել տուժողի դիրքորոշումը, մինչդեռ հանրային մեղադրանքի գործերով տուժողի՝ պատժատեսակի և պատժաչափի վերաբերյալ դիրքորոշումը չի կարող դիտվել որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 6-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման ենթարկե՞լ է արդյոք կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Դ.Հովհաննիսյանի*, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում (տե՛ս, օրինակ, թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇԳ/0029/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ԼԳ-2/0019/01/09 որոշումները և այլն):

Դ.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

(...) Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված՝ ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատիժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս, Գ-ավիթ Ռ-ոբերտի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0078/01/09 որոշման 11-12-րդ կետերը):

12. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և *Դ.Հովհաննիսյանի* գործով

որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումից երևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Գ.Մադաթյանի* գործով որոշման մեջ, որի համաձայն՝ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս, Գարուշ Նորիկի Մադաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Վ.Բեգյանի* գործով որոշման մեջ արձանագրել է, որ «(...) պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը: Այլ խոսքով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի՝

- ա) կատարված հանցագործության նպատակն ու շարժառիթը,
- բ) քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը,
- գ) կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը,
- դ) հանցագործության կատարման եղանակը,
- ե) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը,
- զ) հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը (...)» (տե՛ս, Վանյա Ռաֆիկի Բեգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13 որոշման 14-րդ կետը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ Գ.Մուրադյանը կատարածի համար անկեղծորեն զոջացել է, նախկինում արատավորված չի եղել, բնակության վայրից բնութագրվում է դրականորեն, նրա նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն

պատիժ՝ 3 տարի ժամկետով ազատազրկում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիան վրա պայմանականորեն չի կիրառել՝ պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանը հանցավորի դրսևորած վարքագիծը գնահատելու տեսանկյունից չի անդրադարձել ամբաստանյալ Գ.Մուրադյանի արարքի վտանգավորության աստիճանին: Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ ամբաստանյալը դեպքից հետո տուժողին ցույց է տվել նյութական օգնություն, տուժողն ամբաստանյալից որևէ պահանջ չունի, խնդրել է նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետը):

14. Սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով հանցանքի ծանրությունը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ և այն կրելու նպատակահարմարության հարցում հանգել է ճիշտ եզրահանգման:

Մինչդեռ, Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Գ.Մուրադյանն անձնական հարցեր պարզաբանելու պատճառով վիճաբանության մեջ է մտել տուժողի հետ և առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ, նախ գլխով հարվածել է վերջինիս դեմքին և ճակատային մասին, ապա գցել է գետնին և ոտքերով հարվածել է գլխին, մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով գլխուղեղի խրոնիկ սուբդուրալ հեմատոմիա, քթի ոսկրերի բեկորային կոտրվածք՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից որպես Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք գնահատված այն հանգամանքներին, որ ամբաստանյալը դեպքից հետո տուժողին ցույց է տվել նյութական օգնություն, տուժողն ամբաստանյալից որևէ պահանջ չունի, խնդրել է նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճարելի դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները սույն գործով ողջամտորեն չեն նվազեցրել Գ.Մուրադյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և չեն կարող նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանալ:

15. Հիմք ընդունելով սույն որոշման 11-14-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման

չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Հետևաբար, հիմնավորված և պատճառաբանված չէ ամբաստանյալ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելով և ամբաստանյալ Գ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված նյութական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատիժը կրելու նպատակահարմարության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գարեգին Մուրեհի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 17-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 6-ի դատավճիռն:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

52.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԳ/0055/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ՄՈՎՍԵՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

ըռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 10-ի որոշման դեմ դատախազ Հ.Մովսեսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հուլիսի 27-ին «Անահիտ Սիմոնյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Անահիտ Սիմոնյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին հաղորդում է տվել այն մասին, որ 2011 թվականի մարտի 2-ից մինչև ապրիլի 21-ն ընկած ժամանակահատվածում իր ծանոթ Էմին Ավանեսյանը, հանդիսանալով վերոհիշյալ ՍՊԸ-ի ֆինանսական գործառույթներ իրականացնող անձ, յուրացրել է ՍՊԸ-ի 4.741.000 ՀՀ դրամ գումարը և ՍՊԸ-ի կարիքների համար վերցված 7.000.000 ՀՀ դրամ վարկը:

Հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերի հիման վրա 2012 թվականի հունվարի 26-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է թիվ 12102312 քրեական գործը:

2. 2013 թվականի հունվարի 23-ին Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Շղիազարյանը որոշում է կայացրել թիվ 12102312 քրեական գործի վարույթը կարճելու և Է.Ավանեսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

3. Վերոնշյալ որոշումը դիմող Ա.Սիմոնյանի ներկայացուցիչ Վ.Ավագյանի կողմից 2013 թվականի փետրվարի 1-ին բողոքարկվել է դատախազին:

2013 թվականի փետրվարի 25-ին Երևան քաղաքի դատախազ Հ.Բաղդալյանի որոշմամբ Ա.Սիմոնյանի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

4. Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Շղիազարյանի 2013 թվականի հունվարի 23-ի և Երևան քաղաքի դատախազ Հ.Բաղդալյանի 2013 թվականի փետրվարի 25-ի որոշումները դիմող Ա.Սիմոնյանի ներկայացուցիչ Վ.Ավագյանի կողմից բողոքարկվել են Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 10-ին որոշում է կայացրել ներկայացված բողոքը հիմնավոր ճանաչելու, «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» ՀՀ սուսիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Շղիազարյանի 2013 թվականի հունվարի 23-ի որոշումը և Երևան քաղաքի դատախազ Հ.Բաղդալյանի 2013 թվականի փետրվարի 25-ի որոշումը վերացնելու և վարույթն իրականացնող մարմնին տվյալ դատական ակտով արձանագրված քրեադատավարական գործողությունները կատարելուն պարտավորեցնելու մասին:

5. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Մովսեսյանն Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 10-ի որոշման դեմ բերել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ մերժվել է:

6. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշման դեմ դատախազ Հ.Մովսեսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ վարույթ է ընդունվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

Դիմող Ա.Սիմոնյանի ներկայացուցիչ Վ.Ավագյանը վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել՝ խնդրելով դատախազ Հ.Մովսեսյանի վճռաբեկ բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) ակնհայտ է, որ ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Ս.Շղիազարյանի կողմից «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 2013 թվականի հունվարի 23-ին կայացված որոշմամբ, Երևան քաղաքի դատախազ Հր.Վ.Բաղդալյանի կողմից նշված որոշումը վերացնելուց հրաժարվելու մասին որոշումներով թույլ է տրվել Անահիտ

Սիմոնյանի իրավունքների և ազատությունների խախտում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված, դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատություններ խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին» (...):

Այնուհետև Առաջին ատյանի դատարանը, նշելով, որ ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, որոշել է. «Անահիտ Սիմոնյանի բողոքը ճանաչել հիմնավորված՝ վերացնել «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Ա.Եղիազարյանի 2013 թվականի հունվարի 23-ի և Երևան քաղաքի դատախազ Հր.Վ.Բաղայանի կողմից 2013 թվականի փետրվարի 25-ի «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին» որոշումները, և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել կատարելու սույն որոշմամբ արձանագրված քրեադատավարական գործողությունները (...):» (տե՛ս նյութեր, թերթ 73-86):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Ա.Եղիազարյանի կողմից «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 2013թ. հունվարի 23-ին կայացված որոշմամբ, Երևան քաղաքի դատախազ Հր.Վ.Բաղայանի կողմից նշված որոշումը վերացնելուց հրաժարվելու մասին որոշումներով թույլ է տրվել Անահիտ Սիմոնյանի իրավունքների և ազատությունների խախտում»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է դատախազի բողոքը՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է, այն վերացնելու հիմքեր չկան (տե՛ս նյութեր, թերթ 118-125):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

9. Բողոքաբերի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, կայացվել են դատավարական նորմերի խախտումներով և հակասում են *Լ.Չարյանի* գործով Վճարելի դատարանի կողմից 2010 թվականի փետրվարի 12-ին կայացված որոշմանը:

10. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, 290-րդ հոդվածի 5-րդ մասը, ինչպես նաև *Լ.Չարյանի* գործով Վճարելի դատարանի որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումը, որից հետո եզրահանգել է, որ սույն գործով ստորադաս դատարաններն իրավասու չէին որոշում կայացնել նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանն այդպիսի որոշում կայացնելով, իսկ Վերաքննիչ դատարանն այն անփոփոխ թողնելով, դուրս

են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքը:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 10-ի, Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշումները և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. սույն գործով ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասո՞ւմ են արդյոք *L.Չարյանի* գործով Վճարելի դատարանի կողմից 2010 թվականի փետրվարի 12-ին կայացված որոշմանը:

13. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական աստիճանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճարելի դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճարելի դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարելի դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարելի դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճարելի դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

(...)

2) վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճարելի դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին,

(...)»:

Մեջբերված իրավադրույթները Վճարելի դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *L.Բարսյանի* գործով որոշման մեջ՝ իրավական

դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար նույնաման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ: Այս ընդհանուր կանոնից բացառություն են այն դեպքերը, երբ ստորադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ Վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ (տե՛ս Լուսինե Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0093/11/11 որոշման 11-րդ կետը):

14. *Ս.Այվազյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն» (տե՛ս Սեյրան Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 26-րդ կետը):

15. Սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները համադրելով և զարգացնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է ղեկավարվի *Ս.Այվազյանի* գործով որոշման 26-րդ կետում ամրագրված չափանիշներով, քանի որ դրանք վերաբերելի են ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումների կիրառելիության հարցի լուծման շրջանակներին:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի

համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (...)»:

Մեջբերված դատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Լ.Չարյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը), այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով:

(...) սույն գործով Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ նախաքննության մարմնի և տուժողի բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները վերացնելու մասին, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը (տե՛ս Լաուրա Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ և 15-րդ կետերը):

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Բ.Եղիազարյանի 2013 թվականի հունվարի 23-ի և Երևան քաղաքի դատախազ Հ.Բադալյանի 2013 թվականի փետրվարի 25-ի որոշումները վերացնելու մասին: Նշված որոշմամբ Առաջին ատյանի դատարանը վարույթն իրականացնող մամնին պարտավորեցրել է նաև կատարելու դատարանի որոշմամբ արձանագրված քրեադատավարական գործողությունները (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը մերժել է դատախազի բողոքը՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է, այն բեկանելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին

ատյանի դատարանը, դիմող Ա.Սիմոնյանի ներկայացուցչի բողոքը ճանաչելով հիմնավորված, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումը վերացրել է և դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում է տվել: Վերաքննիչ դատարանն էլ, իր հերթին, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է:

18. Սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 10-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի դատական ակտերը հակասում են *Լ.Չարյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Լ.Չարյանի* գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող դրույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը, իր բնույթով առավել ընդհանրական է և դրա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և *Լ.Չարյանի* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում որոշում կայացնելիս ստորադաս դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից և խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ վերացրել են նախաքննության մարմնի որոշումը: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Լ.Չարյանի* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել են *Լ.Չարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի որոշման հիմնավորումները, որոնք նրանց համար պարտադիր են եղել: Ստորադաս դատարանները ոչ միայն չեն կիրառել կիրառման ենթակա՝ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չեն հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Արդյունքում, ստորադաս դատարանները, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոշում են կայացրել քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ նախաքննության մարմնի և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները

վերացնելու մասին: Այլ խոսքով՝ դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից, ինչի հետևանքով խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 13-19 կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սույն գործով թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Անահիտ Ալբերտի Սիմոնյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 10-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 10-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

53.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԳ/0032/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք. Երևանում

ընթաց դատական նիստում, քննության առնելով Ատոմ Արմենակի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի հուլիսի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Մանուկյանի և նրա պաշտպան Լ.Օհանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում 2011 թվականի դեկտեմբերի 1-ին հարուցվել է թիվ 20129011 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

2012 թվականի մարտի 5-ին Ատոմ Արմենակի Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասով:

2012 թվականի սեպտեմբերի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 22-ի դատավճռով Ա.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի

3-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով՝ պատժի ժամկետին հաշվակցվել է Ա.Մանուկյանի՝ նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի 9 ամիս 8 օր ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու:

Վճռվել է նաև Ա.Մանուկյանից հօգուտ տուժողների իրավահաջորդներ Գ.Կասպարյանի և Լ.Ասլանյանի բռնագանձել 1.500.000-ական ՀՀ դրամ:

3. Ամբաստանյալի և պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, այն է՝ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 22-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանել է, և քաղաքացիական հայցերը թողել է առանց քննության: Գատավճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Մանուկյանը և նրա պաշտպան Լ.Օհանյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները

5. Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն, որ Ա.Մանուկյանը «(...) աշխատելով «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊ ընկերության Աբովյանի Գ-ՀՏՄԾ տարածքային տեղամասում որպես փականագործ, իրականացրել է սպառողների կյանքի անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայությունների մատուցում, մասնավորապես, չի կատարել 02.07.2007թ. «ՀայՌ-ուսագազարդ» ՓԲԸ-ի և «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի միջև կնքված «Հանձնարարություն Պայմանագրի» և 31.07.2009թ. տվյալ պայմանագրի լրացուցիչ հանձնարարագրի 3.3.4 կետի պարտավորությունները և 04.02.2008թ. մինչև 06.09.2011թ. ընկած ժամանակահատվածում կատարված ստուգայցերի ժամանակ պատշաճ կարգով չի ստուգել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում գտնվող «Երեք խնձոր» հյուրանոցա-ռեստորանային համալիրում գազասպառման համակարգերի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին, ինչպես նաև համապատասխան միջոցներ չի ձեռնարկել նշված համալիրի, մասնավորապես, թիվ 1 հյուրանոցային համարի լոգարանում խախտումների առկայության պայմաններում ապօրինի կերպով ինքնակամ տեղակայված ջրատաքացուցիչը հայտնաբերելու և դրա ծխաօդատար ուղիների կառուցվածքներում առկա էական և ակնհայտ խախտումները բացահայտելու և դրանք վերացնելու համար, ինչի արդյունքում էլ տեղի է ունեցել բնական գազի

այրման արգասիքների, մասնավորապես, ածխածնի մոնօքսիդի թույլատրելի սահմանաքանակը գերազանցող կոնցենտրացիայով կուտակում լոգարանում և դրան հարող ննջասենյակում, որն էլ 2011թ. նոյեմբերի 30-ին կարբօքսիհեմոգլոբինով սուր թունավորման հետևանքով անգոլությունը առաջացրել է «Երեք խնձոր» հյուրանոցա-ռեստորանային համալիրի թիվ 1 հյուրանոցային համարի հաճախորդներ Արտաշես Գրիգորի Կապարյանի և Լիաննա Սամվելի Ասլանյանի մահը» (տես քրեական գործ, հատոր 4, թերթ 234-250):

6. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ «(...) հիմնավոր չ[է] (...) բողոքի պատճառաբանությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Մանուկյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասի հանցակազմը, քանի որ անգործությունը չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ պարունակել, ուստի նա պետք է դատապարտվեր ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով, քանի որ Ա.Մանուկյանին վերագրվող անգործությունն իր մեջ պարունակում է տեխնիկական անվտանգության կանոնների խախտում:

Վերաքննիչ բողոքում նշված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի հանցակազմը պատասխանատվություն է նախատեսում տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պահպանման համար պատասխանատու անձի կողմից տեխնիկայի անվտանգության կանոնները խախտելու համար:

Այսինքն, այդ հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ միայն տվյալ կազմակերպություններում աշխատող անձը, ով պատասխանատու է տեխնիկայի անվտանգության պահպանման համար: Անձ, ով տվյալ կազմակերպության հետ ունեցած աշխատանքային պայմանագրով՝ աշխատանքի բերումով՝ այդ բնագավառը հսկելու պարտավորությամբ օժտված պաշտոնատար կամ այլ անձ է:

Իսկ սույն գործով ամբաստանյալ Ա.Մանուկյանը հանդիսացել է ոչ թե այն կազմակերպության աշխատակից, որտեղ տեղի է ունեցել դեպքը, այլ «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի աշխատակից, ով որպես այդպիսին հանդիսացել է հակահրդեհային կանոնների պահպանման բնագավառում ծառայություններ մատուցող և այլ կազմակերպության՝ նաև «Երեք խնձոր» ռեստորանա-հյուրանոցային համալիրի՝ այդ բնագավառում հսկողություն իրականացնող աշխատակից: Այդ ծառայությունները մատուցելիս ամբաստանյալ Ա.Մանուկյանի կողմից կատարված գործողությունների կամ անգործության արդյունքում՝ անգոլությամբ երկու տուժողների մահ պատճառելու հանգամանքը տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի համար նշանակություն ունենալ չի կարող:

Ըստ էության՝ ամբաստանյալ Ա.Մանուկյանն ունենալով սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին՝ տվյալ դեպքում «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ին համապատասխան ծառայություններ մատուցելու՝ պայմանագրով նախատեսված պարտականություններ, այդպիսիք չի կատարել, որի հետևանքով առաջացել է երկու անձանց մահ:

Այսինքն, ամբաստանյալ Ա.Մանուկյանի կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներին և նա համարվում է այդ հանցակազմի սուբյեկտ (...)» (տես

քրեական գործ, հատոր 5, թերթ 91-112):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակները փաստարկել են, որ Ա.Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասով մեղավոր ճանաչելով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերները նշել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածը օբյեկտիվ կողմից դրսևորվում է բացառապես գործողությամբ և ոչ երբեք՝ անգործությամբ: Սինչդեռ դատարանները, հաստատված համարելով, որ Ա.Մանուկյանը անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայություններ է մատուցել, այդ ծառայությունները նկարագրել են անգործության տեսքով, այն է՝ «չի կատարել», «չի ստուգել», «միջոցներ չի ձեռնարկել»:

Անգործությունը քրեաիրավական իմաստով կապված է անձի կողմից իր վրա դրված պարտավորությունների չկատարման հետ: Փականագործ Ա.Մանուկյանի կողմից իր աշխատանքային պարտականությունները չկատարելը, չստուգելը, միջոցներ չձեռնարկելն արտահայտվել են ոչ թե ակտիվ գործողություններ իրականացնելու ձևով, այլ ընդհակառակը՝ դրսևորվել են բացառապես անգործությամբ, իսկ անգործությունը չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ պարունակել:

Բողոք բերած անձինք նշել են նաև, որ Ա.Մանուկյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներին չի համապատասխանում սուբյեկտիվ կողմից: Նշված հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է դիտավորությամբ և միայն հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ է արտահայտվում մեղքի անգգույշ ձևը, մինչդեռ Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունից երևում է, որ նրան վերագրվող անգործությունը դրսևորվել է մեղքի անգգույշ ձևով՝ հանցավոր ինքնավստահությամբ:

8. Ըստ բողոքաբերների՝ գազասարքերի տեխնիկական անվտանգության ստուգումները, որոնք իրականացվում են «Էյ-Ի-ՋԻ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հանրապետության ամբողջ տարածքում, ծառայության մատուցում չեն հանդիսանում, քանի որ ծառայության մատուցումը ենթադրում է ծառայությունը ստացողի համաձայնությունը դրա իրականացման վերաբերյալ: Առանց անձի համաձայնության, նրա կամքին հակառակ նրան ծառայություն չի կարող մատուցվել, իսկ «Էյ-Ի-ՋԻ Սերվիս» ՍՊԸ-ի իրականացրած գործողությունները պարտադիր են բոլոր գազասպառողների համար, հետևաբար դրանք ոչ թե ծառայություն են, այլ տեխնիկական անվտանգության վերահսկողություն: Ուստի, «Էյ-Ի-ՋԻ Սերվիս» ՍՊԸ-ի փականագործ Ա.Մանուկյանը նույնպես ծառայություն չի մատուցել:

Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ դատական պրակտիկայում առկա են բազմաթիվ դատավճիռներ, որոնցով Ա.Մանուկյանին վերագրվող արարքին բացարձակապես համարժեք, նույնական արարքները՝ կատարված «Էյ-Ի-ՋԻ Սերվիս» ՍՊԸ-ում աշխատող փականագործների կողմից, որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով: Հետևաբար, ստորադաս դատարանները, Ա.Մանուկյանին վերագրվող արարքը հաստատված համարելու պայմաններում, նրան պետք է մեղավոր ճանաչելին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով, մինչդեռ մեղավոր են ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով՝ դրանով իսկ թույլ տալով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

9. Բողոքի հեղինակները գտել են նաև, որ սույն գործով թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Այդ կապակցությամբ բողոքաբերները փաստարկել են, որ ստորադաս դատարաններն Ա.Մանուկյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չեն առել նրա անձը բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող մի շարք հանգամանքներ, իսկ առանձին դեպքերում ուղղակիորեն մատնանշել են դրանք՝ պատժի չափի վրա որևէ կերպ չարտահայտելով: Գատարանները չեն պատճառաբանել, թե Ա.Մանուկյանի նկատմամբ ինչու պետք է նշանակվի հոդվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատժից ավելի խիստ պատիժ, ինչպես նաև՝ սխալ եզրահանգման են եկել պատիժը կրելու նպատակահարմարության հարցի լուծման կապակցությամբ:

10. Հինք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձինք խնդրել են բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով, վերջինիս նկատմամբ նշանակել մեղմ պատիժ և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել կամ Ա.Մանուկյանի նկատմամբ նշանակված պատիժը փոփոխել, նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ և այն պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդված) և անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելու կամ իրացնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու (ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդված) հանցակազմերը միմյանցից սահմանազատելու առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին

իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ա.Մանուկյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության և ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու համար՝ դրանց պահպանման համար պատասխանատու անձի կողմից, եթե մարդու առողջությանն անգզուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մասնագիտական հիվանդություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որն անգզուշությամբ առաջացրել է տուժողի մահ:

Մեջբերված նյութաիրավական նորմը գետեղված է «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությունը կրող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ գլխում և կոչված է ապահովելու ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումը, որի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Վերոգրյալ սահմանադրական դրույթից հետևում է, որ գործատուի կողմից յուրաքանչյուր աշխատողի համար պետք է երաշխավորվեն պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ: Աշխատողի անվտանգությունը և առողջությունն աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ է, և պետությունը պարտավոր է՝

ա) սահմանել աշխատողի անվտանգության և առողջության պահպանման իրավական կանոններ՝ ամրագրելով դրանք օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով,

բ) նախատեսել համապատասխան քաղաքացիական, վարչական, քրեական սանկցիաներ, որոնք կոչված են կանխելու աշխատողի անվտանգության և առողջության պահպանման կանոնների խախտումները:

Շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը այն հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են մարդու՝ անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքի ապահովմանը, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում մարդու կյանքը և առողջությունը:

Քննարկվող հանցագործությունից տուժող կարող են հանդիսանալ այն ձեռնարկության, կազմակերպության աշխատակիցները, որտեղ թույլ են տրվել տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումներ, ինչպես նաև այն անձինք, ում ժամանակավոր կամ մշտական

գործունեությունը կապված է տվյալ արտադրության հետ: Այն դեպքում, երբ տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները՝ դրանց պահպանման համար պատասխանատու անձի կողմից խախտելու արդյունքում վնաս է պատճառվում տվյալ արտադրության հետ կապ չունեցող անձանց առողջությանը, արարքը, կախված ոտնձգության բնույթից, կարող է որակվել որպես պաշտոնեական անփութություն (ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդված) կամ մարդու դեմ ուղղված հանցագործություն:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն օբյեկտիվ կողմից բնութագրվում է ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որը դրսևորվում է տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելով:

Անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն առկա է այն դեպքում, երբ՝

1) խախտվել են ՀՀ կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, հիմնարկների և առանձին գործատուների կողմից սահմանված՝ տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության հատուկ կանոնները,

2) առաջացել են հանրորեն վտանգավոր այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են տուժողի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի կամ մասնագիտական հիվանդության պատճառումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մաս) կամ մահվան առաջացումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) առկա է պատճառական կապ արարքի (գործողության կամ անգործության) և վրա հասած հետևանքների միջև:

ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված արարքի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի անզգույշ ձևով ինքնավստահությամբ կամ անփութությամբ: Հանցավոր ինքնավստահության դեպքում տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտվում են գիտակցաբար, որի դեպքում հանցավորը նախատեսում է իր արարքի հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն: Մինչդեռ, անփութության դեպքում հանցավորը նշված կանոնները կարող է խախտել նաև՝ չնախատեսելով վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում ոչ միայն պարտավոր էր, այլև կարող էր նախատեսել դա:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ մեղսունակ ֆիզիկական այն անձը, ով պատասխանատու է տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման համար:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելու կամ իրացնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու կամ նշված

ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների՝ անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթերն ապօրինի հանձնելու կամ օգտագործելու համար, եթե այդ արարքներն անգզուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքների համար, որոնք՝

1) կատարվել են մանկահասակների համար նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կապակցությամբ,

2) անգզուշությամբ վնաս են պատճառել երկու կամ ավելի անձանց առողջությանը,

3) անգզուշությամբ առաջացրել են մարդու մահ:

ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքների համար, որոնք անգզուշությամբ առաջացրել են երկու կամ ավելի անձանց մահ:

Քննարկվող հանցագործության օբյեկտը բնակչության առողջության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Տուժող կարող են լինել սպառողները՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացիները (տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը), ինչպես նաև՝ այդ ապրանքները (աշխատանքները, ծառայություններն) արդեն պատվիրած, ձեռք բերած կամ օգտագործող անձինք:

ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը երկընտրելի է. հանցակազմն առկա է հոդվածում նշված արարքներից որևէ մեկը կատարելու դեպքում, եթե դրա արդյունքում անգզուշությամբ վնաս է պատճառվել մարդու առողջությանը:

16. Սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկել է համարվում պատրաստված ապրանքը անվտանգության պահանջներին համապատասխանելու մասին փաստաթղթային ձևակերպմամբ պահեստավորելը՝ այն իրացնելու համար, կամ այդ ապրանքը պատվիրատուին ուղարկելը: Սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ իրացնելը նշանակում է դրանց վաճառքը, սպառողին հանձնելը: Ընդ որում, նշանակություն չունի, թե երբ են առաջացել ապրանքի սպառողների կյանքի կամ առողջության համար վտանգավոր հատկությունները՝ արտադրության ընթացքում, թե դրանից հետո (օրինակ՝ ժամկետանց ապրանքի վաճառքը):

Սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը կարող է դրսևորվել բազմազան ձևերով՝ շինարարական, վերանորոգման, բեռնափոխադրման, բժշկական և այլ աշխատանքներ ու ծառայություններ (օրի-

նակ՝ բնակելի շենքերի շինարարության կամ վերանորոգման ընթացքում այնպիսի նյութեր օգտագործելը, որոնք վտանգավոր են մարդու կյանքի կամ առողջության համար, բուժման ընթացքում մնանատիպ հատկություն ունեցող դեղամիջոցներ օգտագործելը և այլն): Ծառայությունների մատուցումը գործունեություն է, որը կապված չէ նյութական արտադրանքի ստեղծման հետ, սակայն ուղղված է որոշակի պահանջումներին բավարարմանը, մասնավորապես, ծառայությունների մատուցում են հանդիսանում ուղևորափոխադրումը, ջրամատակարարումը, գազամատակարարումը, ինչպես նաև բժշկական, հյուրանոցային և այլ ոլորտներում իրականացվող բազմաբևեռ գործունեությունը:

Անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթեր ապօրինի հանձնելն առկա է այն դեպքում, երբ այդ փաստաթուղթը հանձնվում է դրա լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից կամ սերտիֆիկացման կարգի խախտմամբ: Անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթեր են արտադրողի երաշխավորային պարտավորությունը, համապատասխանության սերտիֆիկատը կամ նշանը և այլն: Անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթեր ապօրինի օգտագործելը դրսևորվում է որևէ ապրանքի, ծառայության կամ աշխատանքի համար հանձնված սերտիֆիկատով մեկ ուրիշ ապրանք իրացնելու, ծառայություն կամ աշխատանք մատուցելու ձևով, կամ ապօրինի հանձնված սերտիֆիկատով կամ այլ փաստաթղթով ապրանք վաճառելու, ծառայություն մատուցելու կամ աշխատանք կատարելու ձևով:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության՝ ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին առաջադրվող պահանջները սահմանվում են տարբեր ստանդարտներով (պետական, միջազգային, առանձին կազմակերպությունների և այլն), սանիտարական նորմերով և կանոններով, հիգիենիկ նորմատիվներով, շինարարական նորմերով և սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներ նախատեսող այլ նորմատիվ ակտերով: Սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող են համարվում այն ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները, որոնց սպառողական հատկությունները, որակը և արդյունքները, ինչպես նաև դրանց կատարման կամ մատուցման ընթացքը չեն համապատասխանում նշված նորմատիվ փաստաթղթերին, և դրանց իրականացումը կարող է վնաս հասցնել որոշակի անձանց առողջությանը կամ պատճառել մահ:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը մույնպես բնութագրվում է անզգուշությամբ. չնայած սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների թողարկումը կամ իրացումը, աշխատանքներ կամ ծառայություններ մատուցելը կամ նշված ապրանքների կամ ծառայությունների՝ անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթղթերն ապօրինի հանձնելը կամ օգտագործելը

կատարվում են գիտակցաբար, սակայն նշված արարքների հանցավոր հետևանքների նկատմամբ դրսևորվում է մեղքի բացառապես անզույշ ձևը:

Քննարկվող հանցագործության սուբյեկտը հատուկ է, այդպիսիք են հանդիսանում սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներն արտադրող կամ իրացնող, աշխատանքները կամ ծառայությունները մատուցող, ապրանքների արտադրման կամ իրացման, աշխատանքների ու ծառայությունների մատուցման համար պատասխանատու անձինք, ինչպես նաև այն պաշտոնատար անձինք, ովքեր անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող պաշտոնական փաստաթուղթ հանձնելու լիազորություն ունեն կամ այդպիսի լիազորություն չունեն, սակայն պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ հանձնում են:

18. Սույն որոշման 13-14-րդ և 15-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը որպես տեխնիկայի անվտանգության կանոնների խախտում (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդված) կամ անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների թողարկում կամ իրացում, աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում (ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդված) որակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

ա) տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումը ոտնձգում է մարդու՝ անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքի ապահովման, իսկ անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների թողարկումը կամ իրացումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը՝ բնակչության կյանքի կամ առողջության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններին:

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով տուժող են հանդիսանում տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումներ թույլ տված ձեռնարկության, կազմակերպության աշխատակիցները, այդտեղ ժամանակավոր կամ մշտական գործունեություն իրականացնող անձինք, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով տուժող են հանդիսանում սպառողները՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող, ինչպես նաև այդ ապրանքները, աշխատանքները, ծառայություններն արդեն պատվիրած, ձեռք բերած կամ օգտագործող անձինք:

գ) ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը դրսևորվում է տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը՝ սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության՝ ապրանքներին, աշխատանքներին կամ

ծառայություններին առաջադրվող պահանջների խախտմամբ:

19. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Մանուկյանը ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ աշխատելով «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ում որպես փականագործ, իրականացրել է սպառողների կյանքի անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայությունների մատուցում, մասնավորապես, չի կատարել «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ի և «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի պարտավորությունները և 2008 թվականի փետրվարի 4-ից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում կատարված ստուգայցերի ժամանակ պատշաճ կարգով չի ստուգել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում գտնվող «Երեք խնձոր» հյուրանոցա-ռեստորանային համալիրում գազասպառման համակարգերի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին, ինչպես նաև համապատասխան միջոցներ չի ձեռնարկել նշված համալիրի թիվ 1 հյուրանոցային համարի լոգարանում խախտումների առկայության պայմաններում ապօրինի կերպով ինքնակամ տեղակայված ջրատաքացուցիչը հայտնաբերելու և դրա ծխաօդատար ուղիների կառուցվածքներում առկա էական և ակնհայտ խախտումները բացահայտելու և դրանք վերացնելու համար, ինչի արդյունքում բնական գազի այրման արգասիքներից թունավորման հետևանքով 2011 թվականի նոյեմբերի 30-ին անզգուշությամբ առաջացել է հյուրանոցա-ռեստորանային համալիրի հաճախորդներ Ա.Կապարյանի և Լ.Ասլանյանի մահը (տե՛ս սույն որոշման 1-2-րդ և 5-րդ կետերը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով 13-18-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Մանուկյանի գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցակազմին, քանի որ.

- 1) Ա.Մանուկյանի արարքն ուղղված է եղել բնակչության կյանքի պաշտպանությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ,
- 2) Ա.Մանուկյանի գործողություններից տուժել են անձինք, ովքեր օգտվել են նրա մատուցած ծառայություններից, այսինքն՝ հանդիսացել են սպառողներ,
- 3) Ա.Մանուկյանի մատուցած ծառայությունը չի համապատասխանել սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին:

Հետևաբար, ամբաստանյալ Ա.Մանուկյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության և նույն օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերների այն փաստարկին, որ գազասարքերի տեխնիկական անվտանգության ստուգումները, որոնք իրականացվում են «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հանրապետության ամբողջ տարածքում, ծառայության մատուցում չեն հանդիսանում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը),

ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (Բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 199-Ն որոշման հավելված հանդիսացող՝ «Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (Բնակիչ))» պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ «Մատակարարը պարտավոր է. (...)

է) անձամբ կամ իր համաձայնությամբ՝ սպասարկող կազմակերպությունների միջոցով, Բաժանորդին մատուցել ներտնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն՝ համաձայն ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի (հավելված N3)»:

Նույն պայմանագրի հավելված N3 հանդիսացող «Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման» համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ «Սույն համաձայնագրի առարկան Մատակարարի կողմից Բաժանորդի ներտնային համակարգի սպասարկման ծառայության մատուցումն է, որը ներառում է հետևյալ աշխատանքները՝

ա) արտաքին զննում և պարուրակային միացումների ստուգում օճառափրփուրով (արտահոսքերի առկայության դեպքում դրանց վերացում),

բ) գազօգտագործող սարքավորումների միացման ճշտության ստուգում,

գ) գազօգտագործող սարքավորումների կարգաբերում,

դ) գազի թողարկումից առաջ ներտնային համակարգի շահագործման պատրաստիության վերաբերյալ ակտի կազմում,

ե) ծխաօդատար ուղիների զննում և անհրաժեշտության դեպքում մաքրում (...),

զ) ներտնային համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ հրահանգավորում»:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ն՝ որպես «Մատակարար», սպասարկող կազմակերպության, «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի միջոցով (2007 թվականի հուլիսի 2-ի «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ի և «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի միջև կնքված «Հանձնարարության պայմանագրի» հիման վրա), բնակչությանը մատուցում է ներտնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն, ուստի այս առումով բողոքաբերների փաստարկները հիմնագուրկ են: Ուստի, սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայություններ մատուցելու մեջ ամբաստանյալ Ա.Մանուկյանի մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ առումով Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերների փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար հիմք չեն կարող հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

22. Անդրադառնալով բողոքաբերների մյուս փաստարկներին (տե՛ս սույն

որոշման 9-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, կատարված հանցագործության, հանցավորի անձի, նրա պատասխանատվություննուպատիժըմեղմացնող գործում առկա հանգամանքների բազմակողմանի գնահատման արդյունքում, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ, ամբաստանյալ Ա.Մանուկյանի նկատմամբ նշանակել են արդարացի պատիժ, իսկ պատիժը կրելու նպատակահարմարության հարցում հանգել են ճիշտ հետևության: Ուստի, այս առումով բողոքաբերների փաստարկները նույնպես հիմնագուրկ են և չեն կարող հիմք հանդիսանալ սույն գործով կայացված դատական ակտերը բեկանելու համար:

23. Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերների փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Ատոմ Արմենակի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԳ/0015/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝*

Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

ըռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի օգոստոսի 12-ի որոշման դեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Հ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Երևան քաղաքի Արցախի փողոցի թիվ 10դ շենքի աստիճանավանդակում, 2012 թվականի մայիսի 14-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, առաջացած հրդեհի վերաբերյալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Երևանի հրդեհաչիմ և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից նախապատրաստված նյութերը 2012 թվականի հոկտեմբերի 24-ին ուղարկվել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժին:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի քննիչ Է.Թումադայանը 2013 թվականի մարտի 20-ին որոշում է կայացրել վերոհիշյալ հրդեհի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և

քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

2. Քննիչ Է.Թումադայանի 2013 թվականի մարտի 20-ի որոշման դեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Վ.Ջոլոտուխինը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազին:

Երևան քաղաքի դատախազի 2013 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ քննիչի 2013 թվականի մարտի 20-ի որոշման դեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Վ.Ջոլոտուխինի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Վ.Ջոլոտուխինը բողոք է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Է.Թումադայանի 2013 թվականի մարտի 20-ի որոշումը, իսկ նախաքննության մարմնին պարտավորեցնել նյութերը նախապատրաստել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ և վերջնական որոշում կայացնել ձեռք բերված տվյալներին համապատասխան:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

4. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Հովհաննիսյանը՝ խնդրելով վերացնել քննիչի 2013 թվականի մարտի 20-ի որոշումը կամ նախաքննության մարմնին պարտավորեցնել «կայացված որոշումը վերակազմել ըստ նյութերում եղած տվյալների»:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Հովհաննիսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի մարտի 20-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը. «(...) Համաձայն ՀՀ փորձագիտական կենտրոնի թիվ 12471204 եզրակացության՝ Երևան քաղաքի Արցախի պողոտայի

թիվ 10դ շենքի 7-րդ հարկում գտնվող աստիճանավանդակում տեղի ունեցած հրդեհի ամենայն հավանական պատճառը կարող է հանդիսանալ հարկի միջով անցնող էլ. հաղորդալարերում առաջացած վթարային ռեժիմի երևույթը՝ կարճ միացումը:

Այսպիսով, նախապատրաստված նյութերով հիմնավորվել է, որ 2012 թվականի մայիսի 14-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, Արցախի փողոցի թիվ 10դ շենքի աստիճանավանդակում առաջացած հրդեհի պատճառը հանդիսացել է կարճ միացումը, այսինքն տեղի է ունեցել պատահար, որպիսի պայմաններում բացակայում է հանցագործության դեպքը (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 5-6):

7. Առաջին ատյանի դատարանը, իր որոշման մեջ մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 103-րդ հոդվածի 1-ին մասը, 290-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, արձանագրել է հետևյալը՝ «Նշված հոդվածների վերլուծությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները, նախքան դատական կարգով բողոքարկվելը, բողոքարկվում են համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին:

(...)

Նկատի ունենալով, որ բողոքը ներկայացվել է ՀՀ քր. դատ. օր-ի 103 հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական ընթացակարգի խախտմամբ, այն է՝ դատախազի որոշման դեմ բողոքը ներկայացվել է դատարան՝ առանց վերադաս դատախազին բողոքարկելու, հետևաբար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բողոքը՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի ՔՎ Էրեբունու քննչական բաժնի քննիչ՝ Է.Թումադայանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 20.03.2012թ. որոշումը վերացնելու պահանջի մասին, ենթակա է մերժման (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 36-38):

8. Վերաքննիչ դատարանը, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը, 185-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 103-րդ հոդվածի 1-ին մասը, 290-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «Նշված հոդվածների վերլուծությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները, նախքան դատական կարգով բողոքարկվելը, բողոքարկվում են համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին: Այսինքն՝ քննիչի որոշումը նախքան դատական կարգով բողոքարկվելը ենթակա է բողոքարկման դատախազին, դատախազի որոշումներն ու գործողություններն էլ իրենց հերթին՝ վերադաս դատախազին:

(...)

Այսպիսով, համաձայնվելով առաջին ատյանի դատարանի վերոնշյալ իրավական վերլուծությունների, պատճառաբանությունների և եզրահանգումների հետ և հաշվի առնելով այն, որ բողոքաբերի կողմից իրականում չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական ընթացակարգը, այն է՝ դատախազի համապատասխան որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին, այն

միանգամից բողոքարկվել է առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարանը եկավ այն եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, իսկ բողոքաբեր, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ ներկայացուցիչ Հ.Հովհաննիսյանի կողմից վերաքննիչ բողոքում նշված փաստարկները հիմք չեն վերաքննիչ բողոքը բավարարելու համար (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 43-50):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները թույլ են տվել քրեադատավարական նորմերի պահանջների էական խախտումներ, ինչի արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն զրկվել է օրենքով երաշխավորված իր իրավունքներից:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը նշել է, որ դատարանների այն պնդումը, թե բողոքն Առաջին ատյանի դատարան է ներկայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի խախտմամբ, այն է՝ դատախազի որոշման դեմ բողոքը ներկայացվել է դատարան՝ առանց վերադաս դատախազին բողոքարկելու, հիմնազուրկ է: Տվյալ դեպքում Երևան քաղաքի դատախազի վերոհիշյալ որոշումը ոչ միայն վերադաս դատախազին, այլ նաև դատարան չի բողոքարկվել, դատարան է բողոքարկվել քննիչի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը, որը սահմանում է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու կարգը, որևէ պահանջ չի բովանդակում առ այն, որ նշված որոշումը նախապես պետք է բողոքարկվի դատախազին: Հետևաբար, դատարանների դիրքորոշումն առ այն, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը նախքան դատական կարգով բողոքարկելը պետք է բողոքարկվի դատախազին, իսկ վերջինիս որոշումը՝ վերադաս դատախազին և նոր միայն դատարան, հակասում է օրենքին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Ս.Օհանյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը:

10. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը չի բխում քննությանը ձեռք բերված փաստական տվյալներից: Մասնավորապես՝ քննիչն իր որոշման մեջ մասնակիորեն մեջբերել է փորձագետի եզրակացության այն հատվածը, համաձայն որի՝ հրդեհի հավանական պատճառ կարող էր հանդիսանալ էլեկտրական հաղորդալարերում առաջացած վթարային ռեժիմի երևույթը՝ կարճ միացումը և, անտեսելով փորձագետի մյուս հետևություններն այն մասին, որ հրդեհի առաջացման պատճառ կարող էին հանդիսանալ նաև էլեկտրական հաղորդալարերի վրա ընկած բաց կրակի աղբյուրները, ինչպես նաև՝ գազի հաշվիչների և խողովակների մոնտաժման հետևանքով հաղորդալարերից մեկի մեկուսիչի վնասված լինելը, հաստատված է համարել, որ հրդեհի պատճառը հանդիսացել է կարճ միացումը: Վարույթն

իրականացնող մարմնի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Արցախի փողոցի թիվ 10դ շենքի շքամուտքում գազատար խողովակներն ու հաշվիչները տեղադրված են ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի թիվ 961-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի կոպիտ խախտումներով, ինչը հրդեհի առաջացմանը նպաստող հանգամանք է:

Արդյունքում, «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ն հրդեհի հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցման պահանջ է ներկայացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ 578.907 ՀՀ դրամի չափով:

Նկատի ունենալով, որ դեպքի վերաբերյալ նյութերը թերի են նախապատրաստված, հրդեհի առաջացման անմիջական պատճառն ու վնասի հետ կապված հանգամանքները պարզված չեն, ինչպես նաև հնարավոր քաղաքացիական հայցը կանխելու և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գույքային շահերը պաշտպանելու նպատակով քննիչի վերոհիշյալ որոշման դեմ բողոք է ներկայացվել դատարան: Բողոքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը խնդրել է նախաքննության մարմնին պարտավորեցնել նյութերը նախապատրաստել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ և վերջնական որոշում կայացնել ձեռք բերված տվյալներին համապատասխան: Ավելին, Առաջին ատյանի դատարանում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտարարել է, որ բավարար կլինի, եթե քննիչը վերակազմի իր որոշումը և դրանում մեջբերի նյութերով ձեռք բերված բոլոր տվյալները, մասնավորապես՝ որոշման մեջ նույնությամբ արտացոլի փորձագետի եզրակացությունը և մատնանշի գազի հաշվիչների և խողովակների՝ սահմանված կարգի խախտմամբ մոնտաժված լինելու հանգամանքը: Մինչդեռ դատարանների կողմից բողոքները մերժվել են այն պատճառաբանությամբ, որ քննիչի կայացրած որոշումը վերացնելու դեպքում պարտադիր է դառնում քրեական գործի հարուցումը, իսկ նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ, 232-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Ըստ բողոքաբերի՝ նման պատճառաբանության պարագայում ստացվում է, որ եթե նյութերը հետաքննության կամ նախաքննության մարմնի կողմից թերի են նախապատրաստվել, սակայն վարույթն իրականացնող մարմնին արդեն իսկ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում է կայացրել, ապա թույլ տրված բացթողումները և խախտումները վերացնել այլևս հնարավոր չէ:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի, Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 12-ի որոշումները և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն

այն մասին, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը դատարան է բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընթացակարգի խախտմամբ:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ այն դատավարության մասնակիցներին իրավունք է վերապահում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները: Նշված հոդվածը սահմանում է բողոքարկման հետևյալ կարգը՝

ա) քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները՝ համապատասխան դատախազին,

բ) դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին,

գ) դատարանին՝ վերադաս դատարան:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, հոդվածը չի բովանդակում պայման այն մասին, որ (ա), (բ) և (գ) կետերում շարադրված գործընթացները պետք է պարտադիր հաջորդեն մեկը մյուսին: Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները բողոքարկելիս վերոնշյալ հաջորդականության կամ որևէ այլ հաջորդականության պահպանումը պարտադիր կարող է լինել միայն որոշակի գործողություններ և որոշումներ բողոքարկելու համար այդպիսի պայման սահմանող քրեադատավարական հատուկ նորմի առկայության դեպքում:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում:

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն

կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ընթացակարգին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Հարությունյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանորմեր, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:

(...) ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը՝ արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը:

(...) շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը» (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշման 20-21-րդ կետերը):

Վերահաստատելով մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը, բացառությամբ որոշումը բողոքարկելու ժամկետի հարցի, կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը բողոքարկելու ժամկետի հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Աթոյանի բողոքի կապակցությամբ կայացված

որոշման մեջ, որտեղ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետում, այլ 290-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետում (տե՛ս Հայարփի Աթոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԳԳ/0014/11/09 որոշման 27-29-րդ և 31-րդ կետերը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի ուսումնասիրությունից երևում է, որ այն չի բովանդակում պահանջ այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը մինչև դատական կարգով բողոքարկելը պետք է բողոքարկվի դատախազին: Նշված հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել *Ա.Օհանյանի* բողոքի կապակցությամբ կայացված որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) դատարանը, տալով օրենքի կամայական մեկնաբանություն, գտել է որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը պահանջում է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը նախ բողոքարկել դատախազին, ապա դատարան: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը նման պահանջ չի բովանդակում: (...)» (տե՛ս Ալբերտ Օհանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԲԳ/0001/11/10 որոշման 25-րդ կետը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ սույն գործով ստորադաս դատարանների դիրքորոշումն այն մասին, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը նախքան դատական կարգով բողոքարկվելը ենթակա է բողոքարկման դատախազին, դատախազի որոշումներն ու գործողություններն էլ իրենց հերթին՝ վերադաս դատախազին (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը): Հետևաբար, իրավաչափ չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը դատարան է բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընթացակարգի խախտմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասը: Գատարանների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտումն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է այդ դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

16. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Է.Թումադայանի 2013 թվականի մարտի 20-ի որոշման մեջ պարզաբանված չեն նշված որոշման բողոքարկման կարգն ու ժամկետները: Մինչդեռ *Ա.Դավթյանի* և *Ս.Մկրտչյանի* գործով

որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական դատավարության ընթացքում դատավարության մասնակցի վերաբերյալ համապատասխան դատավարական փաստաթղթեր կազմելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է դրանցում պարզաբանի նաև, թե որ մարմին, ինչ ժամկետում և ինչ կարգով կարող են բողոքարկվել այդ փաստաթղթերը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարության մասնակցին վերոնշյալ պարզաբանումները չտրամադրելը հանգեցնում է վերջինիս իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

(...) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քննիչի (...) որոշման մեջ պետք է (...) պարզաբանվեին որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները՝ որոշման մեջ համապատասխան օրենսդրական դրույթների վրա հղում կատարելու և դրանց բովանդակությունը մեջբերելու միջոցով» (տե՛ս Արման Վահանի Դավթյանի և Սոնա Ռուբենի Սկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ-0004/11/12 որոշման 16-րդ և 18-րդ կետերը):

17. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ դեպքի վերաբերյալ նյութերը թերի են նախապատրաստվել, հրդեհի առաջացման անմիջական պատճառն ու վնասի հետ կապված հանգամանքները չեն պարզվել, հրդեհի առաջացման պատճառի վերաբերյալ քննիչի եզրահանգումը չի բխում նյութերով ձեռք բերված տվյալներից (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը գործի նոր քննության ընթացքում պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկի դիմողի ներկայացրած բոլոր փաստարկները և պարզի, թե արդյո՞ք օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկվել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս): Ընդ որում, դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Է.Թումադայանի 2013 թվականի մարտի 20-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, Առաջին ատյանի դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք նախաքննության մարմնի հիշյալ որոշումը ձևակերպված է այնպես, որ կարող է ոչ իրավաչափ հետևանքներ առաջացնել դիմողի համար: Այդպիսի իրավիճակի առկայության դեպքում Առաջին ատյանի դատարանը պետք է այնպիսի որոշում կայացնի, որը հնարավորություն կտա վերացնել իրավահարաբերության մասնակցի, տվյալ դեպքում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի իրավունքների և օրինական շահերի խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 25-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի օգոստոսի 12-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am